

ԼԵՎՈՆ ՕՂԱՆՅԱՆ

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ



Երևան - 2004

Լ. Պ. Օհանյան


ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ

**Երաշխավորվել է ՀՀ կրթության և գիտության
նախարարության կողմից որպես
բուժական դասագիրք**

**«Տիգրան Մեծ» հրատարակչություն
Երևան – 2004**

343-9
0-45

ՀՏԴ 343.98
ԳՄԴ 67.99(2)94
Օ - 452



Օհանյան Լևոն
Օ-452 **Կրիմինալիստիկա:** – Երևանի պետ. համալս. – Եր.: Տիգրան Մեծ
հրատ., 2004 – 504 էջ:

Աշխատանքը նվիրված է կրիմինալիստիկայի մեթոդաբանությանը, կրիմինալիստիկայի գիտության և փորձաքննությունների պատմությանը Հայաստանում, ինչպես նաև կրիմինալիստիկական տեխնիկայի հիմունքներին: Նրանում տրված են նաև պատառիկներ համաշխարհային կրիմինալիստիկայի պատմության առավել կարևոր էջերից, Ռուսաստանում և Ուկրաինայում այդ գիտության և կրիմինալիստիկական փորձաքննությունների պատմությունից:

Առաջին անգամ կամ նորովի են տրված կրիմինալիստիկական տեխնիկայի շատ ինստիտուտներ, մեթոդներ: Մասնավորապես կրիմինալիստիկական իդենտիֆիկացում (նույնացում), կրիմինալիստիկական դիագնոստիկա, կրիմինալիստիկական մոդելավորում, կրիմինալիստիկական միկրոլոգիա, կրիմինալիստիկական օդորոլոգիա, կրիմինալիստիկական ֆոնոսկոպիա, պոլիգրաֆի կիրառումը քրեական դատավարությունում, կրիմինալիստիկական հոլոգրամմա և այլն:

Աշխատանքը նախատեսված է իրավաբանական բուհերի ուսանողների, դասախոսների, հետաքննության, քննչական, դատական մարմինների, փաստաբանների, փորձագետների կամ այդպիսիք դառնալու հավակնություն ունեցողների, ինչպես նաև կրիմինալիստիկայի գիտությամբ զբաղվողների համար:

1203021300
Օ 774(01) - 2004

199944
S40019767

ԳՄԴ 67.99(2)94
© Լ. Օհանյան, 2004թ.

ISBN 99941-0-105-6

ՔՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ.....	7
ԱՌԱՋԻՆ ՄԱՍ	
ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ	9
ԳԼՈՒԽ 1. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ.....	9
ԳԼՈՒԽ 2. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ԱՌԱՐԿԱՆ և ՀԱՄԱԿԱՐԳԸ.....	19
§ 1. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ԱՌԱՐԿԱՆ	19
§ 2. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ	30
ԳԼՈՒԽ 3. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ԿԱՊԻՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ.....	38
ԳԼՈՒԽ 4. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ԻԴԵՆՏԻՖԻԿԱՑՈՒՄ (ՆՈՒՅՆԱՅՈՒՄ).....	58
§ 1. ԽՄԲԱՅԻՆ (ՍԵՌԱՅԻՆ) ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ	60
§ 2. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ԻԴԵՆՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ.....	66
§ 3. ԻԴԵՆՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ (ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԴԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ).....	78
ԳԼՈՒԽ 5. ԶՆՆԻՉԻ ԻԴԵՆՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	91
§ 1. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ.....	101
ԳԼՈՒԽ 6. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼԱՎՈՐՈՒՄ.....	106
ԳԼՈՒԽ 7. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ.....	117
ԳԼՈՒԽ 8. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ	128
ԳԼՈՒԽ 9. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱԶՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ	151
ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ	
ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ.....	166
ԳԼՈՒԽ 10. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՌԱՐԿԱՆ	166

§ 1. ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՎԱՔԱՃՈՒՆԵՐ	173
ԳԼՈՒԽ 11. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ (ԴԱՏԱԿԱՆ)	
ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ	184
§ 1. ՊԱՏԿԵՐԻՉ ԼՈՒՍԱՆԿԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ	189
§ 2. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ (ԴԱՏԱԿԱՆ) ԼՈՒՍԱՆԿԱՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ	200
§ 3. ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՒՄԸ ԱՌԱՆՁԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԻՍ	211
§ 4. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ (ԴԱՏԱԿԱՆ) ՀԵՏԱՁՈՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ	213
§ 5. ԿԻՆՈՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՏԵՍԱԳՐՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԻՍ	238
§ 6. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ (ԴԱՏԱԿԱՆ) ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ	242
§ 7. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀՈԼՈԳՐԱՖԻԱ	244
ԳԼՈՒԽ 12. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԵՏՔԱՔԱՆՈՒԹՅՈՒՆ (ՏՐԱՍՈՂՈԳԻԱ)	249
§ 1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ	249
§ 2. ՀԵՏՔԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ	254
§ 3. ՉԵՈՔԵՐԻ ՀԵՏՔԵՐ	259
§ 4. ՄԱՐԴՈՒ ՈՏՔԵՐԻ ՀԵՏՔԵՐ	272
§ 5. ՋԱՐԴՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՀԵՏՔԵՐ	280
§ 6. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏՔԵՐ	285
§ 7. ԱՏԱՆԵՐԻ ՀԵՏՔԵՐ	288
§ 8. ՀԵՏՔԱՔԱՆԱԿԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ..	291
ԳԼՈՒԽ 13. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՄԻԿՐՈԼՈԳԻԱ	293
ԳԼՈՒԽ 14. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՕԴՈՐՈԼՈԳԻԱ	301
ԳՈՒԽ 15. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀՐԱՁԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ԲԱԼԻՍՏԻԿԱ)	315
§ 1. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ (ԴԱՏԱԿԱՆ) ՀՐԱՁԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ	316

§ 2. ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՐԱՁԵՆԻ ԱՅՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՈՐՈՆՔ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ	317
§ 3. ԿՐԱԿՈՑԻ ՄԵԽԱՆԻՉՄԸ ԵՎ ԿՐԱԿՈՑԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՀԵՏՔԵՐԸ.....	323
§ 4. ՀՐԱՁԵՆԻ ԵՎ ԿՐԱԿՈՑԻ ՀԵՏՔԵՐԻ ՁՆՆՈՒԹՅՈՒՆԸ, ՖԻԶՍՈՒՄԸ ԵՎ ՎԵՐՑՆՈՒՄԸ.....	331
§ 5. ԿՐԱԿՈՑԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ	336
§ 6. ԿՐԱԿՈՑԻ ՀԵՏՔԵՐ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՎԵՐՑՆՈՒՄԸ ԵՎ ՓԱԹԵԹՎՈՐՈՒՄԸ	338
§ 7. ՀՐԱՁԵՆԻ ԽՄԲԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՆՈՒՅՆԱՅՈՒՄԸ ԿՐԱԿՎԱԾ ԳՆԴԱԿՈՎ	339
§ 8. ՀՐԱՁԵՆԻ ԽՄԲԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՆՈՒՅՆԱՅՈՒՄԸ ԿՐԱԿՎԱԾ ՊԱՐԿՈՒՃՈՎ.....	341
§ 9. ԿՈՏՈՐԱԿԻ, ՄԱՆՐԱԳՆԴԱԿԻ, ԽԻՑԻ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԵՏԱՁՈՏՈՒՄԸ	343
§ 10. ՀՐԱՁԵՆԱԳԻՏԱԿԱՆ (ԲԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ) ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԼՈՒԾՎՈՂ ՀԱՐՑԵՐ	344
ԳԼՈՒԽ 16. ԳՐԻ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԵՏԱՁՈՏՈՒՄ.....	345
§ 1. ՁԵՌԱԳՐԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ	354
§ 2. ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ	373
§ 3. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱՁՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ...	383
§ 4. ԳՐԻ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԵՏԱՁՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ.....	386
§ 5. ՆՅՈՒԹԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԳՐԻ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼԻՍ	393
§ 6. ՁԵՌԱԳՐԱՔԱՆԱԿԱՆ ԴԻԱԳՆՈՍՏԻԿ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ	395
§ 7. ԱՅՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԵՏԱՁՈՏՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՈՆՔ ԿԱՏԱՐՎԱԾ ԵՆ ԳՐՈՂԻ ԱՆՍՈՎՈՐ ՀՈԳԵՖԻՉԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ	398
ԳԼՈՒԽ 17. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏԵԽՆԻԿԱ-ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԵՏԱՁՈՏՈՒՄ.....	401

§ 1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏԵԽՆԻԿԱ-ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ	401
§ 2. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԲՆՆՉԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆԸ	408
§ 3. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ	411
§ 4. ՓԱՍՏԱԹՂԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	418
§ 5. ԱՆԸՆԹԵՈՆԵԼԻ ՏԵՔՍԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ	424
§ 6. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՒՄԸ	429
§ 7. ՄԵՔԵՆԱԳԻՐ ՏԵՔՍԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ	430
§ 8. ԿՆԻՔՆԵՐԻ ԵՎ ՇՏԱՄՊՆԵՐԻ (ԴՐՈՇՄԱԿՆԻՔՆԵՐԻ) ԴՐՈՇՄՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ	440
ԳԼՈՒԽ 18. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՖՈՆՈՍԿՈՊԻԱ	444
ԳԼՈՒԽ 19. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԱԲԻՏՈՍԿՈՊԻԱ (ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱՅՈՒՄԸ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՈՎ)	466
§ 1. «ԲԱՆԱՎՈՐ ՊԱՏԿԵՐԻ» ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԲՆՆՉԱԿԱՆ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ ԱՇԽԱՍԱՆՔՈՒՄ	482
h 2 - § 2. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՈՎ ԱՆՁԻ ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՒՅՆԱՅՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ	488
ԳԼՈՒԽ 20. ՊՈԼԻԳՐԱՖԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ	492

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

«Կրիմինալիստիկա» առարկայի դասավանդումը Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատություններում միշտ էլ ուղեկցվել է որոշակի դժվարություններով, որոնք կրել են և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ բնույթ: Խոսքը, մասնավորապես, բարձրակարգ մասնագետների խրոնիկական պակասի, համապատասխան մյութատեխնիկական բազայի և ուսումնասօժանդակ գրականության բացակայության մասին է, որոնք անկասկած նշված բնագավառում պատշաճ (պահանջվող) որակի մասնագետների պատրաստման կարևորագույն և անհրաժեշտ նախապայմաններն են:

Կրիմինալիստիկայի գիտության զարգացման սկիզբը մեր երկրում դրվեց անցյալ դարի 60-ական թվականներին, և դրա պիոներներից է, անկասկած, Երևանի պետական համալսարանի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի երկարամյա վարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Լևոն Պարզևի Օհանյանը: Իր ավելի քան քառասուն տարվա բեղուն գիտամանկավարժական գործունեության նվաճումներից մեկը, եթե ոչ ամենակարևորը, «կրիմինալիստիկա (մեթոդաբանություն, տեխնիկա)» դասագիրքն է:

Այս աշխատանքը, որը հեղինակի գրեթե տասնամյա հետազոտությունների արդյունք է, հայ իրավագիտության պատմության մեջ կրիմինալիստիկայի ամենադժվար՝ մեթոդաբանությանը և կրիմինալիստիկական տեխնիկայի բաժնին նվիրված առաջին բուհական դասագիրքն է: Պրոֆեսոր Օհանյանի «Կրիմինալիստիկա» ուսումնական ձեռնարկը (1993 թ.), որը լուրջ օգնություն էր ուսանողությանը ավանդաբար դժվար ընկալելի դասընթացը յուրացնելու գործում, վաղուց անհետացել է գրախանութների դարակներից: Ահա նույն հեղինակի նոր աշխատանքը կոչված է արդեն դասագրքի մակարդակով լրացնելու առաջացած բացը:

Լ. Օհանյանի «Կրիմինալիստիկա» դասագիրքը նույնպես, ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի մասնագետների կողմից վերջին 5 տարիների ընթացքում պատրաստած և մի քանի անգամ վերահրատարակված մեկ տասնյակից ավելի բուհական դասագրքերի նման աչքի է ընկնում մի կարևոր առանձնահատկությամբ. դա աշխատանքի ընդգծված գիտական ուղղվածությունն է, քննարկվող հարցերի հետազոտման խորությունը: Եվ դա հասկանալի ու ողջունելի է, քանի որ ՀՀ-ում դատաիրավական բարեփոխումների հիմքը կազմող հիմնական օրենսգրքերի և այլ իրավա-

կան ակտերի որակը թույլ չի տալիս անտարբեր անցնել դրանցում տեղ գտած բազմաթիվ սխալների, հակասությունների ու այլ թերությունների կողքով և այդ օրենսդրական ակտերի հիման վրա պատրաստված և պատրաստվող աշխատանքներում չանդրադառնալ դրանց և չնեկնաբանել ու չվերլուծել այդ քայլերը: Ահա իր աշխատանքում ևս նման մոտեցում է դրսևորել հեղինակը: Իսկ եթե դրան էլ ավելացնենք, որ դասագրքում հայ իրավագիտության մեջ առաջին անգամ կամ նորովի են մատուցված կրիմինալիստիկական շատ ինստիտուտներ ու մեթոդներ (կրիմինալիստիկական նույնացում, կրիմինալիստիկական դիագնոստիկա, մոդելավորում, միկրոլոգիա, ֆոնոսկոպիա, պոլիգրաֆի կիրառումը քրեական դատավարությունում, կրիմինալիստիկական հոլոգրամմա և այլն) պատկերը, կարծում են ամբողջովին պարզ կլինի: Այս բոլորը մեզ հիմք են տալիս վստահաբար եզրակացնելու, որ իրավաբանի սեղանին է հայտնվել մի աշխատանք, որը հավասարապես օգտակար կարող է լինել և՛ ուսանող, և՛ պրակտիկ աշխատողների, և՛ գիտությամբ զբաղվողների համար:

***Իրավաբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Գ. Ս. Ղազինյան***

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ
ԳԼՈՒԽ 1.

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հայտնի է, որ մեթոդը նյութական իրականության, բնության և հասարակական կյանքի երևույթների ուսումնասիրման միջոցներն ու հետազոտության նկատմամբ ունեցած վերաբերմունքն է: Դրանցից յուրաքանչյուրը իրենից ներկայացնում է հետազոտական գործողությունների սկզբունքների համակարգ, որը նախատեսվում է իրականացնել որոշակի հաջորդականությամբ:

Կառուցվածքային առումով մեթոդները դասակարգվում են. պարզ և բարդ: Բարդության աստիճանը որոշվում է նրանով, թե մեկ մեթոդում ճանաչողության քանի համեմատաբար ինքնուրույն միջոցներ կան (ասենք երկու կամ ավելի): Պարզի օրինակ կարող են լինել տրամաբանական այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են՝ անալիզը և սինթեզը: Բարդի օրինակ են՝ համեմատությունը, փորձարարությունը, քանի որ դրանցից յուրաքանչյուրը մի քանի պարզ մեթոդների համակցություն է. դիտարկումներ, անալիզ, սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա և այլն:

Մեթոդների՝ տեսակների բաժանումը իրականացվում է նաև ըստ այն գիտությունների բնույթի, որոնց շրջանակներում դրանք մշակվում են: Այդ առումով մեթոդները կարող են դասակարգվել մաթեմատիկականի, տրամաբանականի, բնագիտականի, հասարակագիտականի, որոնցից յուրաքանչյուրն էլ իր հերթին բաժանվում է ենթախմբերի: Օրինակ՝ բնագիտականը կարող է ընդգրկել քիմիական, ֆիզիկական, կենսաբանական և այլ ենթատեսակներ: Այս խմբերի հետագա բաժանումները ենթախմբերի իրականացվում է հաշվի առնելով կիրառվող հնարքների և տեխնիկական միջոցների բնույթը: Օրինակ՝ քիմիականին կարող են վերաբերել միկրոքիմիական, քրոմատոգրաֆիական անալիզը և այլն, ֆիզիկականին՝ մանրադիտակային հետազոտությունը, սպեկտրալ անալիզ և այլն:

Կրիմինալիստիկայի մեթոդները գիտական այն խնդիրների լուծման եղանակներն են, որոնք իրականացվում են տեսական և կիրառական բնույթի կրիմինալիստիկական հետազոտությունների ընթացքում:

Կրիմինալիստիկայի մեթոդաբանական¹ հիմունքները չեն սահմանափակվում նրա մեթոդների մասին ուսմունքով, քանի որ յուրաքանչյուր գիտության մեթոդաբանական նրա ընդհանուր տեսությունն է, որն ընդգրկում է նաև նրա աշխարհայացքային սկզբունքները, տեսական ըմբռումները, կատեգորիաները, մեթոդների և կապերի հասկացությունները, տերմինները և այլն:

Պրակտիկայի պահանջմունքներով պայմանավորված, կրիմինալիստիկական միտքը գտնվում է մշտական որոնումների վիճակում, նպատակ ունենալով գտնել այն հարցերի լավագույն տարբերակները, թե ինչպես ավելի լիարժեք, արդյունավետ և կարճ ժամանակում իրականացնել անհրաժեշտ աշխատանքները: Այդ հարցերի ճիշտ պատասխանը ստանալ հնարավոր չէ, առանց խորը թափանցելու այն օրինաչափությունների բնույթի, էության և առանձնահատկությունների մեջ, որոնք ընկած են քրեական դատավարական գործունեության կազմակերպման և իրականացման հիմքում:

Կրիմինալիստիկայի մեթոդաբանական հիմունքների մշակումը համազոր է կրիմինալիստիկայի ընդհանուր տեսության մշակմանն ու կատարելագործմանը:

Կրիմինալիստիկայի ընդհանուր տեսության մեջ, հաշվի առնելով բովանդակության համապատասխանությունը ճանաչողության օբյեկտի կառուցվածքին, ընդգրկված են.

1. Ներածությունը, որի մեջ մտնում են կրիմինալիստիկայի առարկայի բնութագիրը, նրա խնդիրները, նպատակները, տեղը իրավաբանական գիտությունների համակարգում:

2. Հանցագործության մեխանիզմի օրինաչափություններն արտացոլող դրույթները՝ կրիմինալիստիկայի տեսանկյունից (հանցագործության և հանցագործի մասին տեղեկատվություն):

3. Ապացույցների հավաքման, ամրապնդման, գնմության (հետազոտման), գնահատման և օգտագործման օրինաչափությունները:

Գոյություն ունեն նաև մասնավոր կրիմինալիստիկական տեսություններ, որոնց թվին կարելի է դասել.

¹ Մեթոդաբանական (մեթոդաբանություն): Որևէ ուսմունք կենսագործելու մեթոդների՝ եղանակների ամբողջություն:

➤ տարբեր քննչական գործողությունների ժամանակ օգտագործվող հատկանիշները (փորձաքննության, ճանաչման ներկայացնելու, հետախուզման և այլն)։

➤ հմտությունները (գրելու, խոսքի, քայլվածքի և այլն)։

➤ հետքերի առաջացման մեխանիզմը։

➤ կրիմինալիստիկական նույնացումը։

➤ կրիմինալիստիկական վարկածները։

➤ հանցագործությունների կատարման եղանակը։

➤ ապացուցողական տեղեկատվության ֆիքսումը և այլն։

Կարելի է շարունակել թվարկումը, ներկայացնել ավելի ծավալուն, բայց պատկերացում կազմելու համար կարծում ենք, նշվածը բավական է։

Այս և նման մասնավոր կրիմինալիստիկական տեսությունները մեթոդոլոգիական հիմք են հանդիսանում հանցագործությունների քննության և կանխման մեթոդիկաների մշակման համար։ Դրանց միջոցների, հնարքների և մեթոդների հիման վրա է, որ կատարվում է առսնձին բաժինների ձևակերպումը՝ կրիմինալիստիկական տեխնիկայի, տակտիկայի և մեթոդիկայի։

Նշենք նաև, որ մեթոդոլոգիայի էության պարզաբանումը ենթադրում է մեթոդի ու տեսության և մեթոդի ու մեթոդիկայի միջև հարաբերակցության պարզում, որոշակի խնդիրների և այլ հարցերի լուծում։

Մեթոդաբանությունը (մասնավորապես դիալեկտիկական-մատերիալիստական) ելնում է նրանից, որ տեսությունը և մեթոդը օրգանապես կապված, բայց ոչ նույնացված, մարդու կողմից իրականության ընկալման ձևեր են։

Տեսությունը գիտության ավելի զարգացած ձևն է, որը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում ունենալու որոշակի իրականության մեջ գոյություն ունեցող որոշակի կապերի և օրինաչափությունների մասին։ Իսկ մեթոդը, ինչպես նշեցինք, բնության և հասարակական կյանքի երևույթների ուսումնասիրման և ճանաչման գիտական եղանակն է։ Մեթոդի բաղադրատարրերից մեկը՝ եղանակը, մեթոդից տարբերվում է իր նպատակներով, կազմությամբ, գործունեության բովանդակությամբ։ Գործունեության եղանակը կազմված է հաջորդականորեն իրականացվող գործողություններից, որոնց օգնությամբ կատարվում է քննիչի գործունեության օբյեկտների անալիզը, սինթեզը, համակցումը, փոխարկումը։ Գոյություն ունի նաև հատուկ մեթոդ։ Այն, ըստ Գ. Ա. Ջորինի, «դինամիկ համակարգ է, որը կարելի է դիտել որպես քննիչի միկրո և մակրո

գործունեության ինտեգրալային միավորում, քննության նպատակներին հասնելու համար»¹:

Հասկանալի լինելու համար նշենք, որ քննչական գործողության միկրոէլեմենտ, ըստ նույն հեղինակի, համարվում է, օրինակ, տակտիկապես արդարացված հայացքը՝ ժեստը, աչքերի շարժումը, նրանց արտահայտչականությունը և այլն:

Քննչական գործողության մակրոէլեմենտը իրենից ներկայացնում է հետազոտվող իրադրության որոնվող օբյեկտի նպատակասլաց ընկալումը (ոչ թե լսել, այլ ականջ դնել, ոչ թե մայել, այլ ուշադիր զննել), ընդունված որոնումների իրականացման գործողությունները և այլն:

Քննչական գործողությունների արդյունավետության պարտադիր պայմանը միկրո և մակրո տարրերի ներդաշնակ համատեղումն է կայուն, տակտիկապես հավասարակշռված համակարգում:

Իսկ կրիմինալիստիկական հատուկ մեթոդը բարդ, բազմաստիճան կոմպոզիցիա է՝ հորինվածք՝ կազմված ինտելեկտուալ, էմոցիոնալ, կամային, գործնական և դատավարական բաղադրիչներից, որը բովանդակում է դրդապատճառների օպտիմալ ժողովածու, քննչական գործողության մասնակցի անձի վրա թույլատրելի ազդեցության և քննվող գործով ճշմարտության բացահայտման համար:

Կրիմինալիստիկական ուսումնասիրման հիմնական օբյեկտներ համարվում են հանցագործությունը և կրիմինալիստիկական գործունեությունը, որը հետազոտվում է տեսական և պրակտիկ գործունեության ընդհանրացումների մակարդակով, վերջինս՝ որոշակի տեսակի հանցագործությունների հետ կապված քննչական իրադրությունների, անմիջական օբյեկտների ճանաչողության և այլ գործոնների ուսումնասիրման առումով: Դա նշանակում է, որ կրիմինալիստիկայի մեթոդաբանությունը և մեթոդների համակարգը պետք է տարբերել գիտական ճանաչողության և պրակտիկ կրիմինալիստիկական գործունեության մեթոդներից, մասնավորապես քննչական, դատափորձագիտական, քրեական գրանցման, օպերատիվ-հետախուզական և այլն:

Ինչպես ցանկացած գիտության, այնպես էլ կրիմինալիստիկայի մեթոդներն ու միջոցները կազմում են նրա գիտական պոտենցիալը, որում կարելի է առանձնացնել փիլիսոփայական, ընդհանուր գիտական, մասնավոր գիտական և հատկապես կրիմինալիստիկական մակարդակներ:

¹ Տի'ս Գ. Ա. Зорин, Криминалистическая методология, Минск, 2000, էջ 8:

Կրիմինալիստիկական մեթոդաբանության փիլիսոփայական մակարդակը կազմում է ճանաչողության դիալեկտիկական մեթոդը, որի շրջանակներում իրենց արտացոլումն են գտնում բնության և հասարակական երևույթների համընդհանուր կայի և փոխկապակցվածության մասին օրենքը, ճանաչողության առարկաների անընդհատ զարգացման և փոփոխությունների մասին օրենքը, քանակական փոփոխությունների անցումը որակականի օրենքը, ինչպես նաև այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են անհատականը (մասնավորը) և հատուկը, մասը և ամբողջը, ձևը և բովանդակությունը և այլ:

Մեթոդների կրիմինալիստիկական դասակարգման տեսության առարկայական բնագավառ մտնում են այն օրինաչափությունները, որոնք ընկած են կրիմինալիստիկական դասակարգման որոշակի համակարգերի կառուցման հիմքում: Օրինակ՝ խնդիրները, նպատակները, օբյեկտները, միջոցները, կանոնները, մեթոդները, այդ գործունեության արդյունքները, ձևերը և դրանց իրացման ուղիները:

Վերևում թվարկած և որոշ այլ օրենքների ու կատեգորիաների մեթոդաբանական նշանակությունը բազմակողմանի է այն առումով, որ նրանք հիմք են կրիմինալիստիկական օբյեկտների ճանաչողության համար, և դրանց օգտագործումը հնարավորություն է տալիս բացահայտելու զուտ կրիմինալիստիկական բնույթի շատ երևույթների բուն էությունը (օրինակ՝ մարդու իդենտիֆիկացումը մատնահետքով, ձեռագրով, ջարդող գործիքի նույնացումը նրա թողած հետքերով և այլն) և նման հետազոտությունների արդյունքները օգտագործել նախկինում տեղի ունեցած իրադարձություններն իմանալու համար, այդ թվում հանցագործության մեխանիզմը և այլ առանձնահատկություններ:

Այդ նույն հիմքի վրա է մշակվում նաև տեխնիկակրիմինալիստիկական, տակտիկակրիմինալիստիկական, մեթոդակրիմինալիստիկական միջոցները, հնարքները, կանոնները, մեթոդները քրեական դատավարությունում: Դրանք էլ հիմք են դառնում այն հանձնարականների համար, որոնք ավելի նպատակահարմար և արդյունավետ կիրառում ունեն:

Վ. Ա. Օբրագովը նշում է կրիմինալիստիկայի զարգացման առանձնահատուկ օրենքներից, որոնք գրականության մեջ հաճախ են հանդիպում, և կարծում ենք հետաքրքիր կլինեն նաև հայ հետազոտողի համար¹.

¹ См. в Криминалистика, под. ред. В. А. Образцова. М., 1995, т. 2 8-9:

1. Կրիմինալիստիկական հետազոտությունների պայմանավորվածությունը պրակտիկ մարմինների պահանջումներին հետ...

2. Նախկինում գոյություն ունեցած, գոյություն ունեցող և նոր առաջացող կրիմինալիստիկական ընթրումների կապը և ժառանգումը.

3. Կրիմինալիստների կողմից այլ գիտությունների նվաճումների ակտիվ, նապատակասլաց, ստեղծագործ ուսումնասիրումը (ինչպես իրավաբանական, այնպես էլ ոչ իրավաբանական բնույթի), դրանց հարմարեցումը իրենց գիտության նպատակներին...

4. Օպերատիվ-հետախուզական գործունեության առաջընթացի և առաջավոր փորձի յուրացումը.

5. Փորձագիտական, քննչական և դատական պրակտիկայի ուսումնասիրումը և օգտագործումը գիտական վերլուծություններում.

6. Կրիմինալիստիկական այն հետազոտությունների հաշվառում և օգտագործում, որոնք վերաբերում են հանրորեն վտանգավոր երևույթներին մեր երկրում և արտասահմանում՝ նրանց վիճակի, դինամիկայի, զարգացման հեռանկարների և այլն:

Պետք է նկատի ունենալ, որ քննչական և փորձագիտական պրակտիկական ևս ճանաչողության գործընթացի կարևորագույն օղակներից մեկն է, քանի որ նա է ապահովում ցանկացած մեթոդի հուսալիության և արդյունավետության ստուգումը: Հետևաբար ճանաչողությունը իրականացվում է այն մեթոդների համակարգի միջոցով, որոնց հետազոտումն ու մշակումը կազմում են ցանկացած գիտության հիմնական խնդիրը:

Կրիմինալիստիկական տեխնիկայի կիրառման մեթոդաբանության հետ մեկտեղ գոյություն ունի նրա գիտական զարգացման մեթոդաբանությունը: Ուսումնասիրելով մասնավոր մեթոդները, որոնք կիրառվում են նոր գիտատեխնիկական մեթոդների ստեղծման և եղածների կատարելագործման համար, պետք է առաջին հերթին նկատի ունենալ քննչական և փորձագիտական պրակտիկայի ընդհանրացումը: Պրակտիկայի վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտելու քննիչների և փորձագետ-կրիմինալիստների տեխնիկական հագեցվածության թերությունները, բացահայտելու նոր սարքավորումների ստեղծման անհրաժեշտությունը:

Ինչպես վերը նշեցինք, կրիմինալիստիկական ակտիվորեն հարմարեցնում և օգտագործում է փիլիսոփայական և տրամաբանական կատեգորիաները, ինչպես նաև ընդհանուր գիտական և մասնավոր գիտական (այդ թվում բնական ու տեխնիկական գիտությունների բնագավառից) ճանաչողության մեթոդներն ու մեթոդիկաները: Դրա հետ մեկտեղ իր

խնդիրների լուծման համար նա մշակում է հատուկ, միայն կրիմինալիստիկական մեթոդներ ու մեթոդիկաներ:

Ընդհանուր գիտական պոտենցիալ ունեցող գիտությունների և կրիմինալիստիկայի համագործակցության արդյունքը համարվում է այն, որ նրա գիտական պոտենցիալը հարստանում է արդեն ընդհանուր գիտական բնույթի կատեգորիաներով:

Դրանցից են.

➤ Ընդհանուր գիտական տեսություններ (օրինակ՝ տեղեկատվության տեսություն, տեսությունների ընդհանուր համակարգ և այլն):

➤ Ընդհանուր գիտական մոտեցումներ (օրինակ՝ համակարգային, կառուցվածքային, ֆունկցիոնալ, տեղեկատվական, ալգորիթմային, հավանականության և այլ):

➤ Ընդհանուր գիտական մեթոդներ և դրանց իրացման հնարքներ (օրինակ՝ դիտարկում, նկարագրում, չափում, համեմատում, փորձարարություն, մոդելավորում և այլ)¹:

Մեթոդոլոգիական սկզբունքները, որոնց հիման վրա զարգանում է կրիմինալիստիկական, տարածվում է նրա բոլոր բաժինների վրա, բայց ճանաչողության գիտական մեթոդները իրենց բովանդակությամբ բազմաբնույթ են:

Մեթոդոլոգիական կարևոր մշանակություն ունեն կրիմինալիստիկայի համար ձևական տրամաբանության դրույթները՝ մտածողության ձևերի մասին գիտությունները, որոնք մեթոդոլոգիական առավել մեծ ազդեցություն են ունենում քննչական տակտիկայի ձևավորման և պրակտիկ կիրառման վրա, հատկապես քննության կազմակերպման և պլանավորման մեթոդների:

Կրիմինալիստիկական օգտվում է նույնացման, հակասությունների, բացառման տրամաբանական օրենքներից, ինչպես նաև տրամաբանական ճանաչողության այնպիսի հնարքներից, ինչպիսիք են. անալիզ, սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա, անալոգիա, հիպոթեզ, ընդհանրացում, համակարգում, դասակարգում և արստրակտ մտածողության ձևերից. հասկացություն, դատողություն, մտահանգում և այլն: դրանք էական դեր են կատարում ոչ միայն կրիմինալիստիկայի մեթոդոլոգիական պրոբլեմների մշակման համար, այլև նրա հատուկ մեթոդների ստեղծման և կրիմինալիստիկայում ճանաչողության ընդհանուր գիտական մեթոդների կիրառ-

¹ Ст'ю Н. С. Полевой, Методологические основы и методы криминалистики, Криминалистика, уч. для вузов. М., 1996, էջ 59:

ման մասին հանձնարարականների համար: Օրինակ՝ ճանաչողության հիպոթետիկ մեթոդը, կրիմինալիստիկական վարկածների օգտագործմամբ, այսինքն՝ տրամաբանական մոդելավորման մեթոդը, որը լայնորեն կիրառվում է կրիմինալիստիկայում և հիմնվում է ձևական տրամաբանության այն դրույթների վրա, որոնք որոշում են հիպոթեզի հասկացությունը, զարգացման փուլերը, կառուցման և ստուգման կանոնները, ինչպես նաև նրա հավաստիության պայմանները:

Կրիմինալիստիկայի գիտության զարգացմանը զուգընթաց ստեղծվում են նոր մեթոդներ, որոնք առաջանալով գիտության տարբեր բնագավառներում, հետագայում վերածվում են ընդհանուր գիտականի: Օրինակ՝ մաթեմատիկական մեթոդները, մասնավորապես՝ հավանական-վիճակագրական, որոնք, առաջանալով մաթեմատիկայում, ձեռք են բերել ընդհանուր գիտական նշանակություն և ներկայումս կիրառվում են գիտության տարբեր բնագավառներում, այդ թվում կրիմինալիստիկայում: Ինչ խոսք, ճանաչողության այդ մեթոդների կիրառումը գիտության տարբեր բնագավառներում ունի իր առանձնահատկությունները, որոնք պայմանավորված են հետազոտման օբյեկտներով, խնդիրներով և որոշակի պայմաններով:

Կրիմինալիստիկայում, ինչպես և ցանկացած գիտության մեջ ավելի լայնորեն կիրառվում են սեփական՝ հատուկ մեթոդները, որոնք ընդունված է անվանել բուն կրիմինալիստիկական մեթոդներ և բնական ու տեխնիկական գիտությունների մեթոդներ: Դրանք հիմնականում կիրառվում են կրիմինալիստիկական փորձաքննություններ կատարելիս:

Բուն կրիմինալիստիկական մեթոդներից են. հետքաբանական, հրագենագիտական, գունագատման, լուսանկարչական, ձեռագրաբանական և այլ մեթոդները:

Լայնորեն կիրառվում են նաև հանցագործությունների քննության կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի մեթոդները, օրինակ՝ քննության պլանավորման, քննչական իրադրությունների վերլուծության, քննչական գործողությունների տակտիկայի և այլն:

Բնական և տեխնիկական գիտությունների մեթոդներից են. ֆիզիկական մեթոդները՝ սպեկտրալ անալիզի, մանրադիտակային հետազոտության, անտեսանելի ճառագայթներում հետազոտության և այլ:

Քիմիական, կենսաբանական, հանքաբանական, բուսաբանական մեթոդներ և այլն:

Վերջին տարիներին ստեղծվել են մեթոդների և հանձնարարականների նոր տեսական կոնցեպցիաներ, որոնք կրիմինալիստիկայի համակարգում տեղավորվելը քննարկման հարց է դարձել:

Մեր կարծիքով ավարտված պետք է համարել ապացույցների հայտնաբերման և հետազոտման մաթեմատիկական մեթոդների մասին ուսմունքը, ինչպես նաև հանցագործություններ քննելիս մոդելավորման և իրադրության վերականգման մեթոդը: Պրակտիկան վկայում է, որ այդ խմբի մեթոդները ունեն ընդհանուր կրիմինալիստիկական նշանակություն, կիրառվում են քրեադատավարական պրակտիկայում ճանաչողության բոլոր սուբյեկտների կողմից բոլոր մակարդակներում:

Գիտական ակտիվ որոնումներ են իրականացվում հանցագործությունների քննության կատարելագործման նոր ուղիներ գտնելու ուղղությամբ, առանձնակի ուշադրություն է դարձվում քննության տեսական հիմքերի կատարելագործմանը:

Այս առումով տական է քննության մեթոդիկական, որն իրականացվում է որպես երկու փոխկապակցված բաժինների ամբողջություն: Առաջինը ընդգրկում է ընդհանուր դրույթները, երկրորդը՝ առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդիկայի վերաբերյալ հանձնարարականները: Սակայն նշված բաժինների կազմությունը նոր տեսական կոնցեպցիաների և ուսմունքների ձևավորման կապակցությամբ հետագա կատարելագործման կարիք է զգում:

Քննության մեթոդիկայի ընդհանուր դրույթներին հաճախ դասում են միայն առանձին հանցագործությունների քննության մեթոդիկայի էության, բովանդակության և կազմության մասին ուսմունքը:

Կարծում ենք, որ մեթոդիկայի ընդհանուր դրույթները կրիմինալիստիկական ուսմունքների բարդ համակարգ է, որոնք իրենց համակցությամբ կազմում են հանցագործությունների բացահայտման և քննության գործընթացի գիտատեսական հիմքերը:

Այդ ուսմունքներից են.

➤ հանցագործությունների քննության մեթոդիկայի էության, սկզբունքային հիմքերի և կազմության մասին ուսմունքը.

➤ հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագրի և նրա դերի մասին ուսմունքը.

➤ հանցագործությունների քննության մեթոդիկական որոշելիս, քննչական իրադրության և հանցագործություն քննելիս սկզբնական և հետագա քննչական գործողություններ նախատեսելուն նրանց ազդեցության մասին ուսմունքը.

➤ քննիչի և օպերատիվ աշխատողների կամ այլ սուբյեկտների փոխգործողության մասին ուսմունքը:

Այս ուսմունքների թվարկը կարելի է շարունակել, մասնավորապես. տակտիկական գործողությունների էության և նշանակության, ինչպես նաև դրանց դատավարական կարգավորման մասին:

Իհարկե, այստեղ խոսքը հիմնականում տեսական գիտելիքների նկատմամբ կիրառական գիտելիքների առավելության մասին չէ: Ամբողջը կախված է նրանից, թե ինչպիսին է տեսությունը: Դեռևս Լուի Պաստյորն է ասել, որ «Գոյություն ունեն գիտություններ և գիտությունների կիրառում, որոնք սերտորեն փոխկապակցված են, ինչպես պտուղը և այն ծնող ծառը¹»:

Այդպիսի գիտություններ են, անկասկած, կրիմինալիստիկան՝ որպես պտուղ, և քրեական դատավարությունը՝ որպես այն ծնող ծառ:

¹ Տե՛ս Тимирязев К. А., Собр. соч. Т. 5, էջ 221-222: Լուի Պաստյորը (1822-1895) ֆրանսիացի գիտնական է, գիտական միկրոբիոլոգիայի հիմնադիրը, որի հետազոտությունները հեղաշրջում կատարեցին բժշկության մեջ: Նրա կատարած փորձերը դրական նշանակություն ունեցան կյանքի ծագման գիտական տեսության զարգացման գործում:

2

ԳԼՈՒԽ 2. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ԱՌԱՐԿԱՆ և ՀԱՄԱԿԱՐԳԸ

§ 1. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ԱՌԱՐԿԱՆ

Որպես գիտություն կրիմինալիստիկան անմիջականորեն կապված է հանցագործությունների քննության գործում գիտական և պրակտիկ հանձնարարականների, մեթոդների ու միջոցների կիրառման հետ: Խոսելով կրիմինալիստիկայի գիտության մասին, սովորաբար նշվում է, որ այն առաջացել է, որպեսզի օգտագործվի հանցագործություններ բացահայտելու համար՝ կիրառելով բնական և տեխնիկական գիտությունների մեթոդները: Նշենք, որ դեռևս 1915թ. Ս. Ն. Տրեգուբովը գտնում էր, որ կրիմինալիստիկայի առարկան համարվում է «բնական և տեխնիկական գիտությունների մեթոդների առավել նպատակահարմար հնարքների և միջոցների ուսումնասիրումը և տեխնիկական գիտելիքների օգտագործումը հանցագործությունների հետազոտման և հանցագործի անձի պարզաբանման համար¹»:

Ի. Ն. Յակիմովը փոքր-ինչ լրացրեց այս սահմանումը, նշելով, որ «կրիմինալիստիկան իր ուսումնասիրման առարկայով ունի բնական, տեխնիկական և բժշկական գիտությունների տվյալների կիրառման մեթոդների ուսումնասիրման ավելի նպատակահարմար միջոցներ և հնարքներ՝ հանցագործությունների քննության և հանցագործի անձի ֆիզիկական ու բարոյական կողմի ուսումնասիրման համար: Իսկ իր նպատակն է օգնել արդարադատությանը քրեական գործով ճշմարտության բացահայտման համար²»:

Այն, որ կրիմինալիստիկան իր ստեղծման ժամանակից օգտագործել է և, գիտության ու տեխնիկայի առաջընթացին համապատասխան, շարունակում է սեփական զարգացումը իրականացնելու համար օգտագործել այլ գիտությունների նվաճումները, կասկած չի հարուցում: Բայց դրանով չի որոշվում կրիմինալիստիկայի բնույթը, քանի որ այդպես է ցանկացած գիտության պարագայում: Ցանկացած գիտություն օգտագործում է այլ գիտությունների նվաճումները, օրինակ՝ ռենտգենյան և այլ ճառագայթները բժշկության մեջ, օպտիկան և սպեկտրալ անալիզը՝ բազմաթիվ գիտությունների մեջ և այլն:

¹ Տե՛ս Թրեգուբով Ս. Ն., Основы уголовной техники. СПб, 1915, էջ 18:

² Տե՛ս Կիմով Ի. Ն. Криминалистика, М., 1925, էջ 56:

Այս առումով չպետք է համաձայնվել Ռ. Ս. Բելկինի և Ա. Ա. Էյսմանի այն կարծիքին, որ «հատուկ գիտությունների (այդ թվում՝ բնական) տվյալների օգտագործումը կրիմինալիստիկայի առանձնահատկությունն է¹»:

Նման կարծիքները առիթ հանդիսացան որոշ դատավարագետների համար կրիմինալիստիկան համարելու քրեադատավարական գիտության մի մասը, կամ գիտատեխնիկական գիտաճյուղ, որը մշակում է «տեխնիկական և բնական հնարքներ, հանցագործությունների քննության խնդիրների համար կիրառելու նպատակով²»:

Բայց նույնիսկ այդ գիտնականներն էին հակված ամբողջ կրիմինալիստիկայի բովանդակությունը չհանգեցնելու բնական և տեխնիկական գիտություններից վերցված դրույթներին:

Դրա հետ կապված Մ.Ս. Ստրոգովիչը գրում է. «Կրիմինալիստիկայի բովանդակությունը չի սահմանափակվում քննության խնդիրների համար բնական և տեխնիկական գիտությունների տվյալների հարմարեցմամբ: Կրիմինալիստիկան ուսումնասիրում և մշակում է նաև քննության այն հնարքները, մեթոդները, որոնք հիմնված են ոչ թե բնագիտության (ֆիզիկա, քիմիա և այլն) և տեխնիկայի բնագավառի դրույթների վրա, այլ քննչական պրակտիկայի ընդհանրացման³»:

Կարծում ենք՝ հենց դա է կրիմինալիստիկայի բնույթը, էությունը:

ճիշտ պետք է համարել այն հեղինակների կարծիքը, ըստ որի՝ «կրիմինալիստիկայի բովանդակությունը կազմող գիտելիքների հիմնական և գլխավոր աղբյուրը եղել է հանցագործությունների քննության ու բացահայտման պրակտիկան⁴»:

Հենց այդ դրդեց մասնագետներին ուսումնասիրելու հանցագործության հետքերը, որը հետագայում պահանջեց հետքերի առաջացման օրինաչափությունների և այլ հարցերի վերաբերյալ նյութերի հավաքման, ուսումնասիրման, ընդհանրացման գործում գիտական մոտեցում:

Մեր կարծիքով հնարավոր չէ գտնել այնպիսի հիմքեր, որոնք կապացուցեն, որ գիտականորեն կարելի է մշակել հանցագործությունների քննության մեթոդներ և միջոցներ առանց ուսումնասիրելու քննության պրակտիկան: Այս կապակցությամբ, ինչպես նշեցի վերը, անվիճելի ա-

¹ Տե՛ս Теория доказательств в советском уголовном процессе. М., 1973, էջ 30:

² Տե՛ս Строгович М. С., Курс советского уголовного процесса. М., 1973, էջ 102:

³ Տե՛ս Теория доказательств в советском уголовном процессе. М., 1973, էջ 30:

⁴ Տե՛ս А.А.Эйсман, Криминалистика в системе юридических и естественных наук в кн. сборник научных работ, Литовского НИИСЭ, Вильнюс 1962 вып.1, էջ 27:

ռավելություններ ունեն որոշ հեղինակների այն բնութագրումները, որոնք կրիմինալիստիկայի առարկայի մեջ տեսնում են հանցագործության քննության պրակտիկայի տարրերը:

Օրինակ՝ Յու.Ի. Կրասնոբաևը գրում է. «...Կրիմինալիստիկայի առարկան են համարվում այն օրինաչափությունները, որոնք վերաբերում են հանցագործությունների նախապատրաստման, կատարման ու քողարկման ձևավորման և իրականացման եղանակներին, հանցավոր գործունեության հետքերի առաջացմանը, հետազոտմանը և նրա՝ որպես գիտության զարգացման, օրինաչափություններին¹»:

Մրա հետ կապված, կարծում ենք, որ կրիմինալիստիկայի առարկային պետք է վերագրել նրա պատմությունը և զարգացման օրինաչափությունները: Այդպես են բնութագրվում շատ գիտություններ: Եվ դա տրամաբանական է. յուրաքանչյուր գիտություն պետք է ինչ որ չափով ուսումնասիրի ինքն իրեն, որն անհրաժեշտ միջոց է սեփական ճանաչողական գիմանոցի կատարելագործման համար:

Պատահական չէ, որ կրիմինալիստիկան համարվում է հանցագործությունների քննության գիտություն:

Վերոգրյալ մի շարք հարցեր իրենց արտացոլումը գտան կրիմինալիստիկայի առարկայի բնորոշման մեջ, որպես հանցագործությունների քննության և բազանալտման մեթոդների, հնարքների և միջոցների ամբողջություն: Այս սահմանումը տրվեց 20-րդ դարի 20-ական թվականներին և երկար ժամանակ մնաց գերակշռող կարծիք²:

Այս սահմանումը հիմնականում ճիշտ համարեց Ա. Ն. Վասիլը. միաժամանակ ընդգծելով նրա անորոշությունը և ոչ բավարար լրիվությունը, նա կրիմինալիստիկայի առարկային վերագրեց հանցագործությունների պլանաչափ քննության կազմակերպումը, ապացույցների հավաքման և հետազոտման գործողությունները, կրիմինալիստիկական հնարքների և մեթոդների կիրառումը հանցագործությունների կանխման գործում³:

¹ Տե՛ս Կրասնոբաև Կ. Ի., Совершенство предварительного следствия и предмет советской криминалистики, Волгоград, 1959, էջ 77: Баев О. Я., Предмет криминалистики и теория судебных доказательств. Правоведение 1983г., №3:

² Տե՛ս Натансон В. М., Основы техники расследования преступлений, Харьков, 1925, вып. 1, էջ 6: Митричев С. П., Введение в курс советской криминалистики, М. 1958, էջ 4: Белкин Р. С., Прспективы развития советской криминалистики, Труды Вш МВД СССР, 1967, вып. 15, էջ 4: Колмаков В. П., Введение в курс науки советской криминалистики, курс лекций, Одесса, 1973, էջ 6:

³ Տե՛ս Криминалистика, уч. для вузов. М., 1980, էջ 14:

Ավելի ուշ Ա. Ն. Վասիլևը կրիմինալիստիկայի առարկան բնութագրեց որպես «դատավարական օրենքով կարգավորված տարբեր մեթոդների մասնակցությունը հանցագործությունների քննությանը»:

Մեթոդներ ասելով, ըստ նրա, այս դեպքում հասկացվում են կրիմինալիստիկայում մշակված միջոցները, հնարքները և մեթոդական հանձնարարականները:

Այսպիսով, կրիմինալիստիկայի առարկայի ամբողջական, համակարգված հասկացությունը արտահայտվում է առարկայի, մեթոդների և կառուցվածքի առումով, նրա բոլոր փոխկապակցված մասերով՝ գիտական, մեթոդալոգիական, ինչպես նաև կրիմինալիստիկական տեխնիկայի, քննչական (կրիմինալիստիկական) տակտիկայի և քննության մեթոդիկայի: Այլ կերպ ասած՝ կրիմինալիստիկայի առարկային պետք է վերագրվեն ոչ միայն կրիմինալիստիկական մեթոդները, հնարքները և միջոցները, այլև նրանց կիրառումը հանցագործություններ քննելիս, այսինքն քննչական պրակտիկայում, որոշակի տեսանկյունից:

Այս հարցերի մասին վերլուծական դատողություններ կան Ս. Մ. Պոտապովի, Ն. Վ. Թերզիևի, Ա. Ն. Վասիլևի, Ա. Ի. Վինբերգի, Ա. Վ. Դուլովի, Վ. Յա. Կուլիմի, Վ. Պ. Կուլմակովի, Ի. Ֆ. Կրիլովի, Ս. Պ. Սիտրիչևի և այլ կրիմինալիստների աշխատանքներում, որոնք նպատակ ունեն զարգացնել կրիմինալիստիկայի առարկային վերաբերվող գիտական ուղղությունը:

Կրիմինալիստիկական առաջացավ որպես հանձնարարականների համակարգ՝ քննիչների համար, որի հետագա հարստացումն ու զարգացումը հնարավորություն տվեցին այն դիտել որպես իրավական գիտություն:

Կրիմինալիստիկական տեխնիկայի և դատական փորձաքննությունների կատարելագործման հարցերում որոշակի ավանդ ունեն ռուս կրիմինալիստներ Լ. Ե. Արոցկերը, Գ. Լ. Գրանովսկին, Բ. Լ. Ջոտովը, Ա.Ա. Լևին, Բ. Ի. Շևչենկոն, Ա. Ռ. Շյախովը և ուրիշներ:

Անհրաժեշտ ենք համարում, սակայն, ընդգծել, որ կրիմինալիստիկական մեթոդների մասին խոսելիս գրականության մեջ թույլ է տրվում դրանց մշակման համար այլ գիտությունների (բնական, տեխնիկական, հասարակական) տվյալների գերազնահատում և բուն կրիմինալիստիկական հետազոտությունները՝ թերագնահատվում: Դա հատուկ է այն հեղինակներին, որոնք այլ գիտություններում տեսնում են կրիմինալիստիկական գիտելիքների հիմնական աղբյուրը: Այն դեպքում, երբ քննչական պրակտիկայի կարիքների համար ցանկացած գիտության տվյալների կիրառման հնարավորությունները և եղանակները հայտնաբերելը, հնարա-

վոր է միայն այդ պրակտիկայի ճանաչողության օրինաչափությունների և կրիմինալիստիկայի մյուս օբյեկտների հետ գոյություն ունեցող փոխկապակցությունների օրինաչափությունների հիման վրա: Նշված օրինաչափություններն ու փոխկապակցությունը ճանաչել կարելի է միայն կրիմինալիստիկական և ոչ որևէ այլ գիտական հետազոտությունների օգնությամբ, ուստի մյուս նշված գիտությունները անհրաժեշտ է դիտել որպես կրիմինալիստիկայի գիտության զարգացման հիմնական աղբյուր:

Կրիմինալիստիկայի առարկայի հետագա լրացումը եղավ այն, որ նրա շրջանակներում առաջարկվեց ուսումնասիրել դատական ապացույցների առաջացման, հայտնաբերման, ամրապնդման, վերցման, հետազոտման, զնահատման և օգտագործման հարցերը¹:

Հետագայում, Ռ. Ս. Բելկինի բնորոշումն ստացավ հետևյալ բովանդակությունը. «Կրիմինալիստիկան գիտություն է հանցագործության օրինաչափությունների, մեխանիզմի, հանցագործության և նրա մասնակիցների վերաբերյալ տեղեկատվության առաջացման մասին, ապացույցների հավաքման, հետազոտման, զնահատման և օգտագործման օրինաչափությունների մասին և այդ օրինաչափությունների իմացության վրա հիմնված դատական հետազոտությունների և հանցագործությունների կանխման հատուկ մեթոդների և միջոցների մասին»²:

Կրիմինալիստիկայի վերը նշված հասկացության կարևոր հատկանիշը ապացույցների հետ կապված հարցերն են, հատկապես դրանց առաջացման օրինաչափությունների հարցի պարզաբանումը:

Դատական ապացույցների առաջացմանը կառավարում են մի շարք օրինաչափ կապեր, որոնք կարող են դասակարգվել ըստ տարբեր հիմքերի, մասնավորապես՝

1. Հանցագործության հետքերի առաջացման գործընթացի կրկնվելիությունը.

2. Հանցագործի գործողությունների և հանցավոր արդյունքի միջև եղած օրինաչափ կապը.

3. Հանցագործության եղանակի և նրա հետքերի օրինաչափ կապը.

4. Հանցագործության եղանակի և որոշակի ղեպերով պայմանավորված, դրա ընտրության գործոնների միջև եղած օրինաչափ կապը³:

¹ Stiu Белкин Р. С., Краснобаев Ю. И., О предмете советской криминалистики, М., 1967, №4, էջ 27:

² Stiu Криминалистика, уч. для вузов. М., 1999, էջ 42:

³ Stiu Белкин Р.С. Актуальные проблемы советской криминалистики, М., 1980, էջ 6:

Մեր կարծիքով Ռ.Ս. Բելկինի այս դատողությունները համոզիչ են: Սակայն սույն թվարկը ունի միայն կողմնորոշող նշանակություն, սպառնիչ չէ և չի կարող դիտվել որպես տվյալ հասկացության տրամաբանորեն կայուն և ամբողջական բաժանում:

Պետք է նկատի ունենալ նաև, որ այս թվարկման առաջին կետը օրինաչափությունների տեսակ չէ, այլ հետքառաջացման օրինաչափ գործընթացի հատուկ որակ: Եվ, վերջապես, դատական ապացույցների առաջացմանը կառավարում են շատ օրինաչափ կապեր, որոնք կարող են դասակարգվել տարբեր հիմքերով:

Բացի այդ, նշված սահմանումը ըստ էության կրիմինալիստիկական ներկայացնում է որպես ապացուցողական իրավունքի (ապացույցների տեսության) մասը՝ դրանով իսկ կրիմինալիստիկական ձուլելով քրեական դատավարության գիտության հետ՝ փոխանակ դրանք սահմանազատելու: Չի բացահայտվում կրիմինալիստիկայի բուն էությունը:

Կրիմինալիստիկայի ընդհանուր տեսության ստեղծման գործընթացը շարունակվում է բավական երկար տարիներ:

Ներկայումս կրիմինալիստիկայում չկա տեսություն, որն իր նշանակությամբ և բովանդակությամբ ընդունակ լինի գիտության ընդհանուր տեսության դեր կատարելու:

Որոշ հեղինակներ կարծում են, որ կրիմինալիստիկայի համար այդպիսի դեր կարող է կատարել օրինակ կրիմինալիստիկական իդենտիֆիկացման տեսությունը: Սակայն այդ կարծիքները, ըստ մեզ, ճիշտ չեն, քանի որ այդ տեսությունը չի լուսաբանում գիտության առարկայի հետ կապված հարցերը, նրա տեղը գիտությունների համակարգում, գիտության համակարգի, այլ կերպ ասած մեթոդոլոգիայի կարևոր հարցերի մասին: Բացի այդ, նշված տեսությունը սահմանափակ շրջանակներում է լուսաբանում կրիմինալիստիկայի մեթոդների մասին հարցը. այն է՝ միայն նույնացման գործընթացի տեսանկյունից:

Պետք է նկատի ունենալ նաև, որ այն վերաբերում է թեև կարևոր, բայց սահմանափակ խնդիրների լուծմանը, որը չի սպառում գիտության բոլոր խնդիրները:

Կրիմինալիստիկական նույնացման (իդենտիֆիկացման) նշանակությունը և բովանդակությունը հանգամանորեն մեկնաբանելու փորձերը հանգեցնում են աշխարհայացքային բնույթի մեթոդոլոգիական սխալների: Պարզապես պետք է ընդունել, որ կրիմինալիստիկական իդենտիֆիկացումը մասնավոր կրիմինալիստիկական տեսություններից մեկն է և

համարվում է ընդամենը ընդհանուր կրիմինալիստիկական տեսության տարրերից մեկը, նրա անբաժանելի մասը:

Այս կապակցությամբ, անդրադառնալով կրիմինալիստիկայի ընդհանուր տեսության տարրերին, նշենք, որ այն առավել լիարժեք, բովանդակալից կդառնա ապացույցների առաջացման, հայտնաբերման, հետազոտման, գնահատման և օգտագործման օրինաչափություններով:

Ի դեպ, խոսքը այն ապացույցների մասին է, որոնք ստացվում են օբյեկտիվ աղբյուրներից (օրինակ՝ տեղագնություն, խուզարկություն և այլն):

Սույն դատողություններին Ն. Ա. Սելիվանովը ավելացնում է նաև կրիմինալիստիկական պրոֆիլակտիկան, որը ներառում է այն միջոցներն ու հնարքները, որոնք.

Ա. կիրառվում են համապատասխան հանցագործությունները կանխելու համար.

Բ. դժվարացնում են հանցավոր ոտնձգությունը.

Գ. նպաստում են ժամանակին կանխելու հանցավոր դրսևորումները:

Այս թվարկը հիմք է տալիս նրան հանգելու հետևյալ համառոտ և ոչ այնքան բովանդակալից հետևությանը. «Կրիմինալիստիկայի առարկան նրա կողմից ուսումնասիրվող բոլոր օբյեկտներն են և համապատասխան գիտական վերլուծությունների բոլոր արդյունքները¹»:

Կրիմինալիստիկայի ընդհանուր տեսության բովանդակությունից ելնելով կարելի է սահմանել կրիմինալիստիկական գիտական հետազոտությունների առավել կարևոր ուղղությունները:

Մեր կարծիքով կրիմինալիստիկայի ընդհանուր տեսության բնագավառում այդպիսի ուղղություններ են համարվում.

Դ. Կրիմինալիստիկական ուսմունքը հևրությունների մասին: Անձի հմտությունների համակարգը, որն արտահայտվում է հանցագործություններ կատարելիս: Հանցագործություն կատարած անձին պարզելիս հմտությունների մասին տեղեկատվության նշանակությունը: Հանցագործի հմտությունների մասին տեղեկատվության օգտագործումը նրա հետախուզման համար: Հանցագործության կատարման եղանակը և հմտությունները: Հանցագործությունը թաքցնելու եղանակը և հմտությունները:

¹ St'u Селиванов Н. А., Советская криминалистика (система понятий), М., 1982, էջ 11:

Բ. Հելլոստաջացման մեխանիզմի մասին ուսմունքը: Դրա օրինաչափությունները, հետքի առաջացման գործընթացի տեղեկատվական կողմը:

Գ. Կրիմինալիստիկական ուսմունքը, հայրնաբերված կրիմինալիստիկական օբյեկտների ապացուցողական նշանակության և գրանցման (հաշվառման) ֆիքսման մասին:

Դ. Ապացուցողական տեղեկատվության կուրսկումը և պահպանումը համակարգիչներում, կրիմինալիստիկական գրանցման (հաշվառման) համակարգի կարարելագործումը: Կրիմինալիստիկական գրանցման (հաշվառման) մեթոդաբանական հիմքերը:

Ե. Կրիմինալիստիկական իդենտիֆիկացման ուսմունքը: Ճանաչողության այն համակարգի, կապի և մեթոդների հիմնավորման մասին ուսմունքը, որը կիրառվում է կրիմինալիստիկական իդենտիֆիկացման ժամանակ, իդենտիֆիկացման գործընթացի մեթոդաբանական գործառույթները:

Զ. Կրիմինալիստիկական կանխատեսումների ուսմունքը: Կրիմինալիստիկական կանխատեսումների տեսության բովանդակությունը և մեթոդաբանական հիմքերը: Կրիմինալիստիկական կանխատեսումների մեթոդները: Հանցագործությունների կատարման եղանակների կանխատեսումները: Հանցագործությունների կատարմանը նպաստող հանգամանքների կանխատեսումները: Հանցագործությունները կանխող միջոցառումների կանխատեսումները: Կրիմինալիստիկական կանխատեսումների այլ տեսակները:

Է. Կրիմինալիստիկական հասկացությունները և տերմինները: Կրիմինալիստիկական տերմինաբանության միասնականացման հեռանկարները: Կրիմինալիստիկայի առարկայի և այլ կրիմինալիստիկական կատեգորիաների առարկայի բնորոշումը, կրիմինալիստիկայի տեղը գիտությունների համակարգում:

Ը. Կրիմինալիստիկայի համակարգում կրիմինալիստիկական դասակարգումները: Կրիմինալիստիկական մեթոդների համակարգը և այլն: Գրականության մեջ գերակշռող կարծիք կա այն մասին, որ կրիմինալիստիկական տակտիկական հնարքների և գիտատեխնիկական միջոցների ու մեթոդների ամբողջություն է, որը կիրառվում է հանցագործությունների բնության և կանխման գործողություններն իրականացնելիս, քրեադատավարական օրենքներին համապատասխան¹:

¹ Տե՛ս ուսաստանյան հրատարակության «կրիմինալիստիկա» դասագրքերում: Մ. 1996ր., Շ. Սերբոցր 2001ր., Մ. 1999ր. և այլն:

Այս սահմանումը մեր կարծիքով ճիշտ է, բայց թերի, քանի որ այն չի բովանդակում տակտիկական հնարքների և գիտատեխնիկական միջոցների բնույթը: Նրանում չի խոսվում հանցագործությունների քննության մեթոդիկայի մասին:

Նույնպիսի կարծիք է հայտնել նաև Ա. Ն. Վասիլևը, կրիմինալիստիկայի առարկային ավելացնելով հանցագործությունների պլանավորված քննության կազմակերպումը, ապացույցների հավաքումն ու հետազոտումը և հանցագործությունների կանխումը՝ կրիմինալիստիկական մեթոդների և հնարքների կիրառմամբ¹:

Հանրահայտ է, որ հանցագործությունները, դրանց արտահայտությունը շրջակա միջավայրում և քննությունը ուսումնասիրվում է ոչ միայն կրիմինալիստիկայի, այլև այլ գիտությունների կողմից, որոնք հետազոտում են դրանց առանձին կողմերը, իրենց նպատակներով և իրենց հատուկ մեթոդներով (օրինակ՝ հանցագործությունը ուսումնասիրվում է քրեական իրավունքով, կրիմինոլոգիայով, քրեական դատավարությամբ և այլն): Հանցագործությունը, նրա արտահայտությունը շրջակա միջավայրում և քննությունը անմիջական օբյեկտ են համարվում կրիմինալիստիկայի, քրեական դատավարության, դատական հոգեբանության համար: Բայց գրականության մեջ կրիմինալիստիկայի և քրեական դատավարության առարկաները սահմանազատելիս այդ կարևոր հանգամանքը երբեմն հաշվի չի առնվում, և այն իրականացվում է միայն մեկ գործոնի հիման վրա, որը վերաբերում է հանցագործության քննությանը:

Կրիմինալիստիկայի առարկան կազմում են հանցագործության, գլխավորապես այդ գիտության կողմից ուսումնասիրվող առանձնահատուկ կողմերը, նրա արտացոլումը շրջակա միջավայրի վրա և քննությունը, ինչպես նաև այդ բնագավառների միջև եղած օրինաչափ կապերը:

Հանցագործության կրիմինալիստիկական տեսանկյունը որպես նրա առարկայի տարր, իրենից ներկայացնում է որոշակի միջավայրի, որոշակի ժամանակաընթացքում զարգացած՝ հանցագործի և այդ միջավայրի փոխգործողության գործընթաց, հանցագործությունը նախապատրաստելիս, կատարելիս և քողարկելիս, ինչը և առաջացնում է փոխգործողություններ նյութական իրադրությունում, մարդկանց գիտակցության մեջ, որոնք կարող են հայտնաբերվել կրիմինալիստիկական մեթոդների ու միջոցների օգնությամբ և օգտագործվել որպես քրեական գործի նյու-

¹ Стів Васильев А. Н., Яблоков Н. П., Предмет и теоретические основы криминалистики. М., 1984, т. 40:

քերում հանցագործության հանգամանքների ապացուցողական վերարտադրություն, քրեադատավարական խնդիրների լուծման նպատակներով:

Նյութական իրադրությունում և մարդկանց գիտակցության մեջ հանցագործության արտացոլումը կրիմինալիստիկական ուսումնասիրում է որպես հանցագործության մեխանիզմի գործողության արդյունք:

Առարկայական այդ բնագավառում գլխավորը որոշակի նյութական և հստակ արտահայտված հետքերի օրինաչափ առաջացումն է և նրանց ամբողջականությունը, որոնք հանցագործի և շրջակա միջավայրի փոխգործողության արդյունք են:

Կրիմինալիստիկական ուսումնասիրում է օբյեկտիվ իրականության ճանաչողության իր բնագավառները, մասնավորապես դրանց որոշակի կողմերը, հատկությունները, կապերը և հարաբերությունները, և ոչ թե այն օրինաչափությունները, որոնք անմիջական հետազոտման չեն ենթարկվում:

Այդ բնագավառում գործող օրինաչափությունները համարվում են գիտական, էմպիրիկ և տեսական հետազոտությունների նպատակը, իսկ նրանց իմացությունը՝ նման հետազոտությունների արդյունք:

Շատ բովանդակալից և դիպուկ է թվում Վ. Ն. Կուդրյավցևի դատողությունը. «Գիտելիքների ցանկացած ամբողջությունը դառնում է գիտություն այն ժամանակ, երբ այն հնարավորություն է տալիս բացահայտելու իր ուսումնասիրման առարկային վերաբերող օբյեկտիվ օրինաչափությունները»¹:

Հետաքրքիր ձևակերպումով է ներկայացնում կրիմինալիստիկայի գիտության ներկա վիճակը Ն. Պ. Յարլոկովը. Ժամանակակից կրիմինալիստիկայի մեծ հնարավորությունները հանցագործությունների բացահայտման գործում, նրա բարձր գիտատեխնիկական մակարդակը հնարավորություն են տալիս հիմնավոր պնդելու ցանկացած հանցագործության սկզբունքային բացահայտման հնարավորությունը:

Այդ թեզը ապացուցվում է կրիմինալիստիկական տեխնիկայում (չկա հանցագործության հետք, որը լրիվ կամ մասնակիորեն հնարավոր չլինի հայտնաբերել), կրիմինալիստիկական տակտիկայում (չկան հանցանշաններ, որոնք հնարավոր չլինեն բացահայտել և վերծանել) և կրիմինալիստիկական քննության մեթոդիկայում (չկան քննչական իրադրություն-

¹ Ст'я Кудрявцев В. Н., Совершенство образа жизни как предпосылка осуществления политики КПСС в области борьбы с преступностью. Иркутск, 1981, էջ 42:

ներ, որոնք բացարձակորեն խոչընդոտում են հանցագործության բացահայտմանը»¹:

Նույն հեղինակը միաժամանակ արդարացիորեն գրում է մի իրողության մասին, որ վերաբերվում է մեր Հանրապետության պրակտիկային. «Պրակտիկայում հանցագործությունների բացահայտման փաստական մակարդակը, դժբախտաբար չի համապատասխանում կրիմինալիստիկայի նշված հնարավորություններին»²:

Դրան հասնելու համար անհրաժեշտ է ճիշտ պատկերացնել կրիմինալիստիկայի առարկայի էությունը, որը փոխկապակցված օրինաչափությունների համակարգ է: Այդ օրինաչափությունները են.

1. Հանցագործության օրինաչափությունները, որոնք են՝ հանցագործի անձի և նրա վարքագծի, նրա վարքագծի և տուժողի, ինչպես նաև հանցագործի՝ շրջակա միջավայրի հետ փոխազդեցության օրինաչափությունները:

2. Հանցագործության արտահայտման օրինաչափությունները:

3. Հանցագործության բնության օրինաչափությունները և այլն:

Կրիմինալիստիկան, ինչպես և մյուս իրավաբանական գիտությունները, ուսումնասիրում է սոցիալական երևույթները: Կարծում ենք, որ կրիմինալիստիկայի առարկայի մեջ պետք է տեսնել այն օրինաչափությունները, որոնք բնութագրում են այդ գիտության կողմից ուսումնասիրվող օբյեկտները, գործընթացները, երևույթները: Ցանկացած գիտություն այս կամ այն չափով իրենից ներկայացնում է իրականության տեսական արտացոլումը, արդեն բացահայտված կամ ճանաչված օրենքների հիման վրա:

Կրիմինալիստիկայի հետազոտման օբյեկտները, այս առումով, կարող են դասակարգվել երկու մեծ խմբի.

1. Հանցավոր գործունեություն և նրանից առաջացած հետևանքներ:

2. Հանցագործություն կազմող գործոնների ճանաչողության գործընթացը:

Նշենք նաև, որ այս խմբերից յուրաքանչյուրը ընդգրկում է շատ լայն շրջանակի բազմաբնույթ օբյեկտներ, որոնք կազմում են կրիմինալիստիկայի առանձնահատկությունը:

Հաշվի առնելով վերջին տարիներին տարբեր գիտնականների կողմից արտահայտված մի շարք նկատառումներ և վերը շարադրվածը,

¹ Տե՛ս Криминалистика, учебник для вузов, М., 1996, էջ 1:

² Տե՛ս նույն աշխատությունը, էջ 2:

կարծում ենք, կրիմինալիստիկայի առարկան ճիշտ կլինի բնորոշել հետևյալ կերպ.

Կրիմինալիստիկան գիտություն է այն օրինաչափությունների մասին, որոնք արտացոլվում են հանցանքի կատարման մեխանիզմում և այն գործունեության մեջ, որն ուղղված է քրեական գործով ճշմարտությունը բացահայտելուն, ինչպես նաև հանցագործությունը կանխելուն, որն իրականացվում է իրավապահ մարմինների կողմից, իրենց լիազորությունների սահմանում, հատուկ միջոցների, հնարքների և մեթոդների կիրառմամբ, մշակված այդ օրինաչափությունների ճանաչողության հիման վրա՝ օգտագործելով բնական, տեխնիկական և այլ գիտությունների նվաճումները, ինչպես նաև ընդհանրացված պրակտիկան:

§ 2. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՀԱՍՏԱԿԱՐԳՐ

Կրիմինալիստիկայի, ինչպես և ցանկացած այլ գիտության համակարգ, զարգանում և փոփոխվում է գիտության զարգացմանը զուգահեռ:

Ռուսաստանյան Դաշնության ճանաչված կրիմինալիստների հիմնական մասը, որոնք ընդունում են, որ կրիմինալիստիկայի առարկան կրիմինալիստիկական տեխնիկայի, տակտիկայի և քննության մեթոդիկայի օրինաչափությունների ամբողջություն է, հնարավոր չեն համարում փոխել ավանդական պատկերացումը կրիմինալիստիկայի համակարգի վերաբերյալ: Այդ համակարգի մեջ գիտության նոր տեսական բաժին մտցնելը կապված է կրիմինալիստիկայի տեսության ընդհանուր զարգացման հետ (այն կրիմինալիստիկայի մեթոդոլոգիան է):

Ընդհանրապես, կրիմինալիստիկայի համակարգում փոփոխությունները կապվում էին և հիմա էլ կապվում են միայն նրա բաժինների կառուցվածքի հետ:

Ռուսաստանի Դաշնությունում հրատարակված գրականության մեջ կրիմինալիստիկայի համակարգը կատարելագործելու վերաբերյալ առաջարկները չեն հիմնավորվում նրանով, որ կրիմինալիստիկան պետք է ճանաչի նոր երևույթներ, որոնք նախկինում նրա առարկայի մեջ չէին մտնում¹:

¹ Գրականություն ասելով այսուհետև նկատի կունենանք ՌԴ-ում հրատարակվածները, քանի որ ՀՀ-ում այն բացակայում է:

Գիտության համակարգի ավանդական սահմանումից որոշ չափով տարբեր է Ա. Ա. Էյսմանի առաջարկը, ըստ որի՝ կրիմինալիստիկան կազմված է.

Ա. *Գիտության բնորոշումից և ընդհանուր տեսությունից:*

Բ. *Հանցագործությունների բացահայտման և կանխման տեխնիկական միջոցների և մեթոդների մասին ուսմունքից* ներառյալ կրիմինալիստիկական տեխնիկայի հիմունքները:

Գ. *Կրիմինալիստիկական փորձաքննությունների առանձին տեսակների վերաբերյալ ուսմունքից:*

Դ. *Ըննչական տեխնիկայի, տեխնիկական միջոցների և մեթոդների առանձին տեսակների մասին ուսմունքից:*

Ե. *Հանցագործությունների բացահայտման և կանխման տեխնիկայի և մեթոդիկայի մասին ուսմունքից* ներառյալ, հատկապես առանձին տեսակի հանցագործությունների բացահայտման ու կանխման տեսական հիմքերը¹:

Այս սխեման, սակայն, հետագայում քննադատվեց Ա. Ն. Վասիլևի և Ն. Պ. Յաբլոկովի կողմից²:

Կրիմինալիստիկայի համակարգի, նրա կառուցվածքի և բաժինների ավանդական պատկերացումները, մեր կարծիքով, վերանայման, ճշգրտման կարիք ունեն:

Դրա հետ մեկտեղ պետք է շատ զգուշությամբ վերաբերվել կրիմինալիստիկայի ձևավորված համակարգին, որպեսզի թույլ չտրվեն այնպիսի փոփոխություններ, որոնք գիտության հետագա զարգացման անհրաժեշտությունից չեն բխում:

~~Կրիմինալիստիկայի համակարգը միատարր է: Նա ունի տեսական և պրակտիկ մակարդակներ:~~

Տեսական մակարդակին են վերաբերվում կրիմինալիստիկայի տեսական բաժինը և մյուս բաժինների տեսական մասերը: Կրիմինալիստիկայի տեսական բաժինը պետք է կազմվի գիտության բնորոշումից և ընդհանուր տեսությունից, որը պետք է ընդգրկի, ինչպես մեզ թվում է, հետևյալ կրիմինալիստիկական տեսությունները.

1. *Հանցագործությունները:*

2. *Պրակտիկ արտաբերությունը շրջապատում և հետևանքները:*

3. *Հանցագործությունների քննությունը:*

¹ Տե՛ս Советская криминалистика, Теоретические проблемы. М., 1978, էջ 51-56:

² Տե՛ս Васильев А. Н., Яблоков Н. П., Предмет, система и теоретические основы криминалистики. М., 1984, էջ 60:

Նման կառուցվածքի դեպքում գիտության ընդհանուր տեսությունը կհամապատասխանի նրա առարկային:

Հանցագործության ընդհանուր տեսությունը պետք է ընդգրկի ուսմունք հանցագործի մասին, հանցագործության կատարման (նախապատրաստման, քողարկման) և հանցագործության այլ տարրերի մասին, որոնք ներառվում են կրիմինալիստիկական ուսմունքի մեջ:

Հանցագործության պրակտիկ բազան տարրեր բնույթի հանցագործությունների հետազոտությունն է ~~կրիմինալիստիկական մեթոդիկայի բաժնի շրջանակներում:~~

Կրիմինալիստիկական տակտիկայի և տեխնիկայի պրոբլեմների որոշակի կրիմինալիստիկական հետազոտությունները պրակտիկ տվյալների աղբյուր են հանդիսանում հանցագործությունների քննության և բացահայտման տեսության ձևավորման համար: Կրիմինալիստիկայի պրակտիկ մակարդակը ընդգրկում է ~~կրիմինալիստիկական~~ որոշակի հետազոտություններ, նրանց ամրապնդման ընթացքը, հետազոտման մեթոդները, հետազոտման ընթացքի նկարագրումը, արդյունքները:

Կրիմինալիստիկական գրականության մեջ որոշ չափով շոշափվել է կրիմինալիստիկայում նոր բաժին առանձնացնելու հարցը, որը նվիրված լինի քննության կազմակերպմանը: Դեռևս 1930 թվականին Վ. Ի. Գրոմովը գրել է, որ կրիմինալիստիկան պետք է զբաղվի քննության ողջ գործընթացի առավել ճշգրիտ կազմակերպական կառուցումով¹:

Գ. Ն. Ալեքսանդրովը 1955թ. առաջարկեց կրիմինալիստիկայի համակարգում ավելացնել ինքնուրույն բաժին՝ նվիրված քննչական վարկածներին և քննության պլանավորմանը²:

Դրանից մի քանի տարի անց կրիմինալիստիկայի համակարգի ուրույն սխեմա առաջարկվեց Ս. Ս. Ստեպիչևի կողմից, որտեղ գիտության երկրորդ բաժինը կոչվում էր «Քննության կազմակերպամեթոդական հիմունքները³»:

Այս բաժինը այլ պրոբլեմների թվում ընդգրկելու էր նաև քննչական վարկածների և քննության պլանավորման պրոբլեմները և հասարակայնության ընդգրկումը հանցագործությունների քննությանն ու քննիչի աշխատանքի կազմակերպմանը:

¹ Ст'я Громов В. И., Методика расследования преступлений. М., 1930, էջ 30:

² Вопросы системы советской криминалистики и место в ней следственной тактики, Советская криминалистика на службе следствия, 1955, вып. 7.

³ Степичев С. С., О системе советской криминалистики, Правоведение, 1968, №4, էջ 65-66:

Նույն կերպ վարվեց Ա. Ն. Վասիլևը 1976թ., կրիմինալիստիկայի գիտությունը սահմանելիս առաջին տեղը դնելով հանցագործությունների քննության կազմակերպումը¹: Ռուսաստանի դաշնության բարձրակարգ կրիմինալիստներից և ոչ մեկը մինչև օրս էլ կասկածի տակ չի դնում այդ պրոբլեմի կարևորությունը:

Որոշ հեղինակներ կարծում են, որ քննիչի, հասարակայնության և օպերատիվ-հետախուզական մարմինների փոխգործողությունը կապ չունեն քննչական տակտիկայի հետ: Այդ մասին է վկայում նշված հարցերը կրիմինալիստիկայի մեթոդոլոգիայի բաժին տեղափոխելու նրանց փորձերը: Բայց որ այդ պրոբլեմները իրենց էությամբ մեթոդոլոգիական էլ չեն, ապացուցելու կարիք չի զգացվում: Կարծում ենք, որ կրիմինալիստիկայի համակարգում պետք է ավելացնել «Քննության կազմակերպումը» բաժինը, որը պետք է ընդգրկի քննչական վարկածները, քննության պլանավորումը, քննիչի աշխատանքի գիտական կազմակերպումը, հասարակայնության ներգրավումը հանցագործությունների քննությանը, քննիչի փոխգործողությունը հետաքննության մարմինների հետ, քննության կազմակերպման մեթոդների բնութագիրը:

Այդ պրոբլեմները տակտիկական բնույթ ունեն, և նրանց վերագրելը քննչական (կրիմինալիստիկական) տակտիկային նպաստում է ինչպես այդ, այնպես էլ զուտ տակտիկական պրոբլեմների խորը հետազոտմանը (մասնակիցների ընկալումները քննչական իրադրություններում, նրանց վարքագիծը և այլն):

~~Այդ բաժնում կարելի է ընդգրկել նաև քննչական աշխատանքի կազմակերպման այլ մեթոդներ, որոնք մտնում են որոշակի քրեական գործի քննության շրջանակների մեջ:~~

~~Այս բաժինը բովանդակում է այն բոլոր պահանջները, որոնք պարտադիր են կրիմինալիստիկայի համակարգի համար: Ահա՛նավորապես.~~

Ունի իր առարկան, որը կրիմինալիստիկայի առարկայի մասն է համարվում և տարբերվում է նրա մյուս բաժինների առարկայից:

Կոչված է լուծելու խնդիրներ, որոնք տարբերվում են զուտ տակտիկական, տեխնիկակրիմինալիստիկական և մեթոդական խնդիրներից:

Կազմակերպչական խնդիրների լուծումը պահանջում է քննության սեփական մեթոդների կիրառում:

Քննության կազմակերպման հնարքների ու մեթոդների մշակվող համակարգն ունի յուրահատուկ բնույթ:

¹ St'u Васильев А. Н., Следственная тактика. М., 1976, էջ 27, 28:

~~Այս բնօժիւն կառուցման համար հանրապետութեան բնօժիւն
բնագաւառում կառավարման գործընթացները, որպէս սոցիալական գոր-
ծունեության յուրահատուկ բնագաւառ:~~

Բացի վերը շարադրվածից, հարկ է ընդգծել հանընդհանուր ճանա-
չութիւն գտած այն փաստը, որ կրիմինալիստիկական գիտելիքները դասա-
կարգման գործընթացների արդյունքում անընդհատ նեղ մասնագիտա-
ցում են ստանում, ճշգրտվում են, որոշակիացվում և հարմարեցվում են
հանցագործությունների բացահայտման և քննության հետ կապված ա-
վելի նեղ խնդիրների լուծմանը:

Գիտությունների համագործակցության հիման վրա մշակվում են
այնպիսի ընդհանուր տեսական պրոբլեմներ, որոնք մեթոդաբանական
նշանակություն ունեն ամբողջ կրիմինալիստիկայի և նրա բաղկացուցիչ
մասերի համար: Բացի այդ, կրիմինալիստիկայի տվյալների ինտեգրումը
ընդհանուր և դատական հոգեբանությանը, սոցիոլոգիային, կրիմինոլո-
գիային և այլ գիտություններին հնարավորություն է տվել ստեղծելու և
զարգացնելու հանցագործի անձի կրիմինալիստիկական ուսումնասիրու-
մը: Կառավարման կրիմինալիստիկական տեսության, աշխատանքի գի-
տական կազմակերպման, դատական հոգեբանության բազայի վրա
ձևավորվել և զարգանում է քննիչի աշխատանքի գիտական կազմակեր-
պումը:

Գիտությունների ինտեգրման գործընթացի արդյունք են նաև հան-
ցագործությունների բացահայտման և քննության ընդհանուր տեսության
պրոբլեմների մշակումը, հանցագործությունների կրիմինալիստիկական
պրոֆիլակտիկայի ուսմունքը և այլն:

Պետք է ընդգծել, սակայն, որ գիտատեխնիկական առաջընթացի
ազդեցությունն առավել շոշափելի է կրիմինալիստիկական տեխնիկա-
յում: Այս հարցն ակներև է իրավաբանների, հատկապէս պրակտիկ աշ-
խատողների համար և հիմնավորման կարիք համարյա չի զգում:

Իսկ կրիմինալիստիկական մեթոդիկայում գիտատեխնիկական ա-
ռաջընթացի ազդեցությունը երևում է քննչական իրադրությունների վե-
րաբերյալ ուսմունքում, հանցագործությունների դասակարգման և բնու-
թագրման հարցերում:

Հաշվի առնելով կրիմինալիստիկայի գիտության ժամանակակից ա-
ռաջընթացը և պրակտիկայի առաջադրած պահանջները, կարծում ենք,
անհրաժեշտություն կա կրիմինալիստիկայի գիտության համակարգի փո-
փոխություն նախատեսել նաև հանցագործությունների քննության մեթո-
դիկայում, որին դրդում է շարունակ աճող հետաքրքրությունը նրա պրոբ-

լեմների նկատմամբ: Գիտության համակարգի կատարելագործումը պահանջում է ստեղծել հանցագործությունների քննության միասնական, ամբողջական տեսություն:

Մեկ այլ կարևոր հարցի մասին

Կարծում ենք, որ ժամանակի առաջընթացին համաքայլ կհամարվի, եթե կրիմինալիստիկայի գիտության համակարգում մտցվի այդ գիտության առարկայի և խնդիրների համար շատ կարևոր բաժին: Այն է. «Հանցագործությունների բացահայտման ընդհանուր տեսություն»: Այս բաժինը կուսումնասիրի քննիչի և հետաքննության մարմինների փոխգործողություններ, դրանք ներկայացնելով ընդհանուր բնույթով, որոնք ունեն մեթոդաբանական նշանակություն: Ընդգծենք, սակայն, որ դրանք, ըստ մեզ դասվում են հանցագործությունների բացահայտման ընդհանուր տեսության գլխավոր հարցերի շարքին: Այս բաժնում կուսումնասիրվի նաև կրիմինալիստիկական իդենտիֆիկացման տեսությունը, որը ևս հանցագործությունների բացահայտման ընդհանուր տեսության մասն է:

Կրիմինալիստիկայի գիտության առանձին բաժին պետք է կազմի կրիմինալիստիկական պրոֆիլակտիկան, որը կընդգրկի հանցագործությունների կանխման պրակտիկ միջոցառումների և գիտական տեղեկատվության համակարգը:

Ավելի որոշակի՝ այդ համակարգը պետք է կազմված լինի գիտատեխնիկական, դատավարական, տակտիկական, կազմակերպական, մասնավոր մեթոդական միջոցներից և հնարքներից, որոնք կուղղվեն ապացույցների հավաքման, հետազոտման, գնահատման և օգտագործման նպատակներին, այն ապացույցների, որոնք օգնում են հանցագործություններին նպաստող պատճառները և պայմանները բացահայտելուն և վերացնելուն:

Կրիմինալիստիկական պրոֆիլակտիկան, լինելով նախազգուշական հակազդեցության մեթոդների ու միջոցների ամբողջական համակարգ, ունի յուրահատուկ օրինաչափություններ, որոնք հնարավորություն կտան մշտապես զարգացնել ու կատարելագործել նրա տեսությունը, կապահովեն նախազգուշական հակազդեցության մեթոդների ու միջոցների էֆեկտիվությունը: Ցանկացած գիտության կատարելագործումը պահանջում է հաշվի առնել նրա կարևոր դրույթների՝ ընդհանուրի և հատուկի դիալեկտիկական հարաբերակցությունը: Բոլոր գիտություններում էլ կուտակված առաջընթացը տարբերվում է ըստ նրանցում ընդգրկված երևույթների, և դրա հետ կապված՝ ընդհանուրը և հատուկը իրենց արտահայտությունն են գտնում գիտության տվյալ համակարգային կառուցվածքի մեջ:

Համակարգային կառուցման մյուս տարբերակը պահանջում է հաշվի առնել միջգիտական կապերը: Այս տեսանկյունով՝ կրիմինալիստիկան, որը մտնում է գիտության քրեաիրավական բնագավառի մեջ, «ստորակարգվում» է գիտությունների կառուցվածքային կազմությամբ: Խոսքը քրեական իրավունքի և քրեական դատավարության գիտությունների մասին է:

Կրիմինալիստիկայի և քրեական իրավունքի ու քրեական դատավարության համակարգերի համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց այն բաժինները, որոնք մշակում են սեփական ընդհանուր դրույթները, իրենց կազմությամբ տարբերվում են: Այն դեպքում, երբ կրիմինալիստիկայի եզրափակիչ՝ առանձին հանցագործությունների քննության մեթոդիկայի համակարգը համապատասխանում է քրեական իրավունքի և քրեական դատավարության հիմնական մասերի կառուցվածքին:

Համակարգերի այդպիսի նույնատիպությունը որոշվում է նրանց կողմից ուսումնասիրվող օբյեկտների ընդհանրությամբ, հանցագործությունների դեմ քրեաիրավական պայքարի խնդիրների միասնականությամբ, միջգիտական կապերի ազդեցությամբ: Միանգամայն ակնհայտ է, որ հանցագործությունների քննության մասնավոր կրիմինալիստիկական մեթոդիկաների համակարգը համապատասխանում է քրեական իրավունքի հատուկ մասի կառուցվածքին, իսկ մասնավոր մեթոդիկաներից յուրաքանչյուրի մեթոդիկան կազմությունը իրականացվում է նախաքննության փուլում քրեական գործի դատավարական շարքին համապատասխան:

Ավածից հետևում է, որ քրեական իրավունքի և քրեական դատավարության հատուկ մասերի կառուցվածքային էությունը ամբողջությամբ կազմում են հանցագործությունների քննության կրիմինալիստիկական մեթոդիկայի համակարգի մշակման հիմքը:

Եվս մեկ հարց.

Հանցագործությունների քննությանը զուգահեռ իրականացվում է հետախուզական գործունեություն, որը նախաքննության և հետաքննության կարևորագույն գործառույթներից մեկն է: Այս արտահայտությունը հիմնավորվում է նրանով, որ օպերատիվ-հետախուզական գործունեության նպատակը հանցագործության և լայն առումով նրա հետքերի հայտնաբերումն է, հանցագործների և այն օբյեկտների բացահայտումը, որոնք համարվում են ապացուցողական տեղեկատվության աղբյուրներ, մասնավորապես տուժողներ, ականատեսներ, այլ վկաներ, հրազեններ, առարկաներ, որոնք օգտագործվել են որպես հանցագործության գործիքներ, արժեքներ և այլն:

Այս կամ այն օբյեկտի, անձանց հետախուզումը քննիչից և հետաքննություն կատարող անձից հսկայական ժամանակ է խլում: Այս աշխատանքը ժամանակին և արդյունավետ կատարելու համար նրանցից պահանջվում է գիտելիքներ և կրիմինալիստիկական միջոցների, տակտիկական հմարքների ու մեթոդների ճիշտ կիրառում, մասնագիտական հմտություն, հետախուզական և քննչական գործողությունների համատեղում. աշխատանքային համագործակցություն:

Հանցագործությունը կատարելուց անմիջապես հետո հանցագործները ձգտում են թաքնվել և նրանց ժամանակին հայտնաբերելը դժվարանում. իսկ երբեմն էլ անհնար է դառնում, առանց օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման: Նման գործունեության մասին Ա. Վաքսյանը գրում է. «Հանցագործությունների բացահայտման գործում օպերատիվ-հետախուզական գործունեության դերը կայանում է օպերատիվ-հետախուզական միջոցառումների, քննչական գործողությունների համակցությամբ իրականացնելու մեջ¹»:

Այս և նման առաջարկներ և դատողություններ կան համապատասխան գրականության մեջ. որոնք մեզ ճիշտ և արդիական են թվում²:

Նշված հարցերի գիտական համառ վերլուծությունը համոզում է, որ անհրաժեշտ և նպատակահարմար է կրիմինալիստիկայի առարկայի ընդլայնումը՝ նրա համակարգում ավելացնելով օպերատիվ-հետախուզական միջոցառումների տեսությունը:

Դրանով կրիմինալիստիկան՝ որպես գիտություն, նախ՝ իր զարգացածությամբ մեկ աստիճանով կբարձրանա, մյուս կողմից՝ առավել արդյունավետ կբավարարի պրակտիկայի աճող պահանջումները՝ հանցագործությունների բացահայտման, քննության և կանխման գործում:

¹ Практика уголовного сыска (научно-практический сборник), составитель А. Ваксян. М., 1999, էջ 35:

² Ю. Ф. Чуфаровский. Психология в оперативно-розыскной деятельности. М., 1996, В. И. Басков, оперативно-розыскная деятельность. М., 1997, Л. П. Николаева, И. Д. Сорокин, Есть такая служба-уголовный розыск. М., 1981 և այլն:

ՉԼՈՒԽ 3. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ԿԱՊՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Կրիմինալիստիկան սերտորեն կապված է այլ քրեաիրավական գիտությունների. քրեական դատավարություն, քրեական իրավունք, կրիմինոլոգիա, դատական վիճակագրություն, ինչպես նաև մի շարք բնական, տեխնիկական և հասարակական գիտությունների հետ:

Քրեաիրավական ցիկլի գիտությունների հետ նրա կապը օրինաչափ է, բնական: Կրիմինալիստիկան սկիզբ է առել քրեական դատավարության ակունքներից: Դրա համար էլ նրա տեսական հիմքերը, հանձնարարականները սերտորեն կապված են քրեադատավարական իրավունքի հետ և դրա հետ կապված՝ քրեադատավարական օրենքի հետ: Այն մասնավորապես հենվում է քրեական դատավարության գիտության ընդհանուր դրույթների վրա, որոնք վերաբերում են ապացույցներին և ապացուցման գործընթացին, ապացուցման սահմաններին, ապացույցների վերաբերելիությանը և թույլատրելիությանը, դրանց հավաստիության գնահատման սկզբունքներին ու կարգին և այլն:

Իսկ կրիմինալիստիկան իր հերթին քրեական դատավարության գիտությունը հարստացնում է իր կողմից մշակված տվյալներով, նպաստում է քրեական դատավարական իրավունքի գիտության կատարելագործմանը:

Քրեական իրավունքի գիտության որոշ հասկացությունների, մասնավորապես՝ հանցագործության, նրա պատճառների, մեղքի, հանցավոր գործունեության փուլերի, հանցակցության և այլնի, տվյալները կարևոր են հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագրի ձևավորման, քննչական վարկածների մշակման, ինչպես նաև առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդների և այլնի մշակման գործում:

Կրիմինալիստիկայում դատական վիճակագրության տվյալներն օգտագործվում են սեփական հանձնարարականները գնահատելու համար:

Կրիմինոլոգիական գիտելիքները քրեական ցիկլի մյուս գիտություններին տալիս են ոչ միայն հանցագործության սոցիալական բացատրությունը, այլև առանձին հանցագործությունների բնութագիրը՝ հաշվի առնելով դրանց ծնող պատճառներն ու նպաստող պայմանները, շրջակա միջավայրի գործոնները, ինչպես նաև դրանք կատարած անձանց (սուբյեկտների) անհատական ինքնատիպությունը:

Այդ տվյալները կրիմինալիստիկայի հետ համատեղ նույնպես համարվում են կրիմինալիստիկական և դատավարական լուծումների բանալի, քրեական գործերի քննության նյութերով պրոֆիլակտիկ գործողություններ իրականացնելու համար:

Կրիմինալիստիկայի և կրիմինոլոգիայի առարկաների սահմանագատումը իրականացվում է ըստ լուծվող խնդիրների շրջանակի (այս մասին ավելի մանրամասն կխոսենք ստորև):

Կրիմինալիստիկան սերտ կապի մեջ է «օպերատիվ-հետախուզական գործունեություն» առարկայի հետ:

Պրակտիկան վկայում է, որ ներկայումս կրիմինալիստիկական տվյալների օգտագործմանը օպերատիվ-հետախուզական աշխատանքներում քիչ ուշադրություն է դարձվում, որն էլ, բնականաբար, բացասաբար է անդրադառնում հանցագործությունների դեմ պայքարի գործի կատարելագործման վրա: Այդ հարցի լուծումը անհրաժեշտ է ակտիվացնել այն գիտական հիմքերի վրա դնելու միջոցով: Իսկ դա պահանջում է գիտականորեն մշակել այնպիսի հարցեր, որոնք կնպաստեն առավելագույն օգտագործել կրիմինալիստիկայի մեթոդների կիրառումը օպերատիվ-հետախուզական խնդիրների լուծման համար: Դրանցից են.

➤ քրեական գրանցման (հաշվառման) տեսական հիմքերը և պրակտիկան.

➤ օպերատիվ-հետախուզական միջոցառումներում կրիմինալիստիկական գիտելիքների և միջոցների կիրառման իրավական և մեթոդաբանական հիմքերը.

➤ անձանց հետախուզման և պարզաբանման նպատակներով կրիմինալիստիկական օբյեկտների դիֆերենցման գիտական հիմքերն ու պրակտիկան.

➤ անձի ինքնության մասին վկայող հատկանիշների հիմքերի պարզաբանումը իրենդեմ ապացույցներով.

➤ կրիմինալիստիկայի տվյալների օգտագործումը հանցագործների հետախուզման համար:

Ակնհայտ է, որ օպերատիվ-հետախուզական պրակտիկայի համար հետաքրքիր կլինի կրիմինալիստիկական տեխնիկայի առանձին բնագավառների վերաբերյալ հետազոտությունները մասնավորապես հետքաբանության, ձեռագրաբանության, ֆոնոսկոպիայի, հրազենագիտության, դատական (կրիմինալիստիկական) լուսանկարչության, հաբիտուսկոպիայի և այլն:

Ասվածը վկայում է, որ արդեն ժամանակն է օպերատիվ-հետախուզական աշխատանքների կազմակերպումը ևս մտցնել կրիմինալիստիկայի առարկայի մեջ:

Ի սկզբանե կրիմինալիստիկան սերտորեն կապված է եղել նաև բնական և տեխնիկական գիտությունների հետ: Թեև այդ գիտությունների դերը կրիմինալիստիկայի գիտության ձևավորման գործում մեծ է, բայց դրանց հիմնական ուղիները կրիմինալիստիկական հնարքների և մեթոդների վերածվելու գործում տարբեր են. ստեղծվել և շարունակվում են ստեղծվել հատուկ կրիմինալիստիկական մեթոդիկաներ, նոր լաբորատոր համալիրներ, որոնք հենվում են ժամանակակից բարձր զգայնության անալիտիկ տեխնիկայի վրա, համակարգիչների, էիմ-ի, որոնք աշխատում են ըստ տիպային ծրագրերի՝ առավելագույն չափով օգտագործելով տեղեկությունների այն բանկերը, որոնք ապահովում են հետազոտվող օբյեկտների որոշակի դասակարգում և անհատականացում:

Նմանատիպ համալիրները և հետազոտման մեթոդները ընդգրկում են ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, մաթեմատիկայի, կիբերնետիկայի համակցությունը:

Հետաքրքիր է կրիմինալիստիկայի կապը դատական հոգեբանության հետ, որի տվյալները նույնպես օգտագործվում են ոչ միայն կրիմինալիստիկական տակտիկայի և մեթոդիկայի հոգեբանական հիմքերի մշակման համար, այլև առանձին կրիմինալիստիկական ուսմունքների ձևավորման համար (օրինակ՝ հանցագործության, կամ դրա առանձին դետալների ձևացման բացահայտման հմտությունների, հանցագործության կատարման եղանակի և այլն):

Կրիմինալիստիկան օգտվում է նաև տրամաբանության դրույթներից, հատկապես տրամաբանական մտածողության այնպիսի հնարքներից, ինչպիսիք են. անալիզը, սինթեզը, ինդուկցիան, դեդուկցիան, անալոգիան, ընդհանրացումը, աբստրակցիան (վերացարկումը) և այլն: Առարկայի (գիտության) տարբեր բաժիններում կիանդիպենք տրամաբանության կիրառման բազում հարցերի:

Հոգեբանության և տրամաբանության մուտքը կրիմինալիստիկա, նպաստավոր պայմաններ ստեղծեց նոր հնարքներ և մեթոդներ մշակելու գործերի բնության գործընթացում մաթեմատիկական գիտությունների և կիբեռնետիկայի տվյալների ներդրման համար:

Կրիմինալիստիկան կապված է նաև քաղաքացիական դատավարության, դատական բժշկության, դատական հոգեբուժության և մի շարք այլ գիտությունների հետ:

Այսագույցների հավաքման և օգտագործման կրիմինալիստիկական խնդիրները լուծելու առավել արդյունավետ հնարքներ ու եղանակներ մշակելու համար կրիմինալիստիկական հենվում է նաև կառավարման գիտության վրա:

Բոլոր բնույթի տեխնիկական միջոցների, տակտիկական հնարքների և քննության մեթոդիկական մշակելիս պետք է հաշվի առնել նաև դատական (և ընդհանուր) էթիկայի դրույթները:

Դատական էթիկան մեր կարծիքով քրեական դատավարության բարոյական հիմքն է, դատավորների, քննչական մարմինների աշխատողների և դատական փորձագետների վարքագծի և բարոյական նորմերի ամբողջությունը:

Թվարկված անձինք բացառիկ պատասխանատվություն պետք է ունենան կասկածյալի, մեղադրյալի, տուժողի ու վկայի հետ իրենց փոխհարաբերությունները կառուցելիս:

Իրավապահ մարմինների, դատարանների, դատական փորձագետների ընդունած որոշումներից հաճախ կախված է մարդու, նրա հարազատների, մտերիմների ճակատագիրը, դրա համար էլ նրանց մասնագիտության մեջ կարևոր նշանակություն պետք է ունենա օբյեկտիվությունը, ազնվությունը, բարեխղճությունը, սկզբունքայնությունը, համեստությունը, սեփական աշխատանքի նկատմամբ քննադատական վերաբերմունքը: Խիստ ցանկալի է նշված անձանց կողմից պրոֆեսիոնալ պատիվը պահպանելը, դրսից թելադրված որոշումները չկատարելը, այն որոշումները, որոնք օրենքին, սեփական խղճին և համոզմունքին չեն համապատասխանում:

Դատական էթիկայի հարցերն իրենց տեղն ունեն կրիմինալիստիկական տակտիկայում, մի շարք քննչական գործողությունների կատարման համապատասխան հանձնարարականներում:

Այն կարևոր դեր ունի նաև դատական փորձաքննություններում, քանի որ փորձագետի եզրակացություններից հաճախ շատ բանով կախված է գործի հետագա քննությունը: Դա խոսում է այն մասին, որ նշանակող մարմինները պետք է համոզված լինեն փորձագետի մասնագիտական բարձր որակավորման, նրա խորը գիտելիքների, բարոյական կայունության և անխախտ ազնվության մեջ: Միայն նման դեպքում կարող է վստահություն ձևավորել փորձագետի և նրա եզրակացության նկատմամբ:

Կարծում ենք ճիշտ կլինի ոլորտ գիտությունների և կրիմինալիստիկայի կապի մասին խոսել մի փոքր հանգամանակից:

Հանցագործության կրիմինալիստիկական և քրեաիրավական հասկացությունը, որպես միևնույն մակարդակի վերացական իմաստ, որ արտահայտում է միևնույն օբյեկտի տարբեր կողմերը, որոնք ակնհայտ են և վերլուծության կարիք չեն գգում, ունեն շատ ընդհանրություններ: Բայց այդ հասկացությունները տարբերվում են մի շարք հատկանիշներով, որոնցից են.

1. Հանցագործության քրեաիրավական հասկացությունը որոշվում է քրեական օրենքով և կարող է փոփոխվել միայն օրենքը փոխելով, իսկ կրիմինալիստիկական հասկացությունը որոշվում է կրիմինալիստիկայի գիտությամբ և փոփոխվում է կամ ճշգրտվում հանցագործության կրիմինալիստիկական ասպեկտի ուսումնասիրման չափով:

2. Հանցագործության քրեաիրավական հասկացության սահմանումը հանցավոր ոտնձգությունների դեմ քրեա-իրավական պայքար իրականացնելու խնդիր ունի, իսկ կրիմինալիստիկական սահմանումը հանցագործության բացահայտման գործընթացի կառավարման:

3. Հանցագործության քրեաիրավական հասկացությունը համարվում է իրավաբանական կատեգորիա և բովանդակում է հատկանիշներ, որոնք հնարավորություն են տալիս տարբերել հանցավոր ոտնձգությունը ոչ հանցավորից: Իսկ հանցագործության կրիմինալիստիկական հասկացությունը արտացոլում է իրական երևույթներ և նկարագրում նույնպիսի գծեր, որոնք օգնում են հայտնաբերել ու հանցագործության քրեաիրավական հատկանիշները, պարզելու հանցավոր ոտնձգության փաստը, մերկացնելու մեղավորին և ապացուցելու այլ հանգամանքներ, որոնք նշանակություն ունեն արդարադատության իրականացման համար:

Հանցագործությունների կրիմինալիստիկական ասպեկտը իրական, նպատակասույց, որոշակի և բարդ համակարգ է, որի արտահայտությունը օրենսդիրը ձգտում է կանխել քրեական պատժի սպառնալիքով: Այդ համակարգի կարևոր տարրերն են. քրեական օրենքով պահպանվող օբյեկտը, օրենսդրի կողմից նախատեսված սուբյեկտը, նրա հոգեկան և ֆիզիկական գործունեությունը, փաստերը, կամ սուբյեկտի գործողությունների հետևանքները, հանցագործության տեղը, ժամանակը, գործողության հանրորեն վտանգավորությունը: Թվարկված տարրերից յուրաքանչ-յուրը անհրաժեշտ են, բայց նրանք բոլորն իրենց ամբողջությամբ կազմում են այն միասնականը, որը կարելի է անվանել որոշակի հանցագործություն:

Կրիմինալիստիկական տարրերը ևս, իրենց հերթին նույնպես համարվում են համակարգեր և ունեն ենթակարգեր: Հանցագործության համակարգը ամբողջությամբ ունի ճյուղավորված կազմություն:

Ասացինք, որ կրիմինալիստիկան սերտ կապի մեջ է կրիմինոլոգիայի հետ: Կարծում են կարիք կա ավելի որոշակի ներկայացնելու, թե ինչում է այն արտահայտվում և զարգացման ինչպիսի անհրաժեշտություն է զգացվում, քանի որ այդ հարցը, ըստ մեզ, ունի տեսական և պրակտիկ նշանակություն:

Գրականության մեջ արդարացիորեն նշվում է, օրինակ, որ «հանցագործությունների բացահայտման ու քննության, ապացույցների հավաքման ու վերլուծության տակտիկական հնարքներն ու տեխնիկական միջոցները մշակելիս կրիմինալիստիկան նպաստում է հանցագործությունների կանխմանը և միաժամանակ ապահովում է հավաստի տեղեկատվություն ստանալուն, որն անհրաժեշտ է կրիմինալիստիկական պրոբլեմների լուծման համար... Կրիմինոլոգիան իր հերթին կրիմինալիստիկային կողմնորոշում է առավել արդիական հարցերի մշակմանը՝ հանցագործությունների վիճակի, կազմի և դինամիկայի հաշվարկով¹»: Կամ՝ «կրիմինալիստիկական կանխման հնարքների ու մեթոդների մշակումը հիմնվում է հանցագործությունների կանխման կրիմինոլոգիական տեսության վրա²»: Որից հետևում է, որ կրիմինալիստիկայում հանցագործությունների կանխման առանձին պրոբլեմների մշակումը ենթադրում է քննչական պրոֆիլակտիկայի բավարար մակարդակ: Պետք է նկատի ունենալ, որ և՛ կրիմինալիստիկան, և՛ կրիմինոլոգիան ուսումնասիրում են հանցագործությունները: Ապացույց հանդիսացող փաստական հանգամանքների կազմավորման օրինաչափությունների բացահայտումը և նրանց հայտնաբերման, ֆիքսման և օգտագործման կրիմինալիստիկական միջոցների ու հնարքների մշակումը հնարավոր են միայն տարբեր բնույթի հանցագործությունների ուսումնասիրման արդյունքների հիման վրա:

Միևնույն ժամանակ կրիմինոլոգիայի կողմից մշակվում են ոչ միայն ամբողջ հանցավորության և դրա առանձին տեսակների, այլ նաև առանձին հանցագործության պատճառների ու պայմանների վերացմանը ուղղված միջոցառումներ:

Հանցագործության և հանցակազմի առանձին տարրերի հասկացության սահմանումը մշակված է քրեական իրավունքի գիտության կող-

¹ Տե՛ս Курс советской криминологии, М. 1985г., т. 1, էջ 65:

² Տե՛ս Криминалистика. М., 1996, էջ 8:

մից, որոնք նա ուսումնասիրում է սեփական նպատակների համար, բայց հանցագործությունը և նրա տարրերը ուսումնասիրվում են նաև կրիմինալիստիկայի ու կրիմինոլոգիայի կողմից հասկանալի է, իրենց նպատակներին համապատասխան: Օրինակ՝ հանցավոր ռտնձգության օբյեկտը (որոշակի, անմիջական օբյեկտը՝ տուժողի անձը, հափշտակված գույքը և այլն) ուսումնասիրվում է կրիմինալիստիկայի կողմից, այդ օբյեկտի բնութագիրը հանցանք կատարած անձանց և նրանց գործողությունների բնութագրի հետ ունեցած կապի ասպեկտով՝ հանցագործների հետախուզման և մերկացման համար տվյալներ ստանալու նպատակով: Իսկ կրիմինոլոգիայում հանցավոր ռտնձգության օբյեկտը ուսումնասիրվում է նրա իրավական եղած միջոցներով պաշտպանվածության առումով, այդ պաշտպանվածությունը անհրաժեշտ դեպքերում որոշակի միջոցներով ուժեղացնելու նպատակներով:

Հանցագործության օբյեկտիվ կողմը՝ տեղը, եղանակը և այլ հանգամանքներ, կրիմինալիստիկայի կողմից ուսումնասիրվում է նրանում հանցագործի անձի մասին արտացոլված այնպիսի տեղեկությունների բացահայտման նպատակով, որոնք անհրաժեշտ են նրա հետախուզման և մերկացման համար: Իսկ կրիմինոլոգիան հանցագործության օբյեկտիվ կողմը ուսումնասիրում է հանցանքի կատարմանը նպաստող հնարավոր հանգամանքների բացահայտման և կանխման միջոցառումների մշակման առումով:

Հանցագործության սուբյեկտը կրիմինալիստիկայում ուսումնասիրվում է անձը բնութագրող այն առանձնահատկությունների բացահայտման նպատակով, որոնք կարող էին դրսևորվել հանցանք կատարելիս (հանցագործ-ռեցիդիվիստների, անչափահասների և այլն) և նպաստել հանցագործի հետախուզմանը: Կրիմինոլոգիայում հանցագործի անձի ուսումնասիրումը նպատակ ունի պարզաբանելու այն սոցիալական և անհատական առանձնահատկությունները, որոնք նպաստել են հանցանքի կատարմանը:

Հանցագործության սուբյեկտիվ կողմը կրիմինալիստիկային հետաքրքրում է հիմնականում որոշակի գործոնների պարզաբանման տեսանկյունից, որոնք կարող են նպաստել հանցագործության բացահայտմանը: Իսկ կրիմինոլոգիային, ըստ Վ.Պ. Վլասովի պատկերավոր ներկայացման, հանցագործության շարժառիթը հետաքրքրում է որպես

հանցագործությունների կատարման ամփոփական պատճառ, դրանց ձևավորմանը նպաստող հանգամանքները որոշելու նպատակներով¹:

Մեկ անգամ ևս ընդգծենք, որ հանցագործությունների հետազոտմամբ զբաղվող գիտությունները գտնվում են դիալեկտիկական փոխկապակցվածության մեջ: Այդ ընդհանրությունը պայմանավորված է նրանով, որ նրանք ուսումնասիրում են հասարակական մի երևույթի տարբեր կողմերը: Դրա համար էլ կրիմինալիստիկայի տեսությունը չի կարելի դիտել իրավաբանական այնպիսի գիտություններից առանձնացված, ինչպիսիք են. քրեական իրավունքը, քրեական դատավարությունը, կրիմինոլոգիան, օպերատիվ-հետախուզական գործունեությունը, ինչպես նաև բնական և տեխնիկական գիտությունների առանձին բնագավառները:

Կրիմինալիստիկան շատ մոտ է կանգնած օպերատիվ-հետախուզական գործունեության տեսությանը, քանի որ նրանք ծառայում են նույն նպատակին՝ հանցագործությունների կանխմանը, դրանց արագ և լրիվ բացահայտմանը: Ներկայումս կրիմինալիստիկայում գիտական մշակում են ստացել օպերատիվ-հետախուզական գործունեության առանձին հարցեր, մասնավորապես հանձնարարականներ հետախուզումը արդյունավետ իրականացնելու համար, թարմ հետքերով հանցագործի հետապնդման վերաբերյալ, թաքնված հանցագործին հայտնաբերելու և այլն: «Առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդիկա» բաժինը հանձնարարականներ է բովանդակում, որոնք նպաստում են ավելի լրիվ և արդյունավետ օգտագործել օպերատիվ-հետախուզական միջոցառումները՝ առանձին տեսակի հանցագործություններ քննելիս:

Հենվելով քննչական և օպերատիվ-հետախուզական գործունեության հիմնական դրույթների վրա և ընդհանրացնելով դրանց փորձը, մեթոդիկան ցույց է տալիս առավել բնութագրող խնդիրները, որոնց իրականացմանը կոչված են հետաքննության մարմիններն ու քննությունը: Դրանցում մշակվում են նաև քննչական և օպերատիվ-հետախուզական մարմինների գործունեության կորդինացման հարցերը:

Գիտելիքների ինտեգրման և դիֆերենցման հանրահայտ օրենքը, որը նպաստում է գիտության զարգացմանն ու հասարակական առաջըն-

¹ Ст'я Власов В. П., Мотивы, цели и умысел, при совершении хулиганских действия.-Вопросы борьбы с преступностью. М., 1975, вып.245, էջ 120:

քացին, ի հայտ է գալիս ոչ միայն տարբեր գիտական դիսցիպլինների նկատմամբ ունեցած հարաբերություններում: Նշված գործընթացը տեղի է ունենում նաև յուրաքանչյուր գիտության ներսում:

Այս առումով կրիմինալիստիկական ևս բացառություն չէ: Նրանում ընդհանուր տեսական գիտելիքների աճը և խորացումը բարերար ազդեցություն են թողնում նրա տեսական և պրակտիկ բաժինների վրա, նպաստում են կատարելագործելու մեթոդական հանձնարարականների նախապատրաստումը: Մինևույն ժամանակ տեսական և մեթոդական մշակումները, որոնք իրականացվում են կրիմինալիստիկական տեխնիկայում, տակտիկայում և մեթոդիկայում ակտիվացնում են գիտության ընդհանուր տեսական միտքը, սնում, հարստացնում են նրան հեռանկարային մտահղացումներով, որոնք նպաստում են նոր, արդյունավետ հայացքների, չափանիշների, կոնցեպցիաների առաջացմանը:

Կրիմինալիստիկայի առաջընթացը չափազանց ամուր կապերով առնչվում է շատ գիտությունների հետ, որոնց տվյալները անմիջականորեն կամ միջնորդավորված օգտագործվում են այս գիտության կողմից:

Քանի որ կրիմինալիստիկական, հատկապես կրիմինալիստիկական տակտիկական իր կիրառման առավել լայն բնագավառում ունի քննչական և դատական գործունեություն, իսկ դրանք ունեն ցայտուն արտահայտված սոցիալական կողմեր, ապա տակտիկայի փոխկապակցվածությունների բնութագրման համար նշանակություն ունի սոցիոլոգիայի տվյալների օգտագործումը:

Անձի սոցիոլոգիայում, որպես տարբեր բնույթի հարաբերություններում նրա դրսևորումների բնութագիր, առավել հետաքրքրություն են ներկայացնում անձի սոցիալական դերի հիմնախնդիրները, ինչպես նաև տարիքային խմբերի սոցիալական և հոգեբանական առանձնահատկությունների ձևավորման ենթախմբերը:

Կրիմինալիստիկայի, նրա տակտիկայի տեսության մեջ սոցիոլոգիայի հիմնական դրույթների իմացությունը նշանակություն ունի տակտիկայի անհատականացման, տարբեր բնույթի հաշվառումների, այլ անձանց հետ հարաբերվելուն անձին բնութագրող պահերի համար:

Կրիմինալիստիկայի որոշ հանձնարարականների մշակման վրա ազդում են ոչ միայն ընդհանուր սոցիոլոգիան և անձի սոցիոլոգիան, այլև քրեական սոցիոլոգիայի տվյալները, որոնք վերաբերում են անձի բնութագրերին՝ կապված նրա հակահասարակական դրության ձևավորման հետ, հանցանքի կատարման, ինչպես նաև անձի այնպիսի դիրքորոշումների հետ, որոնք հաճախ հակադրվում են բարոյականության նորմերին:

Տակտիկական հնարքները պետք է ձևավորվեն՝ հենվելով սոցիոլոգիական տվյալների վրա, դրանով մոտենալով ընտրովի այն հանձնարարականներին, այն որոշակի (տիպիկ և ոչ տիպիկ) իրադրություններին, որոնք առաջանում են գործի նախաքննության և դատաքննության ընթացքում:

Անձի սոցիոլոգիայի և քրեական սոցիոլոգիայի օգտագործումը կրիմինալիստիկային զինում է նոր տվյալներով, որոնք հնարավորություն են տալիս նրա հանձնարարականները դարձնել առավել արդյունավետ: Այս առումով սոցիոլոգիայի տվյալների օգտագործումը կարող է տեղ գտնել առանձին քննչական գործողությունների տակտիկայում, որոնց նախապատրաստման և իրականացման ժամանակ հաշվի են առնվում անձի վերաբերյալ այնպիսի տեղեկություններ, ինչպիսիք են. նրա սոցիալական դրությունը, սոցիալական դերը, շրջապատը և այլն:

Հենց այդ պահերը երբեմն հնարավորություն են տալիս գտնել հոգեբանական շփման կարգավորման ուղին, դեպքի կապակցությամբ ճիշտ գնահատելու անհատի (անձի) դերը, ինչպես նաև այն տեղեկատվությունը, որը ստացվում է անձից՝ նրա հետ ունեցած շփումից:

Բացի այդ, սոցիոլոգիայի տվյալների իմացությունը հնարավոր է դարձնում ճիշտ հասկանալ ոչ միայն շփման նպատակները, այլև դրա արդյունավետ ուղիները:

Կրիմինալիստիկայում իրենց արդյունավետ կիրառումն են գտնում նաև հոգեբանության հարցերը. մասնավորապես, քննչական մարմինների աշխատողները նրանից օգտվում են այն անձանց փոխհարաբերությունները պարզելիս, որոնք անցնում են տվյալ գործով: Հոգեբանական գիտելիքները նպաստում են գործով ապացույցներ հայտնաբերելիս և գնահատելիս առավել ճիշտ ձևավորել ներքին համոզմունքը, օգնում են հանցագործության պատճառների բացահայտման առավել բարդ հարցերի լուծմանը:

Գրականության մեջ կրիմինալիստիկական հոգեբանության բնութագիրը տրվում է հետևյալ կերպ. «...Ուսումնասիրում է հոգեկան այն օրինաչափությունները, որոնք կապված են անձի հանցավոր դիրքորոշման ձևավորման, հանցավոր մտահղացման ձևավորման, արարքի նախապատրաստման և կատարման հետ, ինչպես նաև վարքագծի հանցավոր նույնատիպության առաջացման հետ: Այն հետազոտում է հանցագործի անձը, ինչպես նաև այդ անձի նկատմամբ դաստիարակչական ազդե-

ցության ուղիներն ու եղանակները և խումբը՝ հոգեբանական տեսանկյունից¹»:

Քննչական մարմինների գործունեության հետ կապված յուրահատուկ հարցերը լուծելիս օգտագործվում են հոգեբանության բոլոր նվաճումները, ընդհանուր հոգեբանական հետազոտությունների արդյունքները և հատուկ հոգեբանական գիտակարգերը (օրինակ՝ տեխնիկական հոգեբանության, մանկավարժական հոգեբանության, աշխատանքի հոգեբանության և այլն): Սակայն այդ տվյալները չեն կարող դատական հոգեբանության մեջ ընկալվել և կիրառվել մեխանիկորեն: Դրանք օգտագործվում են այնպիսի բնագավառի գործունեության ինքնատիպության առումով, ինչպիսին է քրեական դատավարությունը, մասնավորապես նախաքննության առանձնահատկությունների տեսանկյունից:

Այդ կապակցությամբ Վ. Ն. Կուդրյավցևը գրում է. «Անձի ձևավորման գործընթացը թեև հետաքրքրում է իրավունքին, բայց ավելի որոշակի ասած, նրա ուսումնասիրման առարկան չի համարվում, այն մանկավարժության, հոգեբանության, սոցիոլոգիայի և մարդու մասին այլ գիտությունների գործն է²»:

Հայտնի է, որ նախաքննության ընթացքում ամենից հաճախ կիրառվում են հոգեբանական հետազոտման այնպիսի մեթոդներ, ինչպես դիտարկումները, զրույցները, փորձարարությունները, քննչական գործունեության ընթացքի և արդյունքների ուսումնասիրման մեթոդը, նորմատիվ ակտերի և հրահանգչական նյութերի հոգեբանական վերլուծության մեթոդը, անկետային-վիճակագրական մեթոդը և այլն: Սակայն այդ բոլոր մեթոդները կարող են օգտագործվել միայն քրեադատավարական օրենքի պահանջների խստագույն պահպանման դեպքում:

Փորձենք լուսաբանել նշված մեթոդների էությունը.

Դիտարկումների մեթոդը վերաբերում է քննիչի կողմից այն հարցերի վերաբերյալ հետազոտություններին, թե ինչպիսին է հանցագործությունների ծագման և զարգացման ընկալումը վկայի, տուժողի, ինչպես նաև կասկածյալի և մեղադրյալի կողմից, այլ կերպ ասած, կարող է ազդել նրանց ընկալման, հիշողության վրա, արդյունքում՝ նրանց ցուցմունքի ճշմարտացիության վրա: Այնուհետև, քննիչը դիտարկում է, թե կասկածյալը, մեղադրյալը, վկան և տուժողը ինչպես են իրենց պահում գործի քննության ընթացքում: Դա նպաստում է նրանց անձնավորության հոգե-

¹ Чуфаровский Ю. В., Юридическая психология. М., 1995, էջ 115:

² Кудрявцев В. Н., Причины правонарушений. М., 1976, էջ 90:

բանական առանձնահատկությունների, նրանց փոխհարաբերությունների ուսումնասիրմանը: Բացի այդ, նախաքննության ժամանակ մարդկանց լրջմիտ դիտարկումը հարստացնում է քննիչի միտքը, մեծացնում նրա մտահորիզոնը, օգնում է նրան ավելի խորը թափանցել գործի էության մեջ, նպաստում է նրա վարպետության բարձրացմանը: Լսենք Ա. Ֆ. Կոնիին. «Կարող է պատահել, գործունեության ոչ մի տեսակ չի ներկայացնում կենդանի նյութի այնպիսի տարատեսակություն, ինչպես դատական հրապարակային գործունեությունը¹»: Իհարկե, դա լրիվ վերաբերում է նաև քննիչի գործունեությանը:

Դիտարկման մեթոդի կիրառումը հատկապես անփոխարինելի է այնպիսի քննչական գործողություններ կատարելիս, ինչպիսիք են. խուզարկությունը, առգրավումը, զննությունը, քննումը, քննչական փորձարարությունը, ցուցմունքների ստուգումը տեղում (թեև մեր Հանրապետության քր. դատ. օրենսգիրքը չի նախատեսում, բայց պրակտիկան այն ընդունում է), նմուշների ստացումը համեմատական հետազոտության համար: Թվարկված քննչական գործողությունների կատարման ժամանակ քննիչը ոչ միայն դիտարկում է որոշակի անձանց վարքագիծը, այլև անմիջականորեն դիտարկում, ընկալում է այդ գործողությունների ընթացքը և արդյունքները: Անհրաժեշտ է նաև հիշել, որ ոչ միայն պետք է ճիշտ դիտել, այլ նաև հմտորեն ֆիքսել տեսածը: Դրա համար էլ տակտիկական հանձնարարականներում ընդգծվում է (մասամբ նաև ԲԴՕ-ում), որ քննչական գործողությունների արձանագրությունների մեջ պետք է տրվի կատարվածի մանրամասն նկարագիրը, պետք է արձանագրությանը կցվեն լուսանկարներ, սխեմաներ և այլն:

Հասկանալի է, որ ընկալման ճշգրտությունն ու արագությունը կախված են մի շարք գործոններից. քննիչի տեսական և պրակտիկ պատրաստվածությունից, հաճախ նաև նրա ֆիզիկական և հոգեկան վիճակից (բացասաբար է ազդում գերհոգնածությունը, տկարությունը, ջղային իրադրությունը և այլն), դիտարկելու առավել նպաստավոր պայմանների ընտրությունից և կազմակերպումից, ինչպես նաև քննության գիտատեխնիկական միջոցների կիրառման հմտությունից (որոնող սարքերի, օպտիկայի, անտեսանելի ճառագայթների և այլն): Անհրաժեշտ է հաշվի առնել նաև մարդու հնարավոր սխալները. դրանք կերպարի պարզեցման, լավացման, բացահայտման սխալներն են, իսկ երբեմն էլ՝ պատրանքները, նախատիպերը, հակառակ տիպերը և այլն:

¹ А. Ф. Кони, Обвиняемые и свидетели, Избранные произведения в 2-х томах, изд. 2-е том, 1. М., 1958, էջ 140:

Քննչական տակտիկայում լայնորեն կիրառվում է նաև գրույցը, որը միշտ սերտորեն կապվում է հարցաքննության հետ: «Հարցաքննության մասնակիցների (հարցաքննողի և հարցաքննվողի) հիմնական նպատակները կարող են հակասական լինել և դա կհանգեցնի հակազդեցության տարբեր ձևերի, ասենք՝ վեճերի և այլն: Նման իրադրություններում անցումը երկխոսության լավագույն նախադրյալ կստեղծի փոխգործողության, փոխըմբռնման ապահովման, վերջին հաշվով՝ համագործակցության համար¹»:

Հարցաքննության առարկան միշտ չէ, որ կապվում է գործով ապացուցման ենթակա հանգամանքների հետ: Այն կարող է լինել նաև փաստեր, որոնք բնութագրում են, օրինակ, մեղադրյալի, տուժողի անձը, նրանց փոխհարաբերությունները: Նշանակում է, գրույցի կամ, կապված դիտարկումների հետ, հարցազրույցի միջոցով քննիչը կարող է պատկերացում կազմել անձի հոգեբանական բնութագրի մասին ոչ միայն կասկածյալի, մեղադրյալի, այլև տուժողի, վկայի, որն էլ իր հերթին նշանակություն ունի ապացույցների ճիշտ գնահատման համար: Հարցաքննությունը ճիշտ կազմակերպելիս գրույցի ընթացքում ստեղծվում է անհրաժեշտ հոգեբանական կապ՝ քննիչի և հարցաքննվողի միջև, որը շարունակվում է բուն հարցաքննության ժամանակ:

Չրույց և հարցաքննություն վարելիս, պետք է հաշվի առնել ոչ միայն այն, որ հարցաքննվողը կարող է բարեխղճորեն մոլորվել: Մարդ սովորաբար հակված է ասելու և լսելու այն, ինչն ավելի ցանկալի է: Երբեմն քննիչին թվում է, որ ինքը ստացավ ճշմարիտ պատասխան, այն դեպքում, երբ իրականում նրա հիշողությունը արդեն մշակել է հարցվող անձի պատասխանը ցանկալի ուղղությամբ, այն իմաստով, որ իրեն՝ քննիչին «դուր է գալիս» կամ «դուր չի գալիս»: Դրանք արդեն քննիչի սխալներն են, դրա համար նա պարտավոր է լրացուցիչ հարցերով պարզաբանել այդ սխալների, անճշտությունների բնույթը, վերահսկել ինքն իրեն²:

Բացի պասսիվ դիտարկումներից, հոգեբանությունը օգտվում է նաև հատուկ կազմակերպված փորձերից: Հոգեբանական փորձարարությունը մարդու գործունեության այն առանձնահատկությունների ուսումնասիրումն է, որոնք առաջանում են այդ գործունեության պայմանների, խնդիրների կամ եղանակների նպատակասլաց փոփոխումից:

Այդ կապակցությամբ Ռ. Ս. Բելկինը գրում է. «Քննիչի ձեռքում փորձարարությունը իրենից ներկայացնում է ճանաչողության առավել նուրբ

¹ В. Л. Васильев, Юридическая психология, Москва, Минск, Харьков, 1997, էջ 483:

² М. И. Бобнева, Техническая психология. М., 1966, էջ 69:

և արդյունավետ մեթոդ, քան, օրինակ, հետազոտության այլ մեթոդները¹»:

Բացի քննչական փորձարարությունից, երբ այն կազմում է քննիչի գործունեության հիմնական բովանդակությունը, փորձարարություն կարող է կատարվել քննիչի ոչ դատավարական գործունեության ժամանակ: Դրանք կլինեն այն փորձարարությունները, որոնց հետևությունները կարելի է դիտել որպես գիտական հանձնարարականներ, քննիչի աշխատանքը բարելավելու համար: Օրինակ՝ այնպիսիք, որոնք կապված են մարդկային զգայությունների օրինաչափությունների հետ:

* * *

Հանցագործությունների քննության ընթացքում բազմաթիվ են պահերը, երբ որոշակի փաստերի և դրանց փոխկապակցվածության ճանաչողության ընթացքում լայնորեն կիրառվում են *տրամաբանական մտածողության* օրենքները:

Տրամաբանական մտածողության պատմությունը ընդգրկում է երկու և կես հազարամյակ: Մնացած գիտություններից միայն փիլիսոփայությունն ու մաթեմատիկան սկսեցին գործել ձևական տրամաբանությունից առաջ²: Ձևական տրամաբանությունը շատ դանդաղ սկզբնավորում և զարգացում ունեցավ: Նրանում քննարկվող պրոբլեմները շատ քիչ էին տարբերվում դեռևս Արիստոտելի կողմից առաջադրվածից: Դա էլ առիթ հանդիսացավ, որպեսզի Ի. Կանտը պնդի, թե ձևական տրամաբանությունը համարվում է ավարտված գիտություն, որ առաջադրված լինելով Արիստոտելի ժամանակներից՝ ոչ մի քայլ չի գնացել և չի ունեցել սեփական պատմություն³:

Հանցագործությունների քննության՝ քննիչի այդ բարդ գործունեության իրականացումը, որն ուսումնասիրվում է տարբեր տեսանկյուններից, ունի կարևորագույն մաս, որն ապացուցումն է: Վերջինիս ուսումնասիրումը իրականացվում է ինչպես քրեադատավարական իրավունքի գիտության, այնպես էլ կրիմինալիստիկայի կողմից: ԵՎ այդ բարդ գործընթացի մեջ քննության տրամաբանությունը առանձնացնում է առանձնահատուկ

¹ P. С. Белкин, Собрание исследование и оценка доказательств. М., 1965, էջ 224:

² Ձևական տրամաբանությունը գիտություն է, որն ուսումնասիրում է մտածողության ձևերը՝ հասկացություն, դատողություն, մտահանգում, ապացուցում, դրանց տրամաբանական ձևի կամ կառուցվածքի կողմից (տե՛ս փիլիսոփայական բառարան, Երևան 1975թ.):

³ А. Ивин, По законам логики. М., 1983, էջ 47:

կողմեր, որոնցից են. մտածողության կազմությունը, ձեռք բերված ապացույցները հետազոտելիս և գնահատելիս, էվրիստիկ մտածողության կազմությունը՝ ապացույցների համակարգը կազմելիս:

Քննության տրամաբանությունը իրենից ներկայացնում է կրիմինալիստիկական տակտիկայի մասնագիտացված բաժինը, որը չափազանց մոտ է ապացույցների տեսությանը: Այս հարցերով զբաղվել են շատ անվանի դատավարագետներ և կրիմինալիստներ. Մ. Ս. Ստրոգովիչը, Ա. Ի. Վինբերգը, Ա. Ա. Ստարչենկոն, Ռ. Ս. Բելկինը, Վ. Ե. Կոնովալովան և այլք:

Անհայտի ճանաչողության ընթացքում քննիչը հիմնականում հենվում է քննչական վարկածների վրա, որոնց կազմությունն ու կառուցման փուլերը համապատասխանում են հիպոթեզ տրամաբանական հասկացությանը: Դրա համար էլ նպատակահարմար չենք համարում խոսել տարբեր քննչական գործողությունների ժամանակ օգտագործվող տրամաբանական մտածողության օրենքների մասին, ինչպես նաև դրանց վերաբերյալ, ապացույցներ ձեռք բերելիս և գնահատելիս: Բացի այդ, դրանց անդրադառնալը շատ ժամանակ և տեղ կզբաղեցնեն, մեզ կստիպեն շեղվել մեր հիմնական նպատակներից:

Հայտնի է, որ քննչական վարկածը հիպոթեզի տարատեսակն է, որի ինքնատիպությունը որոշվում է այն բնագավառի առանձնահատկություններով ու բնույթով, որում ընթանում է հետազոտությունը: Հանցագործությունների քննության ընթացքի ինքնատիպությունը, որն իր առջև նպատակ չի դրել գիտական տեսությունների բացահայտումը, որոշում է նաև մտածողության նշանակությունը քննչական վարկածներ կառուցելիս:

Քննչական վարկածների տրամաբանական բնույթը, որն հավասար է նրանց առաջադրվող պահանջներին, բխում է հիպոթեզի էությունից և բնույթից: Ինչպես հիպոթեզը չի կարող համարվել ենթադրական, անհամոզիչ, ֆանտաստիկ, մտացածին, այլ միայն այնպիսին, որը բավարարում է պայմանների որոշակի ամբողջության (ենթադրություն, որը չի հակասում փաստերի բացատրության համար անհրաժեշտ գիտելիքների գիտական հավաստիությանը, որոնց բացատրության համար այն կիրառվում է, որպեսզի նրա օգնությամբ կարելի լինի բացատրել բոլոր փաստերը), այնպես էլ քննչական վարկածը կարող է համարվել այդպիսին, միայն այն դեպքում, եթե բավարարում է նշված պահանջներին:

Այս ընդհանուր պահանջներից քննչական վարկածների համար բխում են այնպիսի մասնավորները, ինչպիսիք են՝ հիմնավորվածությունը,

տրամաբանական հաջորդականությունը և որոշակիությունը, կախվածությունը փաստերից, որոնք այն կառուցելու հիմքն են համարվում:

Վարկածը պետք է գտնվի այնպիսի սերտ համագործակցության մեջ իրեն ծնող փաստերի հետ, որ դրանց առկայությամբ ի վիճակի լինի բացատրել դրանք ավելի լավ և ամբողջական, քան որևէ այլ ենթադրություն: Զննչական վարկածների նկատմամբ կարևոր պահանջ է համարվում այն, որ նա պետք է բացատրի ոչ թե որոշ փաստեր, որոնք պարզաբանման կարիք են զգում, այլ դրանց ամբողջությունը:

Հիպոթեզի և քննչական վարկածի իմացաբանական բնույթը նույնական է: Նկատենք նաև, որ քննչական վարկածը իր ավարտված տեսքով միշտ համարվում է ինդուկցիայի կամ դեդուկցիայի արդյունք: Ինդուկտիվ մտահանգումը մտահանգումն է մասնավորից ընդհանուրը և իր առավել կիրառումն է գտնում այն դեպքերում, երբ քննչական վարկածը բխում է այն ապացույցների վերլուծությունից, որոնք հայտնաբերվել են առանձին քննչական գործողություններ կատարելիս:

Այդ դեպքում ապացույցների առաջացման առանձին մասնավոր պատճառների պարզաբանումից ինդուկտիվ մտածողության ճանապարհով կարելի է ընդհանուր ենթադրություն անել հանցագործության դեպքի բնույթի և պատճառների մասին: Այս դեպքում ինդուկցիան կարող է լինել ոչ լրիվ (մտահանգման ժամանակ լրիվ չեն հետազոտվի մի շարք փաստեր, երևույթներ. կուսումնասիրվի դրանց մի մասը) և գիտական, ենթադրվող մտահանգման առումով, որը հիմնվում է դեպքի, փաստերի, երևույթների վերաբերյալ անհրաժեշտ հատկանիշների ու պատճառների մասին գիտելիքների վրա:

Հնարավոր են սխալներ նաև ստացված տեղեկատվության տրամաբանական մշակման ընթացքում:

Քանի որ կատարված հանցանքի լրիվ պատկերը վերականգնվում է միջնորդավորված ճանապարհով, գիտելիքները, որոնք քննիչը պետք է ստանա քննության ընթացքում, միշտ երևան են գալիս որպես մտավոր աշխատանքի արդյունք:

Հանցագործություններ քննելիս, ինչպես նաև գիտական ճանաչողության բնագավառում, ճշմարտության ճանաչողության ընթացքը սկսվում է հիպոթեզի՝ քննչական վարկածների (սովորաբար մի քանի քննչական վարկածների) կառուցումից, որոնք վերականգնում են հետազոտվող երևույթի ենթադրական պատկերը:

Առաջ քաշված վարկածները ենթարկվում են մանրագննի ստուգման: Այդ նպատակի համար մշակվում է այնպիսի միջոցառումների ամ-

բողջությամբ, որոնք անհրաժեշտ են փաստական տվյալների՝ դատական ապացույցների ստացման համար, որոնց հիման վրա կարելի կլինի հիմնավոր հետևություն անել, թե առաջադրված վարկածներից ո՞րն է համապատասխանում իրականությանը (այսինքն՝ կազմվում է քննության պլան), իսկ դրանց իրականացումից հետո (ապացույցների հավաքումից և ստուգումից) կատարվում է ստացված դատական ապացույցների գնահատում:

Որպեսզի ստացված տվյալների տրամաբանական մշակման ժամանակ սխալներ թույլ չտրվեն, մասնավորապես, ստուգման ենթակա քննչական վարկածների շրջանակի ոչ ճիշտ որոշում, դատական ապացույցների ամփոփ գնահատման ընթացքում անհիմն հետևություններ և այլն, քննիչը պետք է լավ իմանա և խստորեն պահպանի տրամաբանության օրենքները և մտածողության ձևերը, հայտնի փաստերին և նրանց փոխկապակցվածությանը ցուցաբերի դիալեկտիկական մոտեցում, մշտապես հետևի՝ կա՞ն արդյոք իր տրամադրության տակ բավարար ապացույցներ՝ անհրաժեշտ հետևություններ անելու համար:

Այստեղ պետք է հիշել, որ ժամանակակից տրամաբանությունը հաճախ անվանում են մաթեմատիկական՝ դրանով ընդգծելով նրա նոր մեթոդները, որոնց բնութագրական գծերից մեկը ամենատարբեր խորհրդանիշերի օգտագործումն է՝ սովորական լեզվի բառերի և արտահայտությունների փոխարեն: Մաթեմատիկոս Ժ. Ադամարը գրում է. «Նոր մտահղացումների ծննդյան սկզբնական փուլում շատերը օգտագործում են անորոշ կերպարներ և ոչ թե մտածողությունը բառերում ու ճշգրիտ քվաբանական նշաններում¹»:

Ինդուցիայի օգտագործմամբ վարկածներ կառուցելիս քննիչը պետք է իմանա այն սխալների մասին, որոնք կարող են լինել ինդուկտիվ մտահանգման պրոցեսում: Այդպիսի սխալներից են՝ ոչ ճիշտ հետևությունը, «հապճեպ ընդհանրացումը», պատճառահետևանքային կապի ոչ ճիշտ ընկալումը («դրանից հետո՝ նշանակում է դրա հետևանքով») և այլն: Այս բնույթի սխալները կարող են առաջացնել վարկածների սխալ կառուցում, դրանով էլ՝ գործի քննության սխալ ընթացք:

«Հապճեպ ընդհանրացման» տրամաբանական սխալն այն է, որ մասնավորից ընդհանուրը հետևությունը հիմնվում է օբյեկտի հատկանիշների ոչ լրիվ և ոչ բազմակողմանի վերլուծության վրա և հաճախ առանց անհրաժեշտ պատճառական կապերի որոշման:

¹ Адамар Ж. Исследование психологии процесса изобретения в области математики. М., 1979, էջ 79:

Անձը հանգում է հետևության, ելնելով հատկանիշների մի մասի ուսումնասիրությունից, որի հետևանքով հետևությունը կարող է սխալ լինել, քանի որ նրա հիմքում դրված գնահատման դրույթները իրականությանը չեն համապատասխանում:

Նեգատիվ հանգամանքների բացահայտումը, որոնք հերքում են առաջադրված հիպոթեզը, նախադրյալներ են ստեղծում որոնման դոմինանտի ակտիվացման և նոր հիպոթեզի ուրվագիծը կազմելու համար:

«Զննչի համար առաջնայինը տարբեր օբյեկտների ընկալման սովորական ստերեոտիպերի հաղթահարումն է¹»:

Նշեցինք, որ հիպոթեզի՝ այլ կերպ ասած քննչական վարկածի կառուցումը ենթադրում է փաստերի ընդհանրացում և նրանցում ընդհանուրը ու էականը հայտնեբերելը, իսկ դա ենթադրում է ինդուկցիան, իսկ ինդուկտիվ մտահանգման պրոցեսում տեղի է ունենում դեդուկցիան, քանի որ հայտնաբերված յուրաքանչյուր ապացույցի վերլուծությունը պահանջում է առարկայի մասին հայտնի ընդհանուր պատկերացում, նրա հնարավոր պատճառական կապերի մասին՝ այս կամ այն գործողությունների հետ և այլն:

Դրա համար էլ ինդուկցիան իր մաքուր տեսքով վարկածների կառուցման այդ փուլում գոյություն չունի, քանի որ այն ենթադրում է ընդհանուրի մասին գիտելիքներ, դատողությունների ընթացքը ընդհանուրից մասնավորին, այսինքն՝ դեդուկցիայի կիրառում: Իսկ դեդուկցիան, որպես գիտական հետազոտության միջոց, ճանաչողության ինքնուրույն մեթոդ չի համարվում, քանի որ այն համակողմանի հետազոտության համար բավարար չէ:

Դեդուկցիա ասելով հասկացվում է տրամաբանական հետևություն՝ ընդհանուրից մասնավորը:

Հանցավոր դեպքի բնույթի մասին դեդուկտիվ մտահանգումը ելնում է քրեական իրավունքի (հանցակազմ) և կրիմինալիստիկայի ընդհանուր դրույթներից՝ առանձին բնույթի հանցագործությունների քննության մեթոդիկայի դրույթներից և որոշում է այն հատկանիշները, որոնք հատուկ են որոշակի հանցավոր դեպքին կամ հանգամանքներին և բնութագրական են տվյալ բնույթի հանցագործություններին:

Վարկածներ կառուցելիս դեդուկտիվ մեթոդը կիրառելի է, երբ գործով ձեռք բերված ապացույցները ակնհայտորեն անբավարար են: Այդ դեպքում վարկածներ կառուցելիս պետք է ելնել ոչ թե որոշակի ապացույցնե-

¹ Васильев В. Л. Юридическая психология, 1977, էջ 480:

րի վերլուծությունից, այլ ընդհանուր ենթադրությունից, որոնցից կարելի է հանգել տրամաբանական հետևանքների, որոնք ստուգվում են քննության ընթացքում:

Քննիչի գործունեության մեջ նշանակություն ունեն կրիմինալիստիկական գիտելիքները և փորձը: Դրանք պայմաններ են ստեղծում ունեցած լրատվությունը հասկանալու, նրա որոնման և ճիշտ ընտրության համար: Այդ գիտելիքներն ու փորձը անհրաժեշտ նախադրյալներ են նաև մտապատկերի վերականգնումը ակտիվացնելու համար:

Ինչպես նշում է Ն. Ա. Սելիվանովը. «Անցյալ դեպքի գիտակցումը միշտ հիմնվում է ներկա փաստերի վրա: Դրա հետ կապված անհրաժեշտություն է առաջանում կառուցել փոխկապակցված փաստերի մտովի պատկերը՝ ներկա երևույթներինը՝ անցյալ իրադատության հետ:

Իմացաբանությունը ընդգրկում է ճանաչվող փաստերի, երևույթների գնահատման, ստուգման պրակտիկ կողմը: Այդ գործունեության ընթացքում լայնորեն կիրառվում են փորձարարություններ այն օբյեկտների հետ, որոնք հայտնաբերվել են իմացաբանական աշխատանքի ընթացքում¹»:

Դեդուկտիվ մեթոդով վարկածներ կառուցելիս կարևոր է, որ քննիչը իր ենթադրություններում նախատեսի հանցագործության բոլոր հնարավոր դեպքերը, չսահմանափակվելով նրանցով, որոնք իրեն ավելի հավանական են թվում: Քիչ հավանական թվացող ենթադրությունները հաշվի չառնելը կարող է հանգեցնել տրամաբանական սխալի, որի առկայությամբ դեդուկտիվ մտահանգմանը դիմելը կլինի ոչ լրիվ, իսկ հետևությունները՝ սխալ:

Քննչական վարկածների ձևավորման ընթացքում կարևոր նշանակություն ունի անալոգիան, որպես մտահանգման ձև: Անալոգիան հիպոթեզի, ենթադրության կառուցման խթանիչի դեր է կատարում: Սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ անալոգիայով մտահանգումը մեծ նշանակություն ունի միայն վարկածների ձևավորման սկզբնական փուլում, քանի որ այն հուշում է քննչական վարկածների հնարավոր ուղղությունը, իսկ վարկածի ձևավորման և ստուգման ընթացքում անալոգիան ինքնուրույն դեր չի կատարում:

Անալոգիան բավական չէ քննչական վարկածների ձևավորման ողջ ընթացքը բացատրելու համար և արդեն վարկածի զարգացման փուլում

¹ Селиванов Н. А. Критерии доступности применения тактических приемов при расследований, Законность. М., 1994, №3, էջ 23:

անալոգիան՝ լրացվում է ինդուկցիայով և դեդուկցիայով: Անալոգիան միայն հուշում է վարկածի միտքը (հղացումը) այն դեպքում, երբ ինդուկցիան և դեդուկցիան հիմնավորում են նրա գոյությունը և օրինաչափությունը: Գործի քննության ընթացքում վարկածներ կառուցելիս անալոգիայի աղբյուր կարող են լինել.

ա. օպերատիվ և քննչական ճանապարհով ձեռք բերված տվյալները, որոնք իրենց կատարման եղանակով ու մեթոդներով համապատասխանում են բացահայտված հանցագործություններին,

բ. օպերատիվ և քննչական նյութերը՝ ըստ չբացահայտված նույնատիպ հանցագործությունների,

գ. ընդհանուր տեսական դրույթները, որոնք հիմնված են քննչական պրակտիկայի ընդհանրացման վրա, և հնարավորություն են տալիս նկատի ունենալ որոշ քանակի քննչական վարկածներ, որոշակի բնույթի հանցագործությունների համար,

դ. քննիչի տեսական գիտելիքները և սեփական փորձը:

ԳԼՈՒԽ 4. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ԻԴԵՆՏԻՖԻԿԱՑՈՒՄ

(ՆՈՒՅՆԱՑՈՒՄ)

Քննչական, դատական և փորձագիտական պրակտիկայում հաճախ անհրաժեշտություն է առաջանում լուծել խնդիրներ, որոնք հնարավոր է իրականացնել միայն նույնացման միջոցով:

Նույնացման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ հաճախ հանցագործությունների քննության ընթացքում անհրաժեշտություն է զգացվում պարզել անձի, առարկայի կամ նյութական այլ օբյեկտի կապը քննվող դեպքի հետ՝ նրանց կողմից թողնված հետքերով կամ այլ արտահայտություններով, որն էլ նպաստում է գործի շատ էական հանգամանքների պարզաբանմանը և, վերջին հաշվով, հանցագործության բացահայտմանը:

Նույնացման ժամանակ օբյեկտի թողած հետքում արտահայտված հատկությունները (հատկանիշները) համեմատվում են քննության ժամանակ պարզված օբյեկտի կամ նրա արտահայտությունների հետ, այն օբյեկտի, որը ըստ գործում եղած տվյալների, կարող էր թողած լինել հայտնաբերված հետքը կամ այլ արտահայտությունը:

Այլ արտահայտություն ասելով՝ պետք է հասկանալ, օրինակ, ձեռագիրը, կնիքի դրոշմը, գրավոր խոսքը, ձայնը և այլն: Եթե կպարզվի, որ օբյեկտը նույնն է, որը թողել է հայտնաբերված հետքը (այլ արտահայտությունը), ապա կարելի է արձանագրել օբյեկտների նույնություն:

Կրիմինալիստիկական նույնացման էության և խնդիրների հարցի պարզաբանումը սերտորեն կապված է քրեադատավարական ապացուցման խնդիրների և մեթոդների հետ:

Հայտնի է, որ ապացուցումը համապատասխան մարմինների ու անձանց քրեադատավարական գործունեություն է. «...գործի օրինական, հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը և գնահատելը է» (ՀՀ ՔԴՕ 142 հոդվ. I մաս):

Նշված գործունեության հիմնական կողմերից մեկն այն անձանց, առարկաների և այլնի պարզաբանումն է, որոնք առնչվում են քննվող դեպքին: Օրինակ՝ ձեռքերի, ոտքերի, ատամների հետքերով պարզվում է այն անձը, որը թողել է այդ հետքերը, տրանսպորտային միջոցների հետքե-

րով՝ որոնվում է ստուգվող ավտոմեքենան, կրակված գնդակի (արկի) և պարկուճի վրա մնացած հետքերով պարզվում է հրազենի որոշակի օրինակից կրակվելու փաստը, ձեռագիրը հետազոտելով, պարզվում է այն գրող անձը և այլն:

Նման դեպքերում իրականացվում է իդենտիֆիկացում (նույնացում): Իդենտիֆիկացման անմիջական խնդիրը մույժացման հարցի լուծումն է, քանի որ այն սերտորեն կապված է ապացուցման մյուս խնդիրների հետ:

Օբյեկտի իդենտիֆիկացումը նշանակում է համեմատական հետազոտության միջոցով պարզել նույնությունն իր հետ՝ այդ նպատակով օգտագործելով նրա թողած որևէ արտահայտություն (հետք, ձեռագիր, կտորտանք և այլն):

Ապացուցման գործընթացում նույնացումը պետք է համատեղվի հետազոտվող օբյեկտների և հանցագործության իրավաբանական վերլուծության հետ: Այդ վերլուծությունն անհրաժեշտ է ինչպես հետքերը և այլ արտահայտությունները հայտնաբերելիս և ֆիքսելիս, այնպես էլ նույնացման արդյունքները քրեական գործի գլխավոր փաստն ապացուցելու ժամանակ օգտագործելիս:

Այլ կերպ ասած՝ եթե իդենտիֆիկացման անմիջական խնդիրը նույնացման հարցի լուծումն է, ապա ապացուցման խնդիրը նյութական մասնավոր օբյեկտը պարզելն է, որը որոշակիորեն կապված է քննվող դեպքի հետ: Վերջինս որոշվում է ինչպես ապացուցման ընդհանուր հնարքների միջոցով, այնպես էլ հատուկ տեխնիկական մեթոդներով, որոնց ամբողջությունը կազմում է ապացուցման մասնավոր մեթոդիկան: Կրիմինալիստիկական իդենտիֆիկացումը համարվում է այդ մեթոդիկայի մի մասը: Այսպիսով, դատավարական ապացուցման գործընթացում իդենտիֆիկացման տեղը ճիշտ պատկերացնելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ նույնացման հարցը լուծելու համար օգտագործվող ելակետային փաստական տվյալների բնույթը, հետազոտման խնդիրը և դատավարական ապացուցման մեջ տեխնիկական իդենտիֆիկացման ունեցած դերը:

Պետք է ճիշտ պատկերացնել նաև, որ նույնության հարցի լուծման գործընթացը հարաբերականորեն ինքնուրույն հետազոտություն է իր տե-

¹ Ծագում է լատիներեն identificare – նույնացնել բառից, ըստ Ն.Վ. Թերզիևի՝ լատիներեն igem բառից, որ նշանակում է այդ նույնը: Տե՛ս Н.В. Терзиев. Идентификация и определение родовой (групповой) принадлежности (лекции по криминалистике). М., 1961:

դեկատվական որոշիչով, որն ըստ էության նույնացման հատկանիշների ամբողջությունն է և արդյունքը, որը հետևությունն է՝ նույնության կամ դրա բացակայության մասին, դա էլ թույլ է տալիս իդենտիֆիկացման գործընթացը դիտել որպես ապացուցման բաղադրիչ տարրերից մեկը, իսկ փորձագիտական իդենտիֆիկացման արդյունքները՝ որպես ապացույցի աղբյուրներից մեկը:

Ըստ նույնացման սուբյեկտի՝ տարբերում են քննչական և փորձագիտական նույնացում:

Այն դեպքերում, երբ իդենտիֆիկացման խնդիրները լուծելու համար հատուկ գիտելիքներ չեն պահանջվում, և անհրաժեշտ է հարցի իրավաբանական լուծում, իդենտիֆիկացումն իրականացնում է քննիչը: Նա, քրեական դատավարության օրենսգրքի պահանջներին համապատասխան, մարդուն, դիակը, կենդանուն կամ առարկաները ներկայացնում է ճանաչման կամ կատարում է համեմատական վերլուծություն՝ քննչական զննության, խուզարկության, ազդրավման, հարցաքննության, առերեսման ժամանակ:

Նույն սկզբունքով է լուծվում նաև գործընթացների, երևույթների ֆունկցիոնալ-դինամիկ հմտությունների հարցը: Բայց քանի որ կրիմինալիստիկական իդենտիֆիկացումը, ինչպես հայտնի է, իրականացվում է՝ որոշակի օբյեկտի կապը քննվող դեպքի հետ պարզելու նպատակով, ապա իդենտիֆիկացման օբյեկտները պետք է որոշակիացվեն այնպես, որ դրանց առանձնացումը նպաստի այդ խնդիրների լուծմանը:

Այդպիսի իդենտիֆիկացում կատարում են նաև օպերատիվ-հետախուզության աշխատակիցները, երբ իրենց գործունեության ընթացքում հարկ է լինում համեմատել, նույնացնել տարբեր օբյեկտներ:

§ 1. ԽՄԲԱՅԻՆ (ՍԵՌԱՅԻՆ) ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ

Նշված խնդիրներից բացի կամ դրանց լուծման հետ զուգահեռ հաճախ անհրաժեշտություն է առաջանում որոշել, քննիչի սեռին (խմբին) է վերաբերում այս կամ այն առարկան, որի հետքը կամ այլ արտաբնատությունը մնացել է դեպքի տեղում կամ այլուր:

Կրիմինալիստիկական իդենտիֆիկացման (նույնացման) տեսական հետազոտությունների սկիզբը համարվում են 20-րդ դարի 40-ական թվականները, երբ ստեղծվեցին ամբողջական ուղղություններ, որոնք այժմ համարվում են դատական իդենտիֆիկացնող (նույնացնող) փորձաքն-

նությունների մեթոդաբանական հիմքը¹: Կրիմինալիստիկական նույնացման ընդհանուր տեսության հետ միաժամանակ զարգացան նաև դրա առանձին ասպեկտները, այդ թվում նրանք, որոնք վերաբերում են խմբային (սեռային) իդենտիֆիկացմանը (նույնացմանը) և այժմ լայնորեն կիրառվում են որոշակի առարկայի (օբյեկտի) մասի պարզաբանման կամ նրա՝ որոշակի խմբի (սեռի) պատկանելու հարցը լուծելիս: Այդ հասկացությունը, որն առաջարկեց Ն.Վ. Թերզիևը², հետագայում վերանայվեց, ճշգրտվեց ինչպես իր³, այնպես էլ այլ հեղինակների կողմից, որոնց թվում էին Բ.Մ. Կոնարիները, Վ.Յա. Կոլդինը, Ն.Ա. Սելիվանովը, Ա.Ա. Էյսմանը և ուրիշներ⁴: Բայց նրա հիմնական բովանդակությունը, այն է՝ խմբի (սեռի) կրիմինալիստիկական նույնացումը, որին պատկանում են համեմատվող օբյեկտները, մնաց անփոփոխ:

Խմբային (սեռային) նույնացումը հետագայում (1950 թ.) Ն.Վ. Թերզիևը վերանվանեց «խմբային (սեռային) պատկանելության որոշում», դրանով որոշակի պարզություն մտցնելով խմբային (սեռային) նույնացման պրոբլեմի մեջ:

Այնուհետև խմբային (սեռային) պատկանելության որոշումը սկսեց լայնորեն կիրառվել կրիմինալիստիկայում՝ որպես խմբային (սեռային) նույնացման նախընտրելի հոմանիշ: Այդ հանգամանքը հնարավորություն տվեց խուսափելու տերմինները և անհատական ու խմբային նույնացումները միմյանց հետ շփոթելուց:

Չնայած դրան՝ հեղինակների մի մասը, այդ թվում Ա.Ռ. Շլյախովը, մնացին այն կարծիքին, որ խմբային (սեռային) իդենտիֆիկացումը կրիմինալիստիկական նույնացման կարևորագույն փուլն է: Այդ առումով էլ կարևոր է դրա էության և նշանակության գիտակցումը⁵:

¹ Потапов С.М. Принципы криминалистической идентификации. "Сов. Гос. и право", 1940. №1.

² Терзиев Н.В. Обзорные лекции по криминалистике. М., Юриздат., 1945.

³ Терзиев Н.В. Идентификация в советской криминалистике. В уч. "Криминалистика". М., 1950.

⁴ Комаринец Б.М., Кисин М.В. Наставление к использованию криминалистическим сравнительным микроскопом "мис-10", НИИК ГУМ МВД. М., 1948. Колдин В.Я. Идентификация при производстве криминалистических экспертиз. М., 1957. Селиванов Н.А. Доказательственное значение заключения эксперта о групповом тождестве, "материалы научной конференции". Киев, 1963 А.А. Эйсман. Вопросы теории установления групповой принадлежности (родовой идентификации) в криминалистике. "Проблемы судебной экспертизы", сб.1, М., 61.

⁵ Шляхов А.Р. Организация и производство криминалистической экспертизы в СССР. Сб. "Теория и практика криминалистической экспертизы", №9-10. М., 1962.

Այլ հեղինակներ, մասնավորապես, Ն.Ա. Սեյիվանովը, Ա.Ա. Էյսմանը, Մ.Յա. Սեզայը, Յու.Գ. Կորուխովը տարբերություն չէին տեսնում խմբային (սեռային) նույնացման և խմբային (սեռային) պատկանելության որոշման մեջ¹:

Ա.Ի. Վինբերգը և այլ հեղինակներ ընդհանրապես կրիմինալիստիկայում չեն ընդունում խմբային (սեռային) նույնացումը, գտնելով, որ կրիմինալիստիկական իդենտիֆիկացման առարկան պետք է լինեն միայն անհատականորեն որոշակի օբյեկտները. անձը, հրազենի տեսակը, որոշակի գործիքը և այլն²: Այս առնչությամբ Յու. Կորուխովը գրում է. «Ինդենտիֆիկացնել (նույնացնել) օբյեկտը, նշանակում է համեմատական հետազոտման մեթոդով պարզաբանել նրա նույնությունը հնքն իրենով՝ այդ նպատակի համար օգտագործելով նրա թողած արտահայտությունները կամ դրանց մասերը»³:

Նշված հարցի վերաբերյալ թվարկված և որոշ այլ կարծիքների միջև տարբերությունները բացասաբար էին անդրադառնում փորձաքննությունների կատարման մեթոդիկայի և փորձագետի եզրակացության ապացուցողական արժեքի գնահատման վրա: Այդ հակասությունները հնարավորություն չէին տալիս մշակել միասնական, որոշակի մեթոդական հանձնարարականներ, որոնք կարող էին տեսական հիմք հանդիսանալ դատական ապացույցների հետազոտման մասնավոր մեթոդներ մշակելու համար: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն առաջացավ ճշգրտել խմբային (սեռային) իդենտիֆիկացման և խմբային (սեռային) պատկանելության որոշման հասկացությունները, կրիմինալիստիկական փորձաքննությունների բնագավառում գիտական հետազոտությունների տեսական բազայի որոշման և վերոնշյալ խնդիրները լուծելու նպատակով:

Սույն տեսական հարցը լուծելիս հենց սկզբից պետք է ընդգծել, որ խմբային (սեռային) իդենտիֆիկացում ~~անելով պետք է հաստատում~~ նույնացման մի տեսակ, որի նպատակը սեռը (խումբը) պարզաբանելն է: Այ-

¹ Эйсман А.А. Вопросы теории установления групповой принадлежности (родовой идентификации) в криминалистике. "Проблемы судебной экспертизы", сб.1. М., 1961. Сегай М.Я. Актуальные проблемы установления групповой принадлежности материалов (веществ) в теории и практике судебной экспертизы. "Материалы научной конференции". Киев, 1963.

² Винберг А.И. Криминалистика. Раздел I. Введение в науку, изд. ВШ МВД РСФСР. М., 1962, էջ 79, 81:

³ Корухов Ю.Г. III гл., в уч. для вузов "Криминалистика". М., 1998, էջ 21:

սինքն՝ նույնացման մյուս տեսակը, որն ըստ էության «խմբային պատկանելության որոշումն է» իդենտիֆիկացման միջոցով:

Այս ֆոնի վրա չհիմնավորված են թվում այն կարծիքները, ըստ որոնց կրիմինալիստիկական իդենտիֆիկացումը հնարավոր է միայն անհատական՝ որոշակի օբյեկտների նկատմամբ: Նման դատողությունը, մեր կարծիքով, բավարար հիմնավորվածություն չունի, քանի որ իդենտիֆիկացումն իրականության ճանաչողության մասնավոր մեթոդներից մեկն է, որը կարող է կիրառվել և կիրառվում է երևույթների ու դրանց միջև եղած կապը հետազոտելու համար, անկախ դրանց անհատականության աստիճանի մասին գոյություն ունեցող պատկերացումներից: Այս առումով իրավացի է Ս.Պ. Պապկովը, գտնելով, որ յուրաքանչյուր նույնացման էությունը, այդ թվում և կրիմինալիստիկական, համարվում է իդենտիֆիկացման օբյեկտի ճիշտ որոշումը, որը պետք է միակը լինի նույնացման ցանկացած խնդրում¹: Վերջին հաշվով օբյեկտի անհատականությունը նշանակում է մի կողմից հավասարությունը ինքն իրեն, մյուս կողմից՝ տարբերությունը բոլորից: Դրա համար էլ ճիշտ չի լինի խոսել մի քանի օբյեկտների, օրինակ՝ միևնույն դասային խմբի օբյեկտների նույնության մասին: Օբյեկտը նույնական կարող է լինել միայն ինքն իրենով²: Պետք է հաշվի առնել նաև կրիմինալիստիկական իդենտիֆիկացման մեթոդների միատեսակությունը նույնացման բոլոր դեպքերում:

Կրիմինալիստիկական խմբային (սեռային) իդենտիֆիկացման հասկացության էությունն ու բովանդակությունը լիարժեք ներկայացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել դրա հիմնական գծերը, որոնցից էականը համեմատական հետազոտությունն է, որի միջոցով իրականացվում է նույնացումը (ըստ Վինբերգի)³: Համեմատությունը ~~համարվում է իդենտիֆիկացման գլխավորը տարրը (ըստ Ա.Ա. Էյսմանի)⁴ և դրա գլխավոր աշխատանքային մեթոդներից մեկը (ըստ Մ.Վ. Թերզիևի)⁵:~~

¹ Стів Папков С.П. Об основных понятиях теории идентификации. Изд-во 3 отдела ОТУ КГБ, при СМ СССР, 1962, т. 8:

² Пантелеев С.Ф. Криминалистика. Учебник для вузов. Под. ред. В.А. Образцова. Гл. VII. М., 1995, т. 87

³ Винберг А.И. Некоторые вопросы теории криминалистической идентификации. Сб. "Вопросы криминалистики", 1-2. М., 1961, т. 22-23:

⁴ Эйсман А.А. Идентификация и установление родовой принадлежности объектов в криминалистике. "Криминалистика". Уч. для вузов. М., 1959, т. 24:

⁵ Н.В. Терзиев. Идентификация и определение родовой (групповой) принадлежности. "Лекции по криминалистике". М., 1961, т. 12:

Համեմատական հետազոտումն իրականացվում է կրիմինալիստիկական իդենտիֆիկացման ընթացքում, որի նպատակը ոչ թե ընդհանրապես ամեն մի երևույթի, այլ որոշակի օբյեկտի համեմատումն է: Կրիմինալիստիկական նույնացման վերջնական նպատակը ոչ թե որևէ երևույթի պարզաբանումն է, այլ օբյեկտների փոխազդեցության կամ փոխկապակցվածության, մարդկանց, իրերի, նյութերի միջև եղած օբյեկտիվ կապի ճամաշողությունը, որոնք հայտնվել են քրեական դատավարությունում:

Նույնացումն այնպիսի գործընթաց է, որն իրականացվում է փուլերով. գլխավոր փուլն օբյեկտների անջատ հեղազոտումն է, երբ որոշվում են նրանց ընդհանուր խմբային (սեռային) և մասնավոր հատկությունները, որոնք անվանվում են հասկացողներ և համեմատական հեղազոտություն, երբ այդ հատկությունները համեմատվում են:

Այս բոլոր հարցերն ավելի լիարժեք և մանրամասն կուսարաններ մի փոքր ուշ:

Խմբային (սեռային) պատկանելությունը որոշելու նպատակը համեմատվող երկու կամ ավելի որոշակի օբյեկտների մթառեսակությունը (միևնույն խմբին պատկանելը) պարզելն է:

Ըստ մեր ուսումնասիրությունների խմբային (սեռային) պատկանելության որոշման հասկացությունը լրիվ կլանվում է խմբային (սեռային) իդենտիֆիկացման հասկացությամբ, մասնավորապես, դրա գլխավոր անջատ և համեմատական հետազոտման փուլերում: Հայտնի է, որ կրիմինալիստիկական հետազոտման օբյեկտի նույնացման հատկանիշների պարզաբանումը, այդ թվում ընդհանուր, սեռային և տեսակային, կատարվում է անջատ հետազոտման փուլում: Այդ դեպքում հնարավոր են օբյեկտի բնույթի, ծագման, սեռի վերաբերյալ հետևություններ: Դրա հետ կապված ճշգրիտ պետք է համարել իդենտիֆիկացման կրիմինալիստիկական փորձաքննության տեսության և պրակտիկայի մեջ «խմբային (սեռային) պատկանելության որոշման» հասկացության ներդրումը: Նաև այն պատճառով, որ «խմբային (սեռային) իդենտիֆիկացում» հասկացությունը նոր բովանդակություն չէր ավելացնում նշված հասկացության մեջ: Նման հարցադրումը ժամանակին հնարավորություն տվեց և այժմ էլ նպաստում է կրիմինալիստիկական իդենտիֆիկացման տեսության զարգացմանը, նրանում ներդնելու և կիրառելու գիտության և տեխնիկայի ժամանակակից նվաճումները սեռի (խմբի) իդենտիֆիկացման գործում, հնարավորություն է տալիս որոշելու դատական ապացույցների հետա-

գոտման մեթոդների կատարելագործման բնագավառում գիտական հետազոտությունների ճշգրիտ ուղղությունը:

Պետք է կարևորել «կրիմինալիստիկական իդենտիֆիկացում» հասկացության իմաստը և բովանդակությունը: Այն իրականացվում է տարբեր նշանակությամբ.

Օ հետազոտման նպատակը և արդյունքը,

Ծ հետազոտման գործընթացը՝ որպես գործունեության համակարգ, որն իրականացվում է որոշակի հաջորդականությամբ, նույնացման խնդիրները լուծելու համար,

Օ ռեսական հայեցակարգ նյութական օբյեկտների նույնացման հնարքների ընդհանուր սկզբունքների մասին՝ որպես դատավարությունում (քրեական, քաղաքացիական, վարչական, տնտեսական) ճշմարտության պարզաբանման եղանակ¹:

Իդենտիֆիկացման հետազոտությունների կարևորությունն ընդգծելու համար նշենք, որ այն անցնում է քրեական գործի քննության ամբողջ ընթացքում, որպես գործընթաց, որի արդյունքները հստակ երևում են քննիչի կազմած մեղադրական եզրակացության և դատարանի դատավճռի մեջ:

Իդենտիֆիկացման նշված պրոբլեմների վրա աշխատել են ռուս գիտնականներ Ն.Վ. Թերզինը, Բ.Ի. Շևչենկոն, Ն.Ա. Սելիվանովը, Մ.Վ. Սալտևսկին, Ա.Ա. Էյսմանը, Վ.Պ. Կոլմակովը, Վ.Ա. Սնետկովը, Յու.Գ. Կորոլսովը, Ռ.Ս. Բելկինը, Ա.Ի. Վինբերգը, Վ.Յա. Կոլդինը, Ս.Պ. Միտրիչևը, Ի.Դ. Կուչերովը, Բ.Լ. Չոտովը, Մ.Ի. Ռոզանովը, Բ.Մ. Կոմարինցը, Ա.Ռ. Շլյախովը, Ռ.Մ. Լանցմանը, Լ.Գ. Էջուրովը և ուրիշներ:

Հետագայում նոր տերմինի նշանակությունը և բովանդակությունը փոխվեց, այն առումով, որ խմբային (սեռային) պատկանելության պարզաբանմանը տրվեց ինքնուրույն նշանակություն՝ իդենտիֆիկացումից տարբերվող բովանդակություն²: Այս հասկացությունն օրինաչափորեն շատ կողմնակիցներ ունեցավ, իսկ 1956 թվականին լայնորեն ընդունվեց կրիմինալիստիկական նույնացում հասկացությունը՝ որպես անհատականորեն որոշակի օբյեկտների պարզաբանման գործընթաց³: Այդ գոր-

¹ Е.Р. Россинская. Криминалистика (вопросы и ответы). М., 1999, էջ 30:

² С.П. Митричев. Введение в курс советской криминалистики. "Советская криминалистика", ч.1, М., 1962, էջ 19-20:

³ Н.В. Терзнев. Криминалистическое отождествление личности по признакам внешности. М., ВЮЗИ, 1956, էջ 5:

ծընթացը մինչ այժմ մնում է կրիմինալիստիկական իդենտիֆիկացման փորձաքննությունների տեսության և պրակտիկայի մեջ:

Խոնարհումով միանում ենք Գ.Ա. Չորինի երախտապարտ խոսքին, առ այն, որ իդենտիֆիկացումը կրիմինալիստիկայի ամենազլխավոր և ամենահին մեթոդն է, որն ունի իր ոչ հասարակ պատմությունը, իր խորը տեսությունը, իր մեծ մշակողները, որոնք մեծազույն հարգանք և անկասխելի ցանկություն են առաջացնում լսելու նրանց ձայնը ժամանակակից հետազոտությունների էջերում¹:

§ 2. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ԻԴԵՆՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՕՐՅԵԿՏՆԵՐԸ

Կրիմինալիստիկական իդենտիֆիկացման պրոցեսում օբյեկտները բաժանվում են նույնացվող (իդենտիֆիկացվող) կամ որոնվող² և նույնացնող (իդենտիֆիկացնող) օբյեկտների:

Բաժանումը կատարել է կրիմինալիստիկական իդենտիֆիկացման տեսության հիմնադիր Ս.Մ. Պոտապովը, որն այդ առնչությամբ նշում է. «Օբյեկտները խստորեն բաժանելը ինդենտիֆիկացնողի և իդենտիֆիկացվողի իդենտիֆիկացման առաջին հիմնական սկզբունքն է»³:

Այս երկու օբյեկտների բովանդակային տարբերությունը նա տեսնում էր նրանց կիրառական էության մեջ. «Մի օբյեկտի վերաբերյալ ամփոփականորեն դրվում և առաջադրվում է լուծել նույնության կամ դրա բացակայության մասին հարցը, այն դեպքում, երբ մյուս օբյեկտները ծառայում են միայն որպես նյութ՝ այդ հարցը լուծելու համար: Հետևաբար օբյեկտների մի մասը համարվում են իդենտիֆիկացվող՝ նույնացվող, մյուսները՝ իդենտիֆիկացնող նույնացնող»⁴:

Հիշյալ հարցի բնութագիրը նույն կերպ է ներկայացրել նաև Ն.Վ. Թերզիևը. «Իդենտիֆիկացվող է այն օբյեկտը, որի նույնացումը

¹ Г.А. Зорин, Криминалистическая методология (фундаментальная криминалистика XXI века). Минск, 2000, էջ 76:

² Որոնվող օբյեկտը համարվում է նաև իդենտիֆիկացվող, այսինքն՝ որը դեռ պարզաբանված չէ, որոնվում է: Այդ հասկացությունը ցույց է տալիս և ընդգծում է ճշման անհրաժեշտությունը ստուգման ենթակա օբյեկտների թվում:

³ Потапов С.М. Введение в криминалистику. М., РИО, ВЮА, 1946, էջ 19:

⁴ Потапов С.М. Принципы криминалистической идентификации. "Сов. гос. и право", 1940, №1, էջ 71:

տվյալ իդենտիֆիկացման խնդիրն է, իսկ իդենտիֆիկացնող այն օբյեկտը, որը միջոց է նույնացման համար»¹:

Հետագայում այս բնութագրերը ճշգրտվեցին և լրացվեցին այլ հեղինակների կողմից հաշվի առնելով թեկուզ այն պարզ հիմնավորումը, որ իդենտիֆիկացնող օբյեկտը ևս կարող է նույնացման հարցը լուծող միջոց լինել: Դրան համապատասխան, ինչպես արդարացիորեն գրում է Վ.Յա.Կոլդինը, *իդենտիֆիկացվող* պետք է համարել այն օբյեկտները, որոնք իրենց հատկություններն արտահայտում են այլ օբյեկտների վրա (մարդիկ, կենդանիները, առարկաները և այլն):

Այս հարցի կապակցությամբ կան բազմաթիվ կարծիքներ, հիմնականում կապված այն օբյեկտների շրջանակի և նրանց, որպես ապացույց օգտագործելու բնութագրի հետ, որոնք մտնում են նույնացվողի մեջ:

Հայտնի է, որ կրիմինալիստիկայում ~~իդենտիֆիկացում (նույնացում)~~ ասելով հասկացվում է նյութական օբյեկտների և դրանց արտահայտությունների համեմատական հետազոտումը, նույնացման հարցը լուծելու և դատական ասպացույցներ ստանալու նպատակով:

Կրիմինալիստիկական իդենտիֆիկացման տեսությունն ընդգրկում է հասկացությունների, սկզբունքների և մեթոդների համակարգ, որն ապահովում է նյութական օբյեկտների գիտականորեն հիմնավորված նույնության հարցի լուծումն իրենց հետքերով կամ այլ արտահայտություններով և ստացված արդյունքների օգտագործումը քրեական դատավարությունում (երբեմն նաև քաղաքացիական դատավարությունում):

Իդենտիֆիկացման պրոբլեմը կարևոր է, քանի որ նույնացման հարցը լուծվում է դրա արդյունքները ապացուցման համար օգտագործելու նպատակով, իսկ նույնացման գործընթացին վերաբերվող հասկացությունների և մեթոդների ամբողջությունը կազմում է *կրիմինալիստիկական իդենտիֆիկացման մեթոդիկան* կամ *իդենտիֆիկացման օգտագործմամբ ապացուցման մեթոդիկան*:

Նույնացման առանձին օբյեկտները քննվող իրադարձության հետ միշտ պետք է համատեղվեն որակյալ իրավաբանական գնահատմամբ:

Ապացուցման ընթացքում պետք է տարբերել.

① իրենց թողած հետքերով կամ այլ արտահայտություններով նյութական օբյեկտների նույնացման հարցի լուծումը:

¹ Терзиев Н.В. Идентификация в криминалистике. "Сов. гос. и право", 1948, №12, էջ 39-40:

Քրոնվոդ դեպքի հետ նյութական օբյեկտի ունեցած կապի բացահայտումը՝ կատարված նույնացման հիմքով:

Նույնացման օգտագործմամբ ապացուցումը կարող է բավարարել հետևյալ հիմնական գրույթը.

Քրոնվոդ օբյեկտի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրի հայտնաբերումը,

պնդվող օբյեկտների ամբողջության որոշումը,

պնդվող օբյեկտների շրջանակի սահմանափակումը,

նույնացման համեմատական հետազոտում,

որոնվող օբյեկտի պարզաբանում:

Թեև այն սկզբունքորեն չի տարբերվում գիտության այլ բնագավառներում եղած նույնացումից, սակայն կրիմինալիստիկական իդենտիֆիկացման առանձնահատկությունը՝ ի տարբերություն ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և այլ գիտությունների, այն է, որ կրիմինալիստիկական իդենտիֆիկացման նպատակը համարվում է անհատական նույնացումը, այսինքն՝ որոշակի (մեկ առանձին) օբյեկտի նույնության պարզաբանումը: Իդենտիֆիկացումն այլ գիտություններում համարվում է դասի, սեռի, տեսակի պարզաբանում¹:

Այլ կերպ ասած, կրիմինալիստիկական իդենտիֆիկացումը քրեական և մյուս դատավարություններում ճշմարտության բացահայտմանը նպաստող միջոցներից մեկն է՝ նաև դրանով տարբերվելով այլ գիտություններում կիրառվող իդենտիֆիկացումներից: Բացի պրոֆ. Ե. Ռոսինսկայայի թվարկածներից, հարկ ենք համարում ավելացնել նաև մաթեմատիկայի, երկրաբանության, կենդանաբանության, բուսաբանության և այլն:

Կրիմինալիստիկական իդենտիֆիկացումը ինչպես փորձագետի, այնպես էլ քննիչի, մասնագետի և դատարանի կողմից կիրառվում է որպես հատուկ կրիմինալիստիկական մեթոդ, որը հարմարեցված է նյութական օբյեկտներն իրենց արտահայտություններով նույնացնելու նպատակին:

Նշված գործողությունը ճանաչողության բազմակողմանի, համընդհանուր կամ տրամաբանական միջոց չի համարվում:

Վերոհիշյալ խնդիրն իրականացնելիս կարևոր է որոշել, թե քննվող իրադարձության փաստական կողմի որ տարրերը կարող են լինել նույնացման օբյեկտներ:

¹ Е.Р. Россинская. Криминалистика (вопросы и ответы). М., 1999, էջ 31:

Օրինակ՝ կարելի՞ է իդենտիֆիկացնել առարկաների և մարդկանց առանձին հատկությունները, քանաքի պատճենավորման հատկությունը, հավելագրումների դեպքում, կասկածյալի ֆիզիկական ուժի աստիճանը, հանցագործության կատարման ժամանակը, տեղը: Թվարկած և նման բնույթի հարցեր առաջանում են քրեական գործեր քննելիս, քանի որ դրանց լուծումն ունի և՛ տեսական, և՛ պրակտիկ նշանակություն:

Նույնացման օբյեկտի հասկացությունը որոշելիս պետք է ուղենիշ ունենալ իրերի և դրանց հատկությունների փոխհստիայական ուսմունքը, ինչպես նաև կրիմինալիստիկական ~~իդենտիֆիկացման~~ ~~յուրահատուկ~~ խնդիրները:

Ինչպես նշում է պրոֆ. Ա.Ի. Ույմովը, ընդհանուր փոխհստիայական մեկնաբանությամբ նյութական իրը բնութագրվում է որպես «հատկությունների համակարգ»։ Իրերը, որոնք ունեն հատկությունների միևնույն համակարգը, համարվում են նույնը¹:

Կրիմինալիստիկական իդենտիֆիկացման տեսության մեջ նույնացման օբյեկտների որոշումը չի կարելի վերացարկել (աբստրակցիայի ենթարկել) դրա յուրահատուկ նպատակից, այն է. քրեական գործերով ապացուցման առարկա հանգամանքները պարզաբանելու նպատակով առանձին օբյեկտների նույնացումը:

Որոշ հեղինակներ արդարացիորեն ցույց են տալիս կրիմինալիստիկական իդենտիֆիկացման դերը մեղքի և պատասխանատվության անհատականացման, հանցագործության որոշակի հանգամանքների պարզաբանման գործում: Մասնավորապես, հանցագործության մասնակից անձանց, տուժողներին, որոշակի առարկաների, հանցագործության գործիքների ու միջոցների և այլն²:

Կրիմինալիստիկական իդենտիֆիկացումը քրեական գործի հանգամանքների հետազոտման եղանակ է:

Բայց պետք է նկատի ունենալ, որ նույնացման օբյեկտների անհատական կապը բնկվող իրադարձության հետ կարելի է որոշել և հետազոտել, եթե նույնացման օբյեկտներն ունեն կայուն տարածական սահմաններ և բնութագրվում են հատկությունների ամբողջությամբ:

Այդպիսի օբյեկտներ են համարվում մարդիկ, առարկաները, կենդանիները, տեղանքի որոշակի հատվածը և այլն:

¹ А.И. Уемов. Вещи, свойства, отношения. М., 1963, էջ 31:

² А.И. Винберг, А.А. Эйсман. Криминалистическая идентификация в теории судебных доказательств "Сов. Гос. право", 1966, №2, էջ 108-109:

Այլ կերպ ասած, նույնացման օբյեկտի կրիմինալիստիկական բնութագիրը միանգամայն տարբեր է իրերի փիլիսոփայական բնութագրից:

Մասնագիտական գրականության մեջ կարծիք կա այն մասին, որ իրերի առանձին հատկությունները կարող են լինել իդենտիֆիկացման օբյեկտներ¹:

Այդ կարծիքի հետ համաձայնել չի կարելի, քանի որ հատկությունը կարող է դիտվել միայն որպես իդենտիֆիկացման միջոց և ոչ որպես նրա օբյեկտ:

Օբյեկտներ կարող են լինել հատկությունների ամբողջությունը, այսինքն՝ իրերը և ոչ թե դրանց առանձին հատկությունները և որակները, իսկ իրերը հատկությունների և որակների անկրկնելի ամբողջության կրողներ են:

Նյութական օբյեկտների իդենտիֆիկացում ասելով պետք է հասկանալ դրանց տարբերակումը, առանձնացումը նյութական մյուս նույնատիպ (նույնասեռ) օբյեկտներից: Սա նույնացման (իդենտիֆիկացման) սկզբունքային դրույթ է:

Օրինակ՝ գրամեքենայի գլխավոր մեխանիզմի քայլը, ձեռագրի մշակվածության աստիճանը, հրազենի տրամաշափը չեն կարող նույնացման օբյեկտ համարվել, քանի որ դրանք առանձին հատկություններ են:

Իսկ դրանց բնութագրող (մեքենագիր տեքստի, ձեռագրի, կրակված զնդակի և այլն) մյուս հատկությունների անկրկնելի ամբողջությունը, որոնք ներկայացնում են միայն որոշակի անհատի (մարդու, առարկայի և այլնի) համարվում են նույնացման օբյեկտներ:

Առանձին հատկությունները կարող են հատուկ լինել շատ օբյեկտների: Այստեղ կարևոր է անկրկնելի համակցություն արտահայտությունը, որը չափազանց էական է իդենտիֆիկացման համար: Օրինակ՝ ստորագրության վերջագարդը կատարելիս ձեռքի շարժման ուղղությունը կամ քայլի անկյունը արտահայտում են անձի առանձին ֆունկցիոնալ հատկությունները: Այդպիսի հատկություններ կարող են ունենալ նաև այլ անձինք: Բայց նման հատկությունների համակցությունը բազմաթիվ այլ նմանատիպ, որոշակի օբյեկտին հատուկ հատկությունների հետ, որոնք կազմում են անհատական ֆունկցիոնալ ամբողջություն և հայտնի են

¹ Տե՛ս օրինակ, И.Д. Кучеров. Соотношение тождества и различия. М., 1968, էջ 127, 196:

միայն առանձին անձի (օբյեկտի), կարող են լինել կրիմինալիստիկական իդենտիֆիկացման օբյեկտ:

Այլ կերպ ասած, եթե հետքերում արտահայտվել են միայն նյութական օբյեկտի առանձին հատկություններ, որոնք անկրկնելի ամբողջություն չեն կազմում, դրանք հնարավոր չէ պարզաբանել:

Նույնացման հարցի տեսությունը լուծելիս անհրաժեշտ է պարզել նաև, թե կրիմինալիստիկական իդենտիֆիկացման օբյեկտներ համարվո՞ւմ են արդյոք երևույթները, ֆունկցիոնալ և դինամիկ հմտությունները:

Քանի որ կրիմինալիստիկական նույնացումը կատարվում է առանձին նյութական օբյեկտի և քննվող իրադարձության (հանցագործության) հետ կապը պարզելու համար, ~~ուստի նույնացման օբյեկտները պետք է որոշվեն այնպես, որ դրանց առանձնացումը նպաստի այդ խնդրի լուծմանը:~~

Դրանից հետևում է, որ նույնացումը պետք է լինի ոչ թե, օրինակ, ձեռագրի մասին, այլ անձի նույնացումը ձեռագրով, ոչ թե ձայնի, այլ անձի նույնացումը ձայնով, գործիքի նույնացումը հետքով և այլն: Կերջին հաշվով գործի քննության համար էական է համարվում հանցագործության կապը ոչ թե ձեռագրի, ձայնի, հետքի հետ, այլ այն նյութական օբյեկտների հետ, որոնց արտահայտությունն են դրանք:

Կրիմինալիստիկական իդենտիֆիկացման հիմքում ընկած է դիալեկտիկական¹ ~~նույնացման ուսմունքը, ճանաչողության դիալեկտիկական~~ մեթոդը: Այդ հարցում էական նշանակություն ունի նաև նույնացման ձևական-տրամաբանական օրենքը՝ որպես մարդկային մտածողության օրենքներից մեկը:

Կրիմինալիստիկական նշանակություն ունեցող նույնացման օբյեկտները համարվում են նյութական աշխարհի օբյեկտների իդենտիֆիկացման մասնավոր դեպքեր: Դիալեկտիկական նույնացման մասին ուսմունքը ելնում է նյութական աշխարհի օբյեկտների անհատականության ընդունումից:

Ինչպես նշեցինք, օբյեկտի անհատականություն նշանակում է, որ այն հավասար է ինքն իրեն և տարբեր է մնացած բոլորից:

Օբյեկտը նույնական կարող է լինել միայն ինքն իրենով: Այսինքն՝ բացառվում է մի քանի օբյեկտների նույնությունը:

Նույնացման հետազոտությունները դասակարգվում են տարբեր հիմքերով. ըստ նույնացվող օբյեկտի բնույթի տարբերում են նույնացումը

¹ Դիալեկտիկա – շարժման և զարգացման բուն պրոցեսը:

(իդենտիֆիկացումը) ըստ մտապատկերի, որը պահպանվել է մառդու հիշողության մեջ (ճանաչումը) և նույնացումը օբյեկտի նյութականորեն ֆիքսված արտապատկերի միջոցով, ինչպես նաև ամբողջի նույնացումը մասերի միջոցով:

Ըստ մտապատկերի իդենտիֆիկացում իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել օբյեկտի ընկալման պայմաններն ու օրինաչափությունները, ճանաչողի (իդենտիֆիկացնողի) հիշողության վիճակը, մտապատկերը վերարտադրելու կարողության առանձնահատկությունները, ճանաչման իրականացման պայմանները և հոգեբանական ու մտավոր այլ առանձնահատկությունները:

Ըստ նյութականորեն ֆիքսված արտապատկերի՝ ամբողջի նույնացումը մասերով, իրականացվում է՝ օգտագործելով առավելապես փորձագիտական հետազոտական մեթոդներ: Պետք է կարևորել արտապատկերի առաջացման մեխանիզմը վերլուծությունը, օգտագործել համեմատական մոտիվներ, կատարել նույնացվող և նույնացնող օբյեկտների անջատ և համեմատական հետազոտում և այլն՝ նույնացման հետազոտությունների մեթոդիկային համապատասխան:

Ամբողջի նույնացումը մասերով ենթադրում է միայն ամբողջի հետքերը մասերի բաժանվելիս (պատռվածքի, կտրվածքի և այլն), ինչպես նաև ամբողջից անջատված հետազոտվող նյութի կազմության և բաղադրության վերլուծությունը:

Կարևոր է այն հարցը, թե այն սահմանափակվա՞ծ է հետքերով, այլ արտահայտություններով (օրինակ՝ ձեռագրով, ձայնով և այլն), թե՞ դրանց թվին պետք է դասել մտապատկերները և դրանց վերարտադրության արդյունքները՝ հաղորդումներ, նկարագրություններ, գեղանկարներ: Իդենտիֆիկացման տեսության մեջ այդ հարցը լուծվում է տարբեր կերպ:

Որոշ հեղինակներ կողմնակից են իդենտիֆիկացվող օբյեկտների լայն, իսկ մյուսները՝ նեղ շրջանակի բնորոշման:

Լայն շրջանակի բնորոշման կողմնակիցներ են Ս.Մ. Պոտապովը, Ն.Վ. Թերզիևը, Վ.Պ. Կոլմակովը, Գ.Ի. Քոչարովը և մյուսները, նեղ շրջանակի բնորոշման կողմնակիցներ են Ս.Պ. Միտրիչևը, Մ.Ս. Եվգենև-Տիչը և այլք:

Այս հարցի գնահատման առումով, կարծում են, պետք է ելնել իդենտիֆիկացման տեսության համակարգի որոշակիությունից, ինչպես նաև նրա պրակտիկ կիրառման և ապացուցման արդյունավետության շահերից: Իդենտիֆիկացումը նյութական հետքերով և այլ արտահայտումներով մտապատկերով ճանաչումից էականորեն տարբերվում է ինչպես

նույնացման մեթոդիկայով, այնպես էլ ապացուցման մեջ նրա արդյունքների օգտագործմամբ:

Պետք է հաշվի առնել, որ նույնացումը նյութական հետքերով և այլ արտահայտություններով գիտատեխնիկական հետազոտման բնույթ ունի: Այս դեպքում գործում են նույնացման հատկանիշների անմիջական ընկալումը և անհրաժեշտ տեղեկատվության հայտնաբերման ու հետազոտման տեխնիկական միջոցները՝ խոշորացույց, մանրադիտակ, լուսանկարչություն, հետազոտման ֆիզիկական, քիմիական և այլ մեթոդներ:

Նման հետազոտությունների արդյունքները գիտականորեն հիմնավորվում են և, անհրաժեշտության դեպքում, կարող են ստուգվել կրկնակի հետազոտություններով՝ կիրառելով միևնույն տեխնիկական միջոցներն ու գիտական մեթոդները:

Այն դեպքում, երբ մտապատկերով ճանաչումը նման հնարավորություն չունի, մտապատկերը հետազոտման համար մատչելի է դառնում այն ընկալած մարդու կողմից վերաբառադրելի ցուցմունքի, նկարագրության և այլ եղանակներով: Այս դեպքում, հասկանալի է, նույնացման հատկանիշների անմիջական հետազոտում և դրա համար տեխնիկական միջոցների կիրառում հնարավոր չէ:

Դրանից բացի, օբյեկտը կրկնակի ճանաչման ներկայացնելը անիմաստ է և ապացուցողական արժեք չունի:

Նույնացման վերոհիշյալ երկու եղանակները տարբերվում են նաև (որ ամենակարևորն է) իրենց դասավորման ձևով: Առաջին դեպքում օրենքը նախատեսում է զննություն և փորձաքննություն (ՀՀ քր. դատ. օր. 217, 243 հոդվ.), երկրորդ դեպքում՝ հարցաքննության և ճանաչման ներկայացնելու (ՀՀ քր. դատ. օր. 206-212, 215, 221, 222, 223 հոդվ.):

Այլ կերպ ասած, իդենտիֆիկացման նշված երկու տեսակները տարբերվում են և՛ մեթոդական, և՛ դատավարական առումով:

Իդենտիֆիկացման օբյեկտի հարցի վերլուծությունը պետք է իրականացվի այն առումով, որ պարզվի նրա ապացուցողական նշանակությունը: Իսկ ապացուցողական նշանակություն ունի իդենտիֆիկացման օբյեկտի կապի փաստը քննվող դեպքի հետ: Քրեական դատավարությունում իդենտիֆիկացումը ենթադրում է ոչ միայն փոխազդեցության օբյեկտների պարզաբանում, այլև դեպքի մեխանիզմում դրանց դերի հետազոտում կապված քննվող դեպքի հետ:

Դա նշանակում է կրիմինալիստիկական իդենտիֆիկացման յուրահատուկ խնդիրների և առանձնահատկությունների պարզաբանում, որ

տարբերում է նրան գիտության ու տեխնիկայի մյուս բնագավառներում իրականացվող իդենտիֆիկացումից:

Իդենտիֆիկացման կիրառմամբ ապացուցման խնդիրն ու նպատակը որոշակի օբյեկտի պարզաբանումն է, որը կապված է քննվող դեպքի հետ: Այդ օբյեկտը կոչվում է որոնվող: Որոնվող օբյեկտի էական հատկություններն են.

1. օբյեկտիվ, միանշանակ կապը քննվող դեպքի հետ,
2. արտապատկերի կազմավորումը,
3. իդենտիֆիկացման կիրառմամբ ապացուցման ճանապարհով պարզաբանման հնարավորությունը:

Իդենտիֆիկացման ~~օգտագործմամբ~~ ապացուցման պրոցեսի վերլուծության համար ~~օբյեկտները~~ պետք է դասակարգել որոնվողի և ստուգվողի՝

Որոնվող օբյեկտի հատկությունը բնութագրում է ապացուցման անմիջական խնդիրը, որի էությունը քննվող դեպքի հետ կապված նյութական օբյեկտի պարզաբանումն է:

Ստուգվող օբյեկտի հատկությունը թույլ է տալիս ներկայացնել ապացուցումը նույնացման օգտագործմամբ, որոնվող օբյեկտի մասին վարկածների կառուցման և ստուգման տրամաբանական պրոցեսի տեսքով:

Ստուգվող կարելի է համարել այն օբյեկտը, որը ենթադրվում է որոնվող և ենթարկվում է համեմատական հետազոտման՝ նույնացման նպատակով: Իսկ ապացուցման խնդիրն այն է, որ առավելագույն չափով սահմանափակի ստուգվող օբյեկտների շրջանակը և դրանց թվից առանձնացնի միակ որոնվող օբյեկտը: Նրա հիմնական հատկանիշը համարվում է օբյեկտիվ, միանշանակ կապը քննվող դեպքի հետ: Այս դեպքում իդենտիֆիկացման ընթացքը հանգում է որոնվող և ստուգվող օբյեկտների արտահայտությունների համեմատական հետազոտման՝ նույնացման հարցը պարզելու նպատակով:

Իդենտիֆիկացման օբյեկտի էական հատկանիշ է համարվում դրա հատկությունների արտահայտությունն այլ օբյեկտների վրա: Այլ կերպ է բնութագրվում որոնվող օբյեկտը, որի հիմնական հատկանիշը համարվում է օբյեկտիվ, միանշանակ կապը քննվող դեպքի հետ: Այդպիսի կապի բացահայտումը պահանջում է հանցագործության նյութական իրադրու-

¹ Колдин В.Я. Идентификация при производстве криминалистических экспертиз. М., 1957, էջ 11:

յան ուսումնասիրում, այն օբյեկտների վերաբերյալ վարկածների կառուցում, որոնք կարող են նրա հետ կապված լինել, ինչպես նաև ստուգման՝ կապված իդենտիֆիկացման կիրառման հետ:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ որոնվող կարող են լինել ինչպես իդենտիֆիկացվող, այնպես էլ իդենտիֆիկացնող օբյեկտները: Սովորաբար փնտրում են նույնացվող օբյեկտները. «ստանափետրով՝ հանցագործը, ձեռագրով՝ այն կատարող անձը կամ հեղինակը, հետքով՝ ջարդող գործիքը և այլն: Իսկ մի շարք դեպքերում որոնվող կարող է լինել նույնացնող օբյեկտը, օրինակ՝ հետք թողած անձը՝ ձեռքին քսված ներկով, վրաերթ կատարած և անվադողի (կամ այլ) հետք թողած ավտոմեքենան, որի վրա մնացել է տուժողի արյունը և այլն:

Այս հարցերի մասին խոսելիս անհրաժեշտ է տարբերել նույնացումը մեծանությունից: Այդ հասկացությունների շփոթումը, որը թույլ է տրվում որոշ հեղինակների կողմից¹, կարող է խառնաշփոթ ստեղծել իդենտիֆիկացման տեսության սկզբունքային հարցերում:

Նույնացման հարցը կարող է լուծվել միայն երկու օբյեկտների միջև. հետազոտվող և իրենց առանձին արտահայտությունների:

Գրականության մեջ 60-ական թվականներից սկսած կարծիքներ էին արտահայտվում, որ անհրաժեշտ է վերանայել Ս.Մ. Պոտապովի ձևակերպած և արդեն համընդհանուր ընդունելություն ստացած դրույթն այն մասին, որ օբյեկտի իդենտիֆիկացումը հիմնվում է նույնացնող օբյեկտի հատկանիշների ուսումնասիրման և դրանք նույնացվողի վրա մնացած հատկանիշների հետ համեմատելու վրա²:

Քանի որ նույնացվող օբյեկտի ազդեցությունը համարվում է նաև փոխազդեցություն այլ օբյեկտի հետ, առաջանում է միմյանց հպված օբյեկտների միասնականություն, փոխկապակցվածություն, նույնություն: Դա պայմանավորում է փոխազդեցության մեջ գտնվող օբյեկտների հատկությունների փոխադարձ արտահայտվածություն, որն էլ իր հերթին թույլ է տալիս օբյեկտների նույնության պարզաբանումը դիտել որպես գործընթաց, որը հիմնված է որոնվող օբյեկտի հատկությունների ճանաչողության վրա: Իդենտիֆիկացնող (նույնացնող) օբյեկտը, որը փոխազդեցության մեջ է որոնվողի հետ, նույնացման միջոց է ոչ միայն նրանում որոնվող օբյեկտի հատկությունների արտահայտման կապակցությամբ, այլ որոնվող օբյեկտում արտահայտված սեփական հատկությունների

¹ Кучеров И.Д. Соотношение тождества и различия. Минск, 1968, էջ 122-123:

² Ст'ю С.М. Потапов. Введение в криминалистику. М., 1946, էջ 14:

անհատականության շնորհիվ: Հետևաբար, եթե օբյեկտի նույնացման պրոցեսում հնարավոր չէ հայտնաբերել հատկանիշների անհատական, բնութագրող ամբողջություն, առաջ է քաշվում նույնության ապացուցման սկզբունքը՝ հիմնված փոխազդեցության մեջ գտնվող օբյեկտների հատկանիշների ամբողջականության գնահատման վրա:

Տրամաբանական ապացուցման կանոններով ուսումնասիրվող դրույթների վերլուծությունը ցույց է տալիս իդենտիֆիկացման տեսության համընդհանուր ճանաչման արժանացած հիմնական դրույթների վերանայման անհիմն լինելը:

Դրանք համարվում են իդենտիֆիկացման տեղեկատվության սկզբնաղբյուրները: Նույնացնող օբյեկտների օգտագործմամբ պարզաբանվում է վերոհիշյալ օբյեկտների նույնությունը:

Իդենտիֆիկացվող օբյեկտի բնորոշումն էապես ազդում է իդենտիֆիկացիայի ընդհանուր հասկացության, նրա գործունեության բնագավառների և հնարավորությունների վրա: Կրիմինալիստիկական իդենտիֆիկացման տեսության մեջ այդ հասկացության նկատմամբ երկու մոտեցում կա՝ տարածական և որակական:

Տարածականի դեպքում կարևոր նշանակություն է տրվում իրերի տարածական սահմաններին, իսկ իրերը, որոնք կայուն տարածական սահմաններ չունեն, բացառվում, հանվում են կրիմինալիստիկական իդենտիֆիկացման օբյեկտների թվից:

Իդենտիֆիկացնողի թվին դասվում են այն օբյեկտները, որոնք արտահայտում են այլ օբյեկտների հատկությունները: Այսպիսի հետքեր, բառի լայն իմաստով (այդ թվում՝ ձեռագրեր, մեքենագրված տեքստեր, լուսանկարներ, ձեռքերի, կոշիկի հետքեր, նյութերի և իրերի մասնիկներ և այլն), ինչպես նաև մարդկանց գիտակցության մեջ մտապատկերներ: Դրանք այլ օբյեկտների վերաբերյալ տեղեկատվության կրողներն են¹:

Նման ճիշտ եզրահանգման կարելի է հանդիպել տեսական գրականության մեջ², որը գործնականում արդարացվել է:

Մյուս դեպքերում էական է համարվում իդենտիֆիկացման օբյեկտը բնութագրող հատկությունների ամբողջական առկայությունը:

Օրինակ՝ նույնացվող օբյեկտ համարվող ձեռագիրը, ստորագրությունը, ինչպես նաև բոլոր այն օբյեկտները, որոնք նույնացվում են ֆունկ-

¹ Տե՛ս Կոլդին В.Я. Идентификация при расследовании преступлений, М., 1978, էջ 12-13:

² Տե՛ս Шевченко Б.И. Научные основы современной трасологии. М., 1947, էջ 11: Белкин Р.С., Вишберг А.И. Криминалистика и доказывание. М., 1969:

ցիոնալ (դինամիկ) հատկությունների ամբողջությամբ և կապված են ան-
ձի հետ, չեն կարող բնութագրվել որպես իր կամ նրա մասը, որոնք ունեն
տարածական սահմաններ:

Նույնացվող օբյեկտների տարածական հասկացության դեպքում
դրանց թվում չեն կարող դիտվել խմբային (սեռային) նույնացման օբ-
յեկտները, հատկապես երբ վերջինս (այդ իրը) միասեռ առարկաների ամ-
բողջություն (ատրճանակ, կոշիկ, ջարդող գործիք և այլն), այլ նյութի բա-
ղադրության հատկությունների համակարգ է (համաձուլվածք, ապակու
տեսակը, հողի տեսակը և այլն), քանի որ այդպիսի համակարգը չունի
տարածական սահմաններ: Դրա հետ մեկտեղ մյան համակարգը միշտ
գտնվում է այնտեղ, որտեղ կարող են առանձնացվել այնպիսի տարրեր,
որոնց փոխադարձ կապը որոշակի որակական ինքնատիպություն ունի:

Յուրաքանչյուր նյութական մարմին ունի անսահման թվով հատ-
կություններ, որոնք արտահայտվում են այլ նյութական օբյեկտների
նկատմամբ: ~~Իդենտիֆիկացման ընթացքում ուսումնասիրվում են նյութա-
կան օբյեկտի ոչ բոլոր հատկությունները, այլ նրա որոշակի համակարգը,~~
որը երբեմն անվանվում է ~~իդենտիֆիկացման դաշտ¹: Օրինակ՝ մարդուն
նույնացնելիս հաճախ օգտագործվում են հետքաբանական դաշտը՝ ձեռ-
քի ավի, ոտքի ներբանի արտաքին կառուցվածքը, ատամները, գլխի,
դեմքի, մարմնի կառուցվածքը, ֆունկցիոնալ (դինամիկ) դաշտը՝ ձեռագրի,
գրավոր և բանավոր խոսքի հատկանիշները, քայլվածքը, մասնագիտա-
կան հմտությունները, հիմքային (սուբստանցիային) դաշտը՝ արյան բա-
ղադրությունը, մազերը, մարդկային մարմնի արտաթորանքները: Այ-
սինքն՝ տարածականորեն հասկացվող իրը կարող է առանձնացվել բազ-
մաթիվ տարբեր իդենտիֆիկացման դաշտերից, իսկ դրանց ներսում՝ բազ-
մաթիվ նույնացվող օբյեկտներից: Հենց այդպիսի համակարգն է, որ նույ-
նացվող իրը ներկայացնում է որպես իդենտիֆիկացվող օբյեկտ:~~

Այսպիսով՝ նույնացվող օբյեկտը նյութական իրի ցանկացած հատ-
կությունների համակարգ է, որն արտահայտվում է այլ օբյեկտներում և
~~պայմանավորում է նրա որակական որոշակիությունը և նույնացման
հնարավորությունը իդենտիֆիկացման ընթացքում:~~

Չպետք է մոռանալ, որ տարբեր առարկաներ (օբյեկտներ) կարող են
ունենալ իդենտիֆիկացման տարբեր դաշտեր:

¹ ~~Իդենտիֆիկացման դաշտը~~ իդենտիֆիկացման հատկանիշների ամբողջություն
է, որն արտահայտվում է օբյեկտի վրա փոխազդեցության որոշակի պայմաննե-
րում:

Իդենտիֆիկացման անհրաժեշտ նախադրյալ է համարվում օբյեկտների փոխազդեցությունը, շփումը, երբ մեկի՝ իդենտիֆիկացվողի հատկություններն արտացոլվում են մյուսի՝ իդենտիֆիկացնողի վրա: Դրա համար էլ իդենտիֆիկացման ընթացքում պետք է միշտ մասնակցեն ինչպես իդենտիֆիկացվող, այնպես էլ իդենտիֆիկացնող օբյեկտները:

Իդենտիֆիկացման դաշտը տարածական-ժամանակավոր հատված է, որը կրում է իդենտիֆիկացվող օբյեկտի հատկությունները: Իդենտիֆիկացման դաշտը քննչական իրադրությունում մտնում է նախկինում քննված իրադրության կատեգորիայի մեջ և կարող է պարզվել կրիմինալիստիկական սիտուալոգիայի (իրադրագիտության) հասկացության միջոցով¹:

§ 3. ԻԴԵՆՏԻՖԻԿԱՑՄԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ (ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ)

Կրիմինալիստիկական իդենտիֆիկացման գործընթացը սերտորեն կապված է իդենտիֆիկացնող հատկանիշների հասկացության հետ: Այն պայմանավորված է նրանով, որ իդենտիֆիկացման տեսությունն անմաստ է առանց նշված հատկանիշների ուսումնասիրման, դասակարգման և գնահատման:

Ընդհանրապես, հատկանիշը համարվում է առարկայի (օբյեկտի) հատկությունների արտահայտիչը, ~~այսինքն այն երևույթը որը որոշակի կերպով կարող է բնութագրել օբյեկտը:~~ Այլ կերպ ասած՝ նյութական օբյեկտի ցանկացած հատկություն, անկախ նրանից, դա վերաբերվում է երկրաչափական ձևին, կշռին, ծավալին, քիմիական փոխարկումներին, կենսաբանական ռեակցիաներին, օրգանիզմների ռեֆլեկտորային վարվելակերպին, թե՞ բարձրագույն նյարդային գործունեությանը, կարող է դիտվել որպես իդենտիֆիկացման հատկանիշ: «Հատկանիշ ասելով հասկանում են առարկայի հատկությունների արտահայտություն, ըստ նրա նշանների, որոնք ընդունակ են որոշակի կերպով բնութագրելու օբյեկտը»²:

¹ Г.А. Зорин. Криминалистическая методология (фундаментальная криминалистика XXI века). Минск, 2000, էջ 75:

² Т.В. Аверьянова, Р.С. Белкин, Ю.Г. Корухов, Е.Р. Россинская. Криминалистика. Уч. для ВУЗ-ов. М., 1999, с.94-95.

Հատկանիշը օբյեկտի այն հատկությունն է, որը բավարարում է որոշակի պահանջների: Միայն այդ դեպքում է այն համարվում իդենտիֆիկացման և օգտագործվում նույնացման նպատակներով:

Նյութական աշխարհի ցանկացած օբյեկտ ընդգրկում է բազում հատկանիշներ, որոնցից իդենտիֆիկացման համար առանձնացվում է այնպիսի ամբողջություն, որն օբյեկտի մասին բավարար և ճշգրիտ պատկերացում է տալիս և ընդունակ է այն առանձնացնելու նույնատիպ (նույն սեռի (խմբի)) մյուս օբյեկտներից:

Կրիմինալիստիկայում հետազոտվող օբյեկտների հատկությունները պարզաբանվում են ըստ նրանց արտաքին կամ որոշ այլ դրսևորումների, որոնք իրականում բնութագրող հատկանիշներն են:

Որպեսզի այդ դրսևորումները իդենտիֆիկացման հատկանիշի արժեք ունենան, պետք է.

ա) արտահայտեն օբյեկտի արտաքին կառուցվածքը, բնութագրեն դրա մեք, չափը, մակերևույթի առանձնահատկությունները և այլն,

բ) արտահայտեն օբյեկտի ներքին հատկությունները, դրա բաղադրությունը (քիմիական կազմը, խտությունը, կարծրությունը, լաքի, ներկի կամ այլ ծածկույթի բաղադրությունը):

Իդենտիֆիկացնող հատկանիշ կարող է լինել նաև իդենտիֆիկացման օբյեկտի հատկությունների ձևափոխված արտահայտությունը. օրինակ՝ անձի նույնացումը ձեռագրով, որը նույնացում է այն հատկանիշներով, որոնք արտահայտվում են ձեռագրում և ներկայացնում են շարժական հմտությունների համակարգը, այսպես կոչված հմտությունների ֆունկցիոնալ (դինամիկ) ամբողջությունը, որը ձևավորվում է տվյալ գրողի մոտ:

Օբյեկտի նույնացման համար պարտադիր չէ, հաճախ նաև անիմաստ է հետազոտել նրա բոլոր հատկությունները: Այն կարող է բավարար չափով բնութագրվել հատկանիշների ամբողջությամբ, որն անհրաժեշտ պատկերացում է տալիս նրա մասին:

Այս հատկությունները գնահատելիս պետք է նկատի ունենալ, որ հատկանիշի դրսևորումը կախված է դրա արտաբնական մեխանիզմից և պայմաններից: Օրինակ՝ միևնույն կոշիկը կարող է թողնել տարբեր չափսերի հետքեր, կախված այն հագած անձի շարժման արագությունից, առարկաների գույները կարող են տարբեր երևալ, կախված լուսավորման պայմաններից: Ռետիմեն կնիքը կարող է տարբեր տրամաչափի դրոշմ թողնել, կախված այն թղթին սեղմելիս գործադրվող ուժի աստիճանից և այլն:

Օրինակները ցույց են տալիս, որ միևնույն հատկությունը կարող է արտահայտվել մի քանի տարբերակներով, որը հաշվի առնելը շատ էական է այն որպես հատկանիշ գնահատելիս:

Օբյեկտի հատկություններն ուսումնասիրելիս պետք է հետազոտել նրա դրսևորումներն ամենատարբեր պայմաններում, տրամաբանորեն ճանաչել օբյեկտի հատկությունների արտահայտման մեխանիզմը:

«Հատկանիշը պետք է առավելապես լրիվ արտահայտի այն օբյեկտի հատկությունները, որոնք օգտագործվում են իդենտիֆիկացման համար»¹:

Սա առաջին կարևոր նախապայմանն է, և դրա հետ կապված, օրինակ, որպեսզի հնարավոր լինի ճշգրիտ դատել հետք թողած առարկայի չափերի մասին, պետք է ուսումնասիրել այդ առարկայի հետքերը՝ թողնված տարբեր պայմաններում, հետքի ռելիեֆի մասին ճիշտ պատկերացում ունենալու համար պետք է այն դիտել տարբեր անկյան լուսավորության տակ:

Հատկանիշի առանձնահատկություն է նաև ինչպես օբյեկտի համար նրա էական լինելը, այնպես էլ այն հատկությունները, որոնք թեև գլխավոր չեն, բայց կարող են տվյալ օբյեկտը տարբերել միասեռ մյուս օբյեկտներից:

Իդենտիֆիկացման հատկանիշ կարող են լինել նաև օբյեկտի այն հատկությունները, որոնք բնութագրվում են իրենց *ինքնապիպուրյամբ*, այսինքն՝ տարբերվում են նույն խմբի, սեռի մյուս օբյեկտները բնութագրող հատկություններից:

Որքան բարձր է հատկության *ինքնապիպուրյունը*, այնքան բարձր է նրա *իդենտիֆիկացման արժեքը*: Իդենտիֆիկացման հատկանիշի կարևոր բնութագիր է համարվում նրա *հարաբերական կայունությունը*: Եթե օբյեկտի որևէ հատկություն կայուն չէ, ապա այն չի կարող օգտագործվել որպես իդենտիֆիկացման հատկանիշ:

Եթե օբյեկտի այն կամ այն հատկությունը փոփոխական է, ապա հատկանիշի համար այդ փոփոխությունը կարող է առաջացնել որակի որոշակի փոփոխություն, որը կհասցնի նրան, որ այն կդադարի գոյություն ունենալ որպես օբյեկտները տարբերելու միջոց:

Եթե հաշվի առնենք այն անհերքելի ճշմարտությունը, որ նյութական աշխարհի բոլոր օբյեկտներն անընդհատ փոփոխվում են, ապա պետք է նկատենք, որ դրանք ենթարկվում են որակական ձևափոխությունների, ո-

¹ Ю.Г. Корухов, гл. 3 учебника для вузов, Криминалистика. М, 1998, էջ 25:

րոնք էլ նպաստում են օրյեկտի հիմնական հատկությունների ձևափոխմանը կամ կորստին: Բայց, չնայած դրան, որակական փոփոխությունների դեպքում էլ հիմնական հատկությունները պահպանվում են, այսինքն, օրյեկտը մնում է նույնը՝ կորցնելով իր հատկությունների մի մասը միայն:

Կարևոր է նաև հատկանիշի դրսևորման հարցը: Այսինքն՝ եթե օրյեկտին հատուկ է հատկանիշների որոշակի ամբողջություն, ապա դա չի նշանակում, որ դրանք բոլորը պետք է դրսևորվեն զանկազաժ պայմաններում: Դրանց մի մասը, որոնք թեև բնութագրում են տվյալ օրյեկտին, բայց որոշակի պայմաններում կարող են աննկատ մնալ: Դրա հատեր էլ հատկանիշը տեսնելու համար հետազոտման ընթացքում պետք է ստեղծել համապատասխան պայմաններ: Իսկ ընդհանրապես, այս կամ այն օրյեկտը հետազոտելիս պետք է ձգտել հայտնաբերել նրան բնութագրող բոլոր հատկանիշները, որպեսզի հնարավոր լինի գնահատել դրանք և մեկ օրյեկտն առանձնացնել նույնատիպ մյուս օրյեկտներից:

Հատկության հարաբերական կայունության ցուցանիշ կարող է համարվել դրա անճշման փոփոխելիությունը ժամանակի առումով, նրա արտահայտությունների կրկնողությունն իդենտիֆիկացվող օրյեկտում և այլն:

Իդենտիֆիկացման օրյեկտի հատկությունների փոխադարձ անկախությունը էական չափանիշ է այն հատկանիշները ընարելիս, որոնք անհրաժեշտ են փորձագետի հետևությունների համար: Օրյեկտի հատկությունները, հետևաբար և նրա իդենտիֆիկացման հատկանիշները կարող են միմյանցից կախման մեջ լինել, իսկ այդ կախվածության աստիճանը՝ տարբեր: Երբեմն մի հատկանիշի առաջացումը բոլոր դեպքերում նպաստում է մյուսի հայտնվելուն:

Նման դեպքերում բոլոր հատկանիշները չպետք է օգտագործվեն որպես իդենտիֆիկացման, այլ հայտնաբերման ամբողջության մեջ կարելի է ներգրավել միայն մեկը, քանի որ մյուսներն ինքնուրույն իդենտիֆիկացման արժեք չունեն:

Իդենտիֆիկացման հատկանիշի հաջորդ կարևոր բնութագիրը նույնատիպ օրյեկտներում (նույն սեռի, խմբի) նրա հանդիպման հաճախականությունն է: Այս բնութագիրն ըստ էության հատկանիշի իդենտիֆիկացման արժեքն է՝ նշանակությունը:

Հանդիպման հաճախականության տեսանկյունից բնութագրելիս պետք է նկատել, որքան հազվադեպ է հանդիպում հատկանիշը, այնքան բարձր է նրա իդենտիֆիկացման արժեքը:

Հատկանիշների հանդիպման հաճախականությունը և դրանով էլ իդենտիֆիկացման արժեքը համարվում է այն միակ հնարավոր հիմքը, որն անհրաժեշտ է իդենտիֆիկացման ընդհանուր տեսության կառուցման համար և, մասնավորապես, **իդենտիֆիկացման գործընթացի մաթեմատիկական մեկնաբանման**, որն իդենտիֆիկացումը վերածում է խիստ օբյեկտիվ գիտության: Իդենտիֆիկացման հետազոտությունների տարբեր տեսակներում հատկանիշների **նույնացման արժեքը որոշվում է հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության օգնությամբ**: Իդենտիֆիկացման հատկանիշների մաթեմատիկական մեկնաբանումը համարվում է նույնացման որոշակի հետևության համար քավարար հատկանիշների անկրկնելի ամբողջության գնահատման օբյեկտիվ չափանիշների որոնման հեռանկարային ուղղությունը:

Ներկայումս իդենտիֆիկացման ընդհանուր տեսության կառուցմանը նպաստում է այն, որ գիտության բոլոր բնագավառներում լայն տարածում են ստացել մաթեմատիկական վիճակագրության կանոնների կիրառումը, մասնավորապես տրամաբանական խնդիրների լուծման բնագավառում: Միաժամանակ և կրիմինալիստիկական հետազոտություններում հաճախ կարելի է հանդիպել իդենտիֆիկացման հատկանիշների քանակական գնահատման՝ մաթեմատիկական վիճակագրության մեթոդով:

Նյութական օբյեկտների իդենտիֆիկացման համար հավանականությունների տեսության կանոնների կիրառման ընդհանուր հիմք է համարվում այն, որ առանձին օբյեկտների մոտ հայտնաբերված տարբեր հատկանիշների ամբողջությունն արդյունք է մեծաքանակ գործոնների ազդեցության, որոնցից յուրաքանչյուրը գերակշռող չի համարվում: Այլ կերպ ասած, որպեսզի գնահատվի հավանականությունների տեսության կիրառման հնարավորությունը որոշակի տեսակի իդենտիֆիկացման համար, պետք է հետազոտել հատկանիշների բնույթը և հատկապես դրանց առաջացման պայմանները:

Կրիմինալիստիկական օբյեկտների հետազոտման ժամանակ մեծ մասամբ գործ ենք ունենում հատկապես այնպիսի հատկանիշների հետ, որոնց առկայությունը պայմանավորված է պատճառների մեծ տարատեսակության հետ: Օրինակ՝ ձեռագրով անձի նույնացման դեպքում ձեռագրում տարբեր առանձնահատկությունների առկայությունը կախված է այնքան մեծաթիվ, տարաբնույթ պատճառներից, որոնք բացառում են ձեռագիրը ձևավորվելիս դրանց առաջացման առանձին կամ գերակշռող պատճառների որոնման հնարավորությունը: Կամ՝ որոշակի շրջանում հողի քիմիական կազմությունը ձևավորվում է բազում պատահական պատ-

ճառների ազդեցությամբ, որը հնարավորություն է տալիս որոշել տվյալ հոդի նմուշի խմբային պատկանելությունը: Դրա հետ կապված անվիճելի է թվում վիճակագրական և ամենից առաջ հավանական-վիճակագրական մեթոդների կիրառման սկզբունքային հնարավորությունը իրեղեն ապացույցների փորձագիտական հետազոտություններ իրականացնելիս:

Կրիմինալիստիկական գրականության մեջ այդ հարցի լուծման տարբեր մոտեցումներ են նկատվում: Որոշ հեղինակներ, սկզբունքորեն ընդունելով նման հնարավորությունը, միաժամանակ այն իջեցնում են մինչև նվազագույնի: Օրինակ՝ Ա.Ռ. Շյախովը, խոսելով հավանական-վիճակագրական մեթոդի գերազնահատման դեմ, ելնում է նրանից, որ դատական փորձաքննությունում գոյություն ունեն հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության օգտագործման մի քանի ուղղություններ: Մինևույն ժամանակ նա ընդգծում է. «Հավանական-վիճակագրական մեթոդի կիրառումը պետք է զուգակցվի, միավորվի որպես ճանաչողության կազմի տարրերից մեկը: Սակայն պետք չէ օժտել դրանց «վճռորոշ դերով», դիտել որպես միակ գիտական հիմք»¹:

Անշուշտ, ճիշտ է Շյախովը՝ փորձագետ-կրիմինալիստների կողմից մաթեմատիկական վիճակագրության մեթոդները միայն այլ մեթոդների համակցությամբ կիրառելու անհրաժեշտության հարցում այնպիսի մեթոդների հետ, որոնք հատուկ են տվյալ տեսակի փորձաքննություններին: Բայց, կարծում ենք, որ նա թերազնահատում է վիճակագրական մեթոդների կիրառման հնարավորությունները կրիմինալիստիկական փորձաքննություններ կատարելիս:

Այդ հարցում այլ տեսակետ են ներկայացնում Վ.Ս. Միտրիչևը և Ա.Ն. Վասիլևսկին՝ գտնելով, որ մաթեմատիկական վիճակագրության մեթոդներ կարող են լայնորեն կիրառվել կրիմինալիստիկական փորձաքննությունների ամենատարբեր տեսակներում²:

Ժամանակը ցույց տվեց, որ հավանական-վիճակագրական մեթոդներ կրիմինալիստիկական փորձաքննություններում կիրառելիս պետք է խուսափել ինչպես դրանց դերի գերազնահատումից, այնպես էլ թերազ-

¹ Шляхов А.Р. Процессуальные аспекты применения математических методов и кибернетической техники в судебной экспертизе. В сб.: Применение математических методов и вычислительной техники в праве, криминалистике и судебной экспертизе. Материалы симпозиума. М., 1970, էջ 92:

² Митричев В.С. Выступление на научной конференции. В сб.: Применение теории вероятностей и математической статистики в судебной экспертизе. Материалы научной конференции. М., 1964, էջ 86; Василевский А.Н., նույն տեղում, էջ 71:

նահատումից: Թերագնահատումը, ըստ մեզ, դրանց հնարավորությունները չիմանալու (վատ իմանալու) արդյունք է կամ անցանկալի ռեակցիա է դրանց չափազանց գերագնահատման և կիրառելիության սահմանների անցումով օգտագործելուն:

Հիշենք նաև, որ մաթեմատիկական վիճակագրությունը և հավանականությունների տեսությունն ուսումնասիրում են օբյեկտիվորեն գոյություն ունեցող միասեռ երևույթների մասսայական համակցությունների օրինակափությունները, որոնք առաջանում են պատահականորեն և ստոխաստիկ¹ գործընթացում:

Վիճակագրական հետազոտություններում հետևություններ են արվում օրինակափությունների առկայության մասին: Այս դրույթը հիմնավոր կերպով կարելի է տարածել և կրիմինալիստիկական հետազոտությունների վրա: Հետևաբար, մաթեմատիկական վիճակագրությունը մասսայական երևույթներ ուսումնասիրելիս դրանք արտահայտում է թվերում, քանի որ առանց հաշվարկելու չեն կարող կիրառվել վերլուծության վիճակագրական հնարանքները: Վիճակագրական վերլուծության մեջ թվերը ծառայում են հետազոտվող երևույթների առանձնահատկությունների հայտնաբերման համար:

Հեզելը գրում է. «Վիճակագրության մեջ թվերը, որոնցով նա զբաղվում է, նույնպես հետաքրքիր են, միայն պայմանավորված նրանց որակական արդյունքներով: Թվային մերկ որոնումները, որպես այդպիսիք, առանց այստեղ ցույց տրված ղեկավար տեսակետի, արդարացիորեն համարվում են դատարկ հետաքրքրության առարկա, որը չի կարող բավարարել ո՛չ տեսական, ո՛չ պրակտիկ հետաքրքրությունը»²:

Բազմաթիվ չափումների, դիտարկումների, զննումների, փորձարարությունների և փորձերի լիարժեք յուրացումը, որոնք իրականացվում են կրիմինալիստիկական հետազոտությունների ժամանակ, անհնար է առանց վիճակագրական վերլուծությունների կիրառման, քանի որ թվային նյութը տեսանելի է դառնում միայն համապատասխան վիճակագրական մշակումից հետո: Մասսայական երևույթների վիճակագրական բնութագրերի վերլուծության օգնությամբ հաճախ հաջողվում է բացահայտել նոր որակական կողմեր: Բայց պետք է հիշել, որ վիճակագրական մեթոդների կիրառումը միայն այն ժամանակ է հանգեցնում ճշմարիտ հետևություն-

¹ Հունարեն stochasis – կռահում, ենթադրում: Ստոխաստիկ գործընթաց ասելով նկատի ունենք գործընթաց, որի փոփոխությունը ժամանակի ընթացքում ճշգրիտ գուշակել անհնար է:

² Герель Г., Соч. М., 1929, №1, էջ 184:

ների, երբ յուրաքանչյուր քանակական արտահայտություն որակապես իմաստավորված է: Ուսումնասիրվող երևույթների քանակական բնութագրի վիճակագրական վերլուծությունը չի փոխարինում որակական վերլուծությանը, այլ միայն թույլ է տալիս բացահայտել երևույթների որակական ինքնատիպությունը:

Իդենտիֆիկացվող օբյեկտների որոշակի հատկանիշների առաջացման պատճառների տարատեսակությունը անհնարին է դարձնում իդենտիֆիկացման մեթոդների կառուցման այլ ցանկացած փորձերը, բացի օբյեկտների հետևողական տարբերակումն ըստ իրենց հատկանիշների, որի դեպքում տարբերակման չափանիշը համարվում է հատկանիշի հավանականությունը:

Բայց, միաժամանակ, իդենտիֆիկացնելիս հատկանիշի հավանականացման բնութագրի օգտագործումը կարող է առաջացնել իդենտիֆիկացման արդյունքների (հետևությունների) թվացյալ անորոշություն: Սակայն այդ հարցը հավանականությունների տեսության մեջ համարվում է լուծված արժանահավատության հասկացության վերլուծության ճանապարհով: Հայտնի է, որ հավանականությունների տեսությունը հնարավորություն է տալիս հետևությունների հանգել վաղօրոք տրված ցանկացած արժանահավատությամբ, որն էլ չափանիշ է համարվում եզրակացության ճշմարտացիության գնահատման համար:

Չնայած որոշ ընդհանուր դրույթների անբավարար մշակմանը՝ մեթոդիկաների գործնական կիրառումը հավաստում է փորձաքննություններ կատարելիս իդենտիֆիկացման հատկանիշների վիճակագրական մշակման արդյունքների կիրառման նպատակահարմարությունը:

Օբյեկտի հատկությունը կարող է օգտագործվել որպես իդենտիֆիկացման հատկանիշ, պայմանով, եթե այն մատչելի է գործնական ճանաչողության համար: Բնության՝ գիտության կողմից բացահայտված ոչ բոլոր հատկություններն են մատչելի հետազոտման ժամանակակից մեթոդների համար: Հետազոտման հուսալի, գիտականորեն հիմնավորված մեթոդիկաների բացակայությունը խոչընդոտում է հատկություններն օգտագործել որպես իդենտիֆիկացման հատկանիշներ:

Իրենց իդենտիֆիկացման արժեքով ~~հատկանիշները դասակարգվում են ընդհանուր և մասնավոր խմբերի:~~

Իդենտիֆիկացման ընդհանուր հատկանիշներն արտահայտում են այս կամ այն օբյեկտի հատկությունները, որոնք վերաբերում են դասակարգման որոշակի խմբի, օբյեկտների խմբային պատկանելության ցուցանիշ են համարվում (օրինակ՝ ձեռագրի մշակվածությունը, մատի գծա-

նախշի տեսակը, նյութի քիմիական կազմը, հրազենի տրամաչափը, գրամեքենայի գլխավոր մեխանիզմի քայլը, մանրագնդակի պատրաստման եղանակը և այլն): Այլ կերպ ասած, ընդհանուր են այն հատկանիշները, որոնք հատուկ են նույնասեռ օբյեկտներին: Ընդհանուր հատկանիշները հնարավորություն են տալիս առանձնացնելու տվյալ խումբն այլ նույնատիպ խմբերից կամ իր ընդհանուր հատկանիշներով տվյալ օբյեկտը դասել որոշակի խմբի:

Իդենտիֆիկացման մասնավոր հատկանիշներն այն առանձնահատկություններն են, որոնք երևան են գալիս օբյեկտը բնութագրող հատկանիշների դետալացման ժամանակ: Այս դեպքում իրականացվում է օբյեկտների անհատականացում: Որպես անհատականացման միջոցներ՝ մանր դետալներն առաջանում են հիմնականում պատահական պատճառներից և, հետևաբար, քիչ են հանդիպում:

Բոլոր դեպքերում, նույնության հարցը դրական լուծելու համար պետք է լրիվ օգտագործվեն գործնականորեն կիրառելի հատկանիշների դետալացման առավելագույնը:

Նույնացման հարցի բացասական լուծման դեպքում հատկանիշների դետալացման աստիճանը կարելի է կատարել ավելի քիչ: Նման դեպքերում հաճախ ընդհանրապես հատկանիշների դետալացում չի պահանջվում, հետևությունները կառուցվում են օբյեկտների ընդհանուր հատկությունների հիման վրա:

Հատկանիշների դետալացման նշանակությունն առաջին հերթին այն է, որ նպաստում է հայտնաբերելու մեծաթիվ նոր հատկանիշներ: Օբյեկտն անհատականացող հատկանիշների քանակի մեծացումը նվազեցնում է նրանց համակցության կրկնվելու հնարավորությունն այլ օբյեկտներում: Հատկանիշների դետալացումը վերաբերվում է նաև օբյեկտի անհատականացման որակական կողմին, քանի որ շատ մանր հատկանիշները հազվադեպ են հանդիպում:

Բայց, քանի որ հաճախ մանր հատկանիշները եզակի չեն համարվում և կարող են վերաբերվել մի խմբի (սեռի) օբյեկտների, ապա միայն դետալացումը բավարար չէ օբյեկտի անհատականացման համար, այլ անհրաժեշտ է գնահատել հայտնաբերված բոլոր հատկանիշների նշանակությունը՝ որպես անհատականացման միջոցներ:

Մասնավոր հատկանիշների առաջացման աղբյուրները տարբեր են. դրանք կարող են լինել բնածին, կենդանի օրգանիզմների համար (օրինակ՝ մատների գծանախշերի առանձնահատկությունների ձևով), օբյեկտը պատրաստելիս (արտադրության ընթացքում), օրինակ՝ հրազենի փողանցքում եղած առանձնահատկությունները, որոնք հետքեր են առա-

զացնում արկի վրա՝ կրակելիս, կնիքի, գրամեքենայի շրիֆտների վրա մնացած առանձնահատկությունները:

Մասնավոր հատկանիշներ կարող են առաջանալ նաև օբյեկտի շահագործման ընթացքում: Օրինակ՝ կոշիկի ներքանի մաշվածություն, կնիքի մաշվածություն, որն արտահայտվում է դրոշմի վրա և այլն:

Մասնավոր հատկանիշների ամբողջությունը կարող է իդենտիֆիկացնել օբյեկտը, քանի որ օբյեկտի վրա դրանց առկայությունը, ինչպես նշվեց, պատահական բնույթ է կրում և, հավանականությունների տեսության համաձայն, անկրկնելի են իրենց ամբողջության մեջ:

Իդենտիֆիկացման հատկանիշները կարող են դասակարգվել նաև անհրաժեշտի և պարտահանի: Անհրաժեշտ համարվող հատկանիշներն ~~արտահայտում են օբյեկտի էությունը, այսինքն՝ առանց դրանց մտայն չէր լինի, ինչ որ է:~~ Օրինակ՝ այն հատկանիշները, որոնք բնութագրում են օբյեկտին՝ որպես հրազենի:

Պատահական ձեռքբերովի հատկանիշներն են: Օրինակ՝ փողանցքի անհարթությունները, որոնք գնդակի վրա ~~հետքեր են թողել~~: Առաջացման պատահականությամբ բնութագրվող հատկանիշներն են, որ տարբերում են միասեռ օբյեկտները միմյանցից:

Նույնացման նպատակով իրականացվող հետազոտությունների մեթոդիկան դասակարգվում է ըստ նույնացման հատկանիշների բնույթի, որոնց դասակարգումը ըստ Վ. Յա. Կոլդինի հետևյալն է.

1. Իդենտիֆիկացում՝ ըստ օբյեկտների արտաքին կառուցվածքի: Այս դեպքում հատկանիշները կարող են պարզաբանվել. լուսանկարներով և հետքերով, որոնք արտահայտում են օբյեկտների արտաքին կառուցվածքը, ձեռքերի, ոտքերի, տրանսպորտային միջոցների, ջարդող գործիքների հետքերի և այլն:

2. Իդենտիֆիկացում՝ նույնացվող անձանց ֆունկցիոնալ հմտությունների և շարժական սովորությունների հատկանիշներով. Իդենտիֆիկացման հատկանիշների այս խմբում առավել տիպական են համարվում ձեռագրի առանձնահատկությունները և գրավոր խոսքի հմտությունները, որոնք պարզվում են գրավոր տեքստերով:

3. Իդենտիֆիկացում օբյեկտների կազմության և բաղադրության հատկանիշներով: Այդ հատկանիշները կարող են պարզաբանվել նյութերի և իրերի մնացորդներով. արյան բծերով, մետաղների մասնիկներով, բուսական և կենդանական հյուսվածքներով, սննդային նյութերով և այլն¹:

¹ Տե՛ս Криминалистика, учебник для вузов, под ред. А. Н. Васильева. М., 1971, էջ 54:

Կրիմինալխտիկական իդենտիֆիկացումը, ըստ վերը թվարկած հատկանիշների բնույթի, բնութագրվում է մի շարք ընդհանուր դրույթներով:

Դրանք են. փորձաքննության նախապատրաստում, մասնա-վորապես, փորձաքննության ուղարկած նյութերի հետ ծանոթացում, նույնացման օբյեկտների զննություն և փորձագետի լուծմանն առաջադրված խնդիրների և դրանց ծավալի պարզաբանում, անջատ հետազոտում (այս փուլում անհրաժեշտության դեպքում կատարվում է նաև փորձագիտական փորձարարություն), հայտնաբերված հատկանիշների համեմատական հետազոտում, համընկնող և տարբերվող հատկանիշների գնահատում, հետևությունների ձևակերպում:

Նախնական փուլում փորձագետն ուսումնասիրում է իրեն ներկայացված բոլոր նյութերը, հետազոտության ծավալն ու խնդիրները, կատարում է նույնացման օբյեկտների զննում: Փորձագետը պետք է հիշի, որ իր խնդիրը նույնացման հարցի պարզաբանումն է, որը պետք է հիմնված լինի իր կողմից հայտնաբերված իդենտիֆիկացման հատկանիշների համեմատման ու գնահատման վրա և ոչ թե քննիչի կողմից հավաքված ապացույցների, որի դեպքում կստացվի, որ փորձագետը դուրս է գալիս իր դատավարական իրավասության սահմաններից և նրա հետևությունը կորցնում է դատական ապացույցի արժեքը:

Այս փուլում փորձագետը ծանոթանում է նույնացման օբյեկտին և լուծման համար առաջադրված հարցերին: Եթե հետազոտության ընթացքում հնարավորություն է ստեղծվում լուծելու այնպիսի հարցեր, որոնք փորձագետի լուծմանը չեն առաջադրվել, փորձագետը պարտավոր է դրանց պատասխանել իր եզրակացության մեջ (ՀՀ քր. դատ. օր. 65 հոդ. 4-րդ մաս):

Անջատ հետազոտման ժամանակ պարզաբանվում են համեմատվող օբյեկտների նույնացման հատկությունները:

Այս փուլերի մասին արդեն խոսվել է վերևում, միայն ավելացնենք, որ ստուգվող օբյեկտի հատկությունները կարող են ուսումնասիրվել ինչպես անմիջականորեն, այնպես էլ, հատկապես, այդ նպատակի համար պատրաստված արտահայտություններով՝ նմուշներով, որոնք դասակարգվում են՝ ազատ, փորձառական, իսկ որոշ դեպքերում նաև պայմանականորեն ազատ:

Ազատ համարվում են այն նմուշները, որոնք հատկապես, փորձագիտական հետազոտությունների համար չեն ստեղծվել, այլ գոյություն են ունեցել մինչև փորձաքննության նշանակման անհրաժեշտության ծագու-

մը՝ քրեական գործի հարուցումից հետո կամ դրանից առաջ: Համեմատա-
կան հետազոտման ներկայացնելու համար քննիչն ազատ մնուչներ կա-
րող է վերցնել տեղագնություն, խուզարկության ժամանակ, առգրավ-
մամբ և այլ ճանապարհներով:

Սակայն անհրաժեշտ է իմանալ, որ ազատ մնուչները ոչ միշտ են
բավարարում փորձագիտական հետազոտման համար անհրաժեշտ պա-
հանջներին ու պայմաններին: Հաճախ նրանք լրիվ չեն արտահայտում ի-
դենտիֆիկացման համար անհրաժեշտ հատկանիշները, բացի այդ,
մնուչների հայտնաբերումը, վերցնումը և օգտագործումը կարող է դժվա-
րությունների հանդիպել, իսկ երբեմն էլ դրանց հայտնաբերումը ընդհան-
րապես չի հաջողվում: Ազատ մնուչների համար անհրաժեշտ են դրանց
ծագման անվիճելիության երաշխիքներ: Դրա համար էլ փորձաքննութ-
յուն կատարելու համար անհրաժեշտ են նաև օբյեկտներ, որոնք պատ-
րաստվում են հատկապես այդ նպատակի համար:

Այդ օբյեկտները քննիչի և նրա կողմից այդ գործին ներգրավվող ան-
ձանց հատուկ գործողությունների արդյունքն են, որոնք քննչական և
փորձագիտական պրակտիկայում կոչվում են փորձառական (էքսպերի-
մենտալ) մնուչներ:

~~Փորձառական մնուչները հատկապես փորձաքննության ներկայազ-~~
նելու համար իրականացված գործողությունների կամ առաջացրած
երևույթների արդյունքներն են: Այդ գործողություններն ու երևույթները
կարող են կրկնվել բազմիցս, որպեսզի վերացվեն ստացված արդյունքի
պատահական տարրերը և որոշվի ստացված արդյունքների կայունութ-
յան աստիճանը:

Փորձառական մնուչները կարելի է ստանալ համարյա միշտ և անհ-
րաժեշտ քանակով: Իսկ ազատ մնուչներ միշտ չէ, որ կարող են լինել
քննիչի տրամադրության տակ կամ լինել բավարար քանակությամբ:
Դրանց քանակը հաճախ չի բավարարում փորձագիտական հետազոտ-
ման համար: Փորձառական մնուչները ավելի լրիվ են արտահայտում օբ-
յեկտի իդենտիֆիկացնող հատկանիշները, քանի որ ստեղծվում են այն-
պիսի պայմաններում և այն քանակով, որոնք ապահովում են հատկա-
նիշների փոխանցման լրիվությունը, որը չի կարելի ասել ազատ մնուչնե-
րի նկատմամբ: Սակայն պետք է նկատի ունենալ, որ ազատ մնուչներում
բացառվում է կամ քիչ հավանական է հատկանիշների գիտակցական
փոփոխումները:

Փորձառական մնուչների առավելությունը նրանց ստացման հա-
վաստիությունն է, նրանց կատարումն է հատուկ պայմաններում, օրինակ՝

կատարումը նույն պայմաններում, ինչ պայմաններում, ըստ գործում եղած տվյալների, կատարվել է հետազոտվող փաստաթուղթը, որոշակի դիրքում, որոշակի գրող գործիքով և այլն:

Փորձառական նմուշների մյուս առավելությունը այն է, որ նրանց բովանդակությունը ավելի շատ է համապատասխանում փորձագիտական հետազոտության պահանջներին, որ այն գրվում է (ձեռագրաբանական հետազոտության ներկայացնելիս) քննիչի թելադրանքով՝ դանդաղից արագ տեմպով և այլն:

Վերոհիշյալը հնարավորություն է տալիս հանգել այն հետևության, որ իդենտիֆիկացման հետազոտություններ իրականացնելիս պետք է օգտագործել թե՛ մեկ, թե՛ մյուս նմուշները:

Համեմատական հետազոտման փուլում համեմատվում են որոնվող և ստուգվող օբյեկտների հատկությունները, պարզելու համար թե դրանցից որոնք են համընկնում, և որոնք՝ տարբերվում:

Համեմատվում են ինչպես ընդհանուր հատկությունները, այնպես էլ նրանց անհատականացնող առանձնահատկությունները:

ՎԼՈՒԽ 5. ՔՆՆԻՉԻ ԻԳԵՆՏԻՖԻԿԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կրիմինալիստիկական իդենտիֆիկացումը դասակարգվում է դատավարականի և ոչ դատավարականի:

Դատավարական իդենտիֆիկացումը իրականացվում է երկու եղանակով, առաջինը՝ երբ այն կատարվում է քննիչի կողմից որոշ քննչական գործողություններ կատարելիս:

Երկրորդը՝ իդենտիֆիկացում՝ փորձաքննություններ կատարելով:

Հանցագործության փաստի բացահայտումից սկսած, ոստիկանության օպերատիվ-հետախուզական ծառայությունը իրականացնում է հետախուզում: Իսկ ինչպես անձանց, այնպես էլ գործի քննության լիարժեքությունն ապահովող փաստական տվյալների հետախուզումը, իրականացվում է լուսանկարներով, սուբյեկտիվ դիմանկարներով կամ նկարագրություններով, որոնց մասին ավելի մանրամասն կխոսվի սույն աշխատանքի հաջորդ գլուխներում: Դրանց կիրառումը ըստ էության համարվում է իդենտիֆիկացում: Իդենտիֆիկացման բնույթ է կրում նաև հետախուզման ընթացքում կրիմինալիստիկական գրանցման (հաշվառման) տվյալների ստուգումը:

Այդ գործողությունների արդյունքները ապացույց չեն համարվում և քրեական գործին չեն կցվում: Դրա համար էլ իդենտիֆիկացման այդ միջոցը համարվում է ոչ դատավարական:

Քննիչի իդենտիֆիկացման գործողություններ ասելով պետք է հասկանալ քննչական այն գործողությունները, որոնց բովանդակությունը կազմում է տարբեր օբյեկտներ բնութագրող հատկանիշների ուսումնասիրումը՝ նույնացման առկայության կամ բացակայության վերաբերյալ հետևություններ ստանալու նպատակով: Նման գործողություն է **ճանաչման ներկայացնելը**: ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը նախատեսում է անձին ճանաչման ներկայացնելը (221 հոդ.), առարկաները ճանաչման ներկայացնելը (222 հոդ.) և դիակը ճանաչման ներկայացնելը (223 հոդ.):

Տեսական գրականության մեջ և պրակտիկայում նշված թվարկը ավելի մանրամասն է¹. դիակների մասերի, անձանց և դիակների լուսան-

¹ Г. И. Кочаров, Оpozнание на предварительном следствии, М. 1955г., П. П. Цветков, Предъявление для опознания в Советском уголовном процессе., Л. 1962г., Кол. автор., Справочная книга криминалиста, под общей редакцией Н. А. Селиванова, М. 2000г., Ю. С. Меркулова, гл. 30, в учебнике для вузов, Криминалистика под ред. Т. А. Седовой, А. А. Эксархопуло, Санкт-Петербург 2001г.

կարների, առարկաների, նրանց լուսանկարների, տեղանքի լուսանկարների, կենդանիների:

Նույնացման հարցը սկսվում է նրանից, որ.

ա. ճանաչվողը պետք է ճանաչումը սկսելուց առաջ ընտրի, թե ճանաչման ներկայացած անձանց շարքում ինքը որտեղ պետք է գտնվի.

բ. ճանաչողը պետք է հարցաքննվի այն հատկանիշների շուրջ, որոնցով պետք է ճանաչի անձին կամ առարկան.

գ. ճանաչողը պետք է ցույց տա անձին կամ առարկան, որի վերաբերյալ ցուցմունք է տվել.

դ. թվարկի այն հատկանիշները (առանձնահատկությունները), որոնցով ճանաչել է:

ՀՀ ՔԴՕ 221 հոդվածում ասված է.

1. Ճանաչման համար որևէ անձի վկային, տուժողին, կասկածյալին, մեղադրյալին ներկայացնելու անհրաժեշտության դեպքում քննիչը վերջիններիս նախապես հարցաքննում է այդ անձի արտաքին տեսքի ու նշանների և այն հանգամանքների մասին, որոնցում ճանաչողը տեսել է այդ անձին:

2. Եթե ճանաչողը վկա կամ տուժող է, նա նախապես նախազգուշացվում է ցուցմունքներ տալուց հրաժարվելու կամ խուսափելու, ակնհայտ սուտ ցուցմունքներ տալու համար սահմանված պատասխանատվության, ինչպես նաև իր, ամուսնու և մերձավոր ազգականների դեմ չվկայելու իր իրավունքի մասին:

3. Ճանաչման ենթակա անձը ներկայացվում է ճանաչողին նույն սեռի և արտաքինով ու հագուստով ճանաչվողին *հնարավորին չափ նման* առնվազն երեք այլ անձանց հետ:

Հատկանշական է նույն հոդվածի 6-րդ կետը, որտեղ ուղղակի նշվում է նույնացում կատարելու մասին.

«Ճանաչում չի կատարվում, իսկ կատարվածը չի կարող ճանաչվել հիմնավորված, եթե ճանաչողը նշել է այնպիսի հատկանիշներ, որոնք իրենց անորոշության պատճառով բավարար չեն ճանաչվողի անձի *նույնացման համար*» (ընդգծումն իմն է. Լ. Օ.):

Թեև առանձին հոդվածով չի կարգավորվում դրա իրականացման կարգը, որն իմ կարծիքով անհրաժեշտ է, սույն հոդվածի 7-րդ կետում նշված է. «Անհրաժեշտության դեպքում ճանաչումը կարող է կատարվել արտաքինով և հագուստով ճանաչվողին նման տարբեր անձանց լուսանկարներով»:

Նշված հողվածում ընդգծված «հագուստով նման» արտահայտությունը պետք է հասկանալ ոչ թե հագուստի նմանություն՝ որպես նույնացման հատկանիշի ներկայացման անհաջող փորձ, այլ ճանաչվողին մյուսներից դրանով (հագուստի տարբերությամբ) չառանձնացնելու նպատակ:

Հաջորդ, 222 հողվածի 1-ին մասում նշված առարկաների վերաբերյալ տրվում է նույնատիպ շարադրանք, ինչ 221-ի 1-ին կետում է:

Ճանաչման (նույնացման) հավաստիությունը մեծացնելու նպատակով կրիմինալիստիկական տակտիկայի մշակած հանձնարարականով ճանաչողը ճանաչելուց հետո կրկին հարցաքննվում է այն հատկանիշների շուրջ, որով ճանաչել է: Այդ երկու ցուցմունքներում նշված հատկանիշները քննիչը համեմատում է և որոշում նույնացման հավաստիությունը:

Նույնն է առարկաները ճանաչման ներկայացնելու դատավարական կարգը (քոս 222 հոդ.)՝ բացառությամբ դրանք լուսանկարով ճանաչման ներկայացնելու մասին նշումի:

Դիակի ճանաչումը, բնականաբար, թույլատրվում է կատարել «...**ներկայացված մեկ օրինակով**», ինչպես նաև «...թույլատրվում է հանցուցյալին գրիմ անել» (հոդ. 223): Վերջինս կատարվում է՝ դիակին կենդանի ժամանակվան նմանեցնելու և ճանաչման (նույնացման) գործը հեշտացնելու նպատակով:

Ճանաչում իրականացնելիս քննիչից պահանջվում է պահպանել իրենտիֆիկացման տեսության բոլոր պայմանները:

Ճանաչողին հարցաքննելիս քննիչը պետք է պարզի այն պայմանները, որոնցում նա տեսել է ճանաչվող անձին կամ առարկան, ինչպես նաև այն հատկանիշներն ու առանձնահատկությունները, որոնցով ինքը պետք է ճանաչի:

Հարցաքննելիս քննիչը պետք է ղեկավարվի «բանավոր պատկերի» համակարգով՝ հատկանիշների միասնականությունն ու ներկայացման դյուրությունը պահպանելու նպատակով:

Ճանաչվող օբյեկտին տեսնելու պայմաններ ասելով պետք է հասկանալ. տեսնելու ժամանակը, լուսավորությունը, տեսնելու հեռավորությունը, տեսնելուն խանգարող երևույթները, տեսնելու տևողությունը, տեղը, ճանաչողը ինչի՞ էր այդ պահին գտնվում այնտեղ, նախկինում նա տեսել էր այդ կամ դրա նման օբյեկտ, ճանաչողի ֆիզիկական և հոգեկան վիճակը այդ պահին, իսկ երբեմն՝ նաև ընդհանրապես:

Եթե ճանաչումը կատարվելու է այն անձի կողմից, որի առողջական վիճակը պահանջում է ուշադրություն նրա ծերության, ծանր վիրավոր լինելու կամ երբ կասկածներ է առաջանում նրա ֆիզիկական ոչ լիարժե-

քության վերաբերյալ, անհրաժեշտ է վաղորոք ստանալ բժշկի կարծիքը՝ կատարվածը ճանաչողի կողմից բավարար ճշգրտությամբ ընկալելու կարողության և այդ հարցով լիարժեք բացատրություն տալու մասին: Իսկ որոշ դեպքերում այդ նույն նպատակով կարող է նշանակվել դատահոգեբանական կամ դատահոգեբուժական փորձաքննություն:

Եական է պարզել ճանաչողի շահագրգռվածությունը տվյալ գործի ելքով, ինչպես նաև նրա սուբյեկտիվ հնարավորությունները տեսնելու, ընկալելու, հիշելու և վերարտադրելու հետ կապված:

* * *

Ըննիչի իդենտիֆիկացման գործողություններից է նաև **ճանաչումը բանավոր խոսքով**, որն իրականացվում է ինչպես ձայնի հատկանիշներով, այնպես էլ այն բոլոր հատկանիշների ամբողջության գնահատմամբ, որոնք բնութագրում են ճանաչվող անձի բանավոր խոսքը: Դրանցից հատկանշական են բարբառը, առոգանությունը, խոսքի թերությունները, քիչ օգտագործվող բառերի առկայությունը և այլն:

Այն դեպքում, երբ անհմար է ճանաչումը կազմակերպել անմիջականորեն, ճանաչվողի մահվան, հիվանդագին վիճակի, երկարատև բացակայության պատճառով, կամ երբ ճանաչողը հրաժարվում է հանդիպել ճանաչման համար ներկայացվող անձնավորության հետ, ինչպես նաև այն դեպքում, երբ հիմնավոր ենթադրություն կա, որ ճանաչվողը կարող է խանգարել ճանաչմանը իր այս կամ այն գործողություններով կամ խոսքը միտումնավոր փոխելով, բանավոր խոսքով ճանաչումը կատարվում է նրա ֆոնոգրամով: Այդ նպատակի համար.

ա. պատրաստվում է ֆոնոգրամ, որն առավել լրիվ է արտահայտում ճանաչվողի բանավոր խոսքի հատկանիշները,

բ. օգտագործվում է նախկինում կատարված այն քննչական գործողության ֆոնոգրամը, որին մասնակցել է ճանաչվողը,

գ. օգտվում են բանավոր խոսքի այն ազատ մնուշներից, որոնք ստացվել են նախկինում, քննվող գործից անկախ¹:

Նշված քննչական գործողություններում իրականացված իդենտիֆիկացման արդյունքների գնահատումը իրականացվում է, հիմնականում քննչական այլ գործողություններով, մասնավորապես. հարցաքննություն, զննություն, քննչական փորձարարություն և այլն:

¹ Այս մասին ավելի մանրամասն տես՝ Լ. Օհանյան «Կրիմինալիստիկական ֆոնոսկոպիա», Երևան 2002թ:

Այս հարցում էական է քննիչի մոտ համոզվածության ձևավորումը նրանում, որ նախկինում ճանաչողի կողմից նշված հատկանիշները համապատասխանում են այն հատկանիշներին, որոնց վրա նա ուշադրություն դարձրեց ճանաչման ժամանակ:

* * *

Քննիչի իդենտիֆիկացման գործողություններից է նաև քննչական փորձարարությունը՝ նախատեսված ՀՀ քրո 242 հոդվածում: Սույն հոդվածի առաջին մասում նշված է. «Գործի համար նշանակություն ունեցող տվյալներն ստուգելու նպատակով փորձեր և այլ հետազոտական գործողություններ կատարելու համար քննիչն իրավունք ունի կատարել քննչական փորձարարություն»:

Կենցաղային ասպեկտով փորձարարությունը փորձնական այնպիսի գործողություն է, որի օգնությամբ ստուգվում է գիտության կամ պրակտիկայի այս կամ այն դրույթը:

Այդ գործողության կիրառման ձևերը ճիշտ են տրված Վ. Ա. Օբրազցովի խմբագրությամբ հրատարակված աշխատանքում՝ 1) որպես ինքնուրույն գործողություն (քննչական, դատական, օպերատիվ-հետախուզական), 2) որպես հնարք այլ գործողություն կամ փոխկապակցված գործողությունների ամբողջություն կատարելիս (օրինակ՝ տեղագնություն կատարելիս), 3) որպես փորձագիտական հետազոտության բաղկացուցիչ մաս¹:

Քանի որ սույն աշխատանքի նպատակը փորձարարությունը որպես քննչական գործողություն ներկայացնելն է, այն էլ այն մասով, որտեղ քննիչը հանդես է գալիս այն որպես իդենտիֆիկացման գործողություն կատարող, նշենք միայն, որ քննչական գործողության պայմաններից է, որ փորձը պետք է կատարվի այնպիսի իրադրության պայմաններում, որը առավելագույն չափով պետք է մույնական լինի հետազոտվող իրադրության տեղի պայմաններին: Այլ կերպ ասած, պետք է վերարտադրել իրադրությունը և այն գործողությունները, որոնք կատարվել են դեպքի ժամանակ:

Պետք է նկատի ունենալ սակայն, որ *վերարտադրությունը* տառացի չպետք է հասկանալ, բանգի իրականում դա հնարավոր չէ: Այս դեպքում նույնացման ընդունված պահանջից պետք է շեղվել և այն դիտել նմանության տեսանկյունից: Որքան մեծ է այս դեպքում նմանությունը, այնքան ճշգրիտ կլինի ստացվող արդյունքը: Իսկ վերջինս կգնահատվի այն-

¹ Տե՛ս Կոլ. авторов, Следственные действия, М., 2001г., էջ 253:

պես, ինչպես ցանկացած ապացույց, միայն գործում եղած մյուս ապացույցների համակցության մեջ:

Քննչական փորձարարությունը՝ որպես ինքնուրույն քննչական գործողություն, իրականացվում է գործով արդեն ձեռք բերված ապացույցների (փաստական տվյալների) ստուգման նպատակով (հարցաքննությունների, խուզարկության, դեպքի տեղի զննության կամ այլ գործողությունների միջոցով):

Հարցաքննության դեպքում փորձարարության միջոցով իդենտիֆիկացվում են հարցաքննվողից ստացված տեղեկությունները: Իսկ մյուս դեպքում իդենտիֆիկացման հետազոտությունները կատարվում են քննիչի անմիջական դիտարկումներից ստացված տվյալների հիման վրա:

Դիտարկումների միջոցով քննիչը ընկալում է օբյեկտների ձևը, չափը, նրանց հատկությունները, հատկանիշները: Դիտարկումների ժամանակ քննիչը օգտվում է ինչպես տեսողական, այնպես էլ շոշափելիքի օրգաններից, վերջինս՝ առարկաների կարծրությունը, առածականությունը, ողորկությունը և այլ նման հատկանիշները որոշելու նպատակով, օգտվում է լսողությունից՝ ձայնի առանձնահատկությունները որսալու համար:

Եթե նշված գործողությունները կատարելիս օգտագործվել են գիտատեխնիկական միջոցներ, նույնը պետք է արվի փորձարարության ժամանակ (խոշորացույց, լուսագտիչ, անտեսանելի ճառագայթներ և այլն):

Վ. Պ. Կոլմակովը իդենտիֆիկացման նման հետազոտությունների իրականացման համար նշում է նաև հետևյալ հնարքները.

➤ **Չափում**-կիրառվում է հետքերի և առարկաների չափային տվյալների (երկարության, լայնության, բարձրության), նրանց առանձին հատվածների, առանձին հատկանիշների միջև եղած տարածության ստացման համար և այլն:

➤ **Նկարագրում**-առավել մատչելի և դրա հետ մեկտեղ բարդ մեթոդ է, քանի որ պահանջում է չափազանց ճշգրիտ տերմիններ իդենտիֆիկացման օբյեկտների գործողությունների որոշակիացման համար: Տարբեր օբյեկտների հատկանիշների ճշգրիտ նկարագրմանը նպաստում են քննիչների համար մշակված հատուկ տեղեկագրերը, որոնք բովանդակում են ամենատարատեսակ օբյեկտների մասին տեղեկություններ: Մարդուն նկարագրելու համար օգտագործվում է «բանավոր պատկերի» համակարգը:

➤ **Փորձարարություն**-իրականացվում է նաև համեմատական հետազոտման նյութեր ստանալիս (ձեռագրի, ստորագրության, մատնահետքի և այլ նմուշների): Ստացված նմուշները քննիչը կարող է ինքնուրույն ուսումնասիրել, համեմատել ունեցած իրեղեն ապացույցի հետ:

➤ **Երկրաչափական պատկերի պատրաստում**-օգտագործվում է հետք առաջացնող օբյեկտի տեսակը, սեռը, նրա մակերևույթի ուրվագիծը որոշելիս:

➤ **Համեմատում**-կրիմինալիստիկական իդենտիֆիկացման կարևորագույն մեթոդներից մեկն է: Առանց դրա իդենտիֆիկացման հետազոտությունը անհնար է: Սույն մեթոդը քննիչի կողմից կիրառվում է ինչպես ինքնուրույն իդենտիֆիկացման գործողություններ կատարելիս, այնպես էլ իդենտիֆիկացման փորձաքննությունն անապատրաստելիս:

Բացի նշված ընդհանուր գիտական մեթոդներից, քննիչը իդենտիֆիկացման գործողությունների ընթացքում լայնորեն օգտագործում է մի շարք տրամաբանական մեթոդներ ու հնարքներ. վարկածներ, անալիզ, սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա, անալոգիա և այլն¹:

Քննիչը փորձարարական գործողություններ կատարում է հետևյալ բնույթի իդենտիֆիկացումների նպատակով. այս կամ այն երևույթի, փաստի ընկալման հնարավորության պարզման, այս կամ այն գործողության կատարման հնարավորության պարզաբանման, այս կամ այն փաստի, երևույթի գոյացման հնարավորությունները պարզաբանելու, դեպքի կամ նրա առանձին դետալների մեխանիզմի պարզաբանման և այս կամ այն գործողությունների կատարման համար անհրաժեշտ ժամանակի պարզման նպատակով: Նշված գործողությունները կատարելիս քննիչին օգտակար խորհուրդներ կարող է տալ մասնագետը:

Քննիչի կողմից իրականացվող «...փորձարարությունը համարվում է ճանաչողության ավելի նուրբ և արդյունավետ մեթոդ, քան դիտարկումն է», - գրում է Ռ. Ս. Բելկինը:

Փորձարարությունը դիտարկման համեմատությամբ ունի մի շարք առավելություններ: Այս առումով ռուս ֆիզիոլոգ Ի. Պ. Պավլովը գրել է. «...դիտարկումը կենդանական օրգանիզմում տեսնում է մի շարք երևույթներ, որոնք գոյություն ունեն միմյանց հետ էական կամ անուղղակի կապի մեջ կամ պատահականորեն: Միտքը պետք է կռահի կապի իրական բնույթը, և դա՝ բազմաթիվ հնարավոր ենթադրությունների առկայությամբ: Փորձը կարծես թե իր ձեռքն է վերցնում երևույթները և գործի է զգում մեթոդ

¹ Колмаков В. П., Идентификационные действия следователя, М., 1977г., էջ 54:

մեկը, մերթ մյուսը և այդ կերպ արհեստական, պարզեցված կոմբինացիաներով որոշում է երևույթների միջև եղած իրական կապը: Այլ կերպ ասած, դիտարկումը հավաքում է այն, ինչ նրան առաջարկում է բնությունը, իսկ փորձը վերցնում է բնությունից այն, ինչ ինքը ցանկանում է¹:

Ավելի դիպուկ, քան ճանաչված ֆիզիոլոգն է ասել, հազիվ թե որևէ մեկն ասեր մարդ, որն իրեն անվանում է «փորձարկող գլխից մինչև ոտքերը»:

Վերադառնալով քննչական կոչվող փորձերին, նշենք, որ քննչական փորձարարությունը իրականացվում է քննիչի (հետաքննություն կատարող անձի) կողմից փորձերի ձևով, որոնք հնարավորություն են տալիս պատասխանելու այն հարցին, թե կարո՞ղ էին իրականում տեղի ունենալ որոշակի բնույթի իրադարձություններ, երևույթներ, թե ոչ:

Բնության այս կամ այն երևույթների ճանաչողության օրինաչափությունները այնպայման սկսվում են դիտարկումներից, բայց գիտական հետազոտության խնդիրները հանգում են նրան, որ, նախ որոշակի երևույթները առանձնացվեն փոխկապակցված երևույթների ընդհանուր շղթայից, առանձնացվեն նրա առավել կարևոր տարրերը, այսինքն՝ առանձնացվեն որոշակի երևույթներ՝ որոշակի տեսքով:

«Բայց դիտարկումը,-գրում է Ի. Պ. Պավլովը,-մեթոդ է, որը լրիվ բավարար է ավելի հասարակ երևույթների ուսումնասիրման համար: Որքան բարդ է երևույթը (իսկ ի՞նչն է բարդ կյանքից),-այնքան անխուսափելի է փորձը: Միայն փորձը, ոչնչով, բացի մարդու հնարամտության բնական չափերից, չսահմանափակված փորձը կավարտի, կպսակի բժշկության գործը»²: Փորձարարությունը՝ որպես ճանաչողության գիտական մեթոդ, բարձր է գնահատել նաև ռուս մեծ գիտնական Մ. Վ. Լոմոնոսովը: Նա գրել է.«Մեկ փորձը ես գնահատում եմ ավելի բարձր, քան հազար կարծիքը՝ ծնված միայն երևակայությամբ»³:

Ուսումնասիրվող երևույթների դիտարկումները, չափումները և այլն արհեստականորեն վերարտադրելիս նույնպես կրկնվում, կատարելագործվում, փոփոխվում են նաև դրանց պայմանները, քանի որ փոփոխվում են հենց վերարտադրության պայմանները:

Առանձին դեպքերում, կարող է որպես իդեոտիֆիկացման գործողություն, կատարվել **քննչական զննություն**:

¹ И. П. Павлов, Полное собрание трудов, т. 2, 1946г., էջ 357:

² И. П. Павлов, Полное собрание сочинений, М., 1951г., кн. 2, էջ 274:

³ М. В. Ломоносов, Полное собрание сочинений, 1956г., т.1, էջ 125:

Մի դեպքում քննչական զննությունը հիմք է նախապատրաստում հետագա իդենտիֆիկացման համար, օրինակ՝ չճանաչված դիակը զննելիս մանրամասն արձանագրում, ֆիքսվում են նրա արտաքին հատկանիշները, կատարվում է մատնադրոշմում, ճանաչողական լուսանկարահանում, լրացվում է չճանաչված դիակի բարտ և այլն:

Քննիչը, ուսումնասիրելով իր կողմից հայտնաբերված հետքերը, կարող է ավելի լրիվ ու պարզ պատկերացնել օբյեկտի վրա ազդող առարկայի հատկանիշները և ստացված տվյալներն օգտագործել որոնվող օբյեկտի շրջանակը սահմանափակելու համար: Դրա համար էլ քննչական զննության նպատակներին ու խնդիրներին, ինչպես արդարացիորեն նշում է Լ.Ե. Արոցկերը, նպատակահարմար է ավելացնել նաև օբյեկտը բնութագրող այն հատկանիշների նախնական պարզաբանումը, որոնցով այն հետագայում ենթակա է իդենտիֆիկացման¹: Մի շարք կրիմինալիստներ այն կարծիքին են, որ քննչական պրակտիկայում պետք է լայնորեն ներդնել հետքերի ինքնուրույն ուսումնասիրումը քննիչի և օպերատիվ աշխատողի կողմից:

Այդ գիտնականներից են Ն.Վ. Թերզիևը, Ա.Ի.Վինբերգը, Վ.Պ. Կոլմակովը, Ն.Ա. Սելիվանովը, Ի.Ֆ. Կրիլովը, Գ.Լ. Գրանովսկին, Ն.Պ. Կոստայլեչևը, Յու. Գ. Կորոլսովը և այլն: Կարծում ենք, պետք է համաձայնել Վ. Պ. Կոլմակովի կարծիքին, որ ժամանակն է հրաժարվել այն մտքից, թե իբր իդենտիֆիկացման հնարքները կարող են օգտագործվել միայն փորձագետ-կրիմինալիստների կողմից: Դրանք լիովին մատչելի են քննիչին, դատավորին, օպերատիվ աշխատողին: Քննիչը, որը տիրապետում է ժամանակակից գիտատեխնիկական միջոցներին, կարող է իրականացնել հետքերի և դրանք առաջացրած առարկաների նախնական՝ մինչփորձագիտական համեմատում²:

Քննիչի կողմից հետքերի նախնական ուսումնասիրման և դրանց ստուգվող օբյեկտների հետ համեմատելու նպատակահարմարությունը բխում է գործերի քննության պրակտիկայից և չի կարող առարկությունների տեղիք տալ:

¹ Л. Е. Ароцкер, Использование следователем криминалистических знаний, при сборении сравнительных материалов для криминалистической экспертизы. В кн. Сборник научных работ по судебной медицине и криминалистике. Харьков, 1956г., էջ 240-241:

² В. П. Колмаков, Совершенствовать тактику проведения идентификационных следственных действий. Радянське право. 1968г., №10, էջ 37:

Անտարակույս, կրիմինալիստիկայի բնագավառում հատուկ գիտելիքների տիրապետող քննիչը կարող է պարզել խմբային պատկանելությունը: Սակայն, քննիչի հետևություններն ունեն միայն օպերատիվ-տակտիկական նշանակություն և դատավարական կարգավորման չեն ենթարկվում: Դրա համար էլ հետքերի և իրեղեն ապացույցների զննության արձանագրություններում (խուզարկության, առգրավման, քննման և այլ) քննիչը կարող է արտահայտել միայն հետքում արտացոլված՝ իր կողմից նկատված հատկանիշները և ստուգվող օբյեկտների հատկանիշները¹:

Պրակտիկան ցույց է տալիս, որ կրիմինալիստիկայի տեսության բնագավառում հատուկ գիտելիքներ ունեցող քննիչը, որը տիրապետում է նաև հետքերի և իրեղեն ապացույցների հետազոտման հնարքների, կամ իդենտիֆիկացման գործողություններով՝ ուղղված օբյեկտների խմբային պատկանելության որոշմանը, կարող է արագ և հմտորեն ապահովել հանցագործությունների բացահայտումը և հետագա քննությունը:

Հատուկ գիտելիքների տիրապետող քննիչը գիտատեխնիկական հնարքները, մեթոդները և միջոցները, որոնք անհրաժեշտ են իրեղեն ապացույցների հետազոտման համար, կարող է օգտագործել իրեն հարմար եղանակներով՝ ստուգվող փաստի վերաբերյալ նոր տեղեկություններ ստանալու կամ եղածը ստուգելու համար, պայմանով, որ իրեղեն ապացույցը (փաստական տվյալը) չփոխի իր նախնական տեսքը:

Քննիչը դեպքի տեղում, իր գիտելիքների սահմաններում կարող է լուծել հարցեր, լայնորեն օգտագործելով այնպիսի գիտատեխնիկական միջոցներ, ինչպիսիք են. լուսանկարչությունը, մանրադիտակներ, էլեկտրոնային-օպտիկական փոխարկիչ և այլն: Մինչփորձագիտական հետազոտություններ կատարելիս անհրաժեշտության դեպքում կարելի է օգտվել համապատասխան տեղեկատուներից և գրականությունից:

Դատավարական տեսանկյունից քննիչի կողմից ապացույցներ ստանալու կամ ստուգելու նպատակով կատարվող որոշ հետազոտություններ համարվում են քննչական գործողություն (զննում), իսկ դրա ընթացքը և արդյունքները պետք է ձևակերպվեն որպես զննության արձանագրություն՝ ՀՀ ԶԴՕ 218 հոդվածին համապատասխան:

Քննչական և փորձագիտական պրակտիկան ցույց է տալիս, որ քննիչի կողմից կատարվող որոշ հետազոտություններից կարելի է առանձնացնել հետևյալը.

¹ Н. А. Селиванов, Научно-технические средства расследования преступлений. Автореф. док. дис., М. 1965г. էջ 14, М. Т. Шаламов, Некоторые проблемы советской криминалистики. М. 1965г. էջ 55:

1. Սառը զենքի զեննունը (հեղափոխումը)

Մրա անհրաժեշտությունը զգացվում է, երբ պետք է լուծվի անձին ՀՀ քր. օր. 235 հոդվածի 4-րդ մասով պատասխանատվության ենթարկելու հարցը:

Համարվում է արդյոք վերցված առարկան սառը զենք. այդ հարցը լուծելիս հատուկ գիտելիքներ չի պահանջվում: Դրա համար պետք է պատկերացում ունենալ միայն առարկայի ընդհանուր հատկանիշների մասին: Ըստ պատրաստման եղանակի դրանք լինում են. գործարանային, որակյալ ինքնաշեն և ինքնաշեն (ատիպիկ):

Սառը զենք համարվելու հիմնական հատկանիշը կառուցվածքային-տեխնիկական տվյալներն են և ոչ թե պատրաստման եղանակն ու նպատակը, ինչպես կարծում են ոմանք: Վերոհիշյալ տվյալները (կառուցվածքային-տեխնիկական) վկայում են, որ այն հատկապես պատրաստվել կամ հարմարեցվել է մարդուն հարված հասցնելու համար:

Քննչական պրակտիկայում հաճախ անհրաժեշտություն է առաջացնում **մասսերով ամբողջի նույնացման**: Նման հետազոտությունների օբյեկտներ են հիմնականում գործվածքը, թուղթը, ապակյա, փայտյա, պլաստմասայե, մետաղական իրերը: Նման հետազոտությունը հաճախ իրականացվում է մինչփորձաքննական փուլում՝ քննիչի կողմից՝ քննչական զենությամբ:

Շարադրելով քննիչի իդենտիֆիկացման գործողությունները՝ չենք հավակնում դրա լիարժեքությանը, քանի որ կան այլ դեպքեր ևս, երբ քննիչն իրականացնում է իդենտիֆիկացում, մինչև փորձաքննությունն ճշանակելու անհրաժեշտության հարցի լուծումը, օրինակ՝ ընդհանուր հատկանիշներով գրամեքենայի խմբային պատկանելության հարցի լուծումը, արկով (զնդակով) հրազենի խմբային պատկանելության հարցի լուծումը, ձեռագրով՝ կատարողի ձեռագրի մշակվածության որոշումը և այլն:

§ 1. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ

Կրիմինալիստիկական դիագնոստիկան արմատապես տարբերվում է նույնացման հետազոտություններից. այն ուսումնասիրում է իրադրություններ, երևույթներ, գործընթացներ: Օրինակ՝ ոտնահետքերով կարելի է որոշել քայլի ուղղությունը, մոտավոր արագությունը, անձի՝ բեռնված փնելու փաստը, մթան մեջ քայլելու փաստը և այլն: Ջարդող գործիքի հետքով կտարելու եղանակը, ո՞ր կողմից է կատարված կտրանքը, կտարող անձի սովորությունները, նրա կողմից գործադրված ֆիզիկական ուժի աս-

տիճանը, աշխատելու տևողությունը (որքան ժամանակ է աշխատել) և այլն:

«Դիագնոստիկան» հունարեն diagnostikos-(դիագնոստիկոս) բառն է, որ նշանակում է ընդունակ է ճանաչելու:

Իր հիմնական էությամբ «դիագնոստիկան» բնութագրում է բժշկագիտության որոշակի բնագավառ, որն ուսումնասիրում է հիվանդության հատկանիշները, մեթոդները, սկզբունքները, որոնց օգնությամբ որոշվում է դիագնոզը (ախտորոշվում է):

Այն իր լեզվաբանական գնահատմամբ տարբեր նշանակություններ ունի. բժշկության մեջ հիվանդի բազմակողմանի հետազոտությունների հիման վրա՝ հիվանդության բնույթի և էության որոշումը, բուսաբանության և կենդանաբանության մեջ, բույսի կամ կենդանու որևէ խմբին բնութագրող հիմնական հատկանիշների գիտական նկարագրությունը:

Կրիմինալիստիկայում այն օգտագործվում է նաև ճանաչման, տարբերակման (որոշակիացման) հիմաստով:

Դիագնոստիկական խնդիրների բնագավառը, որը լուծում է պահանջում կրիմինալիստիկական միջոցների կիրառմամբ, չափազանց լայն է: Բայց նրանց էությունը միասնական է և ըստ Յու. Գ. Կորուխովի՝ հանգում է «օբյեկտի հատկությունների ու վիճակի ուսումնասիրման, հաշվի առնելով, որ իրապեսացվում է նրանում եղած կարծիքներից, որոնք որոշվում են կրիմինալիստիկական իրադրության պայմաններով և գործոններով»:

Ճանաչումը նշանակում է պարզել, որ տվյալ իրադրությունը համընկնու՞մ է նախկինում արդեն եղածի՞ հետ:

Տարբերակումը նշանակում է առանձնացնել տվյալ իրադրությունը այլ նման իրադրություններից:

Որոշակիացումը, որը համարվում է դիագնոստիկացման վերջին փուլը, նշանակում է տիպային մոդելի հետ ունեցած նմանության միջոցով տարբերել հետազոտվողին՝ բացահայտել անհատականորեն որոշակիին, որը հատուկ է տվյալ հետազոտվող իրադրությանը:

Դիագնոստիկական հետազոտությունները իրականացվում են.

ա) պարզելու համար օբյեկտի հատկություններն ու վիճակը, նրա համապատասխանությունը տրված բնութագրերին,

բ) դեպքի հանգամանքների ուսումնասիրման համար, ֆիաստերի մեջ եղած կապի պարզաբանման համար:

¹ Корухов Ю. Г., Криминалистическая диагностика при расследовании преступлений, М., 1998г., էջ 73:

Կրիմինալխտիկական դիագնոստիկական հուշում է, որ իդենտիֆիկացման ողջ նշանակությունը գիտակցելով հանդերձ, պետք է նկատի ունենալ, որ ապացուցողական շատ փաստեր՝ քրեական գործերով պարզաբանվում են, առանց նրա կիրառման: Այսինքն՝ քրեական գործերով որոշ հետազոտություններ ունեն ոչ իդենտիֆիկացման բնույթ: Մինչև վերջերս այդ հետազոտությունները հենց այդպես էլ կոչվում էին՝ «ոչ իդենտիֆիկացման հետազոտություններ»:

Ավելացնենք, որ դիագնոստիկ հետազոտություններով լուծվում են այնպիսի հիմնահարցեր, ինչպիսիք են, օրինակ՝

1. Տվյալ առարկայի վրա կա՞ն արդյոք որոշակի հետքեր, ի՞նչ բնույթի են դրանք:

2. Ինչպիսի՞ն է հետքերի առաջացման մեխանիզմը, հաջորդականությունը:

3. Այդ հետքերը պիտանի՞ են նույնացման համար հետք առաջացնող օբյեկտի հետ:

4. Ինչպիսի՞ն է հետք առաջացնող օբյեկտի ազդման (հարվածի) ուժը:

5. Ինչպիսի՞ն է տրանսպորտային միջոցի շարժման արագությունը:

6. Որտե՞ղ է գտնվել կրակոդը կրակելու պահին:

7. Հնարավո՞ր է տվյալ հրազենից կրակել առանց ձգանը սեղմելու:

8. Տվյալ առարկան սառը զենք համարվու՞մ է, թե՛ ոչ, և նման բազմաթիվ հարցեր:

Անհրաժեշտ են համարում նշել, որ նման բազմաթիվ հարցեր քննիչը կամ մասնագետը լուծում են մինչև փորձաքննություն նշանակելը, կամ առանց դրա՝ քննչական գործողությունների ժամանակ:

Դիագնոստիկական, ինչպես և իդենտիֆիկացումը, հիմնված է օբյեկտների հատկանիշների ուսումնասիրման վրա, անկախ նրանից. ուսումնասիրվում է օբյեկտը, թե՛ նրա թողած արտապատկերը: Այդ դեպքում հիմնական ուշադրությունը դարձվում է հատկանիշների տեղեկատվական կողմին (ընդհանուր, մասնավոր, անհրաժեշտ, պատահական և այլն): Սակայն ի տարբերություն իդենտիֆիկացման, այս դեպքում հիմնական ուշադրությունը դարձվում է հետքերի առաջացման մեխանիզմի և պայմանների պարզաբանմանը: Իսկ հետազոտման հիմնական մեթոդներից մեկը ~~անալոգիայով համատեղումն է:~~

Երբ կան մի շարք տիպիկ իրադրություններ, օգտագործելով անալոգիայով համատեղելու մեթոդը, փորձագետը ընտրում է մի քանի այլընտրանքային տարբերակներից մեկը, իրադրությանը ավելի նմանը:

Երբեմն արտապատկերման առաջացման պայմանների լավագույն պարզաբանման համար պահանջվում է փորձարարության կատարում:

Դիագնոստիկական խնդիրների վերջնական լուծումը համարվում է հետազոտվող իրադրության մասին հավաստի դատողությունը, որը հաստատում է հետազոտվող օբյեկտների վիճակի և հատկությունների մասին տվյալները, հետևությունների և քննչական իրադրությունների հատկանիշներից տարբերակման տրամաբանական բացատրությունները:

Դիագնոստիկական հետազոտությունների արդյունքների վերաբերյալ հետևությունները կարող են նկարագրել դեպքերի ընթացքը տվյալ պայմաններում (օրինակ՝ ձեռագրում անսովոր կատարման հատկանիշների պատճառները՝ գրելու կատարման պայմանների առումով, որոշակի իրադրության պայմաններում հետքերի առաջացման պատճառները և այլն), կամ հետևանքներով որոշել անհայտ պատճառները (օրինակ՝ պարզել ինքնաբերական կրակոցի պատճառը), կամ պարզել հայտնի գործողության և հայտնի հետևանքի պատճառը (օրինակ՝ ինչ կապ կա անձի գործողությունների և առաջացած պայթյունի միջև):

Հաճախ դիագնոստիկ հետազոտությունները նախորդում են իդենտիֆիկացմանը: Օրինակ՝ մինչև ձեռագրով կատարողին նույնացնելը, պարզվում են անսովոր կատարման հատկանիշները՝ այլ անձի ձեռագրին նմանեցնելու փաստը բացահայտելու համար, ինչպես նաև պարզելու դրանց առկայության այլ պատճառներ: Կամ մատնահետքով անձին իդենտիֆիկացնելուց առաջ որոշվում է հետքի՝ այդ հետազոտությանը պիտանի լինելու հարցը:

Կրիմինալիստիկական դիագնոստիկական չափազանց պիտանի է նաև քննչական գործողությունները արդյունավետ կատարելու համար: Օրինակ՝ դեպքի տեղը զննելիս այն օգնում է պարզելու դեպքի կատարման մեխանիզմը, ինչպես նաև առանձին հանգամանքներ: Օրինակ՝ դուռը (փականը) կոտրելու եղանակը, հանցագործության մասնակիցների թիվը, նրանց գալու և զնալու ուղիները, կրակոցի դիրքը կրակելու պահին և այլն: Քննչական գործողությունների ժամանակ իրականացված դիագնոստիկական օգնում է նաև այլ հարցեր լուծելիս (հետախուզում կազմակերպելիս օգնում է կողմնորոշվել, որոնել նոր փաստական տվյալներ, հետքեր, որոշել անձանց անհատական որոշ հատկանիշներ և այլն):

Դիագնոստիկայի առարկան սահմանվում է հետևյալ կերպ. ըստ Բելկինի և մյուսների 1998թ. (Ավերյանովա, Կորոլխով, Ռոսինսկայա) ձեռննակած և Բելկինի կողմից խմբագրված դասագրքի.

Կրիմինալիստիկական դիագնոստիկայի առարկան կարելի է սահմանել որպես օբյեկտի (իրադրության) հատկությունների և վիճակի հե-

~~տազոտություն, նրանում կատարված փոփոխությունների պարզաբան-
ման, այդ փոփոխությունների պատճառների և դրանց հանցագործու-
թյան հետ ունեցած կապի որոշման նպատակով: Է. Խարժեք է Ռ. Բելկինի~~
այն դատողությունը, որ յուրաքանչյուր իրավաբանական գիտություն,
հենվելով որոշակի օրինաչափությունների վրա, մշակում է իր հատուկ
դիագնոստիկական մեթոդները, դիագնոստիկական հատկանիշների հա-
մակարգը և հետազոտման մեթոդիկան¹:

«Կրիմինալիստիկական դիագնոստիկա» և «փորձագիտական կրի-
մինալիստիկական դիագնոստիկա» հասկացություններին նախորդել է
ճանաչողական գործունեության տեսական ասպեկտների առանձնացու-
մը, այն գործունեության, որոնք կրիմինալիստիկայում ինքնուրույն ուղ-
ղություն ունեցող կրիմինալիստիկական խնդիրներ չէին լուծում:

Օրինակ՝ որպեսզի պարզվի, ձեռագիրը չի՞ կատարված արդյոք ան-
սովոր դիրքում, պետք է իմանալ գրելու ընթացքին մարմնի, գրող գործիքի,
դիրքի ազդեցության օրինաչափությունները, ձեռագրի հատկությունները
և նրանց արտահայտությունները անսովոր դիրքում գրելիս:

Դիագնոստիկայի բնութագրող տարբերությունը իդենտիֆիկացու-
մից համարվում է այն, որ ~~իդենտիֆիկացման ժամանակ ստուգվող օբյեկտը~~ պետք
է միշտ լինի, իսկ դիագնոստիկացման ժամանակ այն կարող է և չլինել:
Օրինակ՝ «կրակողի գտնվելու տեղը», որը վերջին դեպքում համարվում է
հետազոտման օբյեկտ, ռսումնասիրման ժամանակ համարվում է անց-
յալի արտահայտություն, դիագնոստիկացման ժամանակ կարող է չլինել:
Զննիչն այս դեպքում կատարում է մոդելավորում: Կամ՝ ձեռագիրը կա-
տարված չէ՞ արդյոք անսովոր դիրքում, այն չի՞ կատարված արդյոք ֆի-
զիկապես հոգնած վիճակում և այլն:

Այլ կերպ ասած, այս դեպքում էլ կան ~~դիագնոսագնող և դիագնո-
սացվող~~ օբյեկտներ:

~~Մասջինը~~ պարզաբանվող պայմաններն են (ստորկան, իրադրու-
թյունը), ~~երկրորդը~~ դիագնոսացվողը, հատկանիշների նյութական կրող-
ներն են, որոնք արտահայտում են հատկությունները (դրանց համակար-
գը, հատկանիշները, դրանց ամբողջությունները), և դրանց ազդեցությու-
նը տեղի ունեցած դեպքի որոշակի պայմանների վրա:

¹ Белкин Р. С., Курс криминалистики, т. 2, с. 287-288:

ՉԼՈՒԽ 6. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՄՈՂԵԼԱՎՈՐՈՒՄ

Անվիճելի է, որ նախաքննության կատարելագործումը հնարավոր է միայն ավանդական մեթոդների շարունակվող բարելավման և քննիչի աշխատանքի նոր մեթոդների որոնման ճանապարհով:

Այդ առումով չափազանց հեռանկարային է թվում մոդելավորման մեթոդը:

Վստահորեն կարելի է ասել, որ մոդելավորումը, որպես ճանաչողական գործունեության մեթոդ, քննիչին օգնում է լուծելու քրեական գործի նախաքննության շատ կարևորագույն խնդիրներ: Կրիմինալիստիկայում մոդելավորումը ճանաչողության համեմատաբար երիտասարդ մեթոդ է. այն առաջինը լրջորեն առաջարկվել է Ա. Ռ. Ռատինովի կողմից 1967 թվականին¹: Չնայած քրեական նյութական և դատավարական իրավունքում, քննչական և դատական պրակտիկայում մոդելավորումը հայտնի էր ավելի վաղ ժամանակներից, սակայն հանցագործությունների քննությունը այդ մեթոդի վրա իրականացնելը ընթացավ բավական դանդաղ:

Այս մեթոդի իրականացումը նրա տարբեր կողմերով տեղ է գտել Լ. Ե. Արոցկերի, Ռ. Ս. Բելկինի, Ա. Ի. Վինբերգի, Ա. Ա. Լևիի, Ա. Ա. Շեյֆերի և այլոց աշխատություններում:

Մոդելավորման մեթոդը կիրառվում է նաև դատական փորձաքննություններում (կրիմինալիստիկական, ավտոտեխնիկական և այլ): Այն իր կիրառումն ունի ընդհանուր ճանաչողական գործողություններ պլանավորելիս և կատարելիս, օրինակ՝ վարկածներ կառուցելիս, քննությունը պլանավորելիս:

Մոդելավորման դերը առանձնապես մեծ է հանցագործությունների բացահայտման գործում. ոտնձգության օբյեկտի, հանցագործության դեպքի պարզաբանման, հանցանք կատարած անձի բացահայտման, արարքի շարժառիթների, մեղքի ձևի պարզաբանման:

Մոդելավորում ասելով պետք է հասկանալ այս կամ այն օբյեկտի (գործընթացի, երևույթի) ուսումնասիրումը, որն իրականացվում է ոչ թե անմիջական օբյեկտի գործադրմամբ, այլ նրան փոխարինող մոդելի, որը

¹ St'u Рагинов А. Р., Судебная психология для следователей, М. 1967г.

~~դառնում է օրիգինալի մասին տեղեկատվության ստացման միջոց և փոխարինում է նրան փորձեր և ճանաչողական գործողություններ կատարելիս:~~

Առաջին հերթին պետք է նշել մտավոր մոդելավորումը, որը օգնում է հետազոտել, ավելի լայն օգտագործել քննիչի տրամադրության տակ եղած տեղեկատվությունը, ստանալ քրեական գործի քննության համար անհրաժեշտ նոր գիտելիքներ:

Այն հնարավորություն է տալիս ստուգել վարկածը, ենթադրությունը, այն դեպքում, երբ ավանդական մեթոդները բավարար չեն կամ դրանց կիրառումը պահանջում է երկար ժամանակ և ուժեր, մասնավորապես, հնարավորություն է տալիս ստուգման համար օգտագործել մտավոր փորձարարության մեթոդը:

Մեթոդն օգնում է քննչական գործողության կազմակերպմանը և բարձրացնում է նրա արդյունավետությունը, կարգավորում, որոշակի է դարձնում քննիչի մտավոր գործունեությունը, բարձրացնում է ճանաչողության մյուս մեթոդների արդյունավետությունը, լավացնում է քննիչի դիտողականությունը, օգնում է չափումներին, կրիմինալիստիկական նկարագրությանը, հնարավորություն է տալիս համատեղել ճանաչողության տրամաբանական և էվրիստիկ մեթոդները, բարձրացնում է կրիմինալիստիկական տեխնիկայի արդյունավետությունը, ինչպես նաև մասնագետների և փորձագետների գիտելիքների օգտագործումը և այլն:

Մի խոսքով, մտովի մոդելավորումը բարձրացնում է քննիչի որոնող գործունեության արդյունքները, բարելավում է քննության կազմակերպման, կառավարման ընթացքը, հնարավորություն է տալիս կրճատել քննության ժամկետները. ապահովում է քրեական գործերի քննության օբյեկտիվությունը, լրիվությունը, բազմակողմանիությունը:

Նշենք, որ ըստ Ա. Ռ. Ռատինովի այստեղ գործում է «...դատական հոգեբանության բնութագիրը, որն համարվում է ֆիզիոլոգիայի բնագիտական բազան, և զբաղվում է բարձրագույն ներվային համակարգության ուսումնասիրմամբ¹»:

Մոդելավորումը քննիչի, հետաքննության մարմնի աշխատանքում տարբերվում է գործունեության այլ բնագավառներում կատարվող մոդե-

¹ А. Р. Ратинов, Судебная психология для следователей, М. 2001 г., т. 2: 21:

լավորումից մի քանի հատկանիշներով, որոնցից կարևոր են ~~կիրառման բնագավառը, մոդելավորման սուբյեկտը, առարկան, խնդիրները, այն գիտելիքները, որոնք պետք է ստանալ այդ մեթոդի օգնությամբ:~~

Հատկանիշների շարքում էական են մոդելային հարաբերությունների ձևերը, որոնք վերցվում են որպես մոդելավորման հիմք:

Դա հնարավորություն է տալիս կրիմինալիստիկական պրակտիկայում օգտագործվող մոդելավորման առանձնացմանը, որպես մոդելավորման ընդհանուր գիտական մեթոդի տարատեսակ, այն անվանելով կրիմինալիստիկական մոդելավորում:

Այստեղ խոսքը վերաբերում է ոչ թե ինչ-որ նոր մեթոդի ստեղծմանը, ոչ թե կրիմինալիստիկական մոդելավորումը ընդհանուր գիտական մեթոդին հակադրելուն, այլ այդ ընդհանուր գիտական մեթոդի շրջանակներում և հիմքի վրա առանձնացնելուն՝ ըստ նրա մասնավոր տրամաբանության, որի ուսումնասիրումը կհեշտացնի մոդելավորման առանձնահատուկ կրիմինալիստիկական մեթոդի մշակումը, մասնագետների ուսուցումը և այդ մեթոդի ներդրումը քննչական և օպերատիվ-հետախուզական պրակտիկայում:

Օրինակ՝ Գ. Չորինը մեծան մի առիթով նշում է. «Որպեսզի բացահայտվեն ձևացումը և նրա ետևում թաքնված ճշմարտությունը, պետք է կատարել առաջին քայլը՝ կառուցել ձևացման և իրական հանցավոր իրադրության մոդելը¹»:

Նշված խնդիրների իրականացումը պահանջում է կրիմինալիստիկական մոդելավորման տեսության ձևավորում: Օգտագործելով մոդելավորման բնագավառում փիլիսոփայական-մեթոդոլոգիական հետազոտությունները² և նկատի ունենալով կրիմինալիստիկական պրակտիկայում այդ մեթոդի առանձնահատկությունը, կարելի է ասել, որ կրիմինալիստիկական մոդելը արհեստական համակարգ է, որը վերարտադրում է քրեական դատավարության բնագավառում ուսումնասիրվող օբյեկտի (օրիգինալի) մնանության աստիճանը, և որի ուսումնասիրումը հնարավորություն կտա ստանալ նոր գիտելիքներ օրիգինալի մասին, որոնք անհրաժեշտ են արդարադատության և դատավարության մասնակիցների մասնագիտական գործունեության խնդիրների լուծման համար:

¹ Գ. А. Зорин, Криминалистическая методология, Минск, 2000г., էջ 510:

² Стів В. А. Штофф, Введение в методологию научного познания, Л.1972г., նույն հեղ. моделирование и философия, М., Л. 1966г., Р. Пэнто, М. Гравитц, методы социальных наук, М. 1972г.

Այլ կերպ ասած, կրիմինալիստիկական մոդելավորումը կրիմինալիստիկական օբյեկտների և դատավարության մասնակիցների մասնագիտական գործունեության կառավարման ճանաչողության մեթոդ է՝ հատկապես այդ նպատակների համար ստեղծված կրիմինալիստիկական մոդելների օգնությամբ:

Մի քանի խոսք **մոդել** հասկացության մասին:

Մոդել բառն առաջացել է լատիներեն modulus-չափ, մնուշ բառերից (ֆրանսերեն modele, իտալերեն modello) ¹:

Նախկինում մոդելը համարվում էր «առարկայի վերարտադրությունը՝ փոքրացված, երբեմն մեծացված կամ բնական տեսքով, մնուշ, որից վերցվում է կաղապարը ձուլելու կամ այլ նյութի վրա վերարտադրելու համար, բնականը»²:

Հետագայում այդ հասկացությանը այլ իմաստ տրվեց. մա դարձավ «արտացոլում» տերմինի հոմանիշը:

Իսկ գիտական հետազոտություններում այն հասկացվում էր միայն մեկ նշանակությամբ, այն է՝ ինչ-որ բանի պատճենը: Մոդելի դերում կարող էին լինել ոչ միայն առարկաներ, այլև երևույթներ, գործընթացներ: Փոփոխություններ կրեցին մաև մոդելի առաջացման սկզբնապատճառները. մոդել առաջանում էր ոչ միայն որոշակի նյութերից, իրերից, այլև մտովի՝ իդեալական ձևով:

Մոդելի բազմաթիվ սահմանումների ուսումնասիրությունը համոզիչ կերպով ցույց է տալիս, որ հնարավոր չէ միանշանակ ձևակերպել այս հասկացությունը: Ներկայացնենք մի քանի բնութագրումներ.

«Մենք մոդել կանվանենք ցանկացած նյութական իր (կամ երևույթ), որում ընդգրկված է այս կամ այն բնօրինակի պատճենը»³:

«Մոդելը՝ մտովի պատկերացված կամ նյութապես հստակեցված համակարգ է, որն արտացոլում կամ վերարտադրում է հետազոտման օբյեկտը, ընդունակ է փոխարինելու նրան այնպես. որ մոդելի հետազոտումը տա ուսումնասիրվող օբյեկտի մասին նոր տեղեկություններ»⁴: Նույն հեղինակը հետագայում գրում է. «Չնայած մոդելավորման մեթոդի նկարագրությանը հետազոտողների տարբեր մոտեցումներին, կարելի է արձանագրել, որ դրա էությունը հասկացվում է միանշանակ. այս կամ այն օբ-

¹ Словарь иностранных слов, 1989.

² Словарь современного русского литературного языка, М. Л. 1957г., т. 6 (թարգմանությունը մեր կողմից է, Լ. Օ.):

³ Я. А. Пономарев, Психика и интуиция, М. 1967г., էջ 50:

⁴ И. М. Лузгин, Методологические проблемы расследования, М. 1973г., էջ 163:

յեկտը (գործընթացը, երևույթը) ուսումնասիրելու համար մոդելավորելիս օգտագործվում է ոչ թե ինքը՝ օբյեկտը, այլ նրան փոխարինող մոդելը»¹:

«Մոդել ասելով հասկանում են մարդու կողմից հատուկ ստեղծված հարմարանքները (նյութական օբյեկտ կամ ձայնային համակարգ), որը մնանակում է գիտական հետազոտման օբյեկտը²»:

«Ազդանշանները համարվում են... մոդելի ձև³»:

Մեր կարծիքով, մոդելը բնօրինակի լրիվ կամ մասնակի (որևէ մասի) հատկությունների արտացոլման միջոց է:

Եվ եթե ճիշտ համարենք պնդումն այն մասին, որ ցանկացած տեղեկատվություն իրենից մոդել է ներկայացնում, ապա «մոդել» տերմինը բազմակողմ նշանակություն ձեռք կբերի: Այն կարող է կիրառվել մարդու կողմից ընկալվող ցանկացած ազդանշանների համակցությամբ, որոնք նրա մոտ պատկերացում են ձևավորում շրջակա միջավայրի առանձին տարրերի մասին: Այդ մասին խոսել է դեռևս մոդելավորման տեսության ստեղծողներից մեկը՝ Ն. Ա. Ռիմովը. «բոլոր մեր աշխարհըմբռնումները իրենց առավել առօրեականից մինչև առավել բարձր բովանդակությունը իրենցից ներկայացնում են մոդելների ժողովածու⁴»:

Մի խոսքով, մոդելը մարդու կողմից շրջակա ~~իրականության մնացած մասն~~ միջոց է:

Կրիմինալիստիկական մոդելավորման տեսության և պրակտիկայի առումով չափազանց կարևոր է փորձել սահմանազատել մտավոր մոդելը վարկածներից, որպես քննիչի աշխատանքում մտածողության տարբեր ձևերի: Ելնելով գիտական ճանաչողության մեթոդաբանական հիմքերից, այդ տարբերությունը հանգում է նրան, որ վարկածը իր բովանդակությամբ տրամաբանորեն կապակցված ~~ենթադրությունների համակարգ է~~ քննիչի կողմից ուսումնասիրվող օբյեկտի մասին: Իսկ մոդելը որոշակի, մտովի պատկերացված կամ ինչ-որ եղանակով ամրապնդված հանգամանքների, փաստերի, երևույթների, գործողությունների համակարգ է, որոնցում կատարվում է վարկածների ստուգումը: Մոդելն ընդգրկում է և՛ տրամաբանականը, և՛ հոգեբանականը:

¹ И. М. Лузгин, Моделирование при расследовании преступлений, М. 1981г., т. 4:

² Кол. авторов, Основы применения кибернетики и правоведения, под ред. Н. С. Полевого и Н. В. Витрука, М. 1977г., т. 107:

³ Н. Винер, Кибернетика и общество, М. 1958г., т. 34:

⁴ Н. А. Умов, соч. М. 1916г., н. 3-րդ, էջ 365, Սեջրերումը վերցված է՝ Вопросы кибернетики и право, М. 1967г., էջ 187:

Վարկածը և մողելը արտահայտվում են տարբեր ձևերով: Վարկածը որպես տրամաբանական կատեգորիա, արտահայտվում է առօրեական լեզվի օգնությամբ: Իսկ մողելը, ինչպես այդ, այնպես էլ ամբացման որոշակի եղանակներով (սխեմաների, գծագրերի, նկարների և այլն): Վերջին եղանակը բարձրացնում է մողելի արդյունավետությունը, որպես ճանաչողության միջոցի:

Հաճախ վարկածների կառուցմանը նախորդում է մողելի ձևավորումը, որն օգնում է ինչպես վարկածի կառուցմանը, այնպես էլ ստուգմանը:

Մողելի վրա հենվելով քննիչը ժամանակավորապես իր ուշադրությունը կենտրոնացնում է ոչ թե բնօրինակի, այլ արհեստական օբյեկտի՝ մողելի վրա և անդրադառնում է բնօրինակին միայն այն ժամանակ, երբ մողելի օգնությամբ պատկերացում է ստանում նրա մասին:

Մողելավորման բովանդակությունը կախված է ուսումնասիրվող օբյեկտի առանձնահատկություններից: Բացի այդ, գործի քննության խնդիրների և առանձնահատկությունների տեսանկյունից կարևոր է, որ մողելի և օրիգինալի համընկնումը բացառի նրանց նույնությունը, քանի որ, ինչպես հայտնի է, նույնացված լինել նշանակում է լինել հենց նույնն ոչ թե այլ օբյեկտ: Մողելը այլ օբյեկտ է, որ նման է օրիգինալին և արտահայտում է նրա հատկությունները: Օրինակ՝ կոշիկի ծավալային հետքի կադապաթը հետքի հետ չի նույնանում և այլ օբյեկտ է համարվում, որի վրա արտացոլված են միայն հետքի արտաքին կառուցվածքի որոշ հատկանիշներ, և միայն դրանցով է կադապաթը համընկնում հետքի հետ:

Մողելավորումը կադապարի հատկանիշների օգնությամբ հնարավորություն է տալիս այդ մողելը օգտագործել այն բնօրինակի հետախուզման համար, որը թողել է հետքը, իսկ հետո՝ դրա իդենտիֆիկացման համար:

Մողելն իրենից ներկայացնում է որոշակի համակարգ, իսկ համակարգային մոտեցումը հնարավորություն է տալիս պարզել, որ մողելի և օրիգինալի միջև կան օբյեկտիվ բնույթի կապեր, նաև առանձնացնել գործի քննության խնդիրների տեսանկյունից այդ կապերի տեսակները, պարզել այն օրինաչափությունները, որոնց ուժով առանձին տարրերի միջև առաջանում է ամբողջական համակարգը:

Մողելավորման գործընթացում, մասնավորապես, մողելի կառուցման և ուսումնասիրման ժամանակ, առաջանում են մի շարք չափազանց լուրջ դժվարություններ, որոնցից մեկը համարվում է այն, որ կրիմինալիստիկան քննիչին չի տալիս կրիմինալիստիկական օբյեկտների լրիվ նկա-

րագիրը: Այստեղ առաջին հերթին խոսքը վերաբերում է հանցագործությանը՝ որպես նախաքննության ժամանակ ուսումնասիրվող օբյեկտի:

Այս կապակցությամբ հիշեցնենք, որ ներկայումս կրիմինալիստիկայում նկարագրված են միայն հանցագործության նյութական հետքերը և իրեղեն օբյեկտները, որոնք հետազոտվում (ուսումնասիրվում) են նախաքննության ժամանակ, մարդու մարմինը, սուբյեկտի արտաքին հատկանիշները, հագուստը, կոշիկը, շինությունները, կենցաղային առարկաները, տրանսպորտային միջոցները, ճանապարհը, մասնագիտական գործիքներ, հանցագործության գործիքներ և այլն:

Պրակտիկան ցույց է տալիս, որ բննիչների մեծամասնությունը, ունենալով հանցակազմի մասին բարձր գիտելիքներ, բավարար չափով չի պատկերացնում հանցագործությունը՝ որպես իրական երևութ, նրա կազմությունը, մեխանիզմը, հետքառաջացումը, դրա համար էլ, բնականաբար, դժվարանում է մասնատել ուսումնասիրվող դեպքը, կառուցել դրանց պատկերը, և առանձնացնել այդ պատկերներից դատողություններ, որոնք անհրաժեշտ են մոդելի ստուգման և հանցագործության բացառայուն համար:

Մի շատ հետաքրքիր աշխատության մեջ Ա. Ֆ. Չերդանցևը անում է այն ճշմարիտ դատողությունը, որ «իրավաբանական գիտությունը և պրակտիկան գործ ունեն տարբեր կարգի փաստերի հետ. և՛ փաստերի, որոնք իրականության երևույթներ են, և՛ փաստերի, որոնք մարդկային իմացության ձևեր են: Փաստերի՝ որպես իմացության ձևեր, նշանակությունը իրավաբանական պրակտիկայում այնքան էական են, որ մի շարք դեպքերում դրանք կարող են ունենալ իրավաբանական հետևանքներ, առանց որոշակի կենսական փաստի գոյության: Դա լինում է այն ժամանակ, երբ իրավաբանական փաստ-իմացությունը առանց բավարար հիմքերի ընդունվում է որպես հավաստի»:¹

Այս կապակցությամբ Վ. Մ. Ռոզինը ավելացնում է. «...Պետք է չչփոթել իրավաբանական փաստերը և հանգամանքները, քանի որ դրանք ուսումնասիրելիս տրամաբանությունը և դատողությունները յուրաքանչյուր դեպքում տարբեր կլինեն»:²

Կրիմինալիստիկայում նշված բացը լրացնելու անհրաժեշտությունը ցույց է տալիս, որ ներկայումս նախադրյալներ են հասունացել փաստերի

¹ Черданцев А. Ф., Логико-языковые феномены в праве, юридической науке и практике, Екатеринбург, 1993г., էջ 85:

² В. М. Розин, Психология для юристов, М. 1997г., էջ 91:

և հանգամանքների, այլ կերպ ասած՝ կրիմինալիստիկական օբյեկտի տեսության ձևավորման մասին հարցադրման, մասնավորապես հանցագործության կրիմինալիստիկական տեսության, որը քննիչին հնարավորություն կտա նկարագրելու հանցագործությունը, որպես իրական երևույթ, և նրան որոշակի գիտելիքներ կտա, որոնք անհրաժեշտ են մոդելավորման համար:

Այս կապակցությամբ կարևորություն է ստանում նաև անհատի բնութագրումը, որի էությունը այն է, որպեսզի անձը (սուբյեկտը) ուսումնասիրվի՝ իր գործունեության գերակշռող (դոմինանտ) համկարգում:

Այս մեթոդի վերլուծությունը հնարավորություն է տալիս ամբողջացնելու այն տեղեկությունները, որոնք կարևոր են ուսումնասիրվող անձին բնութագրելու համար:

Այդ որակումներից կայուն են նրանք, որոնք երևան են գալիս նրա ինտելեկտուալ, զգայական և կամային գործունեության ընթացքում: Վերլուծվում է մարդու այն գործունեությունը, որը նախորդել է հանցագործությանը:

Հայաստանի Հանրապետությունում այս հարցերը դեռևս մշակված չեն: Ռուսաստանի Դաշնությունում հանցագործությունների կրիմինալիստիկական տեսության մեջ էական ներդրում պետք է համարել հանցագործության կատարման եղանակի հետազոտությունները, հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագրի, հանցագործության գործիքների և այլ հետազոտությունները՝ կատարված Գ. Գ. Ջուլկովի, Է. Դ. Կուրանովի, Կ. Ֆ. Սկվարցովի, Վ. Գ. Տանասևիչի, Ա. Ն. Վասիլևի, Ս. Ֆ. Գերասիմովի, Վ. Ա. Օբրագովի, Ն. Ա. Սելիվանովի, Լ. Ա. Սերգենի, Ս. Ա. Սիրկովի և այլ հեղինակների կողմից:

Հանցագործությունների կրիմինալիստիկական տեսանկյունը հետազոտելիս, կարծում ենք, պետք է նկատի ունենալ հետևյալ կարևոր խնդիրները:

Ինչպես նշեցինք վերը՝ հանցագործության, որպես իրական երևույթի նկարագիրը, որը և կհամարվի կրիմինալիստիկական բնութագիր: Այնուհետև պետք է գտնել և ուսումնասիրել հանցագործության օրինաչափությունները, որոնք կհեշտացնեն նրա բացահայտումը և այդ հարցով իրավապահպան մարմիններին տրվող հանձնարարականների մշակումը, մասնավորապես. համակարգային վերլուծության, մոդելավորման, ճանաչողության այլ արդյունավետ մեթոդների մշակման և պրակտիկայում ներդնելու հանձնարարականները:

Պետք է կարևորել նաև հանցագործությունների կատարման և քուղարկման նոր եղանակների նախնացությունը:

Հանցագործությունների կրիմինալիստիկական տեսությունը, կարծում ենք, պետք է ընդգրկի մի շարք կարևոր տարրեր, դրանցից են. հանցագործության կրիմինալիստիկական հասկացությունը, հանցագործության՝ որպես իրական երևույթի կազմությունը, հանցագործության կապը շրջակա միջավայրի և այլ համակարգերի հետ, հանցագործության համակարգերի կրիմինալիստիկական օրինաչափությունները, հանցագործության կրիմինալիստիկական հատկանիշները, հանցագործությունների կրիմինալիստիկական դասակարգումը, հանցագործությունների կրիմինալիստիկական ուսումնասիրման և նկարագրման մեթոդները: Հանցագործությունների կրիմինալիստիկական տեսության ստեղծումը, մշակումը և քննչական պրակտիկայում մոդելավորման ներդրումը շոշափում են կրիմինալիստիկայի այնպիսի պրոբլեմներ, ինչպիսիք են. առարկան, խնդիրները, մեթոդները, կազմությունը:

Մասնավորապես, կրիմինալիստիկայի խնդիրների մեջ, մեր կարծիքով, պետք է մտնի տիպային, վերացական մոդելների և քննության տիպային ծրագրերի կազմումը, որոնք կնպաստեն քրեական գործի բացահայտման և քննության իրական համակարգ ստեղծելուն, ճանաչելու և հասարակության կյանքից վերացնելու որոշակի հանցագործության իրական համակարգը, դրա հետ կապված մոդելավորումը դառնում է ոչ միայն քննիչի պրակտիկ գործունեության մեթոդի, այլև կրիմինալիստիկայի գիտության մեթոդ:

* * *

Այս հարցը քննարկելիս առաջնակարգ նշանակություն է ստանում մոդելավորման թույլատրելիությունը՝ որպես քրեական գործով ապացույցներ ստանալու և ստուգելու մեթոդ:

Այդ նպատակի համար պետք է պահպանել հետևյալ պայմանները.

❖ Դատավարության օրինականության սկզբունքը. քրեադատավարական օրենքը կարգավորում է ապացույցների հավաքման, հետազոտման, օգտագործման և գնահատման դատավարական ձևերը, պայմանները, կարգը, դրանց ձեռքբերման հիմնական աղբյուրները՝ քննչական գործողությունները: Օրենքը, սակայն, հասկանալի պատճառներով չի կարգավորում ճանաչողության մեթոդների բովանդակությունը, որոնք օգտագործվում են քննչական գործողություններ կատարելիս: Ճանաչողության միջոցների ու մեթոդների բովանդակությունը որոշվում է կրիմին-

նալիստիկայի կողմից: Օրինակ՝ օրենքը թույլատրում է այնպիսի մոդելներ, ինչպիսիք են՝ կադապարներ, նույնատիպ օբյեկտներ (ճանաչման ներկայացնելիս), հրազեն, գործիքներ, հափշտակված իրեր, լուսանկարներ, գեղանկարներ (ռոբոտներ՝ հետախուզվող անձի կամ առարկայի), անձանց, որոնք արտաքինով նման են ճանաչման ներկայացվողին, տեսաժապավեններ, կինոժապավեններ, պլաններ, սխեմաներ, ֆոնոգրամներ: Պետք է նշել նաև, որ մոդելավորման որոշ հնարքներ և օբյեկտներ օրենքում ուղղակի չեն նախատեսվում, սակայն մոդելավորման գիտական հնարավորությունները կիրառման դատավարական կաշգի ճիշտ պահպանման դեպքում համոզիչ հիմք կծառայեն ապացույցներ ստանալու համար:

❖ Մեթոդի գիտականությունը և օբյեկտիվությունը. նշենք, որ մոդելավորումը հիմնվում է մաթեմատիկայի, տրամաբանության, տեղեկատվության տեսության, կրիմինալիստիկայի և գիտության այլ բնագավառների դրույթների վրա:

❖ Պարզություն, մատչելիություն և արդյունավետություն. գործերի քննության ընթացքում խորհուրդ է տրվում կիրառել մոդելավորման ոչ բարդ խնայողական տեսակներ. հասկանալու առումով մատչելի և դատավարության մասնակիցների կողմից ստացված արդյունքների գնահատումով: Օրինակ՝ լուսանկարներ, կադապարներ, մակետներ և այլն: Իրենց պատկերավոր տեսանելիության շնորհիվ այդ մոդելները համեմատաբար հեշտ են մտնում ապացուցման գործընթացի մեջ, օգնելով պարզաբանելու քննվող դեպքի հանգամանքները, պատճառական կապերը, ստանալու անհրաժեշտ ապացուցողական տեղեկատվություն:

❖ Կիրառման անվտանգության պահպանումը: Օրինակ՝ մոդելավորումը պայթեցումների հետ կապված գործերով:

❖ Էթիկայի կանոնների պահպանումը:

Ինչպես նշեցինք վերը, մոդելավորումը ներկայումս կիրառվում է նաև դատական փորձաքննություններ կատարելիս: Մասնավորապես. կրիմինալիստիկական, դատաբժշկական, հրդեհատեխնիկական, ավտոտեխնիկական, քիմիական, շինարարական, տեխնոլոգիական և այլ:

Դրանք կատարվում են, օրինակ, հետքերի առաջացման մեխանիզմի, պայմանների պարզաբանման, իրեղեն ապացույցների սկզբնական վիճակը, ձեռագիրը բնութագրող հատկանիշները, փաստաթղթի ռեկվիզիտները, հետքի պապիլյար գծերը հետազոտելու և այլ նպատակներով:

Մոդելավորումն իրականացվում է լուսանկարով անձին նույնացնելիս, դատաձգաբանական (հրազենագիտական) հետազոտություններում (ինչպես նույնացման, այնպես էլ, հատկապես, դիագնոստիկ) և այլն:

Մոդելները օգտագործվում են նաև փորձագետի հետևություններն ավելի ակնառու դարձնելու համար:

Ավարտելով մոդելավորման որպես կրիմինալիստիկական ճանաչողության մեթոդի մասին մեր դատողությունները, նշենք, որ մոդելավորումը ճանաչողության բարդ համակարգ է, որը ամբողջացնում է դիտարկումը, համեմատումը, փորձարարությունը, չափումները և այլ մեթոդներ: Միևնույն ժամանակ նա օժտված է առանձնահատկությամբ, որը միշտ հնարավորություն է տալիս նրան առանձնացնել թվարկած մեթոդներից և դրա հիման վրա հստակորեն պարզել, թե որ ապացուցողական տեղեկատվությունն է ստացվել մոդելավորումով, և որը՝ ճանաչողության այլ մեթոդների օգնությամբ:

2. ԳԼՈՒԽ 7. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Սույն աշխատանքում անհրաժեշտ ենք համարում ներկայացնել կրիմինալիստիկայի և կրիմինալիստիկական փորձաքննությունների համաշխարհային պատմության միայն առավել կարևոր էջերը:

Նպատակահարմար ենք գտնում հատուկ անդրադառնալ այս գիտության և կրիմինալիստիկական փորձաքննությունների պատմությանը Ռուսաստանում և Ուկրաինայում, որովհետև ես և ՀՀ-ում աշխատող փորձագետ-կրիմինալիստների մեծ մասը մասնագիտական կրթություն ենք ստացել այդ երկրներում և այդ երկրների գիտնականներից (անձամբ և նրանց աշխատություններով):

Կրիմինալիստիկայի և դատական փորձաքննությունների պատմությունը Հայաստանում, բացառությամբ դատական բժշկության պատմության, գրվում է առաջին անգամ. դրա համար ապավինել ենք մեր հիշողությանը, քանի որ այդ պատմությունը կերտողներից մեկը տողերիս հեղինակն է, իսկ իմ և գործընկերներիս կատարած աշխատանքների (հիմնականում՝ փորձաքննությունների) վերաբերյալ արխիվային նյութերը, ցավոք, չեն պահպանվել:

Հարմար և ճշմարիտ չենք համարում կրիմինալիստիկայի համաշխարհային պատմությունը սկսել Աստվածաշնչից, քանի որ կատացվի մի քիչ վերամբարձ կատացվիկ, մի քիչ սխալ և անհամեստ, ինչպես անում են որոշ հեղինակներ՝ քննարկվող նյութի պատմությունը ավելի հեռավոր և ուճի առումով, նորովի ներկայացնելու ճիգերով, այն սկսելով Կայենի կողմից եղբորը՝ Աբելին սպանելու պատմությունից¹: Պատմությունը «հետաքրքիր» դարձնելու նպատակով՝ այդ հեղինակները տեր Աստծուն (մեղա՝ քեզ, Տե՛ր) դարձնում են դատավարության սուրբեկտ: Իհարկե, վաղնջական ժամանակների շատ օրենքներում կարելի է հանդիպել տակտիկական հնարքների նմանվող պահանջների, որոնք, սակայն, չի կարելի համարել կրիմինալիստիկայի գիտության ծիլեր, հատկապես, որ դրանք գործողության կատարման «տակտիկա» կոչվող հանձնարարականներ չեն, այլ օրենքի պահանջ, պատիժն իրականացնելու (կամ խտտացնելու) եղանակ, ձև:

¹ Տե՛ս օրինակ՝ Օ. Я. Баев, Основы криминалистики (курс лекций), М. 2001г., стр. 10:

Վերը նշված աշխատության մեջ կան նաև այդպիսի օրինակներ. ինչպես՝ Հին Հռոմի 12 տախտակները (Հին Հռոմի օրենքների առաջին ժողովածուն՝ 451-450թթ. մ. թ. ա.), ըստ նշված հեղինակի, բովանդակում էր «գուտ կրիմինալիստիկական» կարգադրություններ՝ խուզարկություն կատարելու տակտիկայի վերաբերյալ, այն է. «12 տախտակների օրենքը կարգադրում է, որ խուզարկություն կատարելիս խուզարկողը չպետք է ունենա (հագին-L. O.) որևէ հագուստ, բացի գործվածքե կապից և պետք է ձեռքին ունենա բաժակ¹»:

Սա օրենքով կարգավորված պահանջ է, թեև նմանվում է տակտիկական հանձնարարականի՝ ուղղված մարդու և պետական իշխանության մարմինների իրավունքների դեմ: Իսկ եթե նկատի ունենանք, որ տակտիկական հանձնարարականը, ընդհանրապես, մշակվում է քննիչի համար, գործողությունը արդյունավետ իրականացնելուն պատակով, իսկ 12 տախտակներից վերցված օրինակը քննիչի դեմ է՝ գործողության ընթացքում նրա կողմից չարաշահումներ թույլ չտալու համար, ապա ստացվում է կրիմինալիստիկական տակտիկայի նեգատիվը: Բացի այդ, մեր կարծիքով կրիմինալիստիկայի պատմություն ասելով՝ պետք է հասկանալ այդ գիտության սկզբնավորման և զարգացման ընթացքը և ոչ թե, օրինակ, տեղեկություններ վիուկների ջարդի մասին, ինչպես անում են որոշ հեղինակներ:

Այլ էր իրավախախտների բացահայտման քննությունը Չինաստանում, երբ կասկածյալների լեզվի ծայրին դրվում էր բրինձի հատիկ: Ում մոտ այն չոր էր մնում, նա հայտարարվում էր հանցագործ: Տրամաբանությունն այն էր, որ մեղավորի մոտ հուզմունքից թուր չէր արտադրվում (քերանը չորանում էր): Ըստ էության դա մարդու հոգեֆիզիոլոգիական ռեակցիայի ուսումնասիրումն էր, որը կատարելագործված տեսքով կիրառվում է ժամանակակից կրիմինալիստիկայում, մասնավորապես, պոլիգրաֆի միջոցով:

Ըրեական ոստիկանության կազմավորման, ձևավորման հարցերում պատմության մեջ են մտել անգլիացի Հենրի Ֆիլդինգը (1707-1754), որը հայտնի էր որպես գրող, իսկ իր կյանքի վերջին շրջանում դարձավ դատավոր, ոստիկանական ծառայության կազմակերպիչ, և ֆրանսիացի Ֆրանսուա Էժեն Վիդոկը (1775-1857), որը սկզբում պրոֆեսիոնալ հանցագործ էր, հետո հետախուզական (1810թ.) ծառայության ղեկավար, իսկ

¹ Մեջբերումը Օ. Բակը վերցրել է. Хрестоматия по истории государства и права зарубежных стран, под ред. З. М. Черниловского, М. 1984г., т. 2: 50:

վերջում դարձավ գրող: Յու. Տորվալդը գրում է, որ նա իր մի քանի մարդկանց հետ, որոնք, նույնպես նախկինում հանցագործներ են եղել, մեկ տարում բացահայտել է 812 սպանություն, զոդություններ և այլ հանցագործություններ: Նա ստեղծել է արխիվներ՝ հանցագործների մասին տեղեկություններով, որոնց կարելի է համարել իդենտիֆիկացման սաղմեր¹:

Համաշխարհային կրիմինալիստիկայի պատմության մեջ արժանավոր տեղ է զբաղեցնում Ալֆոնս Բերտիյոնը՝ Փարիզի ոստիկանական պրեֆեկտուրայի առաջին բաժանմունքի գրագիրը: 1879թ. ամռանը, նա լրացնում էր հանցագործների քարտերը՝ ցույց տալով նրանց արտաքին նշանները (հատկանիշները), որոնք նա ստանում էր ոստիկանության ծառայողների կողմից կասկածյալներին ձերբակալելիս և հարցաքննելիս: Սակայն դրանք այնպիսի նշաններ էին, որոնք կարող էին համապատասխանել հազարավոր մարդկանց (ինչպես «հասակը՝ բարձր» և այլն) ուստի և չէին կարող օգնել հայտնաբերելու հանցագործներին: Քարտերին սոսնձված էին լուսանկարներ կատարված լուսանկարչությամբ զբաղվող այն անձանց կողմից, ովքեր իրենց անվանում էին «նկարիչներ»: Կատարվում էին լուսանկարներ, որոնք հստակ չէին, և ավելի շատ «գեղարվեստական» բնույթ ունեին, իսկ հաճախ էլ՝ խեղաթյուրված, քանի որ ձերբակալվածները լուսանկարվելիս դիմադրում էին²:

Նա որդին էր Լուի Ադոլֆ Բերտիյոնի, որը հարգված բժիշկ էր, վիճակագիր և Փարիզի մարդաբանական ընկերության փոխնախագահը, թողը բնագետ-փորձարար և մաթեմատիկոս Ախիլյա Գիհարայի:

1879թ. Ա. Բերտիյոնը պրեֆեկտին ուղարկում է զեկուցագիր, որտեղ, հենվելով Կետլեյի օրենքի վրա³, նշում է, որ տարբեր անձանց հասակի հավանական համընկնման ցուցանիշը մեկը չորսի հարաբերությամբ է:

Բերտիյոնը տարիներ շարունակ համագործակցում էր հոր ու պապի հետ, երբ նրանք փորձում էին ստուգել Կետլեյի պնդումներն այն մասին, որ աշխարհում չկան երկու մարդ՝ մարմնի լրիվ միատեսակ կառուցվածքով, որ դրա հավանականությունը հավասար է ընդամենը 1:4: 1882թ. նա առաջարկեց հանցագործների անտրոպոմետրական հաշվառման և նույնացման մեթոդ, որը հիմնված էր Կետլեյի հաշվարկների վրա:

¹ Ю. Торвальд, Век криминалистики, М. 1984г., էջ 20:

² Նույն տեղում, էջ 23:

³ Կետլեն, Բելգիացի վիճակագիր, զբաղվում էր ոչ միայն կրիմինալիստիկայով, այլև փորձում էր ապացուցել, որ մարդու օրգանիզմի զարգացումը ենթարկվում է որոշակի օրենքների: Դեռևս մանուկ հասակից նա հոր և պապի հետ ստեղծեց «Կետլեյի կամարը», որը ցույց էր տալիս, թե ինչպես մարդու մարմնի չափսերից կախված կարելի է որոշակի կարգով դասակարգել բոլոր անձանց:

Բերտիլյոնը առաջարկում էր կատարել 11 չափումներ, որն իր կարծիքով բավարար էր, որ կրկնակի ձերբակալման ժամանակ պարզվեր մարդու ինքնությունը: Այս մեթոդը ստացավ «Բերտիլյոնաժ» անվանումը և շուտով ներդրվեց բոլոր առաջավոր երկրներում, այդ թվում և Ռուսաստանում, որտեղ 1890թ. բացվեց առաջին անտրոպոմետրական բյուրոն:

1877թ. օգոստոսի 5-ին Հնդկաստանի մարզերից մեկի մայրաքաղաքում (Խուզլի)՝ անգլիացի չինովնիկ Ուիլյամ Հերշելը նամակ գրեց Բենգալիայի բանտերի գլխավոր տեսուչին, որում մասնավորապես ասված էր. «Կից ուղարկում եմ Ձեզ աշխատանք, որը բովանդակում է անձի իդենտիֆիկացման նոր մեթոդի նկարագրությունը: Այն վերաբերում է աջ ձեռքի ցուցամատի և միջին մատի դրոշմականման արտատիպին (հաճում պարզության վերցվում են միայն այդ երկու մատի դրոշմները): Դրոշմները ստանալու համար պիտանի է սովորական շտեմպելային ներկը... Նման դրոշմ ստանալու եղանակը հազիվ թե բարդ լինի գրասենյակային դրոշմակի արտատիպը ստանալուց...¹» և այլն:

Հերշելը ուսումնասիրեց իր սեփական և բազում հնդիկների մատնադրոշմները և զարմանքով նկատեց, որ մի անձից վերցված դրոշմները չեն կրկնվում այլ անձանց մոտ: Միշտ մատերի ծայրամասային հատվածների դրոշմները գծագրվում (արտատպվում) էին տարբեր կերպ: Նա սովորեց տարբերել այդ գծանախշերը և իմանալ անձանց ըստ «նրանց մատների նախշերի»: Իսկ «պապիլյար գծեր» անվանումը վերցրեց անատոմիայի դասագրքից:

19-րդ դարի վերջերին գիտնականների հիմնական ուշադրությունը գրավել էր ձեռագրերի փորձագիտական հետազոտությունը, որոնց կարիքը այնքան հաճախ էր զգացվում քաղաքացիական և քրեական դատավարություններում: 1895թ. լույս տեսավ Չեզարե Լոմբրոզոյի նոր գիրքը՝ «Գրաֆոլոգիան»: Նշենք, որ այդ ժամանակներում Լոմբրոզոն լայն ճանաչում ուներ որպես «Բնածին հանցագործի» հեղինակ: Գրքի հիմնական գաղափարը հանգում էր նրան, որ գրելու պրոցեսը մարդկային օրգանիզմի բնական ֆունկցիան է: Չեռագիրը «անձի հայելին է», որն արտացոլում է նրա «բնական» ստոր հատկությունները: Ըստ էության դա նույն «բնածին հանցագործի» տեսությունն էր՝ տեղափոխված փորձագիտական հողի վրա²:

Չեռագրաբանության մեջ գրաֆոմետրական ուղղությունը ծագեց և զարգացավ հատկությունների նկարագրության մեթոդի ծաղկման ժամա-

¹ Ю. Торвальд, Век криминалистики, М. 1984г., էջ 30:

² Криминалистика (кол. авторов), уч. для вузов, под. ред. Р. С. Белкина, М. 1999г., էջ 3:

նակաշրջանում: Այդ կապակցությամբ է. Լոկարը գրեց, որ հիշյալ մեթոդի հիմնադիր Բերտիլյոնը «կատարեց այն թանկ վճարվող սխալը, որ գրաֆիզմի վրա չտարածեց վերլուծության և չափումների մեթոդները: Մեծության հասկացությունը գրավոր փաստաթղթերի հասկացության մեջ մտցնելը նշանակում է նրան դնել գիտական հետազոտության այն ուղու վրա, որը պահանջում է անցումը որակականից քանակականին. գիտե՞նալ՝ չափելն է¹»:

Հիշատակության արժանի է նաև այն, որ «գրաֆոլոգիա» բառն առաջինը հանդիպում է 1871թ. Աբբատ Միշոնի ստեղծագործություններում:

Ի. Մորգենշտերնի «Պսիխոգրաֆոլոգիա» աշխատության մեջ նշվում է այդ ուղղության ծնունդը: Այն որոշ տարբերություններով նմանվում է ձեռագրի բնութագրին և նրանում տեղ գտած անհատականացնող հատկանիշներին, որոնց մասին կխոսենք սույն աշխատանքի համապատասխան գլխում՝ և մեր կարծիքով ճիշտ, ժամանակակից, մեկնաբանություններով: Կարծում են՝ հետաքրքիր կլինի ընթերցողին հաղորդել որոշ փաստեր, որոնք համառոտ ներկայացնում են:

Վերածննդի դարաշրջանում, երբ գրչությունը շատ զարգացավ և համարյա դարձավ համընդհանուր սեփականություն, գրաֆոլոգիան առաջին անգամ համարվեց լուրջ քննարկման և հետազոտման առարկա: 1622թ. հրատարակվեց ձեռագրի մասին առաջին աշխատանքը՝ իտալացի Բալդոյի հեղինակությամբ, որը կոչվում էր՝ «Այն մասին, թե ինչպես կարելի է իմանալ գրողի բնավորությունը և հատկությունները» գիրքը 40 տարի անց Պետրոս Մեծի կողմից թարգմանվեց լատիներեն: Իր ստեղծագործության հիմքում Բալդոն դրեց «Մագիլներից ճանաչում են առյուծին» առածը:

Ժամանակի ոգուն համապատասխան (այն ժամանակներում նույնիսկ ամենաբարձր պաշտոնյաները անգրագետ էին)՝ Բալդոյի աշխատանքը լայն տարածում չստացավ:

Բալդոյի ժամանակակիցն էր անատոմիայի և վիրաբուժության պրոֆեսոր Մարկ Ավրելիյ Սևերինսը՝ Նեապոլում: Նա հեղինակեց «Մարգարեություն կամ գուշակումը ձեռագրով» աշխատանքը, որը չիրատարակվեց: 1678թ. «Le Mercure galant» թերթում տպագրվեց նրա նամակը. «Հատկանիշներ, որոնք կարելի է առանձնացնել գրելու սովորություններից» վերնագրով: Կարծում ենք՝ առավել առաջադիմական էր գերմանացի Իոհան Բրիստիան Հրոմանը, որը 1722թ. փորձեց ֆիզիոլոգիական բա-

¹ Տե՛ս Ի. Փ. Крылов, В мире криминалистики, Л. 1980г., т. 2 174:

ցատրություն տալ ձեռագրի և այն կատարողի բնավորության համապատասխանությամբ: «Բայց այդ բացատրությունը մանկականորեն պարզունակ էր: Հորմանը պնդում էր, որ ձեռագրով կարելի է որոշել հասակը, մարմնակազմությունը, ձայնը, աչքերի և մազերի գույնը, նույնիսկ այտերին եղած խալերը¹»:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ գրաֆոլոգիան չպետք է կապել միայն Չեզարե Լոմբրոզոյի անվան հետ: Լոմբրոզոյի մասին կխոսենք մի փոքր ուշ:

Չեռագրերի և գրի հետազոտման գործում իրենց ավանդն ունեն մաև Բերտիլյոնը և Լոկարը:

Բնական և տեխնիկական գիտությունների տվյալները հանցագործությունների բնության մեջ ներդնելը, ապացույցների հավաքման մեթոդների ու միջոցների մշակումն ու համակարգումը, ինչպես նաև քննության պլանավորումն ու կազմակերպումն իրականացրեց ավստրիացի դատական քննիչ Հանս Հրոսը: Հանս Հրոսը ապրում և գործում էր Ավստրիայի Հրաց քաղաքում: Նա քննում էր հանցագործություններ՝ միաժամանակ փնտրելով այն հարցերը, որոնք լուծում էին պահանջում և այն գիտելիքները, որոնք օգտակար կարող են լինել զննության, հարցաքննությունների, փորձաքննությունների իրականացման ժամանակ: Նա առաջնակարգ նշանակություն էր տալիս քննիչի անձին, նրա բարոյական, կամային, ինտելեկտուալ հատկանիշներին: Նա գտնում էր, որ քննիչը պետք է ունենա մարդկային բոլոր դրական հատկությունները: Հ. Հրոսի դատողություններն ու տեսական վերլուծությունները մինչև օրս տեղ են գտել եվրոպական, այդ թվում ռուսական դասագրքերում:

1897թ. Ավստրիայի Լինց քաղաքում նրա ակտիվ մասնակցությամբ հրավիրված կրիմինալիստների միջազգային համաժողովի մասնակիցները նրան անվանեցին կրիմինալիստիկայի հայր:

Հետագայում՝ 20 տարվա քննչական աշխատանքից հետո, Հ. Հրոսը Չերնովիցների համալսարանում անցավ դասախոսական աշխատանքի: 1902թ. Գրացե քաղաքում նա ստեղծեց պատմության մեջ առաջին քրեական թանգարանը: 1892թ. հրատարակվեց նրա «Ուղեցույց դատական քննիչների, ժանդարմերիայի և ոստիկանության համար» ֆունդամենտալ աշխատությունը, որտեղ նա համակարգեց ապացույցների հետ աշխատելու ժամանակին հայտնի բոլոր միջոցներն ու հնարքները, մշակեց մի

¹ Մեջբերումը և վերը նշված տվյալները վերցված են *И. Моренштерн, Психографология, Санкт-Петербург 1994г., գրքից, էջ 4-6:*

շարք ինքնատիպ հանձնարարականներ հետքերի և իրեղեն ապացույցների հայտնաբերման, վերցման, հետազոտման համար և այլն: Նա մեծ նշանակություն էր տալիս տեխնիկայի կիրառմամբ հայտնաբերված, վերցված, հետազոտված հետքերին, իրեղեն ապացույցներին. «Հայտնաբերված և օգտագործված հանցագործության հետքերը, կանոնավոր կազմված գծագրերը, թեկուզ և ոչ բարդ որևէ մանրադիտակային պատրաստուկը, վերծանված գրագրությունը, լուսանկարները, դաջվածքները, ածխացած գրերի վերականգնումը, որևէ ճշգրիտ չափումը և հազարավոր նման իրական գործողությունների էությունը ոչ այլ ինչ են, քան անկաշառ վկաներ, որոնք հերքում չեն թույլատրում¹»:

Վերոհիշյալ աշխատություններում, ինչպես նաև «Կրիմինալիստիկական հոգեբանություն» գրքում Հ. Հրոսը ընդհանրացրեց այն բոլորը, ինչ կար կրիմինալիստիկայում անցյալ ժամանակներում: Բնագիտական գիտելիքները իրենց արտացոլումը գտան դրանց առանձին գլուխներում՝ իրեղեն ապացույցների մասին, նույնացման մասին ուսմունքում, դեպքի տեղի զննության, հարցաքննության և առանձին տեսակի հանցագործությունների քննության մասին գլուխներում: Նրա աշխատությունները էական ազդեցություն ունեցան համաշխարհային կրիմինալիստիկայի զարգացման համար: Նկատենք, որ Հրոսի ժամանակներում բացակայում էին կրիմինալիստիկային նվիրված տեսական, հատկապես մեթոդոլոգիական ծավալուն աշխատանքներ, որոնք կլուսաբանեին տարբեր պրոբլեմներ: Դա է պատճառը, որ գերմանացի կրիմինալիստ Բ. Պֆիստերը խորհրդային կրիմինալիստների աշխատությունների ազդեցության տակ հանգեց այն եզրակացության, որ «կրիմինալիստիկան, որպես հանցագործությունների քննության գիտություն, առանց տեսական հիմքերի, մարմին է՝ առանց գլխի²»:

Չարգացած շատ երկրներում կրիմինալիստիկայի գիտության համակարգը մշակված չէ, որը հանգեցնում է նրա էության անկարգ, չհամակարգված շարադրանքի: Կրիմինալիստիկայի վերաբերյալ աշխատանքներում գերակշռում է կառուցողականի առարկայական սկզբունքը (ձեռքերի, ոտքերի, գործիքների հետքեր, հրագեն, թույներ, արյուն, մազեր, մազմզուկներ, փաստաթղթեր և այլն): Ակնհայտորեն ընդգծվում են հետազոտության կենսաբանական, քիմիական և ֆիզիկական մեթոդներ-

¹ Криминалистика, уч. для вузов, м. 1963г., т. 19:

² Васильев А. Н., Яблоков Н. П., Предмет, система и теоретические основы криминалистики, М. 1984г., т. 344:

ըը, որոնք միայն համապատասխան բնագավառի մասնագետներին են մատչելի:

Քննչական տակտիկայի և առանձին հանցագործությունների քննության մեթոդիկայի հարցերը, ըստ ֆրանսիական և անգլո-ամերիկյան գիտնականների, կրիմինալիստիկայի առարկային չեն վերաբերում: Ֆ. Կլայնշմիդտի կարծիքով կրիմինալիստիկան կազմված է կրիմինալիստիկական տակտիկայից և տեխնիկայից¹: Իսկ քննության մեթոդիկան՝ որպես կրիմինալիստիկայի ինքնուրույն բաժին, չի ընդունվում:

20-րդ դարի սկզբին լայն ճանաչում ստացավ Է. Լոկարի ծավալուն աշխատանքը՝ «Կրիմինալիստիկայի ձեռնարկ»-ը, որի երկրորդ հատորը ռուսերեն հրատարակվեց 1940թ.: Ըստ էության, Լոկարը առաջինը զբաղվեց փոշու և այլ միկրոօբյեկտների հետազոտությամբ և մշակեց մատնահետքերի փոսիկներով (պորերով) կատարվող նույնացմամբ (պորոսկոպիա): Նա երկար տարիներ ղեկավարել է Լիոնի ոստիկանական լաբորատորիան, որը հիմնադրել էր դատական բժիշկ Լակասանը:

1924թ. Բեռլինի քրեական հետախուզության պետ Հանս Շենյեկերտը մշակեց հանցագործների հետքերի հետ աշխատելու հնարքներ: Նույն թվականին նա գլխավորում էր Բեռլինի իդենտիֆիկացման բյուրոն, Բեռլինի համալսարանում դասախոսում էր կրիմինալիստիկա առարկան: Հրատարակել է «Քրեական տեխնիկայի ներածություն», «Պրակտիկ ձեռնարկ քրեական հետախուզության աշխատողների համար» (համահեղինակությամբ Վ. Շտիբերի), «Հանցագործի գաղտնիքը և այն բացահայտելու ուղիները» և այլ աշխատանքներ: Այդ տարիներին մեծ ակտիվությամբ էր աշխատում նաև գերմանացի կրիմինալիստ Ռոբերտ Հեյդները: Նրա աշխատանքներից ուշագրավ են, «Դակտիլոսկոպիան և քրեական տեխնիկայի այլ մեթոդները հանցագործությունների քննության գործում», «Քրեական տեխնիկա», «Քրեական հետախուզության արհեստանոցից» և այլն:

Մի քանի տեղեկություն մարդաբանական տեսության հիմնադիր համարվող Չ. Լոմբրոզոյի մասին. Ա. Մ. Լարինը իր «Կրիմինալիստիկա և պարակրիմինալիստիկա²» աշխատության մեջ գրում է. «1897թ. օգոստոսի 15-ին Լ. Ն. Տոլստոյը իր օրագրում գրել է. «Այստեղ էր Լոմբրոզոն՝ սահմանափակ, պարզունակ ծերուկը»: Հեղինակը կարծում է, որ Լ. Տոլստոյի կարծիքը հանցագործների վերաբերյալ գիտության մարդաբանա-

¹ Федда Б. И., Аналитические возможности инструментальных методов, серия химия за рубежом, вып. 2, М. 1981г.

² А. М. Ларин-Криминалистика и паракриминалистика, М. 1996г., т. 2: 87:

կան ուղղության առաջնորդի մասին անսպասելի է, քանի որ խոսքը այն մարդու մասին է, որն իր կյանքի մեծ մասը նվիրել է բժիշկների և դատավորների, ոստիկանների և ժանդարմների հովանավորությանը, երեսունից ավելի տարիներ ղեկավարել է համալսարանի դատական բժշկության ամբիոնը, մասնակցել է բազմաթիվ միջազգային կոնգրեսների և այլն: Այդ հանդիպումից 20 տարի առաջ (1876թ.) նա (Չ. Լոմբրոզոն) հրատարակել էր «Հանցագործ մարդ» գիրքը, որը սենսացիա էր առաջացրել գիտական շրջանակներում:

Ահա թե ինչ է նա գրել այդ մասին. «Մի մռայլ, դեկտեմբերյան օրվա առավոտյան հանկարծ մի տաժանակրի գանգի վրա ես հայտնաբերեցի մի ամբողջ շարք անկանոնություններ... նման նրանց, որոնք լինում են ներքին ողնաշարի վրա: Իրենց արտաքին տեսքով այդ տարօրինակ անկանոնությունները կարծես թե նոր լույս սփռեցին մութ հարթության վրա, մինչև հորիզոն, և ես հասկացա, որ հանցագործի էության և առաջացման պրոբլեմն ինձ համար լուծվեց¹»:

Այդ դիտարկման արդյունքը լինում է այն, որ Լոմբրոզոն ուսումնասիրում է խտալական բանտերում գտնվող մոտ 400 բանտարկյալների, որոնց 43%-ի մոտ նա հայտնաբերում է հինգից ավելի ֆիզիկական անոմալիաներ, որոնք նրա մեկնաբանությամբ համարվում են «բնածին հանցագործների նշաններ», այսինքն՝ դրանց կրողները ժառանգական հատկությունների շնորհիվ իրենց ծննդյան օրից ընդունակ են հանցագործությունների:

Լոմբրոզոն և նրա համախոհները այն կարծիքին են, որ բնածին հանցագործի ձեռքերը գերազանցում են հասակը, որը նրան նմանեցնում է կապիկի, գանգը ունի անկանոն ձև, գագաթը նեղ է՝ ունի բուրգի ձև կամ հակառակը՝ նեղանում է ներքևի մասում կամ կողքերից տափականում է: Նրանց ծնոտը ընդգծված է, ականջները՝ կախ, խիստ զարգացած են հոնքատակի աղեղները:

Ըստ Լոմբրոզոյի՝ այդ անձինք միմյանց հետ հաղորդակցվում են առանձնահատուկ ժարգոնով և չեն դիմանում առանց դաջվածքների: Տարբեր տեսակի հանցագործներ ունեն յուրահատուկ արտահայտված բնութագրեր: Օրինակ՝ նա գտնում է, որ մարդասպաններն ունեն սառը, անշարժ, ապակյա, զիշատիչ թռչունի նեղ հայացք, մսալի քիթ, երկար ականջներ, մարմնի մազածածկույթը չափազանց խիտ, երկար ատամներ:

¹ Սույն մեջբերումը վերցված է. Курс советской криминологии, под. ред. В. Н. Кудрявцева, И. И. Карпеца, Б. В. Коробейникова, М. 1985г., էջ 106:

րով, դուրս ցցված ժանիքներով և բարակ շուրթերով: Գողերին Լոմբրոզոն բնութագրում է արագաշարժ աչքերով, շարժուն դիմագծերով, սեքսուալ հանցագործներին՝ հաստ շուրթերով, խոշոր ծնոտով և այլն:

Հետագայում նա բնածին հանցագործ համարեց նաև հեղափոխականներին: Հեղափոխական շարժումը համարեց որպես էպիլեպսիայի երևույթ և «բարոյական խելագարություն»: Այդ մասին նա իր հետևորդ Լասկայի հետ համատեղ շարադրեց «Քաղաքական հանցագործություն» գրքում¹:

Լոմբրոզոյի ուսմունքի իմաստը, ըստ նրա, ոստիկանների, քննիչների, դատավորների, ազատագրկման վայրի աշխատողների աշխատանքը հեշտացնելն է, քանի որ այն պրակտիկայում ներդնելով, անհրաժեշտություն չի զգացվի այդ անձանց դատել, որովհետև նրանք (բնածին հանցագործները) հանցանք կատարում են ոչ թե չար կամքի ուժով, այլ իրենց հոգեկան ու ֆիզիոլոգիական թերությունների հետևանքով, որոնք պատժելու միջոցով անհնար է ուղղել: Դրա համար էլ նա առաջարկում էր դատարանի փոխարեն կասկածյալներին ենթարկել բժիշկ լոմբրոզոյականներից կազմված հանձնաժողովի ստուգման և ըստ նրանց եզրակացության՝ ենթարկել պրոֆիլակտիկ միջոցառումների՝ բուժման, ախտահանման, մահապատժի: Նա գրում էր. «Կառափնարանն օգնում է մաքրել բնությունը և վեհացնել սրտերը²»:

Հարկ է նշել սակայն, որ թեև նրա աշխատությունները ուշադրության արժանացան Իտալիայում և շատ այլ երկրներում, դրանք, սակայն, զերծ չմնացին ստուգումներից և գիտական քննադատություններից, որոնց արդյունքում պարզվեց, որ Լոմբրոզոն իր ուսումնասիրությունները կատարել է՝ չունենալով հսկիչ խմբեր, այսինքն՝ համապատասխան թվով անձինք, որոնք հանցագործություններ չեն կատարել, բնութագրվում են դրականորեն, բայց ուսումնասիրվել են նույն՝ հանցագործների ծրագրով:

Նման խմբերի կազմումից հետո պարզվեց, որ Լոմբրոզոյի կողմից նկարագրված «բնածին հանցագործներին» բնութագրող հատկանիշները առկա են նաև այն անձանց մոտ, որոնք հանցագործությունների հետ կապ չեն ունեցել: Այս տեսությունը արդարացիորեն սնանկ ճանաչվեց աշխարհի մի շարք անտրոպոլոգների ու բժիշկների կողմից:

Այս թեմային քանիցս անդրադարձել է նաև Հանս Հրոսը, որը 19-րդ դարի վերջերին գրեց. «Լոմբրոզոն մեծ համազումարներում, հատկապես՝

¹ А. М. Ларин, Криминалистика и паракриминалистика, М. 1996г., т. 88:

² Г. Гросс, Руководство для судебных следователей как система криминалистики, СПб, 1908г., т. 9 150-154:

Փարիզում, Բրյուսելում, Ժնևում որևէ դեր չխաղաց: Իսկ երբ մի քանի տարի առաջ նա մերկացվեց անվիճելի գրագողության համար (Կրեմլե «Գրաֆոլոգիա»), ապա ոչ ոք նույնիսկ դրա վրա ուշադրություն չդարձրեց»:

Իսկ ընդհանրապես Հանս Հրոսի կարծիքը հետևյալն է. «Մասամբ իսկական գիտնականի բացակայությունը, մասամբ լուրջ գիտական պատրաստվածության բացակայությունը, մասամբ փաստերի պարզունակ մեկնաբանությունը և ոչ ցածր աստիճանի, ինքնաներշնչման նշանակալից չափը, այդ բոլորը միասին վերցրած բացատրում է Լոմբրոզոյի կտրուկ թռիչքների և ընդհանրապես նրա թեզերի սնանկությունը»¹:

¹ Տե՛ս նույն աշխատանքը, էջ 155:

ԳԼՈՒԽ 8. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Այս թեման լիարժեք ներկայացնելու նպատակով անհրաժեշտ ենք համարում, նպատակահարմարության սահմաններում հանգամանորեն անդրադառնալ կրիմինալիստիկայի գիտության և կրիմինալիստիկական փորձաքննությունների պատմությանը Ռուսաստանում, քանի որ, ինչպես նշեցինք, մեր Հանրապետությունում այն սկիզբ է առել Ռուսաստանից, և այստեղ գործող կրիմինալիստ գիտնականները իրենց պատրաստվածությունը ստացել են Ռուսաստանի համապատասխան գիտական օջախներում:

Հրապարակի վրա եղած դասագրքերում՝ հրատարակված ՌՍՖՍՀ-ում և Ռուսաստանի Դաշնությունում, կրիմինալիստիկայի պատմությունը հիմնականում սկսվում է Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո:

Մինչև հեղափոխական ռուսական կրիմինալիստիկական սպասարկում էր ցարական Ռուսաստանի պատժիչ մարմիններին, դրա համար էլ նրա պատմությունը կապված է ցարական դատարանի, ժանդարմերիայի և քրեական ոստիկանության հետ:

Ցարական ժամանակաշրջանի կրիմինալիստներից շատերը՝ Ե. Ֆ. Բուրինսկու գլխավորությամբ, ստեղծեցին գիտական գնահատելի ժառանգություն, որը հիմնականում վերաբերում էր իրեղեն ապացույցների հետազոտման բնագավառին:

1950թ. հրատարակված կրիմինալիստիկայի դասագրքում մինչև հեղափոխական ռուսական կրիմինալիստիկայի պատմությունը սկսվում է 19-րդ դարի 90-ական թվականներից¹: Դրան կարելի է համաձայնվել, եթե նկատի ունենանք Ռուսաստանում առաջին փորձագիտական հիմնարկների կազմավորվելը: Պետք է նկատի առնել, որ աշխարհում առաջին կրիմինալիստիկական լաբորատորիան իրեղեն ապացույցների հետազոտման համար ստեղծվել է Ռուսաստանում: Բայց այդ մասին մանրամասն կխոսենք քիչ հետո:

Դեռևս 19-րդ դարի 40-ական թվականներին Ռուսաստանում աշխատանքներ երկացին նախաքննության կատարման մասին՝ գրված

¹ Դասագիրքը գրված է հեղինակային կոլեկտիվի կողմից՝ Ա. Ի. Վինբերգ, Բ. Մ. Կոմարինեց, Ս. Պ. Միտրիչև և այլք:

Բրաշևի և այլոց կողմից: Մինչհեղափոխական ռուսական հետազոտողները ընդգծում էին, որ Ռուսաստանում կրիմինալիստիկայի զարգացումը պայմանավորված է բացառապես քրեական հանցագործությունների դեմ պայքարով: Փաստորեն ռուսական մինչհեղափոխական կրիմինալիստիկայի կողմից մշակված արդյունավետ մեթոդները սկզբում կիրառվում էին ժանդարմական կորպուսում, հետո՝ ներդրվում քրեական ոստիկանության պրակտիկայում: Օրինակ՝ Ռուսաստանի ժանդարմերիան մատնադրոշմային գրանցումից օգտվում էր 1905թվականին, իսկ քրեական ոստիկանությունում այն ներդրվեց միայն 1907 թ. վերջերից:

Ռուսաստանում կրիմինալիստիկայի հարցերի մշակումը և տեխնիկական հնարքների ներդրումը հետաքննության և նախաքննության իրականացման գործում իրականացվում էին ոստիկանական, դատական և իրավաբանական ուսումնական հաստատությունների գծով:

19-րդ դարի կեսերին դատարանները մի շարք մասնագիտական հարցեր լուսաբանելու համար դիմում էին գիտնականներին: Պատմությանը հայտնի է, որ այդ շրջանում փորձագիտական գործունեություն է ծավալվել գիտությունների ակադեմիայի քիմիական լաբորատորիայում՝ ակադեմիկոսներ Յու. Ֆ. Ֆրիցշեի և Ն. Ն. Ջինինի կողմից: Որոշակի բնույթի քիմիական հետազոտություններ են իրականացվել Դ. Ի. Մենդելևեի կողմից:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Դ. Ի. Մենդելևեի կարծիքը «Փորձագետի դերը դատարանում» գրքի մասին, որի քննադատությամբ նա հանդես էր եկել «Դատական տեղեկատուում»: Նա գրում է, որ հիմնավորված եզրակացություն կարելի է տալ միայն հետևյալ դեպքերում.

1. երբ գործի հանգամանքները վաղօրոք հայտնի են,
2. երբ փորձաքննության ենթակա առարկաները իսկապես հետազոտվել են,
3. եթե իրոք հնարավորություն կա տալու սեփական եզրակացությունը:

«Մեր դատարանների պրակտիկայում, որքանով ինձ հայտնի է, փորձագետը հնարավորություն չունի եզրակացություն կազմելու այն պատճառով, որ նրան գործի վերաբերյալ նախօրոք որևէ տեղեկություն չի հաղորդվում, հետազոտման համար նրան չեն տալիս ոչ մի առարկա, նրան նույնիսկ հնարավորություն չեն տալիս արտահայտելու իր դատողությունները այն հանգամանքների մասին, որոնք նա գիտենալու է դատական քննության ժամանակ»: Նման պայմաններում, ընդգծում է Դ. Ի.

Մենդելեևը, «փորձագետի դերը և նրա հատուկ գիտելիքներից սպասվող օգուտը նշանակալից փոխվում է վնասի այն ճշմարտության նկատմամբ, որը որոնվում է դատարանում¹»:

Թեև քիչ, բայց որոշ աղբյուրներ նշում են նաև ռուս մեծ քիմիկոս Ա. Մ. Բուտլերովի՝ որպես դատական փորձագետի, գործունեության մասին:

Մինչհեղափոխական ռուսական կրիմինալիստ հեղինակներից գրականության մեջ համդիպում են գեներալ Լեբեդևը, ժանդարմական բժիշկ Պրոխորովը, գավառական ոստիկանապետ (խսարավճիկ) Սնեգիրյովը և այլք:

Ոստիկանական կրիմինալիստների այդ խումբը գլխավորապես զբաղվում էր հետախուզման կազմակերպմամբ, ժանդարմաոստիկանական հաշվառմամբ, կրիմինալիստիկական տեխնիկան հետախուզման հետ համագործակցելու համակարգի ստեղծմամբ: Դատադատախազական գերատեսչության կրիմինալիստների մի խումբ կազմված էր արդարադատության նախարարության ավագ իրավախորհրդատու, գեներալ Տրեգուբովից, Տվերյան օկրուգային դատարանի դատախազ Պոպովից և այլն: Նրանք գլխավորապես մշակում էին իրեղեն ապացույցների հետազոտման հարցերը: Կրիմինալիստիկայի հարցերով զբաղվում էին նաև մի շարք ռուս իրավաբաններ՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների դասախոսներից պրոֆեսոր Բարշև, պրոֆեսոր Կոլոկոլով, Կվաչևսկի և այլն: Նրանց աշխատանքներում մշակվում էին քննության տակտիկայի և մեթոդիկայի հարցերը, քրեական գործերի նյութերում:

Առավել վաղ շրջանի ստեղծագործությունները, որոնցում լուսաբանվում էին կրիմինալիստիկական բնույթի հարցեր, համարվում էին 19-րդ դարի առաջին կեսին Բարշևի և Կալայդովիչի կողմից հրատարակած աշխատանքները²:

Բարշևը, որը Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր էր, իր նշված աշխատության մեջ փորձ արեց ստեղծել հանցագործությունների քննության տակտիկայի հիմունքները, մշակել առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդիկան, ինչպես նաև իրեղեն ապացույցների հավաքման և պահպանման համակարգը:

¹ Менделеев Д. И., Об экспертизе в судебных делах, Судебный вестник, 1870г., №291, Մեջբերումը վերցված է՝ И. Ф. Крылов-В мире криминалистики, Л. 1980г., էջ 86-87:

² Баршев Я. “Основания уголовного судопроизводства с применением к Российскому уголовному судопроизводству СПб”, 1841г., Калайдович, “Указания для производства уголовных следствий”, СПб 1842г.

Աշխատանքում հեղինակը մեծ տեղ էր հատկացնում քննչական զննության հարցերին, մասնավորապես դեպքի տեղի զննության: Ինչպես առանձին բաժիններում. «անձնական զննություն», «հանցագործության անձնական զննության կերպը և նրա հետքերը», այնպես էլ «հատուկ տեսակի հանցագործությունների հետազոտման ու զննության կերպը» բաժնում հանդիպում են դեպքի տեղի իրադրության տակտիկայի և տեխնիկայի ուսումնասիրման և իրեղեն ապացույցների հավաքման ինքնատիպ վերլուծություն:

Բարշևը պահանջում էր, որ զննությունը կատարվի «ամենայն արագությամբ», քանի որ հակառակ դեպքում հնարավոր է կարևոր հետքերի և ապացույցների կորուստ: Չննության գործողության «կերպի» մասին Բարշևը խորհուրդ էր տալիս ուսումնասիրել «դիակի արտաքինը, նրա գույնը, նրա վրա հայտնաբերված բծերը, վերքերը, քերծվածքները, վնասվածքները»: Ըստ նրա՝ դիակի զննությունը պետք է կատարել բժիշկների, պաշտոնատար անձանց և «կողմնակի անձանց» պարտադիր մասնակցությամբ: Դեպքի տեղի զննությունը, ըստ նույն հեղինակի, պետք է իրականացվի ոչ միայն սպանության, այլև ուրիշ հանցագործություններ քննելիս, օրինակ՝ գողություններ: Չննության «մատյանի» (արձանագրության) բովանդակության մասին Բարշևը գտնում էր, որ նրանում պետք է լինի «այնքան մանրակրկիտ և լրիվ նկարագրություն, որ ովքեր օգտագործեն այդ փաստաթուղթը, կարողանան լրիվ և պարզ պատկերացում ստանալն զննության առարկայի մասին այնպես, որ կարծես թե իրենք են կատարել այն¹»:

Նույն աշխատության մեջ հեղինակը նշանակալից տեղ է հատկացրել թաքնված հանցագործի և անհետ կորած անձանց հետախուզման մեթոդիկային: Իր աշխատանքի չորրորդ գլուխը Բարշևը նվիրել էր «Հատուկ սեռի (տեսակի) հանցագործությունների գործերով հետազոտությունների ու զննության կերպին»: Նկարագրվում է, մասնավորապես, սպանության, ինքնասպանության, գողության, կեղծիքի, սնանկացման գործերի քննության մեթոդիկան:

1849թ. Վյատկայի դատական պալատի նախագահ Կալայդովիչը գիրք հրատարակեց՝ «Քրեական քննության կատարման համար ցուցումներ» վերնագրով, որը, ըստ հեղինակի մտահղացման, պետք է համարվեր քննչական շինովնիկների և ոստիկանության համար սեղանի գիրք:

¹ Я. Баршев, Основания уголовного судопроизводства с применением к Российскому уголовному судопроизводству. СПб, 1841г., т2 76, 128-132, 149-154:

Մի շարք հարցերում նա կրկնեց Բարշևին, բայց եթե Բարշևը գրել էր քրեական դատավարության դասագիրք և քննության հարցերին նվիրել էր աշխատանքի մի մասը միայն, ապա Կալալդովիչը իր գիրքը նվիրել էր միայն հետախուզմանն ու քննությանը, համակարգված շարադրել էր հետախուզմանն ու քննությանն տակտիկայի բաժինները:

Հետաքրքիր տեղեկություններ կան 19-րդ դարի քրեական գրանցման և հաշվառման վերաբերյալ: 60 տարուց ավել համասպատասխան մարմինները օգտվում էին միջնադարյան մեթոդից, այն է՝ խարանումը:

Յարի 1724թ. հունվարի 15-ի հրամանագրով դրան ենթարկվում էին տաժանակիր աշխատանքների դատապարտված անձինք: Հետագայում խարանման ենթակա անձանց կատեգորիան ընդլայնվեց: Այն վերացվեց 1863թ.:

Քանի որ խարանումը, որպես քրեական հաշվառման միջոց, կենսունակ չէր, մինչև նրա վերացնելը, երկար ժամանակ ոստիկանական չինովնիկները փորձ էին անում գտնել հաշվառման այլ մեթոդներ: Մասնավորապես պրակտիկայում կիրառվում էր դատապարտյալների, կասկածյալների, հետախուզվողների արտաքինի նկարագիրը: Սակայն այն ժամանակներում քրեական հետախուզության բնագավառում հատկանիշների նկարագրությունը հաջողություն չունեցավ: Այդ գծով կենտրոնացված հաշվառում չկար:

1862թ. Պետերբուրգի ոստիկանությանը կից կազմակերպվեց լուսանկարչական բյուրո: Ժանդարներիան լուսանկարչությունից օգտվում էր ավելի վաղ՝ 50-ական թվականներից: Պետերբուրգի օրինակով ոստիկանական լուսանկարչական տաղավարներ ստեղծվեցին նաև մի քանի այլ խոշոր ոստիկանական վարչություններում:

60-ական թվականներին երևան եկան բազմաթիվ ձեռնարկներ հետախուզության և քննության վերաբերյալ:

Դրանց թվից մինչհեղափոխական կրիմինալիստիկայի ուսումնասիրման համար ուշադրության արժանի է նախ՝ Կվաչևսկու երկհատոր աշխատանքը՝ «Քրեական հետապնդման, հետաքննության և հանցագործությունների նախնական հետազոտման մասին» ըստ 1864թ. դատական կանոնակարգի», որը հրատարակվեց 1867-ին: Կվաչևսկին անհրաժեշտ էր համարում համառուսական մասշտաբով ստեղծել ոստիկանական հաշվառում, գրանցել (հաշվառման ենթարկել) չբացահայտված հանցագործությունները և մանրակրկիտ գաղտնի հսկողություն իրականացնել կասկածելի տարրերի նկատմամբ: Դրա հետ մեկտեղ Կվաչևսկին խոսում էր քննչական զննությունները, հատկապես չճանաչված դիակների

զննությունները ճիշտ և լիարժեք կատարելու անհրաժեշտության մասին, փորձում էր մշակել զննության տակտիկան ու տեխնիկան, մահվան պատճառը պարզաբանելու մեթոդիկան և սպանության քննության մեթոդիկան:

1872թ. Պետերբուրգի ոստիկանությունում ստեղծվեց առաջին ոստիկանական դպրոցը, որտեղ դասավանդում էին իրավաբանական մի շարք, այդ թվում քննության տակտիկան ընդգրկող առարկաներ:

1890թ. Ռուսաստանում մտցվեց ոստիկանական հաշվառման նոր, կոմբինացված մեթոդ, որը հիմնված էր մարդաբանության և լուսանկարչության վրա:

Ռուսական կրիմինալիստիկայի պատմության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Եվգենի Ֆեոդորովիչ Բուրինսկին, բազմակողմանի զարգացած, վերլուծական մտքի տեր մի հետազոտող, որը գիտելիքներ ուներ ֆիզիկայից: Նա իր կյանքի մեծ մասը մվիրեց փաստաթղթերի գիտական հետազոտման մեթոդների մշակմանը: Ժամանակակից կրիմինալիստները գնահատում են Բուրինսկի գիտնականին՝ կրիմինալիստիկայի գիտությանը մատուցած ծառայությունների համար: Նրան համարելով դատական ձեռագրաբանության հիմնադիրը՝ խորհրդային մասնագետները, սակայն, երկար տարիներ քննադատում էին նրան այն ստեղծագործությունների համար, որտեղ նա կանգնած էր գրաֆոլոգիայի դիրքերում Չ. Լոմբրոզոյի դպրոցի կողմնակիցների հետ:

Ե. Բուրինսկին դատական գերատեսչությունների չինովնիկների շրջանում հեղինակություն չուներ և իր գիտական հետազոտությունների կապակցությամբ նրանց բարյացկամությունից չէր օգտվում: Նա արդարադատության չինովնիկ չհամարվեց և չդարձավ դատարանի անդամ: Բուրինսկու կողմից կատարված փորձաքննություններում կիրառվում էին ժամանակի տեխնիկական նորագույն միջոցները:

Բուրինսկու կողմից մշակված շատ մեթոդներ՝ ծածկված տեքստերի պարզաբանումը, ջնջման և կերպածման փաստի հայտնաբերումը և վերացված բովանդակության բացահայտումը, ստորագրությունների տեխնիկական պատճենահանման պարզաբանումը և այլն, լայն կիրառում ունեցան ինչպես Ռուսաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

1889 թվականին Ե. Ֆ. Բուրինսկին կազմակերպեց Ռուսաստանում և աշխարհում առաջին գիտահետազոտական դատալուսանկարչական լաբորատորիան: Վերջինիս հաջողությունները տեսնելով (հատկապես դատական հետազոտական լուսանկարչության բնագավառում) արդարադատության նախարարությունը որոշեց ստեղծել իր պաշտոնական

լաբորատորիան, որն սկսեց գործել 1893թ. նոյեմբերին՝ Պետերբուրգի դատական պալատի դատախազին կից:

Ե. Ֆ. Բուրինսկին հրավիրվեց գլխավորելու այդ լաբորատորիան: Նա մերժեց այդ առաջարկը՝ գտնելով, որ փորձագետի ենթակայությունը քրեական հետապնդման մարմնին անընդունելի է: «Անհնար է ժխտել, հետագայում գրում է նա, որ այդ ծառայական կախումը շատ դեպքերում պետք է վնասակար ազդի փորձագետի գործողություններին և ճնշում գործադրի նրա խղճի վրա՝»:

Բուրինսկու լուսանկարչական մեթոդները իրենց հետագա զարգացումը ստացան այլ ռուս գիտնականների, մասնավորապես նրա հետնորդների՝ Վ. Ի. Ֆավորսկու, Ն. Ա. Պետրովի և այլոց աշխատանքներում՝ պատկերների ցայտերանգի ուժեղացումը, որը հաջողությամբ կիրառվեց դատական լուսանկարչության մեջ, անտեսանելի գրառումների հայտնաբերման գործում, հնագիտության և միկրոլուսանկարչության մեջ:

Քրեական ոստիկանության աշխատանքի ուժեղացման նկատառումներով Ռուսաստանում (20-րդ դարի սկզբին) ստեղծվեցին 89 հետախուզական բաժանմունքներ: Դրանց ստեղծումով մի շարք մարզերում և խոշոր քաղաքներում քրեական հանցագործությունների դեմ պայքարը կենտրոնացվեց հատուկ մասնագիտացված բաժիններում, որոնք օգտագործում էին կրիմինալիստիկայի նվաճումները:

Հետախուզական բաժանմունքների ներքին կառուցվածքի հիմնական մասը կազմում էր հաշվառման տեղեկատու բյուրոն, որի կազմում էին.

❖ Լուսանկարչությունը-անտրոպոմետրական (մարդաբանական) և դակտիլոսկոպիական (մատնադրոշմային) կաբինետներով, որտեղ կատարվում էին նաև հանցագործների արտաքինի նկարագիրը «բանավոր պատկեր»-ի համակարգով:

❖ Քարտային հաշվառում՝ լուսանկարներով, անտրոպոմետրական (մարդաբանական) և դակտիլոսկոպիական տվյալներով: Հաշվառման քարտերից երկու օրինակ ուղարկվում էր մարզի ոստիկանական գերատեսչության կենտրոնական տեղեկատու բյուրո:

❖ Տեղեկանքներ դատվածության մասին և տեղեկություններ տեղական բանտերում գտնվելու մասին:

❖ Հանցագործների և «անուղղելի վարքագծի» տեղ անձանց լուսանկարներով այրոմ: Այս անձանց լուսանկարների օրինակը ևս ուղարկվում էր կենտրոնական հաշվառման բյուրո:

¹ Буринский Е. Ф., Судебная экспертиза документов, СПб, 1903г., т. 7:

❖ Չեռագրերի, հանցագործության գործիքների, գողական գործիքների, խարդախության միջոցների և այլ հավաքածուներ:

❖ Տեղեկություններ ընթացիկ դիտարկումների վերաբերյալ, թերթերից վերցված տեղեկություններ:

Հաշվառման բյուրոն զբաղվում էր նաև կրիմինալիստիկական փորձաքննություններ կատարելով (փաստաթղթերի տեխնիկակրիմինալիստիկական հետազոտում, ձեռագրերի փորձաքննություն, տարբեր իրեղեն ապացույցների հետազոտում):

Բացի այդ, ոստիկանական դեպարտամենտը շրջաններ ուղարկեց հատկապես դակտիլոսկոպիային վերաբերվող հրահանգ, որտեղ մանրամասն խոսվում էր, մասնավորապես մատերի քրտնաճարպային դրոշմների մասին, այն մասին, թե ինչպիսի հարթությունների վրա են նրանք ավելի շատ պահպանվում, ինչպես դրանք որոնել, հայտնաբերել (հայտածել), լուսանկարել:

Այդտեղ նաև ցուցումներ էին տրվում դակտիլոսկոպիական փորձաքննության մասին, որը պետք է կատարվեր «մատնադրոշմային հաշվառման վարիչների» կողմից: Այդ շրջանում Լեբեղևի հեղինակությամբ հրատարակվեց «Դակտիլոսկոպիա» գրքույկը, որը բովանդակում էր հեղինակի կողմից մշակված մատնադրոշմային հաշվառման համակարգը:

Այդ հարցերի մշակմանը, բացի Լեբեղևից, մասնակցում էին մի շարք այլ ռուս կրիմինալիստներ: Օրինակ՝ Ռուսեցկին զբաղվում էր դեպքի տեղում ձեռքերի մատների քրտնաճարպային դրոշմների հայտնաբերման և ամրացման գործընթացի հետազոտություններով:

Փորձարարական երկարատև աշխատանքների արդյունքում նա ստեղծել էր թափանցիկ հետքապատճենահան թաղանթ, որը տալիս էր պոզիտիվային դրոշմ:

Ոստիկանության դեպարտամենտին կից հետախուզական բաժանմունքների կազմակերպմանը զուգընթաց ստեղծվում էին կրիմինալիստիկական դասընթացներ, որտեղ այդ բաժանմունքների պետերի հավակնորդները 1908թ. անցնում էին հատուկ պատրաստություն:

1908թ. հրատարակվեց գավառային ոստիկանական տեսուչ Գ. ՍՆԵԳԻՐՅՈՎԻ «Հետախուզության մասին» գիրքը¹:

Այս գրքում Գ. ՍՆԵԳԻՐՅՈՎը փորձ արեց ստեղծելու ոստիկանական տակտիկայի հարցերով կրիմինալիստիկական դասընթաց:

¹ Г. Н. Снегирев, О сыске, опыт исследования приемов, способов и средств к раскрытию истины происшествия, Касимов 1908г.

Դրանով նա տարբերվեց 20-րդ դարի մյուս ոռու կրիմինալիստներից, որոնք իրենց աշխատություններում շեշտը դնում էին հետախուզման տեխնիկական հնարքների մշակման և մասսայականացման վրա: Նրա առաջարկած մեթոդները մեր կողմից, իհարկե, ընդունելի չեն, բայց դրանով նա հուշեց, որ կարելի է կիրառել տակտիկական հնարքներ: Այդ «մեթոդներից» են՝ շանտաժ, կաշառում (նյութական շահագրգռություն), փոփոխվող բնագոյների վրա խաղալը, հանցագործների ծառայությունների օգտագործումը և այլն:

Սնեգիրյովի գրքում մեծ տեղ են զբաղեցնում հանցագործությունների, գլխավորապես՝ սպանության տեղի գննության հարցերը: Չննության տակտիկայի բնագավառից տեղեկությունները Սնեգիրյովը լրացնում էր դատական բժշկության բնագավառի տեղեկություններով՝ դրանով կրիմինալիստիկական կապելով դատական բժշկության հետ:

Գրքում նկարագրված բարդ գննությունների օրինակները որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև ժամանակակից հետազոտողի համար:

Գ.Ն. Սնեգիրյովը զբաղվեց նաև առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդիկայի մշակմամբ՝ օգտագործելով ոստիկանության պրակտիկայի նյութերը: Նշված գրքում, օրինակ, շարադրված է գրպանահատության (գրպանային գողության), խարդախության, խաբեբայության (խաղանենգության) քննության մեթոդիկան:

Սնեգիրյովի գրքի հետ համարյա միաժամանակ լույս տեսան կրիմինալիստիկական տեխնիկայի վերաբերյալ աշխատանքների շարք՝ Լեբեդևի հեղինակությամբ:

Այդ աշխատանքները, որոնք համարվում էին «Ոստիկանական տեղեկատու»-ի հավելվածներ և կոչվում էին «Հանցագործությունների բացահայտման արվեստը», լույս տեսան 1909 թվականին:

Ռուսական կրիմինալիստիկական գրականության մեջ առաջինը Լեբեդևը տվեց կրիմինալիստիկայի սահմանումը. նա կրիմինալիստիկան դիտում էր որպես գիտություն, որը «մշակում է փարբեր տեսակի հեղքերի (չեղքերի, ուրբերի) հայտնաբերման և հետազոտման մեթոդները, պարզում է հանցագործության մեղավորներին, հաշվառում է հանցագործներին և պարզում է «ինքնուրույն անչանց» (անհայտներին), մշակում է քրեական հետաքննության հնարքները (իրազեկ անչանց և վկաների հարցուփոռ, մեղադրյալի հարցաքննություն, խուզարկություններ, առգրավումներ, գննություններ) և որոշակի բնույթի մասնագիտական հարկություններ պահանջող հանցագործությունների քննության հա-

տույն մեթոդները: Մի խոսքով, ուսումնասիրվում և համակարգվում են քրեական հետախույզության հնարքները, որի նպատակը համարվում է հանցագործությունների բացահայտումը կամ դեպքի ճշմարտացիության պարզաբանումը¹»:

1911-1912թթ. Արդարադատության գերատեսչությունը մի շարք միջոցառումներ մշակեց դատական համակարգի գործունեության մեջ կրիմինալիստիկայի ներդրման հարցերով:

Ներկայացված պատմական ակնարկը ավելի բովանդակալից դարձնելու համար անհրաժեշտ ենք համարում որոշ տեղեկություններ տալ Ռուսաստանում դատափորձագիտական հիմնարկների զարգացման պատմությունից:

Արխիվային նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատափորձագիտական եզրակացությունները տրվում էին հիմնականում փորձագիտական հիմնարկների անունից, և դատական փորձաքննությունների ինստիտուտի զարգացումը կապված է դրանց զարգացման հետ: Սակայն Ռուսական մինչհեղափոխական գրականության մեջ համարյա ոչինչ չի խոսվում հիմնարկներում կատարվող դատական փորձաքննությունների մասին, այլ կերպ ասած, դրանց իրավաբանական անձանց կողմից կատարելու հնարավորությունների մասին²:

Միայն Ի. Յա. Ֆոյնիցկին և Ա. Ս. Լիկոշինն են նշում, որ դատական փորձաքննությունների որոշ տեսակներ կարող են կատարվել ոչ թե առանձին անձանց, այլ հիմնարկների կողմից: Նրանք այդ տեսակներն համարում էին ռազմատակտիկական և դրամանիշերի «կեղծման» գործերով փորձաքննությունները³:

Այդ դրույթները հիմնավորող ոչ մի փաստարկ, առավել ևս ոչ մի պատմական ընդհանրացում այդ հիմնարկների՝ որպես դատափորձագիտական եզրակացություն տվող սուբյեկտի, գործունեության վերաբերյալ, այդ հեղինակների աշխատանքներում չեն բովանդակում:

Ռուսաստանի դատավարագետներն ու կրիմինալիստները, որոնք զբաղվել են դատական փորձաքննություններին վերաբերող հարցերի ու-

¹ В. И. Лебедев, Искусство раскрытия преступлений, Дактилоскопия, СПб 1909г., т. 2, с. 14:

² Ст'ю орինակ՝ П. В. Макалинский, Практическое руководство для судебных следователей, состоящих при окружных судах, Ч. 2, СПб. 1870г., Ю. Глазер, Руководство по уголовному процессу, СПб. 1885г., и др.

³ И. Я. Фойницкий, Курс уголовного судопроизводства, т. 2, СПб. 1870г., т. 287-288: А. С. Лыкошин, Военное судопроизводство, СПб. 1914г., т. 149:

սումնասիրմամբ, անդրադառնալով դատափորձագիտական հիմնարկների՝ որպես իրավաբանական անձի առաջացման ու գործունեության պատմությանը, սահմանափակվել են միայն վերը նշված հեղինակներին մատնացույց անելով¹:

Պատմական փաստերը, սակայն, ցույց են տալիս, որ դատական փորձաքննությունների ինստիտուտի զարգացումը Ռուսաստանում հանգել է հիմնականում փորձագիտական հիմնարկների ստեղծմանը, որոնք գործել են դատավարություններում՝ որպես իրավաբանական անձ:

Մասնագիտացված դատափորձագիտական հիմնարկների ստեղծումը նշանակալից չափով, որոշ տեսակների դատափորձագիտական հետազոտությունների կատարման անհրաժեշտության արդյունքը հանդիսացան: Մինչ այդ, դատափորձագիտական գործառույթները դրված էին զոյություն ունեցող կամ կազմակերպվող պետական հիմնարկների վրա:

Օրինակ՝ 16-րդ դարում ստեղծվեց դեղատնային Հրամանը, որը դարձավ Ռուսաստանում առաջին դատափորձագիտական հիմնարկը: Որոշ դեպքերում այն պետք է կատարեր դիախեռում, ինչպես նաև դատական գործերով սննդամթերքի քիմիական անալիզ: Համապատասխան եզրակացությունները տրվում էին դեղատնային Հրամանի անունից, այլ ոչ թե առանձին անձի: Դատափորձագիտական գործունեության որևէ օրենսդրական կարգավորում այդ Հրամանի համար դեռևս չկար²:

16-րդ դարում ծնվում է ձեռագրի փորձաքննությունը: Դրա կատարման կարգի որևէ օրենսդրական կարգավորում այն ժամանակ զոյություն չուներ: Այդ փորձաքննությունների կատարումը հանձնարարվում էր կամ առանձին անձանց, կամ անձանց խմբի, որոնք աշխատում էին տարբեր հիմնարկներում: Հենց որ ձեռագրի փորձաքննությունները սկսեցին ավելի հաճախակի նշանակվել, ամփոփապես որոշվեց դրանց կատարման պարտադիր կարգը հիմնարկի միջոցով, որի մասին դեռ կխոսենք:

18-րդ դարում Պետերբուրգում ստեղծվեց այսպես կոչված ֆիզիկատ, իսկ Մոսկվայում՝ բժշկական գրասենյակ, որոնք պետք է ղեկավարեին ամբողջ բժշկական գործը ոչ միայն Մոսկվայում և Պետերբուրգում, այլև մոտակա քնակավայրերում:

¹ В. М. Никифоров, Экспертиза в советском уголовном процессе, М. 1947г., էջ 51, А. И. Винберг, Криминалистическая экспертиза в советском уголовном процессе, М. 1956г., էջ 27-28:

² С. В. Шершавкин, История русской судебно-медицинской службы (17-19вв.), Автореф. на соискание уч. степени, докт. мед. наук, М. 1955г.

Շուտով ֆիզիկատը և բժշկական գրասենյակը սկսեցին կատարել փորձաքննություններ, քննչական և դատական մարմինների հանձնարարությամբ:

Դատա-փորձագիտական ինքնատիպ հիմնարկ էր գիտությունների Ակադեմիան: Դատա-փորձագիտական եզրակացությունները տրվում էին նրա անունից, չնայած կատարվում էին սկզբում առանձին ակադեմիկների կողմից, առանց որևէ կոլեկտիվ քննարկման: Հետագայում Ակադեմիայում ստեղծվեց հատուկ կոլեկտիվ կարգ՝ դատա-փորձագիտական եզրակացությունների քննարկման համար: 19-րդ դարի կեսին այդ կարգն հետևյալ տեսքն ուներ: Քննչական կամ դատական մարմնից ստանալով գրություն փորձաքննություն կատարելու խնդրանքով, ընթերցվում էր այն բաժանմունքի ժողովում, որտեղ էլ կարծիք էր հայտնվում այն անձի կամ անձանց մասին, որին (որոնց) պետք է հանձնարարվեր կատարումը: Հաշվի էր առնվում նրա (նրանց) հատուկ գիտելիքները: Բաժանմունքի ժողովի արձանագրության մեջ շարադրվում էր փորձագիտական հանձնարարության էությունը, իսկ որոշման մեջ ցույց էր տրվում՝ թե ում է հանձնարարվում էր, ինչ կատարումը: Դրան համապատասխան քարտուղարը բոլոր նյութերը հանձնում էր բաժանմունքի կողմից ընտրված ակադեմիկին՝ կատարելու համար: Հետազոտությունը ավարտելուց հետո կազմված եզրակացությունը քննարկվում էր և որոշում էր կայացվում հետազոտությունն իրականացնող Գիտությունների Ակադեմիայի անդամի հետևությունները հաստատելու կամ մերժելու մասին: Դրա հիման վրա, մշտական քարտուղարը կազմում էր համապատասխան դատական կամ քննչական մարմնին հասցեագրված գրություն, որում շարադրվում էին բաժանմունքի կողմից ընդունված հետևությունները: ԳԱ անդամի եզրակացությունը ակադեմիայից դուրս չէր գալիս:

Քննչական և դատական մարմինները դրան ծանոթանում էին միայն մշտական քարտուղարի գրության բովանդակությունից:

Այսպիսով, դատական և քննչական մարմինները, առավել ևս մեղադրյալը երբեք անձնական շփում չեն ունեցել հետազոտությունը կատարող անձի հետ:

Պետք է նշել, որ Պետերբուրգի գիտությունների ակադեմիայի և նրա առանձին անդամների դատա-փորձագիտական գործունեության մասին տեղեկություններ համարյա չեն պարունակում ո՛չ պատմագիտական, ո՛չ իրավաբանական գրականության մեջ: Չնայած դրան այդ գործունեությունը մեծ ավանդ ունի դատական փորձաքննությունների մի շարք տեսակների ստեղծման և զարգացման գործում: Դատա-փորձագիտական գործունեությամբ զբաղվել են Ռուսաստանյան գիտության այնպիսի

երևելիներ, ինչպիսիք են. Մ. Վ. Լոմոնոսովը, Յու. Ի. Ֆրիցշեն, Ն. Ն. Չի-
նիևը, Վ. Յա. Բունյակովսկին, Է. Խ. Լենցը և ուրիշներ:

1864թ. դատական կանոնադրությունների (Устав) ընդունումով Գ-Ա
դատա-փորձագիտական գործունեությունը դադարեց:

18-րդ դարի վերջերին Ռուսաստանում հիմնվեցին բժշկական վար-
չություններ (врачебные управы), որոնց վրա, մի շարք այլ գործառույթ-
ների թվում դրվեցին նաև դատա-փորձագիտական աշխատանքը՝ վար-
չության սպասարկման տարածքում: Բժշկական վարչությունների կազ-
մակերպման մասին կանոնադրության մեջ նախատեսվում էր, որ դա-
տաբժշկական և դատաքիմիական հետազոտություններ կատարելիս ան-
պատճառ պետք է մասնակցեն բժշկական վարչությունների անդամները,
այսինքն՝ նորից եզրակացությունները տրվում էին հիմնարկի անունից:

Տարբեր ժամանակներում ցարական Ռուսաստանի օրենսդրական
ակտերով գործողության մեջ էին մտցվում կանոններ, որոնցով որոշակի
պետական գերատեսչությունների վրա էին դրվում քննչական և դատա-
կան մարմինների համար փորձագիտական հետազոտությունների կա-
տարման պարտականություններ: Օրինակ՝ այդպես եղավ պետական
պալատների հետ, որոնք պետք է փորձագիտական եզրակացություն
տալին այն բոլոր գործերով, որոնք կապված էին օդու և ծխախոտի վա-
ճառքի պետական մենաշնորհի խախտման հետ, ինչպես նաև այդ ապ-
րանքների կեղծումների հետ: Նման դեպքերում պետական պալատի դա-
տա-փորձագիտական եզրակացությունը համարվում էր վերջնական և
բողոքարկման կամ դատական քննության ենթակա չէր:

Որոշ դեպքերում օրենսդրական ակտերով նախատեսվում էր նաև
այնպիսի կարգ, երբ դատարանի վճիռը չէր կարող մտնել օրինական ուժի
մեջ առանց այն հիմնարկի համաձայնության, որը ինչ-որ մասնագիտա-
կան հարցով տվել էր դատա-փորձագիտական եզրակացություն: Ստաց-
վում էր այնպես, որ դատա-փորձագիտական գործառույթներ իրակա-
նացնող հիմնարկները կատարում էին նաև որոշակի հսկողական ֆունկ-
ցիաներ, որոնք իրականացվում էին այն դեպքերում, երբ դատարաննե-
րում լսվում էին հարցեր, որոնք շոշափում էին պետության շահերը՝ ֆի-
նանսական, հարկային և նման բնագավառներում:

Բնականաբար, նման դեպքերում խոսք չէր կարող լինել այն մասին,
որ դատարանը կարողանար զնահատել համապատասխան դատա-փոր-
ձագիտական հիմնարկի եզրակացությունը:

Դատա-փորձագիտական գործառույթները մի շարք դեպքերում
դրվում էին Ռուսաստանի կենտրոնական հիմնարկների վրա: Դրանցից
մեկը ֆինանսների նախարարության Մանուֆակտուրային խորհուրդն էր:

Այդ հիմնարկը հիմնականում զբաղվում էր արտոնագրեր տալով, արդյունաբերական և առևտրական ձեռնարկությունների միջև եղած վեճերը լուծելով, ինչպես նաև Ռուսաստանի ձեռնարկություններում արտադրված ապրանքների կեղծման և դրանց անորակության փաստերի պարզաբանմամբ:

Բոլոր այդ հարցերի նախնական ուսումնասիրումը հանձնարարվում էր տարբեր փորձագետների, որոնց հաստիքները կից էին Մանուֆակտուրային խորհրդին:

Նախնական հետազոտության արդյունքները զեկուցվում էին Մանուֆակտուրային խորհրդին: Խորհրդի նիստում բոլոր նյութերի քննարկումից հետո ընդունվում էր համապատասխան որոշում, որը և հաղորդվում էր քննչական կամ դատական մարմնին: Հաղորդման մեջ ցույց չէր տրվում, թե հատկապես ով է կատարել փորձագիտական հետազոտությունը: Բոլոր փորձագիտական եզրակացությունները գնում էին միայն Մանուֆակտուրային խորհրդի անունից, որն ուղարկում էր ոչ թե մանրամասն եզրակացությունը, այլ միայն քաղվածք խորհրդում կայացած քննարկման արդյունքների համառոտ բովանդակությամբ: Այդ քաղվածքից չէր երևում, թե ինչ տեսակետներ են հայտնվել, ով և ինչպիսի փաստարկներ է շարադրել, ով որ որոշման համար է քվեարկել: Մանուֆակտուրային խորհրդի ներկայացուցիչները չէին հրավիրվում դատարան և նրանց տված եզրակացությունները դատարաններում չէին քննարկվում¹:

Ռուսաստանի՝ ուսումնասիրվող ժամանակահատվածի դատա-փորձագիտական հիմնարկների ողջ համակարգի պսակը համարվում էր Բժշկական խորհուրդը (Медицинский совет): Փորձագիտական այս հիմնարկի մասին շատ համառոտ տեղեկություններ կան բժշկական և իրավաբանական գրականության մեջ²:

Բժշկական խորհուրդը առաջինը հիմնադրվեց ներքին գործերի դեպարտամենտին կից՝ «բժշկական մասի կատարելագործման» նպատակով:

¹ Մանուֆակտուրային խորհրդի փորձաքննությունների նյութերը գտնվում են խորհրդի արխիվում-ЦГИАЛ ֆ. 18, оп 1, Դրանց հետ ես ծանոթացել եմ 1967 թվականին:

² Տե՛ս հետևյալ աշխատանքները. С. Н. Инполитов, Краткий очерк деятельности Медицинского совета по судебно-медицинской части, 1804-1904-Вестник общественной гигиены судебной и практической медицины, 1907г., т. 4, А. И. Моисеев, Медицинский совет МВД, спб. 1913г., А. В. Дулов и И. Ф. Крылов, Очерки истории криминалистической экспертизы в России.

Այսպես էր հիմնավորվում դրա ստեղծումը 1803թ. դեկտեմբերի 31-ի հրամանագրում: Այս փաստաթուղթը Բժշկական խորհրդի կողմից դատական փորձաքննություններ կատարելու մասին որևէ նշում չէր պարունակում:

1811 թ. ստեղծվեց ևս մեկ Բժշկական խորհուրդ՝ նոր կազմակերպված ոստիկանության նախարարությանը կից: Իսկ նախկին Բժշկական խորհուրդը 1809թ. գտնվում էր լուսավորության նախարարության համակարգում: Նոր խորհրդի կանոնադրությունը իր գործունեության մեջ նախատեսում էր նաև փորձաքննությունների կատարում:

1822 թ. Բժշկական երկու խորհուրդները միավորվեցին ներքին գործերի նախարարությանը կից Բժշկական դեպարտամենտում:

Բժշկական խորհրդի դատա-փորձագիտական գործառույթները գնալով ընդլայնվեցին: Այն ոչ միայն ամենատարբեր հարցերով կատարում էր դատական փորձաքննություններ, մասնավորապես՝ բժշկական, հոգեբանական, քիմիական և այլն, այլև հսկողություն էր իրականացնում Ռուսաստանի տարբեր հիմնարկների դատա-փորձագիտական գործունեության նկատմամբ: Այդ նպատակի համար Բժշկական խորհուրդն իրավունք ուներ պահանջել բոլոր եզրակացությունները՝ մերժել դրանք (փոխել) կամ համաձայնվել տրված եզրակացության հետ:

1843թ. կարգ մտցվեց, ըստ որի՝ բոլոր դատաքիմիական հետազոտությունների արդյունքները, որոնք կատարվել են բժշկական վարչություններում, պարտադիր պետք է նախապես ուսումնասիրվեն Բժշկական խորհրդում: Առանց Բժշկական խորհրդի նման հաստատման բժշկական վարչության եզրակացությունը բավարար ուժ չէր ստանում: Այստեղից երևում է, որ Բժշկական խորհրդի որոշումը դատարանների համար համարվում էր բացառիկ հեղինակավոր. դրան տրվում էր մեծ նշանակություն: Նրանք քննչական և դատական մարմինների կողմից որևէ գնահատման չէին արժանանում:

Բժշկական խորհրդում ընդունված փորձագիտական եզրակացությունների ուսումնասիրման կարգը, հավանաբար, ուղղված էր նրան, որ նրա գործունեությունը պարուրվի գաղտնիությամբ և գիտական անմատչելիությամբ:

Բժշկական խորհրդում լսելու ենթակա բոլոր գործերը սկզբում պետք է ուղարկվեին ներքին գործերի նախարարության բժշկական դեպարտամենտ: Այստեղ նրանք ուսումնասիրվում էին. արդյունքում կազմվում էր ծավալուն տեղեկանք, որը և ուղարկվում էր Բժշկական խորհրդին:

Վերջինս նիստ էր գումարում, որը ներկայացված տեղեկանքը (իսկ երբեմն էլ նաև հետազոտման ենթակա իրեղեն ապացույցը) ուսումնասիրելու համար հանձնարարում էր խորհրդի անդամներից մեկին կամ մի քանիսին: Այդ մասին նշվում էր նիստի հատուկ կազմված «հուշագրությունում»:

Խորհրդի անդամի կողմից եզրակացությունը ստանալուց հետո այն քննարկվում էր, որի արդյունքները, նույնպես համառոտ, գրվում էր հուշագրի մեջ: Բացի այդ, կազմվում էին Բժշկական խորհրդի նիստերի մատյաններ, որտեղ նկարագրվում էին յուրաքանչյուր գործի բովանդակությունը, խորհրդի անդամի եզրակացությունը և խորհրդում դրա քննարկման ընթացքը: Մատյանի պատճենը հուշագրից քաղվածքի հետ ուղարկվում էր Բժշկական դեպարտամենտ, իսկ խորհրդի անդամի եզրակացության իրական տեքստը (բնօրինակը) մնում էր նրա գործերում: Բժշկական դեպարտամենտից դատական կամ քննչական հիմնարկներ ուղարկվում էին գրություններ՝ կազմված Բժշկական խորհրդի մատյանի հիման վրա: Այդպիսով, ոչ միայն Բժշկական խորհրդի անդամի եզրակացությունը, այլ նույնիսկ մատյանը, որտեղ մանրամասն գրված էր եզրակացության քննարկման ընթացքը, հայտնի չէր դառնում այն քննչական կամ դատական մարմնին, որը խնդրել էր այդ եզրակացությունը: Հիմնարկների և առավել ևս մասնավոր անձանց բոլոր փորձերը, ստանալ Բժշկական խորհրդի կարծիքի պատճենը, անվերապահորեն մերժվում էին: Բժշկական խորհուրդը որևէ հիմնարկության հետ անմիջականորեն գրագրություն չէր վարում:

Բայց, որոշ դեպքերում, դատարանները հնարավոր չէին համարում վճիռներ (որոշումներ) արձակել միայն Բժշկական դեպարտամենտի գրության հիման վրա, որտեղ շարադրված էր Բժշկական խորհրդի կարծիքի համառոտ բովանդակությունը, և պահանջում էին հաղորդել որոշման լրիվ տեքստը, որպեսզի առավել մանրամասն պատկերացում կազմեն հարցի հետազոտման և քննարկման ընթացքի վերաբերյալ: Այդպիսի պատճենները ուղարկվում էին միայն դատարանների համառ և անընդհատ հարցումներից հետո: Բայց այդ դեպքերում ևս դատարանը հնարավորություն չէր ստանում իմանալու՝ խորհրդի անդամներից ով է անմիջականորեն կատարել հետազոտությունը: Դատարանը երբեք իրավունք չէր ստանում անմիջականորեն առնչվել այդ անձի հետ, թեկուզ գրավոր:

Բժշկական խորհուրդը այդպիսի դիրք էր գրավում նաև դատական քննիչների նկատմամբ, որն ակնհայտորեն ցույց է տալիս այդ հիմնարկում գործերի ուսումնասիրման ընթացքը:

Այն դեպքերում, երբ դատական քննիչները ստանում էին Բժշկական խորհրդի կողմից ուսումնասիրված գործերի արդյունքների մասին հաղորդումներ, խնդրանքով դիմում էին լրացուցիչ պարզաբանումների կամ կրկնակի հետազոտությունների. նրանց մերժում էին ամենավճռական ձևով:

Պետք է ասել, որ Բժշկական խորհուրդը գոնե արտաքննապես պահպանում էր իր անսասանությունը, իր հեղինակությունը դատական փորձաքննության բոլոր հարցերում ոչ միայն դատական ու քննչական մարմինների նկատմամբ, այլև ներքին գործերի նախարարի նկատմամբ, որը հաստատում էր Բժշկական խորհրդի բոլոր որոշումները, մինչև դրանց քաղվածքները ուղարկվում էին շահագրգռված ատյաններ:

Բժշկական խորհրդի վերոհիշյալ գործողությունները կատարվում էին մինչև 1874թ., այսինքն՝ 1864թ. դատական կանոնների (Устав) գործողության մեջ մտնելուց հետո, որոնցով հռչակվեց ապացույցների ազատ գնահատումը դատարանում՝ քրեական դատավարության սկզբունքներին համապատասխան:

Բժշկական խորհրդի կղզիացումը ցարական Ռուսաստանի կենտրոնական մարմինների կողմից հակազդեցության չենթարկվեց:

Բժշկական խորհրդի մեջ մեծ մասամբ մտնում էին անձինք, որոնք պատկերացում չունեին այն հատուկ հարցերի մասին, որոնք քննվում էին խորհրդի նիստերում:

Բայց այդ խորհրդի կազմում մտնում էին նաև շատ անվանի գիտնական բժիշկներ, ինչպիսիք էին՝ Ս. Պ. Բոտկինը, Ն. Ի. Պիրոգովը, Ն. Վ. Սկլիֆոսովսկին, Մ. Մ. Ռուդնևը, Ի. Մ. Բալինսկին, Վ. Մ. Բեխտերևը, Ի. Պ. Մերժենսկին և ուրիշներ:

Բացի բժշկագիտության տարբեր բնագավառի ներկայացուցիչներից՝ Բժշկական խորհրդի անդամներ էին ընտրվում քիմիայի, ֆիզիկայի, ֆիզիոլոգիայի գծով մասնագետներ:

Բժշկական խորհրդի կազմում տարբեր ժամանակներում եղել են գիտության ներկայացուցիչներ՝ Յու. Ի. Ֆրիցշեն, Ն. Ն. Չինինը, Ն. Ն. Բեկետովը, Դ. Ի. Մենդելեևը, Ի. Պ. Պավլովը, Ֆ. Վ. Օվսյաննիկովը, Կ. Մ. Բերը, Գ. Պ. Գելմերսենը և ուրիշներ:

Հետաքրքրական է, որ այդ դատափորձագիտական մարմնի անդամներ էին ընտրվում նաև իրավաբաններ, ավելի հաճախ՝ արդարադատության նախարարության իրավախորհրդատուներ: Օրինակ՝ Բժշկական խորհրդի անդամ էր ընտրվել ճանաչված իրավաբան Ա. Ֆ. Կոնին: Ժամանակի առաջատար գիտնականները մեծ ավանդ ունեն դատական-

փորձագիտության տեսության և պրակտիկայի զարգացման գործում: Սակայն պետք է ընդգծել, որ Բժշկական խորհրդում քվեարկելիս նրանց ձայնը սուզվում էր ոչ իրավասու անձանց ձայների ծովում:

Ստեղծված մանօրինակ իրադրության մեջ, երբ Բժշկական խորհրդի գործունեությունը դրված էր դատարանից և քննությունից վեր, խոսք չէր կարող լինել հատուկ գիտական հարցեր լուծելիս այդ դատականփորձագիտական մարմնի որևէ հստակ իրավասության պահպանման մասին: Բժշկական խորհուրդը իրեն իրավունք էր վերապահում լուծել ցանկացած հարցեր, վերլուծել քննիչի և դատարանի գործունեությունը, նրանց ցուցումներ տալ և այլն: Սակայն Բժշկական խորհրդի այդպիսի ընդհանուր գիծը նրա ոչ բոլոր անդամների համար էր ընդունելի: Առաջավոր գիտնականները պնդում էին այն տեսակետը, որ հարցերը քննարկելիս և փորձագիտական հետազոտություններում անհրաժեշտ է հստակ պահպանել հատուկ իրավասություններ:

Դատափորձագիտական հիմնարկները, որոնք իրենց գործառույթներով կազմակերպական առումով մնան էին Բժշկական խորհրդին, չէին համարվում միայն ցարական Ռուսաստանի առանձնահատկությունը: Նման դատափորձագիտական ատյաններ գոյություն ունեին Արևմտյան Եվրոպայի շատ երկրներում: Դրանց մասին հիշատակվում են Բավարիայի, Վյուրտեմբերգի և գերմանական այլ պետությունների քրեա-դատավարական օրենսդրություններում: Այդ ինստիտուտը տիպական էր ֆեոդալական արդարադատության համար:

Ցարական Ռուսաստանի համար դատափորձագիտական գործառույթներով օժտված շատ ինքնատիպ հիմնարկ էր հոգևոր կոնսիստորիան¹: Նրան էր իրավունք տրված նախաձեռնել սեկտանտների նկատմամբ քրեական գործի հարուցումը: Միաժամանակ այդ հիմնարկը հանդես էր գալիս որպես փորձագետ, որը եզրակացություն էր տալիս այս կամ այն սեկտայի էության մասին, որին համապատասխան որոշվում էր սեկտանտներին քրեական պատասխանատվության ենթարկելու մասին հարցը²:

Վերը շարադրված տվյալները վկայում են, որ Ռուսաստանում գործում էր հիմնարկների համակարգ, որոնք զբաղվում էին դատափորձագիտական գործունեությամբ, նաև այն, որ առկա էր սահմանված ամուր

¹ Консистория-հոգևոր վարչական հիմնարկ:

² Н. И. Ивановский, Экспертизы по делам о преступлениях против веры-ЖМЮ 1895г., №8, Судебная экспертиза о секте хлыстов, ЖМЮ 1897г., №6:

կարգ. այն է՝ դատափորձագիտական եզրակացությունները կազմել հիմնարկի անունից:

Սակայն քրեադատավարական գրականությունը այդ մասին որևէ նշում չի բովանդակում: 1833թ. Ն. Օռլովի կողմից հրատարակված «Ղեկավարման համառոտ փորձը քննություն վարելու համար» աշխատանքը (Опыт краткого руководства для производства следствий) որևէ տեղեկություն չէր պարունակում հիմնարկների դատափորձագիտական գործունեության մասին: 1849թ. հրատարակվեցին քննության վարման կանոններն ու ձևերը, որոնք Ե. Կոլկովի կողմից կազմված էին օրենքների ժողովածուի ձևով, որտեղ նույնպես չէր հիշատակվում հիմնարկների դատափորձագիտական գործունեության մասին: Միայն Ն. Ստոյանովսկու աշխատության մեջ խոսվում էր փորձագետի եզրակացություն ստանալու հնարավորության մասին, առանց նրան քննիչի մոտ հրավիրելու՝ գրագրության միջոցով, բայց հիմնարկից եզրակացություն ստանալու հնարավորության մասին չէր հիշատակվում¹: Կարծում ենք՝ հիմնարկների կողմից դատափորձագիտական եզրակացություններ տալու վերը նկարագրված կարգը ըստ էության նշանակում էր, որ դրանք դուրս էին դրվում դատական որևէ մարմնի ազդեցությունից: Այս հարցի գնահատականը դուրս է սույն աշխատանքի նպատակներից, բացի այդ, այդ մասին ծավալուն հոդվածով (ժամանակակից վիճակի մասին) հանդես ենք եկել «Իրավաբանական թերթի» 1999թ. հունվար ամսի 1(7), 2(8) համարներում և 1997թ. գեկուցել միջազգային սիմպոզիումում որն հրատարակվել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի գիտական հետազոտությունների կենտրոնի «Իրավագիտության հարցեր» հանդեսի 3-րդ համարում:

Խորհրդային փորձագիտական հիմնարկների ստեղծումը պետք է համարել 1922-1923թթ.: Միլիցիայի ստեղծման առաջին տարիներին նրա առջև խնդիր դրվեց հանցագործությունների բացահայտման գործում կիրառել գիտատեխնիկական միջոցներ և մեթոդներ: 1922թ. ՌՍՖՍՀ ՆԳԺԿ քրեական հետախուզության վարչությունում ստեղծվեց գիտատեխնիկական բաժին: Այդ բաժինները դարձան ԽՍՀՄ-ում առաջին կրիմինալիստիկական հիմնարկները:

1935թ.-ից հետո հանդես եկած ճանաչված կրիմինալիստներից են՝ Ն. Վ. Թերզին, Վ. Ի. Գրոմով, Ս. Ի. Վինբերգ, Բ. Մ. Շավեր, Բ. Ի. Շևչենկո, Բ. Մ. Կոմարինց:

¹ Н. Стояновский, Практическое руководство по русскому уголовному судопроизводству, Спб. 1852г., т. 69:

Հայաստանի Հանրապետությունում կրիմինալիստիկայի և կրիմինալիստիկական փորձաքննությունների ծագումն ու զարգացումը կապված են ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Ուկրաինայի կրիմինալիստ գիտնականների և դատափորձագիտական հիմնարկների հետ, որոնք Սովետական Միության կազմավորման հետ միաժամանակ նպաստել են ընդհանրապես ԽՍՀՄ-ում, մասնավորապես Հայաստանում այդ գիտության զարգացմանը: Ուկրաինայի այդ հիմնարկություններից հիշատակելի են Կիևի դատական փորձաքննությունների գիտահետազոտական ինստիտուտը (որտեղ 1960թ. Մոսկվայի իրավաբանների վերապատրաստման բարձրագույն դասընթացներում սովորելիս արտադրական պրակտիկա է անցել տողերիս հեղինակը՝ Ն. Մ. Ջյուսկինի ղեկավարությամբ), Խարկովի պրոֆ. Ն. Ս. Բոկարիուսի անվան դատական փորձաքննությունների գիտահետազոտական ինստիտուտը (որտեղ հրավիրված մի քանի գիտական կոնֆերանսներին մասնակցել են Հայաստանի կրիմինալիստները)¹ և Օդեսայի Դատական փորձաքննությունների գիտահետազոտական լաբորատորիան (որի տեխնիկական և բարոյական աջակցությամբ 1970թ. Օդեսայի Մեչնիկովի անվան պետական համալսարանում պաշտպանեցիք մեր թեկնածուական ատենախոսությունը):

Նշված երեք ձեռնարկություններն էլ ներկայումս գործում են Ուկրաինայի հանրապետության արդարադատության նախարարության համակարգում: Կիևի ինստիտուտը և Օդեսայի լաբորատորիան կազմակերպել են 1914 թվականին, իսկ Խարկովի ԴՓԳՀԻ-ն՝ 1923թ.: Սկզբում դրանք գործում էին որպես դատական փորձաքննությունների կաբինետներ, իսկ 1925թ. վերակազմավորվեցին ինստիտուտի և ենթարկվեցին Ուկրաինայի արդարադատության ժողովրդական կոմիսարիատին: Խորհրդային իշխանության առաջին տարիներին Կիևի կաբինետը ղեկավարում էր անվանի գիտնական-կրիմինալիստ Ս. Մ. Պոտապովը (որի անվանը սույն աշխատանքում հաճախ կհանդիպենք):

Հետագայում Ս. Մ. Պոտապովը աշխատանքի տեղափոխվեց Մոսկվա: Ս. Մ. Պոտապովի Մոսկվա մեկնելուց հետո՝ 1920թ. այդ կաբինետը զլխավորեց հետազոտական և դատական լուսանկարչության գծով ճանաչված գիտնական, պրոֆեսոր Վասիլի Իվանովիչ Ֆավորսկին, որը հե-

¹ Խարկովի դատական փորձաքննությունների գիտահետազոտական ինստիտուտը կազմակերպվել է 1923թ. նոյեմբերի 1-ին, երբ պաշտոնապես բացվեց Խարկովի գիտադատական փորձաքննության կաբինետը:

տագայում դարձավ Կիևի դատական փորձաքննությունների ինստիտուտի առաջին տնօրենը:

Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ գրեթե բոլոր միութենական հանրապետություններում (այդ թվում՝ Հայաստանում) երկար տարիներ դատական փորձաքննությունների ինստիտուտներ չկային: Այստեղ գործում էին գիտատեխնիկական բաժիններ, որոնք մտնում էին ՆԳԺԿ-ի համակարգի մեջ: Դրանք Ուկրաինայում ևս գործում էին դատական փորձաքննությունների ինստիտուտների հետ միաժամանակ և նշանակալից դեր ունեցան կրիմինալիստիկայի զարգացման գործում:

Խորհրդային իշխանության առաջին տարիներին կրիմինալիստիկայի բնագավառում գիտահետազոտական աշխատանքները ՌՍՖՍՀ-ում և ՈՒՍՍՀ-ում անբավարար էին ընթանում՝ չնայած Կիևի և Օդեսայի գիտադատական փորձաքննությունների կաբինետները և միլիցիայի քրեական հետախուզության գիտատեխնիկական բաժինները գործում էին: Նրանք իրենց աշխատանքում կիրառում էին մի շարք գիտատեխնիկական հնարքներ և մեթոդներ, որոնք մշակվել էին դեռևս մինչհեղափոխական ռուս կրիմինալիստների կողմից և օգտակար էին գտնվել խորհրդային քննչական մարմինների համար:

Գիտադատական փորձաքննությունների կաբինետների և ԳՏԲ-երի գործունեության շնորհիվ դակտիլոսկոպիայի, հետքերի կրիմինալիստիկական ուսմունքի, դատական լուսանկարչության, ձեռագրաբանական և փաստաթղթերի տեխնիկական հետազոտման և այլնի մի շարք գիտատեխնիկական միջոցներ ու հնարքներ, ինչպես նաև դրանց նմանվող դատաքիմիական և դատակենսաբանական փորձաքննություններ շատ արագ ներդրվեցին ՈՒՍՍՀ քննչական-դատական պրակտիկայում: Քննչական մարմինների գործունեության մեջ, ՎՉԿ-ում, հեղափոխական տրիբունալներում, այլ դատական մարմիններում, ինչպես նաև դատա-փորձագիտական հիմնարկներում սկսեցին դրվել զարգացած կրիմինալիստիկայի գիտության հիմքերը¹:

1925թ. Օդեսայի գիտադատական փորձաքննության կաբինետի վարիչ Ն. Պ. Մակարենկոն հրատարակեց «Հանցագործությունների քննության տեխնիկան», որն համարվում է խորհրդային Ուկրաինայի կրիմինալիստիկայի վերաբերյալ առաջին աշխատություններից մեկը: Նույն կա-

¹ И. Ф. Крылов, Судебная экспертиза в уголовном процессе, Л. 1963г. С. П. Митричев, Введение в курс советской криминалистики, Криминалистика, М. 1966г. С. И. Тихенко, Развитие советской криминалистики на Украине, сб. Криминалистика и научно-судебная экспертиза, вып. 2, К. 1948г.

բիներտի աշխատակից Դ. Դ. Խմիրովը հողված հրատարակեց կրիմինալիստիկական պրակտիկայում ուլտրամանուշակագույն ճառագայթների կիրառման մասին: Նույն տարիներին Կիևի դատափորձագիտական կաբինետի վարիչ Վ. Ի. Ֆավորսկին և գիտական աշխատող Ն. Ա. Պետրովը ավարտեցին գիտահետազոտական դատական լուսանկարչության աշխատանքների շարքը: Նրանք մշակեցին ցայտերանգի ուժեղացման նոր մեթոդ, որի կիրառումը հնարավորություն էր տալիս կարդալ զուսմաթափված, կերագծված, լվացված կամ այլ միջոցների ուժով անտեսանելի դարձած գրառումները:

Խարկովում դատական բժշկության վաստակաշատ պրոֆեսոր Ն. Ս. Բոկարիուսը, որը Խարկովի գիտադատական փորձաքննության կաբինետի ստեղծման նախաձեռնողներից էր և այդ կաբինետի հետագա վարիչը, լայնորեն իրականացրեց իր գիտական գործունեությունը, որը մեծ նշանակություն ունեցավ կրիմինալիստիկայի համար: 1924թ. նա հրատարակեց «Ձեռքի տեղեկատու-մատյան, քրեական հետախուզության աշխատակիցների և միլիցիայի համար բանավոր պատկերը կազմելիս», որը, բնականաբար, նպաստեց հեշտացնելու հանցագործների հետախուզման խնդրի լուծումը: 1925թ. լույս տեսավ նրա «Դիակի սկզբնական արտաքին զննությունը միլիցիայի և հետախուզական հետաքննության ժամանակ» կապիտալ աշխատանքը, որը դարձավ քննչական աշխատողների կարևոր ձեռնարկը: 1929թ. հրատարակվեց Ն. Ս. Բոկարիուսի մեկ այլ աշխատանքը. «Դիակի արտաքին զննությունը դեպքի կամ նրա հայտնաբերման տեղում», որը արժեքավոր պրակտիկ ձեռնարկ էր քննիչների, միլիցիայի և դատական բժիշկների համար:

Ն. Ս. Բոկարիուսի նշված և այլ աշխատանքները մեծ նշանակություն ունեցան ոչ միայն դատական բժշկության, այլև կրիմինալիստիկայի այնպիսի էական հարցերի մշակման համար, ինչպիսինք են՝ դեպքի տեղի զննության տակտիկայի և սպանության գործերի քննության մեթոդիկայի մշակումը:

Ն. Ս. Բոկարիուսը կազմակերպեց «Կրիմինոլոգիայի և դատական բժշկության արխիվ» հատուկ պարբերական հանդեսի հրատարակումը և իրականացրեց դրա թարգմանությունը: Հանդեսը լույս էր տեսնում ՌԽՍՏ-ում 1926-1927թթ.: Նրանում հրատարակվեցին կրիմինալիստիկայի վերաբերյալ մի շարք ուշագրավ հոդվածներ: Չնայած դրան, այս հանդեսում հաճախ հրատարակվում էին նաև կեղծ գիտական հոդվածներ, որոնց դեմ հետագայում կարիք զգացվեց պայքարելու:

Կրիմինալիստիկայի բնագավառում գիտական աշխատանքները հետագա զարգացում ստացան Ուկրաինայում: Պարբերականներ ստեղծվեցին 1931, 1936 և 1937թվականներին: Ուկրաինայի հեղինակների աշխատանքները հրատարակվում էին նաև ՌՍՖՍՀ-ում:

Հետագա տարիներին Հայրենական Մեծ պատերազմից հետո, կրիմինալիստիկայի գիտությունը մեծ զարգացում ապրեց հատկապես կրիմինալիստիկական տեխնիկայի բնագավառում, ինչպես նաև կրիմինալիստիկական տակտիկայի և առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդիկայի բնագավառներում: Ուկրաինայում աճեցին ճանաչված կրիմինալիստներ, Ա. Ա. Ելիսենը, Ն. Մ. Ջյուսկինը, Բ. Ռ. Կիրիչինսկին, Ե. Յու. Բրայչևսկայան, Վ. Պ. Կոլմակովը, Ե. Պ. Կոնովալովը, Լ. Ե. Արոցկերը, Ս. Ի. Տիխենկոն, Ի. Վ. Պոստիկան, Վ. Ե. Բերգերը, Մ. Վ. Սալտևսկին, Վ. Կ. Լիսիչենկոն, Ի. Յա. Ֆրիդմանը, Մ. Յա. Սեգայը և շատ ուրիշներ:

ՉԼՈՒԽ 9. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում կրիմինալիստիկայի գիտությունը շատ երիտասարդ է, այդպիսին են նաև կրիմինալիստիկական փորձաքննությունները: Այդ հարցերի լուսաբանումը չենք սկսել անցյալ դարերից, քանի որ մեզ համար մատչելի աղբյուրների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տեղեկություններ և դրանց վրա հիմնված հետազոտություններ կան Հայաստանի պետական, տնտեսական-քաղաքական վիճակի, հայոց գրչության, իրավունքի հուշարձանների, աղբյուրագիտության և այլնի մասին: Մեզ, սակայն, չհաջողվեց գտնել ուսումնասիրվող հարցերի վերաբերյալ տեղեկություններ: Իրավունքի այնպիսի ծանրակշիռ աղբյուրներում, ինչպիսիք են Դավիթ Ալավկա որդու (12-րդ դար), Մխիթար Գոշի (12-րդ դար) և Սմբատ Սպարապետի (Գունդստաբլի) (13-րդ դարի Կիլիկյան դատաստանգիրքը) դատաստանագրքերը, խոսում են դատական ապացույցների մասին, մասնավորապես՝ խոստովանության, վկաների ցուցմունքների, երդման, գրավոր փաստաթղթերի, իրավասու անձանց եզրակացության (փորձաքննության): Վերջինս, որն առաջին հայացքից հուսադրում է գիտության տարբեր բնագավառների օգտագործմամբ մասնագիտական եզրակացություններ (ապացույցներ) ստանալուն, վերաբերում է միայն գիտության մեկ որոշակի բնագավառի՝ բժշկությանը: Նույնիսկ 989թ. առանց օրենքը խախտելու արտաշիրմուն է կատարվել Սմբատ թագավորի մարմինը զննելու և մահվան բնական բնույթի փաստը հաստատելու նպատակով: Այս մասին նկարագրված է Ասողիկի «Պատմություն երկրորդում» (էջ 183), Ե. Մակարյանի «Экспериментация трупа» աշխատության մեջ և այլն: Այս և նման հարցերի լուծումը հանձնարարում էին ժամանակի գիտության նվաճումներին տիրապետող անձանց:

Իսկ այդ և հետագա ժամանակներում գտնվում էին մարդիկ, որոնք պնդում էին, որ գիտնական լինելու համար պետք է իմանալ նաև այլ գիտությունների նվաճումները: Այդ մասին է վկայում 12-րդ դարի խոշորագույն գիտնական Հովհաննես Իմաստասերի (Օձնեցի) ասույթը. «Գիտնականը պետք է լինի բազմակողմանի զարգացած և գիտակ ոչ միայն սուրբ գրքի, այլև հեթանոս փիլիսոփաների»¹: Նա ընդունում էր միայն այն գիտությունը, որը հիմնված է փորձի վրա: Բայց, չնայած նշած և ՚ւյլ

¹ Մ. Արեղյան, Հին հայ գրականության պատմություն, հ. 2-րդ, Երևան 1946թ., էջ 49:

նման դատողությունների առկայությանը, բացի բժշկությունից, այլ բնույթի հետազոտություններ չէին կատարվում:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հայերեն ձեռագիր հիշատակարանները, որոնք իրականացվում էին գրիչների կողմից: **Գրիչ** անվանում էին անձանց, որոնք արտագրում էին հսկայածավալ մատյաններ, գիտության տարբեր բնագավառի ստեղծագործություններ, թարգմանություններ: Որպեսզի պայքարեն իրենց աշխատանքը «սեփականացնողների» դեմ, գրիչները թողնում էին տարբեր գրառումներ և ծածկագրեր, օրինակ՝ պրոֆ. Ա. Աբրահամյանը գրում է. «Մագաղաթյա և խունացած թղթերի գորշ էջերի վրա հաճախ կարելի է կարդալ մեր գրիչների սրտառուչ գրառումները. ...«Ձեռքս երթայ դառնայ ի հող, գիրս մնայ յիշատակող¹»:

Նմանօրինակ գրառում է ներկայացնում նաև Հ. Տաշյանը. «Ես Ղազար արեղայս **բոլոր** գրեցի մինչև հոս, **նօտր** ուսայ՝ նօտր **գրեցի**²»:

Իսկ որոշ գրիչներ, ինչպես Տաշյանի օրինակում, թողնում էին իրենց անունները՝ ուղղակի կամ ծածկագրված: «Գրիչներն իրենց անունները ծածկագրելիս նպատակ ունեին թույլ չտալ, որ տգետ գրիչները ջնջեն իրենց ծածկագրված անունները հիշատակարանից. նրանք ցանկանում էին, որ իրենց անունները հայտնի լինեն միայն գիտուն մարդկանց, որոնց կատարելպես վստահում են և հավատացած են, որ վերջիններս չեն ջնջի մշակների անունները և չեն յուրացնի նրանց «ողորմիսը»-ը³:

Ծածկագրող գրիչները գրության սկզբում կամ վերջում կատարում էին ուշադրություն գրավող կարճ արձանագրություններ՝ էպիգրամներ, օրինակ՝ «Այս է փակագիր, իմաստունն իմանայ և անիմաստն զարմանայ⁴»: «Ով եղբայր, զայս փակագիրս դու կարդա, թե ոչ, փքիտ տուր և հազայ», «թե դպիր ես՝ ընթերցիր, թե տգետ՝ յիմարացիր⁵»:

Օրինակները ցույց են տալիս, որ Հայաստանում նմանօրինակ կեղծիքների կատարումը եղել է, բայց պայքարը դրանց դեմ իրականացվել է բանասիրական վերլուծություններով, անեծքով:

Ձեռագրերի ոչ փորձագիտական, այլ բանասիրական հետազոտություններ կատարվել են համապատասխան մասնագետների կողմից, զուտ

¹ Ա. Աբրահամյան, Հայ գրի և գրչության պատմություն, 1959թ., էջ 16:

² Հ. Տաշյան, Ակնարկ մը հայ հնագրության վրա, էջ 32, բոլոր, նօտր-նկատի ունի բոլորգիր և նոտրգիր տառատեսակները (Լ. Օ.):

³ Տե՛ս Հայկական պետական մատենադարան, ձեռ. № 7709, էջ 395:

⁴ Ա. Աբրահամյան-նշված աշխատանքը, էջ 186:

⁵ Հ. Բ. Սարգիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա, 1914-1924թթ., հ. «Ա», էջ 823:

գիտական նկատառումներով: Օրինակ՝ Վենետիկի Մխիթարյան մատենադարանի թիվ 1738 Ձեռագրի մասին Վ. Հովհաննիսյանը գրում է. «Ոչ մեկ կասկած կարելի է հարուցանել հիշատակարանի հարազատության մասին. գիրը, մելանը, ձևը բացարձակապես նույնն են բնագրին հետ. նույն անձը գրած է և ուրիշ ոչ մեկը ժամանակակից կամ հետևյալ դարերու»¹:

Այդ գրառումներում (որոնցում հաճախ գրում էին նաև, թե երբ և որտեղ է կատարված ձեռագիր մատյանը) հաճախ հաղորդվում էին ժամանակի քաղաքական և սոցիալ-տնտեսական դրությունը, գրողի անձը, նրա հոգեվիճակը, գրելու պայմանները:

Շատ տեղեկություններ էին հաղորդում ձեռագիր մատյանները, բայց դրանց կատարողին փոխելու և նման այլ հարցերը պարզելու համար չէր խոսվում ոչ ձեռագրերում, ոչ որևէ օրենսդրական ակտում: Մի խոսքով, Հայաստանում չէր գործել ու չէին գործում դատափորձագիտական կամ դրա նման որևէ հաստատություն: Մեզ չհաջողվեց պարզել նաև անհատ գիտնականների կողմից կատարված էպիգրաֆիկ փորձաքննությունների փաստեր:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, Արտակարգ հանձնաժողովները (ԿԿ), քննչական խմբերը, բանվորագյուղացիական միլիցիան, քրեական հետախուզությունը լարված պայքար էին տանում հանցագործությունների դեմ: Սակայն, այդ տարիներին չկային հանցագործությունների քննության գիտությունը՝ կրիմինալիստիկան, և ձևավորված փորձագիտական հիմնարկներ:

1922թ. մայիսի 22-ին հիմնադրվեց դատախազությունը՝ որպես օրենքների կատարման վրա հսկող մարմին:

Այդ տարիներին վերակազմավորվեցին նախաքննության մարմինները: Սակայն փորձաքննական մարմիններ, որոնք անհրաժեշտ էին շատ հարցեր լուծելու համար, Հայաստանում չկազմավորվեցին: 1929 թվականին ԽՍՀՄ խոշոր քաղաքներում կազմակերպվեցին դատաբժշկական լաբորատորիաներ: 1920թ. դեկտեմբերին Հայաստանում ստեղծվեց առողջապահության ժողովրդական կոմիսարիատ: Այս ժողովրդամատը օրինականության պահպանման և ամրապնդման նպատակով պահանջում էր Հայաստանում անմիջապես ստեղծել դատաբժշկական փորձաքննություն:

¹ Տե՛ս Էմ. Ա. Պիվազյան, Մխիթար Գոշի դատաստանագրքի բանասիրական քննություն, Երևան, 1987, էջ 29:

1921թ. օգոստոսի 3-ին արդարադատության նարկոմատի երկրորդ բաժինը նամակով դիմեց առողջապահության նարկոմատին՝ խնդրելով հայտնել՝ կա՞ր այդք առողջապահության նարկոմատում հատուկ բաժին, որը կգբաղվի բժշկաիրավաբանական փորձաքննությամբ: Դրան հաջորդեց երկրորդ նամակը, որով խնդրվում էր արագացնել այդ գործի կազմակերպումը:

Առողջապահության կոմիսարիատի կոլեգիայի օգոստոսի 19-ի և 27-ի որոշումներով 1921թ. Երևանում ստեղծվեց քաղաքային գլխավոր դատաբժշկական փորձագետի հաստիք: Այդ պաշտոնում նշանակվեց բարձրորակ մասնագետ, դատական բժշկության հմուտ կազմակերպիչ Վ. Ի. Կրժիվինսկին, որի վրա դրվեց նաև Հայաստանի բոլոր շրջանների սպասարկումը¹:

Առողջապահության ժողկոմի 1924թ. մարտի 1-ի N22 հրամանով ստեղծվեցին փորձագետների պաշտոններ՝ Հայաստանի շրջաններում աշխատելու համար:

1929թ. ստեղծվեց Հանրապետության գլխավոր դատաբժշկական փորձագետի պաշտոնը, որը զբաղեցրեց պրոֆեսոր Շեկ-Հովսեփյանը՝ 1929-1939թթ.: Եղիշե Թադևոսի Շեկ-Հովսեփյանը բարձրորակ մասնագետ էր և փայլուն մանկավարժ:

1927թ. Երևանի պետական բժշկական ինստիտուտի բժշկական ֆակուլտետին կից ստեղծվեց դատական բժշկության ամբիոն²:

Շեկ-Հովսեփյանին փոխարինեց (1939թ.) Վ. Կրժիվինսկին, իսկ նրա մահվանից հետո 1940թ.՝ Ալեքսանդր Աղամի Հովսեփյանը: Վերջինս, բացի դատաբժշկական գործունեությունից, զբաղվում էր նաև իրեղեն ապացույցների հետազոտություններով:

Ընդգծենք, որ կենսաբանական և քիմիական բնույթի իրեղեն ապացույցների ուսումնասիրությունները լաբորատոր պայմաններում Հայաստանում իրականացվել են Ա. Ա. Հովսեփյանի կողմից, կրիմինալիստիկական բնույթի առանձին հետազոտությունները՝ Ե. Թ. Շեկ-Հովսեփյանի կողմից:

1953թ. Ա. Ա. Հովսեփյանի մահվանից հետո, Հանրապետության գլխավոր դատաբժշկական փորձագետ նշանակվեց պրոֆեսոր Ն. Մ. Ավագյանը՝ մեծ հմայքի տեր անձնավորություն, ծանրակշիռ գիտնական, որի անվան հետ է կապվում Հայաստանի Հանրապետությունում դատա-

¹ Н. М. Авакян, Е. А. Макарян, А. С. Торосян, Очерки истории судебной медицины, Ереван, 1970г., էջ 116-117:

² Տե՛ս նույն աշխատանքը, էջ 117:

կան բժշկության հետագա զարգացումը: Նրա ջանքերով ստեղծվեց Հանրապետության դատական բժիշկների և կրիմինալիստների միությունը, որի անդամ էինք նաև մենք՝ հայ առաջին կրիմինալիստներս: Դատաբժշկական փորձաքննությունների լաբորատորիայում մի քանի բաժինների թվում գործում էր նաև ֆիզիկո-տեխնիկական բաժանմունք, որը կազմակերպվեց 1954թ., ղեկավարում էր՝ Ռ. Այդինյանը, (հետագայում՝ Ս. Սարգսյանը և Գ. Տեր-Մովսեսյանը):

Ե. Շեկ-Հովսեփյանը հրատարակեց կրիմինալիստիկական բնույթի հոդվածներ. «Փոքր տրամաչափի T 03-7 հրացանից կրակոցի տարածությունը որոշելու հարցի մասին», «Մատների անտեսանելի դրոշմների հայտնաբերման հարցի մասին», «Պոկված թերթերի նույնացման հարցի մասին»:

Այս հոդվածները պետք է համարել թեև պարզունակ, բայց կրիմինալիստիկական բնույթի առաջին աշխատանքները մեր Հանրապետությունում:

Վերը նշված աշխատանքում նրա հեղինակները, հենվելով 1828թ. ղեկտեմբերի 19-ի՝ դիակի հերձման և դատական զննության Հրահանգի վրա, գրում են. «Չնայած նրան, որ դատաբժշկական ծառայությունը հագեցված չէր որևէ ապարատով, չկային կրիմինալիստիկական լաբորատորիաներ, բայց և այնպես, արյունոտ թվացող հագուստը և այլ իրեղեն ապացույցները վերցվում էին, մտցվում ակտի մեջ և ներկայացվում էին համապատասխան ղեկավարությանը, գործին կցելու համար: Այդ իրեղեն ապացույցները զնահատվում էին միայն զննությամբ և, իհարկե, կարող էին առաջացնել ոչ ճիշտ հետևություններ¹»:

Ինչ խոսք, ճիշտ են կարծում հեղինակները, որովհետև կրիմինալիստիկական լաբորատորիաների բացակայությունը վկայում է նաև գիտության բացակայության մասին, իսկ դրա անհրաժեշտությունը ակնհայտ էր և բացակայությունը անկասկած կարող էր հանգեցնել ինչպես գործերի քննության բարդությունների, այնպես էլ, վերջին հաշվով, դատական սխալների:

Հայաստանում կրիմինալիստիկայի և կրիմինալիստիկական փորձաքննությունների պատմությունը ներկայացնելու փորձ է արել մեր գործընկեր Բ. Մ. Հովհաննիսյանը, իր մի համառոտ զեկուցման մեջ, որը կարդացել է 1984թ. ՀՀ արդարադատության մախարարության դատա-

¹ Տե՛ս Очерки истории судебной медицины Армении, т. 99:

կան փորձաքննությունների գ/հ լաբորատորիայում հրավիրված կոնֆերանսի ժամանակ:

Լաբորատորիայի մասին կխոսենք քիչ հետո, ինչ վերաբերում է գեկուցմանը, ապա նրանում բերված սակավաթիվ «փաստերի» աղբյուրները Բ. Հովհաննիսյանը դժբախտաբար չի նշում: Այնտեղ մասնավորապես ասվում է, որ Հայաստանում մինչև հեղափոխությունը (ենթադրում ենք) ձեռագրաբանական փորձաքննություններ էին կատարում Երևանի (հավանաբար) իգական և արական գիմնագիտաների ուսուցիչներ Դ. Մ. Պոպովը, Պ. Ա. Կուշմանյանը, Ա. Սահակովը և այլք¹:

Ըստ Բ. Հովհաննիսյանի՝ 1920թ. հետո էլ Դ. Մ. Պոպովը շարունակել է կատարել ձեռագրաբանական փորձաքննություններ դատաքննչական մարմինների հանձնարարությամբ: Բացի աղբյուրը ցույց չտալուց՝ գեկուցման հեղինակը չի նշում նաև այդ անձանց կրթական մակարդակի վերաբերյալ տեղեկություններ և այն, թե հիշյալ Պոպովը և Սահակովը տիրպետու՞մ էին արդյոք հայոց լեզվին ու գրչությանը: Եվ ընդհանրապես, ի՞նչ կրթություն ունեին:

Խիստ կասկածելի է Բ. Մ. Հովհաննիսյանի կողմից թվարկած անձանց մասնագիտական կարողությունները դատական ձեռագրաբանության գիտական հիմունքների վերաբերյալ:

Պատմությանը հայտնի են շատ փաստեր, երբ բարձրորակ մասնագետներ չլինելու պատճառով առանձին փորձաքննություններ են կատարել ոչ իրավասու անձինք, որոնց եզրակացությունները զուրկ են եղել գիտական հիմնավորումներից և տվյալ բնագավառում որևէ գիտական հետք չեն թողել: Կարծում ենք՝ կարիք չկա այդ մարդկանց անունները հիշատակել, հանիրավի մտցնել գիտության պատմության մեջ: Էլ չենք խոսում այն մասին, որ այդ եզրակացությունները հավանաբար չեն նպաստել քրեական կամ քաղաքացիական գործերով ճշմարտության բացահայտմանը, այլ գուցե հակառակ վիճակն են ստեղծել և արժանի են պախարակման:

Մեզ հայտնի է, որ Խորհրդային իշխանության տարիներին դատական ձեռագրաբանության գծով էպիզոդիկ փորձաքննություններ հանձնարարվել է հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱ ակադեմիկոս Մկրտիչ Արամի Մազմանյանին, որը չափազանց համեստո-

¹ Տե՛ս Դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորություններն ու կատարելագործման ուղիները Սովետական Հայաստանում. (ՀՀ արդարադատության նախարարության դիպիլ-ի կազմավորման 25 ամյակին նվիրված գիտապրակտիկ կոնֆերանսի նյութերը), Երևան 1984թ., էջ 81, 82:

րեն էր արտահայտվում այդ բնագավառում իր կատարած աշխատանքների մասին, երբ տարիներ առաջ հնարավորություն ունեցա գրուցել նրա հետ (դա 60-ական թվականների վերջերին էր, երբ աշխատում էի թեկնածուական ատենախոսության վրա):

Չեռագրաբանական փորձաքննություն կատարելու համար կարելի էր դիմել նաև հայոց լեզվի այբբենարանների մեծահամբավ հեղինակ, Հանրապետությունում ճանաչված գիտնական, մանկավարժ Աշոտ Տեր-Գրիգորյանին, որի օգտակար խորհուրդները լսել ենք թեկնածուական ատենախոսությունը գրելիս:

Այս հարցը մասամբ քննարկել ենք նաև ռուսական կրիմինալիստիկական փորձաքննությունների պատմությունը շարադրելիս, բայց այնտեղ տարբերությունը Պոպովից և Սահակովից այն է, որ այդ փորձաքննությունները կատարվում էին գիտության տիտանների՝ Լոմոնոսովի, Մենդելեևի, Պիրոգովի, Բուտլերովի, Ջինինի և այլոց կողմից: Կարծում ենք՝ հետագա մեկնաբանություններն ավելորդ են:

Հարկ են համարում մեջբերել ավագ սերնդի մախկին քննիչ, ՀՀ ԴՓԳՀԼ պետի տեղակալ (1984թ.) Հ. Բ. Գեղամյանի ելույթից մի հատված. «Ես երկար տարիներ քննիչ եմ եղել և շատ լավ եմ հիշում (լավ հիշում են նաև իմ սերնդի քննիչները), որ այն ժամանակ նույնիսկ ամենավանդական փորձաքննություններ նշանակելու հնարավորություն չունեինք՝ համապատասխան մասնագետների պակասության պատճառով: Օրինակ՝ դատաձեռագրային փորձաքննությունների կատարումը մենք հանձնարարում էինք կուսակցության արխիվի վարիչ Անուշավան Թումանյանին, որը, չնայած իր մեծ բարեխղճությանը, առաջադրված հարցերին որոշակի պատասխան տալ չէր կարողանում¹»:

Կրիմինալիստիկական մյուս փորձաքննությունների մասին (փաստաթղթերի տեխնիկակրիմինալիստիկական, հետքաբանական, հաբիտոսկոպիայի և այլն) արխիվային տեղեկություններ չհայտնաբերվեցին, քանի որ դրանք չէին իրականացվում մշակված մեթոդիկաների, տեխնիկական միջոցների, հատկապես՝ մասնագետների բացակայության պատճառով:

1920-ական թվականներին ներքին գործերի քրեական հետախուզության վարչությունում գործում էր գիտա-տեխնիկական խումբ, որն իրականացնում էր մասնագետի այժմյան գործառույթները: 1940-ական

¹ Դատական փորձաքննությունների ժամանակակից հնարավորությունները ու կատարելագործման ուղիները սովետական Հայաստանում, Երևան 1984թ., էջ 26

թվականների սկզբներին այդ գիտա-տեխնիկական խումբը վերակազմավորվեց գիտա-տեխնիկական բաժնի (ՀՏՕ-ԳՏԲ):

ԳՏԲ-ն նույնպես, իրականացնում էր մասնագետի ֆունկցիաներ: Այդտեղ փորձաքննություններ չէին կատարվում: Այդ բաժնի աշխատակիցներն օգնում էին քննիչներին (հետաքննություն կատարող անձանց) քննչական գործողություններ կատարելիս հետքերի, իրեղեն ապացույցների հայտնաբերման, ֆիքսման, վերցման, զննության հարցերում, ինչպես նաև օպերատիվ աշխատանքներ կազմակերպելիս և իրականացնելիս:

Բաժինը ղեկավարում էր Սերգեյ Սմակովիչին: Այս բաժինը, որը հետագայում վերանվանվեց օպերատիվ-տեխնիկական բաժին (ՕՏՕ), փաստորեն համարվում է առաջին կրիմինալիստիկական հիմնարկը Հայաստանի Հանրապետությունում:

Նման ոչ մեծ ծառայություն կար նաև Պակուն, որը ղեկավարում էր Գեորգի Գարեգինի Թադևոսյանը՝ չափազանց բարեխիղճ մի անձնավորություն: 1980-ական թվականներին ՆԳՆ այդ բաժինը վերակազմավորվեց կրիմինալիստիկական փորձաքննությունների բաժնի, որին իրավունք վերապահվեց կատարելու կրիմինալիստիկական և որոշ այլ տեսակի փորձաքննություններ: Ներկայումս այն հագեցած է ժամանակակից տեխնիկական միջոցներով և մասնագետներով:

Հանրապետությունում փորձագիտական հիմնարկների և համապատասխան փորձագետ կադրերի բացակայությունը բացասաբար էր անդրադառնում քննչական և դատական մարմինների աշխատանքների վրա: Ինչպես տեսաբան, այնպես էլ պրակտիկ իրավաբանները լավ են պատկերացնում այդ բացի վնասակար հետևանքները, դրա համար էլ չենք փորձում այն հիմնավորել: Նշված բացը լրացնելու նպատակով Հայաստանի Խորհրդային Հանրապետության կառավարության 1959թ. ապրիլի 25-ի N149 որոշմամբ Երևանի պետական համալսարանում կազմակերպվեց կրիմինալիստիկայի գիտահետազոտական լաբորատորիա: Այն պետք է իրականացներ կրիմինալիստիկայի և դատական փորձաքննությունների վերաբերյալ գիտահետազոտական աշխատանքներ, ինչպես նաև քննչական և դատական մարմինների պահանջով փորձաքննություններ կատարեր քրեական և քաղաքացիական գործերով:

Պետք է ասել, որ հաճախ հիշյալ մարմինները փորձաքննությունների կատարումը նշանակում էին Թբիլիսիի կրիմինալիստիկական լաբորատորիայում, կամ, ինչպես նշեցինք, հանձնարարում էին ոչ իրավասու անձանց կամ պարզապես «յուլա էին գնում» առանց փորձաքննության կատարման:

Լաբորատորիայի ղեկավար նշանակվեց իրավաբանական ֆակուլտետի ուսումնական կաբինետի ավագ լաբորանտ, ՆԳՆ բազմափորձ նախկին օպերատիվ աշխատող, կենսաթոշակի անցած ներքին ծառայության մայոր Բագրատ Մարգարի Հովհաննիսյանը: Փորձագետներ՝ գիտաշխատողներ նշանակվեցին նույն թվականի (1959թ.) ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի շրջանավարտներ Ռևիկ Գուրգենի Բաբաջանյանը և Լևոն Պարզևի Օհանյանը, որոնք իրավամբ համարվում են կրիմինալիստիկայի գիտության և կրիմնալիստիկական փորձաքննությունների տեսության ու պրակտիկայի հիմնադիրները Հայաստանում:

Նախաքննության և դատարանի պրակտիկ աշխատողները գնալով ավելի հաճախ էին դիմում փորձագետ կրիմինալիստների օգնությանը: Կրիմինալիստիկական մեթոդները կիրառվում էին ոչ միայն հանցագործությունների քննության, հանցագործների հետախուզման և հաշվառման, այլև քաղաքացիական գործերի դատական լուծման, իսկ առանձին դեպքերում ոչ դատական բնույթի խնդիրների լուծման, օրինակ՝ պատմական փաստաթղթերի հետազոտման նպատակով:

Այս առումով նշանակալից է ՀՀ ԳԱ-ի հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի՝ Մատենադարանի պատվերով կատարված աշխատանքը, որն իրականացվեց ուլտրամանուշակագույն ճառագայթների կիրառմամբ (լուսանկարահանում անդրադարձող ուլտրամանուշակագույն ճառագայթներում), որը գոհունակությամբ ընդունվեց Մատենադարանի ղեկավարության կողմից և որին անմիջապես արձագանքեց «КОММУНИСТ» կենտրոնական թերթը (տե՛ս լուսանկարը):

Հիշատակության է արժանի նաև հայ մեծ վիպասան Բաֆթուն վերագրվող գրչի վրա եղած գրառումների նույնացման հետազոտությունը:

Նշված փորձաքննություններն իրականացվեցին տողերիս հեղինակի կողմից:

Ակտիվ աշխատանքներ կատարվեցին լաբորատորիան համապատասխան տեխնիկայով հագեցնելու համար: Այդ հարցում մեծ օգնություն էր ցույց տալիս Համալսարանի ռեկտորատը՝ ռեկտոր, ՀՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ս. Դավթյանի գլխավորությամբ:

Աշխատանքներ կատարվեցին կադրերի պատրաստման ուղղությամբ՝ Ռ. Բաբաջանյանը և Լ. Օհանյանը գործուղվեցին Մոսկվայի դատական փորձաքննությունների գիտահետազոտական լաբորատորիա՝ ստաժավորման (3 ամսով): Նրանց վերադառնալուց հետո 1959թ. ղեկտեմբեր ամսին և՛ լաբորատորիան, և՛ փորձագետները պատրաստ էին փորձաքննություններ կատարելու: Իհարկե, մինչ այդ, ապարատուրայի և նյութերի ձեռքբերման համար մի քանի անգամ կարիք զգացվեց մեկնել Մոսկվա:

Десять веков назад книга греческого философа Тимофея Элура «Полемика» была переведена армянским переводчиком, и полный текст ее сохранился только в армянском переводе.

Нам неизвестна история этой рукописи. Можно лишь предполагать, что за сотни лет она также испытала судьбу своего народа. Вот почему значительная часть листов этой книги попорчена временем и обстоятельствами. Казалось, что испорченные страницы никогда не расскажут о том, что на них написано. Но это только казалось.

Безрезультатно испробовав все известные средства по восстановлению текста, сотрудники Института древних рукописей Академии наук Армянской ССР — Матенадарана имени Месропа Маштоца обратились за помощью в научно-исследовательскую криминалистическую лабораторию государственного университета. Криминалисты имеют для этого соответствующий опыт и необходимую для исследования аппаратуру.

Работа по восстановлению исчезнувшего текста была поручена молодому эксперту, старшему научному сотруднику лаборатории Левону Оганяну. Оганян внимательно осмотрел лист пергамента под ультрафиолетовыми лучами, которые обладают свойством люминесценции — самосвечения невидимых глазу элементов. Приметив кое-какие штрихи, Л. Оганян сфотографировал лист книги в отображенных ультрафиолетовых лучах кварцевой лампы. Когда же диапозитивная фотопластика была соответствующим образом обработана, на ней появились слова и целые предложения, выведенные тысячу лет назад рукою древнейшего переписчика. Работа, выполненная Левоном Оганяном, была с удовлетворением принята сотрудниками Матенадарана. Сейчас в институте отбираются новые материалы, нуждающиеся в восстановлении.

Հատված «Կոմունիստ» քերթից (N280(8670), 30.11.1962)

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ լաբորատորիայի կազմավորման-կահավորման և փորձագետ կադրերի պատրաստման գործում մեծ ավանդ ունի այն ժամանակ ՌՍՖՍՀ արդարադատության նախարարության փորձագիտական մարմինների բաժնի վարիչ, հետազայում ՍՍՀՄ արդարադատության նախարարության դատական փորձաքննությունների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի դիրեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Ռոմանի Շյախովը: Նրա անունը Հայաստանի կրիմինալիստիկայի և կրիմինալիստիկական փորձաքննությունների պատմության մեջ պետք է գրվի ոսկե տառերով:

Դեկտեմբերի վերջերին Մոսկվայի նշված լաբորատորիայից Երևան ժամանեց փորձառու ձեռագրաբան փորձագետ Գլեբ Արմենակի Մխիթարովը, որի ամփոփական հսկողությամբ պետք է կատարվեն առաջին փորձաքննությունները: Առաջին փորձաքննությունը, որն իրականացվեց 1960թ. հունվարին Լ. Պ. Օհանյանի կողմից, անձի նույնացումն էր ստորագրությամբ: Այն իրականացվեց որոշակի եզրակացությամբ:

1960թ. ընթացքում նշված փորձագետներից Լ. Պ. Օհանյանը Հայաստանում առաջինը սովորեց և ավարտեց ՌՍՖՍՀ արդարադատութ-

յան նախարարության իրավաբանների վերապատրաստման բարձրագույն դասընթացները (6 ամիս և մեկ ամիս պրակտիկա Կիևի դատական փորձաքննությունների ինստիտուտում):

Ալիսոսանքով արձանագրում էմ, որ խոստումնալից կրիմինալիստփորձագետ Ռ. Գ. Բաբաջանյանը հրավիրվեց ԽՍՀՄ գերագույն դատարան՝ որպես խորհրդական: Հրավերը նա ընդունեց և տեղափոխվեց այնտեղ՝ չհասցնելով որևէ գիտական հետք թողնել, որից հետո ստիպված եղա կարճ ժամանակ միայնակ կատարել ձեռագրերի և փաստաթղթերի տեխնիկակրիմինալիստիկական հետազոտություններ, իսկ մինչ Վ. Մ. Սահակյանի աշխատելը նաև առանձին հետքաբանական հետազոտություններ:

Այդ ընթացքում մեզ միացան Վլադիմիր Միքայելի Սահակյանը, որը Մոսկվայի նշված դասընթացներն ավարտելուց հետո աշխատեց դատական հետքաբան և բալիստ՝ սկզբնավորելով այդ փորձաքննությունների կատարումը Հայաստանում, և Արտաշես Նշանի Սահակյանը, որը սկզբնավորեց ավտոտեխնիկական փորձաքննությունների կատարումը¹:

Նշված անձինք սկսեցին զբաղվել գիտահետազոտական աշխատանքներով:

Լաբորատորիայի տնօրեն Բ.Մ. Հովհաննիսյանի ջանքերով մեծ դժվարությամբ հիմնադրվեց «Դատական փորձաքննության հարցեր» պարբերականը, որը սակայն որոշ պաշտոնատար անձանց անպատասխանատվության և չկամության պատճառով 3 համար հրատարակվելուց հետո փակվեց:

Սակայն դա չխանգարեց, որ մեր սկսման գիտնականները հրատարակեին առանձին գիտական հոդվածներ, զեկուցումներով հանդես գալիս համամիութենական և միջազգային գիտական միջոցառումներում:

Նշանակալից է նաև այն, որ «կրիմինալիստիկա» առարկան սկսվեց դասավանդվել Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում՝ որպես ուսումնական դիսցիպլին, որին իր տեղը զիջեց այդ անունը կրող ձևական ժամավաճառությունը: Այդ առարկայի դասավանդմանը լծվեցին (սկզբում ժամավաճարի կարգով) Բ. Հովհաննիսյանը, Լ. Օհանյանը, Վ. Սահակյանը:

Տարիներ անց լաբորատորիայում սկսեցին կատարվել նաև այլ փորձաքննություններ. բացի ավտոտեխնիկականից՝ ավելացան դատա-հաշվապահական, իրեղեն ապացույցների ֆիզիկաքիմիական հետազոտություններ և այլն: Վերջինս կազմակերպվեց 1962թ. և օգնում էր նաև կրիմինալիստիկական որոշ փորձաքննությունների լուծմանն առաջադրվող

¹ Հետագայում նա աշխատեց ավտոտեխնիկական փորձաքննությունների բաժնի վարիչ, փորձագիտական լաբորատորիայի տնօրեն:

հարցերը պարզաբանելուն (օրինակ՝ կրակոցի վաղեմության պարզաբանում և այլն): Բաժինը ղեկավարում էր քիմիկ-տեխնոլոգ Գրիշա Կարապետի Հովհաննիսյանը՝ նշված փորձաքննությունների սկզբնավորողը Հայաստանում: Հաշվի առնելով լաբորատորիայի բովանդակային փոփոխությունը՝ այն վերանվանվեց «դատական փորձաքննությունների գիտահետազոտական լաբորատորիա (դիզիվ)»:

Ստեղծման առաջին տարիներին արդեն կատարվում էին և այնպիսի բարդ հետազոտություններ, որոնցից շատերը առաջինն էին Հանրապետության փորձագիտական պատմության մեջ: Այդ թվում.

1. Տեսանելի ճառագայթներով հարուցված լյումինեսցենցիայի պատկերի լուսանկարումը ինֆրակարմիր ճառագայթներում. կատարվեց քրեական գործով, որը վարում էր ՀԽՍՀ դատախազին առընթեր հատկապես կարևոր գործերի քննիչ Ս. Կուրդիյանը: Շատ են ցավում, որ այդ տարիներին կատարած աշխատանքների արխիվը, ըստ լաբորատորիայի ներկայիս տնօրենի հաղորդման, այրել են: Մեր որոնումներն էլ արդյունք չտվեցին:

2. Լուսանկարահանում անդրադարձող ուլտրամանուշակագույն ճառագայթներում (բացի վերը նշվածից, առաջիններից էր նաև ՀՀ ՆԳՆ ԳՏԲ-ից բերված մի փաստաթուղթ՝ այնտեղի աշխատակից-մասնագետ Աշոտ Գասպարյանի խնդրանքով: Կատարվեցին նաև տարբեր քրեական գործերով) և ուլտրամանուշակագույն ճառագայթներով հարուցված լյումինեսցենցիայի պատկերի լուսանկարում:

3. Սովերային լուսավորությամբ վերծանված ռեյենֆային անգույն տեքստ (մեկուսարանում գրված նամակի (քսիվ) տակ դրված թղթի վրա):

4. Չեռագիր տեքստ, գրված «ինքնասպան» կնոջ անունից, որում նա խնդրում էր ինքնասպանության համար ոչ մեկին չմեղադրել: Փորձագիտական հետազոտմամբ պարզվեց, որ ձեռագիրը կատարված էր ամուսնու կողմից՝ կնոջ ձեռագրին և գրավոր խոսքին նմանեցնելով:

Այս օրինակին ևս արձագանքեց կենտրոնական մամուլը՝ «Երևան» թերթը, որից ներկայացվում է հատված:

Արխիվային, ասել է՝ փաստական նյութերի բացակայությունը մեզ ստիպում է հիշողությամբ ներկայացնել մեր կողմից կատարված փորձաքննությունների մի փոքր մասը միայն, որոնք դրական մեծ արձագանք առաջացրին ժամանակին և առիթ հանդիսացան փորձագետ կադրերի ավելացման: Այստեղ խոսվեց 1960-62 թվականների մասին, երբ նման փորձաքննությունները կատարվում էին միայն իմ կողմից կամ Ռ. Բաբաջանյանի հետ համատեղ, օրինակ՝ վերը նշված սպանության գործով պարանի, որից կախված էր կինը, նույնացումը՝ կտրվածքի հետքով (ուրվագծով) և այլն:

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Ձեզ ֆորտայ հանցագործի մեղքերում, փորձեց հալո, օգնաթյան կանչել, բայց հաջորդ վարչականին անհշտացած ընկավ: Կատարելով էր սե գործը, մարդասպանը անհետացավ խառնարանում:

Առավոտայն գյուղը սովորականի պես արթնացավ, և յուր անմեղապես ասարածվեց անից ատեն, Եւստով զեպոթ վայրը շտապեցին միլիցիայի և դատաքննչական օրգանների այլապատգանները: Նրանց ուշագրությունը գրավեցին պարանի բավականին պինդ կապած օղակը, որով կախված էր կինը, Քաթի մի կտոր, որտեղ ինքնասպանը պահանջում էր ուղորդի շնորհագրել...

... Իրեզնե սպացույցները կասկած հարուցեցին ցենչական աշխատողների մաս: Թեպետ գտնել հանցագործին, չէ՛ որ ոչ մի վկա չկա: Բայց հանցագործության անխու վկաները, որ գրված էին նրանց սեղանին, շատ բան էին պատմում: Ծվ որոնումները է վերջը կանգ առան կնոջ նախիրն ամուսնու վրա: Հորինված ինչնակարծ նրան անհրաժեշտ են եղել կասկածները իրենից հեռու վանելու համար: Իսկ եթե դա այդպես չի՛, և անմեղ մարդն է կասկածի մահ անելում: Ինքնագրին շտաով ավելացավ մեկ արիչ վկա եւ. կնոջ ամուսնու արհեստանոցում հայտնաբերվեց պարան, որը արտաքինից հիշեցնում էր կախվելու համար օգտագործված պարանը: Արդյո՞ք մեկը մյուսին էր կարված: Որոշվեց երկու իրեզնե սպացույցներն էլ ենթարկել փորձաքննության:

Լաբորատորիայի վարիչը իրենց կատարած փորձաքննությունների պրակտիկայից հիշատակում է շատ օրինակներ:

Ան մի քնորոտ օրինակ: Ծրեանի արդյունաբերական ձեռնարկություններից մեկում ինժեներ Բ. Բ.—ն կեղծ անդորրագրերով դուրս էր գրել մեծ քանակությամբ շինանյութ և յուրացրել: Մեկայն դա սպացուցիչը առաջին հայացքից զգվար էր թվում, որովհետև վերջինս հրամարվում էր իր ստորագրությունից, պեզում, որ այն կեղծված է ուրիշների կողմից: Եւս համոզված եմ, որ անպայման կգտնեք հանցագործին, գտնատեսագրությունում կուրծք էր ծնում Բ.—ն:

Շնեց այդ փաստաթուղթն էլ ընկավ կրիմիալիստ փորձագետների մեջը: Ու երբ հասուկ լուսանկարումներ կատարվեցին, պարզվեց...

— Լսի՛ր.— հարցաքննության ժամանակ Բ.—ին ասաց գտնատեսագի օգնականը.— շնորհիվ լաբորատորիան հաստատել է, որ դա մեր ստորագրությունը չէ, այնուամենայնիվ ես համոզված եմ, որ զեղծարարը դուր եր:

— Ծա ստորոշ հոգով հավատում եմ փորձաքննությանը.— հրեմանքով տեղից վեր կացավ ինժեները.— եւ երբեք չի կարող սխալվել, և եթե գտնել է, որ մեղավոր չեմ, սերմն բանն ինչե՛մն է:

— Բանը նրանումն է, որ այնուամենայնիվ կեղծիքը ինչնեղք էր կատարել: Դա հաստատել է կրիմիալիստիկական փորձաքննությունը.— ասաց ինժեչը, սեղանին դեղիվ փորձաքննության սկսեց, որն ինքը հաստատել էր նրա ստորագրությունը:

Ինքնագրած մարդը լցացավ ինժեների երեսից: Եւ Բուլացած ընկավ մթառին, ընդունելով իր հանցանեղք:

Լաբորատորիան, որի մասին պատմում ենք, ընդամենը մեկ ստորվա պատմությունն օճի: Սակայն այդ կարճ ժամանակամիջոցում գտնաքննչական օրգաններին օգնելու գործում քիչ աշխատանք չեն կատարել այստեղ աշխատող փորձագետները: Մոսկվայից և Լենինգրադից ստացված լավագույն խորմարաններով կահավորված լաբորատորիան հնարավորություն է ընձեռում կատարել մի շարք փորձաքննություններ, ինչպես, օրինակ, մեռագրային, փաստաթղթերի կեղծիքների, թրվածքների, շերտանների, արտապրիկան (հետքերի), գաղտնիպատկական (մեղքերի հետքերով ավելու անձնակտրոնիան ճանաչում), ավտոտեխնիկական (մեքենաների վթարների պատճառների քայքայում) և այլն:

Ծվ ա՛ն օրինակը գործիքները մարդկանց մեղքերում դառնում են զարմանահարշ հուշաբույրներ, որոնք օգնում են փորձագետներին զգվարին գործում, սլզգություն տալիս նրանց մարքին ու ենթագրություններին, հանգեցնում միշտ եզրակացություններին:

Գիտությունը փորձված կրիմիալիստիկ մեղքում դառնում է վատանիկ զենք, և որքան էլ խորամանկ լինեն հանցագործները, մեղաքննում է նրանց՝ մեր հասարակությանը խորթ ամեն անուպի պորտաբույծներին:

Հետագայում դատաձեռագրաբանական և փաստաթղթերի տեխնիկակրիմինալիստիկական հետազոտությունների հարցերով զբաղվեցին նաև Գրիգոր Գարեգինի Գրիգորյանը, Տարիել Հաբեթնակի Մանուկյանը, Հովհաննես Բագրատի Մովսիսյանը, իսկ 70-ական թվականներին՝ նաև Ալեքսանդր Վռամի Հարությունյանը (դատաձեռագրաբանական փորձաքննության գծով):

Ի դեպ, հարկ ենք համարում նշել, որ Ա. Վ. Հարությունյանը ևս մեկ աստիճանով զարգացրեց դատական ձեռագրաբանության գիտական հիմքերը մեր Հանրապետությունում:

Բացի վերևում նշված գիտահետազոտական, պրակտիկ աշխատանքներից, լաբորատորիայում կատարվեցին և պաշտպանվեցին թեկնածուական թեզեր հետևյալ անձանց կողմից.

1. Հովհաննիսյան Բագրատ Մարգարի (կրիմինոլոգիայից):
2. Սահակյան Վլադիմիր Միքայելի, «Սպորտային և որսորդական փոքր տրամաչափի հրազենի և նրա գործադրումից առաջացած հետքերի ու զինամթերքի կրիմինալիստիկական հետազոտումը»:

3. Օհանյան Լևոն պարզևի, «Գրի կրիմինալիստիկական հետազոտման հիմնական դրույթները հայոց լեզվով կատարված ձեռագրերում»:

4. Մանուկյան Տարիել Հաբեթնակի, «Փաստաթղթերի կրիմինալիստիկական փորձաքննությունները սոցիալիստական սեփականության հափշտակության գործերով»:

5. Հարությունյան Ալեքսանդր Վռամի, «Հայոց լեզվով կատարված ձեռագրերի դատաձեռագրաբանական փորձաքննությունների տեսական և մեթոդական հիմունքները, մաթեմատիկական մոդելավորման մեթոդների կիրառմամբ»:

Ներկայումս նշված լաբորատորիան, որը կոչվում է փորձագիտական կենտրոն, Հանրապետության փորձագիտական հիմնարկների առաջատարն է, կազմված 11 լաբորատորիաներից:

Այն ղեկավարում է Ժորժ Արմենակի Ծատուրյանը, պոլիտեխնիկ կրթությամբ ինժեներ-մեխանիկ, վերապատրաստվել է Դատական փորձաքննությունների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտում (Մոսկվա)՝ ավտոտեխնիկական և տրանսպորտային հետքաբան-փորձագետ:

1972 թվականից Երևանի պետական համալսարանում գործում է քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոն: Ամբիոնում աշխատում են կրիմինալիստ դասախոսներ. Լևոն Պարզևի Օհանյանը

(1959 թվականից), երբ մասնագիտությունը մտնում էր քրեական իրավունքի ամբիոնի կազմում: Առանձին ամբիոն ձևավորվելուց հետո՝ 1983 թվականի սեպտեմբերից մինչև օրս ղեկավարում է այն:

Վլադիմիր Միքայելի Սահակյանը՝ աշխատում է 1959 թվականի հուլիսից, մի քանի տարիների ընդմիջումով:

Վահե Գուրգենի Ենգիբարյանը, աշխատում է 2003թ. սեպտեմբերից: 2000թ. նոյեմբերից համալսարանի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Մ. Մարտիրոսյանի հրամանով նշված ամբիոնում կազմավորվեց կրիմինալիստիկայի և դատական փորձաքննությունների պրոբլեմների հետազոտման գիտագործնական կենտրոն՝ Լևոն Պարզևի Օհանյանի գլխավորությամբ:

Կենտրոնի ստեղծման և կահավորման գործում մեծ ավանդ ունի իրավաբանական ֆակուլտետի ղեկան, կրիմինալիստ-դատավարագետ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Սերգեյի Ղազինյանը:

Այժմ Երևանում գործում է դատական փորձաքննությունների «Ազգաատ» կոչվող բարձրագույն ուսումնական հաստատությունը, որը ոչ պետական հիմունքներով բացվել է 1991թ., իսկ 2002թ. ստացել է պետական արտոնագիր: Ինստիտուտը կազմակերպել և ղեկավարում է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմաիրավաբանական ֆակուլտետի շրջանավարտ, պատմական գիտությունների թեկնածու, իրավունքի հարցերին քաջածանոթ Ազատ Պատվականի Թաղևոսյանը:

ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱ

ՉԼՈՒԽ 10. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՌԱՐԿԱՆ

Կրիմինալիստիկայի գիտությունը, մասնավորապես, կրիմինալիստիկական տեխնիկական կոչված է քրեական դատավարությանը զինելու քննության գիտական մեթոդներով՝ որպեսզի իրականացնելով հանցագործությունների լրիվ և արագ բացահայտմանը, հանցագործների մերկացմանը, օրենքի ճիշտ կիրառման ապահովմանը:

Ռուս և համաշխարհային մյուս կրիմինալիստների կողմից նշանակալից աշխատանքներ են կատարվել քննչական պրակտիկայում գիտատեխնիկական հնարքների և միջոցների ներդրման ուղղությամբ: Այդ գործում անմասն չեն մնացել նաև Հայաստանի կրիմինալիստները: Նշանակալից են Լ. Պ. Օհանյանի, Վ. Մ. Սահակյանի, Տ. Հ. Մանուկյանի, Ա. Վ. Հարությունյանի աշխատանքները:

Սակայն կրիմինալիստիկական տեխնիկայի ընդհանուր տեսական հարցերին մեր Հանրապետությունում առայժմ պատշաճ ուշադրություն չի դարձվել¹:

Կրիմինալիստիկական տեխնիկայի տեսական մշակման անհրաժեշտությունը բխում է այն կարևոր դերից, որն ունի գիտատեխնիկական միջոցների կիրառումը հանցագործություններ քննելիս: Այդ առումով էական է համարվում կրիմինալիստիկական տեխնիկայի առարկայի և խնդիրների մասին հարցը, որն ունի իր պատմությունը, որի մասին շատ համառոտ ներկայացնում ենք ստորև:

Նախ՝ կրիմինալիստիկական տեխնիկայի անվանման մասին: Այն տարբեր հեղինակների կողմից տարբեր կերպ էր անվանվում: Օրինակ՝ Ի. Ն. Յակիմովի, Ն. Դ. Վորոնովսկու աշխատություններում անվանվում էր «քրեական տեխնիկա» (уголовная техника), Ն. Պ. Մակարենկոյի, Վ. Ի. Գրոմովի, Ե. Ու. Ջիցերի աշխատանքներում՝ «քննության տեխնիկա»

¹ Բացառություն է կազմում մեր կողմից հեղինակած «Կրիմինալիստիկա» (տեխնիկա) աշխատանքը, 1993թ., որը գրվել է որպես գիտական աշխատանք, բայց հրատարակվել որպես ուսումնական ձեռնարկ:

(տեխնիկա բացահայտման) կամ քննչական տեխնիկա (следственная техника):

Հայտնի է, որ յուրաքանչյուր տերմին հնարավորության սահմաններում պետք է լրիվ արտահայտի համապատասխան հասկացության բովանդակությունը և օգնի ճիշտ օգտվելու տվյալ հասկացությունից: Այս ընդհանուր դրույթը լիովին վերաբերում է նաև կրիմինալիստիկական տեխնիկային: Սակայն նշված տերմինները չէին բավարարում այդ պահանջներին, քանի որ լրիվ չէին համապատասխանում կրիմինալիստիկական տեխնիկայի բովանդակությանը:

«Քրեական տեխնիկա» հասկացությունը սահմանափակում էր դրա կիրառման շրջանակները՝ քրեական դատավարությամբ, այն դեպքում, երբ նրա մի շարք հնարքներ և միջոցներ կարող էին կիրառվել և կիրառվում են քաղաքացիական դատավարությունում: «քննության տեխնիկա» և «քննչական տեխնիկա» (техника расследования) և (следственная техника) տերմինները ևս անհաջող էին, քանի որ դրանք ենթադրում էին, որ տեխնիկայից օգտվում է միայն քննիչը գործեր քննելիս՝ դրանով բացառելով տեխնիկայի կիրառումը փորձագետ-կրիմինալիստների կողմից: Դրա համար էլ ճիշտ համարվեց «կրիմինալիստիկական տեխնիկա» անվանումը, որն ավելի լիարժեք է արտահայտում կրիմինալիստիկայի այդ բաժնի էությունը, բովանդակությունը:

Ինչ վերաբերում է կրիմինալիստիկական տեխնիկայի առարկայի բնորոշմանը, ապա մինչև այժմ էլ այդ հարցում միասնականություն չկա:

Դեռևս անցած դարի 20-ական թվականներին Ի. Ն. Յակիմովը կարծում էր, որ «Քրեական տեխնիկական ուսումնասիրում է գիտական եղանակների ու հնարքների կիրառումը, մեծամասամբ վերցված այլ գիտություններից, հատկապես քիմիայից, ֆիզիկայից, բնագիտությունից ու բժշկությունից, հանցագործությունների առանձին պահեր կամ հանգամանքներ քննելիս և հանցագործների ֆիզիկական նշանների գրանցումը կատարելիս»¹:

Ակնհայտ է, որ նշված բնութագիրը կրիմինալիստիկական տեխնիկային և կրիմինալիստիկայի ողջ գիտությանը ներկայացնում էր պասիվ դերում, այն դիտելով իրավական, բժշկական, բնագիտական և տեխնիկական տեղեկությունների ամբողջություն: Այդ տրամաբանությամբ առաջնորդվելու դեպքում կտեսնենք, որ կրիմինալիստիկական օգտվում է

¹ И. Н. Якимов, Криминалистика, уголовная техника, М. 1929г., т. 3:

միայն գիտության տարբեր բնագավառի հաղորդումներից և ինքնուրույն գիտություն չի համարվում:

Այս հարցադրումը վաղուց արդեն մերժվել է կյանքում: Այդ հարցին 20-րդ դարի 30-ական թվականներին անդրադարձավ նաև Վ. Ի. Գրոմովը, որը նշում էր, որ գիտական-քրեական տեխնիկայի խնդիրների մեջ, որպես կրիմինալիստիկայի առանձնահատուկ բաժին, մտնում է գիտատեխնիկական գիտելիքների ու մեթոդների մասնավորապես բնական գիտությունների կիրառումը հանցագործություններ քննելիս¹:

Այդ հարցի վերաբերյալ մոտավորապես նույն կերպ էին արտահայտվում Ն. Պ. Մակարենկոն² և Ն. Դ. Վորոնովսկին³:

Նշված կարծիքները ներկայացնելով, նպատակ ունենք նաև մեր մասնագետներին տեղեկացնել, պատմական այնպիսի հեղինակների, որոնք կան հայտնի չեն, կան քչերին են հայտնի, թեև նրանք զգալի ներդրում են ունեցել մեր գիտության զարգացման գործում:

Դառնալով մեր խնդրին՝ նշենք սակայն, որ թվարկած հեղինակները ելնում էին այն սխալ դրույթից, որ կրիմինալիստիկան (տեխնիկան) ունի միայն կիրառական նշանակություն, քանի որ այն ընդգրկում է այլ գիտությունների տվյալները:

Այս մասին համառոտ խոսել ենք սույն աշխատանքի առաջին բաժնում, այստեղ ~~ավելացնենք միայն, որ շնայած կրիմինալիստիկան օգտագործում է բնական և տեխնիկական գիտությունների տվյալները, բայց ոչ մեխանիկորեն, այլ դրանք վերաճառելով, հարմարեցնում է իր նպատակներին, որոնք համապատասխանում են քննչական, դատական մարմինների առջև ծառայած խնդիրներին:~~

Ներկայումս կրիմինալիստիկական տեխնիկան իրենից ներկայացնում է ~~տեխնիկական հմարքների, մեթոդների և միջոցների համակարգ,~~ ապացույցների հայտնաբերման, հավաքման և հետազոտման նպատակով: Այն ներառում է ճան իրեղեն ապացույցների ամրապնդումը և փաթեթավորումը, փորձաքննություն կատարելու համար համեմատական մոլուցների պատրաստումը և այլ գործողություններ՝ գիտատեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Ե. Ու. Չիցերը հանցագործությունների քննության տեխնիկան բնութագրում է որպես իրեղեն ապացույցների և հետազոտման նպատակով ֆիզիկական անձանց հատկանիշների հետազոտման հմարքների համա-

¹ В. И. Громов, методика расследования преступлений, М. 1930г., т. 5:

² Н. П. Макаренко, техника расследования преступлений, Харьков 1931г., т. 4:

³ Н. Д. Вороновский, уголовная техника, М. 1931г., т. 8:

կարգ, ճանաչման և անձանց կամ առարկաների իդենտիֆիկացման նպատակով, որոնք անցնում են քննչական գործերով¹:

Նշված աշխատության հրատարակումից տասը տարի անց նման բնորոշում տրվեց Մ. Ա. Չելցովի կողմից քրեական դատավարության դասագրքում:

Այդ բնորոշումը ընդգրկում է միայն հետազոտման հնարքների համակարգը և ոչինչ չի ասում իրեղեն ապացույցների հայտնաբերման, ամրապնդման և վերցման գիտատեխնիկական միջոցների մասին:

Որոշ կրիմինալիստների գայթակղությունը այն հնարավորությամբ, որ բնական և տեխնիկական միջոցների տվյալները կարելի է օգտագործել իրեղեն ապացույցների հավաքման և հետազոտման համար, երբեմն ընդունում է միակողմանի բնույթ և այդ հեղինակներին հակում է կրիմինալիստիկական տեխնիկական ամբողջ կրիմինալիստիկայի հետ նույնացնելուն:

Ներկայացված բոլոր սահմանումների էական թերությունն այն է, որ դրանցում չէր ընդգծվում կրիմինալիստիկական տեխնիկայի օրգանական կապը հանցագործությունների քննության տակտիկայի և մեթոդիկայի հետ: Ի դեպ, նշենք այն հանրահայտ փաստը, որ գիտատեխնիկական հնարքները և միջոցները իրականացվում են հանցագործությունների քննության կրիմինալիստիկական տակտիկայի ու մեթոդիկայի միջոցով: Մյուս կողմից, անհրաժեշտ է նկատել, որ մեթոդիկան է որոշում առանձին հանցագործությունների քննության մեջ գիտատեխնիկական միջոցների և տակտիկական հնարքների կիրառման առանձնահատկությունները: Կրիմինալիստիկական տեխնիկայի առարկայի ճիշտ սահմանումը մեծ չափով կախված է կրիմինալիստիկայի գիտության համակարգի հարցի լուծումից և այդ համակարգում կրիմինալիստիկական տեխնիկայի զբաղեցրած տեղից:

Մինչև 20-րդ դարի 60-ական թվականները ուսումնական ձեռնարկներում, դասագրքերում կրիմինալիստիկական տեխնիկան ու տակտիկան մտցվում էին առարկայի «ընդհանուր» մասում, իսկ հանցագործությունների առանձին տեսակների քննության մեթոդիկան՝ «հատուկ մասում»²:

Նույն ժամանակաշրջանում կրիմինալիստիկայի համակարգը կազմվում էր նաև ավելի ընդունելի ձևով. «կրիմինալիստիկական տեխ-

¹ Криминалистика, техника и тактика расследования преступлений, М. 1938г., т. 4:

² Стен Криминалистика, учебник для вузов, под. ред. А. И. Винберга и С. П. Митричева, ч. I, 1950г., А. И. Винберг, Б. М. Шавер, Криминалистика, уч. для юридических школ, М. 1950г. և այլն:

նիկա», «կրիմինալիստիկական տակտիկա» և «առանձին հանցագործությունների քննության մեթոդիկա»¹: Այս համակարգը ընդունելի էր նրանով, որ կրիմինալիստիկական տեխնիկան առանձնացնում էր որպես ինքնուրույն բաժին:

Կարծում ենք՝ կրիմինալիստիկական տեխնիկան բնութագրելիս անհրաժեշտ է միշտ հիշել, որ բնական և տեխնիկական գիտությունների տվյալները, որոնք օգտագործվում են կրիմինալիստիկական տեխնիկայում, կիրառվում են քրեական դատավարության բնագավառում, որը և նրանց տալիս է առանձնահատուկ բնույթ:

Ինչպես արդարացիորեն նշում է Ա. Ի. Վինբերգը «քրեական դատավարությունից դուրս դատաքննչական մարմինների գործունեությունից դուրս կրիմինալիստիկական տեխնիկա չկա, որը մտնի կրիմինալիստիկայի գիտության մեջ»²:

Այդ տեսակետին էր նաև Ա. Ն. Վասիլևը: Նա գրում էր. «Եթե դեպքի տեղից մատնադրոշմները երևակելու, վերցնելու և ամրապնդելու համար անհրաժեշտ է կիրառել ֆիզիկական և քիմիական միջոցներ, ապա ո՛չ ֆիզիկան, ո՛չ քիմիան ինքնըստինքյան իրենց առջև այդ խնդիրը չեն դնում, քանի որ դա նրանց չի հետաքրքրում, չի համապատասխանում իրենց կոչմանը: Նշված խնդիրը դնում և լուծում են կրիմինալիստները՝ օգտագործելով ֆիզիկական և քիմիական միջոցները և մշակելով դրանք հատուկ կրիմինալիստիկական ուղղությամբ»³:

Կրիմինալիստիկական գրականության մեջ լայնորեն քննարկվում է կրիմինալիստիկական տեխնիկայի միասնականության հարցը և դրա հետ կապված քննիչի և փորձագետի կողմից դրա կիրառման սահմանների հարցը:

Այդ հարցերին անդրադարձել են Ա. Ի. Վինբերգը, Ս. Պ. Միտրիչևը, Գ. Ի. Զոչարովը, Ա. Ռ. Շլյախովը, Վ. Պ. Կոլմակովը, Ջ. Մ. Սոկոլովսկին, Ա. Վ. Դուլովը, Ի. Ֆ. Կրիլովը և այլք:

Այս հարցը տեսական և պրակտիկ մեծ հետաքրքրություն է ներկայացնում, դուրս է մեր նպատակների շրջանակից և առանձին վերլուծության կարիք ունի:

¹ Տե՛ս օրինակ՝ Советская криминалистика, уч. для вузов, под. ред. С. П. Митричева и Н. В. Терзиева, М. 1958г. և այլն:

² «Советское государство и право», 1955г, №08, էջ 82:

³ А. Н. Васильев, Следственная тактика, ее предмет и место в системе советской криминалистики, тезисы докладов на межвузовской конференции по криминалистике, 1960г., էջ 2:

Կրիմինալիստիկական տեխնիկան հանցագործությունների քննության գործում գիտական դրույթների, տեխնիկական միջոցների ու մեթոդների ներդրման հնարքների համադրող է: Կրիմինալիստիկական տեխնիկական ծառայում է ուսումնասիրվող իրադարձությունների, դեպքերի և հանցագործություն կատարած անձանց վերաբերյալ տեղեկություններ հայտնաբերելու ու հետազոտելու, ասպացույցներ հայտնաբերելու, վերցնելու, ամրապնդելու և դրանք հանցագործությունների քննության ու կանխման նպատակներին ուղղելու գործին: Բացի տեսական դրույթների շարադրանք լինելուց, այն ընդգրկում է նաև տարբեր սարքերի, տեխնիկական հնարքների ու միջոցների ամբողջությունը: Կրիմինալիստիկական տեխնիկայի մեթոդներն ու հնարքները մշակելիս հիմնվել են բնական և տեխնիկական գիտությունների ժամանակակից նվաճումների վրա, որոնք գնալով կատարելագործվում են՝ հենվելով քննության առաջավոր, ընդհանրացված փորձի վրա, ինչպես նաև, վերամշակվում և հարմարեցվում են հանցագործությունների քննության նպատակներին:

Կրիմինալիստիկական տեխնիկան լայնորեն կիրառում է ճանաչողության մասնավոր գիտական մեթոդները և մտավոր գործունեության տրամաբանական ապարատը՝ անալիզը, սինթեզը, ինդուկցիան, դեդուկցիան, մտահանգումը և այլն, կիրառում է այնպիսի էմպիրիկ հնարքներ, ինչպիսիք են դիտարկումները, համեմատումը, փորձարարությունը: Այստեղ կիրառվում են ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, մաթեմատիկայի, լեզվաբանության և այլ գիտությունների կողմից մշակված հատուկ գիտական մեթոդներ:

Կրիմինալիստիկական տեխնիկայի մեջ մտնող գիտատեխնիկական միջոցները ծառայում են երկու հիմնական նպատակների. դրանց մի մասը մտնում է քննիչի գիտատեխնիկական հանդերձանքի մեջ և կիրառվում է հանցագործությունների քննության ու կանխման նպատակներով, մյուս մասը նախատեսվում է իրեն նապացույցների ռետազոտման համար և կիրառվում փորձաքննությունների գործընթացում: Ելնորեն ռետազոտվում են նաև ընդհանուր տեխնիկական միջոցներ, ինչպես, օրինակ, շարժական կրիմինալիստիկական լաբորատորիաները, որոնք սարքավորված են ավտոմեքենաների վրա, ռադիոսարքեր, որոնք նախատեսված են քննչական և օպերատիվ գործողությունների իրականացման ժամանակ կապ հաստատելու համար և այլն:

Կրիմինալիստիկական տեխնիկայի բոլոր հնարքներն ու մեթոդները մշակվել և մշակվում են քննչական և դատական պրակտիկայի ընդհան-

րացմամբ, դատավարական օրենքի պահանջներին համապատասխան, որը և ապահովում է կրիմինալատիկական տեխնիկայի կիրառման իրավաբանական հիմնավորումը:

Կրիմինալիստիկական տեխնիկական ամենից առաջ զբաղվում է ամենահնարավոր հետքերի ու իրեղեն ապացույցների հայտնաբերման, պահպանման, ամրապնդման, վերցման և հետազոտման միջոցների, մեթոդների ու հնարքների մշակմամբ: Այդ հնարքների ու միջոցների օգնությամբ հետազոտվում են նաև հանցագործների անատոմիական ու ֆունկցիոնալ հատկանիշները, մշակվում են քննվող հանցագործության համար նշանակություն ունեցող տարբեր օբյեկտների նկարագրման, համակարգման և հաշվառման հնարքները¹ և այլն: Այն կիրառվում է օրենքով նախատեսված քննչական գործողություններ կատարելիս: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մի շարք հոդվածներ ուղղակիորեն նախատեսում են (զննության, խուզարկության, փորձարարության և այլն) լուսանկարահանման, չափումներ կատարելու, հետքերի կադապարման, ձայնագրման և այլ աշխատանքներ:

Կրիմինալիստիկական տեխնիկայի կիրառման փաստը և արդյունքները ամրապնդվում են համապատասխան քննչական գործողության արձանագրության մեջ: Եթե կրիմինալիստիկական տեխնիկական կիրառվի քր. դատ. օրենքի պահանջների խախտումով, ապա տեխնիկայի կիրառման արդյունքները կկորցնեն իրենց ապացուցողական նշանակությունը:

~~Ներկայումս կրիմինալիստիկական տեխնիկական ընդգրկում է հետևյալ ավանդական բնագավառները՝~~

1. Կրիմինալիստիկական (դատական) լուսանկարչություն,
2. Հետքաբանություն (տրաստոլոգիա),
3. Կրիմինալիստիկական հրազենագիտություն (բալիստիկա, ձգաբանություն),
4. Գրի կրիմինալիստիկական հետազոտում,
5. Փաստաթղթերի տեխնիկակրիմինալիստիկական հետազոտում,
6. Կրիմինալիստիկական հաբիտուսկոպիա (ամձի կրիմինալիստիկական նույնացումը արտաքին հատկանիշներով):

Վերջին տարիներս այդ ավանդական տեսակներին ավելացել են նաև տարբեր նյութերի կրիմինալիստիկական հետազոտությունը, կրիմինալիստիկական միկրոլոգիան, կրիմինալիստիկական ֆոնոսկոպիան և այլն:

¹ Թեև մենք նպատակահարմար ենք գտել հաշվառումը տեղափոխել կրիմինալիստիկական տակտիկայի մեջ, որտեղ և կտրվի դրա հիմնավորումը:

Հանցագործությունների ~~քննության ընթացքում~~ կրիմինալիստիկական տեխնիկան կիրառվում է քննիչի, մասնագետի, փորձագետի և դատարանի կողմից: Տեխնիկական միջոցների այնպիսի տարբերակում, որը ցույց տար, թե ո՞ր տեխնիկան ո՞ւմ կողմից պետք է կիրառվի, չի կարող լինել: Այդ միջոցներից յուրաքանչյուրի կիրառումը կախված է նրանից, թե ի՞նչ նպատակով և ի՞նչ պայմաններում է զգացվում դրա անհրաժեշտությունը: Տարբեր են նաև դրանց կիրառումը կարգավորող դատավարական նորմերը:

~~Քննիչը և մասնագետը~~ կրիմինալիստիկական տեխնիկա կիրառում են քննչական գործողություններ կատարելիս, փորձագետը՝ փորձաքննություն կատարելիս, որի արդյունքը՝ փորձագետի եզրակացությունը, համաձայն ՀՀ քր. դատ. օր. 104 հոդ., համարվում է ապացույց: Իսկ քննիչի հետևությունները քննչական գործողություններ կատարելիս, այդ թվում մասնագետի մասնակցությամբ, դատական ապացույց չեն համարվում: Ապացույց են համարվում այն տվյալները, որոնք կազմում են այդ հետևությունների հիմքը:

Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ քննիչի և մասնագետի կողմից կրիմինալիստիկական տեխնիկա կիրառելիս պետք է օգտագործվեն միայն այն մեթոդներն ու միջոցները, որոնք իրեղեն ապացույցի վնասում կամ ոչնչացում չեն առաջացնում, որովհետև հակառակ դեպքում կարող է դժվարանալ կամ անհնարին դառնալ հետագա հնարավոր փորձաքննությունը: Դատարանի կողմից կրիմինալիստիկական տեխնիկան կիրառվում է մույն սկզբունքներով, ինչ սկզբունքներով կիրառվում է քննիչի ու մասնագետի կողմից:

§ 1. ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ

Հավաքածուների թվին են դասվում քննչական ճամպուկը, կրիմինալիստ դատախազի ճամպուկը, փորձագիտական պայուսակը և այլն: Ոստիկանության և դատախազության մարմինների տրամադրության տակ կան նաև հատուկ ավտոմեքենաներ, որոնք հագեցված են ժամանակակից կրիմինալիստիկական տեխնիկայի, լուսավորման ու կապի միջոցներով: Դրանք կոչվում են շարժական կրիմինալիստիկական լաբորատորիաներ:

Գիտատեխնիկական միջոցների հավաքածուները նախատեսված են առաջին հերթին տեղազննություն և որոշ այլ քննչական գործողություններ կատարելու համար: Դրանք կազմված են հետևյալ բաժիններից՝ 1. հետքերի հետ աշխատելու տեխնիկական միջոցներ, 2. որոնող տեխնիկա, 3. լուսանկարման տեխնիկա, 4. փաստաթղթային ամրապնդման, 5. այլ գործիքներ, որոնք անհրաժեշտ են դեպքի տեղի զննության, հետքերի և իրեղեն ապացույցների վերցման համար: Կրիմինալիստ դատախազի ճամպուկում կան նաև անալիտիկ տեխնիկայի միջոցներ՝ որոշ օպտիկական և էլեկտրոնային-օպտիկական սարքեր, իրեղեն ապացույցները սպեկտրի տեսանելի, ուլտրամանուշակագույն և ինֆրակարմիր ճառագայթներում նախնական հետազոտման ենթարկելու համար: Այստեղ կան նաև երկու խոշորացույց, որոնցից մեկը չափողական է՝ 10X մեծացմամբ, մյուսը՝ լուսավորող, որը հնարավորություն է տալիս պատկերը ստանալ երեք անգամ մեծացված: Իրեղեն ապացույցները ուլտրամանուշակագույն ճառագայթներում լյումինեսցենտային անալիզի ենթարկելու համար հավաքածուում նախատեսված է դյուրատար ուլտրամանուշակագույն լուսարձակ:

Օբյեկտները ինֆրակարմիր ճառագայթներում զննելու և նույն ճառագայթներում նախնական հետազոտության ենթարկելու համար նախատեսված է էլեկտրոնային օպտիկական փոխարկիչ (ՅՕՈՒ):

Հետքերի հետ աշխատելու պարագաների բաժնում կարևոր տեղ են զբաղեցնում ձեռքերի հետքերին վերաբերող նյութերը, որոնք ամփոփված են հատուկ ժողովածուներում: Այս նյութերը նախատեսված են հեշտացնելու և ավելի արդյունավետ դարձնելու մատնահետքերի վրա տարվող աշխատանքը: Մասնավորապես նախատեսվում է մատնահետքերի մշակումը յոդի գոլորշիներով, հետագայում վերցվող հետքը ամրապնդելով օրթո-տոլիդինի լուծույթում մշակված ֆոտոթղթի վրա: Այդ նպատակի համար ճամպուկներում կան յոդի բյուրեղներով խողովակներ և օրթո-տոլիդին:

Քննչական ճամպուկներում կան գրաֆիտի և այլումինի փոշիներ անգույն, քրտնաճարպային մատնահետքերի հայտնաբերման համար: Կրիմինալիստ դատախազի ճամպուկում կան այլ փոշիներ ևս, որոնք ապահովում են տարրեր օբյեկտների վրա եղած հետքերի արդյունավետ մշակումը (մուր, ցինկի օքսիդ, բրոնզ և այլն): Այդպիսի փոշիներից է նաև ջրածնով վերականգնված երկաթի փոշին, որը հետքի վրա կուտակվում է հաստատուն մագնիսի միջոցով: Վերջինս երկաթի փոշու հետ միասին կոչվում է «մագնիսական վրձին»:

Անձանց և չճանաչված դիակների մատնադրոշմները ստանալու համար նախատեսված է թիթեղ, գլանիկ և տպագրական ներկ:

Պինդ օբյեկտների վրա մնացած ծավալային հետքերի կադապարման համար հավաքածուներում կան սիլիկոնային մածուկներ, մասնավորապես «Կ» մածուկը՝ թիվ 18 հակազդակով: Այս մածուկը հնարավորություն է տալիս կադապարել ամենատարբեր բնույթի հետքեր (ջարդոդ գործիքների, ձեռքի, բորիկ ոտքի և այլն): Սորում մակերեսների վրա (ավազ, ցեմենտ, ալյուր և այլն) մնացած հետքերը բնական վիճակում վերցնելու համար այս բաժնում երաշխավորված է պերբլորվիմիլային խեժի ացետոնային լուծույթ: Հետքերի կադապարման համար նախատեսված են նաև գիպս, պլաստիլին, պարաֆին և այլն:

Հավաքածուի հաջորդ բաժնի մեջ մտնում են այն սարքերը, որոնք նախատեսված են թաքցված օբյեկտների հայտնաբերման համար:

Նկատի ունենալով, որ սույն աշխատանքում այլևս անհրաժեշտություն չի առաջանալու խոսել որոնող տեխնիկայի մասին, նպատակահարմար ենք գտնում մի փոքր ավելի մանրամասն ներկայացնել դրանք:

Որոնող սարքերից է մետաղորոնիչը (МИП): МИП մետաղորոնիչը ինդուկցիոն տիպի է և աշխատում է կիսահաղորդիչներով: Նախատեսված է սև և գունավոր (այդ թվում ազնիվ) մետաղներից պատրաստված իրերի որոնման համար: Այս մետաղորոնիչը հնարավորություն է տալիս հայտնաբերել մինչև 35 սմ խորությունում թաղված իրեր, օրինակ՝ հրազեն, պարկուճ և այլն: Որոնող էլեմենտը պետք է շարժել հողի մակերևույթից 5 սմ-ից ոչ բարձր: Հոսանքի աղբյուրը հաշվարկված է չորս ժամ անընդհատ աշխատանքի համար: Բաց տեղանքում այս ապարատով աշխատելիս պետք է ընտրած ուղղությամբ առաջ քայլելով որոնող էլեմենտը անընդհատ շարժել աջ ու ձախ: Ականջակալ-ընդունիչում ազդանշան լսելիս պետք է դադարեցնել շարժումը և ստուգել այն առարկան, որի պատճառով առաջացել է ազդանշանը:

Շինություններում մետաղորոնիչով աշխատելը դժվարանում է. նեղվածքի պատճառով շարժումները կաշկանդվում են: Բացի այդ, տարբեր մետաղական առարկաների առկայությունը խոչընդոտում է հարցի դրական լուծմանը: Այդ առարկաներից են՝ կառույցի ամրանները (հատակի, առաստաղի, պատերի), գազի, ջրի, կոյուղու խողովակները, ջեռուցման մարտկոցները, դռների, պատուհանների, կահույքի մետաղական մասերը, էլեկտրական լարերն ու սարքերը, մեխերը և այլն:

Շրջապատող միջավայրի իրադրությամբ համապատասխան շինություններում իրականացվում է որոնող սարքով աշխատելու երկու

հնարք: Առաջին հնարքը նույնն է, ինչ բաց տեղանքում աշխատելիս. որոնող էլեմենտը շարժվում է հատակի, պատերի, դռների, պահարանների և այլ օբյեկտների մակերեսների վրա: Երկրորդ հնարքի դեպքում որոնող էլեմենտը չի շարժվում, այլ հետազոտվող օբյեկտները մոտեցվում են նրան: Այդպիսի օբյեկտներ կարող են լինել այլուրի, բրնձի, ձավարի և նման նյութերի ամանները (թղթից կամ կտորից տոպրակները և այլն), մուրաբա, մեղր, յուղ և այլ մթերքներ պարունակող պլաստմասսայե կամ ապակյա անոթները, կավե, ապակյա և նման նյութերից ծաղկամանները, մանկական (ոչ մետաղական) խաղալիքները, պլաստիլինի սալիկները և այլն:

Պատերի մեջ գաղտնարաններ որոնելիս պետք է նկատի ունենալ էլեկտրական գծերի առկայությունը, որոնցից առաջացած ձայնը տարբերվում է մետաղական առարկաների առաջացրած ձայնից (որոնիչի փոփոխական հոսանքի առավելագույն հնչունություն է նկատվում, երբ որոնող էլեմենտը մոտենում է դրանց):

Եթե պատերը ուսումնասիրելիս կասկածելի տեղ հայտնաբերվի, պետք է անցնել հարևան սենյակը և պարզել. կա՞ արդյոք այդ տեղում առարկա, որը կարող էր առաջացնել մետաղորոնիչի ազդանշանը: Եթե պատի հակառակ կողմում հայտնաբերվի այդպիսի առարկա, պետք է միջոցներ ձեռք առնել այն վերացնելու համար, որից հետո կասկածելի տեղը ստուգել մետաղորոնիչով պատի երկու կողմերից:

Գաղտնարանի բացումը և այնտեղից որոնվող առարկայի դուրսբերումը պետք է կատարել զգուշությամբ, որպեսզի չվնասվի առարկան, փաթեթը, ինչպես նաև հետքերը, որոնք կարող են կարևոր նշանակություն ունենալ:

Մազնիսական որոնիչը պայտաձև հաստատուն մագնիս է, որը կարող է բարձրացնել մինչև 12 կգ մետաղական նյութ: Մազնիսի ձգողական հզորությունը չթուլացնելու համար (բնական լիցքաթափման հետևանքով) երկու բևեռները միացվում են պողպատյա խարիսխ-քիթեղով, որը մազնիսից անջատվում է միայն որոնման գործողությունների ժամանակ:

Մազնիսական որոնիչը նախատեսված է հանցագործության գործիքների և այլ մետաղական իրերի որոնման համար, որոնք թաքցված կամ զգված են ջրհորներում, ջրանցքներում, կիսահալ ձյան, ավազի, խտի դեզերի, բարձր ու խիտ աճած խոտերի մեջ և նման այլ տեղերում: Այդ որոնիչի օգնությամբ կարելի է հայտնաբերել միայն սև (մազնիսական) մետաղներից (երկաթ, պողպատ, թուջ) պատրաստված առարկաները, օրինակ՝ հրազեն, սառը զենք, տարբեր գործիքներ, նաև փամփուշտներ,

գնդակներ, պարկուճներ (եթե դրանց պատյանը պատրաստված է պողպատից):

Որոնուճը իրականացնելիս որոնիչի մագնիսական գլխիկը ամրացվում է զննածողի խողովակի կամ պարանի ծայրին (նայած թե ինչպիսի տեղերում է կատարվելու որոնումը), օրինակ՝ ջրհորերում որոնում կատարելիս՝ պարանով, խոտի դեզի կամ խիտ խոտի մեջ՝ զննածողով:

Մագնիսական որոնիչով աշխատելու անհրաժեշտության և արդյունավետության հարցը լուծվում է՝ հաշվի առնելով որոնվող օբյեկտի հնարավոր քաշը, ձևը և չափերը, ջրամբարի աղտոտվածությունը մետաղի ջարդոնով և այլն:

Մագնիսական որոնիչը կարելի է օգտագործել նաև հատակի, պատի, սեղանի, աթոռների ճեղքերից մանր մետաղական առարկաներ հայտնաբերելու, ինչպես նաև հագուստի ծավածքներից, գրպաններից և այլ տեղերից մետաղական փոշի հայտնաբերելու համար: Վերջին դեպքում կառաջանա միկրոլոգիական փորձաքննության հարցը, որի մասին կխոսվի հաջորդ գլուխներից մեկում: Մեկուսական զննաչողը բաղկացած է մեկ ամբողջական ձողից և խողովակային ձողից, որը վերջանում է բռնատեղով: Ամբողջական ձողի մի ծայրը սուր է, իսկ մյուսի վրա պարույր է, որի վրա ամրացվում է խողովակային ձողը: Չննածողի երկարությունը մեկ մետր է:

Մետաղական զննածողը նախատեսված է հողաշերտերի ուսումնասիրման համար, թաղված իրեր հայտնաբերելու նպատակով: Նրանով զննվում են նաև խոտի դեզերը, ծղոտի կուտակումները և այլն: Այն խրվում է հողաշերտի մեջ՝ հաշվի առնելով, որ փորված տեղերը ավելի հեշտությամբ կարելի է հաղթահարել: Չննածողը օգտագործելիս պետք է խուսափել մեծ ուժի գործադրումից, քանի որ այն կարող է նպաստել որոնվող օբյեկտների անտեղի փչացմանը:

Չննածողը դուրս բերելուց հետո անհրաժեշտ է ուշադրությամբ զննել նրա ծայրը: Այնտեղ երբեմն մնում են որոնվող նյութի մասնիկներ:

Ուռկանը կազմված է մետաղական կարկասից, կեռիկներից ու պարանից, որն ունի 25 մ երկարություն: Ուռկանի օգտագործման կարիքը առաջանում է, երբ սպանության գործերի քննության ժամանակ անհրաժեշտություն է առաջանում որոնել դիակը, որը ենթադրաբար գտնվում է ջրամբարներում: Մի շարք դեպքերում դիակի որոնումը կատարվում է ջրասուզակների օգնությամբ: Բայց այս դեպքում հարցի լուծումը թեև դժվարությամբ, բայց հնարավոր է, եթե ջրամբարում ջուրը որոշ չափով մաքուր է:

Զննչական պրակտիկայում երբեմն փորձեր են արվել դիակ որոնել կարթածողի միջոցով: Բայց այս դեպքում ջրամբարը պետք է խորը չլինի: Դիակի որոնումը ավելի արդյունավետ կարող է լինել, եթե օգտագործվի նշված ծալովի դյուրատար ուռկանը: Այս ուռկանը, բնականաբար, պիտանի է ոչ միայն դիակ հայտնաբերելու համար, այլև հագուստ և այլ այնպիսի օբյեկտներ, որոնք կարող են կառչել ուռկանի կեռիկներից:

Որոնումը կատարվում է նավակից, ուռկանը ջրամբարի հատակի վրա շարժելով: Եթե այն կառչում է որևէ օբյեկտի, պետք է ուռկանը բարձրացնել խիստ ուղղահայաց դիրքով:

* * *

Զննչական պրակտիկայում դիակ հայտնաբերելու նպատակով կիրառվում են նաև տեխնիկական այլ միջոցներ:

Երբ հիմքեր կան ենթադրելու, որ դիակը թաղված է հողում, կիրառվում են որոնող միջոցների երկու տեսակ՝ գազային անալիզատորներ, որոնք որսում են դիակի սպիտակուցային նյութերի նեխումից առաջացած գազերը կամ էլեկտրական զննածողեր, որոնք հնարավորություն են տալիս թաղված դիակը հայտնաբերել հողի էլեկտրական դիմադրությունը չափելու միջոցով:

1961թ. ԽՍՀՄ Կրիմինալիստիկայի գիտահետազոտական ինստիտուտում Ա. Ռ. Ռատինովի, Ի. Ս. Վլասովի և Վ. Ս. Սորոկինի կողմից մշակվեց դիակորոնիչ ՈՂ-1 սարքը: Դա գազային դյուրատար անալիզատոր է, որը նախատեսված է հողում եղած գազերի որակական վերլուծության համար այն տեղերում, որտեղ ենթադրվում է, որ թաղված է դիակ կամ նրա մասերը: Դիակի մարմնի սպիտակուցային նյութերը հողում պարունակվող նեխմանը նպատող աերոբների ազդեցությամբ քայքայվում են, նեխում, որի հետևանքով առաջանում են մի շարք նյութեր (ամինաթթու, տարրեր ամիններ, քացախաթթու և այլ թթուներ, ազոտ, թթվածին, ջրածին, ածխաթթու գազ, մեթան, ամիակ և այլն): Սարքի որսած գազերը անցնում են նրա վրա եղած ինդիկատորի միջով, որը կիսախոնավ, սպիտակ գործվածքատիպ գտիչ է՝ սնուցված անգույն, հատուկ ընտրված քիմիական հակազդակով: Եթե հողում առկա են վերոհիշյալ գազերը, հակազդակը անմիջապես փոխում է իր սկզբնական գույնը, որի խտության աստիճանը կախված է գազի քանակից: Էլեկտրական զննածողի երկարությունը 1,5 մ է, հոսանքի աղբյուրը՝ «մարս» տիպի էլեմենտ, հոսանքի ինդիկատորը՝ միկրոամպերմետր: Վերջինս հոսանքի նկատելի

ուժեղացում է ցույց տալիս, երբ ձողի ծայրը մոտենում է դիակին, մոտավորապես 20 — 25 սմ տարածության վրա: Իսկ երբ զննածողի ծայրը հպվում է դիակին, ցույց է տալիս հոսանքի առավելագույն հզորություն:

Դիակ որոնելու տեխնիկական միջոցների մասին խոսելիս անհրաժեշտ ենք համարում նշել, որ, ցավոք, առայժմ չի ստեղծված գիտատեխնիկական միջոցների հավաքածու բժիշկ մասնագետի համար, որը դեպքի տեղում քննիչի հետ կատարում է դիագնոստիկ: Գրականության մեջ նշված է, որ դեռևս 1958թ. Չ. Ֆ. Ռեզանան և Տ. Ե. Տատարինովան դիակի և նրա հայանաբերման տեղի զննության համար մշակել են գիտատեխնիկական միջոցների հավաքածու, որը մինչև օրս ստեղծված չէ¹:

Այդ հավաքածուի մեջ նախատեսված էր զետեղել.

1. ֆոնենդոսկոպ՝ սրտի աշխատանքի առկայությունը որոշելու համար,

2. ջերմաչափ՝ դիակի մարմնի ջերմաստիճանը որոշելու համար,

3. պինցետներ՝ սովորական (տարբեր օբյեկտներ վերցնելու համար) և ռետինե ծայրերով (մազեր վերցնելու համար),

4. մկրատներ,

5. հերձադանակ,

6. մանիկյուրի բահիկ՝ դիակի եղունգների տակից արյան, կեղտի մասնիկներ վերցնելու համար,

7. խոշորացույց,

8. մասշտաբային ժապավեն և մետաղական քանոն,

9. ապակյա ձողիկներ և ապակիներ՝ մաժուկներ պատրաստելու համար,

10. ուլտրամանուշակագույն ճառագայթների աղբյուր,

11. փորձասրվակ, ծրարներ, մաքուր թուղթ՝ իրեղեն ապացույցների փաթեթավորման համար,

12. Վոսկոբոյնիկովի հակագղակ (փոշի և թորած ջուր) արյան առկայության նախնական որոշման համար,

13. սպիրտ՝ գործիքների ախտահանման համար,

14. առաջին օգնության դեղորայք,

15. բժշկական սպիտակ խալաթ, ռետինե ձեռնոցներ, օճառ, սրբիչ:

Այս բոլորը նախատեսվում է տեղադրել կաշվե փափուկ պայուսակում:

¹ З. Ф. Резаева, Т. Е. Татаринова, Судебно-медицинский набор для осмотра трупа и места его обнаружения. Сборник статей Саратовского отделения Всесоюзного общества судебных медиков и криминалистов, Саратов, 1953, էջ 170-174:

Քննիչի տրամադրության տակ միշտ պետք է լինի ֆոտոապարատ, ցանկալի է հայելային «Չենիթ» տիպի, ֆոտոկայծ, երկարացնող ազույցներ, լուսազտիչներ, մասշտաբային քանոն: Վերջին տարիներս քննիչի տեխնիկական հանդերձանքը համալրվել է նաև տեսագրող ապարատով և մագնիտոֆոնով:

Տեսագրումը կինոնկարահանումից (որը դեռևս կիրառվում է), տարբերվում է իր օպերատիվությամբ, քանի որ հնարավորություն է տալիս դեպքերն ու երևույթները ֆիքսելուց անմիջապես հետո վերարտադրել դրանք: Բացի այդ, այն հնարավորություն է տալիս ժապավենի վրա միաժամանակ գրանցել և՛ պատկերը, և՛ ձայնը:

Տեսամագնիտոֆոնները ունեն գրանցման հանգույց, տեսախցիկ և խոսափող:

Պրակտիկայում սովորաբար տեսագրառում կիրառվում է տեղում ցուցմունքները ստուգելիս, ճանաչման ներկայացնելիս, քննչական փորձարարության և այլ քննչական գործողություններ կատարելիս:

Քննչական գործողություններ կատարելիս ձայնագրող ապարատների կարևոր առանձնաշնորհ են համարվում անընդհատ գրանցման տևողությունը և ձայնի մաքրությունը:

Տեղազննության ժամանակ ձայնագրառումը կիրառվում է որպես տեխնիկական միջոց, որը փոխարինում է նախնական ձեռագիր նշումներին և հնարավորություն է տալիս վերհիշելու մոռացված որոշ հարցեր. դա օգնում է արձանագրությունը լիարժեք կազմելուն:

Ձայնագրառում կատարվում է նաև քննչական այլ գործողություններ կատարելիս (հարցաքննություն, ճանաչման ներկայացնելը, քննչական փորձարարություն):

Եթե ձայնագրառումը կատարվում է քննիչի աշխատասենյակում, ապա անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կբացառեն արտաքին աղմուկի գրանցումը (փակել դռները, պատուհանները, անջատել հեռախոսը, ռադիոն, դռանը փակցնել՝ նախազգուշացնող գրություն «կատարվում է ձայնագրառում» և այլն):

Ձայնագրառմանը նախապատրաստվելիս քննիչը վաղօրոք պետք է ծանոթանա մագնիտոֆոնի առանձնահատկություններին, խոսափողին, փորձնական ձայնագրառմամբ ստուգի, ճշտի գրանցված ձայնի մաքրության աստիճանը: Խորհուրդ է տրվում նախապես ձևակերպել գրանցման ներածական մասը: Եթե կատարվելու է հարցաքննության ձայնագ-

րառում, քննիչը պետք է պլանավորի հարցերի ձևակերպումն ու հաջորդականությունը:

Գրանցման ժամանակ կայացած դադարներն ու մագնիտոֆոնի անջատումների պատճառները պետք է ներկայացվեն հետագա ձայնագրային բացատրությամբ: Այդպես է արվում նաև այն դեպքերում, երբ ժապավենը կտրվում է: Վերջին փաստը նշվում է նաև քննչական գործողության արձանագրության մեջ:

Ձայնագրառումն ավարտելուց հետո այն վերարտադրվում է ձայնագրվողի և քննչական գործողության մասնակիցների համար: Եթե ձայնագրառումը լսելուց հետո մասնակիցների կողմից կատարվում են լրացումներ, հայտարարություններ, ապա դրանք գրանցվում են նույն ժապավենի վրա և քննչական գործողության արձանագրության մեջ:

Ձայնագրված ժապավենը պահվում է պոլիէթիլենային ծրարում կամ ստվարաթղթե տուփերում՝ մետաղական առարկաներից հեռու: Դատարան ուղարկվելուց առաջ դրանք կնքվում են:

* * *

Կրիմինալստիկական հետազոտություններ իրականացնելիս հաճախ անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել տարբեր օբյեկտների մանրագույն մասնիկները: Այդ նպատակի համար օգտագործվում են խոշորացույցներ և մանրադիտակներ: Դրանց օգտագործման արդյունավետությունը պարզ կդառնա, եթե հիշենք, որ իրենց ապացույցների համարյա բոլոր հետազոտություններն սկսվում են նրանց մանրադիտակային ուսումնասիրությունից: Դրանց օպտիկական կարևոր հատկանիշը համարվում է մեծացման աստիճանը, որը նշվում է շրջանակի վրա՝ «X» նշանով (օրինակ՝ 3^x , 4^x և այլն):

Խոշորացույցներ օգտագործվում են մինչև 10^x մեծացման դեպքում: 10 -ից բարձր մեծացումը առաջացնում է պատկերի շեղումներ, դրա համար էլ 10 -ից ավելի մեծացում ստանալու անհրաժեշտության դեպքում օգտագործվում է մանրադիտակ, որը օպտիկական բարդ կազմություն ունեցող սարք է՝ կազմված օբյեկտիվից ու օկուլյարից:

Մանրադիտակի մեծացման աստիճանը որոշելու համար օբյեկտիվի մեծացման աստիճանը պետք է բազմապատկել օկուլյարի մեծացման աստիճանով:

Կրիմինալստիկական հետազոտություններում կիրառվում են մանրադիտակների տարբեր տեսակներ, որոնցից են ստերեո մանրադիտակ-

ները, որոնք հնարավորություն են տալիս օբյեկտները հետազոտել անդրադարձող և թափանցող լույսի միջոցով, ինչպես նաև ստանալ նրանց ծավալային պատկերը:

Այս մանրադիտակները ֆոտոկցորդի օգնությամբ հնարավորություն են տալիս նաև լուսանկարել: Դրանք МБС տիպի մանրադիտակներն են:

Փորձագիտական հիմնարկներում օգտվում են նաև ավելի բարդ կառուցվածքի մանրադիտակներից: Դրանցից են համեմատական մանրադիտակները՝ МИС, МС, МСК տիպերի, որոնք հնարավորություն են տալիս միաժամանակ ուսումնասիրել երկու համեմատվող օբյեկտների համատեղված պատկերները, մետաղագրային, МИМ տիպի՝ մետաղների միկրոբաղադրությունը ուսումնասիրելու համար, Էլեկտրոնային մանրադիտակներ և այլն:

* * *

Կրիմինալիստիկական տեխնիկայում կիրառվում են նաև անտեսանելի ճառագայթներ, մասնավորապես՝ ուլտրամանուշակագույն, ինֆրակարմիր, ռենտգեն ճառագայթներ և այլ, որոնց վերաբերյալ, թեմայի առավել լիարժեք բացահայտման նպատակով, խոսվում է «կրիմինալիստիկական (դատական) լուսանկարչություն» գլխում:

Ոչ մետաղական առարկաների հետազոտման համար օգտագործում են նաև ռադիոակտիվ իզոտոպների բետա ճառագայթները, որոնք հնարավորություն են տալիս փաստաթղթերում հայտնաբերել ջնջման փաստը, թղթի, գործվածքի բաղադրությունը, հագուստի կամ այլ օբյեկտների մեջ մնացած ապակու մասնիկներ և այլն: Դրանք հնարավորություն են ստեղծում նաև որոշելու որոշ նյութերի (ստվարաթուղթ, պլաստմասսա, ռետին) հաստությունը:

Կիրառվում է նաև գամմա ճառագայթներով հետազոտում (գամմագրաֆիան), որը որոշ դեպքերում փոխարինում է ռենտգենյան ճառագայթներով հետազոտմանը: Առավելությունը ռենտգենյան ճառագայթներից այն է, որ գամմա ճառագայթներն ունեն ավելի մեծ թափանցելիություն և գամմագրաֆիայի համար նախատեսված սարքերը ավելի թեթև են և մատչելի:

Իրեղեն ապացույցների հետազոտման կարևորագույն խնդիրներից մեկը դրանց քիմիական բաղադրության որոշումն է: Այն դեպքերում, երբ սովորական քիմիական անալիզը արդյունք չի տալիս, կիրառվում է ավելի բարձր զգայնության սպեկտրալ անալիզը, որը նյութի որակական և քա-

նակական կազմության որոշման ֆիզիկական մեթոդ է՝ նրա սպեկտրի ուսումնասիրման հիման վրա:

Կրիմինալիստիկային հայտնի են նաև ատոմային սպեկտրալ անալիզը, որ կիրառվում է հիմնականում մետաղների և աղերի հետազոտման համար, մոլեկուլյար անալիզը, որն օգտագործվում է բարդ մոլեկուլային կառուցվածք ունեցող օրգանական միացությունների հետազոտման ժամանակ: Երբեմն այն օգտագործվում է նաև անօրգանական միացություններ հետազոտելիս:

Նշված անալիզները իրականացվում են տարբեր մեթոդներով, որոնցից ավելի կիրառելի են էմիսիոնը և արտորբցիոնը:

Էմիսիոն սպեկտրները նյութի ճառագայթման սպեկտրն է, որը շիկացած է մինչև գոլորշու կամ գազակերպ վիճակի: Էմիսիոն անալիզի օգնությամբ հետազոտվում է նյութի ատոմային բաղադրությունը:

Արտորբցիոն սպեկտրները այս կամ այն նյութի միջով անցնող լույսի կլանման սպեկտրներն են: Նման անալիզի ենթարկվում են պինդ և հեղուկ նյութերը: Կլանման սպեկտրի վերծանումը կատարվում է սպեկտր-էտալոնների կատալոգների օգնությամբ:

Կրիմինալիստիկական տեխնիկան ընդգրկում է նաև հետազոտման մաթեմատիկական մեթոդներ, մասնավորապես հավանական-վիճակագրության կիրառումը դատական ձեռագրաբանությունում, հետքաբանությունում, կիրեռնետիկական ուսումնասիրությունները քրեական գրանցման մեջ և այլն:

Վերջին տարիներս կիրառվում են նաև մոլեկուլային սպեկտրոսկոպիան, միկրոռենտգենոգրաֆիան, քրոմատոգրաֆիան, էլեկտրոնային և լազերային տեխնիկան (հոլոգրաֆիան):

ԳԼՈՒԽ 11. ԿՐԻՍՒՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ (ԴԱՏԱԿԱՆ) ԼՈՒՍԱՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Լուսանկարահանումը ձևավորվեց 19-րդ դարում, երբ ֆրանսիացի գյուտարարներ Ժոզեֆ Նիսեֆոր Նեյպսը և Լուի Ժակ Մ. Դագերը, ինչպես նաև անգլիացի գիտնական Վիլյամ Հենրի Ֆ. Տոլբոտը միմյանցից անկախ հայտնագործեցին այն:

1826թ. Գրաս քաղաքում ֆրանսիացի գյուտարար Նեյպսը աշխարհում առաջին անգամ լուսանկարեց պարզունակ խցիկով՝ դրա համար ծախսելով 8 ժամ: Այսքան ժամանակ պահանջվեց բուսական յուղով հղկված անագե թիթեղի վրա ստանալու համար մուգ, սխեմատիկ պատկեր: Դրանից ինը տարի հետո Անգլիայում Տոլբոտը ստացավ նույնատիպ պատկեր:

Լուսանկարչության հայտնագործման պաշտոնական ժամանակը համարվում է 1839թ., երբ Փարիզում ֆրանսիացի գեղանկարիչ Դագերը արժաթե թիթեղի վրա պատկերեց լուսանկար: Այդ երևույթը անվանվեց Դագերատպում: Դրա էությունը այն էր, որ արժաթի որոշ միացություններ մթնում են լույսի ազդեցությունից: Երբ նրա աշխատանքները 1839թ. հունվարի 7-ին Նեյպսի կողմից ֆրանսիական գիտությունների ակադեմիայում ցուցադրվեցին, առաջացրին սենսացիա: Դրան հաջորդեց Դագերի ձեռնարկը, որտեղ մանրամասն շարադրված էր լուսանկարչական պատկերի ստացման մեթոդը՝ հղկված մետաղական թիթեղի վրա: Դագերի գրքի հրատարակումից մի քանի օր անց Տոլբոտը Լոնդոնի արքայական ընկերություն ուղարկեց նամակ, որտեղ նկարագրում էր պատկերի ստացման եղանակը լուսազգայուն թղթի վրա, որն, իհարկե, ուներ ակնհայտ, անվիճելի առավելություն, քանի որ թղթե նեգատիվներից կարելի էր ստանալ ցանկացած քանակի դրոշմներ (լուսանկարներ):

Տոլբոտի մեթոդով աշխատող լուսանկարչական ապարատով 1839թ. մայիսին առաջին անգամ Ռուսաստանում ստացվեցին լուսանկարներ:

Երևան գալու օրից լուսանկարչությունը իր վրա համընդհանուր ուշադրություն հրավիրեց: Ժամանակակից լուսանկարչության հիմքում դրված է Տոլբոտի նեգատիվային-պոզիտիվային ընթացքը:

«Ֆոտոգրաֆիա»¹ տերմինը, հայերենում թարգմանաբար օգտագործվում է «լուսանկարչություն» ձևով: Ինչ վերաբերում է դագերոտիպին, որն այդպես հաղթականորեն սկսվեց, ընդամենը քսան տարի անց

¹ Ֆոտոգրաֆիա՝ հունարեն ֆոտոս-լույս և գրաֆո-գրում են բառերից:

շրջանառությունից դուրս եկավ: Նկարահանման մեջ սկսեց ներդրվել ֆոտոտեմուլսիան, որն ավելի էֆեկտիվ և պրակտիկ գնահատականի արժանացավ:

Լուսանկարչությունը (ֆոտոգրաֆիան) իր հաստատուն տեղը գրավեց գիտության և տեխնիկայի, մշակույթի, արհեստի, արվեստի ամենատարբեր բնագավառներում: Եվ միանգամայն օրինաչափ է, որ լուսանկարչությունը՝ որպես գիտատեխնիկական մտքի կարևորագույն նվաճումներից մեկը, իր հայտնագործումից կարճ ժամանակ հետո սկսեց կիրառվել մարդկային գործունեության այնպիսի ինքնատիպ բնագավառում, ինչպես պայքարն է քրեական հանցագործությունների դեմ: Արդեն 1854թ. շվեյցարական դատական իշխանությունները թաքնված հանցագործին հետախուզում էին լուսանկարի օգնությամբ, որն ավարտվեց հաջողությամբ:

1867թ. Մոսկվայի ոստիկանական տպարանում քացվեց ֆոտոատելյե: Ռուսական դատարաններում լուսանկարի կիրառման առաջին դեպքը գրանցված է 1889թ.:

Կրիմինալիստիկական լուսանկարչության կազմավորումը կապված է 19-րդ դարի նշանավոր կրիմինալիստներ Եվգենի Ֆյոդորի Բուրինսկու (Ռուսաստան) և Ալֆոնս Բերտիյոնի (Ֆրանսիա) աշխատությունների հետ: Լուսանկարչության կիրառումը մեծագույն խթան հանդիսացավ կրիմինալիստիկայի գիտության զարգացման համար:

Այդ առնչությամբ Ա. Ա. Էյսմանը գրում է. «Ֆոտոգրաֆիան առաջին մեթոդներից մեկն էր, որը լայնորեն և օրգանապես ընկալվեց կրիմինալիստիկայի կողմից և ստեղծագործաբար հարմարեցվեց իրեն նախադրյալների հետազոտման ինքնատիպ պայմաններին¹»:

Լուսանկարչության առավելությունը տեսողության նկատմամբ գունային երանգները տարբերելու առումով արդեն հայտնի էր: Սակայն մինչև Բուրինսկին ոչ ոք չէր մտածել այդ առավելությունը ուժեղացնելու ուղիների մասին: Այդ խնդիրը նա առաջադրեց և հաջողությամբ լուծեց՝ ընտրելով լուսազգայուն նյութերը, փորձարկելով պահածամը և հայտածիչները: Այդ առիթով նա գրում է. «Նպատակին հասնելու համար. լուսանկարչության օգնությամբ տեսնել այն, որը առանց նրա մենք ի վիճակի չենք տեսնելու... Պետք է միայն ուսումնասիրել պատճառները, որոնք

¹ Эйсман А. А., Новая техника усиления контрастов в судебно-исследовательской фотографии, Советское государство и право, 1974, №6, էջ 84:

ազդում են ցայտերանգի ուժեղացման վրա, և միացնել դրանք մեկ լուսանկարահանման ընթացքում¹»:

Ռուս հեղինակները ընդհանրացրին լուսանկարչության կիրառման փորձը՝ կրիմինալիստիկական խնդիրներ լուծելու համար: 1894թ. հրատարակվեց Մ. Շիմանովսկու «Լուսանկարչությունը իրավունքում և արդարադատությունում» աշխատանքը: 1908թ. Վ. Ի. Լեբեդևը հրատարակեց «Դատաոստիկանական լուսանկարչություն» ձեռնարկը, իսկ 1912թ. Ա. Ա. Գրոմովը հրատարակեց «Դատական լուսանկարչության մասին» գիրքը: Պատշաճ բարձրության վրա էր մաս ուստիկանական գործում լուսանկարչության պրակտիկ կիրառումը: Այդ մասին է վկայում, մասնավորապես, բարձրագույն պարզևը, որը ստացավ ռուսական դատաոստիկանական բաժինը 1909թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին Դրեզդենում կայացած միջազգային լուսանկարչական ցուցահանդեսում, որտեղ ներկայացված էին Սանկտ-Պետերբուրգի, Սամարայի և Ուֆայի ոստիկանական բաժանմունքները:

Դատական լուսանկարչության գիտական մեթոդները հետազայում ավելի կատարելագործվեցին:

Քրեական դատավարությունում կիրառվող դատական լուսանկարչության տեսական հիմունքներին նվիրված առաջին լուրջ գիտական աշխատանքները պատկանում են Ս. Մ. Պոտապովին: Նա էր հեղինակը երեք անգամ (1926, 1936 և 1948 թ.) հրատարակված «Դատական լուսանկարչություն» դասագրքի: 1939թ. նույնպիսի անվանումով դասագիրք հրատարակեց Ն. Դ. Վորոնովսկին, իսկ 1937թ. Կիևում Բ.Ռ. Կիրիչինսկին հրատարակեց մեկ այլ աշխատանք²: 1955թ. հրատարակվեց Ն. Ա. Սելիվանովի «Դատաօպերատիվ լուսանկարչություն»-ը և այլն:

19-րդ դարի վերջերին ֆրանսիացի կրիմինալիստ Ալֆոնս Բերտիլյոնը պատրաստեց խոշոր չափսի մի քանի ապարատներ՝ ճանաչողական լուսանկարներ ստանալու, դիակների, դեպքի տեղի լուսանկարահանման համար: Ա. Բերտիլյոնը ստեղծեց մաս չափողական լուսանկարահանման եղանակ: Նա է ստեղծել ճանաչման նպատակներով այսօր էլ կատարվող լուսանկարների որոշ կանոններ, ասենք՝ լուսանկարների պատրաստումը բնականի 1/7-ի չափով, դիմացից (ֆաս) և աջ կիսադեմից նկարներ և այլն:

¹ Буринский Е. Ф., Записка о восстановлении писем при помощи фотографии, изд. Академии наук, 1890, т. 11, №04, էջ 167:

² Кричинский Б. Р., Краткое руководство по судебно-метрической фотографии, К., 1937:

19-րդ դարի վերջերին Ռուսաստանում ևս դատական որոշ փորձաքննություններ կատարվում էին լուսանկարչության կիրառմամբ:

Առաջին դատափորձագիտական հաստատությունը Ռուսաստանում հիմնվեց 1889 թ. Ե. Ֆ. Բուրինսկու կողմից, որտեղ նա կատարեց ժամանակի համար չափազանց բարդ լուսանկարչական հետազոտություններ: Նրա անվան հետ է կապված գիտական լուսանկարչության հիմունքները, անտեսանելի հայտնաբերման մեթոդները: Կրիմինալիստիկական (դատական) լուսանկարչության բնագավառում կատարած իր հետազոտությունների մասին նա գրեց 1903 թ. հրատարակած «Փաստաթղթերի դատական փորձաքննություն» գրքում:

1892թ. Սանկտ-Պետերբուրգի դատական պալատի դատախազությանը կից պաշտոնապես ստեղծվեց կրիմինալիստիկական (դատական) լուսանկարչական լաբորատորիա, որը 1912թ. վերակազմվեց Պետերբուրգի գիտադատական փորձաքննության կաբինետի: 1913-1914թթ. նման կաբինետներ ստեղծվեցին նաև Մոսկվայում, Կիևում, Օդեսայում¹:

Կրիմինալիստիկական (դատական) լուսանկարչության զարգացման գործում ակտիվ դեր է պատկանում նաև Լ. Վ. Ռուսեցկուն, Ս. Մ. Պոտապովին, Ն. Դ. Վորոնովսկուն, Ն. Վ. Թերզինին (20-30-ական թվականներ): Հետագայում այն հաջողությամբ զարգացրել ու կատարելության են հասցրել Ն. Ա. Սելիվանովը, Ա. Ա. Էյսմանը, Մ. Վ. Սալտևսկին և ուրիշներ:

Կրիմինալիստիկական (դատական) լուսանկարչությունը կրիմինալիստիկական տեխնիկայի մի բնագավառն է: Այն լուսանկարահանման որոշակի մեթոդների ու տեսակների համակարգ է, որը կիրառվում է քննչական գործողությունների կատարման և իրեղեն ապացույցների փորձագիտական հետազոտությունների ժամանակ ~~հանցագործությունների բացահայտման և կանխման նպատակներով:~~

Կրիմինալիստիկական (դատական) լուսանկարչության տարբերությունը ընդհանուր լուսանկարչությունից այն է, որ այս դեպքում գործում են նկարահանման հատուկ եղանակներ, կանոններ, որոնք կիրառվում են դատաքննչական պրակտիկայի մշակած խնդիրների ~~իրականացման նպատակներով: Չնայած դրան՝ կրիմինալիստիկական (դատական) լուսանկարչությունը՝ որպես կրիմինալիստիկական տեխնիկայի ինքնուրույն բնագավառ, ծագել և զարգացել է ընդհանուր լուսանկարչության նվաճումների հիման վրա:~~

¹ Ст'ю Судебная фотография, под ред. А. В. Дулова. М., 1988, т. 7, 8:

Լուսանկարչությունը հանցագործության նյութական հատկանիշների ամրապնդման ու հետազոտման մեթոդներից մեկն է այն մեթոդների շարքում, ինչպիսիք են, մասնավորապես, քննչական գործողությունների արձանագրությունները, պլանները, ուրվապատկերները, գծագրերը:

Բացի նշված առավելություններից, լուսանկարչությունն ավելի տեսանելի է դարձնում ամրապնդման օբյեկտի առանձնահատկությունները, հատկանիշները:

Քննչական գործողությունների արդյունքները արձանագրելիս քննիչը մանրամասն նկարագրում է միայն այն օբյեկտները, որոնք իր կարծիքով էական նշանակություն ունեն գործի համար, չնայած ակնհայտ է, որ քննության սկզբում դժվար է որոշել, թե ո՞ր օբյեկտը կամ իրադրության ինչպիսի՜ վիճակը հետագայում կարող են նշանակություն ունենալ գործի համար: Լուսանկարչությունը ամրապնդում, պատկերում է օբյեկտների արտաքին լրիվ տեսքը, որի շնորհիվ ուշադրությունից չառն վարելու հատկանիշների վրիպելը բացառվում է:

Լուսանկարչության մյուս առավելությունն այն է, որ հնարավորություն է տալիս տեսնելու օբյեկտների այնպիսի մանրուքներ, որոնք անմատչելի են անզեն աչքի համար: Օրինակ՝ սավանի վրայից լվացված արյան հետքը, փաստաթղթի վրայից կերպագծված տեքստը և այլն:

Լուսանկարահանման անվիճելի առավելություններից է նաև կատարման արագությունը:

Լուսանկարչության նշված և որոշ այլ առավելությունները պայմանավորեցին նրա պրակտիկ մեծ նշանակությունը հետաքննության, նախաքննության, դատարանի և փորձագիտական հիմնարկների համար:

Օպերատիվ հետախուզական միջոցառումներ և քննչական գործողություններ իրականացնելիս կրիմինալիստիկական (դատական) լուսանկարչությունը կիրառվում է գործողությունների ընթացքը, արդյունքները ի հայտ բերելու, առանձին օբյեկտներ, մասնավորապես դիակներ, տարբեր առարկամեր, հետքեր, փաստաթղթեր ֆիքսելու համար: Այսպիսի լուսանկարչությունն ընդունված է անվանել *կրիմինալիստիկական (դատական)-օպերատիվ լուսանկարչություն:*

Իրեղեն ապացույցների փորձագիտական հետազոտման ընթացքում (ինչպես կրիմինալիստիկական, այնպես էլ մյուս) փորձագետը լուսանկարչությունը կիրառում է փաստաթղթերի և այլ օբյեկտների հետազոտման, օբյեկտների վատ տեսանելի, անտեսանելի դետայլների հայտնաբերման, գունագատման և այլ նպատակներով: Այդպիսի լուսանկարչու-

յունն ընդունված է անվանել կրիմինալիստիկական (դատական)-հեղա-
զուրական¹:

Կրիմինալիստիկական (դատական) լուսանկարչությունը սահմանա-
զատվում է պարկերիչ և հեղազուրիչ տեսակների:

Պարկերիչը նյութական օբյեկտների և նրանց հատկությունների
ամրապնդումն է, որոնք ընկալվում են անզեն աչքով, հեղազուրիչը կա-
տարվում է օբյեկտների վատ տվյալների և անստանձնելի հատկություննե-
րի հայտնաբերման նպատակով:

Առաջինը սովորաբար կիրառվում է օպերատիվ-հետախուզական և
քննչական գործունեության ժամանակ, երկրորդը՝ փորձագիտական:

§ 1. ՊԱՏԿԵՐԻՉ ԼՈՒՍԱՆԿԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Համայնապատկերային լուսանկարում

Համայնապատկերային նկարահանումը օբյեկտի հաջորդական
նկարահանումն է մի քանի առանձին, փոխկապակցված կադրերում, ո-
րոնք հետո միացվում են ընդհանուր նկար-համայնապատկերում: Նման
նկարահանման անհրաժեշտությունը առաջանում է այն դեպքում, երբ
հնարավոր չէ քննությանը հետաքրքրող օբյեկտը տեղավորել մեկ կադ-
րում (կայանակում օբյեկտի վրա չի ընդգրկում, լուսանկարվող օբյեկտից
բավարար չափով հետ գնալու տեղ չկա) կամ նպատակահարմար չէ
ստանալ շատ փոքրացված նեգատիվ:

Լուսանկարումը կատարվում է կա՛մ հատուկ ֆոտոապարատի միջո-
ցով, կա՛մ սովորական ֆոտոապարատով, որոշ ոչ բարդ կանոններ պահ-
պանելով: Հատուկ ապարատներից է, օրինակ «Գորիզոն» համայնա-
պատկերային ֆոտոապարատը, «ՖՏ-2» ապարատը:

Սովորական ֆոտոապարատով («Ջենիթ», «Կին») լուսանկարելիս,
օբյեկտը լուսանկարվում է ըստ մասերի, որոնց պոզիտիվները տսնձվում
են մի ընդհանուր լուսանկար-համայնապատկերում: Օբյեկտի բոլոր մա-
սերը լուսանկարվում, ժապավենը մշակվում և տպվում են միևնույն պայ-
մաններում:

Համայնապատկերային նկարահանումը կատարվում է երկու եղա-
նակով. շրջանաչև և գծային:

¹ Որոշ աղբյուրներում անվանվում է նաև դատական-փորձագիտական:

Շրջանաչև համայնապատկերի եղանակը կիրառվում է այն դեպքերում, երբ լուսանկարահանվող օբյեկտները գտնվում են տարբեր հարթությունների վրա, կամ երբ հարմար է դրանք լուսանկարել միևնույն կետից: Այս եղանակը կիրառվում է այս կամ այն կրիմինալիստիկական օբյեկտին շրջապատող իրադրությունը բաց տեղանքում պատկերելու համար, օրինակ՝ վթարի ենթարկված ավտոմեքենան՝ դեպքի տեղում, բաց տեղանքում հայտնաբերված դիակը և այլն:

Լուսանկարելիս ապարատը անրացվում է եռոտանի շտատիվի վրա և հաջորդաբար պտտվում ուղղահայաց առանցքի շուրջը, որոշակի անկյան տակ: Յուրաքանչյուր քառորդ պտույտից հետո կատարվում է լուսանկարում:

Գծային համայնապատկերի եղանակը կիրառվում է այն դեպքերում, երբ նկարահանման օբյեկտները գտնվում են մի գծի վրա (օրինակ՝ շենքերի ճակատային մասը, ճանապարհներ, պատեր, ցանկապատեր և այլն), ինչպես նաև այն դեպքերում, երբ նկարահանման օբյեկտը (օրինակ՝ դիակը), գտնվում է նեղ շինությունում և այն մեկ կադրում պատկերել հնարավոր չէ:

Գծային համայնապատկերի եղանակը կիրառելիս նկարահանումը կատարվում է օբյեկտից հավասար հեռավորության վրա գտնվող մի քանի կետերից: Ֆոտոապարատը տեղափոխվում է նկարահանվող օբյեկտին զուգահեռ գծով այնպես, որ մայրորդ և հաջորդ նկարների կադրերը մի փոքր ծածկեն միմյանց:

Ֆոտոապարատը պետք է պահել այնպես, որ ֆոտոժապավենի (կամ ֆոտոթիթեղի) հարթությունը զուգահեռ լինի լուսանկարվող օբյեկտի ճակատային գծին:

Գծային և շրջանաձև համայնապատկերային նկարահանումները անհրաժեշտության դեպքում կարող են կատարվել նաև հորիզոնական դիրքով (օրինակ՝ գործարանային տարածքը կամ գնացքը վերևից նկարելիս):

Չափողական լուսանկարում

Չափողական լուսանկարման անհրաժեշտությունն առաջանում է այն դեպքերում, երբ կարիք է զգացվում լուսանկարով որոշել լուսանկարված օբյեկտների չափսերը և նրանց միջև եղած տարածությունը: Կրիմինալիստիկական (դատական) լուսանկարման նպատակներից ու խնդիր-

ներից ելնելով՝ չափողական լուսանկարահանումը բաժանվում է մետրական և մասշտաբային տեսակների:

Միջրական լուսանկարման ժամանակ օգտագործվում է խորության մասշտաբ: Այն պատրաստվում է 8-9 մ ժապավենի վրա, տվյալ ֆոտոապարատի օբյեկտիվի ֆոկուսային հեռավորությանը հավասար բաժանումներ կատարելով: Ասենք՝ երբ լուսանկարահանում ենք նեղ ժապավեն ունեցող ապարատներով («Ֆեդ», «Ջենիֆ» և այլն), որոնց օբյեկտիվի ֆոկուսային հեռավորությունը 5 սմ է, այդ բաժանումները հավասար են 5 սմ-ի: Լուսանկարում հստակությունը մեծացնելու նպատակով այդ բաժանումները մեկընդմեջ ներկվում են մուգ գույնով և համարակալվում են:

Լուսանկարում առարկայի փոքրացման աստիճանը (փոքրացման գործակիցը) որոշվում է օբյեկտիվի ֆոկուսային հեռավորության չափով արված բաժանումների քանակով, առանց մեկի, որի մոտ գտնվում է առարկան:

Լուսանկարահանում կատարելիս ապարատն ամրացվում է շտատիվի վրա այնպես, որ ժապավենի (թիթեղի) հարթությունը խիստ ուղղահայաց լինի հատակի հարթությանը: Ֆոտոապարատից լուսանկարվող տարածության հարթության վրա, օբյեկտիվի գլխավոր օպտիկական առանցքի ուղղությամբ փոփում է խորության մասշտաբը: Նրա փոփածքի եզրի տեղադրությունը որոշվում է ուղղալարով, որն իջեցվում է օբյեկտիվից: Օբյեկտը լուսանկարվում է խորության մասշտաբի հետ մեկտեղ:

Մասշտաբային լուսանկարում


Մասշտաբային լուսանկարումը հնարավորություն է տալիս քանակական տվյալներ ստանալու նկարահանված օբյեկտների հատկանիշների և հատկությունների մասին: Այն կատարվում է լուսանկարների միջոցով՝ առանձին ոչ մեծ առարկաների, հետքերի չափսերը որոշելու նպատակով:

Այս եղանակի էությունն այն է, որ առարկան, հետքը լուսանկարվում են իրենց կողքին դրված սանտիմետրանոց և միլիմետրանոց բաժանումներ ունեցող մասշտաբի (քանոնի) հետ միաժամանակ:

Մասշտաբը անպայման պետք է տեղադրել նկարահանվող օբյեկտի հետ նույն հարթության վրա և անմիջականորեն նրա կողքին:


Հորիզոնական հարթության վրա մասշտաբը ուղղակի զետեղվում է, իսկ ուղղահայացի դեպքում այն ամրացվում է ամրակներով, պլաստիլ-

նով կամ այլ կերպ: Եթե նկարահանվող օբյեկտի առանձին մասեր ունեն տարբեր բարձրություններ կամ այլ կերպ ասած՝ գտնվում են տարբեր հարթությունների վրա, ապա նկարահանելիս օգտվում են մի քանի մասշտաբներից:



Գծային համայնապատկերի նկարահանման ուրվապատկեր.

1. N1 կետից լուսանկարված օբյեկտի մասը, 2. N2 կետից լուսանկարված օբյեկտի մասը, 3. կրկնակի լուսանկարված մասը:



Շրջանաձև համայնապատկերի նկարահանման ուրվապատկեր.

1. նկարահանվող օբյեկտի այն մասը, որը լուսանկարվել է ֆոտապարատի I դիրքում, 2. նկարահանվող օբյեկտի այն մասը, որը լուսանկարվել է ֆոտապարատի II դիրքում, 3. կրկնակի լուսանկարված մասը:

Ֆոտոապարատը պետք է տեղադրել այնպես, որ օբյեկտի վի օպտիկական առանցքը ուղղահայաց լինի նկարահանվող հարթությանը և անցնի նրա կենտրոնից: Նկարահանման ժամանակ պետք է հետևել նաև լուսավորությանը, որը պետք է լինի բավարար և հավասարաչափ: Նկարահանումը կարելի է կատարել ինչպես բնական, այնպես էլ արհեստական լուսավորության պայմաններում:

Լուսանկարի միջոցով օբյեկտի կամ նրա առանձին մասերի մեծությունը որոշելու համար պետք է որոշել նկարում նրա փոքրացման աստիճանը, որը կատարվում է մասշտաբի իսկական բաժանումը նկարում արտահայտված բաժանման հետ համեմատելով: Այնուհետև չափվում են լուսանկարում օբյեկտի լայնությունն ու երկարությունը, և ստացված մեծությունները բազմապատկվում նկարում օբյեկտի փոքրացման աստիճանով:

Խոշորամասշտաբ լուսանկարում

Լուսանկարահանման եղանակ է, երբ լուսանկարվում են մանր առարկաները բնական մեծությամբ կամ անմիջական մեծացմամբ՝ առանց մանրադիտակի օգնության (դեպքի տեղում հայտնաբերված մատուա-հետքեր, արյան կաթիլներ, քերծվածքներ և այլն): Նկարահանման այս եղանակը կոչվում է նաև մակրոլուսանկարչություն:

Մակրոլուսանկարումը կիրառվում է ինչպես քննչական գործողություններ կատարելիս, այնպես էլ փորձագիտական հետազոտությունների ժամանակ:

Նկարահանման այս եղանակը կատարվում է «Ջենիթ» տիպի նեղ ժապավենավոր ֆոտոխցիկներով: Սակայն այդ տիպի ապարատների կառուցվածքային առանձնահատկությունները թույլ են տալիս առանց որևէ լրացուցիչ հարմարանքների նկարահանում կատարել 0,65 մ-ից ոչ մոտ տարածությունից: Այդ դեպքում պատկերի մասշտաբը հավասար կլինի 1:10,5:

Ավելի խոշոր մասշտաբով նկարահանելու համար անհրաժեշտ է ապարատի օբյեկտիվը առաջ մղել՝ պարզորոշության բերելու համար: Այդ նպատակի համար կիրառվում են երկարացնող ագույցներ:

Երկարացնող ագույցների առկայության դեպքում, ապարատը պարզորոշության են հասցնում ոչ թե սովորական ձևով, այլ ապարատը նկարահանվող օբյեկտին մոտեցնելով կամ հեռացնելով:

0,65 մ-ից մոտ տարածությունից խոշոր մասշտաբով լուսանկարահանելու համար ագույցները կիրառվում են ինչպես առանձին, այնպես էլ մի քանի ագույցների համակցությամբ: Յուրաքանչյուր ագույց նախատեսված է նկարահանման որոշակի մասշտաբի համար:

Ռ-Դ-ում արտադրված ագույցների հավաքածուն բաղկացած է չորս ագույցից՝ N1-բարձրությունը 5 մմ, N2՝ 8մմ, N3՝ 16մմ, N4՝ 26մմ (կա նաև 3 ագույցների հավաքածու, որը, սակայն, քննիչի հանդերձանքի մեջ չի մտնում):

Երկարացնող ագույցները նկարահանման համար ընտրվում են փորձնական ճանապարհով կամ ըստ հետևյալ աղյուսակի¹.

¹ Այս աղյուսակը հաշվարկված է «Ինդուստար 22» կամ «Ինդուստար 50» օբյեկտիվների համար: Տե՛ս «Криминалистика» Մ., 1971, էջ 71:

Նկարահանվող առարկայից մինչև ծապավենի հարթությունն ընկած տարածությունը սմ-ով	Նկարահանման մասշտաբը	Կիրառվող ազույցի համարը
65,97-38,75	1/10,50-1,5,21	1
44,82-32,77	1/6,56-1,4,02	2
32,88-27,44	1/4,04-1,2,90	1,2
28,82-25,37	1,3,20-1,2,44	3
25,40-23,44	1/2,45-1/1,98	1,3
23,58-22,36	1/2,02-1/1,69	4
22,37-21,63	1/1,69-1/1,45	1,4
21,89-21,35	1/1,54-1/1,34	2,4
21,35-21,05	1/1,35-1/1,19	1,2,4
21,13-20,94	1/1,24-1/1,11	3,4
20,94-20,89	1/1,11-1/1,00	1,3,4

Վերարտադրական (ռեպրոդուկցիոն) լուսանկարում

Այս մեթոդը կիրառվում է լուսանկարման միջոցով ձեռագիր կամ այլ տեքստերի, լուսանկարների, նկարների, գծագրերի, ուրվապատկերների և այլ հարթ պատկերների վերարտադրության նպատակներով: Կրիմի-նալիստիկական լուսանկարչության մեջ այն լայնորեն կիրառվում է ինչպես քննիչի, այնպես էլ փորձագետի կողմից:

Վերարտադրական նկարահանումը կատարվում է համեմատաբար մոտ տարածությունից, որոշ չափով փոքրացված կամ բնական մեծությամբ, իսկ որոշ դեպքերում՝ մեծացումով:

Գոյություն ունեն տարբեր համակարգերի, տեսակների վերարտադրական սարքեր (ուղղահայաց և հորիզոնական դիրքերով, խոշոր մասշտաբային և փոքր չափի), որոնք հնարավորություն են ստեղծում ստանալու հարթ օբյեկտների բարձրորակ լուսանկարչական պատկերներ:

Լայն կիրառություն ունի «Բելոռուս ՍՄ» ունիվերսալ սարքը, որը նախատեսված է ինչպես վերարտադրման, այնպես էլ պոզիտիվային լուսանկարներ ստանալու համար:

35 մմ կինոժապավենի վրա նկարահանելու համար առավել տարածված է պարզ կառուցվածքի «PY-2» վերարտադրող սարքը:

Ավելի կատարյալ է համարվում դյուրատար ունիվերսալ «C-64» սարքը, որը մի լիցքավորումով կարող է կատարել մինչև 400 լուսանկար:

Փորձագիտական հիմնարկներում վերարտադրման նպատակներով հաճախ օգտվում են հարմարեցված, ոչ սերիական թողարկման ֆոտոսարքերով:

Քանի որ վերարտադրման օբյեկտները լինում են ստվերագծային (մատնադրոշմային քարտեր, գծագրեր, ուրվապատկերներ և այլն), կիսաերանգավոր (լուսանկարներ, նկարներ), կիսաթափանց (բարակ թղթի վրա զրված տեքստ), նեգատիվային նյութերն էլ ընտրվում են՝ հաշվի առնելով վերարտադրվող օբյեկտի տիպը:

Լուսանկարելիս պետք է պահպանվեն մասշտաբային նկարահանման կանոնները, որպեսզի ապահովվի պատճենի առավել ճշտությունը:

Վերարտադրական նկարահանման ժամանակ կարևոր նշանակություն ունի լուսանկարվող օբյեկտի ճիշտ լուսավորումը: Նկարահանման ժամանակ լույսը պետք է լինի ուժեղ և հավասարաչափ: Վերջինս ստացվում է, եթե լույսի հավասարագոր աղբյուրները նկարահանվող օբյեկտից գտնվում են հավասար հեռավորության վրա: Սովորաբար լույսը փաստաթղթի վրա ուղղվում է 45 աստիճան անկյան տակ՝ կախված նրա մակերևույթի առանձնահատկություններից՝ երբեմն ուղղահայաց կամ համարյա ուղղահայաց: Կախված նկարահանվող փաստաթղթի չափերից՝ լույսի աղբյուրները կարելի է մոտեցնել նրան (փոքրի դեպքում) կամ հեռացնել: Եթե նկարահանումը կատարվում է չմթնեցրած սենյակում, անհրաժեշտ է հաշվի առնել նաև կողմնակի լույսի ազդեցությունը (պատուհանից, սենյակը լուսավորող լամպերից և այլն):

Փաստաթղթերի տարբեր ժամերի լուսավորվածության տարբերությունը չպետք է գերազանցի 10%-ը:

Լուսավորությունը կարգավորելիս անհրաժեշտ է հետևել, որ լույսի անդրադարձումից փայլքեր չառաջանան: Վերջիններս առանձնապես նկատելի են փայլուն մակերես ունեցող բնագրերի նկարահանման ժամանակ, կամ երբ բնագրին հարթ տեսք տալու համար օգտագործվում է ապակի:

Լուսանկարների մեծագույն հստակությունն ապահովելու համար ստվերագծային սև-սպիտակ բնագրերը (ձեռագիր կամ այլ տեքստեր, գծագրեր և այլն) պետք է լուսանկարել ստվերագծային վերարտադրական ֆոտոթիթեղների, դիպոզիտիվային թիթեղների, ֆոտոտեխնիկական ՓՏ-20, ՓՏ-30 ժապավենների, պոզիտիվային ժապավենների և «Միկրատ» ժապավենների վրա: Կիսաերանգավոր օբյեկտները (լուսանկարներ, գեղանկարներ) պետք է լուսանկարել կիսաերանգային վերար-

տաղրական թիթեղների և ժապավենների որոշ տեսակների վրա՝ ՓՏ-11, ՓՏ-12 և այլն:

Վերարտադրական լուսանկարահանման ժամանակ ֆոտոապարատը նկարահանվող օբյեկտի նկատմամբ պետք է ունենա նույն դիրքը, ինչը պահանջվում է մասշտաբայինի ժամանակ: Բացի այդ, նեղ ժապավենավոր ֆոտոխցիկներով վերարտադրություն կատարելիս կարող են օգտագործվել երկարացնող ազույցներ: Այս դեպքում նկարահանումները կատարվում են՝ խոշոր մասշտաբային նկարահանման հանձնարարականները հաշվի առնելով:

Փաստաթղթերի ֆոտոպատճենը կարելի է ստանալ նաև առանց ֆոտոապարատի օգտագործման՝ կոնտակտային եղանակով: Այդ նպատակի համար օգտագործվում է հատուկ ֆոտոթուղթ՝ ռեֆլեքսային նկարահանման համար և «տեխնոկոպիր»: Ֆոտոպատճեններ ստանալու այս մեթոդը կոչվում է ռեֆլեքսային վերարտադրություն կամ ռեֆլեքսային տպում:

Ռեֆլեքսային թղթի վրա ֆոտոպատճեն ստանալու տեխնիկան շատ պարզ է և հանգում է հետևյալին. մթնեցված սենյակում, լաբորատոր լույսի տակ (կարմիր, մարնջագույն կամ դեղին լուսազտիչով) ֆոտոթղթի լուսազգա շերտը հպվում է փաստաթղթին, սեղմվում է նրան թափանցիկ մաքուր ապակիով և աստառի կողմից լուսավորվում է վառ, հավասարաչափ (ցրված) լույսով: Պահածամի պրոցեսում, անցնելով ֆոտոթղթի աստառի միջով, լույսը անդրադառնում է փաստաթղթի լուսավոր և կլանվում մութ հատվածներից: Ճառագայթների անդրադարձումը ֆոտոթղթի վրա առաջացնում է քողարկված նեգատիվային պատկեր, որը երևան է գալիս կոնտրաստային հայտածիչում մշակելուց հետո: Նեգատիվի հայտածումը, ամրապնդումը, լվացումը և չորացումը կատարվում են այնպես, ինչպես սովորական լուսանկարման ժամանակ: Ստացված նեգատիվից կոնտակտային եղանակով տպվում է ցանկացած քանակությամբ պոզիտիվ: Ռեֆլեքսային թղթի բացակայության դեպքում կարելի է օգտագործել բարձր ցայտերանգայնության ֆոտոթուղթ:

Կրիմինալիստիկական պրակտիկայում վերարտադրման նպատակների համար երբեմն կիրառվում են այլ միջոցներ ու մեթոդներ:

Ճանաչողական նկարում

~~Կրիմինալիստիկայում ճանաչողական է կոչվում նկարահանման այն եղանակը, որը կատարվում է կենդանի անձանց և ռիակների արտաքինը պատկերելու համար:~~

Կենդանի անձանց ճանաչողական լուսանկարները պատրաստվում են հանցագործների քրեական առշվածան, ձերբակալվածի անձի պարզաբանման, ճանաչման ներկայացնելու և կրիմինալիստիկական փորձաքննության նպատակներով:

Ճանաչողական լուսանկարներ պատրաստելիս պետք է պահպանել որոշակի կանոններ:

Ճանաչողական լուսանկարահանման կանոնների ստեղծման առաջին փորձը նախաձեռնեց Օ. Գ. Ռեյլանդերը 1870-1872թթ.՝ բրիտանական «Լուսանկարչական ավանախ»-ում հրատարակելով հանցագործների լուսանկարման համառոտ խորհուրդներ¹: Ռուսաստանում այդպիսի կանոնների մասին առաջինը գրեց Ս. Ա. Յուրովսկին՝ կալանավորի դիմանկարը պատկերավոր կերպով անվանելով «Ոստիկանական արձանագրություն՝ ակնհայտ կատարելագործված անձնագրային նշաններով»: Ռուս նշանավոր դատավարագետ Պ. Վ. Մակալինսկին 1890թ. նշում է, որ լուսանկարչությունը քննչական պրակտիկայում կիրառվում է գլխավորապես մեղադրյալների արտաքինը պատկերելու, նրանց ինքնությունը հավաստելու համար, և ենթադրում է, որ այն կարող է օգտակար լինել նաև ընդհանրապես քննչական զննություններում:

Ճանաչողական լուսանկարները պատրաստվում են գոտկատեղից, դիմագից (ֆաս) և աջ կիսադեմից: Եթե ենթադրվում է, որ լուսանկարները օգտագործվելու են օպերատիվ աշխատանքներում, կամ երբ ձախ կիսադեմի վրա կան առանձնահատկություններ՝ նաև ձախից: Անհրաժեշտության դեպքում նկարահանվում է նաև դեմքի 3/4 շրջադարձով՝ դեպի աջ, և ամբողջ հասակով, գլխարկով, ակնոցով (եթե ըստ որևէ ցուցմունքի նա կրել է): Լուսանկարելիս անձին առաջարկում են ~~բռնել~~ նստարանին և գլուխը պահել ուղիղ, չթեքվել աջ կամ ձախ, ~~կախել~~ գլուխը կամ չբարձրացնել, նայել ուղիղ ~~օբյեկտիվին~~: Լուսանկարում նկարահանված անձի չափսը պետք է հավասար լինի բնական մեծության 1/7 հարաբերությամբ: Առավել հաջողությամբ ճանաչողական լուսանկարահանում կարելի է կատարել լայն ժապավեն ունեցող ֆոտոապարատներով, օրինակ, 6X6 սմ և ավելի չափի կադր ունեցող ապարատով: Նկարելիս ապարատը տեղադրվում է լուսանկարվողի գլխից օբյեկտիվի 8 գլխավոր ֆոկուսային հեռավորության վրա:

Զանի որ նեղ ժապավեն ունեցող ապարատով 1/7 հարաբերակցությամբ լուսանկարել հնարավոր չէ, նման դեպքերում օգտվում են մասշտա-

¹ Селиванов Н. А., Эйман А. А., Судебная фотография, М., 1965, т. 2: 12:

բային քանոնից, որը ամրացվում է նստարանին կամ լուսանկարվողի կրծքին: Լուսանկարը տպելիս մասշտաբային քանոնի օգնությամբ պատկերը հասցվում է 1/7 մեծությամբ:

Լուսանկարահանում կարելի է կատարել ինչպես բնական, այնպես էլ արհեստական լուսավորության պայմաններում: Լուսանկարների որակը մեծ չափով կախված է ճիշտ լուսավորումից: Ֆերեկային լուսավորությամբ նկարահանելիս ֆոտոապարատը և նստարանը տեղադրվում են մի ուղղությամբ՝ պատուհանի նկատմամբ 40 աստիճան անկյան տակ: Լուսանկարահանմանը խանգարող պատուհանները պետք է քողարկել: Լրացուցիչ լուսավորություն կարելի է ստանալ անդրադարձնող էկրանի օգնությամբ:

Խորհուրդ է տրվում լուսանկարահանում կատարել արհեստական լուսավորությամբ, քանի որ այն ավելի հարմար է կարգավորել:

Ճանաչողական լուսանկարներում ռետուշ չի կարելի կատարել:

Չճանաչված դիակների ճանաչողական լուսանկարներ պատրաստելիս պետք է պահպանել հետևյալ կանոնները. եթե դիակի դեմքը այլակերպված է, պետք է այն լուսանկարել և վերականգնել՝ կատարել այսպես կոչված «տուայետ», որը քննիչի հանձնարարությամբ կատարում է դատական բժիշկը: (Վերքերը կարվում են, մաքրվում, դեմքը շպարվում է դիմափոշով, շրթունքները ներկվում և այլն): Դիակը լուսանկարվում է այն հագուստով, որով հայտնաբերվել է: Եթե դիակի վրա հագուստը բացակայում է, ապա մարմինը մինչև պարանոցը ծածկվում է մոխրագույն, սպիտակ կամ սև շորով: Չի կարելի դիակին հագցնել սրբիչի շորեր, քանի որ այն կարող է ճանաչողին թյուրիմացության մեջ գցել:

Դիակի դեմքը լուսանկարվում է դիմացից (ֆաս), աջ ու ձախ կիսադեմերից և դեմքի 3/4 շրջադարձով (դեպի աջ կամ ձախ): Այս լուսանկարները պետք է կատարել միայն դիակի դեմքը վերականգնելուց հետո, քանի որ այդ լուսանկարները նախատեսվում են գլխավորապես ճանաչման և կենդանի ժամանակվա լուսանկարների հետ համեմատելու համար:

Թեև ճանաչողական լուսանկարներում ռետուշ չի թույլատրվում, սակայն, գրականության մեջ կարծիք կա, որ չճանաչված դիակի նեզատիվներից մեկ օրինակը ցանկալի է ռետուշավորել, որովհետև այն հնարավորություն է տալիս պատկերին տալ ավելի կենդանի տեսք¹:

Եթե դիակի մարմնի վրա կան առանձնահատկություններ, դրանք նույնպես լուսանկարվում են:

¹ Տե՛ս X. M. Тахо-Годи, Пособие по основам научной фотографии в судебной медицине, М., 1965, էջ 28:

Ծավալադիտակային (ստերեոսկոպիկ) լուսանկարում

Մարդկային տեսողության ծավալադիտակայնությունը (բինոկուլյար տեսողություն) հանգում է նրան, որ աչքերը առարկաները դիտում են տարբեր կետերից, դրա համար էլ պատկերը յուրաքանչյուր աչքի համար տարբեր տեսքով է ներկայանում: Այսինքն՝ տեղի է ունենում տարածության խորության տարբեր ընկալում և տարածության մեջ առարկաների հարաբերական դասավորության գնահատում:

Հայտնի է, որ մարդու աչքերի տեսողական կենտրոնների միջև կա որոշակի տարածություն (այն տատանվում է 53-75 մմ), որի պատճառով էլ առարկաները աչք և ձախ աչքերով դիտելիս երևում են տարբեր անկյունների տակ: Երկու աչքերով միաժամանակ դիտելիս այդ երկու դիրքերը համատեղվում են, որի շնորհիվ ստացվում է մեկ ամբողջական, ծավալային տարածական անպակորություն:

Եթե որևէ օբյեկտ լուսանկարենք աչք և ձախ աչքերի դիրքերից և կատարված լուսանկարները դիտենք միաժամանակ, այսպես կոչված ծավալադիտակի (ստերեոսկոպի) միջոցով, կստանանք ծավալադիտակային տեսողության էֆեկտ:

Ծավալադիտակային լուսանկարները հնարավորություն են տալիս ավելի մանրազնին ուսումնասիրելու նկարահանված օբյեկտները:

Ծավալադիտակային նկարահանումներ կատարելու համար թողարկվում է հատուկ ֆոտոխցիկ՝ «Սպուտնիկ», որն ունի երկու օբյեկտիվ: Գոյություն ունեն նաև երկօբյեկտիվանոց այլ ֆոտոխցիկներ՝ «ՄՇՓ-1», «ԵՇՓ-2»:

Ծավալադիտակային նկարահանումներ կարելի է կատարել նաև այլ մակնիշի նեղ ժապավենավոր ֆոտոապարատներով: Այս դեպքում նկարահանումը կատարվում է երկու անգամ, առաջին նկարահանումից հետո ապարատը հորիզոնական գծով տեղափոխելով 53-75 մմ: Նման լուսանկարներ ստանալու համար գոյություն ունեն նաև հատուկ պրիզմա-յավոր կամ հայելավոր գլխադիրներ, ինչպես նաև ծավալադիտակային կցորդներ: Վերջիններս կան քննչական ճամպուկում և հնարավորություն են տալիս ֆոտոապարատը առաջին լուսանկարահանումից հետո հորիզոնական գծով տեղաշարժել աչքերի միջև եղած տարածության միջինի չափով (մոտ 65 մմ):

Ծավալադիտակային լուսանկարահանումները կիրառվում են հիմնականում դեպքի տեղի գնտության ժամանակ, երբ անհրաժեշտ է ավելի

լրիվ և ճիշտ պատկերացում ստանալ դիակի դիրքի վերաբերյալ, ցույց տալ տարբեր օբյեկտների, այդ թվում, հետք թողած գործիքների ծավալը, դիակի վրա եղած վնասվածքները ամրապնդելու և այլ նպատակներով:

§ 2. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ (ԴԱՏԱԿԱՆ) ԼՈՒՍԱՆԿԱՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Դեպքի տեղի լուսանկարում

Տեղագնություն կատարելիս քննիչի հիմնական խնդիրներից է ճիշտ և սպառիչ ձևով ամրապնդել դեպքի տեղի իրադրությունը, որը արձանագրության մեջ նկարագրելու ձևով հնարավոր չէ: Դրա համար էլ օգնության է գալիս լուսանկարչությունը: Դեպքի տեղի լուսանկարմանը առաջադրվում են որոշակի պահանջներ, որոնցից են. լուսանկարում արտացոլել դեպքի տեղի ընդհանուր պատկերը, դեպքի տեղի տեղադրությունը շրջապատող միջավայրում, հանցագործի թողած հետքերը, հանցագործության հետ կապված առանձին առարկաները, առանձին դեպքերում պատկերացում տալ տարբեր առարկաների, հետքերի չափսերի մասին և այլն:

Դեպքի տեղի լուսանկարները կարող են լինել կողմնորոշող, տեսաձիրային, հանգուցային և դետալային:

Կողմնորոշող նկարահանման ժամանակ լուսանկարում է դեպքի տեղը ամբողջությամբ, շրջապատող իրադրության հետ: Լուսանկարման այս տեսակի նպատակն է ունենալ դեպքի տեղի և նրա շրջապատի ամբողջական պատկերը, որը հնարավորություն կտա լուսանկարի օգնությամբ կողմնորոշվելու դեպքի տեղում: Նման լուսանկարներով հեշտությամբ կարելի է գաղափար կազմել առանձին առարկաների տեղադրության, չափսերի վերաբերյալ, նրանց փոխադարձ կապի և հարաբերակցության վերաբերյալ:

Կողմնորոշող լուսանկար ստանալու համար նկարահանումը պետք է կատարել նկարահանվող օբյեկտից որոշակի հեռավորության վրա, այնպես, որ օբյեկտը և նրա շրջապատը տեղավորվեն մեկ կադրում, իսկ օբյեկտը գտնվի կադրի կենտրոնում: Եթե դեպքի տեղը ընդգրկում է մեծ տարածք, նկարահանումը պետք է կատարել համայնապատկերային եղանակով:

Կողմնորոշող նկարահանման ժամանակ ցանկալի է լուսանկարում պատկերել հիմնական կողմնորոշիչներ, որոնք հետագայում հնարավորություն կտան ճանաչելու տվյալ տեղանքը:

Նպատակահարմար է նաև, եթե հնարավոր է, նկարահանումները կատարել տարբեր կետերից:

Տեսաձիրային նկարահանումը դեպքի տեղի լուսանկարումն է առանց շրջապատող միջավայրի:

Նկարահանման այս տեսակը շատ կարևոր է, քանի որ նպատակ ունի ամրապնդել դեպքի տեղը իր բոլոր բնութագրական առանձնահատկություններով: Տեսաձիրային լուսանկարը պետք է կատարել այնպես, որ զննության զլխավոր օբյեկտները երևան բավարար հստակությամբ: Օրինակ՝ սպանության դեպքում՝ դիակը, ճանապարհատրանսպորտային պատահարի դեպքում՝ ավտոմեքենան, գողության դեպքում՝ պահեստարանի ջարդված դուռը և այլն:

Հանցագործության մասին ավելի լրիվ պատկերացում ստանալու համար տեսաձիրային լուսանկարումը պետք է կատարել մի քանի կետերից, ըստ հնարավորության՝ 2-4 կետերից (որքան պայմանները թույլ են տալիս): Իսկ եթե հնարավոր է, կարելի է լուսանկարել նաև վերևից: Դա կհեշտացնի ամրապնդելու օբյեկտների փոխադարձ հարաբերակցությունը և դասավորությունը: Նման նկարահանումը հատկապես օգտակար կլինի ճանապարհատրանսպորտային պատահարների տեղի զննության ժամանակ:

Տեսաձիրային լուսանկարման ժամանակ դեպքի իրադրությունը պետք է ամրապնդել իր նախնական տեսքով՝ առանց փոխելու, օրինակ՝ դիակի դիրքը, հանցագործության գործիքների դիրքը, տեղի իրադրությունը: Այլ կերպ ասած, այս լուսանկարը կատարվում է զննության սկզբնական փուլում: Որպեսզի դեպքի տեղի իրադրությունը արտացոլվի այնպես, ինչպես այն կերևա կանգնած մարդուն, պետք է լուսանկարելիս ապարատը պահել միջահասակ մարդու աչքերի բարձրությամբ: Տեսաձիրային լուսանկարման ժամանակ երբեմն կիրառվում են համայնապատկերային, ծավալադիտակային, մետրական եղանակներ:

Հանգուցային լուսանկարումը դեպքի տեղի առանձին, առավել կարևոր մասերի և առարկաների նկարահանումն է (դիակի, կտորած դռան և այլն): Այս լուսանկարումը իրականացվում է հնարավոր խոշոր պլանով: Նման լուսանկարահանում կարող է կիրառվել նաև առարկաների կույտ կամ հետքերի խումբ պատկերելու համար:

Հանգուցային լուսանկարահանումը ևս նպատակահարմար է կատարել մի քանի կետերից: Նկարահանման եղանակը, ելնելով որոշակի պայմաններից, որոշում է քննիչը (ծավալադիտակային, չափողական, լայնանկյուն օբյեկտիվով և այլն):

Դեփալային նկարահանումը հանցագործության առանձին հետքերի, հանցագործության գործիքների, ոչ մեծ առարկաների լուսանկարումն է խոշոր պլանով՝ վերևից: Այն կարող է իրականացվել ինչպես դեպքի տեղում, այնպես էլ լաբորատոր պայմաններում:

Նկարահանումը պետք է կատարել այնպես, որ լուսանկարի վրա հնարավոր լինի ցույց տալ օբյեկտի հատկանիշներն ու հատկությունները (օրինակ՝ մատնադրոշմի գծանախշերը, ներբանի վրա եղած դրոշմանախշերը, անվադողի մաշվածությունը՝ արտահայտված նրա թողած հետքերում և այլն):

Դետալային լուսանկարները կատարվում են մասշտաբային նկարահանման կանոններով:

Դիակի լուսանկարում

Դեպքի տեղի զննության ժամանակ դիակի լուսանկարման նշանակությունը բացատրվում է նրանով, որ նկարահանման այս տեսակը հնարավորություն է տալիս պատկերելու դիակի դիրքը, որը հնարավոր չէ ճշգրիտ և պատկերավոր շարադրել արձանագրության մեջ, ամրապնդել նրա տեղադրությունը շրջապատող իրադրության մեջ, ցույց տալ նրա մարմնի վրա եղած վերքերը, արյունագեղումները, հետքերը, դրանց փոխադարձ դասավորությունը և ձևը, հագուստի վիճակը և այլն: Բացի այդ, պետք է նկատի ունենալ նաև, որ հնարավոր չէ դիակը պահել երկար ժամանակ, քանի որ ամենակարճ ժամանակում այն ենթարկվում է փոփոխությունների (դիակային բծերի առաջացում, դրանց գույնի փոփոխություն և այլն):

Դիակը դեպքի տեղում պատկերվում է կողմնորոշող, տեսածիրային, հանգուցային և դետալային եղանակներով:

Դիակի լուսանկարահանումները իրականացվում են կրիմինալիստիկայի տեսության և պրակտիկայի կողմից մշակված հատուկ կանոններով: Ըստ էության, դրանք հանգում են հետևյալին.

1. դիակի լուսանկարում՝ նրան շրջապատող տեղանքի հետ,
2. դիակի լուսանկարում՝ անմիջականորեն նրան հարող տեղանքի հետ,
3. դիակի ընդհանուր տեսքի լուսանկարում,

4. դիակի առանձին մասերի լուսանկարում,

5. դիակի վրա եղած վնասվածքների և առանձնահատկությունների լուսանկարում,

6. լուսանկարում՝ արտաշիբոմում կատարելիս:

Դիակի կողմնորոշող լուսանկարը (նրան շրջապարող տեղանքի հեյր) պետք է կատարել անմիջապես, զննության ստատիկ փուլը ավարտելուց հետո, այսինքն՝ մինչև զննության դինամիկ փուլը սկսելը: Դեպքի տեղի ավելի շատ էական դետալներ ֆիքսելու նպատակով՝ դիակը իր շրջապատող տեղանքի հետ լուսանկարվում է մի քանի կետերից (ցանկալի է չորս կետից, եթե պայմանները թույլ են տալիս): Դիակի լուսանկարումը դեպքի տեղում կատարվում է մետրական նկարահանման կանոններով: Այս դեպքում ֆոտոապարատը պետք է պահել (կամ շտատիվին ամրացնել) այնպես, որ օբյեկտիվի գլխավոր օպտիկական առանցքը լինի խիստ հորիզոնական:

Ֆոտոապարատի օբյեկտիվը պետք է նկարահանվող օբյեկտից 150 սմ հեռու լինի (միջահասակ մարդու աչքի մակարդակին), որը կապահովի աչքի համար ավելի սովորական պայմաններում նկարների ստացումը:

Դիակի լուսանկարումը անմիջականորեն նրան հարող տեղանքի հեյր իրականացվում է, մասնավորապես, այն դեպքերում, երբ դիակի մոտ առկա են առարկաներ, հետքեր, որոնք կարող են առնչություն ունենալ դեպքի հետ (հրազեն, հարվածող գործիքներ, արյուն, ոտքերի հետքեր և այլն): Այս դեպքում ևս լուսանկարումը կատարվում է զննության ստատիկ փուլում: Կատարվում է նույն եղանակով, ինչ առաջին դեպքում, միայն ավելի խոշոր պլանով, մոտ տարածությունից, ֆոտոապարատի օբյեկտիվի գլխավոր օպտիկական առանցքի թեքումով: Լուսանկարումը պետք է կատարել երկու և ավելի կողմերից:

Դիակի ընդհանուր տեսքի լուսանկարումը հնարավորություն է տալիս ճշգրտորեն վերարտադրել դիակի դիրքը, նրա հագուստի վիճակը, նրա հագուստի կամ մարմնի վրա եղած հետքերը և այլն: Այդ հատկանիշների ֆիքսումը հնարավորություն է տալիս հետագայում դրանցով պարզաբանել շատ էական փաստեր: Օրինակ՝ դիրքի ֆիքսումը հնարավորություն կտա հետագայում պարզելու մահվան պահին տուժողի փաստացի դիրքը, տուժողը ինքնապաշտպանության դիմել է, թե՛ ոչ, բարձր ջերմաստիճանի ենթարկվելու, էլեկարահարության փաստը և այլն:

Լուսանկարելիս ֆոտոապարատը պետք է գլխից և ոտքերից հավասար հեռավորության վրա գտնվի: Ցանկալի է լուսանկարումը կատարել

մի քանի կողմից, այդ թվում՝ վերևից (այս դեպքում օբյեկտիվի գլխավոր օպտիկական առանցքը պետք է ուղղահայաց լինի նկարահանվող օբյեկտին՝ դիակին): Եթե դիակը գտնվում է այնպիսի տեղում (օրինակ՝ նեղ միջանցքում), որ մեկ կադրում հնարավոր չէ ամփոփել, լուսանկարվում է համայնապատկերի եղանակով:

Դիակի վրա եղած վնասվածքների, առանձնահատկությունների լուսանկարումը իրականացվում է մասշտաբային նկարահանման կանոններով: Լուսանկարահանվող մասի կողքին՝ նույն հարթության վրա, դրվում է միլիմետրանոց բաժանումներ ունեցող մասշտաբ: Եթե մասշտաբը նշված ձևով տեղադրել հնարավոր չէ, կատարվում է կրկնակի լուսանկարում՝ առանց մասշտաբի և մասշտաբը նկարահանվող մասի վրա հարմարեցված: Լուսանկարման այս դեպքի համար կարևոր է առանց ցայտուն ստվերների լուսավորությունը:

Դիակի վրա եղած վնասվածքները և հետքերը, որոնք երևում են արտաքին զննության ժամանակ, լուսանկարվում են զննության ստատիկ փուլում, իսկ այն հետքերն ու վնասվածքները, որոնք ծածկված են դիակով կամ հագուստով, լուսանկարվում են զննության դինամիկ փուլում:

Արյան հետքերը, արյունագեղումները, քերծվածքները, դիակային բծերը և նման այլ հետքերն ու մասերը նպատակահարմար է լուսանկարել գունավոր լուսանկարչությամբ:

Արտաշիրմում կատարելիս նախ լուսանկարվում է թաղման տեղը, շրջապատող որոշ կողմնորոշող օբյեկտների հետ (գերեզմաններ, հուշարձաններ, ծառեր, շինություններ և այլն): Այնուհետև խոշոր պլանով լուսանկարվում է գերեզմանը այնպես, որ լուսանկարում լավ երևան ճանաչողական հատկանիշները (համապատասխան գրառմամբ վահանակ, ծաղկեպսակներ և այլն): Հաջորդ փուլում լուսանկարվում է բացված գերեզմանը նրանում եղած դագաղով կամ դիակի մասերով: Դրանից հետո լուսանկարվում է գերեզմանից հանված դագաղը, նախքան կափարիչը բացելը, այնպես, որ լուսանկարում երևան առանձնահատուկ հատկանիշները (պաստառը, տարբեր զարդարանքներ և այլն): Լուսանկարվում է նաև դիակը՝ դագաղում, այնպես որ երևան նրա դեմքը և հագուստը:

Նկարահանման պայմանները հարմարեցվում են վերևում նշված կողմնորոշող, տեսածիրային, հանգուցային և դետալային նկարահանման պայմաններին:

Հետքերի լուսանկարում

Հետքեր լուսանկարելիս անհրաժեշտ է խստորեն պահպանել այն պահանջները, որոնք վերաբերում են լուսանկարելու և լուսանկարներ ստանալու պայմաններին: Այդ պայմանների ճշգրիտ կատարումից է կախված լուսանկարների ապացուցողական նշանակությունը: Որպեսզի ավելի հստակ և լրիվ պատկերվեն հետքերի վրա եղած առանձնահատկությունները, որոնք, ինչպես հայտնի է, տեղեկատվություն են պարունակում մի շարք փաստերի վերաբերյալ. անհրաժեշտ է լուսանկարելիս ուշադրություն դարձնել ճիշտ լուսավորությանը:

Հետքերը պետք է լուսանկարել՝ պահպանելով մասշտաբային և խոշորամասշտաբային նկարահանման կանոնները, ինչպես նաև այն կանոնները, որոնք սահմանված են վերարտադրական լուսանկարչության համար:

Այն դեպքերում, երբ հետք կրող առարկան հնարավոր է վերցնել, նպատակահարմար է նկարահանումը կատարել լաբորատոր պայմաններում: Քանի որ, բացի նշված ընդհանուր կանոններից, տարբեր բնույթի հետքերի լուսանկարումը ունի առանձնահատկություններ, նշենք առավել հաճախ հանդիպող հետքերի նկարահանման որոշ կանոններ, մասնավորապես՝ մարդու ձեռքերի ու ոտքերի, կենդանիների ոտքերի, տրանսպորտային միջոցների, ջարդող գործիքների, կրակոցի:

Ձեռքերի պապիլյար գծանախշերի հետքերը դեպքի տեղում կարող են մնալ ինչպես ծավալային ձևով (կավի, գմուռսի, մածուկի վրա), այնպես էլ մակերեսային, որը կարող է արտահայտվել ինչպես գունավոր (այսինքն՝ ներկոտված, արյունոտ, կեղտոտված մատներից մնացած), այնպես էլ անգույն, քրտնաճարպային գոյացման ձևով՝ մաքուր մատներից և նայած, թե ինչ օբյեկտի վրա է մնացել՝ քիչ տեսանելի կամ անտեսանելի: Այսպիսի հետքեր կարող են մնալ լաբապատված կահույքի, հղկված փայտի, ապակու, ներկված կամ արծնապատ մետաղի, թղթի և այլ օբյեկտների վրա:

Եթե պայմանները նպաստավոր են, նպատակահարմար է լուսանկարումը կատարել դեպքի տեղում, քանի որ, տեղափոխումը որքան էլ այն զգույշ արվի և լավ փաթեթավորված, կապված է հետքի լրիվ կամ մասնակի ոչնչացման, փչացման, հատկանիշների կորստյան կամ աղավաղման հետ:

Մատնահետքերի լուսանկարման համար օգտագործվում են ինչպես սովորական, այնպես էլ հատուկ ֆոտոխցիկներ: Սովորական ֆոտոխ-

ցիկներից գերադասելի են միջին և խոշոր ֆորմատի ապարատները (6X6, 6X9, 9X12, 13X18 սմ), որոնցում պարզորոշումը կատարվում է կաթնապակու վրա: Այս ապարատները հնարավորություն են տալիս անմիջապես ստանալ հետքի խոշորացված պատկերը (մինչև 4 անգամ):

Հետքի դետալային լուսանկարը կարելի է ստանալ նաև փոքր չափի հայելավոր ֆոտոապարատով, օրինակ՝ «Ձենիք»-ով: Այս դեպքում կիրառվում են երկարացնող ազույցներ և շտատիվ:

Փորձագիտական հիմնարկներում կան ստացիոնար ֆոտոսարքեր՝ հատկապես մատնահետքերի լուսանկարման համար: Սարքը կազմված է խցիկից, լուսավորման հարմարանքներից և ամրակներ ունեցող առարկայական սեղանիկից: Այս նպատակի համար կիրառվում են նաև միկրոֆոտոսարքերը: Ծավալային հետքեր լուսանկարելու համար օգտվում են սովերային լուսավորությունից: Սովերային լուսավորություն ստանալու համար կիրառվում են ՕԻ-7, ՕԻ-19 լուսարձակներ, իսկ դրանց բացակայության դեպքում թեք ընկնող լուսավորություն կարելի է ստանալ սովորական լամպով, որը թեքությամբ ծածկվում է լուսաանթափանց որևէ նյութով: Այս դեպքում թեք անկյան տակ լուսային փունջը ուղղվում է լուսանկարվող օբյեկտի վրա:

Անթափանց առարկաների վրա մնացած մակերեսային հետքերը, որոնք մնացել են կեղտոտ, արյունոտ, ներկված մատներից կամ գունավորմամբ հայտնաբերված անգույն հետքերը լուսանկարվում են համապատասխան լուսագոչի կիրառմամբ: Նկարահանումը կատարվում է վերարտադրական նկարահանման կանոնների պահպանմամբ:

Գունավոր հետքը, եթե այն մնացել է թափանցիկ օբյեկտի վրա, կարելի է լուսանկարել առանց ֆոտոապարատի օգտագործման: Ֆոտոժապավենը կամ ֆոտոթուղթը մթության մեջ կամ համապատասխան լուսավորության տակ (օրինակ՝ կարմիր, վարդագույն, կանաչ՝ նայած ֆոտոնյութի գունագզայնությանը) էմուլսապատ կողմով ամուր հպվում է հետքին և առարկայի հակառակ կողմից լուսավորվում: Անթափանց առարկաների վրա մնացած գունավորված հետքերը լուսանկարվում են ռեֆլեքսային եղանակով: Մատնահետքերը սովորաբար լուսանկարվում են կոնտրաստային ֆոտոնյութերի վրա: Լուսանկարելիս (հատկապես չգունավորված քրոմաճարպային հետքերը) կարևոր է ճիշտ լուսավորության ընտրությունը: Կարելի է օգտագործել ցանկացած լուսավորիչ: Անգույն հետքեր լուսանկարելիս նախընտրելի են ՕԻ-7, ՕԻ-19 և նման տիպի լուսավորիչները, որոնք կարող են առաջացնել ճառագայթային նեղ փունջ: Երբեմն անգույն մատնահետքերի պատկերը ստացվում է հետք ընդու-

նած օբյեկտի և հետքի լուսային ճառագայթների անդրադարձման տարբերության շնորհիվ: Առարկայի ողորկ մակերեսը լույսը անդրադարձնում է հայելային ձևով, իսկ հետքը՝ դիֆուզիոն (ցրված):

Լուսանկարելիս առարկան լուսավորվում է ուղղահայաց (ռեֆլեկտորային) լուսավորությամբ և ապա նկարվում (լուսավորման այս մեթոդը կիրառվում է նաև ողորկ մակերեսների վրա քրտնաճարպային հետքեր որոնելիս):

Մատների անգույն հետքերը լուսանկարելու համար նպատակահարմար է սենյակը մթնեցնել և օգտագործել լույսի ճառագայթի մեղ փունջ: Առարկայի մակերևույթից առաջացող փայլից խուսափելու համար նպատակահարմար է այն ծածկել սև բրթով, հետքի համար բողբոջով համապատասխան չափի կտրվածք:

Լուսային ճառագայթը հետքի վրա է ուղղվում անկյան տակ: Անկյան մեծությունը փոփոխվում է այնքան ժամանակ, մինչև պայալիյար գծերը ավելի հստակ երևան: Եթե հետքը գտնվում է թափանցիկ ապակուկան ապակյա ամանի վրա, նպատակահամար է ապակու հակառակ կողմից տեղավորել սև թուղթ կամ գործվածք, ներկել, ամանի մեջ լցնել սև տուշ, թանաք:

Թափանցիկ առարկաների վրայից հետքերը լուսանկարվում են թափանցող լույսի օգնությամբ: Եթե անգույն հետքի լուսանկարումը արդյունք չի տալիս, ապա պետք է այն լուսանկարել գունավորելուց հետո:

Անգույն մատնահետքերի լուսանկարման համար գոյություն ունեն ավելի բարդ եղանակներ, որոնք իրականացվում են լաբորատոր պայմաններում, համապատասխան սարքավորումների կիրառմամբ (ՓՄՄ-2, ՄՔԿ և այլն):

Լուսանկարում մատնահետքերը պետք է միշտ ստանալ ուղղակի պատկերով (ոչ հայելային) և սպիտակ ֆոնի վրա սև գծանախշի ձևով: Այս ձևով միայն այն նպաստավոր կլինի համեմատական հետազոտման համար:

Մարդու ոտքի, կոշիկի, կենդանիների և տրանսպորտային միջոցների հետքերի լուսանկարում

Այս օբյեկտների լուսանկարման համար, որպես հիմնական կանոն, ընդունված է ըստ հնարավորին խոշոր պլանով, մասշտաբային նկարահանումը: Նշված օբյեկտների թողած ծավալային կամ մակերեսային հետքերը լուսանկարելիս նախ պետք է ուսումնասիրել բոլոր հետքերը և

ընտրել նրանք, որոնց վրա ավելի ցայտուն են երևում հետք առաջացնող օբյեկտի հատկանիշները: Եթե հետքերը շատ են, ցանկալի է լուսանկարել դրանցից մի քանիսը: Իսկ եթե նրանց վրա պարզորոշ երևում են առանձնահատկություններ, ցանկալի է հետքի ընդհանուր տեսքից բացի խոշոր պլանով (երկարացնող ազույցների օգտագործմամբ) լուսանկարել նաև այդ առանձնահատկությունները:

Դեպքի տեղում լուսանկարման օբյեկտներ կարող են լինել մարդու կամ կենդանու ոտքերի հետքերի ուղյակը, տրանսպորտային միջոցի հետքերը, ոտքի առանձին հետքը, տրանսպորտային միջոցի շարժական մասերի հետքերը և այլն:

Հետքուղին լուսանկարվում է կամ գծային համայնապատկերի եղանակով կամ խորության մասշտաբով: Խորության մասշաբը, այս դեպքում նպատակահարմար է տեղադրել աջ և ձախ ոտքերի հետքերի միջև, իսկ ֆոտոապարատի օբյեկտիվը պետք է ուղղել քայլքի ուղղությամբ: Եթե հետքի ուղյակին ուղեկցում են այլ հետքեր, դրանք ևս պետք է ընդգրկվեն կադրի մեջ (օրինակ՝ ձեռնափայտի, սահնակի հետքեր և այլն):

Ծավալային հետքերը լուսանկարելիս պետք է նկատի ունենալ, որ նրանք հիմնականում լինում են բաց տեղանքում և ցերեկային ցրված լույսը հնարավորություն չի տալիս, ֆիքսել հետքի վրա եղած ռելիեֆային առանձնահատկությունները: Դրա համար էլ հաճախ հարկ է լինում օգտագործել լույսի արհեստական աղբյուրներ, անդրադարձնող էկրաններ (օրինակ՝ սպիտակ թուղթ), կամ մի կողմից փակել լույսի ճանապարհը դեպի նկարահանվող օբյեկտ:

Առանձին հետքերը լուսանկարվում են դետալային եղանակով: Դետալային լուսանկարները կատարվում են միլիմետրանոց բաժանումներ ունեցող մասշտաբով, որը տեղադրվում է հետքի կողքին: Եթե հետքը ծավալային է, ապա հետքի կողքին փորվածք է արվում՝ հետքի հատակին հավասար հարթությամբ, որտեղ տեղադրվում է մասշտաբը: Հետքը զգուշությամբ մաքրվում է ավելորդ նյութերից, ջրից: Ապարատը տեղադրվում է այնպես, որ հետքի կենտրոնը համապատասխանի կադրի կենտրոնին, իսկ ֆոտոժապավենը զուգահեռ լինի հետքի հարթությանը: Եթե լուսավորությունը թույլ է, և պահաժամը երկարատև է լինելու, նպատակահարմար է ապարատը ամրացնել շտատիվին:

Ծավալային հետքերը ավելի էֆեկտիվ են ստացվում, եթե լուսանկարվում են թեք ընկնող լույսի տակ: Ցանկալի է լուսանկարել մի քանի անգամ, փոփոխելով լույսի ուղղությունը: Դա կնպաստի լուսանկարում

ստանալու բոլոր առանձնահատկությունները՝ կապված լույսից առաջացած ստվերային արդյունքի հետ:

Նպատակահարմար է լուսանկարել նաև ուղղահայաց (կամ ցրված) լուսավորությամբ, որը հնարավորություն կտա ավելի հստակորեն ցույց տալու հետքի ձևը:

Մարդու ոտքերի մակերեսային հետքերը, որոնք հիմնականում հանդիպում են շինություններում, գունավոր են (արյունոտ, ներկոտ, կեղտոտված) կամ գունվում են գունավոր մակերեսների վրա (կամ երկուսն էլ), լուսանկարվում են համապատասխան լուսագտիչով: Բոքիկ ոտքերի հետքերը լուսանկարվում են նույն սկզբունքով, ինչ մատնահետքերը: Դրանք մշակվում են նաև մագնիսական վրձիմի օգնությամբ, լուսանկարվում են և վերցվում մատնադրոշմային թաղանթի կամ մշակված ֆոտոթղթի վրա:

Չյան վրա մնացած հետքերը լուսանկարվում են դեղին կամ մարնջագույն լուսագտիչով: Խորհուրդ է տրվում նաև նախքան լուսանկարելը հետքի վրա փոշեցանիչի միջոցով փչել մուգ գույն ունեցող փոշի:

Ջարդող գործիքների հետքերի լուսանկարում

Դեպքի տեղում նախ, հանգուցային եղանակով լուսանկարվում են այն օբյեկտները, որոնք պարունակում են ջարդող գործիքների հետքեր: Այնուհետև լուսանկարվում են ինչպես առանձին հետքերը, այնպես էլ դրանց փոխադարձ դասավորվածությունը: Հետքեր պարունակող տարածության մեծությունից կախված՝ կատարվում է կամ մասշտաբային եղանակով սովորական լուսանկար կամ համայնապատկերային լուսանկար՝ մասշտաբով: Լուսանկարելուց առաջ առանձին հետքերը համարակալվում են (սև մատիտով, կավիճով և այլն), որոնք լուսանկարելիս պետք է մտցվեն կադրի մեջ: Նման հետքերը լուսանկարելիս կիրառվում է ստվերային լուսավորություն: Լուսային ճառագայթների անկյունը որոշվում է՝ կախված հետքի և նրա վրա եղած ռելիեֆային առանձնահատկությունների խորությունից, այնպես, որ հետքի հատակին եղած մանր դետալները չընկնեն ստվերի մեջ, այլ պարզ երևան: Լավ արդյունք է տալիս, երբ օգտագործվում է երկու տիպի լուսավորություն, այսինքն՝ թույլ լույսով լուսավորվում է հետքի հատակը, մյուսով ստեղծվում է ստվերային լուսավորություն:

Եթե կոտրանքը արտահայտված է օբյեկտի (դռան, միջնապատի և այլն) երկու կողմից, ապա լուսանկարահանում պետք է կատարել երկու

կողմից, քանի որ կարող է հարց առաջանալ՝ պարզելու, թե որ կողմից է կոտրվել այն:

Շատ փոքր հետքերը լուսանկարվում են մանրադիտակային ցկարահանման կանոններով:

Առանձին առարկաների լուսանկարում

Առանձին առարկաների լուսանկարումը կատարվում է մասշտաբային ցկարահանման կանոններով: Դրանք մախ լուսանկարվում են հայտնաբերման տեղում՝ նրանց դիրքը և շրջապատող իրադրության հետ ունեցած կապը արտահայտելու նպատակով, որից հետո ցկարահանվում են դետալային մեթոդով: Եթե առարկան կոտրատված է, բաժանված մի քանի մասերի, ապա լուսանկարվում են տարբեր մասերը առանձին-առանձին, որից հետո լուսանկարվում են առանձին կտորները միմյանց միացնելուց հետո:

Լուսանկարելիս ցկարահանվող օբյեկտը պետք է տեղադրել այնպես, որ լուսանկարում արտահայտվեն նրա առանձնահատուկ նշանները (նրա վրա եղած վնասվածքները, քերծվածքները, պիտակը և այլն): Ցանկալի է օբյեկտը լուսանկարելուց հետո խոշոր պլանով լուսանկարել նաև նման առանձնահատկությունները:

Առանձին առարկաները լուսանկարելիս ամիրաժեշտ է հոգալ, որ ապահովվի օբյեկտի ծավալայնությունը, մակերեսի կառուցվածքի հստակությունը: Ծավալայնության ապահովումը հնարավոր կդառնա, եթե ճիշտ ընտրվի ցկարահանման ֆոնը և ճիշտ լուսավորվի ցկարահանվող առարկան:

Լուսավորումը պետք է կատարվի ընդհանուր, ցրված լույսով և թեք լույսով: Թեք ընկնող լուսացուցիչ լուսավորությունը կախված է առարկայի ձևից: Նման լուսավորությունը հնարավորություն է տալիս խուսափելու մեծ և խիտ ստվերներից, որոնք ծածկում, քողարկում են առարկայի առանձին մասերը:

Յուրաքանչյուր օբյեկտի համար ճշգրիտ լուսավորություն ստացվում է փորձնական ճանապարհով՝ կարգավորելով լույսի աղբյուրի հզորությունը, նրանց փոխադարձ դիրքը և ցկարահանվող օբյեկտից ունեցած հեռավորությունը: Նկարահանումը պետք է կատարել միասեռ ֆոնի վրա, որի գույնը (երանգը) պետք է կոնտրաստ կազմի ցկարահանվող օբյեկտի գույնի (երանգի) հետ:

Ողորկ, փայլուն առարկաներ լուսանկարելիս փայլքից խուսափելու համար օգտագործվում է բևեռացնող լուսազտիչ կամ կաթնապակիով

լամայ: Կարելի է նաև փայլող տեղերին բարակ շերտով քսել տեխնիկական վազելին:

Փաստաթղթերի լուսանկարում

Փաստաթղթերի լուսանկարման նպատակները բազմազան են. լուսանկարվում է դրանց ընդհանուր տեսքը՝ բովանդակությունը ամրապնդելու, արտաքին տեսքի և սկզբնական բովանդակության փոփոխությունները որոշելու, սկզբնական բովանդակությունը պարզելու համար և այլն:

Փաստաթղթի ընդհանուր տեսքը լուսանկարվում է վերարտադրական և մասշտաբային նկարահանման կանոններով: Փաստաթղթերը կարելի է լուսանկարել նաև (ստանալ ֆոտոպատճենը) կոնտակտային վերարտադրության եղանակով: Կոնտակտային եղանակով լուսանկարները ստացվում են նեգատիվի բնական մեծությամբ:

Փաստաթղթերի լուսանկարման եղանակների և նպատակների մասին մանրամասն խոսվելու է «Փաստաթղթերի տեխնիկակրիմինալիստական հետազոտում» գլխում:

§ 3. ԼՈՒՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՒՄԸ ԱՌԱՆՋԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԻՍ

Բացի տեղազնությունից՝ լուսանկարահանումը կիրառվում է և այլ քննչական գործողություններ, մասնավորապես քննչական փորձարարություն կատարելիս: ՀՀ քր. դատ. օր. 242 հոդվածում ուղղակիորեն նշված է, որ փորձարարություն կատարելիս «...Քննիչն իրավունք ունի կիրառել տեխնիկական միջոցներ»: Քննչական այս գործողության ժամանակ լուսանկարահանման անհրաժեշտություն առաջանում է այն դեպքերում, երբ լուսանկարը ավելի տեսանելի, մատչելի կարող է դարձնել փորձարարության ընթացքը և արդյունքները:

Լուսանկարահանումը իրականացվում է դեպքի տեղի լուսանկարման եղանակներով (կողմնորոշող, տեսածիրային, հանգուցային): Սկզբում լուսանկարվում է այն տեղը, որտեղ պետք է կատարվի փորձարարությունը (շենքը, որի պատին արված բացվածքից ներս են մտել հանցագործները և այլն), այնուհետև փորձարարության առանձին փուլերը, այդ թվում արդյունքը, պահը, երբ անձը դուրս է գալիս բացվածքից:

Տեղում ցուցմունքները սպուգելիս լուսանկարվում են տեղանքի հատվածները, առանձին օբյեկտներ որտեղ կամ որոնց նկատմամբ, ստուգվող ցուցմունքի համաձայն, տեղի են ունեցել որոշակի դեպքեր, մնացել են հետքեր և այլն: Օբյեկտները պետք է լուսանկարել խոշոր պլանով, որոշ դեպքերում՝ շրջապատող միջավայրի հետ՝ լուսանկարով կողմնորոշվելու համար: Խորհուրդ է տրվում շարժման ընթացքը լուսանկարել համայնապատկերի եղանակով կամ հատվածներով: Գրականության մեջ կարծիք կա այն մասին, որ նպատակահարմար չէ ցուցմունք տվողին և ընթերականերին պատկերել այս լուսանկարներում, քանի որ դրանով լուսանկարի հավաստիությունը չի ավելանում, այլ հակառակը, նրանք կարող են ծածկել լուսանկարվող օբյեկտի որոշ հատվածներ¹: Մեր կարծիքով, եթե որոշ կադրերում ցուցմունք տվողը (հատկապես) և ընթերակաները (մասնավորապես) պատկերվեն, լուսանկարները համը վիճակից ավելի խոսուն կդառնան, քանի որ քննչական այս գործողությունը տարբերվում է մյուսներից նրանով, որ արդյունքում ֆիքսվում են (ինչպես արձանագրությանը, այնպես էլ լուսանկարներով) ցուցմունք տվողի հավաստումները իր նախկին ասածների վերաբերյալ: Այստեղ կարող են նշանակություն ունենալ նաև նրա մատնացույց անելու պահի և որոշ այլ շարժումներ կատարելու պահի ֆիքսումը: Առավել նպատակահարմար է այն նաև տեսագրել:

Խուզարկություն կատարելիս լուսանկարահանում կիրառվում է գլխավորապես հայտնաբերված իրերը՝ իրեղեն ապացույցները (քաղաքացիական շրջանառությունից հանված արժեքները և այլն), նրանց գտնվելու կամ պահվելու տեղերը լուսանկարելու նպատակով: Իրերը պահելու տեղերը (այդ թվում գաղտնարանները) լուսանկարում են դեպքի տեղի նկարահանման եղանակներով՝ պահպանելով դրանց իրականացման համապատասխան կանոնները: Անհրաժեշտության դեպքում լուսանկարվում են նաև պահատեղերի առանձին մասերը: Հայտնաբերված իրերը լուսանկարում են՝ պահպանելով մասշտաբային նկարահանման կանոնները:

Ճանաչման ներկայացնելիս ևս հաճախ կիրառվում է լուսանկարահանում: Խորհուրդ է տրվում ճանաչման ներկայացված անձանց խմբին կամ բոլոր առարկաները լուսանկարել միասին: Նրանց պետք է լուսանկարել տեղում, այն տեսքով և կարգով, ինչ տեսքով ու կարգով ներկայացվել են ճանաչման: Այնուհետև, առանձին լուսանկարվում է ճանաչվող

¹ Տե՛ս Н. П. Яблоков, Криминалистика, учебник для вузов, М., 1971, էջ 91:

անձը, այն դեպքում, եթե նրան ճանաչել են: Անձը լուսանկարվում է ճանաչողական նկարահանման կանոններով:

Առարկաները լուսանկարելիս նախապես յուրաքանչյուրի դիմաց դրվում է թերթիկ կամ ստվարաթուղթ, որի վրա գրվում է հերթական համարը:

Լուսանկարահանման կիրառումը քննում կատարելիս ևս ունի կարևոր նշանակություն, քանի որ մարմնի վրա հայտնաբերված հետքերը, նշանները, դաջվածքները շատ դժվար է մանրամասն ու ճշգրիտ նկարագրել քննման արձանագրության մեջ: Լուսանկարահանումը կատարվում է ցայտերանգը ուժեղացնող համապատասխան լուսագոյիչով: Առավել նպատակահարմար է գունավոր լուսանկարչության կիրառումը: Լուսանկարումը պետք է կատարել՝ պահպանելով մասշտաբային նկարահանման կանոնները:

Քննումը պահանջում է մի շարք էթիկական նորմերի պահպանում: Չի կարելի լուսանկարել մերկացված մարմինը ամբողջությամբ: Կարելի է լուսանկարել միայն մարմնի առանձին մասերը՝ դետալային եղանակով:

§ 4. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ (ԴԱՏԱԿԱՆ) ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Կրիմինալիստիկական (դատական) լուսանկարչության մյուս տեսակը կրիմինալիստիկական (դատական) ~~հետազոտական~~ լուսանկարչությունն է, որը կիրառվում է կրիմինալիստիկական փորձաքննություններ կատարելիս, իրեղեն ապացույցներ և այլ օբյեկտներ ~~հետազոտելիս~~: Կրիմինալիստիկական (դատական) հետազոտական լուսանկարչության ընդգրկման սահմանները լայն են, կիրառումը՝ շատ արդյունավետ փորձագիտական հետազոտությունների նպատակների իրականացման գործում: ~~Գիտատեխնիկական առաջընթացի և տեղեկատվության առատության ներկա ժամանակաշրջանում~~ հնարավոր և նպատակահարմար չէ մեկ աշխատանքում շարադրել դրանք ամբողջապես: Սույն աշխատանքում կփորձենք շարադրել միայն կրիմինալիստիկական (դատական) հետազոտական լուսանկարչության այն հիմնական եղանակներն ու մեթոդները, որոնք ներկայումս առավել լայն կիրառում ունեն փորձագիտական պրակտիկայում:

Ցայտերանգի (կոնտրաստի) փոփոխման լուսանկարչական մեթոդները

Կրիմինալիստիկական (դատական) հետազոտական լուսանկարչության կիրառման ընթացքում հաճախ անհրաժեշտություն է առաջանում կոնտրաստի¹ փոփոխության: Այդ անհրաժեշտությունը պայմանավորվում է նրանով, որ երբեմն փորձագիտական հետազոտման են ներկայացվում անտեսանելի կամ քիչ տեսանելի օբյեկտներ կամ նրանց առանձին մասեր, որոնց այլ կերպ կարելի է անվանել նվազ կոնտրաստային (օրինակ՝ մատների հազիվ նշմարելի քրտնաճարպային դրոշմներ, այրված փաստաթղթերի վրայի տեքստեր, ջնջված, կերագծված գրառումներ, խումացած, գունաթափված տեքստեր և այլն):

Նվազ կոնտրաստայնության օբյեկտների վերականգնման հարցերը հետաքրքրում են նաև այլ բնագավառի մասնագետների (կինոյի, հեռուստատեսության, պատմագիտության, կենսաբանության և այլն): Փաստաթղթերի կրիմինալիստիկական հետազոտման մեթոդիկան շատ դեպքերում հիմնվում է գիտական լուսանկարչության նվաճումների օգտագործման վրա:

Կոնտրաստը ուժեղացնելու առաջին և կարևոր պայմանը լուսանկարելիս կոնտրաստային ֆոտոնյութ օգտագործելն է: Որոշ դեպքերում այդքանը բավական է, որպեսզի վատ տեսանելի դետալները սովորական տեսողության համար ընկալվող վիճակի բերվեն: Մնացած, այսպես կոչված, բարդ դեպքերում այս ճանապարհով ստացված լուսանկարները առաջին քայլն են համարվում կոնտրաստը ուժեղացնելու մյուս հնարքների կիրառման համար:

Լուսանկարչական եղանակով կոնտրաստը ուժեղացնելու ամենից արդյունավետ եղանակը համարվում է *կոնտրաստիպը*: Նեգատիվը կոնտրաստիպի ենթարկելիս, որպես կանոն, կոնտակտային եղանակով պատրաստվում է դիապոզիտիվ: Ստացված դիապոզիտիվից նույնպես կոնտակտային եղանակով տպվում է նեգատիվ և այսպես շարունակ, մինչև ստացվի անհրաժեշտ աստիճանի կոնտրաստ՝ հայտնաբերվող դետալների և պատկերի ֆոնի միջև:

Կոնտրաստների ուժեղացման մեթոդներ վաղուց են երաշխավորվել դատական լուսանկարչության նպատակների համար՝ որպես ինքնուրույն մեթոդ, մշակվել են կոնտրաստները ուժեղացնելու հատուկ, առանձնապես հզոր մեթոդներ, որոնք սովորական լուսանկարչության և կինեմա-

¹ Կոնտրաստը (ցայտերանգը) լույսի և ստվերի հակադրությունն է: Կա նաև գունային կոնտրաստ:

տողրաֆիայի մեջ կիրառում չեն գտել: Կրիմինալիստիկական (դատական) լուսանկարչության մեջ կոնտրաստների ուժեղացման, դասական մեթոդներից է Բուրիմսկու ժապավենների համատեղման մեթոդը, որը հետագայում որոշ փոփոխության ենթարկվեց Ա. Ա. Էյսմանի կողմից:

Գունատարբերիչ (գունագատիչ) լուսանկարչություն

Կրիմինալիստիկական հետազոտություններ իրականացնելիս լայնորեն կիրառվում են գունատարբերման հնարանքներ: Դրանք կիրառվում են անտեսանելի գրառումներ, հետքեր հայտնաբերելու, ինչպես նաև գրավոր տեքստերում շտրիխների նյութի անհամասեռությունը պարզելու նպատակով: «Գունագատում» (цветоделение, цветоразличение) տերմինը օգտագործվել է Ե. Ֆ. Բուրիմսկու կողմից՝ անտեսանելի հայտնաբերելու լուսանկարչական հատուկ հնարքները ցույց տալու նպատակով:

Առաջինը նա նշում էր կոնտրաստի ուժեղացումը նեգատիվային շերտերի համատեղմամբ՝ անկախ նրանից, նկարահանման օբյեկտները գունավորված են, թե՞ ոչ, երկրորդը՝ նկարահանումը լուսազտիչներով՝ գույների մեջ եղած տարբերությունը հայտնաբերելու համար:

Փորձագիտական պրակտիկայում գունատարբերումը իրականացվում է երեք եղանակներով.

1. Կոնտրաստվող օբյեկտի անմիջական դիտարկումները գտված լուսում (օրինակ՝ լուսազտիչի միջոցով),

2. Կատուկ ընտրված ֆոտոժապավենի վրա լուսանկարում, նույնպես գտված լույսով,

3. Էլեկտրոնային օպտիկական մեթոդներով:

Գունատարբերիչ լուսանկարահանման էությունը լավ ըմբռնելու համար անհրաժեշտ է որոշ ծանոթություն լուսազտիչների հետ: Լուսազտիչը որևէ նյութի հարթ շերտն է, որը կլանում է՝ սպեկտրի այս կամ այն մասը (այդ թվում՝ անտեսանելի): Դրանք սովորաբար կիրառվում են այն դեպքերում, երբ պահանջվում է փոփոխել լույսի սպեկտրալ կազմությունը: Օրինակ, սպիտակ լույսի դիմաց դրված կարմիր ապակին կկլանի մանուշակագույն, կապույտ և կանաչ ճառագայթները և առատորեն բաց կթողնի կարմիրը: Գոյություն ունեն պինդ, հեղուկ և գազակերպ զտիչներ: Պրակտիկայում ավելի մեծ կիրառում ունեն պինդ լուսազտիչները, որոնք պատրաստվում են կամ գունավոր ապակուց, կամ երկու ապակիների միջև սոսնձված գունավորված ժելատինե թաղանթից: Լուսազտիչներ կարող են պատրաստվել նաև գունավորված պլաստմասսայից: Ռ-Ռ-ում պատրաստված լուսազտիչները, որոնք կոչվում են *արտորքցիոն (կլանիչ)*,

գունավոր ապակիներ են, որոնք տարբերվում են ըստ տեսակների, անվանվում են ուսերեն այբուբենի երկու կամ երեք տառերով և համարներով: Առաջին, իսկ երբեմն էլ երկրորդ տառերը համարվում են գույնի անվանման սկզբնատառերը:

УФС-ультрафиолетовое стекло

ФС-фиолетовое стекло

СС-синее стекло

СЗС-сине-зеленое стекло

ЗС-зеленое стекло

ЖЗС-желто-зеленое стекло

ЖС-желтое стекло

ОС-оранжевое стекло

КС-красное стекло

ИКС-инфракрасное стекло

ПС-пурпурное стекло

НС-нейтральное стекло

ТС-темное стекло

БС-белое стекло

Լուսային էներգիայի հոսքի ֆիզիկական հատկությունների (այդ հոսքը առաջացնող ճառագայթային էներգիայի ալիքների երկարության և այս կամ այն ալիքային երկարության ճառագայթային էներգիայի հարաբերակցության) և գույնը զգալու միջև, որը մարդու մեջ առաջանում է նրա տեսողական ապարատի վրա լուսային էներգիայի այդ հոսքի ազդեցությունից, գոյություն ունի բարդ կախվածություն, որում կարևոր դեր ունեն գույնի տեսողական ընկալման մեխանիզմի առանձնահատկությունները: Դրա համար էլ կարևոր նշանակություն ունի գույնի տարբերումը ֆիզիկական և ֆիզիոլոգիական իմաստով: Գույնը ֆիզիկական առումով նշանակում է տարբեր ալիքային երկարության լուսային էներգիայի քանակի հարաբերությունը, որը ճառագայթվում է աղբյուրից, անդրադառնում է մակերեսից կամ թափանցում է թափանցիկ մարմնից, անկախ նրանից, թե ինչպիսի գունային զգացում է առաջացնում մարդու մեջ լույսի գունային բոլոր բաղադրամասերի ամբողջական ազդեցությունը:

Գույնը ֆիզիոլոգիական առումով նշանակում է գույնի որակական որոշակի զգացողությունը, անկախ նրանից՝ մաքուր սպեկտրալ ճառագայթների ինչ հարաբերությամբ է այն պայմանավորված:

Դա նշանակում է, որ գույնը գնահատելիս, եթե դա հնարավոր է, պետք է օգտվել սպեկտրոֆոտոմետրական սարքերից (օրինակ՝ սպեկտրոֆոտոմետր ՓՄ-1, ֆոտոմետր ՏՓ-4):

Գունատարբերման պարզ տեսակներից է տեսողականը, այսինքն՝ բույլ տեսանելի տեքստը գտված լույսում դիտելը: Այն հիմնականում իրականացվում է փորձագետների կողմից, հետազոտման նախնական փուլում: Այս մեթոդը կարող է կիրառվել նաև քննիչի կողմից, փաստաթղթերի քննչական զննության ժամանակ: Եթե փորձագետը կամ քննիչը կարողանան կարդալ, ասենք, վատ տեսանելի տեքստը, միևնույն է, նրանց հաջորդ խնդիրը տեսաձևի ֆիքսումն է: Դրա համար էլ պետք է դիմել լուսանկարման օգնությանը: Վերջինս բնութագրվում է ավելի լայն հնարավորություններով, այսինքն՝ այն հնարավորություն ունի ավելի էֆեկտիվ գոտու ընտրության, բարձր է նրա զգայնությունը:

Գունատարբերիչ լուսանկարահանման կիրառումը իրականացվում է այնպիսի պայմաններում, որ ապահովվի միայն էֆեկտիվ գոտու լույսի ազդեցությունը:

Գունատարբերիչ լուսանկարում կատարելիս պետք է նկատի ունենալ, որ հաջող արդյունք ստանալու հիմնական գրավականը հետևյալ երկու խնդիրների ճիշտ լուծումն է. նախ ընտրել այնպիսի սպեկտրալ կազմություն ունեցող լույս, որի առկայությամբ գույնի մեջ կառաջանան ցայտունության առավելագույն տարբերություններ: Այնուհետև պետք է ընտրել լուսավորման այնպիսի աղբյուրների, լուսազտիչների, ֆոտոմյուսթերի համակցություն, որոնք կապահովեն միայն էֆեկտիվ գոտու լույսի գործողությունը:

Գունատարբերման հաջողությունը մեծապես կախված է մաքուր սպեկտրալային, մոնոքրոմատիկ լույս ստանալու հնարավորությունից:

Մոնոքրոմատիկ լուսավորություն առանձնացնելու սպեկտրալ եղանակը իրականացվում է հատուկ սարքերի՝ մոնոքրոմատների օգնությամբ և ինտերֆերենցիոն լուսազտիչներով: Վերջիններս փոխադարձաբար ուժեղացնում են մեկ սպեկտրալ գոտու և կլանում մյուս գոտիների ճառագայթները:

Պետք է նշել, որ մոնոքրոմատորները և ինտերֆերենցիոն զտիչները կիրառվում են շատ նուրբ աշխատանքներ կատարելիս, լավագույն, հագեցված լաբորատորիաներում:

Դատափորձագիտական լաբորատորիաներում առավել շատ կիրառվում են սովորական արտրեցիոն (կլանման) զտիչները, որոնց մասին խոսվեց վերը:

Լուսազտիչը տեղավորվում է լույսի աղբյուրի և հետազոտվող օբյեկտի միջև կամ, որ ավելի նպատակահարմար է պատկերի որակի առումով, լույսի աղբյուրի դիմաց:

Լուսանկարահանում հատուկ լուսավորության պայմաններում

Հատուկ լուսավորություն ասելով կրիմինալիստիկայում ընդունված է հասկանալ թափանցող, անդրադարձող, ռեֆլեկտորային լուսավորությունը:

Թափանցող լուսավորությամբ կարող են հետազոտվել թափանցիկ կամ կիսաթափանց օբյեկտները: Օրինակ՝ կենսաբանական նյութեր, արյուն, բուսական և կենդանական հյուսվածքներ, ներկեր և այլն: Պատկերը այս դեպքում ստացվում է օբյեկտի տարբեր մասերի օպտիկական խտության տարբերության հաշվին:


Մանրադիտակային հետազոտման ժամանակ օբյեկտը թափանցող լույսով լուսավորելիս լույսի աղբյուրը պետք է մոտ տեղավորել մանրադիտակի կոնդենսորային համակարգին: Մանրադիտակի լուսավորման համակարգը կազմված է լույսի աղբյուրից, հայելուց և կոնդենսորից, որը լույսի փունջը հետազոտվող օբյեկտի միջով ուղղում է դեպի մանրադիտակի օբյեկտիվը:

Լուսավորող սարքի և կոնդենսորի միջև կարող են տեղավորվել (կախված հետազոտվող օբյեկտից և հետազոտման նպատակից) լույսը ցրող կաթնապակի, գունավոր գտիչներ և այլն:

Լույսի աղբյուրը տեղավորվում է այնպես, որ նրա ճառագայթները ուղղահայաց թափանցեն հետազոտվող օբյեկտը և հասնեն օբյեկտիվին: Այս երևույթը կոչվում է կենտրոնական լուսավորություն:

Միայն կենտրոնական լուսավորության պայմաններում օբյեկտների հետազոտումը արդյունավետ կլինի:

Գծագրում ցույց է տրված թափանցող լուսավորության նրբագծային պատկերը:



Հեղազոտվող օբյեկտ

Անդրադարձող լուսավորությամբ հետազոտում են բոլոր անթափանց առարկաները՝ արկ, պարկուճ, ջարդող գործիքներ, հրագեն, պինդ

մարմինների (փայտի, մետաղի և այլնի) վրա մնացած հետքեր, փաստաթղթեր և այլն: Այս դեպքում պատկերն ստացվում է օբյեկտից անդրադարձած լույսով:

Նկարահանման այս եղանակը իրականացվում է ստվերների օգնությամբ օբյեկտների արտաքին կազմության ռելիեֆը բացահայտելու և անգույն բծերի, հետքերի, չափիների և այլնի բացահայտման համար՝ կախված դրանց կողմից անգեն աչքի համար աննկատ լույսի անդրադարձման տարբերությունից:

Ստվերային (թեք ընկնող) լուսավորությամբ հետազոտություններ կատարելիս օբյեկտը լուսավորվում է այնպես, որ հետազոտվող դետալները առաջացնում են ստվերներ: Նման լուսավորությամբ առաջացած ստվերներն ընդգծում են դետալների ուրվագծերը, որը և հնարավորություն է տալիս բացահայտելու անգեն աչքի համար աննկատ դետալներ: Օրինակ՝ այս եղանակով հնարավոր է գրող գործիքի սեղմման հետքերով կարդալ որոշակի տեքստ, նույնիսկ ստացված լուսանկարի վրա արտահայտված շտրիխներով կատարել այդ գործիքի նույնացում:

Ստվերային լուսավորություն ստանալու համար ճառագայթների փունջը մի կողմից անկյան տակ ուղղվում է հետազոտվող օբյեկտի մակերեսին:


Ստվերային լուսավորությունը միշտ չէ, որ հասցնում է դրական արդյունքի: Որոշ պայմաններում ստվերները ծածկում են հետազոտվող օբյեկտի ռելիեֆի այս կամ այն դետալը, առաջացնում են այդ դետալների ձևի, չափի, տեղագրության աղավաղում: Դրա համար էլ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է ճիշտ ընտրել լուսավորության անկյունը:

Ստվերների չափը կախված է ռելիեֆից և լույսի աղբյուրի տեսակից ու դիրքից: Որքան բարձր ու խորն են ռելիեֆի դետալները, և որքան սուր է լույսի անկյունը, որով այն ընկնում է օբյեկտի հարթության վրա, այնքան երկար են ստվերները:

Ռելիեֆի առանձին դետալների հստակ պատկերը ստանալու համար պետք է ընտրել այնպիսի անկյուն, որում ռելիեֆի դետալների ստվերների երկարությունը միջին հաշվով փոքր լինի դետալների միջև եղած տարածությունից, բայց որը բավարար լինի ստանալու բոլոր դետալների ստվերները՝ անկախ նրանց ձևից:

Թեք ընկնող լույսի անկյունը կարգավորվում է՝ կախված երևակվող ռելիեֆի մեծությունից: Հիմնական սկզբունքն է, որքան մանր է ռելիեֆը, այնքան սուր պետք է լինի լուսավորման անկյունը:

Գծագրում ցույց է տրված թեք ընկնող լուսավորության գծապատկերը:



Հեղազոտվող օբյեկտ

Հաճախ անհրաժեշտություն է առաջանում տարբերակել անզեն աչքով միատեսակ թվացող դետալներ: Այդ նպատակի համար օգտագործվում է տարբեր դետալներից և օբյեկտի տարբեր մասերից լույսի անդրադարձման տարբերությունը:

Ֆոտոապարատի տեղադրման և լուսավորման որոշակի պայմաններում այդ երևույթը հստակորեն հնարավոր է ֆիքսել լուսանկարահանմամբ:

Պրակտիկայում հաճախ հանդիպում են դեպքեր, երբ օբյեկտի ռեփլեքը խանգարում է հայտնաբերելու անհրաժեշտ դետալները: Օրինակ՝ թղթի հյուսվածքի ցցված մանրաթելերը խանգարում են նրա վրա եղած թույլ տեսանելի տեքստերը կարդալուն: Այս դեպքում կիրառվում է *սևապակի* լուսավորություն:

Նման լուսավորություն ստանալու համար կիրառվում են օղակաձև լուսավորություն, կաթնապակի, անդրադարձնող հայելիներ և այլն: Մանրադիտակով աշխատելիս, անստվեր լուսավորություն ստանալու համար, օգտագործվում են հատուկ լուսավորիչներ (օպակ-իլյումինատորներ), որոնք ուղղահայաց լուսավորություն են տալիս մանրադիտակի փողակի միջոցով:

Ինչպես հայտնի է, լույսի հայելային անդրադարձումը ենթարկվում է հետևյալ կանոնին. լույսի անկման անկյունը հավասար է անդրադարձմանը, և դրանք՝ անկման և անդրադարձման ճառագայթները, ընկած են նույն հարթության վրա:

Հայտնի է նաև, որ հաճախ դիֆուզային (ոչ պարզորոշ) կամ ցրված անդրադարձումը տեղի է ունենում բոլոր ուղղություններով՝ անկախ նրանից, թե որտեղից է հարթության վրա ուղղվել լուսավորող ճառագայթը: Հայելային են անդրադարձնում հարթ մակերևույթները՝ ապակին, հղկված մետաղը, թաց առարկաները և այլն:

Դիֆուզային անդրադարձնող մակերեսները ունենում են անհարթություններ:

Եթե լույսի աղբյուրի և օբյեկտի դիրքը չփոխելով ապարատը տեղադրենք այնպես, որ ֆոնից օբյեկտիվ թափանցեն հայելային անդրադարձած ճառագայթներ, պոզիտիվի վրա ֆոնը կստացվի լուսավոր, իսկ դետալը՝ մուգ:

Նշված մեթոդը կիրառվում է մատների անգույն դրոշմներ, առարկաների վրա եղած անգույն բծեր, փաստաթղթերի վրա կերպածման, հավելագրման փաստի հայտնաբերման, մատիտի, պատճենման թղթի շտրիխների տարբերակման և նման դեպքերում:

Լուսանկարումը անտեսանելի ճառագայթներով

Էլեկտրամագնիսական ալիքների այն միակցությունը, որը լույս է անվանվում, ալիքների մի նեղ գոտի է, որն ազդում է անմիջապես մարդու աչքի վրա, նրա ցանցաթաղանթում առաջացնում սպեցիֆիկ գրգռ, որը և բերում է լույսի ընկալմանը: Դրա հետևանքով ալիքների երկարության ինտերվալը մարդու համար հատուկ դեր է խաղում: Աչքի լուսազգայնության սահմանները սուբյեկտիվ են, այսինքն՝ կախված են անհատի ֆիզիկական առանձնահատկություններից:

Այս հարցի պարզաբանումը պարզորոշ երևում է ստորև բերվող լուսային սպեկտրի գծապատկերից.

ռադիոալիքներ	ինֆրակարմիր ճառագայթներ	տեսանելի ճառագայթներ	ուլտրամանուշակագույն ճառագայթներ	ռենտգեն ճառագայթներ	զամաճառագայթներ
--------------	-------------------------	----------------------	----------------------------------	---------------------	-----------------

Ինֆրակարմիր և ուլտրամանուշակագույն ճառագայթներ հասկացությունը մտցվել է 19-րդ դարի սկզբին: Ինֆրակարմիր ալիքների առկայությունը հաստատվեց 1800 թվականին Հերշելի կողմից, որը դիտում էր արեգակի սպեկտրի կարմիր եզրից դուրս տեղավորված զգայուն ջերմաչափի տաքացումը: Հերշելը հայտնաբերեց նաև, որ այդ ճառագայթները ենթարկվում են նույն անդրադարձման և բեկման օրենքներին, ինչ և անտեսանելի լույսը:

1901 թվականին Ռիտտերը և միաժամանակ Վոլյաստոնը հայտնագործեցին, որ արևի սպեկտրում նրա մանուշակագույն ծայրից դուրս գոյություն ունեն անտեսանելի ճառագայթներ (ուլտրամանուշակագույն ճառագայթներ), որոնք քիմիապես ազդում են արծաթի քլորիդի վրա:

Լուսանկարչության հայտնագործումը և նրա հաջողությունները որոշիչ դեր խաղացին ուլտրամանուշակագույն ճառագայթների հետազո-

տությամբ գործում, որովհետև պարզվեց, որ լուսանկարչական ֆիթերը այդ ճառագայթների նկատմամբ չափազանց զգայուն է¹:

Մարդու աչքը օպտիկական սպեկտրի ճառագայթները ընկալում է 400-ից 750 մմ (միլիմիկրոն) ալիքային երկարության ինտերվալով²:

Ինֆրակարմիր, ուլտրամանուշակագույն, ռենտգեն ճառագայթները, ռադիոակտիվ իզոտոպների ալֆա, բետա և գամմա ճառագայթները անզեն աչքով չեն ընկալվում:

Շատ նյութեր (այդ թվում՝ հանքային և օրգանական), որոնք անզեն աչքով միատեսակ գույնով են երևում, ուլտրամանուշակագույն կամ ինֆրակարմիր ճառագայթներում զգալիորեն տարբերվում են անդրադարձման և քափանցելիության գործակցով: Անտեսանելի ճառագայթների նման հատկություններն օգտագործվում են կրիմինալիստիկական հետազոտություններ կատարելիս: Օրինակ՝ մանուշակագույն քանաքնները սպիտակ լույսով լուսավորելիս միջին հաշվով անդրադարձնում են իրենց վրա ընկած լույսի մոտ 25%-ը, այսինքն՝ մի փոքր պակաս, քան անդրադարձնում է սպիտակ թուղթը: Դրա համար էլ թղթի սպիտակ հենքի վրա այդպիսի շտրիխները լավ երևում են:

Սպեկտրի ինֆրակարմիր մասում դրանք դառնում են համարյա լրիվ քափանցիկ, այսինքն՝ և՛ շտրիխները, և՛ թուղթը միատեսակ անդրադարձնում են իրենց վրա ընկնող լույսի մոտ 80%-ը:

Այս հատկանիշը օգտագործվում է այն գրառումները երևակելու համար, որոնք կատարված են մատիտով կամ տուշով, բայց ծածկված են սինթետիկ ներկով պատրաստված քանաքով:

Լուսանկարումը ինֆրակարմիր ճառագայթներով

Ֆիզիկայից հայտնի է, որ տեսանելի ճառագայթները ճառագայթման սանդղակի մի փոքր մասն են կազմում:

Ինֆրակարմիր ճառագայթները էլեկտրամագնիսական տատանումների սանդղակի զգալի մասն են զբաղեցնում: Սակայն այն մասը, որն օգտագործվում է լուսանկարահանման համար, զբաղեցնում է միայն մոտիկ ինֆրակարմիր գոտին, որն անմիջականորեն հարում է սպեկտրի տեսանելի մասին: Այդ գոտին 760-1350 մմ է, որը մոտավորապես երկու անգամ մեծ է տեսանելի սպեկտրից և անվանվում է սպեկտրի լուսանկարչական ինֆրակարմիր գոտի:

¹ Գ. Ս. Լանդսթերգ, Օպտիկա, Երևան, 1973, էջ 410:

² 1 մմ = 10³ մկ = 10⁶ նմ, 1 մկ (միկրոն) = 10³ նմ:

Ինֆրակարմիր ճառագայթներով լուսանկարահանման համար անհրաժեշտաբար պետք է ընտրել համապատասխան լույսի աղբյուր: Այդ նպատակի համար, բնականաբար, պետք է օգտագործվեն լույսի այնպիսի աղբյուրներ, որոնց սպեկտրը հարուստ է ինֆրակարմիր ճառագայթներով: Բրդես լույսի աղբյուր՝ գերակշռող դեպքերում օգտվում են սովորական էլեկտրական շիկացման լամպերից: Ինֆրակարմիր լուսանկարահանման համար լույսի ամենից կարևոր աղբյուրն արեգակն է: Օգտագործվում են նաև տարբեր հզորության վոլֆրամային լամպեր, ածխային շիկացման լամպեր:

Ինֆրակարմիր ճառագայթներով լուսանկարելիս կիրառվում են նաև լամպ-կայծեր, որոնք լույսի հզոր և հարմար աղբյուրներ են: Ինֆրակարմիր ճառագայթման հարուստ աղբյուրներ են նաև ածխային աղեղները, որոնք լինում են հասարակ և բարձր լարվածության: Ինֆրակարմիր լուսանկարահանման համար լույսի աղբյուրի ընտրության հարցը զգալիորեն հեշտանում է նրանով, որ տեսանելի ճառագայթներով սովորական լուսանկարահանման համար կիրառվող լույսի աղբյուրների մեծ մասը լրիվ պիտանի են ինֆրակարմիր ճառագայթներով լուսանկարելիս: Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ շիկացման լամպերի անոթների ապակին և ընդհանրապես բոլոր լամպերի ապակիները թափանցում են ինֆրակարմիր ճառագայթները՝ կլանելով միայն հեռավոր ինֆրակարմիր գոտու ճառագայթները, որոնք ընկած են բոլոր տեսակի ֆոտոնյութերի գունազգայնության սահմաններից շատ հեռու:

Մի երկու խոսք ֆոտոնյութերի մասին: Հայտնի է, որ լուսանկարչական արծաթբրոմային լուսազգա շերտերը (էմուլսիան) զգայուն են կապույտ և մանուշակագույն ճառագայթների նկատմամբ, զգայուն չեն դեղին, կանաչ և կարմիր գույների նկատմամբ:

Երբ լուսազգա շերտին (էմուլսիային) որոշ ներկանյութեր են ավելացվում, այն զգայուն է դառնում նաև այլ ճառագայթների նկատմամբ: Այս գործընթացը կոչվում է օպտիկական սենսիբիլացում, իսկ իրենք՝ ներկերը, օպտիկական սենսիբիլիզատորներ: Լուսանկարչական այն նյութերը, որոնք այս եղանակով զգայուն են դարձել սպեկտրի դեղնականաչ գոտու նկատմամբ, կոչվում են օրթոքրոմատիկ, սպեկտրի կարմիր գոտու նկատմամբ զգայունները՝ պանքրոմատիկ, իսկ ինֆրակարմիր գոտու նկատմամբ զգայունները՝ ինֆրաքրոմատիկ:

Փորձագիտական պրակտիկայում օգտագործվում են առավել լուսազգայուն ֆոտոնյութեր, որոնք զգայուն են դարձվել սպեկտրի մոտիկ ինֆրակարմիր գոտուն: Այդ ֆոտոնյութերից են ռուսական արտադրության ինֆրաքրոմատիկ թիթեղները, որոնք թողարկվում են գիտական

նպատակների համար՝ «Ինֆրա 720», «Ինֆրա 740», «Ինֆրա 760», «Ինֆրա 840» և այլն:

Քանի որ ինֆրակարմիր ճառագայթների համար սենսիբիլացման ենթարկված ֆոտոնյութերը զգայուն են նաև տեսանելի ճառագայթների նկատմամբ, անհրաժեշտություն է առաջանում կիրառել լուսազտիչներ:

Ինֆրակարմիր ճառագայթներում ճշգրիտ պատկեր ստանալու համար լուսանկարումը բոլոր դեպքերում կատարվում է լուսազտիչով, որը կլանում է կապտամանուշակագույն ճառագայթները: Այդ նպատակի համար օգտվում են քիթեդե, ժելատինե կամ ապակյա զտիչներից: Պրակտիկայում կիրառվում են ИКС-1, ИКС-2, ИКС-3 զտիչներ, որոնք մտնում են գունավոր ապակիների հավաքածուի մեջ: Կարելի է օգտագործել նաև կարմիր զտիչներ (КС-18, КС-19), որոնք մասնակիորեն թափանցում են նաև կարմիր ճառագայթներ, սակայն նրանց ազդեցությունը այս դեպքում չնչին է, քանի որ ինֆրաքրոմատիկ նյութերի վրա նրանց ազդեցությունը նվազեցված է:

Կրիմինալիստիկական հետազոտություններում 20-րդ դարի վերջերից սկսվեց կիրառվել ինֆրակարմիր ճառագայթներով հետազոտության ևս մեկ մեթոդ, որն ստացավ էվապորոգրաֆիա անվանումը:

Էվապորոգրաֆիան համարվում է մեթոդ, ըստ որի՝ պատկերը ստացվում է սպեկտրի հեռավոր ինֆրակարմիր ճառագայթներում (մինչև 10000 մմկ), որը հնարավորություն է տալիս հայտնաբերել օբյեկտների ջերմաստիճանի տարբերությունը մեկ-երկու աստիճանով: Նրա օգնությամբ կարելի է հետազոտել օբյեկտների ներքին կառուցվածքը¹:

* * *

Ինֆրակարմիր ճառագայթներով լուսանկարելու միջոցով կատարվող հետազոտությունների հնարավորությունները պարզ կդառնան, եթե նկատի առնենք այդ ճառագայթների նաև հետևյալ հատկությունները. Ինֆրակարմիր ճառագայթների համար տարբեր աստիճաններով թափանցելի են բնական ծագում ունեցող ներկիչները, բարակ թղթի համարյա բոլոր տեսակները (բացառությամբ ֆոտոնյութերի, փաթեթավորման համար օգտագործվող սև թղթերի և գունավոր թղթերի որոշ տեսակների), ջրում լուծվող օրգանական սինթետիկ ներկերից (մեթիլենային կապույտ, հիմնական մանուշակագույն և այլն) պատրաստված քանաքները, գունավոր պատճենահիան թղթերը և գրամեքենաների ժապավենների

¹ Տե՛ս Постика И. В., Научные основы и практика применения новых фотографических методов исследования вещественных доказательств в советской криминалистической экспертизе, Одесса, 1970, էջ 11:

դրոշմները, արյունը, անհիլնային ներկերը և այլն: Այդ ճառագայթները չեն թափանցում, կլանում են մուրը (մրուրը) և այն ներկանյութերը, որոնց բաղադրության մեջ կա մուր (օրինակ՝ սև տուշ, տպագրական ներկ, պատճենահան սև թուղթ և այլն), գրաֆիտե մատիտով կատարված շտրիխները, այն ներկերը, որոնց բաղադրության մեջ կան երկաթի կամ պղնձի աղեր և այլն:

Ինֆրակարմիր ճառագայթների այս հատկությունները նկատի առնելով՝ մշակված են մի շարք հնարքներ փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստական հետազոտությունները արդյունավետ իրականացնելու համար:

Դրանցից են՝

ա) ինֆրակարմիր ճառագայթներում լուսանկարելը՝ այնպիսի ներկիչներով կատարված գրառումներ երևակելու համար, որոնք կլանում են ինֆրակարմիր ճառագայթները և ծածկված են ինֆրակարմիր ճառագայթների համար թափանցիկ ներկերով:

բ) Գրելու նյութի տարբերակում կատարելը: Թղթի, թանաքի, մատիտների և գրելու այլ նյութերի համեմատական հետազոտման ժամանակ հետազոտությանը ինֆրակարմիր ճառագայթներում շատ արժեքավոր մեթոդ է, որը, սակայն, երբեք չի բացառում այլ մեթոդների կիրառման անհրաժեշտությունը:

գ) Քննված և դժվար կարդացվող տեքստեր կարդալը: Այս դեպքում ինֆրակարմիր ճառագայթների կիրառումը արդյունավետ է դառնում, եթե տեքստը կարդալուն խանգարում են այլ տեքստերի, դրոշմակների և կնիքների դրոշմների առկայությունը կամ թղթի գույնը: Նման հետազոտությունների հաջողության պայմանն այն է, որ դժվար կարդացվող տեքստի շտրիխները լավ կլանեն ինֆրակարմիր ճառագայթները, իսկ խանգարող գրառումները, դրոշմները և այլն, կատարված լինեն այնպիսի ներկիչներով, որոնք թափանցիկ են ինֆրակարմիր ճառագայթների համար, ասենք՝ տեքստը գրված է գրաֆիտե-պատճենահան մատիտով, իսկ հետո քերված է թաց մատով: Մատիտի բաղադրության մեջ մտնող ներկիչը լուծվում է ջրում և ամբողջ գրառումը վերածվում է մանուշակագույն բժի, որի հետևանքով տեքստը չի կարդացվում: Ինֆրակարմիր ճառագայթներում այդ տեքստը հեշտությամբ կարդացվում է շնորհիվ նրա, որ գրաֆիտ պարունակող շտրիխները անթափանց են ինֆրակարմիր ճառագայթների համար, իսկ անհիլնային մանուշակագույն ներկերը թափանցիկ են նույնիսկ սպեկտրի հեռավոր վարմերի գոտու ճառագայթների համար:

Պ) Մոսնձված տեքստերը հետազոտելն ու լուսանկարելը: Եթե տեքստը գրված է գրաֆիտե կամ գրաֆիտե-պատճենահաս-մատիտով, կատարված է սև պատճենահան քղթի կամ սև ժապավեն ունեցող գրամեքենայի միջոցով, սև տուշով, տպագրական ներկով կամ քանաքով, որոնք անթափանց են ինֆրակարմիր ճառագայթների համար և փակված են ծրարում, ապա դրանք հեշտությամբ կկարդացվեն ինֆրակարմիր ճառագայթներում հետազոտելիս, քանի որ, ինչպես նշեցինք, մեծ մասամբ գրելու քղթերը թափանցիկ են ինֆրակարմիր ճառագայթների համար:

Ե) Փաստաթղթերում հավելագրումներ և ուղղումներ հայտնաբերելը: Այս հարցի լուծումը իրականացվում է նյութի տարբերակման մեթոդներով: Այսինքն՝ պարզաբանվում է հիմնական տեքստերը կազմող քանաքների կամ մատիտների և այն քանաքների կամ մատիտների տարբերությունը, որոնցով կատարված են հավելագրումը կամ ուղղումը:

Ստորագրությունների տեխնիկական փոփոխությունների որոշ դեպքերի բացահայտումը: Այն դեպքերում, երբ ստորագրությունը կատարված է նախնական մշակմամբ (ստորագրության նախնական կատարումը մատիտով, պատճենահան քղթով, որը հետագայում կրկնազծվում է քանաքով), հետազոտությունը ինֆրակարմիր ճառագայթներում հնարավորություն է տալիս հայտնաբերելու մատիտի կամ պատճենահան քղթի հետքերը:

Ինֆրակարմիր լյումինեսցենցիայի պատկերի լուսանկարումը հնարավորություն է տալիս միևնույն լուսանկարում հստակորեն ստանալու և՛ նախնական մշակման, և՛ հետագա կրկնազծման շտրիխները:

Ինֆրակարմիր ճառագայթների՝ դրանցում կատարված լուսանկարահանումների օգնությամբ լուծվում են նաև բազմաթիվ այլ հարցեր, որոնց մասին մանրամասն խոսելը դուրս է սույն աշխատանքի նպատակներից (օրինակ՝ ածխացած փաստաթղթերի տեքստի վերականգնում, հատվող շտրիխների կատարման հաջորդականության պարզում, մոտիկ կրակոցի հատկանիշների հայտնաբերում և այլն):

Լուսանկարահանման տեսակներից է նաև լյումինեսցենցիայի պատկերի լուսանկարումը: Տարբեր նյութերի, մասնիկների «սառը» լուսարձակումը, որն առաջանում է լուսային կամ այլ (ռենտգենյան, կատոդային) ճառագայթների ազդեցությամբ, ընդունված է անվանել լյումինեսցենցիա:

Կախված նրանից թե ինչ ճառագայթներով է հարուցված՝ լյումինեսցենցիան կարող է լինել տեսանելի և անտեսանելի:

Անտեսանելի ուլտրամանուշակագույն ճառագայթներով հարուցված լյումինեսցենցիան երևում է սպեկտրի տեսանելի հատվածում: Եթե լյումինեսցենցիան հարուցված է երկնագույն լույսով, ապա այն կերևա ավելի երկար ալիք ունեցող ճառագայթների հատվածում՝ կանաչ, դեղին և կարմիր: Իսկ եթե հարուցվի երկնագույն-կանաչ լույսով, կերևա հեռավոր կարմիր և մոտիկ ինֆրակարմիր ճառագայթներում, այսինքն՝ կարմիր և ինֆրակարմիր լուսազտիչների միջոցով: Լյումինեսցենցիայի պատկերն ունենալու համար անհրաժեշտ է այն ֆիքսել, որը հնարավոր է միայն լուսանկարելու միջոցով: Երկնագույն և կապույտ թանաքներ պատրաստելու համար օգտագործվող մի շարք նյութեր տեսանելի սպեկտրում կլանման առավել հնարավորություններ են դրսևորում, իսկ կարմիր և ինֆրակարմիր մասերում լյումինեսցենցիա են առաջացնում: Նրանց այս հատկությունը ևս կիրառվում է փորձագիտական պրակտիկայում:

Ինֆրակարմիր լյումինեսցենցիայի հարուցումը, սովորաբար, իրականացվում է երկնագույն-կանաչ լույսով: Լուսավորման համար կիրառվում են շիկացման լամպեր՝ 300-500 վտ. հզորությամբ, իմպուլսային լամպեր, բարձր լարվածության ՇՅԸԼ տիպի լամպեր (քանի որ նրանց լույսը հարուստ է կանաչ ճառագայթներով և համարյա չի պարունակում ինֆրակարմիր):

Լույսի աղբյուրի դիմաց դրվում են լուսազտիչները՝ ապակյա ՇՅՇ գտիչներ (ՇՅՇ-8, ՇՅՇ-10) կամ հեղուկ գտիչներ, որոնք իրենցից ներկայացնում են թափանցիկ անոթներ՝ լցված պղնձարջասպի լուծույթով (20-25 մմ հաստության անոթի դեպքում՝ 100գ պղնձարջասպը մեկ լիտր ջրում):

Լույսը, անցնելով այդ գտիչների միջով, զրկվում է կարմիր և ինֆրակարմիր ճառագայթներից և լուսավորվող օբյեկտի լյումինեսցենցիա է առաջացնում սպեկտրի կարմիր և ինֆրակարմիր հատվածում:

Ֆոտոապարատի օբյեկտիվի առաջ դրվում է այնպիսի լուսազտիչ, որը կլանում է օբյեկտից անդրադարձած տեսանելի ճառագայթները և թափանցում լյումինեսցենցիայի ինֆրակարմիր լուսարձակումը:

Ինֆրակարմիր լյումինեսցենցիան լուսանկարելու համար օգտագործվում են KC-15, KC-17, KC-19 և IKC տիպի լուսազտիչներ: Փորձագիտական պրակտիկայում նպատակահարմար է համարվում կիրառել կարմիր KC գտիչները, քանի որ դրանցով ինֆրակարմիր IKC համեմատությամբ ավելի պարզ պատկեր է ստացվում և կրճատվում է պահածամը:

Լյումինեսցենցիայի պատկերը ֆիքսվում է «պանքրոմ», «իզոպանքրոմ», «պանինֆրա», «ինֆրաքրոմ» ֆոտոթիթեղների վրա:

Ինֆրակարմիր լյումինեսցենցիայի պատկերը կարելի է լուսանկարել մաս էլեկտրոնային օպտիկական փոխարկիչի օգնությամբ (ՅՕՈ):

Լուսանկարումը ուլտրամանուշակագույն ճառագայթներով

Սպեկտրի տեսանելի հատվածի ~~կարճալիք մանուշակագույն ճառագայթներին~~ են հարում ուլտրամանուշակագույն ճառագայթները: Կրիմի-նալիստիկական (դատական) լուսանկարչության մեջ ընդունված է լուսանկարահանում կատարել 400-200 մմկ ալիքային երկարություն ունեցող ուլտրամանուշակագույն ճառագայթներում: Դա հիմնավորվում է նրանով, որ ավելի կարճ ճառագայթները կլանվում են կվարցի և ֆլյուորիտի կողմից, որոնցից հիմնականում պատրաստվում է լուսանկարչական օպտիկան: Բացի այդ, ֆոտոնյութերը 200 մմկ.-ից պակաս երկարության ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ զգայուն չեն:

Սպեկտրի ուլտրամանուշակագույն հատվածը, որը կիրառվում է կրիմի-նալիստիկայում, ընդունված է բաժանել երեք մասի.

ա) երկարալիք ուլտրամանուշակագույն ճառագայթներ՝ 400-320 մմկ,

բ) միջինալիք ուլտրամանուշակագույն ճառագայթներ 320-275 մմկ,

գ) կարճալիք ուլտրամանուշակագույն ճառագայթներ:

Առաջին խմբի մեջ մտնող ճառագայթները թափանցում են համարյա բոլոր տեսակի ապակիներից: Դրա համար էլ այդ ճառագայթներով լուսավորված օբյեկտները կարելի է լուսանկարել սովորական օբյեկտիվներով:

Երկրորդ խմբի մեջ մտնող ճառագայթների համար 6 մմ-ից ավելի հաստություն ունեցող ապակիները անթափանց են: Բայց նրանք լավ թափանցում են կվարցը և որոշ այլ թաղանթներ: Դրա համար էլ այդ ճառագայթներով լուսանկարելու համար օգտագործվում է կվարցե օպտիկա:

Երրորդ խմբի մեջ մտնող ճառագայթները թափանցում են միայն կվարցից:

Ուլտրամանուշակագույն ճառագայթներում կատարվող լուսանկարումը հնարավորություն է տալիս հայտնաբերել կերպզծման հատկանիշներ, պարզաբանել առաջին ինչպեքից միևնույնը թվացող նյութերի և մասնիկների տարբերությունները, որը և իր հերթին նպաստում է հավելագրումների և ուղղումների հայտնաբերմանը: Նման լուսանկարումներ

իրականացվում են նաև անտեսանելի ու վատ տեսանելի՝ ջնջված, կերպագծված, գունաթափված, բկացված գրառումների հայտնաբերման, ինչպես նաև գաղտնագրերի ընթերցման նպատակներով:

Ուլտրամանուշակագույն ճառագայթներով լուսանկարելիս պետք է նկատի ունենալ՝ դրական արդյունքը կապահովվի, եթե ճիշտ ընտրվի.

պլուսի աղբյուրը,

բ) լուսազտիչը,

գ) ծայտիկան:

Ուլտրամանուշակագույն ճառագայթների աղբյուր է արեգակը:

Բայց այն շատ անկայուն աղբյուր է (այն էլ երկար ալիքային), որի խտությունը և սպեկտրալ կազմությունը կախված են աշխարհագրական տեղադրությունից, տարվա ժամանակից, օրվա ժամանակից, օդի թափանցիկությունից և այլ պատճառներից: Դրա համար էլ փորձագիտական լաբորատորիաներում նախընտրում են օգտվել արհեստական աղբյուրներից, որոնցից են՝ շիկացման լամպերը, էլեկտրական աղեղները, ֆոտոկայծերը, տարբեր տեսակի սնդիկային լամպերը, լյումինեսցենտային լամպերը, գազալիցք լամպերը: Ավելի հաճախ, լաբորատոր պայմաններում կիրառվում են սնդիկի գոլորշիներով հագեցված ՈՐԿ տիպի բարձր լարվածության կվարցե լամպեր, որոնք հիմնականում նախատեսված են փոփոխական էլեկտրական հոսանքի համար (ՈՐԿ-2, ՈՐԿ-4, ՈՐԿ-7):

Կիրառվում են նաև ավելի բարձր լարվածության ՇՅԸՄ տիպի լամպեր: Հավասարաչափ, անստվեր լուսավորություն ստանալու համար կարող են օգտագործվել նաև «ԵՄՓ» կամ «ՅՄՓ» տիպի լյումինեսցենտային լամպեր:

Նշված և լույսի որոշ այլ աղբյուրներ, որոնք կիրառվում են ուլտրամանուշակագույն լուսանկարահանման համար, թեև հարուստ են ուլտրամանուշակագույն ճառագայթներով, բայց այս կամ այն չափով արձակում են նաև տեսանելի ճառագայթներ: Դրա համար էլ այս դեպքում ևս օգտագործվում են լուսազտիչներ կամ մոնոքրոմատորներ (միագույններ):

Կիրառվող լուսազտիչները բաժանվում են երեք խմբի.

1. Չտիչներ, որոնք թափանցելի են ուլտրամանուշակագույն ճառագայթների համար և կլանում են տեսանելի ճառագայթները:

2. Չտիչներ, որոնք թափանցելի են տեսանելի ճառագայթների համար և կլանում են ուլտրամանուշակագույն ճառագայթները:

3. Չտիչներ, որոնք նախատեսված են ուլտրամանուշակագույն սպեկտրի տարբեր մասերի տարբերակման համար:

Առաջին կետում նշված լուսազտիչներից ավելի հաճախ օգտագործում են ապակյա լուսազտիչները գունավոր ապակիների հավաքածուից՝ ՎՓՇ-1, ՎՓՇ-2, ՎՓՇ-3, ՎՓՇ-4, որոնք միմյանցից տարբերվում են ուլտրամանուշակագույն ճառագայթների թափանցելիության աստիճանով:

Ուլտրամանուշակագույն ճառագայթների կլանման համար օգտագործվում են անգույն ապակիներից պատրաստած ԵՇ տիպի զտիչներ, որոնք թափանցում են սպեկտրի տեսանելի մասը և չեն թափանցում ուլտրամանուշակագույնը: Ուլտրամանուշակագույն ճառագայթները կլանում են նաև ՋՇ, ՋՅՇ, ՕՇ լուսազտիչները:

Ուլտրամանուշակագույն ճառագայթների տարբերակման համար կիրառվում են արծաթյա զտիչներ (մետաղական արծաթով պատած կվարցե թիթեղ):

Ուլտրամանուշակագույն ճառագայթներով հետազոտություններ կատարելիս հաճախ անհրաժեշտություն է առաջանում օգտագործել այդ ճառագայթների նկատմամբ զգայուն տարբեր ընդունիչներ: Այդ անհրաժեշտությունը պայմանավորվում է նրանով, որ մարդկային աչքը քիչ զգայուն է ուլտրամանուշակագույն ճառագայթման նկատմամբ: Որպես այդպիսի ընդունիչներ օգտագործվում են լուսանկարչական թիթեղները¹:

Ուլտրամանուշակագույն ճառագայթներով լուսանկարելիս կարող են օգտագործվել ցանկացած ֆոտոնյութեր (դիապոզիտիվային, սենսիթիվացման ենթարկված, իզոորտո, ֆոտոտեխնիկական և այլն):


Հետազոտվող օբյեկտը լուսավորվում է այնպիսի լույսի աղբյուրով, որը հարուստ է ուլտրամանուշակագույն ճառագայթներով (սնդիկային-կվարցե լամպ և այլն): Լուսանկարելիս ֆոտոապարատի օբյեկտիվի դիմաց դրվում է լուսազտիչ, որը կլանում է տեսանելի ճառագայթները և թափանցում ուլտրամանուշակագույնը:

Փորձագիտական պրակտիկայում ուլտրամանուշակագույն ճառագայթների կիրառման մյուս եղանակը ուլտրամանուշակագույն ճառագայթներով հարուցված լյումինեսցենցիան է:

Լյումինեսցենցիայի պատկեր ստանալու համար անհրաժեշտ է ճիշտ ընտրել ուլտրամանուշակագույն լույսի աղբյուրը և լուսազտիչը, որը թափանցում է ուլտրամանուշակագույն և կլանում տեսանելի ճառագայթները:

¹ Օգտագործվում են նաև ֆլյուորեսցենտային էկրաններ, ֆոտոէլեմենտներ և այլն:

Հետազոտվող օբյեկտի վրա ուղղվում են գտված ուլտրամանուշակագույն ճառագայթները: Նպատակահարմար է օգտագործել առավել բարձր լարվածության սնդիկե-կվարցային լամպեր: Զանի որ ֆոտոնյութի լուսազգայուն շերտը լավ է ընդունում ուլտրամանուշակագույն ճառագայթները, դրանց մուտքը կանխելու և լուսանկարի վրա լյումինեսցենցիայի պատկեր ստանալու համար ֆոտոապարատի օբյեկտիվի առջև անհրաժեշտ է տեղադրել «ԵՇ» տիպի անգույն լուսազտիչներ կամ այնպիսի լուսազտիչներ, որոնք կկլանեն ուլտրամանուշակագայթները և կթափանցեն լյումինեսցենցիայի լույսը: Օրինակ՝ եթե լյումինեսցենցիան կապույտ կամ կանաչ գույն ունի, նպատակահարմար են ՊՇ-12, ՊՇ-17, ՅՇ-1 և նման լուսազտիչներ:




1. Օբյեկտ, 2. սնդիկային կվարցե լամպեր, 3. լուսազտիչ, 4. ֆոտոխցիկ:

Ուլտրամանուշակագույն ճառագայթներով հարուցված լյումինեսցենցիայի պատկերի լուսանկարման համար կարելի է օգտագործել ցանկացած ֆոտոխցիկ:

Ուլտրամանուշակագույն ճառագայթներով հարուցված լյումինեսցենցիան կարող է լինել տարբեր գույների կամ երանգների: Դա նշանակում է, որ ըստ գունազգայնության ֆոտոնյութերն ընտրվում են լյումինեսցենցիայի գույնին համապատասխան:

Փորձագիտական պրակտիկայում ուլտրամանուշակագույն ճառագայթներով հարուցված լյումինեսցենցիան կիրառվում է փաստաթղթերի հետազոտման համար (կերպագծված, գունաթափված տեքստերի բացահանյուման համար, միագույն շտրիխների տարբերակման համար և այլն), լվացված արյան, յուղի, քիմիական տարբեր նյութերի հետքերի հայտնաբերման համար, այրված փաստաթղթերի տեքստերի վերականգնման,

փաստաթղթերի վրա խոնավության հետքերի հայտնաբերման և այլ նպատակներով: Ուլտրամանուշակագույն ճառագայթներով հարուցված լյումինեսցենցիայի գծապատկերը տրված է ստորև:



1. ֆոտոխցիկ, 2. լուսազտիչ, որը կլանում է ուլտրամանուշակագույն ճառագայթները, 3. հետազոտվող օբյեկտ, 4. սնդիկային-կվարցե լամպ, 5. ուլտրամանուշակագույն լուսազտիչ:


Լուսանկարումը ռենտգենյան ճառագայթներով

1895 թվականին Ռենտգենը հայտնաբերեց, որ վակուումացված խողովակում էլեկտրական պարպումների ժամանակ առաքվում են այնպիսի ճառագայթներ, որոնք ընդունակ են անցնել տեսանելի լույսի համար անթափանց մարմինների միջով (սև թուղթ, ստվարաթուղթ, մետաղի բարակ շերտ և այլն): Այդ ճառագայթները, որոնց նա անվանեց X ճառագայթներ, բայց որոնք հետագայում կոչվեցին ռենտգենյան, նա հայտնաբերեց ֆլուորեսցենցող էկրանի ճառագայթում առաջացնելու նրանց հատկության շնորհիվ: Ռենտգենը շուտով գտավ նաև, որ այդ ճառագայթները ընդունակ են առաջացնելու լուսանկարչական ֆիթեղի սևացում:

Ռենտգենը հայտնաբերեց, որ այն տեղը, որտեղից դուրս են գալիս ճառագայթները, խողովակի այն մասն է, որը ռմբակոծվում է կատոդական մասնիկներով, և իրականացրեց խողովակի այն կազմությունը, որն

ամենամալատակահարմար ձևով ապահովում է ռենտգենյան ճառագայթների ստացումն ու օգտագործումը¹:

Ռենտգենյան ճառագայթման աղբյուրը ռենտգենյան խողովակն է, որը պատկերված է նկարում:



Ռենտգենյան խողովակ
Ա-անոդ, Կ-կատոդ, ԱԿ-ամտիկատոդ

Այդ խողովակները կազմված են ապակյա անոթից և երկու էլեկտրոդներից՝ անոդից և կատոդից, որոնք համապատասխանաբար միմյանց միացված են բարձր լարվածության աղբյուրի դրական և բացասական բևեռներին: Ապակյա անոթից օդը դուրս է մղված: Հոսանքը միացնելիս կատոդը շիկանում է և մեծ քանակությամբ էլեկտրոններ է անջատում, որոնք ձգտում են դեպի անոդը: Էլեկտրոնների արգելակման արդյունքում առաջանում են ռենտգենյան ճառագայթները:

Ռենտգենյան ճառագայթները տարածվում են ուղիղ գծով և հայելու կամ ուսպնյակի միջոցով կենտրոնացնել ենարավոր չէ: Դրանք օժտված են թափանցելու մեծ հատկությամբ, որը կախված է ալիքի երկարությունից: Որքան բարձր է հոսանքի լարվածությունը, այնքան կարճ է ալիքը, և այնքան մեծ է առաջացած ճառագայթման թափանցելու ունակությունը:

Միևնույն նյութի մեջ ռենտգենյան ճառագայթների կլանման աստիճանը տարբեր է և կախված է այդ ճառագայթներն ստանալու պայմաններից: Ուժեղ կլանվող ճառագայթներն ստացան փափուկ ճառագայթներ անվանումը, իսկ թույլ կլանվողները՝ կոշտ: Այլ կերպ ասած, նյութի միջով

¹ 42 Գ. Ս. Լանդսբերգ, Օպտիկա, Երևան, 1973, էջ 414:

ճառագայթների թափանցելու ընդունակությունը բնութագրում է նրանց կոշտության աստիճանը:

Ռենտգենյան ճառագայթների կլանման աստիճանը կախված է ճառագայթվող նյութի խտությունից: Որքան բարձր է նյութի ատոմական համարը, այնքան բարձր է կլանումը: Այն ուղղակի կախման մեջ է գտնվում նաև ճառագայթվող նյութի հաստությունից:

Ռենտգենյան ճառագայթները տարբեր մարմիններում լուսարձակելու հատկություն ունեն: Նրանք ունեն լուսանկարչական հատկություն, որը նման է սպեկտրի տեսանելի մասի և ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցությանը: Ռենտգենյան ճառագայթների նկատմամբ զգայուն են բոլոր տեսակի ֆոտոնյութերը, որի շնորհիվ հնարավոր է ստանալ մարմինները լուսարձակելիս ստացված սովերային պատկերի լուսանկարը:

Իրեդեն ապացույցների կրիմինալիստիկական հետազոտման ժամանակ ռենտգենյան ճառագայթները հնարավորություն են տալիս պարզաբանել անհայտ ծագում ունեցող օբյեկտների կառուցվածքը, փայտի և այլ առարկաների վրա հայտնաբերել մետաղի էլեմենտներ, պարզել զինամթերքի ներքին կառուցվածքը, հետազոտել հրազենը, պարզել փականների ներքին կառուցվածքը և նրանցում եղած վնասվածքները: Ռենտգենյան ճառագայթներով հնարավոր է բացահայտել մոտիկ կրակոցի հետքերը, արգելքի մասնիկները, որի միջով անցել է արկը: Փափուկ ռենտգենյան ճառագայթներով լուսանկարելով՝ հնարավորություն է ստեղծվում կարդալ թանաքով կամ մատիտով գրված և ծածկված տեքստերը, պարզել թղթի բաղադրությունը, տարբերակել արտաքինից միևնույն ներկանյութերը և այլն:

Ռենտգենյան ճառագայթներն օգտագործվում են նաև քննչական որոշ գործողությունների, տեղագնության, խուզարկության ժամանակ՝ գաղտնաբաններում առանձին առարկաներ հայտնաբերելու նպատակով: Այդ նպատակների համար կիրառվում են շարժական ռենտգենյան սարքեր:

Կրիմինալիստիկական հետազոտություններ կատարելիս օգտվում են նաև ռադիոակտիվ ճառագայթումից, որը բաժանվում է ալֆա, բետա և գամմա ճառագայթների:

Ալֆա ճառագայթներն ունեն թափանցող փոքր ունակություն. դրանք կլանվում են անգամ սովորական գրելու թղթի մեկ թերթով: Օդում անցնում են 7-8 սմ միայն:

Բետա ճառագայթները ալֆայի համեմատությամբ թափանցող մեծ ընդունակություն ունեն: Ռադիոակտիվ տարբեր իզոտոպներ տալիս են

բետա ճառագայթներ, որոնք աչքի են ընկնում թափանցող ընդունակությամբ: Այդ ընդունակությունը կախված է բետա մասնիկների էներգիայից և ավելանում է այդ էներգիայի ուժեղացմամբ:

Կրիմինալիստիկական պրակտիկայում կիրառվող բետա ճառագայթների լրիվ կլանման շերտը կազմում է 3-4 մմ՝ այլոմիներ կամ 9-10 մմ՝ ջուրը:

Ավելի մեծ թափանցող ընդունակություն ունեն գամմա ճառագայթները: Նրանք կարող են անցնել մի քանի տասնյակ սանտիմետրանոց մետաղական շերտի միջով:

Իրեղեն ապացույցների լուսավորման համար կրիմինալիստիկայում կիրառվում են գամմա ճառագայթները՝ գամմագրաֆիան, ինչպես նաև բետա ճառագայթները՝ բետագրաֆիան բարակ օբյեկտների լուսավորման համար:

Այս ճառագայթներով աշխատելիս անհրաժեշտ է պահպանել անվտանգության որոշ կանոններ, քանի որ դրանք վնասակար ազդեցություն են թողնում օրգանիզմի վրա:

Միկրոլուսանկարչություն

Մանր առարկաների, մասնիկների լուսանկարահանումը խոշոր մասշտաբով կոչվում է միկրոնկարահանում: Այն նկարահանման առանձին եղանակ է, քանի որ դրա կատարման համար պահանջվում են լուսանկարչական հատուկ սարքավորումներ և նկարահանման որոշակի մեթոդիկա:

Միկրոլուսանկարչությունից օգտվում են այնպիսի օբյեկտներ հետազոտելիս, որոնց արտաքին տեսքը կամ բաղադրությունը անգեմ աչքով չի ընկալվում:

Միկրոլուսանկարչությունը հետազոտման և ֆիքսման կարևորագույն միջոց է փաստաթղթերի, հրազենագիտական, հետքաբանական և մի շարք այլ փորձաքննությունների ժամանակ: Միկրոլուսանկարչությանն են վերաբերում մանրադիտակի միջոցով և մանրադիտակային օբյեկտիվներով կատարվող նկարահանումները: Միկրոլուսանկարչությունը հնարավորություն է տալիս հասնել օբյեկտի հարյուրավոր, հազարավոր անգամ մեծացման:

Մանրադիտակի միջոցով լուսանկարումը կատարվում է մանրադիտակային լուսանկարչական խցիկների օգնությամբ, որոնք ունեն կարճ ֆոկուսային հեռավորության օբյեկտիվներ:

Խցիկի օբյեկտիվը հանվում է, որի փոխարեն ամրացվում է մանրադիտակի փողակը: Մանրադիտակի միջոցով լուսանկարելիս կարող են օգտագործվել նաև մանրադիտակային լուսանկարչական գլխադիրներ, որոնք տեղադրվում են մանրադիտակի փողակի վրա:

Ռ-Ղ արտադրության մանրադիտակային ֆոտոգլխադիրները շատ հարմար են նման աշխատանքների համար, նրանք հագեցված են նկարահանման փակադակով, կաթնապակիով՝ պարզորոշության բերելու համար և դիտարկման համապատասխան սարքով: Դրանցից են՝ ՄՓՈ-1, ՄՓՈ-2, ՄՓՈ-3¹ և այլն:

Մանրադիտակային լուսանկարահանման պրակտիկայում լայն տարածում են ստացել նաև պարզ ֆոտոգլխադիրներ, որոնք օգտագործվում են փոքր ֆորմատի ֆոտոխցիկների համար՝ «ՖԷԴ», «Ջորկի», «Կիև», «Ջենիթ»: Դրանք հատկապես հարմար են հայելային խցիկների համար («Ջենիթ», «Սպուտնիկ» և այլն):

Որոշ մակնիշի մանրադիտակներ կառուցվածքային միասնություն են կազմում ֆոտոխցիկների հետ և ծառայում են ուղղակի միկրոլուսանկարչության նպատակին: Դրանցից են, օրինակ, վերոնշյալ արտադրության ՄՏԿ-1, ՄԻՄ-6, ՄԻՄ-7 և այլ ապարատները:

Այս սարքերում օբյեկտիվից օկուլյար (ակնապակի) գնացող լուսային ճառագայթների ճանապարհին դրված է անդրադարձնող պրիզմա, որը նպաստում է, որ լույսի ճառագայթները անցնեն օկուլյարի միջով, հայելուց անդրադարձնան կաթնապակու վրա և պարզորոշության բերելու հնարավորություն ստեղծեն:

Երկու օբյեկտների վրա եղած մանր հատկանիշների համեմատական հետազոտման համար պրակտիկայում, ինչպես վերը նշվեց, օգտվում են համեմատական մանրադիտակներից (օրինակ՝ ՄԻՏ-10, ՄՏ-51): Համեմատական հետազոտումը և լուսանկարումը կարելի է իրականացնել ինչպես անդրադարձող, այնպես էլ թափանցող լույսի պայմաններում:

Ստերեոմիկրոլուսանկարչության համար օգտագործվում են ստերեոսկոպիկ մանրադիտակներ՝ ՄԵՏ-1, ՄԵՏ-2, ՄԵՏ-9 և այլն, որոնց համար նախատեսված է ՄՓՈ-5 գլխադիրը:

Միկրոլուսանկարահանման ժամանակ օբյեկտները լուսավորելու համար օգտագործվում են լուսարձակներ՝ ՕՍ-7, ՕՍ-19 և այլն, որոնք առաջացնում են լույսի բարակ փունջ: Միկրոլուսանկարչությունը կարող է իրականացվել անդրադարձող և թափանցող լուսավորության պայման-

¹ ՄՓՈ-микروفотонасадка (մանրադիտակային ֆոտոգլխադիր):

ներում: Օբյեկտները ուղղահայաց լուսավորությամբ լուսանկարելու համար օգտագործվում է օպակ-իլյումինատոր կոչվող սարքը, որի պատյանում տեղադրված են լամպ, կոնդենսոր և պրիզմա կամ անդրադարձնող հայելի: Օպակ-իլյումինատորը ամրացվում է մանրադիտակի փողակի ներքևի եզրին, նրա վրա ամրացվում է օբյեկտիվը: Լամպի լույսը, անդրադարձնալով անդրադարձնող հայելուց կամ բեկվելով օպակ-իլյումինատորի պրիզմայի միջով, անցնում է մանրադիտակի օբյեկտիվի միջով և լուսավորում է լուսանկարահանվող օբյեկտը:

Մանրադիտակային լուսանկարահանում կատարելիս պատկերի մասշտաբը որոշվում է հետևյալ բանաձևով՝ $M = M_1 \cdot M_2 \frac{P}{25}$: M_1 -ը և

M_2 -ը մանրադիտակի օբյեկտիվը և օկուլյարը մեծացնելու աստիճաններն են (այդ մեծությունները նշվում են շրջանակների վրա բազմապատիկության նշանով՝ «X», P-ն օկուլյարի և խցիկի կաթնապակու միջև եղած տարածությունն է՝ սմ-ով:

Միկրոլուսանկարահանման ժամանակ կարելի է օգտագործել գունավոր, պաշտպանական և չեզոք գոյեր:

Գունավոր լուսագոյերը օգտագործվում են պատկերի կոնտրաստայնությունը մեծացնելու կամ փոքրացնելու համար: Պաշտպանական գոյերից ջերմապաշտպանը օգտագործվում է ջերմային ինֆրակարմիր ճառագայթները կլանելու համար, իսկ անգույնը՝ ուլտրամանուշակագույն ճառագայթները պահելու (կլանելու) համար:

Չեզոք լուսագոյերը նախատեսված են լույսի խտությունը կարգավորելու համար:

Միկրոլուսանկարում կատարվում է ոչ միայն տեսանելի, այլև ինֆրակարմիր և ուլտրամանուշակագույն ճառագայթներում: Վերջին դեպքում, հասկանալի է, պետք է օգտվել այն մանրադիտակներից, որոնք ունեն կվարցե օպտիկա (օրինակ՝ $MY\Phi$ տիպի մանրադիտակները):

§ 5. ԿԻՆՈՆԿԱՐԱՀԱՆՄԱՆ ԵՎ ՏԵՍԱԳՐՄԱՆ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԻՍ

Կինոսպարատը հայտնաբերվել է Ֆրանսիայում Լյումեր եղբայրների կողմից 1895 թվին, իսկ Ռուսաստանում՝ Ա. Սամարսկու և Ս. Ալիմովի կողմից 1896 թվին: Դժվար է ասել, թե մինչև ժամանակակից կինոխցիկների ստեղծումը որքա՞ն տարբեր կինոսարքեր են առաջարկվել, օրինակ՝ Ֆարադեյի անիվը և այլն:

Կինոն, իր ստեղծմանը համարյա զուգահեռ բաժանվեց երկու ուղղության. մեկը որպես արվեստի տեսակ, մյուսը՝ ծառայեց գիտությանը, որի մեջ տեղավորվեց նաև դատական (կրիմինալիստիկական) կինոնկարահանումը:

Արդեն 20-րդ դարի սկզբներին կինեմատոգրաֆի զարգացմանը զուգընթաց կրիմինալիստները կինոնկարահանումը սկսեցին կիրառել դատական գործերում: Այն ժամանակ էլ կինոժապավենները քրեական գործերով ներկայացվում էին որպես ապացույց, եթե նրանց վրա պատահաբար արտացոլված էին կարևոր տեղեկություններ:

Մեր օրերում, իսկ ավելի որոշակի՝ 20-րդ դարի երկրորդ կեսին քննչական պրակտիկայում կինոնկարահանման կիրառմանը խթան հանդիսացավ Վ. Մ. Նիկոլայչիկի, Լ. Ա. Սոյա-Սերկոյի, Ա. Մ. Տրոֆիմովի և Ի. Դ. Նայդիսի համահեղինակությամբ կատարված աշխատանքը¹:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որոշ հոդվածներ (218, 224) նախատեսում են առանձին քննչական գործողություններ կատարելիս լուսանկարումից բացի կիրառել նաև կինոնկարահանում:

Լուսանկարչությունը, նրա արդյունքները, ինչպես նշել ենք սույն գլխի սկզբում, համեմատած ֆիքսման մյուս բոլոր միջոցների հետ, իր էությանը օբյեկտիվ է: Եվ պատահական չէ, որ ոսպնյակների օպտիկական ամբողջությունը, որը կազմում է ֆոտոսպարատի «աչքը» ու փոխարինում է մարդկային աչքին, կոչվում է «օբյեկտիվ»: Այն միակ հնարավորությունն է, որ արտաքին աշխարհի նկարագիրը առաջացնում է ավտոմատիկորեն, առանց մարդու ստեղծագործական միջամատության: Այն մուսիացնում (ֆիքսում է) ժամանակը՝ պաշտպանելով նրան ինքնառչ-

¹ Մե՛ս նշված հեղինակների *Применение киносъёмки при расследовании*, М., 1967, Л. П. Ищенко, *Основы судебной фотографии, киносъёмки и видеозаписи*, Екатеринбург, 1992, И. Д. Найдис, *Судебная кинематография и видеозапись*, Харьков, 1986:

չացումից: Դրա հետ կապված կինոն կանգնում է մարդկության առջև՝ որպես լուսանկարչության օբյեկտիվության եզրափակում:

Այդ օբյեկտիվությունը, որն արտահայտվում է այս կամ այն գործողության դինամիկան, ընթացքը ֆիքսելու մեջ, մեծ նշանակություն է ստանում դատաքննչական պրակտիկայում: Այն հիմնականում իրականացվում է քննչական գործողությունների ընթացքը կամ քննչական գործողության հիմնական փուլերը ֆիքսելու նպատակով:

Կինոնկարահանումը կիրառվում է նաև դեպքի վայրի իրադրության բարդ, խճճված հանգույցները ֆիքսելու համար, որոնց հետագա ուսումնասիրումը հնարավորություն կտա գաղափար կազմել առանձին առարկաների, հետքերի փոխադարձ կապի մասին: Այն կիրառվում է այս կամ այն գործողությունը, շարժումը պատկերելու համար և այլն:

Կինոնկարահանում ամենից հաճախ կատարվում է քննչական փորձարարության, խուզարկության, տեղագնության, ճանաչման ներկայացնելու, տեղում ցուցումները ստուգելու ժամանակ:

Կրիմինալիստիկական (դատական) կինոնկարահանման տարբերությունը սովորականից նրա խնդիրների առանձնահատկությունն է: Բացի այդ, դատական կինոնկարահանումը վերոհիշյալ դեպքերում իրականացվում է ռեալ իրականությունը՝ առանց վաղօրոք մշակված սցենարի և առանց կոմբինացման մեթոդների ֆիքսելու համար: Սակայն մինչև կինոնկարահանումը սկսելը կազմվում է պլան, որտեղ նշվում են նկարահանման օբյեկտները, նպատակները, մասշտաբները, ի՞նչ կետերից պետք է կատարել նկարահանումները, դրանց կատարման հաջորդականությունը, լուսավորումը (քնական և լրացուցիչ՝ արհեստական), տեխնիկական հնարքները, յուրաքանչյուր կադրի տևողությունը: Ցանկալի է կինոնկարահանումը հանձնարարել մասնագետի, որը կարող է լինել ոստիկանության օպերատիվ-տեխնիկական բաժնի աշխատակիցը կամ հրավիրված կինոօպերատորը:

Կինոնկարահանումը պետք է կատարել տարբեր մասշտաբներով, որի ընկալումը հեշտացնելու նպատակով պետք է մի մասշտաբից մյուսին անցնելը կատարել սահուն շարժումով: Սահուն անցումը իրականացվում է տրանսֆոկատորի միջոցով, որը հնարավորություն է տալիս աստիճանաբար փոփոխել օբյեկտիվի ֆոկուսային հեռավորությունը: Կինոապարատի վրա տրանսֆոկատորի բացակայության դեպքում կինոխցիկը շարժվում է դեպի օբյեկտը կամ օբյեկտից:

Ինչպես լուսանկարչության, այնպես էլ այս դեպքում կիրառվում են տարբեր տիպի օբյեկտիվներ՝ սովորական, լայնանկյուն, տելե և այլն, ինչպես նաև փոփոխվող ֆոկուսային հեռավորությամբ օբյեկտիվներ:

Կինոնկարահանման ժամանակ ևս պահպանվում են այն հանձնարարականները, որոնք մշակված են կողմնորոշող, տեսածիրային, հանգուցային և դետալային լուսանկարչության համար: Հաճախ կիրառվում են նաև այլ մեթոդներ, որոնք հատուկ են միայն կինեմատոգրաֆիային: Դրանցից են, օրինակ, տարբեր հաճախականությամբ նկարահանման մեթոդները (նորմալ, արագացված, դանդաղեցված): Անհրաժեշտության դեպքում կատարվում է նաև համայնապատկերային կինոնկարահանում, որը նույնպես, ինչպես և լուսանկարահանման ժամանակ, իրականացվում է զծային և շրջանային եղանակներով:

Կինոնկարահանումների վերաբերյալ կատարվում է գրառում համապատասխան քննչական գործողության արձանագրության մեջ, որտեղ ցույց է տրվում, թե ինչ օբյեկտներ են նկարահանվել, ինչպիսի հնարքների կիրառմամբ, կինոխցիկի տեսակը, նկարահանման հաճախականությունը, օգտագործված ժապավենի չափը, կինոնկարահանում կատարող անձի ազգանունը, անունը, հայրանունը, պաշտոնը:

Ցանկալի է, որ նկարահանված ֆիլմը ունենա բացատրական կամ ժապավենի մագնիսական շերտի վրա, կամ մակագրի ձևով:

Ժապավենները հայտածելուց հետո անհրաժեշտ է ֆիլմը ցուցադրել ընթերակաների համար: Այս կապակցությամբ քննչական գործողության արձանագրության վերջում կատարվում է նոր գրառում, որտեղ շարադրվում է ֆիլմի համառոտ բովանդակությունը, կինոպրոյեկտորի տեսակը, ցուցադրման հաճախականությունը, ֆիլմի ցուցադրման տևողությունը, ընթերակաների դիտողությունները ֆիլմի ցուցադրումից հետո:

Արձանագրությունը ստորագրվում է ընթերակաների, մասնագետի և քննիչի կողմից, որից հետո նկարահանված ֆիլմը փաթեթավորվում է, կնքվում և կցվում քրեական գործին:

Ավելի ուշ, 1957 թվականին սկսեց ձևավորվել կրիմինալիստիկական տեսագրումը: Այս ուղղությամբ առաջընթացը տեղի ունեցավ բավական դանդաղ:

Տեսագրման պրակտիկ իրականացումը սկսվեց 70-ական թվականներին, երբ ՍՍՀՄ ՆԳՄ-ն ճապոնիայից գնեց որոշակի քանակությամբ տեսամագնիտոֆոններ, տեսախցիկներ, դրանք սնուցող բլոկներ և բաշխեց Եվրոպայի միութենական հանրապետությունների միջև: Դատական տեսագրման հիմունքները պատկանում են Ե. Պ. Իշչենկոյին, Յու. Ա. Գորինովին, Կ. Ս. Սկորոմնիկովին, Ի. Դ. Նալդիսին¹:

¹ Ст'я օրինակ Ю. А. Горинов, К. С. Скоромников, Видеозапись при расследовании преступлений, М., 1975, Ю. А. Горинов, Ю. С. Рогозин, К. С. Скоромников, Судебная киносъемка и видеозапись, Волгоград, 1980:

Կրիմինալիստիկական տեսագրումը կարելի է բնութագրել որպես գիտական դրույթների, մեթոդների, հնարքների և տեխնիկական միջոցների համակարգ, որը կիրառվում է հանցագործությունների բացահայտման և քննության ընթացքում տեսաֆիլմեր պատրաստելու համար: Կրիմինալիստիկական տեսագրման գիտական դրույթները ուղղակի հարաբերություն ունեն դատական ապացույցների հետ՝ դիմամիկ բնույթի պատկերավոր և ձայնային տեղեկատվությունը մագնիսային ժապավենի կամ դիսկի վրա ֆիքսելու առումով:

Կրիմինալիստիկական տեսագրման մեթոդներ և հնարքներ ասելով պետք է հասկանալ մի շարք կանոններ և հանձնարարականներ, համապատասխան տեխնիկական միջոցների կիրառման համար (նկարող և վերարտադրող սարքեր, մագնիսական ժապավեն և այլն), հանցագործություններ քննելիս դատական տեսաֆիլմեր պատրաստելու նպատակով:

Կրիմինալիստիկական տեսագրման դերը քննչական պրակտիկայում և օպերատիվ-հետախուզական գործունեության մեջ նրան հատուկ դեպքերը և օբյեկտները դիմամիկայում ֆիքսելու սկզբունքորեն նոր հնարավորությունների մեջ է, որը թույլ է տալիս հաջողությամբ լուծել չափազանց բարդ խնդիրներ: Օրինակ՝ դեպքի իրադրության և նրա հետագա զարգացման, փոփոխությունների նյութական ֆիքսումը փաստագրական ճշգրտությամբ, ամրագրված տեղեկատվության պահպանումը և նախաքննության ու դատաքննության ցանկացած պահին նրա զնահատումը, մարդկային ընկալումներին քիչ մատչելի, արագընթաց երևույթների ֆիքսումը և ամբողջությամբ կամ հատվածաբար ուսումնասիրումը, ֆիքսված իրադարձության կատարման ժամանակի տևողության ճշգրիտ պարզաբանումը և այլն:

Տեսագրված ժապավենի օգտագործումը քննչական, օպերատիվ-հետախուզական և փորձագիտական պրակտիկայում պայմանավորված է ապացույցների օբյեկտիվ ֆիքսման և հետազոտման, քննության արագությունը և լրիվությունը ապահովելու անհրաժեշտությամբ: Մեծ մասամբ այդ ժապավենները, որոնք կցվում են քրեական գործին, պատրաստվում են քննիչի, մասնագետի կամ փորձագետի կողմից: Բայց լինում են և այնպիսիք, որոնք հայտնվում են քրեական գործում քննիչի որոշմամբ: Սովորաբար դրանք հայտնաբերվում են դեպքի տեղի զննության ժամանակ, վերցվում են խուզարկության արդյունքում կամ ստացվում են վկաներից, տուժողներից, այլ անձանցից: Այդ նյութերի իրավական բնույթը և ապացուցողական նշանակությունը, բնականաբար, տարբեր են:

**§ 6. ԿՐԻՍԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ (ԴԱՏԱԿԱՆ)
ԼՈՒՍԱՆԿԱՐԶՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՉԵՎԱԿԵՐՊՈՒՄԸ**

Կրիսինալիստիկական (դատական) լուսանկարչության կիրառման նպատակը ոչ միայն գործի համար նշանակություն ունեցող փաստեր հայտնաբերելու, ամրապնդելու, վերցնելու խնդիրների կատարելագործումն է, այլև դրանց ապացուցողական նշանակության իրականացման հեշտացումը: Թեև հանցագործության և հանցագործի նյութական հատկանիշները, որոնք արտացոլվում են լուսանկարներում, նկարագրվում են քննչական գործողության արձանագրության մեջ, սակայն լուսանկարը արձանագրության կրկնակը չի համարվում: Այդ մասին առավել հանգամանորեն խոսվում է սույն գլխի սկզբում: Նշենք միայն նկարահանման եղանակի մանրակրկիտությունը՝ այնպիսի հատկանիշների և այնքան առանձնահատկությունների ֆիքսման գործում, որը հնարավոր չէ կատարել արձանագրելիս: Քննչական գործողության արձանագրության մեջ անպայման պետք է նշել լուսանկարահանում կիրառելու փաստը, պայմանները, կատարման եղանակները, մեթոդները և այլն:

Քննչական գործողությունների ժամանակ կատարված լուսանկարներն ունեն ապացուցման միջոցի նշանակություն, որը համապատասխանում է ՀՀ քր. դատ. օրենսգրքի 104 հոդվածին, որտեղ ասված է. «Քրեական գործով ապացույցներ են ցանկացած փաստական տվյալները, որոնց հիման վրա օրենքով որոշված կարգով հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարզում են քրեական օրենսգրքով նախատեսված արարքի առկայությունը կամ բացակայությունը, այդ արարքը կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կատարելը կամ չկատարելը և մեղադրյալի մեղավորությունը կամ անմեղությունը, ինչպես նաև գործի ճիշտ լուծման համար նշանակություն ունեցող այլ հանգամանքներ»:

Այդ տվյալները հաստատվում են կասկածյալի ցուցմունքներով, մեղադրյալի ցուցմունքներով, տուժողի ցուցմունքներով, վկայի ցուցմունքներով, դատապարտյալի ցուցմունքներով, փորձագետի եզրակացությամբ, իրեղեն ապացույցներով, քննչական ու դատական գործողությունների արձանագրություններով և այլ փաստաթղթերով:

Ոպետիկ լուսանկարը դառնա ապացուցման աղբյուր, պետք է պարունակի դատական ապացույց հանդիսացող փաստերի վերաբերյալ հա-

վաստի տեղեկություններ և ունենա դատավարական ճշգրիտ ձևակերպում: Այդ նպատակի համար, ինչպես նշվեց վերը, պետք է նշում արվի քննչական գործողության արձանագրության մեջ:

Քննչական գործողության արձանագրության մեջ լուսանկարման կիրառման վերաբերյալ պետք է տեղ գտնեն հետևյալ տվյալները.

1. Ի՞նչ օբյեկտ կամ օբյեկտներ են լուսանկարահանված (տրվում է օբյեկտների համառոտ նկարագիրը և նպատակային նշանակությունը):

2. Լուսանկարման ի՞նչ տեսակ (կողմնորոշող, տեսաձիրային, հանգուցային, դետալային) և եղանակ (համայնապատկերային, ծավալադիտակային, մետրական և այլն) է ընտրված:

3. Որտեղի՞ց է կատարվել լուսանկարահանումը (նպատակահարմար է այս տեղերը ցույց տալ նաև արձանագրությանը կցվող պլանի (սխեմայի) վրա):

4. Ո՞վ է կատարել լուսանկարահանումը (քննիչը, մասնագետը):

5. Եկարահանման պայմանները (ֆոտոապարատի և ֆոտոօբյեկտիվի տեսակը, լուսավորության բնույթը, երկարացնող ազույցների օգտագործումը, լուսագոտիչի կիրառումը, դիաֆրագման, պահաժամը, նեգատիվային ժապավենի բնութագիրը):

6. Կատարված լուսանկարների քանակը:

Արձանագրության մեջ ցույց է տրվում, որ կազմված է ֆոտոաղյուսակ, դրանց քանակը և յուրաքանչյուրում ամփոփված լուսանկարների քանակը, ինչպես նաև նշում այն մասին, որ հիշյալ աղյուսակը կցվում է տվյալ արձանագրությանը:

Արդեն պարզ դարձավ, որ գործին կցվող լուսանկարները ձևակերպվում են աղյուսակի ձևով: Լուսանկարները հաստատվում են քննչական մարմնի կնիքով այնպես, որ դրոշմի մի մասը դրվի լուսանկարի, իսկ մյուս մասը՝ աղյուսակի վրա:

Ֆոտոաղյուսակի վրա նշվում է քննչական գործողության կատարման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը, և թե ո՞ր քննչական գործողության արձանագրությանն է ա յն կցվում: Ֆոտոաղյուսակը հաստատվում է քննիչի, իսկ որոշ դեպքերում (տեղագնություն, խուզարկություն) նաև ընթերակաների ստորագրությամբ: Եթե լուսանկարները կատարվել են ոչ թե քննիչի, այլ ուրիշ անձի կողմից, անհրաժեշտ է նաև նրա ստորագրությունը: Ֆոտոաղյուսակին կցվում են առանձին ծրարում փակված և քննիչի բացատրականով նշված նեգատիվները: Ֆոտոաղյուսակները և լուսանկարների նեգատիվները՝ որպես քննչական գործողության արձանագրության մի մաս, կարվում են քրեական գործին:

Կրիմինալիստիկական (դատական)-հետազոտական լուսանկարման արդյունքները պետք է ձևակերպվեն հետևյալ կերպ: Նախ՝ հետազոտական լուսանկարահանման փաստը, եղանակը, պայմանները, կիրառման նպատակը, կիրառված տեխնիկական հնարքները և այլն, պետք է շարադրվեն փորձագտի եզրակացության «հետազոտում» մասում: Լուսանկարներից կազմվում է ֆոտոաղյուսակ, որտեղ ցույց են տրվում փորձաքննություն կատարող հիմնարկի անվանումը, եզրակացության համարը, լուսանկարահանման ամսաթիվը, ֆոտոաղյուսակի համարը: Յուրաքանչյուր լուսանկարի տակ նշվում են համարը և համապատասխան բացատրագիր: Լուսանկարի տակ դրված համարը պետք է համապատասխանի եզրակացության մեջ այդ նկարին վերաբերող շարադրանքին ցույց տված համարին:

Եթե լուսանկարի վրա փորձագետի կողմից որոշ անհրաժեշտ նշումներ են արվում, ապա ֆոտոաղյուսակում պետք է ստանձել նաև նույն լուսանկարից, առանց նշումների, որը պրակտիկայում ստացել է «հսկիչ» լուսանկար անվանումը:

Ֆոտոաղյուսակը հաստատվում է փորձաքննություն կատարող փորձագետի ստորագրությամբ և փորձագիտական հիմնարկի կնիքով:

§ 7. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀՈՒՆՈՎՐԱՅԻՆ

Քննչական և օպերատիվ-հետախուզական աշխատանքների արդյունավետությունը, ինչպես բազմիցս նշել ենք, կախված է բնական և տեխնիկական գիտությունների նվաճումների օգտագործման ծավալից և որակից: Եթե հաշվի առնենք, որ հանցագործները, հատկապես կազմակերպված հանցավոր խմբավորումների անդամները երբեմն օգտագործում են գիտատեխնիկական առաջընթացի ամենավերջին նվաճումները, ապա ավելի պարզ կդառնա, որ այդ առաջընթացը պետք է ակտիվորեն ազդի կրիմինալիստիկայի գիտության վրա, որը կոչված է հանցագործությունների դեմ պայքարի բնագավառը զինելու գործունեության նոր, արդյունավետ միջոցներով ու մեթոդներով:

Ապացուցողական տեղեկատվության հայտնաբերման, վերլուծության և օգտագործման հետ կապված բարդ խնդիրների լուծումը պրակտիկորեն անհնար է, եթե լայնորեն ու նպատակասլաց չօգտագործվեն ճշգրիտ ու հուսալի գիտական միջոցներ ու մեթոդներ: Քննչական գործու-

նեության էական բնագավառներից մեկը դատավարական գործողությունների արդյունքների, առանձին օբյեկտների, դեպքի տեղի իրադրության ֆիքսումն է: Դրանց մասին խոսել ենք վերևում, այդ թվում ստերեոլուսանկարչության, որն ըստ էության ծավալային պատկերի պատրանք է ստեղծում:

Ծավալային պատկերի ստացման լուսանկարչական միջոցների փորձեր արվել են դեռևս 20-րդ դարի սկզբներին Գ. Լիպմանի կողմից, որը մշակեց ինտեգրալային լուսանկարման մեթոդ: Սակայն ստեղծել ծավալային տեսարանով տեղեկատվական պատկեր, չհաջողվեց: Օպտիկական մման տարբերակի ստեղծումը մինչև վերջերս ստանալ չէր հաջողվում: Այդ պրոբլեմի լուծումը հնարավոր դարձավ հոլոգրաֆիայի միջոցով¹, որն ալիքային դաշտի ստեղծումը, գրանցումը և վերարտադրումն է լազերի օգնությամբ:

Հայտնի է, որ օպտիկական քվանտային գեներատորները ստեղծվեցին մոտ 30 տարի առաջ: Լազերից թողարկվող ճառագայթն ունի կոգերենտային բնույթ: Վերջինս նշանակում է, որ ճառագայթը մման դեպքում կազմվում է կամ մեկ խիստ որոշակի երկարության ալիքներից կամ կանոնավոր ալիքային փուլից, իր ողջ ճակատով: Բացի այդ, լազերային ճառագայթումը տարբերվում է անսովոր պայծառությամբ, կենտրոնանում է տարածության շատ սահմանափակ ալիքային երկարությամբ և կարող է սեղմվել չափազանց նեղ զուգահեռ փնջի՝ ունենալով սուր ուղղվածություն:

Լազերային ճառագայթման եզակի հատկությունները, որ այն ընդունակ է պահպանել կայուն հաճախականություն, փուլ և բևեռացում, քվանտային գեներատորների բարձր հուսալիությունը, նրանց մատչելիությունը թողարկվող տեսակների տարբերակները կարևոր գործոն հանդիսացան դրանց կիրառմանը կրիմինալիստիկայում:

Հոլոգրաֆիան բնութագրվում է որպես լազերային լուսավորմամբ ծավալային լուսավորում: Այն թույլ է տալիս գրանցել և վերականգնել օբյեկտի մասի տեղեկատվությունը ինտերֆերենցիոն գրառման հիման վրա: Երկու ալիքների համակցման պրոցեսը, որի արդյունքում առաջանում է նոր ալիք, կոչվում է ինտերֆերենցիա: Եթե ալիքները համընկնում են փուլում, ինտերֆերենցիան ուժեղանում է, իսկ եթե նրանք գտնվում են հակափուլում, թուլանում է: Մուգ և լուսավոր շերտերի հերթափոխման համակարգը (փուլ-հակափուլ) կոչվում է ինտերֆերենտային պատկեր:

¹ Հունարեն holos-ամբողջ, լրիվ և grapho-գրում են, գծում են բառերից:

Տարբեր գույների լույսերը կարող են ստեղծել ինտերֆերենտային պատկեր, շերտերի տարբեր դիրքերով:

Հոլոգրաֆիան հնարավորություն է տալիս գրանցել ալիքային ճառագայթներ, որն անդրադառնում է առարկայից, հետո վերականգնել նրան այնպես, որ դիտողն ունենա այնպիսի զգացողություն, կարծես թե տեսնում է իրական առարկան: Պատկերի եռաչափությունը պայմանավորված է դիֆրակցիայով, այսինքն՝ ճառագայթների մուտքը սավերի շրջանը, առարկան շրջանցելու արդյունքում:

Վերջին տարիներին հոլոգրաֆիան լայնորեն հայտնի դարձավ նրանով, որ հնարավորություն է տալիս ստանալ տարբեր օբյեկտների, այդ թվում կրիմինալիստիկական, արդյունավետ, ծավալային գունավոր պատկերներ:

Հոլոգրաֆիան ընդունակ է վերարտադրելու միլիոնից ավել նրբերանգներ, այն դեպքում, երբ սովորական լուսանկարչությամբ այդ ցուցանիշը չի անցնում հարյուրը:

Հոլոգրաֆիան առաջարկվել է որոշելու համար ինչպես գրառումների լուսանկարչական, այնպես էլ լուսային, ձայնային ու այլ էլեկտրոնագնիսական դաշտերի վերարտադրության մեթոդ: Նրա հիմքերը դրվել են անգլիացի ֆիզիկոս Դ. Գաբորի աշխատանքներում 1948թ.: Նա առաջինը ցույց տվեց, որ ի տարբերություն սովորական լուսանկարման, որը տեղեկատվությունը գրանցում է միայն օբյեկտիվ ալիքների խտությամբ, հոլոգրաման ֆիքսում է նաև նրա փուլը, գրանցում և վերարտադրում է նրանցում առաջացած ճառագայթման սպեկտրալ կազմը:

Այստեղից էլ առաջացել է «հոլոգրամա» (հոլոգրաֆիա) տերմինը, որը նշանակում է լրիվ, բազմակողմանի գրառում:

Հոլոգրաֆիայի էությունը անփոփ հանգում է հետևյալին. լուսավորվող բոլոր օբյեկտները կլանում, անդրադարձնում կամ ցրում են լույսը: Արդյունքում՝ ձևավորված լուսային դաշտը բովանդակում է օբյեկտների վերաբերյալ լրիվ տեղեկատվություն նրանց ձևի, փոխադարձ դիրքի, նույնիսկ նյութի, որից այն պատրաստված է: Օբյեկտը դիտելիս հատկապես այդ դաշտում է կարգավորում դիտողի աչքը: Ստացված տեղեկատվությունը վերլուծում է ուղեղը, որի արդյունքում մարդը տեսնում է:

Պատկերների ստացումը հոլոգրաֆիայի կիրառման գլխավոր և միակ նպատակը չէ: Այն կիրառվում է նաև օբյեկտների երկրաչափական չափերը որոշելու համար, այն էական է նաև, երբ ռեալ օբյեկտների չափումը դժվար կամ անհնար է (օրինակ՝ սահքի հետքերի մակերևույթի հետազոտման ժամանակ):

Նշված մեթոդի կիրառումը կրիմինալիստիկական պրակտիկայում առավել հեռանկարային է հարվածի կամ սեղմման հետքերի վերլուծության համար, դրանք նպատակահարմար են նաև, երբ անհրաժեշտ է ստանալ ստերեո և կեղծստերեո էֆեկտ, օրինակ՝ պարկուճի հրապատիչի վրա զարկանի հետքը հետազոտելիս, նրա մակերևույթի ռելիեֆը և այլն:

Այստեղ հուսալի իդենտիֆիկացման հատկանիշ կարող են ծառայել միկրոսկոպիական և մակրոսկոպիական առանձնահատկությունները, մասնավորապես զարկանի երկայնակի առանցքի աննշան շեղումները, նրա մակերևույթի վիճակը և այլն:

Հոլոգրամային ինտերֆերոմետրիայի կարևոր ուղղություններից է նաև ապակու, կերամիկայի, տարբեր պլաստմասսաների խմբային պատկանելության որոշումը: Դրա համար կարևոր նախադրյալ է այն, որ նույն առարկայի տարբեր տեղերում հայտնաբերված երկու մասերը (օրինակ՝ դեպքի տեղում և խուզարկության ժամանակ), եթե նրանք պատրաստված են միևնույն նյութից, պատկերը վերականգնելիս էական տարբերություն չպետք է ունենան ինտերֆերենտային շերտերում: Այս մեթոդը լավ արդյունք է տալիս նաև փաստաթղթի տեխնիկական հետազոտման ժամանակ թղթի մակերեսային շերտը հետազոտելիս:

Այն օգտագործվում է նաև տարբեր արտադրանքների համարը փոփոխելու փաստը պարզելիս՝ հրագենի, սառը զենքի, ավտոմեքենայի հիմնական մասերի (օրինակ՝ շարժիչի) և այլն: Համարանիշերի դրոշմումը առաջացնում է նյութի հատկությունների տեղային (լոկալ) խախտումներ: Հոլոգրաֆիական ինտերֆերոմետրիայի մեթոդով հետազոտելիս առաջացած փոփոխությունները երևան են գալիս օբյեկտի պատկերի ինտերֆերենցիոն շերտերի թռիչքաձևությամբ: Հոլոգրաֆիայի կատարման պայմանների գրագետ ընտրությունը հնարավորություն է տալիս վերականգնել վերացված համարանիշերը:

Հոլոգրաֆիական ինտերֆերոմետրիան ապահովում է հարթ ապակու իդենտիֆիկացումը ըստ ինտերֆերենտային պատկերի, նրա օպտիկական անհամասեռությամբ՝ անդրադարձող լազերային լույսում:

Կրիմինալիստիկայում, հատկապես ֆոտոտեխնիկական փորձաքննությունում նշանակալից տեղ է զբաղեցնում պատկերների օպտիկական մշակումը, որը հաճախ օգտագործվում է որպես միջանկյալ փուլ նաև այլ կրիմինալիստիկական խնդիրներ լուծելիս, ցայտերանգի ուժեղացման կամ թուլացման, գունավոր լուսանկարահանման և այլն:

Հոլոգրաֆիական մոդելավորումը նպաստում է տրաստլոգիական օբյեկտների կրիմինալիստիկական իդենտիֆիկացմանը (կտրվածքի, սղոցման, սահքի, սեղմման, կծվածքի, փայտի, մետաղի, պլաստմասսայի վրա

եղած հարվածի և այլ հետքերի): Այն գլխավորապես կողմնորոշում է նույնացման դաշտի համեմատական հետազոտման համար պիտանի դրոշմների ստացմանը: Լուսանկարները, կադապարները, դրոշմները նույնպես, պիտանի են, բայց մոդելավորման լավագույն արդյունքներ ապահովում է իրեղեն ապացույցների և հետքերի ֆիքսման հոլոգրաֆիական մեթոդը:

Գատական հրազենագիտությունում և հետքաբանությունում հաճախ են հանդիպում սահքի և սեղմման հետքեր շատ մանր մակերևույթով: Վերջինիս դետալների որակական բնութագրերը և դասավորությունը իրենցից ներկայացնում են, որպես կանոն, հատկանիշների համակցություն, որն անհրաժեշտ է նույնության առկայության կամ բացակայության մասին հետևությունների համար:

Հոլոգրաֆային միջոցներով լուծվող հարցերի շրջանակը չափազանց մեծ է, որի ամբողջական ներկայացնելը դուրս է մեր առջև դրված խնդիրների շրջանակներից: Միաժամանակ նշենք, որ անկասկած, հոլոգրաֆիայի հետագա զարգացմամբ կմշակվեն և պրակտիկայում կներդրվեն նրա այլ մեթոդներ ու միջոցներ, որոնք հնարավորություն կտան կատարելագործել ոչ միայն հետքերի ու իրեղեն ապացույցների ֆիքսումն ու հետազոտումը, այլև հանցավոր ոտնձգությունների կանխմանն ուղղված գործունեությունները:

ԳԼՈՒԽ 12. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԵՏՔԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ (ՏՐԱՍՈԼՈԳԻԱ)

§ 1. ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«Տրաստլոգիա» տերմինը, որն օգտագործվում է ոռուսերեն մասնագիտական գրականության մեջ, առաջարկվել է ռուս կրիմինալիստների կողմից, ֆրանսերեն *la trace*-հետք և լատիներեն *logos*-ուսմունք բառերի հիման վրա: Այլ կերպ ասած՝ բառացի թարգմանությամբ նշանակում է ուսմունք հետքերի մասին:

Հայ կրիմինալիստները օգտագործում են «հետքաբանություն» տերմինը: Մեր կարծիքով, հետքաբանության հետ մեկտեղ պետք է օգտագործել նաև տրաստլոգիան, կրիմինալիստիկայում ընդունված տերմինոլոգիայի միասնականությունը և հասկացության բովանդակության ամբողջականությունը պահպանելու նպատակով (նույն կերպ նաև քրեագիտություն-կրիմինալիստիկա, նույնացում-իդենտիֆիկացիա, հրազենագիտություն-բալիստիկա և այլն):

Հայոց լեզվում հետք բառն ունի տարբեր նշանակություն: Ըստ «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի» (Երևան, 1974 թ.) հետք իմաստի տակ պետք է հասկանալ. «1. Ոտքը դրած տեղում մնացած նշանը, 2. Անվի թողած գիծը, 3. Բիծ, մնացորդ, 4. փխբ. Ուղղություն, նշան, որին հետևում են որևէ բանի մասին կամ որևէ բան երևան հանելու համար, 5. Մատների՝ ձեռքի և այլն թողած դրոշմը որևէ բանի վրա: 6. փիբ. Որևէ բանի բնորոշ արտահայտություն»:

Նոր հայկազյան բառգրքում¹ որոշ այլ իմաստների հետ նշված է նաև «ոտնատեղի, նշան ոտից յետ կախելոյ և անցանելոյ. շավիղ, նիշ և մնացորդք իրաց նմանութեամբ»:

Խոսելով հետքերի մասին այս հասկացության լայն իմաստով, այսինքն, որպես իրադրության նյութականորեն ամրապնդված ցանկացած փոփոխության, որն առաջացել է հետազոտվող իրադարձության հետևանքով կամ դրա հետ կապված, լեի կրիմինալիստներ Ադամչուկը և Ջելվյանսկին նշում են, որ հաշվի առնելով կրիմինալիստիկական փորձաքննության ժամանակակից վիճակը, «դասական կրիմինալիստիկական հետքերի շարքում (ձեռքի, ոտքի, ջարդող գործիքների և այլն)

¹ Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, Երևան, 1981:

կարևոր նշանակություն ունեն մասն ալ հետքերը (օրինակ՝ որևէ նյութի միկրոմասնիկները)¹:

Հուճգար կրիմինալիստ Իլլարը քննադատում է հետքերի, իր կարծիքով, անհիմն բաժանումը կրիմինալիստիկականի (լայն իմաստով) և տրաստլոգիականի, պնդում է հետքի զուտ տրաստլոգիական հասկացությունը, որը հիմնված է անհատական ճանաչողական հատկանիշների վրա: Այն, ինչը չի համարվում տրաստլոգիայի բնագավառ (լաքաներ, կաթիլներ, նյութերի և հեղուկների մնացորդներ և այլն), չի կարող դասվել հետքերին: Ըստ հեղինակի, անհատական ճանաչողությունը պետք է հիմնվի անհատական ձևի առանձնահատկությունների վրա: Իսկ երբ խոսքը հետևանքի մասին է ընդհանուր կրիմինալիստիկական իմաստով, չի բացառվում հենց հետքի նյութի վերլուծությունը, ոչ հետքաբանական (ոչ տրաստլոգիական) հետազոտման մեթոդների կիրառումը: Դրա համար էլ հեղինակը հետքը սահմանում է որպես իրադրության ամրապնդված փոփոխություն, կապված դեպքի հետ, որն արտացոլում է այն թողած առարկայի ձևի և մակերեսի առանձնահատկությունները²:

Կարծում ենք, ճիշտ չէ, երբ հետազոտման օրյեկտները բաժանում են հետքերի և «ոչ հետքերի», կախված ուսումնասիրման մեթոդից: Հետքը մնում է հետք, թեև հետքի նկատմամբ կարող են փոխվել հետազոտման մեթոդները: Օրինակ՝ մատնադրոշմը կարող է հետազոտվել ըստ գծանախշի՝ մատնադրոշմային հետազոտման սկզբունքներով և նպատակով, իսկ այդ հետքի քրոմոգրաֆիային բաղադրության քիմիական վերլուծությունը՝ այլ նպատակով: Բայց երկու դեպքում էլ կատարվում է հետքի հետազոտություն:

Նյութական հետքերի վերաբերյալ կարծիքներն ու մեկնաբանությունները իրենց տրամաբանական ձևակերպումն ու գնահատումը ստացան Ի. Ն. Յակիմովի մոտ, որը խորհրդային կրիմինալիստիկայում իրավամբ համարվում է հետքերի մասին ուսմունքի հիմնադիրը: Ըստ Ի. Ն. Յակիմովի հետքերը ոչ միայն հետք-արտացոլումներն են (դրոշմներ, պատճեններ), այլև բոլոր նյութական փոփոխությունները, որոնք կատարվում են դեպքի տեղի իրադրության մեջ, շրջապատող միջավայրում, առարկաների վրա՝ կապված հանցավոր գործողության հետ:

Այս տեսակետի արտահայտությունը պետք է համարել այն, որ Ի. Ն. Յակիմովը բոլոր հետքերը բաժանում է երկու խմբի. ա) մարդու հետքեր, բ) տարբեր հետքեր:

¹ Селиванов Н. А., Вещественные доказательства, М., 1971, էջ 27:

² Грановский Г. Л., Основы трассологии, М., 1965, էջ 55:

Մարդու հետքերի մեջ մտնում են.

1. ուտքերի հետքերը,
2. ձեռքերի, մատների հետքերը,
3. ատամների հետքերը,
4. եղունգների հետքերը,
5. արյան բծերը,
6. սպերմատոզոիդի բծերը,
7. մազերը,
8. արտաթորանքները:

Ի. Յակիմովը տարբեր հետքերի խմբին է դասում.

1. կենդանիների ոտնահետքերը,
2. անիվների հետքերը,
3. ջարդող գործիքների հետքերը,
4. հրազենի գործադրումից առաջացած հետքերը,
5. հրկիզումների ժամանակ բռնկվող նյութերից և այրող սարքերից առաջացած հետքերը,
6. փաստաթղթերի վրա կեղծիքների հետքերը¹:

Նշված թվարկումից երևում է, որ Յակիմովի մոտ «հետք» հասկացությունը ավելի ծավալուն բովանդակություն ունի, քան իրականում է: Հետք-արտացոլանքների հետ մեկտեղ, որոնք հիմնականում ծառայում են նույնացման նպատակներին, նա հետքերի շարքին է դասում նաև մազերը, արյան բծերը, փոշին, այլ օբյեկտներ, որոնց հայտնաբերումն ու հետազոտումը հնարավորություն է տալիս առավել ճշգրիտ գնահատել հանցագործության դեպքի իրադրությունը և մեխանիզմը:

Հետքի նման բնորոշումը մնաց և կրկնվեց ոչ միայն Յակիմովի², այլև ուրիշ հեղինակների կողմից³, մինչև որ Ս. Մ. Պոտսապովը առաջարկեց նույն հասկացության հետևյալ ձևակերպումը. «Նյութական առարկաների վրա արտացոլված երևույթների հատկանիշները, որոնք պատճառական կապի մեջ են քննվող իրադարձության հետ⁴»:

Պոտսապովը ցույց է տալիս, որ նման հետքեր կարող են առաջանալ մարդկանցից, կենդանիներից, առարկաներից, բնական ուժերի ազդեցությունից: Որոշակի վերաբերմունք է դրսևորել «հետք» բառի նկատ-

¹ Якимов И. Н., Криминалистика, М., 1925.

² Якимов И. Н., Криминалистика, техника и тактика расследования преступлений, М., 1938, էջ 124:

³ Вороновский Н. Д., Уголовная техника, М., 1931.

⁴ Краткий юридический словарь, М., 1945.

մամբ նաև Բ. Ի. Շևչենկոն: Նա, ցույց տալով բառի իմաստային տարբեր նշանակությունները, նշում է, որ հետքեր մասնավորապես անվանվում են «... ա. հատկանիշների ամբողջությունները, որոնք հատուկ են հանցագործությունների որոշակի տեսակի, կամ ծագում են հանցագործությունը որակող հատկանիշ համարվող որոշակի գործողությունների հետևանքով (հրկիզման հետքեր, կոտրանքի հետքեր և այլն), մեկ օբյեկտի արտացոլումը մյուսի վրա, որպես հետևանք նրանց փոխգործողության, կապված հանցագործության դեպքի հետ (ոտքերի, մատերի հետքեր և այլն¹)»:

Բ. Ի. Շևչենկոն հիշատակված աշխատության մեջ նշում է նաև այդ տերմինը օգտագործելու որոշ այլ դեպքեր, բայց կրիմինալիստիկական գրականության մեջ, հիմնականում, այն օգտագործվում է վերը նշված նշանակությամբ:

Այդպես է հիշատակվում նաև ՀՀ քր. դատ. օր. 115 հոդվածում, որտեղ նշվում է, որ «իրեղեն ապացույցներ են հանդիսանում այն առարկաները, որոնք հանցագործության գործիք են ծառայել կամ իրենց վրա հանցագործության հետքեր են պահպանել...»:

Հետագայում Բ. Ի. Շևչենկոն զբաղվեց նաև հետքաբանության իմաստի կատարելագործմամբ: Ծարադրելով հետքաբանության (տրաստլոգիայի) գիտական հիմունքները, Բ. Ի. Շևչենկոն նշեց զարգացման մախորդ փուլում նրա երեք էական թերությունները.

1. ճշգրիտ ծավալի և սահմանների բացակայություն,

2. հետքերի հետազոտման մեթոդիկայի և տեխնիկայի հարցերի անբավարար մշակում,

3. հետքերի ոչ ճիշտ դասակարգման կիրառում:

Պրոֆ. Բ. Ի. Շևչենկոն հետքաբանությունը սահմանեց որպես «քրեական տեխնիկայի բնագավառ, որն ուսումնասիրում է տարբեր հետքեր *որպես նյութական օբյեկտների արտաքին կառուցվածքի արտահայտություններ*՝ այդպիսի հետքերի առաջացման հանգամանքների պարզաբանման և նշված օբյեկտների մույնացման նպատակներով²»:

Հետագայում, 1963 թ. դասագրքում³ Բ. Ի. Շևչենկոն ճշգրտեց այս բնորոշումը, նրան միացնելով և խմբային պատկանելության որոշումը: Այս լրացումը, անշուշտ, անհրաժեշտ էր, քանի որ միամտություն կլիներ

¹ Шевченко Б. И., Научные основы современной трассологии, М., 1947, էջ 11-12:

² Шевченко Б. И., Научные основы современной трассологии, М., 1947, էջ 5-6 (ընդգծումն իմն է Լ. Օ.):

³ Криминалистика, учебник для юридических институтов и факультетов, М., 1963, էջ 120:

հտքաբանության ուսումնասիրմանը թողնել միայն նույնացումը, այն դեպքում, երբ ակնհայտ է հարցերի այն մեծ շրջանակը, որը կարգավորվում է խմբային պատկանելության որոշմամբ:

Նշված սահմանումը ընդունվեց և ճանաչում ստացավ խորհրդային կրիմինալիստների կողմից, թեև փորձեր արվեցին այն ընդարձակելու, ճշգրտելու¹, սակայն նրանց մեծամասնությունը ընդունում է, որ հետքաբանությունը (տրաստոլոգիան) հետքերը ուսումնասիրում է որպես հետք առաջացնող առարկաների արտաքին կառուցվածքի արտապատկերի:

Հետքաբանության բովանդակությունը և խնդիրները լիարժեք ներկայացնելու համար, մեր կարծիքով, պետք է բնորոշել հետևյալ կերպ. *հետքաբանությունը կրիմինալիստիկական տեխնիկայի ճյուղ է, որն ուսումնասիրում է հետքեր, որպես օբյեկտների արտաքին կառուցվածքի արտապատկերներ, նրանց առաջացման մեխանիզմը, հայրամաքերման, ֆիքսման, վերցման և հետազոտման միջոցներն ու մեթոդները, դրանք առաջացրած օբյեկտների խմբային պատկանելության որոշման և նույնացման, ինչպես նաև հանցագործության դեպքի ու հանցագործի վերաբերյալ դիագնոստիկ և այլ տվյալների պարզաբանման նպատակով:*

Հետքաբանությունը հիմնվում է օբյեկտների նույնացման այն հիմնական դրույթի վրա, որ նյութական աշխարհի յուրաքանչյուր առարկա իր արտաքին կառուցվածքով անհատական է: Հետքերի առաջացման համար անհրաժեշտ են երկու օբյեկտներ, որոնցից մեկը հետք է առաջացնում մյուսի վրա: Այն օբյեկտը, որն առաջացնում է հետքը, կոչվում է *հետք առաջացնող օբյեկտ*, իսկ այն օբյեկտը, որի վրա մնում է առաջին օբյեկտի արտապատկերը, կոչվում է *հետք ընդունող օբյեկտ*:

Այս բաժանումը, որն առաջարկել է Բ. Ի. Շևչենկոն և ընդունվել է կրիմինալիստների կողմից², լրիվ համապատասխանում է նույնացման տեսության մեջ ընդունված նույնացնող և նույնացվող օբյեկտների բաժանմանը: Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հետքի առաջացման մեխանիզմի հիմնական սկզբունքներին համապատասխան՝ միմյանց վրա ազդող երկու օբյեկտներն էլ գործնականում ենթարկվում են

¹ Стів Литвиненко Л. К., Понятие и классификация следов в трассологии. В книге Материалы 3 научной конференции, посвященной памяти М. И. Райского, Киев, 1968, էջ 94. Васильевский А. Н., Трассологическое исследование при расследовании преступлений. Авт. канд. дисс. М., 1962, էջ 4-5:

² Քրոշ առարկումներով, օրինակ՝ տե՛ս Գ. Բ. Карнович, К вопросу о классификации вещественных доказательств, Советская криминалистика на службе следствия, պրակ 8, Մ., 1956, էջ 20-21:

փոփոխության: Կախված օբյեկտների նյութի մեխանիկական կամ այլ հատկություններից՝ մեկի ազդեցությունը մյուսի վրա ավելի զգալի է լինում: Բացի այդ, քանի որ հետքաբանության մեջ նույնացումը կատարվում է առարկայի արտաքին կառուցվածքի արտապատկերներով, որոնք մնում են հետքի վրա, հետք առաջացնող և ընդունող օբյեկտները պետք է իրենց ֆիզիկական տվյալներով լինեն կայուն և դասվեն պինդ մարմինների շարքին:

Հետքի առաջացման պրոցեսը կոչվում է հետքային կոնտակտ, որը կարող է տարբեր երևույթների արդյունք լինել (մեխանիկական, ջերմային, քիմիական, ֆոտոքիմիական):

Հետքաբանության կարևորագույն խնդիրը հետք առաջացնող օբյեկտի նույնացումն է, իսկ, վերջինիս բացակայության դեպքում նրա խմբային պատկանելության որոշումը (ի՞նչ ավտոմեքենայի դողերի հետքեր են, ինչպիսի՞ գործիքով է առաջացել հետքը, ի՞նչ տիպի, համարի կոշիկից և այլն):

Հետքաբանության խնդիրներից է նաև դիագնոստիկ բնույթի որոշ հարցերի պարզաբանումը, մասնավորապես հետքերի առաջացման մեխանիզմի պայմանների պարզաբանումը (ո՞ր ուղղությամբ է շարժվել ավտոմեքենան, ի՞նչ եղանակով է բացվել կամ կոտրվել փականը, ինչպիսի՞ք են մարդու քայլվածքի առանձնահատկությունները և այլն):

§ 2. ՀԵՏՔԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ըստ առաջացման աղբյուրի մեխանիզմի՝ հետքերը լինում են. ծավալային, մակերեսային, ստատիկ, դինամիկ, լոկալ և պերիֆերիկ:

Ծավալային հետքերը առաջանում են, երբ հետք ընդունող օբյեկտը հետք առաջացնող օբյեկտի հետ ունեցած կոնտակտի մասում դեֆորմացվում է և որոշակի չափով ընդունում նրա մակերեսի առանձնահատկությունները: Այսինքն՝ հետքն առաջանում է ընդունող օբյեկտի ծավալային փոփոխությունների հաշվին: Ծավալային հետքեր առաջանում են, օրինակ, կոշիկից՝ կավահողի, հողի, ավազի, ձյան վրա, ջարդող գործիքից՝ փայտին հարվածելիս, մատից՝ պլաստիլինի և նման նյութերի վրա և այլն:

Մակերեսային հետքերն այն արտապատկերներն են, որոնք առաջանում են հետք ընդունող օբյեկտի մակերեսային փոփոխությունների հետևանքով: Այդ փոփոխություններն առաջանում են հետևյալ դեպքե-

րում. հետքը ձևավորվում է, երբ հետք ընդունող օբյեկտի վրա մնում են հետք առաջացնող օբյեկտի կամ նրա վրա եղած նյութի մասնիկներ: Դրանք մասնագիտական գրականության մեջ կոչվում են *շերտավորման հետքեր* (օրինակ՝ փոշոտված անիվի հետքը ասֆալտի վրա և այլն): Կամ, երբ հետք առաջացնող օբյեկտը հետք ընդունող օբյեկտից անջատում է որևէ նյութի մասնիկներ-*շերտազատման հետքեր* (օրինակ՝ փոշոտ մակերևույթին ձեռքով հպվելիս, ներկված, բայց չչորացած հատակի վրա քայլելիս և այլն): Կամ, երբ հետք ընդունող օբյեկտի մակերեսը փոփոխություն է կրում ջերմային, քիմիական, ֆոտոքիմիական և այլ երևույթների հետևանքով:

Սյուստիկ համարվում են այն հետքերը, որոնք առաջանում են այնպիսի կոնտակտի պահին, երբ հետք առաջացնող և ընդունող օբյեկտները գտնվում են դադարի վիճակում: Մի օբյեկտի մեխանիկական ազդեցությունը մյուսի վրա ենթադրում է դրանցից մեկի կամ երկուսի էլ շարժումը:

Ստատիկ հետքը առաջանում է այն պահին, երբ շարժումը դադարում է:

Ստատիկ հետքերը արտացոլում են հետք առաջացնող օբյեկտի ձևը, չափը, սեռը, իսկ բարենպաստ պայմանների առկայության դեպքում՝ նրա արտաքին կառուցվածքի առանձնահատկությունները: Ստատիկ հետքի օրինակ կարող են հանդիսանալ ձյան, ավազի վրա կանգնած մարդու ոտնահետքը, մատնադրոշմները և այլն:

Դինամիկ հետքերը առաջանում են օբյեկտներից մեկի (կամ երկուսի էլ) շարժման պրոցեսում, օրինակ՝ սողցելիս, կտրելիս, քերելիս և նման շարժումների դեպքում, բայց ոչ քայլքի, մեքենայի սովորական ընթացքի և նման: Այդ հետքերը ունեն քերվածքի, ակոսների, կտրվածքների տեսք: Դինամիկ հետքով կարելի է որոշել հետք առաջացնող օբյեկտի շարժման ուղղությունը, որը կարևոր է հետքի առաջացման մեխանիզմը պարզելու համար: Հստակ դինամիկական հետք առաջացնելու համար անհրաժեշտ է, որ հետք առաջացնող օբյեկտը հետք ընդունող օբյեկտի նկատմամբ ունենա որոշակի կարծրություն: Այս սկզբունքով դինամիկական հետքեր է առաջացնում հրազենի փողանցքը կրակված գնդակների վրա:

Լոկալ (լոկալիզ) հետքերը առաջանում են այն փոփոխությունների հետևանքով, որոնք տեղի են ունենում հետք առաջացնող և ընդունող օբյեկտների կոնտակտի սահմաններում: Կոնտակտից դուրս մնացած մասերը մնում են առանց փոփոխության: Պրակտիկայում հանդիպող հնարավոր հետքերի բացարձակ մեծամասնությունը լոկալ է (օրինակ, բոլոր ծավալային հետքերը, մատների քրտնաճարպային հետքերը, ավտոմե-

քննայի անվադողի հետքերը, սահմակի հետքերը և այլն): Լուկալ հետքերի կրիմինալիստիկական արժեքը չափազանց մեծ է:

Պերիֆերիկ (մակերեսամերչ) հետքերը առաջանում են այն փոփոխությունների պայմաններում, որոնք տեղի են ունենում հետք առաջացնող ու ընդունող օբյեկտների կոնտակտի սահմաններից դուրս: Օրինակ, գրադարակի վրա դրված և փոշով ծածկված առարկան վերցնելիս մնում է նրա չփոշուղծ տեղը (առարկայի ուրվանկարը): Հաճախ պերիֆերիկ հետքը առաջանում է կողմնակի երևույթների հետևանքով՝ լույսի, արևի ճառագայթների և այլն, օրինակ՝ տեղափոխված պահարանի տեղը հատակի վրա, լողազգեստի տեղը մարմնի վրա և այլն:

Պերիֆերիկ հետքը կարող է օգտակար լինել քննվող գործի կարևոր շատ հարցերի պարզաբանման համար: Մակայն, դրանց կրիմինալիստիկական նշանակությունը մեծ չէ, քանի որ հնարավորություն են տալիս պարզել միայն առարկաների ուրվագծերը:

Հետքերը դասակարգվում են նաև ըստ առաջացնող օբյեկտի. ձեռքի, ոտքի, ջարդող գործիքի, ատամների, եղունգի, տրանսպորտային միջոցի և այլն:

Հետքերի հայտնաբերման, ամրապնդման, վերցման ընդհանուր կանոնները և դատավարական ձևակերպումը

Հետքեր հայտնաբերելու, ամրապնդելու, վերցնելու համար անհրաժեշտ է հետևել կրիմինալիստիկայի կողմից մշակված հանձնարարականներին և պահպանել քրեական դատավարության օրենսգրքի պահանջները (218, 220, 254 հ.):

Հետքեր որոնելիս պետք է նկատի ունենալ, որ դրանք լինում են տեսանելի, քիչ տեսանելի և անտեսանելի: Հաշվի առնելով դեպքի ընդհանուր պատկերը, ինչպես նաև պատկերացնելով տվյալ իրադրության պայմաններում հնարավոր հետքերի առաջացման մեխանիզմը, տեղազնության ստատիկ փուլում քննիչը պետք է կողմնորոշվի, թե ինչպե՞ս է գործել հանցագործը, որտեղ, որ օբյեկտների վրա կարող են լինել հետքեր, ի՞նչ փոխադարձ կապի մեջ կարող են լինել տարբեր հետքերը, ինչպիսի՞ն կարող է լինել նրանց առաջացման մեխանիզմը: Միայն նման մտեցման պայմաններում հետքերի որոնումը և հայտնաբերումը արդյունավետ կլինի, և որոնման պրոցեսը չի զուգակցվի որոշ հետքերի վնասման կամ ոչնչացման հետ:

Հետքերի հայտնաբերումը կատարվում է ինչպես անզեն աչքով, այնպես էլ տեխնիկական միջոցների գործադրությամբ, մասնավորապես թեք ընկնող ճառագայթներով, լուսազտիչներով, ինֆրակարմիր և ուլտրամա-նուշակագույն ճառագայթներով, գունավոր փոշիներով, յոդի գոլորշիներով և այլն: Տեխնիկական միջոցների գործադրումը պետք է կատարել տրամաբանական այնպիսի հաջորդականությամբ, որը պայմաններ կստեղծի պահպանել հետքերը վնասումից կամ ոչնչացումից: Նպատակահարմար է այդ աշխատանքների իրականացումը հանձնարարել մասնագետ-կրիմինալիստին:

Հայտնաբերված հետքերը պետք է ուսումնասիրվեն և ամրապնդվեն այնպես, որ հնարավոր լինի առավել շատ ինֆորմացիա ստանալ նրանցից: Հետքի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս որոշել նրա ֆիքսման և վերցման առավել նպատակահարմար մեթոդներն ու եղանակները, հետևություն անել այն թողած օբյեկտի մասին, ի՞նչ հանգամանքներում է առաջացել հետքը, հանցագործի ո՞ր գործողությունների հետևանքով, այդ գործողություններից ի՞նչ հատկանիշներ կարող են մնացած լինել հանցագործի մարմնի, հագուստի վրա և այլն:

Անհրաժեշտ է որոշել յուրաքանչյուր հետքի փոխադարձ կապը դեպքի տեղում գտնվող այլ հետքերի ու առարկաների հետ: Հետքերն ուսումնասիրելուց հետո ֆիքսվում են հետևյալ միջոցներով. լուսանկարահանում, տեսագրում, կինոնկարահանում, դիապոզիտիվներ, հատակագծեր, սխեմաներ, դրոշմվածքներ և ընդօրինակումներ պատրաստելով, արձանագրության մեջ նկարագրելով:

Բոլոր դեպքերում հայտնաբերված հետքերը խորհուրդ է տրվում լուսանկարել մասշտաբային նկարահանման կանոններով: Հետքերի լուսանկարները համապատասխան ձևակերպումից հետո կցվում են քննչական գործողության արձանագրությանը:

Հետքերը վերցնելու համար կիրառվում են հետևյալ հնարքները. եթե հետքը մնացել է ոչ մեծ առարկայի վրա, ապա այն վերցվում է առարկայի հետ, իսկ եթե մնացել է մեծ չափսեր ունեցող առարկայի վրա, առանձնացվում է առարկայի հետքը պարունակող մասը (թույլատրելի սահմաններում կտրվում է, սղոցվում...), պատրաստվում է հետքի կադապարը (ծավալային հետքերի դեպքում), հարթ պատճենը (մակերեսային հետքերի դեպքում):

Անհրաժեշտ է հիշել, որ հետքի կրիմինալիստիկական նշանակությունը մեծանում է, երբ այն ուսումնասիրվում է, փորձաքննության ժամանակ հետազոտվում է իր իսկական վիճակով (բնօրինակով) և ոչ թե պատ-

ճենով: Այս հանգամանքը հաշվի առնելով պետք է բոլոր այն դեպքերում, երբ հնարավոր է, հետքը վերցնել այն պարունակող օբյեկտով և ոչ թե պատճենահանել:

Ծավալային հետքերի կադապարները պատրաստվում են գիպսով, պլաստիլինով, սիլիկոնային մածուկներով, պարաֆինով, ատամնաբուժական ցեմենտով և այլ նյութերով:

Դեպքի տեղից վերցրած հետք պարունակող առարկաները, նրանց մասերը, հետքերի կադապարները, պատճենները փաթեթավորվում են: Փաթեթավորումը պետք է կատարել այնպես, որ բացառվի խոնավության, փոշու, լուսային վառ ճառագայթների ազդեցությունը, ինչպես նաև այնպես, որ հետքը չշփվի այլ օբյեկտների հետ և չփչանա:

Յուրաքանչյուր փաթեթի վրա ամրացվում է պիտակ, համապատասխան գրառումով (ինչ առարկա է, ինչ հետք է պարունակում, երբ և որտեղից է վերցված): Պիտակը հաստատվում է ընթերակաների ու քննիչի ստորագրությամբ, կնքվում է:

Բոլոր դեպքերում հետքերը ամրապնդելու պարտադիր միջոցը համարվում է դրանք քննչական գործողության արձանագրության մեջ նկարագրելը, որը հայտնաբերված հետքերին տալիս է դատական ապացույցի նշանակություն:

Արձանագրության մեջ տեղ են գտնում հետևյալ տվյալները. հետքի հայտնաբերման եղանակները, մեթոդները, տեխնիկական միջոցները, հայտնաբերման տեղը, դիրքը դեպքի տեղի որոշ առարկաների կամ այլ հետքերի նկատմամբ, ինչպես է ամրացվել և վերցվել: Արձանագրության մեջ նկարագրվում են հետքի արտաքին հատկանիշները, չափսերը: Արտաքին հատկանիշները պետք է նկարագրել այնպիսի տերմիններով, որոնք հասկանալի լինեն ընթերակաների և զննության մյուս մասնակիցների համար: Այնուհետև նշվում է, թե ինչպես է փաթեթավորվել հետքը կամ հետք պարունակող օբյեկտը, ինչպիսի համարակալում, գրառումներ և կնիքներ են դրվել փաթեթի վրա: Արձանագրության մեջ նպատակահարմար է նշել նաև մասնագետի կարծիքը հետքերի առաջացման մեխանիզմի և նման հարցերի վերաբերյալ:

§ 3. ՉԵՌՔԵՐԻ ՀԵՏՔԵՐ

Հանցագործությունների քննության պրոցեսում իր կրիմինալիստիկական արժեքով, հանդիպման հաճախականությամբ և անձի անհատականացման անվիճելի հավաստիությամբ մեծեղծերի մատների հետքերը կարևորագույն տեղ են զբաղեցնում հետքերի շարքում: Այդ հետքերը ավելի դյուրին են դարձնում հանցագործների որոնումն ու հայտնաբերումը: Մի շարք հանցագործությունների դեպքում անհնար է խուսափել տարբեր առարկաների ձեռքի ավուով հպվելուց: Չեռքերի հետքերով հանցագործների նույնացման հնարավորությունը կապված է այդ հետքերի որոշակի հատկությունների հետ:

Մատնահետքերի առանձնահատուկ կառուցվածքը պայմանավորված է մարդու ձեռքի ափի մաշկի ինքնատիպ կառուցվածքով:

Մարդու մաշկը կազմված է երկու հիմնական շերտից. պրոաքին՝ էպիդերմիս և ներքին՝ դերմա: Դերման ունի երկու շերտ՝ ցանցավոր և պտկիկավոր: Ցանցավորը կազմված է ամուր, միացնող հյուսվածքից և կատարում է առավելապես մեխանիկական ֆունկցիա: Պտկիկավոր շերտը տեղավորված է դերմայի մակերեսին և հիմնականում կատարում է էպիդերմիսին սնելու ֆունկցիա: Պտկիկները ունեն տարատեսակ չափեր, բավական բարդ կառուցվածքով: Դրանց բարձրությունը տարբեր է: Մարմնի որոշ մասերում դրանք էպիդերմիսի մակերեսի վրա նկատելի չեն, դրա համար էլ մաշկը հարթ է թվում, իսկ մարմնի այլ մասերում պտկիկները դուրս են գալիս էպիդերմիսի մակերես և կազմում են գծային թմբիկներ սանրիկի տեսքով (պապիլյար գծեր)¹: Այդպիսի գծերով ծածկված են մարդու ձեռքի ափի և ոտքի ներքանի մաշկը: Դերմայում յուրաքանչյուր պտկիկ ունի իր մշտական տեղը: Դրանով է բացատրվում պապիլյար գծերի ռելիեֆի կայունությունը: Նրանք ունեն ուղղագիծ, բեկված ձևեր և միմյանց երբեք չեն հատում: Պապիլյար գծերը միմյանցից բաժանվում են 1,2-ից 0,4 մմ լայնության ակոսներով:

Պապիլյար գծերը և դրանց բաժանող ակոսները միմյանց հետ կազմում են ինքնատիպ նախշեր, որոնք ստացել են պապիլյար նախշ կամ գծանախշ անվանումը:

Պապիլյար գծերը կազմող պտկիկները ուղեղի համապատասխան կենտրոնին հաղորդում են առարկաներին հպվելուց ստացված «տպավո-

¹ Լատիներեն papilla-պտկիկ բառից:

բությունները»։ Դա է նրանց հիմնական ֆունկցիան։ Պտկիկների միջև տեղավորված են ակոսիկներ, որոնք քրտինքը արտաթորելու ֆունկցիա են կատարում։ Քրտնագեղձերը գտնվում են դերմայի խորքում, իսկ քրտինքը արտաթորող խողովակը դուրս է գալիս էպիդերմիսի վրա և առաջացնում ծակոտիներ, որոնց դասավորվածության և ձևի առանձնահատկությունները հաշվի առնելով դրանք օգտագործվում են նույնացման նպատակներով¹։

Մարդու ձեռքի ափի պապիլյար գծանախշերի դասակարգումը առաջինը իրականացվել է 1823թ. չեխ կենսաբան Յ. Է. Պուրկինեի կողմից։ Ըստ նրա դասակարգման գծանախշերը բաժանվում են 9 տիպի։

Հետագայում փորձեր արվեցին կատարելագործելու գծանախշերի դասակարգումը, փորձելով ստեղծել ըստ հնարավորին ավելի մանրամասն դասակարգում։ Օրինակ, անգլիացի անտրոպոլոգ Ֆ. Հալթոնը գծանախշերը բաժանեց 60 դասի։ Սակայն, պրակտիկան ցույց տվեց, որ նման դասակարգումը իրեն չի արդարացնում, որ անհրաժեշտ է դասակարգման ավելի պարզ և մատչելի համակարգ։ Հաշվի առնելով պրակտիկայի պահանջը և կատարելով համապատասխան ուսումնասիրություններ՝ Ֆ. Հալթոնը, գծանախշերի բոլոր տարատեսակները գնահատելով և վերլուծելով, դրանք բաժանեց երեք հիմնական տիպի՝ աղեղ (Arch), հանգույց (Loop), և շրջան (Whorl)։

Անգլիական ոստիկանական չինովնիկ Է. Հենրին լրացրեց այդ դասակարգումը մեկ տիպով՝ կազմության նախշերով։ Այս կերպ առաջացավ լայն տարածում ստացած դասակարգման Հալթոն-Հենրի համակարգը։

Դասակարգման այս համակարգը գերմանացի կրիմինալիստ Ռոշե-րի որոշ լրացումներով օգտագործվում էր հաշվառման նպատակներով։ Այդ նպատակով այն իր կիրառումը գտավ նաև նախահեղափոխական Ռուսաստանում։ 1923 թ. այդ համակարգը որոշ փոփոխությունների ենթարկվեց Պ. Ս. Սեմյոնովսկու կողմից։ Հետագայում, կրիմինալիստիկայի գիտության զարգացմանը համապատասխան, այն կատարելագործվեց²։


Ներկայումս, քննումված է մասների գծանախշերի երեք տիպ աղեղնաձև, հանգուցաձև և շրջանաձև։ Յուրաքանչյուր տիպ լրացուցիչ բաժանվում է տարատեսակների, կախված գծանախշի կառուցվածքային առանձնահատկությունից։

Նշված տիպերի համառոտ բնութագիրը հետևյալն է.

¹ И. Ф. Крылов, Криминалистическое учение о следах, Л., 1976, էջ 68-69

² Նույն տեղում, էջ 69-70։

ա. Աղեղնաձև գծանախշերը, որ համեմատաբար քիչ են հանդիպում, կազմված են պապիլյար գծերի մեկ վտակից: Սկսվելով մատի բարձիկի գծանախշի մեկ եզրից, դրանք կորագծով բարձրանում են և ավարտվում մյուս եզրին, առաջացնելով աղեղ:



Պարզ աղեղնաձև



Խառը աղեղնաձև

Ամենից հաճախ հանդիպողը հանգուցայինն է: Այն կազմված է պապիլյար գծերի երեք վտակներից: Այստեղ ևս պապիլյար գծերը սկսվում են գծանախշի եզրից, բայց չեն հասնում մինչև մյուս եզրը, այլ ծովում են հանգույցի ձևով և ուղղվում դեպի նույն եզրը: Դա նպաստում է, որ գծանախշի մեջ առաջանան մի քանի, մեկը մյուսի մեջ մտած հանգույցներ: Յուրաքանչյուր հանգույց ունի գլխամաս և հիմք: Եթե հանգույցի հիմքերը դարձած են տվյալ ձեռքի բութ մատի կողմը, ապա այդպիսի հանգույցները կոչվում են բութմատնյա, իսկ եթե հիմքերը դարձած են տվյալ ձեռքի ճկույթ մատի կողմը, կոչվում են ճկույթմատնյա¹:

Կենտրոնական հանգույցի գլխամասում գտնվում է գծանախշի կենտրոնը, որը իրենից կարող է ներկայացնել պապիլյար գիծ, դրա կտրվածքներ, կետեր և այլն:

Հնարավոր է, որ գլխամասում նման կենտրոն չլինի: Այդ դեպքում գծանախշի կենտրոնը կլինի կենտրոնական հանգույցի գլխիկը:

Հանգուցային գծանախշի կարևոր տարրը աչապես կոչված դելտան է, որը բացակայում է աղեղնաձև գծանախշում:

Դելտան պապիլյար գծերի վերին և ստորին վտակների բաժանման տեղն է, այն գծերի, որոնք ընդգրկում են կենտրոնական նախշը²: Որպես կանոն, հանգուցային գծանախշում դելտան տեղավորված է հիմքերի հակառակ կողմում:

¹ Ռուսական աղբյուրներում՝ радиальный и ульнарный:

² Գծանախշի դելտան իր անվանումը ստացել է հունարեն այբուբենի չորրորդ՝ դելտա տառից, քանի որ արտաքինապես այն հիշեցնում է այդ տառը:

3. ոչ տարբեր անձանց մոտ, ոչ էլ միևնույն անձի տարբեր մատնե-
րին հնարավոր չէ գտնել երկու կամ ավելի, բոլոր դետալներով միևնույն
գծանախշեր: Գծանախշերից յուրաքանչյուրը խիստ անհատական է ու
անկրկնելի:

Այս հատկությունները կազմում են մատնադրոշմային հետազոտութ-
յունների հիմքը:

Վերևում շարադրված գծանախշերի կառուցվածքը հիմնականն է:
Գրանցում հանդիպում են նաև բազմաթիվ ատիպիկ ձևեր, որոնցից յու-
րաքանչյուրը այս կամ այն հատկանիշով դասվում է հիմնական ձևերից
որևէ մեկին:



Գծանախշի կառուցվածքը

1. վերին վրահ, 2. ներքևի վրահ,
3. ներքին նախշ, 4. դելտա

մատնահետք է, մատի վրա ի՞նչ առանձնահատկություններ կան (սպի,
վնասվածքներ և այլն), տարբեր տեղերում հայտնաբերված մատնահետքե-
րը միևնու՞յն մարդու կողմից են թողնված, չե՞ն թողնված արդյոք հանցագոր-
ծության կատարման մեջ կասկածվող անձի կողմից:

Մատնադրոշմների ուսումնասիրմամբ հնարավոր է պարզել նաև
այնպիսի հարցեր, ինչպիսիք են օրինակ, ըստ գծանախշի չափսերի՝ տա-
րիքը, ոմանց կարծիքով (Է. Լոկար)¹ սեռը¹:

Պապիլյար գծանախշերի
ուսումնասիրումը հնարավորութ-
յուն է տալիս նույնացնել մար-
դուն: Այս հարցը լուծվում է, հա-
մենատելով այն հատկանիշների
ամբողջությունը, որոնք հայտնա-
բերվել են դեպքի տեղում մնա-
ցած հետքի և մեղադրյալից կամ
կասկածյալից փորձառական
ճանապարհով վերցված մատ-
նադրոշմների վրա:

Մատների գծանախշերը պա-
րունակում են կրիմինալիստիկա-
կան մեծ արժեք ունեցող հարուստ
ինֆորմացիա: Մասնավորապես,
գծանախշի դրոշմով հնարավոր է
լուծել այնպիսի հարցեր, ինչպիսիք
են՝ ո՞ր ձեռքով, ո՞ր մատով է թողն-
ված հետքը, այն տղամարդու՞, թե՛
կնոջ մատնահետք է, երեխայի՞

¹ Ст'ю Криминалистика, учебник для ВУЗ-ов, М., 1980 էջ 122:

Ներկայումս փորձեր են արվում ձեռքի ափի հետքերի ուսումնասիրմամբ պարզել նաև ազգությունը և բնածին հիվանդությունները, որոնք փոխանցվում են ժառանգաբար՝ գենային կոդով: Դրանք այնպիսի հիվանդություններն են, ինչպես, օրինակ, հոգեկան և մտավոր խախտումները, Դաունի հիվանդությունը, շիզոֆրենիան, էպիլեպսիան, սրտի բնածին հիվանդությունները, աչքի հիվանդությունները, շաքարային դիաբետը, լյարդի ցեռոզը և այլն¹: Բժշկության բնագավառի գիտնականների կողմից ձեռքերի գծանախշերից սպասվող ինֆորմացիայի զարգացման այս հեռանկարը, անշուշտ, չափազանց մեծ նպաստ կբերի նաև հանցագործությունների դեմ մղվող պայքարի զործին: Թեև նշված հոդվածի բովանդակությունից երևում է, որ այն ոչ թե հեռանկար է, այլ համարյա իրողություն:

Նույնացման նպատակով օգտագործվում են նաև ձեռքի ափի ծավվածքային գծերը: Այդ գծերի ձևերը և ճյուղավորումները այնքան բազմազան են, որ հնարավորություն են տալիս անհատականացնել որոշակի անձին: Այդ գծերը կոչվում են ֆլեքսորային գծեր:

Ձեռքի ափի շրջանում հաճախ հանդիպում են մանր կնճիռներ, որոնք մակերեսային հետքերում արտահայտվում են բաց գծիկների ձևով և գրականության մեջ ու պրակտիկայում ստացել են «սպիտակ գծեր» անվանումը:

Քանի որ ֆլեքսորային և սպիտակ գծերը այնքան կայուն չեն, որքան պապիլյար գծերը, դրա համար էլ նրանք օգտագործվում են որպես լրացուցիչ հատկանիշներ, գծանախշերի հատկանիշների հետ:

Գրականությունից հայտնի են հետազոտությունների տարբեր մեթոդներ, տեխնիկական միջոցներ, ինչպես նաև նույնացման նոր օբյեկտներ: Օրինակ՝ սարք, որը սկանացնում² է մատերի պապիլյար նախշերը անմիջապես ձեռքից և օգտագործում նույնացման նպատակներով: Էլեկտրոնային այդ ապարատը նույնացման համար հիշում է մինչև 300 հազար դրոշմներ և կատարում է դակտիլոսկոպիական վերլուծություն 5 րոպեի ընթացքում:

Առիթը օգտագործենք նշելու, որ անձի նույնացումը կարելի է կատարել նաև աչքի ցանցաթաղանթի սկանացմամբ: Ցանցաթաղանթի արյունատար անոթներից կազմված նախշը, նույնպես անհատական է և կայուն: Բացի այդ, այն ավելի շատ տեղեկատվություն է պարունակում,

¹ Ст'я Медицинская газета, 4 մարտի, 1987թ., №18, Ա. Սելինովի Как на ладони прочитать:

² Սկանացիա-անգլ. Skan բառից, որը նշանակում է տեսադաշտ:

քան պապիլյար նախշը. բովանդակում է 290 անհատականացնող կետեր այն դեպքում, երբ պապիլյար նախշում արտահայտված են 9-ը¹:

Ձեռքերի հետքերի տեսակները

Կախված առաջացման մեխանիզմից՝ ձեռքերի հետքերը լինում են ծավալային և մակերեսային, գունավոր և անգույն, քիչ տեսանելի և անտեսանելի:

Ծավալային հետքերը առաջանում են ձեռքով պլաստիկ նյութերի հպվելիս (պլաստիլին, քարձ ներկ, կարագ, մածկան և այլն): Այս դեպքում հետքը առաջանում է հայելային (մեգատիվ) տեսքով:

Մակերեսային հետքերը առաջանում են հետք ընդունող օբյեկտին ձեռքով հպվելիս: Դրանք առաջանում են ամուր հարթությունների վրա, հետք առաջացնող նյութի շերտավորման կամ շերտազատման հաշվին: Շերտավորման հետքերը առաջանում են, երբ ձեռքը օբյեկտի վրա թողնում է հետք առաջացնող նյութ (քրտնաճարպային արտաթորումներ, արյուն, ներկ և այլն): Շերտազատման հետքերը առաջանում են, երբ ձեռքի ակերը հպվելով արյունոտ, նոր ներկված կամ նման օբյեկտների, անջատում են նրանցից այդ նյութերի մասնիկները:

Մակերեսային հետքերը լինում են անգույն և գունավոր:

Անգույն հետքերը առաջանում են հետք ընդունող օբյեկտի վրա անգույն, քրտնաճարպային գոյացումների շերտավորման հետևանքով:

Գունավոր հետքերը առաջանում են արյունոտ, ներկոտ, քանաքոտ ձեռքերով հետք ընդունող օբյեկտին հպվելիս, դրանց անվանում են նաև տեսանելի հետքեր:

Մակերեսային հետքերը լինում են նաև քիչ տեսանելի և անտեսանելի:

Քիչ տեսանելի հետքերը առաջանում են հարթ, ողորկ մակերեսների վրա: Օրինակ՝ այնպիսի օբյեկտների, ինչպիսիք են ապակին, լաքապատ, արծնապատ առարկաները, պլաստմասսան, երեսապատման սալիկները և այլն: Անտեսանելի հետքերը մնում են այնպիսի մակերեսների վրա, որոնք որոշ չափով ներծծում են քրտնաճարպային գոյացումները. օրինակ՝ թուղթ, սովարաթուղթ, հղկված տախտակ և այլն:

Հանդիպում են նաև մատների դիմամիկ և պերիֆերիկ հետքեր:

¹ Տվյալները վերցված են Криминалистика, уч. для ВУЗ-ов, под. ред. А. Ф. Вольнского, М., 1999, էջ 54

Ներկայումս փորձեր են արվում ձեռքի ափի հետքերի ուսումնասիրմամբ պարզել նաև ազգությունը և բնածին հիվանդությունները, որոնք փոխանցվում են ժառանգաբար՝ գենային կոդով: Դրանք այնպիսի հիվանդություններն են, ինչպես, օրինակ, հոգեկան և մտավոր խախտումները, Դաունի հիվանդությունը, շիզոֆրենիան, էպիլեպսիան, սրտի բնածին հիվանդությունները, աչքի հիվանդությունները, շաքարային դիաբետը, լյարդի ցեռոզը և այլն¹: Բժշկության բնագավառի գիտնականների կողմից ձեռքերի գծանախշերից սպասվող ինֆորմացիայի զարգացման այս հեռանկարը, անշուշտ, չափազանց մեծ նպաստ կբերի նաև հանցագործությունների դեմ մղվող պայքարի գործին: Թեև նշված հողվածի բովանդակությունից երևում է, որ այն ոչ թե հեռանկար է, այլ համարյա իրողություն:

Նույնացման նպատակով օգտագործվում են նաև ձեռքի ափի ծավալաձևային գծերը: Այդ գծերի ձևերը և ճյուղավորումները այնքան բազմազան են, որ հնարավորություն են տալիս անհատականացնել որոշակի անձին: Այդ գծերը կոչվում են ֆլեքսորային գծեր:

Ձեռքի ափի շրջանում հաճախ հանդիպում են մանր կնճիռներ, որոնք մակերեսային հետքերում արտահայտվում են բաց գծիկների ձևով և գրականության մեջ ու պրակտիկայում ստացել են «սպիտակ գծեր» անվանումը:

Քանի որ ֆլեքսորային և սպիտակ գծերը այնքան կայուն չեն, որքան պապիլյար գծերը, դրա համար էլ նրանք օգտագործվում են որպես լրացուցիչ հատկանիշներ, գծանախշերի հատկանիշների հետ:

Գրականությունից հայտնի են հետազոտությունների տարբեր մեթոդներ, տեխնիկական միջոցներ, ինչպես նաև նույնացման նոր օբյեկտներ: Օրինակ՝ սարք, որը սկանացնում² է մատերի պապիլյար նախշերը անմիջապես ձեռքից և օգտագործում նույնացման նպատակներով: Էլեկտրոնային այդ ապարատը նույնացման համար հիշում է մինչև 300 հազար դրոշմներ և կատարում է դակտիլոսկոպիական վերլուծություն 5 րոպեի ընթացքում:

Առիթը օգտագործենք նշելու, որ անձի նույնացումը կարելի է կատարել նաև աչքի ցանցաթաղանթի սկանացմամբ: Ցանցաթաղանթի արյունատար անոթներից կազմված նախշը, նույնպես անհատական է և կայուն: Բացի այդ, այն ավելի շատ տեղեկատվություն է պարունակում,

¹ St'u Медицинская газета, 4 մարտի, 1987թ., №18, Ա. Սելինովի Как на ладони հողվածը:

² Սկանացիա-անգլ. Skan բառից, որը նշանակում է տեսադաշտ:

քան պապիլյար նախշը. բովանդակում է 290 անհատականացնող կետեր այն դեպքում, երբ պապիլյար նախշում արտահայտված են 9-ը¹:

Չեռքերի հետքերի տեսակները

Կախված առաջացման մեխանիզմից՝ ձեռքերի հետքերը լինում են՝ ծավալային և մակերեսային, գունավոր և անգույն, քիչ տեսանելի և անտեսանելի:

Ծավալային հետքերը առաջանում են ձեռքով պլաստիկ նյութերի հպվելիս (պլաստիլին, թարմ ներկ, կարագ, մածկան և այլն): Այս դեպքում հետքը առաջանում է հայելային (նեգատիվ) տեսքով:

Մակերեսային հետքերը առաջանում են հետք ընդունող օբյեկտին ձեռքով հպվելիս: Դրանք առաջանում են ամուր հարթությունների վրա, հետք առաջացնող նյութի շերտավորման կամ շերտազատման հաշվին: Շերտավորման հետքերը առաջանում են, երբ ձեռքը օբյեկտի վրա թողնում է հետք առաջացնող նյութ (քրոմաճարպային արտաթորումներ, արյուն, ներկ և այլն): Շերտազատման հետքերը առաջանում են, երբ ձեռքի ակերը հպվելով արյունոտ, նոր ներկված կամ նման օբյեկտների, անջատում են նրանցից այդ նյութերի մասնիկները:

Մակերեսային հետքերը լինում են անգույն և գունավոր:

Անգույն հետքերը առաջանում են հետք ընդունող օբյեկտի վրա անգույն, քրոմաճարպային գոյացումների շերտավորման հետևանքով:

Գունավոր հետքերը առաջանում են արյունոտ, ներկոտ, թանաքոտ ձեռքերով հետք ընդունող օբյեկտին հպվելիս, դրանց անվանում են նաև տեսանելի հետքեր:

Մակերեսային հետքերը լինում են նաև քիչ տեսանելի և անտեսանելի:

Քիչ տեսանելի հետքերը առաջանում են հարթ, ողորկ մակերեսների վրա: Օրինակ՝ այնպիսի օբյեկտների, ինչպիսիք են ապակին, լաքապատ, արծնապատ առարկաները, պլաստմասսան, երեսապատման սալիկները և այլն: Անտեսանելի հետքերը մնում են այնպիսի մակերեսների վրա, որոնք որոշ չափով ներծծում են քրոմաճարպային գոյացումները. օրինակ՝ թուղթ, ստվարաթուղթ, հղկված տախտակ և այլն:

Հանդիպում են նաև մատների դիմամիկ և պերիֆերիկ հետքեր:

¹ Տվյալները վերցված են Криминалистика, уч. для ВУЗ-ов, под. ред. А. Ф. Вольнского, М., 1999, էջ 54

Հետքերի հայտնաբերումը

Մասների ծավալային հետքերի հայտնաբերումը իրենից որևէ դժվարություն չի ներկայացնում: Այդ նպատակի համար բավական է որոշակի օբյեկտների ուշադիր զննում, իսկ երբեմն էլ թեք ընկնող ճառագայթների կիրառում, որը, ինչպես նշվել է վերևում, առաջացնում է սովետրային պատկեր:

Ընդհանրապես, ձեռքերի հետքերի որոնումը պետք է կատարել, ելնելով դեպքի բնույթից և տեղից (նրա տեղադրությունից, պայմաններից և այլն): Այնպիսի դեպքի տեղի զննության ժամանակ, ինչպիսիք են սենյակը, բնակարանը, ավտոտնակը, խորդանոցը և այլն, անհրաժեշտ է հատուկ ուշադրության արժանացնել այն օբյեկտներին, որոնց հանցագործը դիպել է կամ կարող էր դիպել (դռներ, բռնակներ, ապակիներ, լուսամուտագոգեր և այլն): Անհրաժեշտ է ճիշտ կողմնորոշվել, թե որ ուղղությամբ է շարժվել հանցագործը, ինչ առարկաների կարող էր ձեռք տված լինել և այլն:

Քիչ տեսանելի հետքեր որոնելիս անհրաժեշտ է օգտվել թեք ընկնող ճառագայթներից: Որոշ հեղինակներ գտնում են, որ դրանից առաջ անհրաժեշտ է սենյակը մթնեցնել և որոնումը կատարել մթության մեջ¹: Մեր կարծիքով նման վիճակը պրակտիկորեն և տակտիկական առումով հնարավոր չէ, քանի որ կապված է մյուս հետքերի ոչնչացման կամ փչացման վտանգի, ինչպես նաև դեպքի տեղի իրադրության արհեստական փոփոխման հետ, որը կարող է առաջանալ խարխափելով աշխատելու հետևանքով: Բացի այդ, մթության մեջ կատարվող քննչական գործողությունը կզրկի ընթերականերին և զննության մյուս մասնակիցներին հետևելու քննիչի գործողությունների ընթացքին, այսինքն՝ կառաջացնի դատավարական նորմի խախտում: Կրիմինալիստիկական տեխնիկայի մշակված հնարքներն ու հանձնարարականները, ինչպես նաև պրակտիկական վկայում են, որ դեպքի տեղը մթնեցնելու կարիքը նման դեպքերում չի զգացվում, քանի որ բավարար լուսավորության պայմաններում լրացուցիչ լուսավորությունը (թեք ընկնող ճառագայթները) հնարավորություն տալիս են հայտնաբերելու քիչ տեսանելի մատանահետքերը:

Ողորկ առարկաների վրա մնացած մատանահետքերը կարելի է հայտնաբերել նաև ուղղահայաց (ռեֆլեկտորային) լուսավորությամբ: Թափանցիկ առարկաների վրա մնացած հետքերը, բացի նշված մեթոդներից, ուսումնասիրվում են նաև թափանցող լույսի օգնությամբ:

¹ И. Ф. Крылов, Криминалистическое учение о следах, Ленинград, 1976, էջ 79

Լուսային ճառագայթներով հայտնաբերված հետքերը նպատակահարմար է անմիջապես լուսանկարել: Որպես կանոն, ինչպես նշեցինք վերը, բոլոր այն դեպքերում, երբ հայտնաբերված քրտնաճարպային մատնահետքերը հմարավոր է վերցնել հետքը պարունակող օբյեկտի հետ, պետք է վերցնել օբյեկտը՝ առանց մեխանիկական մեթոդների դիմելու, քանի որ վերջին դեպքում կարող են ոչնչանալ կամ վնասվել որոշ էական հատկանիշներ:

Մեխանիկական մեթոդները իրենցից ներկայացնում են հետքի մշակումը գունավորող նյութերով, որոնք հետքի նյութի հետ կապվում են մեխանիկորեն և նրա հետ քիմիական ռեակցիայի մեջ չեն մտնում: Այդ նպատակի համար քննչական ճամպրուկում կան գրաֆիտի, ալյումինի, երկաթի և այլ փոշիներ:

Փոշին պետք է լինի շատ մանր, չոր: Հետքը գունավորելու համար շատ փափուկ մագերով վրձինի վրա վերցվում է փոքր քանակությամբ փոշի և քսվում գունավորվող մակերեսին: Փոշին կաշում է քրտնաճարպային գոյացումներին և երևակում հետքը: Ավելորդ փոշին հեռացվում է փչելով կամ թոթափելով:

Գոյություն ունեն մաև հետքերը գունավորելու քիմիական մեթոդներ, որոնցից են օրինակ՝ յոդի գոլորշիներով ծխահարումը, քրտնաճարպային հետքի մշակումը ազոտաթթվական արծաթով, ցինիդրինով և այլն:

Հետքի հայտնաբերման կամ գունավորման համար կիրառվող այս կամ այն մեթոդի ընտրությունը կախված է մի շարք պայմաններից, օրինակ՝ հետք ընդունած օբյեկտի մակերեսի որակից և հատկություններից, հետքի վաղեմությունից, հետքը հայտածելու համար առկա սարքերից և նյութերից, այս կամ այն նյութերով աշխատելու քննիչի հմտությունից, կարողությունից և այլն:

Ինչպես նշեցինք, մատների հետքերի հայտնաբերման էֆեկտիվ միջոց է դրանք յոդի գոլորշիների ազդեցությամբ ենթարկելը, որն իրականացվում է յոդի բյուրեղներ պարունակող ապակյա խողովակի միջոցով: Սակայն, յոդի գոլորշիացման բարձր ընդունակության հետևանքով, ծխահարումից 5-10 րոպե հետո դրանք գունաթափվում են և չեն երևում:

Յոդի գոլորշիներով հայտնաբերված մատների հետքերը տարբեր մակերեսներից պատճենահանելու համար լավագույն միջոց կարող է ծառայել ֆոտոթուղթը, որը մշակվում է հետևյալ կերպ.

Ֆիքսված, լավ լվացված և չորացված փայլուն ֆոտոթուղթը մշակվում է 0,2 տոկոսանոց օրթոտոլիդինի լուծույթում (վերջինս կարելի է փոխարինել բենզինի քացախաթթվային լուծույթով) և չորացվում: Յոդի գոլորշիներով հայտնաբերված մատնահետքերը թղթի վրա պատճենահա-

նելու համար պետք է այն ջրով թրջել, գոիչ թղթով հեռացնել ջրի կաթիլները և ավելորդ խոնավությունը, որից հետո էմուլսային շերտը զգուշությամբ սեղմել հետքին: Պատճենահանված հետքը ստանում է վառ կապտավուն գունավորում:

Չեռքի քրտնաճարպային թարմ հետքերը, որոնք մնացել են տարբեր հարթությունների վրա (ապակու, նրբատախտակի, թղթի, ստվարաթղթի, հախճապակու, երեսապատման սալիկների և այլն) լավ երևակվում են երկաթի փոշու միջոցով՝ «մագնիսական վրձիմի» օգնությամբ: Ջրածնով վերականգնված երկաթի փոշին վերցվում է մագնիսի վրա և տարվում հետքի վրայով, տարբեր ուղղություններով: «Մագնիսական վրձիմի» կիրառումը բացառում է հետքի սվաղվածությունը: Երկաթի փոշու միջոցով մշակված հետքը լավ պատճենահանվում է հակազդակային թղթի վրա, որն իրենից ներկայացնում է ֆիքսված, լվացված, չորացված և 10 տոկոս աղաթթվով խոնավացված ֆոտոթուղթ: Չտիչ թղթի միջոցով ավելորդ խոնավության վերացումից հետո ֆոտոթուղթը էմուլսիայի կողմով հպվում է երկաթի փոշիով գունավորված հետքին: Հետքի դրոշմը սկզբում ստանում է մուգ, իսկ որոշ ժամանակ անց՝ հստակ վարդագույն երանգ:

Թղթի, ստվարաթղթի վրայից մատնահետքեր հայտնաբերելու համար օգտագործվում է նաև ազոտաթթվական արծաթը:

Հետազոտվող թուղթը ծածկվում է 5 տոկոսանոց ազոտաթթվական արծաթի լուծույթով: Մաշկապտիկներից արտաթորվող քրտինքի մեջ պարունակող քլորական նատրիումը ռեակցիայի մեջ է մտնում ազոտաթթվական արծաթի հետ, որի արդյունքում ստացվում է քլորական արծաթ: Լրիվ չորանալուց հետո հետազոտվող թուղթը ենթարկվում է լույսի ազդեցության: Լավ արդյունք է տալիս արևի ուղղահայաց ճառագայթների ազդեցությունը: Լուսային ճառագայթների ազդեցության տակ քլորական արծաթը վերածվում է մետաղական արծաթի, և գծանախշը կազմող պապիլյար գծերը սև գույնով հստակ երևում են:

Մեթոդի արդյունավետությունը կայանում է նրանում, որ քլորական արծաթի բարձր զգայնությունը հնարավորություն է տալիս պարզորոշ երևակել ամենաթույլ արտահայտված մատնահետքերը: Մեթոդը կիրառելիս պետք է զգույշ լինել, քանի որ երբեմն քլորական արծաթը այնքան խորն է ներծծվում թղթի մեջ, որ գծանախշը ստանում է մոխրա-շագանակագույն բծի ձև:

Այն փաստաթղթերից, որոնց վրա կան բազմազույն նկարներ կամ պաշտպանական ցանց (դրամանիշեր, արժեթղթեր, անձնագրեր, վիճակախաղի տոմսեր և այլն), նպատակահարմար է մատնահետքերը հայտածել այնպիսի նյութերով, որոնք ուլտրամանուշակագույն ճառագայթների տակ լուսարձակում են՝ առաջացնելով ֆլուորեսցենցիայի և ֆոսֆո-

րեւցեմցիայի երևույթներ: Այդպիսի նյութերից են, օրինակ՝ անտրացենը (բյուրեղային ածխաջրածին), ծծմբական ցինկը և այլն:

Ապակու վրայից հետքերը հայտածելու համար ամենից արդյունավետ կիրառում ունեն պղնձի օքսիդը մրի հետ, ցինկի օքսիդը, արճճի օքսիդը, ալյումինի, երկաթի փոշիները և այլն:

Հախճապակու, ճենապակու, մարմարի վրայի մատնահետքերը գունավորվում են կարմիր սուսրով (սուրիկ), ցինկի օքսիդով, պղնձի օքսիդով, բևեկնախեցի հետ (1:20 հարաբերությամբ):

Լաքապատված փայտի վրայից մատնահետքերը հայտածվում են ցինկի օքսիդով բևեկնախեցի հետ, պղնձի օքսիդով, սպիտականերկով (բելիլա), սուսրով, մետաղի փոշիով և այլն՝ ելնելով հետք ընդունած օբյեկտի գույնից:

Հղկված, բայց չներկված փայտի վրա լավ արդյունք է տալիս հետքի գունավորումը ազոտաթթվական արծաթով, ինչպես նաև յոդի գոլորշիներով ծխահարումը:

Մետաղների վրայից մատնադրոշմները կարելի է հայտածել այն դեպքերում, երբ դրանց մակերեսը հղկված է, միկելապատված, քրոմապատված, ներկված յուղաներկով կամ արծնապատված է: Հայտածումը կատարվում է վերը նշված փոշիներով, կախված մետաղը ծածկող նյութի գույնից:

Այդ փոշիներով են մատնահետքերը հայտածվում նաև պլաստմասսայի, ռետինի, կաշվի վրայից:



Ֆիանակրիլատի¹ փոշիով մշակված անրեսանելի քրոմաճարպային մալրմահետքի պատկերը



Ֆիանակրիլատով և Ռոդամին 64 ֆլյուորեսցենտացնող ներկանյութով մշակված մալրմահետքը

¹ Ֆիանին – հունական kyanos – կապուտակ, երկնագույն: Օրգանական միացություն են, ներկիչներ, որոնք ունեն պայծառ, մաքուր գույն: Կիրառվում են գունավոր լուսանկարչությունում, որպես սենսիբիլատորներ:

Հայտնաբերված հետքերի ֆիքսումը և վերցնումը

Հայտնաբերված մատնադրոշմների ֆիքսումը ձեռքերի հետքերի հետ տարվող աշխատանքի կարևորագույն փուլ է, քանի որ, եթե դրանք հմտորեն չամրապնդվեն և համապատասխան կանոնների պահպանմամբ չվերցվեն, կդադարեն ինֆորմացիայի կրող լինելուց և կկորցնեն իրենց ապացուցողական պոտենցիալ արժեքը:

Նկատի ունենալով վերոհիշյալը, կրիմինալիստիկան մշակել է դրանք ֆիքսելու և վերցնելու որոշակի կանոններ, տեխնիկական միջոցներ և հնարքներ:

Մատնահետքերի ֆիքսման հիմնական եղանակներն են, ինչպես նշվեց վերևում, լուսանկարահանումն ու հայտնաբերված մատնադրոշմների փոխադրումը հետքապատճենահան թաղանթների վրա:

Լուսանկարչական եղանակը հնարավորություն է տալիս պատկերել մատնադրոշմի բոլոր դետալները և ֆիքսել այն, որպես նույնացման համար պիտանի օբյեկտ:

Համապատասխան որակի երաշխիքը ապահովելու նպատակով կատարվում են մի քանի լուսանկարներ¹:

Փոշիների միջոցով հայտնաբերված մատնահետքերը ֆիքսելու հաջորդ կարևոր միջոցը դրանց փոխադրումն է հետքապատճենահան թաղանթի վրա: Այդ նպատակի համար գոյություն ունեն հետքապատճենահան թաղանթներ, որոնք կան քննչական ճամպրուկում: Դրանք թողարկվում են մուգ ու բաց գույների և կիրառվում են՝ կախված հետքը հայտածող նյութի գույնից: Օգտագործվում են նաև հիպոսուլֆիդի մեջ մշակված լուսանկարչական ժապավենը և ֆոտոթուղթը: Հետքը պատճենահանվում է պատճենահան թաղանթի վրա միայն այն դեպքում, երբ հետք ընդունած օբյեկտը կամ դրա համապատասխան մասը վերցնել հնարավոր չէ:

Փոշիներով հայտնաբերված հետքերը կարող են պատճենահանվել նաև սիլիկոնային միացություններով: Այդ նպատակի համար երևակված հետքի վրա լցվում է միացությունը և վերևից սեղմվում օրգանական հարթ ապակիով: Այս մեթոդը հնարավորություն է տալիս հետքը պատճենահանել նաև անհարթ մակերեսներից:

* * *

Քանի որ մատների գծանախշերի հատկանիշների ամբողջությամբ անհատականության և դրա հետ կապված՝ այն բողած անձանց նույնաց-

¹ Մատնահետքերի լուսանկարահանման տեխնիկայի և մեթոդների մասին մանրամասն տե՛ս սույն աշխատանքի «Կրիմինալիստիկական (ղատական) լուսանկարչություն» գլխում:

ման հնարավորությունները հանրահայտ են, հանցագործները, երբեմն մերկացվելուց խուսափելու նպատակով, նախընտրում են գործել ձեռնոցներով:

Ռուսաստանի կրիմինալիստները հանցագործությունների բացահայտման գործում եղած այդ արգելքը վերացնելու նպատակով երկար ժամանակ զբաղված էին ձեռնոցների թողած հետքերով և դրանցով ձեռնոցները նույնացնելու հնարավորությունների ուսումնասիրմամբ:

Կատարված աշխատանքները դրական արդյունքներ տվեցին:

Այդ հարցը զբաղեցնում էր նաև շատ այլ երկրների կրիմինալիստների: Շվեդացի կրիմինալիստներ Ա. Սվենսսոնը և Օ. Վեռդելը իրենց «Հանցագործությունների բացահայտումը» գրքում դեռևս 40 տարի առաջ պնդում էին, որ ձեռնոցների հետքերը նույնքան արժեքավոր են նույնացման համար, որքան մատնադրոշմները: Նրանք գրում են. «Ձեռնոցների դրոշմները կարող են լինել նույնքան արժեքավոր, որքան և մատնադրոշմները, որի համար էլ միշտ օգտակար է այդ դրոշմները ենթարկել զննության և ֆիքսել առավել մանրամասն հետազոտության համար, եթե իհարկե նրանք... չեն մնացել մակերեսի վրա ձեռնոցով պաշտպանված սահող ձեռքերից¹»:

Ձեռնոցների թողած դրոշմները նպատակահարմար է վերցնել այն առարկայի հետ, որի վրա մնացել են: Շատ դեպքերում ձեռնոցների անտեսանելի հետքերը հնարավոր է հայտնաբերել այլումինի, բելիլայի (կապարային սպիտականերկ) կամ այլ փոշիներով:

Տրիկոտաժե ձեռնոցների նույնացումը կատարվում է այն հատկանիշներով, որոնք կապված են տրիկոտաժային նյութի, հյուսքի եղանակի առանձնահատկությունների հետ: Կաշվե ձեռնոցները նույնացնելիս օգտագործվում են այն հատկանիշները, որոնք կապված են կաշվի վրա եղած ճաքերի, կնճռոտվածության, ծակոտիների հետ:

* * *

Մատնահետքերը հայտնաբերելուց, ֆիքսելուց, վերցնելուց և նախնական զննության ենթարկելուց հետո, բնականաբար, անհրաժեշտություն է առաջանում պարզել հետքը թողած անձին: Այդ նպատակի համար նշանակվում է մատնադրոշմային փորձաքննություն:

Փորձաքննությունը իրականացվում է այն իդենտիֆիկացման հատկանիշների ուսումնասիրությամբ, որոնք բնութագրում են գծանախշի կառուցվածքի առանձնահատկությունները ամբողջությամբ:

¹ Տե՛ս А. Свенссон, О. Вендель, Раскрытие преступлений, М., 1957, էջ 66:

Գծանախշի ընդհանուր հատկանիշների թվին են դասվում նախշի տեսակը (աղեղնաձև, հանգուցաձև, շրջանաձև), նախշի առանձին մասերում դելտապապիլյար գծերի քանակը, այդ գծերի ուղղությունը, դելտաների քանակը, նրանց տեղադրությունը և այլն:

Պապիլյար գծանախշի առանձնահատկություններից են պապիլյար գծի սկիզբը և վերջավորությունը, ընդհատումները, կոզյակները, բեկվածքները, ցցվածքները, ծռնվածքները և այլն:

Փորձագետի եզրակացությունը կազմվում է հայտնաբերված հատկանիշների որակական և քանակական վերլուծության հիման վրա, հաշվի առնելով դրանց հանդիպման հաճախականությունը:

§ 4. ՄԱՐԴՈՒ ՈՏՔԵՐԻ ՀԵՏՔԵՐ

Զննչական պրակտիկայում ոտքերի հետքերը նպաստում են պարզաբանելու հանցագործության շատ հանգամանքներ: Այդ թվում. հանցագործության կատարման եղանակը, հանցագործությանը մասնակցած անձանց թիվը, հանցագործի սեռը, մտավոր հասակը, տարիքը, քաշը, ֆիզիկական որոշ պակասություններ, հանցագործի շարժման ուղղությունը, վազե՞լ է նա, թե՛ քայլել, որտեղ է կանգ առել, ծանր բեռ կրե՞լ է, թե՛ ոչ, որտեղի՞ց է մտել շինություն, ինչպիսի՞ կոշիկներով է եղել, կոշիկի և բոբիկ ոտքի այն առանձնահատկությունները, որոնք հնարավորություն կտան նույնացնել կոշիկը կամ անձին (բոբիկ ոտքի հետքի դեպքում) և այլն:


Հետքաբանական հետազոտման օբյեկտներ են հանդիսանում ինչպես կոշիկի, այնպես էլ բոբիկ և գուլպա հագած ոտքերի հետքերը: Կախված առաջացման պայմաններից և մեխանիզմից, մարդու ոտքերի հետքերը կարող են լինել՝ *ծավալային, մակերեսային, սրատրիկ, դինամիկ, լոկալ, պերիֆերիկ*:

Ծավալային հետքերը մնում են փխրուն մակերեսների վրա (փափուկ հողի, ավազի, ձյան): Այս հետքերի հայտնաբերումը որևէ դժվարության հետ չի կապվում:

Մակերեսային հետքերը առաջանում են կոշիկի ներբանի կամ ոտնաթաթի ազդեցությամբ հետք ընդունող օբյեկտի մակերեսային փոփոխությունների հաշվին: Դրանց առաջացման ուղիները երկուսն են՝ առաջին դեպքում ներբանից կամ ոտնաթաթից որոշ նյութեր մնում են հետք ընդունող օբյեկտի վրա (շերտավորման հետքեր), երկրորդ դեպքում հետքը առաջանում է, երբ ներբանը կամ ոտնաթաթը հետք ընդունող օբյեկտի մակերեսային բարակ շերտով անցատում է որոշ նյութեր (թարմ ներկած, փոշոտված հատակից՝ շերտազատման հետքեր):

Մրայրիկ հեղքերը առաջանում են այն դեպքերում, երբ անձը կանգնած է կամ քայլելիս վերջին շարժումը դադարել է, և հետքի առաջացման վերջում կոշիկի ներբանը կամ ոտնաթափը չի շարժվում: Այս դեպքում ներբանի և ոտնաթափի առանձնահատկությունները լավ են արտահայտվում:

Ոտքի *դինամիկ հեղքերը* առաջանում են սահքի ժամանակ: Այս դեպքում հետք առաջացնող օբյեկտի առանձնահատկությունները համարյա չեն արտահայտվում: Այս հետքերը նույնացման համար պիտանի կարող են լինել միայն այն դեպքում, երբ կոշիկի ներբանի վրա կան որոշակիորեն արտահայտված ամուր ցցվածքներ (օրինակ՝ մեխերի գլխիկներ): Բոլոր դեպքերում այդ հետքերը պետք է անպայման ֆիքսել և վերցնել, քանի որ դրանք կարող են օգտակար լինել քննվող գործի որոշ այլ հանգամանքներ պարզաբանելու համար, որ նշված են սույն պարագրաֆի սկզբում: Այդտեղ նշված հարցերի մեծ մասի պատասխանը կարելի է ստանալ, եթե դեպքի տեղում հայտնաբերվի *հեղքուղի* (ոտնահետքերի ուղյակ), այսինքն՝ հաջորդաբար արտահայտված հետքերի ամբողջականություն: Հետքուղին ուսումնասիրելիս պետք է առանձնակի ուշադրության արժանացնել այն տարրերին, որոնք բնութագրում են քայլվածքի առանձնահատկությունները, շարժման ուղղությունը, քայլի գիծը, քայլի երկարությունը, լայնությունը, քայլի անկյունը, ոտնաթափի շրջադարձը:



Հեղքուղու տարրերը՝ AB- աջ ոտքի քայլի երկարությունը, BB- ձախ ոտքի քայլի երկարությունը, DE- քայլի լայնությունը, $\alpha\beta$ - ներբանների շրջադարձի անկյունները, ox- քայլի ուղղությունը

Նշված գծագրում ցույց տրված չափումները հնարավորություն կտան պարզել հետքուղու տարրերը:

Կոշիկի հետքերով, որ համեմատաբար հաճախ է հանդիպում, կարելի է դատել նրա ներբանի մասին՝ չափսերի, ձևի, կրունկը թափին միանա-

լու ձևի, հարթ է, թե նախշերով, ինչ եղանակով է ներբանը ամրացված կոշիկին (մեխված, կարված և այլն): Թվարկված ընդհանուր հատկանիշները հնարավորություն են տալիս պարզել կոշիկի համարը, ձևը, այսինքն, պարզել խմբային պատկանելությունը:

Մասնավոր հատկանիշները, որոնց ամբողջությունը հնարավորություն է տալիս անհատականացնել կոշիկը, ներբանի մանր առանձնահատկություններն են, վնասվածքները, կարկատանները և այլն:

Բորիկ ոտնաթափի ուսումնասիրմամբ հնարավոր է կարծիք կազմել նրա ձևի և ամբողջական չափի մասին, մատների ձևի և չափսերի մասին: Մատների չափսերը ուսումնասիրելիս, պետք է նկատի ունենալ, որ մարդու կանգնած վիճակում ոտնաթափի մատնահետքերը ավելի կարճ են արտահայտվում հետքում, քան քայլելիս: Դա բացատրվում է նրանով, որ քայլելիս ոտքերի մատները բացվում են: Բորիկ ոտնաթափի կառուցվածքը բնութագրող հատկանիշներից է ոտնակամարի բարձրությունը:

Որքան բարձր է ոտնակամարը, այնքան նեղ է ոտնաթափի միջնամասը: Շատ բարձր կամարի դեպքում միջնամասի հետքը ընդհանրապես չի արտահայտվում, արտահայտվում են միայն կրունկի և քաթի հետքերը: Եվ հակառակը, ցածր կամարի դեպքում միջնամասում առաջանում է լայն հետք, կամ, հարթաթաթոթյան դեպքում՝ շատ լայն հետք:

Բորիկ ոտքի հետքով անձի նույնացման համար անհրաժեշտ է, որ հետքում արտահայտվեն պապիլյար գծերը, որոնց ուսումնասիրումը կատարվում է նույն մեթոդներով, ինչ մատների գծանախշերի դեպքում:

Գուլպա հագած ոտքի հետքերը ուսումնասիրվում են միայն ընդհանուր հատկանիշների առումով, որը և հնարավորություն է տալիս պարզել խմբային պատկանելությունը: Անձի նույնացման միակ հնարավորությունը կարող է առաջանալ այն դեպքում, երբ գուլպայի վնասվածքից հետք ընդունող օբյեկտի վրա արտատապվել են պապիլյար գծերը: Իսկ այն դեպքերում, երբ հետքը պարունակում է գուլպայի հյուսվածքի առանձնահատկություններ, ապա դրանցով հնարավոր է նույնացնել գուլպան (գործվածքի ձևը, հանգույցներ, վնասվածքներ, վերալիցքի յուրահատկություն և այլն):

Ոտքերի հետքերի հայտնաբերումը և ֆիքսումը

Տեղազննության ժամանակ ոտնահետքերը պետք է որոնել նախ հանցագործի՝ դեպքի տեղ մուտք գործելու և այնտեղից հեռանալու հնարավոր ուղղություններում: Օրինակ՝ դռան մոտ, հատակին փոկած գորգի վրա, պատուհանի գոգին, նրա կողմից դրված աստիճանի շրջանում և այլն:

Ծավալային հետքերի հայտնաբերումը հատուկ հնարքներ չի պահանջում, որովհետև նրանք պարզ երևում են: Թույլ երևացող, մակերեսային հետքերը հայտնաբերելու համար օգտագործվում են թեք ընկնող ճառագայթներ: Անտեսանելի հետքերը, որոնք փոշու կամ մման նյութերի շերտավորման կամ շերտազատման արդյունք են և մնացել են գորգերի, բազմոցի և մման օբյեկտների վրա, երբեմն հնարավոր է դառնում-տարբերել միայն կաշուն (օրինակ՝ պատճենահան) թաղանթի կամ խոնավ ֆոտոթղթի վրա տեղափոխելով:

Կոշիկի մաքուր ռետինե ներբանից մնացած անտեսանելի հետքերը լինուելումի, ներկված փայտի, բոթի, կերամիկական սալիկների և մման օբյեկտների վրայից հայտնաբերվում են մագնիսական վրձինի օգնությամբ, երկաթի օքսիդի փոշով մշակելու միջոցով, որոնք այնուհետև պատճենահանվում են հետքապատճենահան թաղանթի վրա: Իսկ եթե նշված հետքերը այս եղանակով հայտնաբերվել են ծակոտկեն հարթության վրա, կարելի է ամրացնել յոդի գոլորշիների ազդեցությամբ ենթարկելով:

Ոտքերի հետքերի ֆիքսման լավագույն միջոց է լուսանկարումը: Ընդհանրապես, խորհուրդ է տրվում ոտնահետքերի ֆիքսումը սկսել լուսանկարումից, քանի որ այն կապված չէ հետքերը վնասելու կամ ոչնչացնելու հետ: Նպատակահարմար է լուսանկարման համար ընտրել այն հետքերը, որոնցում ավելի լրիվ և հստակ են արտահայտված հետք առաջացրած օբյեկտի (կոշիկի, բոթիկ ոտքի) անհատական առանձնահատկությունները: Լուսանկարելիս պետք է պահպանել մասշտաբային լուսանկարման կանոնները (տե՛ս «Կրիմինալիստիկական (դատական) լուսանկարչություն» գլխում): Հետքուղին սովորաբար լուսանկարվում է կամ գծային համայնապատկերի եղանակով, կամ խորության մասշտաբով:

Պինդ մակերեսների (փայտյա հատակի, պատուհանագոգի) վրա մնացած ծավալային հետքի հատվածները (մեխերի գլխիկների և այլնի) ամենից լավ կարելի է կաղապարել սիլիկոնային միացություններով (Y-4-21): Այդ նպատակի համար «Y-4» մածուկի անհրաժեշտ չափին ավելացվում է 6 տոկոսանոց N21 կատալիզատոր և խառնված ու միատարր մասսայի վերածված միացությունը լցվում է կաղապարվող հետքի վրա: Սեյսակային ջերմաստիճանում 20-25 րոպեի ընթացքում այն պոլիմերացվում է: Ոտքերի ծավալային հետքերը կաղապարելու համար ավանդական նյութ է համարվում գիպսը: Գիպսե կաղապար ստանալու համար անհրաժեշտ է մաքուր, մանր, չոր գիպս: Պատրաստվում է գիպսի շաղախ, որը լցվում է հետքի վրա երկու էտապով: Առաջին շերտը զգուշությամբ (մի անկյունից) հետքի վրա լցելուց հետո, ամրության համար նրա վրա դրվում են փայտյա կամ այլ ձողիկներ, որից հետո լցվում է շաղախի

երկրորդ շերտը: Գիպսե կաղապար պատրաստելուց առաջ անհրաժեշտ է պինցեռի միջոցով հեռացնել հետքի վրա եղած ավելորդությունները (տերև, թրթի, ծղոտի կտորներ և այլն) և լուսանկարել հետքը՝ մասշտաբային նկարահանման կանոններով:

Եթե հետքը մնացել է սորուն նյութի վրա (ավազ, չոր ցեմենտ, փոշի, ալյուր և այլն), նպատակահարմար է մինչև գիպսե կաղապար պատրաստելը հետքը ամրապնդել: Դրա համար օգտագործվում է խարամի և սպիրտի 6 տոկոսանոց լուծույթը, ցելուլոզիդի ագետոնային (2,5 տոկ.) լուծույթը, որը հեղուկցրիչի միջոցով ցանվում է հետքի վրա, որից հետո միայն պատրաստվում է հետքի կաղապարը:

Սակայն նշված մեթոդները հնարավորություն չեն տալիս անմիջապես կանոններն վերցնելու աղապարի հետքերը: Կաղապարների պատրաստման մեթոդը զերծ չէ այնպիսի թերություններից, որոնք կապված են մանր առանձնահատկությունները պատճենավորելու անհնարինության կամ դրանց շեղումներով պատճենավորելու հետ:

Հետքերը անմիջականորեն վերցնելու համար ներկայումս կիրառվում է *պերբլորվինիլի խեժը*: Այն սպիտակ, խոշոր հատիկային փոշի է, որը հեշտությամբ լուծվում է ագետոնում և լայնորեն կիրառվում է սինթետիկ լաքերի, ներկերի արտադրության մեջ: Հետքերը ամրապնդելու համար պատրաստվում է 6-8 տոկոսանոց պերբլորվինիլային խեժի լուծույթ՝ ագետոնում:

Հետքը մշակվում է ռետինե տանձիկ ունեցող հեղուկցրիչի միջոցով: Ոտքի մեկ հետքի մշակման համար պահանջվում է մոտ 100 գ. լուծույթ:

Հետքը մասշտաբային եղանակով լուսանկարելուց հետո, ստուգվում է հեղուկցրիչի սարքինությունը, այսինքն՝ փչում է արդյոք խիտ ցողի ձևով:

Հեղուկցրիչը պետք է պահել հետքից 40-50 սմ հեռավորության վրա և փչել ոչ թե անմիջականորեն հետքի վրա, այլ դեպի վեր, այնպես, որ լուծույթը հանդարտ, ցողի ձևով նստի հետքի վրա:

Փչելիս ագետոնում լուծված պերբլորվինիլը նստում է հետքի մակերեսին, միաձուլվում է հետք ընդունող նյութի (ավազի, ալյուրի և այլն) մասնիկները, դրանք ամրացնում է միմյանց: Արտաքին շերտի ամրացումից հետո հեղուկցրիչը մոտեցվում է հետքին՝ նրա մակերեսը լուծույթով առավել խիտ և հավասարաչափ ներծծելու համար:

Կախված օդի ջերմաստիճանից և խոնավությունից՝ 20-30 րոպեից հետո հետքը կարելի է վերցնել:

Եթե ոտքերի հետքերը մնացել են այնպիսի նյութերի վրա ինչպիսիք են, օրինակ, թափված թուղթը, ստվարաթուղթը, թիթեղը և այլն, ապա,

պերբլորվինիլով մշակելուց հետո, նպատակահարմար է դրանք, վերցնել այն առարկայի հետ, որի վրա հայտնաբերվել են:

Պերբլորվինիլի ացետոնային լուծույթը օգտագործվում է նաև կեղտոտված կոշիկից փայտե հատակին, լինոլեումի վրա և նման տեղերում բողմված հետքերը պատճենահանելու համար:

Այդ հետքերը ֆիքսվում են նախօրոք պատրաստված հետքապատճենահան թաղանթի վրա: Այդ նպատակի համար շատ հարմար են մեծ չափսի ֆոտոթղթերը:

Այն հետքերը, որոնք առաջացել են մուգ գույն ունեցող փոշու կամ կեղտի մասնիկներից, պատճենահանվում են սպիտակ թղթի վրա, իսկ այն հետքերը, որոնք առաջացել են սպիտակ մասնիկներից (ալյուր, կավիճ, գաջ և այլն), պատճենահանվում են սև թղթի վրա:

Սև գույնի հետք պատճենահանող թուղթ ստանալու համար ֆոտոթուղթը պետք է ենթարկել լույսի ազդեցությանը, հայտածել, ֆիքսել և լավ լվանալ ու չորացնել: Սպիտակ գույնի թուղթ ստանալու համար չհայտածված ֆոտոթուղթը ֆիքսվում է, լվացվում և չորացվում:

Երկու դեպքում էլ չորացված ֆոտոթղթի էմուլսային կողմին հեղուկացրիչի օգնությամբ հավասար շերտով փչվում է պերբլորվինիլի վերը նշված լուծույթից, դրան ավելացնելով 4-5 տոկոսանոց դիբուտիլֆտալատ (սա լայնորեն կիրառվում է պլաստմասսաների արդյունաբերության մեջ որպես պլաստիֆիկատոր): Այդ լուծույթով ծածկված ֆոտոթուղթը ամուր պահում է փոշու մասնիկները և չի կորցնում կաշունությունը բավական երկար ժամանակ: Նման եղանակով հետքերը պատճենահանելիս պետք է ցուցաբերել բացառիկ զգուշություն և գործելակերպի նրբություն, քանի որ պատճենահանման ընթացքում ֆոտոթղթի ամենափոքր շարժումը կարող է փչացնել և հետքը, և պատճենը:

Չյան վրա եղած ոտքի հետքը կաղապարելու համար կիրառվում է հետևյալ մեթոդը:

Նախ, հետքը «շպարվում է» գիպսի սառը փոշիով, որից 10-15 բուպե հետո այն լցվում է գիպսի լուծույթով: Որպեսզի հետքի վրա եղած ցցուն դետալները, որոնք արտահայտում են կոշիկի ներբանի կառուցվածքի առանձնահատկությունները, չհալվեն լուծույթի ազդեցությունից, վերջինս պետք է լինի ըստ հնարավորին ցածր ջերմաստիճանի: Այդ նպատակով ջուրը պետք է սառեցնել մինչև 0 աստիճան, նրանում մաքուր ձյուն կամ սառույց ավելացնելով: Բժշկական չոր գիպսը բարակ շերտով լցվում է ֆաներայի մակերեսին և դրվում ձյան վրա: Մառեցվում է նաև ամանը, որի մեջ պետք է պատրաստվի լուծույթը: Այն խրվում է ձյան մեջ (կամ չորս կողմը ծածկվում է ձյունով) և ապա պատրաստվում է լուծույթը:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գիպսի՝ ջրով պատ-
րաստված լուծույթը՝ +2-+4 աստիճանում պրակտիկորեն «հալման» է-
ֆեկտ չի առաջացնում¹:

Գիպսը և ջուրը վերցվում են 1:1 հարաբերությամբ:

Հաջորդ մեթոդը. հետք ընդունած մակերեսը ամրացվում է հեղուկ-
ցրիչով վրան սառեցված ջուր փչելու միջոցով: Այս դեպքում հետքի վրա
առաջանում է բարակ սառցե կեղև, որը հետքի դետալները չխախտելով,
փակում է ձյան ծակոտիները և ամրացնում հետքը: Բացի այդ, սառցե
կեղևը կանխում է հետքի դեֆորմացիան գիպսը լցնելիս: Նույն նպատա-
կով ջրի փոխարեն օգտագործվում է նաև բենզոլ:

Որպես սառցապատող հեղուկ, օդի -20 աստիճանից մինչև -2 աս-
տիճան ջերմաստիճանում, խորհուրդ է տրվում սովորական մաքուր ջուր:
Իսկ ավելի բարձր ջերմաստիճանում՝ բենզոլ: Այս դեպքում, ջուրը պետք է
ունենա 0 աստիճան ջերմաստիճան, իսկ բենզոլը՝ +15 աստիճանից ոչ
ցածր: Եթե հետքը մշակվի ավելի սառը բենզոլով, ապա այն չհասցնելով
ներծծվել ձյան մակերեսային շերտը, կսառչի, կազմելով սառցե բյուրեղ-
ների շերտիկներ, որոնք կխախտեն հետքի որոշ մանրամասներ:

Հետքը մշակելու համար օգտագործվող հեղուկցրիչը պետք է ունենա
ռետիներ երկու տանձիկ:

Հայտնաբերված հետքերի ֆիքսման կարևորագույն միջոցը այդ
հետքերի նկարագրումն է համապատասխան քննչական գործողության
արձանագրության մեջ: Հետքի նկարագիրը պետք է պարունակի մաքսի-
մալ ինֆորմացիա, որտեղ անհրաժեշտ է ցույց տալ.

ա. ե^օրը, որտե^օղ է հայտնաբերվել հետքը (հետքերը), ինչպիսի^օ մա-
կերևույթի վրա են նրանք գտնվում (ավազ, ցեխ, կավահող, հող, ձյուն,
ասֆալտ, փայտյա հատակ և այլն),

բ. հետքի տեսակը (ծավալային, մակերեսային և այլն),

գ. հետք առաջացնող ենթադրական օբյեկտը (ձմեռային կոշիկ, բո-
կոտիկներ, բոբիկ ոտք և այլն),

դ. հետքի չափսերը,

ե. հետքի ուղղությունը և դիրքը շրջապատող առարկաների համեմա-
տությամբ,

զ. որտեղի^օց և դեպի ու^օր են տանում հետքերը,

է. ներբանի անհատական առանձնահատկությունները,



ը. ուղյակի էլեմենտները (երկարությունը, լայնությունը, ոտնաթափի
շրջադարձի անկյունը և այլն),

¹ Մեթոդը առաջարկել է ՌԳ-դատախազության գիտահետազոտական ինստիտու-
տի գիտաշխատող Ա. Խ. Դվորկինը:

թ. հետքի հայտնաբերման և ֆիքսման եղանակները,

ժ. հետքի վերցման և փաթեթավորման եղանակները:

Բոքիկ ոտքի հետքը նկարագրելիս անհրաժեշտ է ցույց տալ, թե հետքի ո՞ր մասերում են արտահայտվել պապիլյար գծերը, ինչպիսի առանձնահատկություններ ունի մատների դասավորությունը և քանիսն են դրանց դրոշմները (երբեմն նեղ կոշիկներ կրելու հետևանքով, որն ավելի հաճախ հանդիպում է կանանց մոտ, երկրորդ և երրորդ մատները բարձրանում են հարևան մատների կողմից սեղմվելու հետևանքով, և նրանց դրոշմը չի արտացոլվում հետքի վրա, ստեղծելով մատների բացակայության պատրանք): Արձանագրության մեջ ցույց է տրվում յուրաքանչյուր մատի դրոշմի ձևը: Նշվում են նաև դրոշմի երկարությունը և լայնությունները, տարբեր հատվածներում: Կոշիկի և բոքիկ ոտքի հետքերը չափելու եղանակները տրված են նկարներում:



Կոշիկի հետքի չափումը

ԱԲ-հետքի ընդհանուր երկարությունը, ԳԴ-ներքանի բաթի լայնությունը, (ամենալայն մասում), ԵԶ-հետքի միջնամասի լայնությունը (ամենանեղ մասում), ԷԸ-հետքի կրունկային մասի լայնությունը (ամենալայն մասում), ԱԹ-ներքանի երկարությունը, ԹԺ-միջնամասի երկարությունը, ԺԲ-կրունկի հետքի երկարությունը

Բոքիկ ոտքի հետքի չափումը

ԱԲ-հետքի ընդհանուր երկարությունը, ԳԴ-բաթի լայնությունը (ամենալայն մասում), ԵԶ-հետքի միջնամասի լայնությունը (ամենանեղ մասում), ԷԸ-կրունկային մասի լայնությունը (ամենալայն մասում)

Կոշիկից մնացած հետքով հնարավոր է որոշել այն հազած անձի մոտավոր հասակը: Ն. Ա. Սելիվանովը և Վ. Ի. Տերեբիլովը առաջարկում են հետևյալ աղյուսակը¹.

Կոշիկ հազած ոտնահետքերի երկարությունը մմ-ով	Այն թիվը, որով պետք է բազմապատկել կոշիկի հետքի երկարությունը, որպեսզի ստացվեն տվյալներ հասակի մասին
Մինչև 219	7.19
220-229	6.84
230-239	6.61
240-249	6.66
250-259	6.40
260-269	6.32
270-279	6.25
280-289	6.12
290-299	6.00

§ 5. ՋԱՐԴՈՂ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՀԵՏՔԵՐ

Ջարդող գործիքները ըստ իրենց կառուցվածքի և նշանակության տարբեր են: Հանցավոր նպատակներով օգտագործվում են ինչպես հատուկ պատրաստված հարմարանքները՝ «գողական գործիքներ», այնպես էլ սովորական ատաղձագործական, խառատային գործիքները՝ մուրճ, ուրագ, դուր, կացին, սղոց և այլն: Հաճախ պահեստները, զետեղարանները բացվում են պատահական առարկաներով՝ երկաթե ձողիկ, խողովակի կտոր, քար և այլն: Ջարդող գործիքի ընտրումը և ջարդելու եղանակի որոշումը կախված է հաղթահարվող արգելքի նյութից, նրա կառուցվածքի առանձնահատկություններից:

Քննչական և փորձագիտական պրակտիկայի ընդհանրացումը հնարավորություն է տալիս առանձնացնել արգելքների հաղթահարման առավել տիպիկ և հանցագործների կողմից հաճախ կիրառվող եղանակներ: Այդ եղանակները քննիչը պետք է իմանա, քանի որ ջարդելու առանձնահատկություններով կարելի է պարզել տեղի ունեցած իրադարձության բնույթը, օրինակ, տարբերել իսկական կտորանքը ձևացվածից, որոշել

¹ Աղյուսակը վերցված է Осмотр места происшествия, справочник следователя գրքից, Մ., 1982, էջ 127:

գործիքի տեսակը: Կոտրանքի առանձնահատկություններով կարելի է դատել հանցագործի ֆիզիկական և մասնագիտական հնարավորությունների մասին, իսկ կոտրանքի եղանակի ուսումնասիրումն ու հաշվառումը օգնում են բացահայտելու կրկնահանցագործներին, մշակելու օբյեկտների պահպանության նոր եղանակներ, փականների նոր, կատարյալ կոնստրուկցիաներ:

Ջարդող գործիքներն առաջացնում են շատ բազմազան հետքեր: Դա բացատրվում է նրանով, որ բազմազան են ինչպես արգելքները (հետք ընդունող օբյեկտները), այնպես էլ գործիքները (հետք առաջացնողները):

Անմիջական ներգործության էֆեկտի առումով Ջարդող գործիքների հետքերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

ա. սեղմման հետքեր, որոնք մնում են, երբ գործիքով սեղմում են արգելքին լծակի ձևով, փականը կամ տախտակ անջատելու համար,

բ. հարվածի հետքեր, որոնք առաջանում են գործիքով արգելքին հարվածելիս,

գ. սահքի հետքեր, որոնք առաջանում են գործիքը արգելքի մակերեսի վրա շարժելիս (օրինակ՝ գործիքով շեղակի հարված հասցնելու հետևանքով առաջացած հետքը արգելքի վրա),

դ. կտրվածքի հետքեր, որոնք կարող են առաջացնել բոլոր կտրող գործիքները (կացին, դանակ, դուր, սղոց և այլն):

Առաջացման պայմաններից կախված՝ Ջարդող գործիքների հետքերը կարող են լինել ծավալային և մակերեսային: Ծավալային հետքերը հաջողությամբ են նպաստում հետք առաջացնող օբյեկտը նույնացնելուն, քանի որ նրանցում արտահայտվում է հետք առաջացնող օբյեկտի ռելիեֆը: Մակերեսային հետքերը առաջանում են հետք ընդունող օբյեկտի մակերեսային փոփոխությունների հաշվին:

Ըստ առաջացման մեխանիզմի հետքերը կարող են լինել ստատիկ և դինամիկ: Ստատիկ հետքեր են. սեղմման, հարվածի հետքերը, դինամիկ հետքեր են կտրվածքի, սահքի հետքերը:

* * *

Կտրված օբյեկտը և նրա վրա եղած հետքերը ֆիքսելու առաջին և լավագույն միջոցը լուսանկարումն է: Այն հնարավորություն է տալիս ամրապնդել ինչպես հետքերի ընդհանուր տեղադրությունը, այնպես էլ նրանց դիրքը այլ առարկաների համեմատությամբ: Հետքերը լուսանկար

րելիս անհրաժեշտ է պահպանել մասշտաբային-նկարահանման կանոնները:

Ինչպես մատնահետքերի, այս դեպքում ևս պետք է ձգտել վերցնել հետք պարունակող օբյեկտները կամ նրանց համապատասխան մասերը, բայց ամենից հաճախ ջարդող գործիքների հետքերը կաղապարվում են: Սրանք կաղապարվում են գիպտով, պլաստիլինով, պարաֆինով: Նշված նյութերով կաղապարելուց առաջ անհրաժեշտ է հետքը մշակել վազելի-նային յուղով: Սակայն այս կաղապարները իրենց չեն արդարացնում, որովհետև հեշտությամբ վնասվում են տեղափոխման անհարմար պայմանների, ջերմության և այլ պատճառներից:

Հետքերի առանձնահատկությունների առավել ճշգրիտ պատկերը հնարավոր է ստանալ այն դեպքերում, երբ դրանց կաղապարման համար օգտագործվող նյութը առաձգական է: Այս դեպքում հետքերի կաղապարները ունենում են որոշակի ամրություն, որը բացառում է նրանց վնասումը փոխադրական կամ այլ գործողությունների ժամանակ: Այս պահանջներին բավարարում են Ռ-Դ կրիմինալիստների կողմից առաջարկված պոլիմերային մածուկակերպ կաղապարման նյութերը, մասնավորապես՝ սիլիկոնայինը և տիոկոլայինը: Դրանք հնարավորություն են տալիս ստանալ այնպիսի մածուկներ, որոնք վերածվում են ռետինակերպ նյութի՝ առանց բարձր ճնշում կամ ջերմություն կիրառելու: Այս պոլիմերները ընդունակ են մեծագույն ճշգրտությամբ պատճենավորել հետքերի միկրոռելիեֆը:

Սիլիկոնային պատճենահանման նյութերով հետքերը (մասնավորապես ջարդող գործիքների) կաղապարելու արդյունավետության մասին դրական են արտահայտվում նաև արտասահմանյան շատ կրիմինալիստներ: Նման առաջարկներով հանդես են եկել օրինակ՝ Բլբուլյանը (ԱՄՆ), Ռոնաին (Ավստրիա), Փուքցը, Զյոլերը (Գերմանիա) և այլն¹:

Սիլիկոնային մածուկները հեշտությամբ գունավորվում են, ինչպես նաև կարող են լինել բոլորովին քափանցիկ:

Սիլիկոնային և տիոկոլային կաղապարները հեշտությամբ են տանում հարվածները, կարելի է ծալել, տրորել, հետևանքում նրանց բնական վիճակը չի փոխվում: Դրանք չեն վնասվում ջերմաստիճանի փոփոխությունից, խոնավությունից: Նրանք իրենց ֆիզիկական հատկությունները չեն փոխում -60 աստիճանից $+250-300$ աստիճան C:

¹ St'u Обзор зарубежной литературы по вопросам судебной трассологии и баллистики, М., 1968, էջ 10-14:

Պրակտիկայում երաշխավորված են բարձր արդյունավետության մի շարք մածուկներ.

Մածուկ «Կ»Սիլիկոնային մածուկներից քննչական պրակտիկայում առավել լայն կիրառում է գտել այս մածուկը: Այն մոխրագույն, կիսաթափանց, խիտ, մածուցիկ հեղուկ է, որը կազմված է սիլիկոնային կաուչուկից և 8-10 տոկոս սպիտակ մրից:

Ձարդող գործիքների հետքերը կաղապարելու համար Կ մածուկից պատրաստվում է ինքնավուկանացվող (պոլիմերացվող) միացություն, որի բաղադրության մեջ մտնում է՝ Կ մածուկ (անրաժեշտ չափի), մածուկի 25-30 տոկոսի չափով ցինկի օքսիդ (կոչվում է լցոն) և N18 կատալիզատոր: Սև երանգ ստանալու համար ցինկի օքսիդի փոխարեն կարելի է ավելացնել նույնքան մուր: Միացությունը պատրաստվում է հետևյալ կերպ. Կ մածուկը լցվում է մաքուր անոթի մեջ, ավելացվում է ցինկի օքսիդ և լավ խառնվում, մինչև ստացվի միատարր զանգված, այնուհետև այդ զանգվածին ավելացվում է N18 կատալիզատոր, զանգվածի 8-10 տոկոսի չափով և նորից խառնվում: Դյուրաբեկությունից խուսափելու համար լցոնը չպետք է գերազանցի միացության 35 տոկոսը: Ստացված զանգվածը լցվում է հետքի վրա, որը սենյակային ջերմաստիճանում ինքնավուկանացման է ենթարկվում (պոլիմերացվում է) 25-30 րոպեի ընթացքում: Օ-ից ցածր ջերմաստիճանում միացության պոլիմերացումը դադարում է: Երբ ջերմաստիճանը բարձրանում է 30 աստիճանից, պրոցեսը արագանում է երկու անգամ: Կ մածուկի հետ մեկտեղ, քննչական պրակտիկայում կիրառվում է նաև Ու-1 մածուկը: Հետքերի կաղապարման համար կիրառվող այս մածուկը Կ-ից տարբերվում է նրանով, որ Ու-1-ին ավելացվում է միայն ներկիչ և կատալիզատոր: Մածուկին ավելացվում է 4 տոկոսանոց կատալիզատոր N18: Կարելի է ավելացնել նաև N1 կամ N10 կատալիզատոր:

Հետքերի ֆիքսման համար կիրառվում են նաև «սիելաստ», «տիոդենտ» կաղապարող մածուկները, որոնք կիրառվում են ատամնապրոթեզավորման աշխատանքներում: Այս մածուկները իրենց պատճենավորման հատկություններով չեն զիջում սիլիկոնային մածուկներին:

Տիոկուլային «տիոդենտ» մածուկը կարելի է ձեռք բերել դեղատներից: Այն թողարկվում է սև և սպիտակ պարկուճներով: Հավաքածուն բաղկացած է չորս սպիտակ մածուկի և մեկ սև մածուկի պարկուճներից: Հետքը կաղապարելու համար ապակյա թիթեղի վրա լցվում է անիրաժեշտ քանակի սպիտակ մածուկ և 4-5 անգամ քիչ սև մածուկ: Այդ երկու-

սը միմյանց լավ խառնելուց հետո լցվում է հետքի վրա: 10-15 րոպե հետո այն վերածվում է ռետինանման նյութի:

«Սիլլաստ» մածուկը նույնպես կարելի է ձեռք բերել դեղատներից: Այն իրենից ներկայացնում է պարկուճների մեջ լցված վարդագույն մածուկ:

Հավաքածուում բացի մածուկից կան նաև հեղուկ N1 և N2 կատալիզատորներ, որոնք պոլիէթիլենային երկու փոքրիկ անոթների մեջ են և մեկ անոթ վազելիճային յուղ:

N2 կատալիզատորը մածուկի վուլկանացումը արագացնում է այն դեպքում, երբ նրան ավելացվում է N1 կատալիզատորը: Դրա համար էլ վուլկանացման ժամանակը մեծացնելու անհրաժեշտության դեպքում (մինչև 10-15 րոպե) պետք է օգտվել միայն N1 կատալիզատորից: «Սիլլաստը» վուլկանացվում է նաև Կ մածուկի համար նախատեսված N18 կատալիզատորով: Այս մածուկը թողարկվում է բավականին խիտ բաղադրությամբ, որը նպաստում է ծակոտկեն կամ մազմզուկ ունեցող մակերեսների վրա մնացած հետքերը ֆիքսելուն:

Ջարդող գործիքների հետքերի ֆիքսման համար կան նաև սիլիկոնային այլ նյութեր, օրինակ՝ КЛСЕ-305 մածուկը, СКТН կաուչուկը և այլն:

Ջարդող գործիքների հետքերը ֆիքսվում են համապատասխան քննչական գործողության արձանագրության մեջ: Արձանագրության մեջ նշվում են հետևյալ տվյալները. այն առարկայի տեսակը, որի վրա մնացել է հետքը (դուռ, պատուհան, պատ և այլն), առարկայի նյութը (ֆաներա, մետաղ, քար և այլն), հետքի տեսակը (ծավալային, մակերեսային, շերտավորման, շերտազատման, հարվածի հետք, սեղմման հետք և այլն), հետքի տեղադրությունը (շինության ներսի՞ց է, թե՞ դրսից, ի՞նչ հեռավորություն ունի հետքի կենտրոնը հարևան երկու անշարժ առարկաների համեմատությամբ), հետքի ձևը (կլոր, օվալաձև, ուղղանկյունաձև և այլն), հետքի չափսերը (երկարությունը, լայնությունը, խորությունը), հետքի բնութագրական առանձնահատկությունները, չկա՞ն արդյոք հետքի վրա օտար նյութեր (ներկեր, ժանգ և այլն), լուսանկարվե՞լ է արդյոք հետքը, ինչպե՞ս է ամրապնդվել, վերցվել, փաթեթավորվել:

§ 6. ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԵՏՔԵՐ

Քննչական պրակտիկայում հաճախ անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել ավտո-մոտո-տրանսպորտի հետքերը:

Իրենց կրիմինալիստիկական նշանակությամբ տրանսպորտային միջոցների թողած հետքերը բաժանվում են երեք խմբի.

1. հետքեր, որոնք հնարավորություն են տալիս որոնել տրանսպորտային միջոցները և իրականացնել նրանց անհատական նույնացումը,

2. հետքեր, որոնց միջոցով պարզվում է տրանսպորտային միջոցի տեսակը, տիպը և այլն, այսինքն՝ խմբային պատկանելությունը,

3. հետքեր, որոնց օգնությամբ պարզվում է հետազոտվող իրադրության ընդհանուր բնութագիրը կամ առանձին հանգամանքներ (օրինակ՝ հետքեր, որոնք ցույց են տալիս ընթացքի ուղղությունը, արգելակման հետքեր, մեքենայի կանգնած տեղը և այլն):

Դեպքի տեղում տրանսպորտային միջոցներից կարող են մնալ նաև այլ բնույթի հետքեր, որոնք կարող են ցույց տալ տրանսպորտի անցած ճանապարհը, տեղափոխած բեռի տեսակը, մեքենայի որոշ մասերի անսարքություններ և այլն (օրինակ՝ յուղի, ջրի մնացորդներ, ցեմենտային լուծույթ, գազի, ալյուրի, ավազի և այլնի մնացորդներ):

Ճանապարհային ծածկույթի տեսակից և վիճակից կախված՝ տրանսպորտային միջոցների անիվները կարող են թողնել ինչպես ծավալային, այնպես էլ մակերեսային (շերտավորման, շերտազատման) հետքեր: Ըստ առաջացման մեխանիզմի այդ հետքերը բաժանվում են ստատիկ և դինամիկ (արգելակային ուղին):

Ծավալային հետքերը առաջանում են փխրուն հողի, փոշու, ձյան վրա: Նրանցում արտահայտվում են անվաղողի ծավալային (ռելիեֆային) նախշերը: Մակերեսային հետքերն առաջանում են ճանապարհի պինդ ծածկույթի վրա (ասֆալտի, բետոնի), տուժողի հագուստի վրա (վրատրթի դեպքում):

Կեղտոտված անվաղողը մաքուր ասֆալտի վրա առաջացնում է շերտավորման հետքեր, իսկ եթե ասֆալտը փոշոտ է, անվաղողը առաջացնում է շերտազատման հետք:

Դեպքի տեղում տրանսպորտային միջոցի հետքը ուսումնասիրելիս անհրաժեշտ է չափել անվահետքի լայնությունը, անվաղողի վազքուղու լայնությունը, ըստ հնարավորին՝ անվի մեկ պտույտի մեծությունը:

Անվահետքը անվաղողների վազքուղու միջին գծերի միջև եղած տարածությունն է կամ սոնիի վրա տեղավորված զույգ անիվների միջին գծերի միջև եղած տարածությունը:

Անվահետքը որոշելու համար չափվում է նաև դողերի վազքուղու համանուն (աջ կամ ձախ) եզրերի միջև եղած տարածությունը:

Նկատի ունենալով, որ մեքենայի ընթացքի ժամանակ առջևի անվահողերի հետքերը ծածկվում են հետևի անիվների հետքերով, այն չափելու համար պետք է ընտրել շրջադարձի ժամանակ մնացած հետքերը, քանի որ այս դեպքում յուրաքանչյուր անիվից առաջանում են առանձին հետքեր: Եթե հետին սոնիի վրա գույգ անիվներ են, ապա ուղիղ ընթացքի ժամանակ հետին անիվները լրիվ կամ մասնակիորեն ծածկվում են առջևի անիվների հետքերը: Շրջադարձի ժամանակ առաջանում է հետքերի վեց շարք (երկու առջևի, չորս հետևի անիվներից):

Անվադողի տեսակի վերաբերյալ դատողություն անելու համար պետք է ուսումնասիրել դողի պահպանաշերտի վրա եղած ռելիեֆային նախշերը: Պետք է պարզել նաև դողի արտաքին շրջագծի երկարությունը, չափելով միևնույն առանձնահատկության երկու հաջորդական դրոշմների միջև եղած տարածությունը:

Հնարավորության դեպքում նպատակահարմար է ուսումնասիրել բոլոր անիվների հետքերը: Նույնացման համար կարող են օգտագործվել այն հետքերը, որոնց վրա արտահայտվել են անվադողի պահպանաշերտի արտաքին կառուցվածքի առանձնահատկությունները:

Ավտոտրանսպորտային միջոցների մի շարք հետքերով որոշվում է նրա շարժման ուղղությունը, դրանցից են.

1. սորուն մակերեսի վրա շարժվելիս նյութի մասնիկները հետքի եզրերին ստանում են հովհարի ձև, որի հեռացող ծայրերը ուղղվում են շարժմանը հակառակ,

2. ջրի, յուղի և այլ հեղուկների կաթիլներները, որոնք ընթացքի ժամանակ թափվում են ճանապարհի վրա, առաջացնում են տանձաձև բծեր, որոնց նեղ վերջույթը դառնում է շարժման ուղղության կողմը,

3. ընթացքի ժամանակ մեքենայի անիվների տակ ընկած թելի, պարանի, մետաղալարի ծայրերը թեքվում են ընթացքի ուղղությամբ,

4. ընթացքի ուղղությամբ են ծռվում նաև անիվի տակ մնացած բույսերը:

Տրանսպորտային միջոցների հետքերի լուսանկարումը, սխեմաների, պլանների կազմումը նպատակահարմար է կատարել համայնապատկերային եղանակով կամ խորության մասշտաբով: Հետքերը կադապարելիս անհրաժեշտ է փնտրել գծանախշի կրկնվող առանձնահատկություն պարունակող հետքեր: Առանձին հետքերի լուսանկարումը կատարվում է մասշտաբով: Այն հետքերը, որոնք մնացել են շրջադարձերի ժամանակ,

կարելի է լուսանկարել մաս-մաս կամ շրջանային համայնապատկերի եղանակով: Մակերեսային հետքերը լուսանկարելիս պետք է օգտվել հավասարաչափ ցրված լույսից:

* * *

Տրանսպորտային միջոցների հետքերի շարքին են դասվում նաև՝

ա. Մահնակների ու դահուկների դիմամիկ հետքերը: Անհատական նույնացման հնարավորությունը այս դեպքում կախված է սահող մասերի վրա եղած դեֆեկտներից, որոնք կարտահայտվեն հետքի վրա:

բ. Թրթուրավոր տրանսպորտի հետքերը, որոնցով հնարավոր է տարբերել տիպը, մոդելը:

գ. Կենդանիների հետքերը: Նույնացման համար էական հատկանիշներ են պարունակում պայտերը, կճղակների հետքերը նույնացման համար համարյա պիտանի չեն, քանի որ նրանք ունեն որոշ առածգակա-նություն, ուրվագծերը կայուն չեն: Բացի այդ, կճղակի եղջերային նյութը բնական աճի հետևանքով փոխվում է և ժամանակի ընթացքում կարող են փոփոխվել նույնացման այլ հատկանիշները, որոնք կային հետքի առաջացման պահին:

Տրանսպորտային միջոցների հետքերի ֆիքսումը, բացի վերը նշված եղանակներից (լուսանկարում, կադապարում և այլն), իրականացվում է նաև քննչական գործողության արձանագրությամբ:

Արձանագրության մեջ պետք է ցույց տալ անշարժ կողմնորոշիչներ, որոնք հնարավորություն կտան ճշգրիտ պատկերացում կազմել հետքերի տեղադրման մասին: Բացի այդ, արձանագրության մեջ պետք է ցույց տալ հետք ընդունող օբյեկտի տեսակը (ասֆալտ, ավազ, ցեխ, սևահող, կավահող, ձյուն և այլն), հետք ընդունող օբյեկտի վիճակը (խոնավ, չոր, հարթ, անհարթ և այլն), հետքերի տեսակը, (ստատիկ, դիմամիկ, ծավալային, մակերեսային, լոկալ, պերիֆերիկ), հետքերի տեղադրությունը (շրջադարձի վրա, ուղղահայաց ճանապարհի վրա, ճանապարհին եղած այլ օբյեկտների՝ թղթի, ստվարաթղթի, հագուստի վրա և այլն), հետքուղիների քանակը և նրանց փոխադարձ տեղադրությունը, վազբառիներից յուրաքանչյուրի լայնությունը, անվաղողի լայնությունը, անվաղողի գծանախշի կառուցվածքը, անվաղողի վրա եղած առանձնահատկությունները, անիվի մեկ շրջապտույտի երկարությունը (մինչև նույն դեֆեկտների հետքերի միջև եղած տարածությունը), արգելակային ուղու երկարությունը, շարժման ուղղությունը ցույց տվող հատկանիշները, ինչ լուսանկարներ (տեսակները և կատարման պայմանները), գծագրեր, սխեմաներ են

կատարվել, հետքերի կադապարման, վերցման, փաթեթավորման եղանակները:

§ 7. ԱՏԱՄՆԵՐԻ ՀԵՏՔԵՐ

Ատամների հետքերի հետազոտումը հետքաբանական փորձաքննության տեսակներից մեկն է և ունի իր որոշակի առանձնահատկությունները: Նման հետազոտությունները հիմնված են ատամների ընդհանուր կառուցվածքի և անոթային ատամների վրա եղած առանձնահատկությունների վրա: Ատամների հետքերի հետազոտման արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ այդ ճանապարհով նույնացվում է հետք թողած անձը:

Ատամների հետքերը մնում են սննդամթերքի, սուժողի կամ հանցագործի մարմնի, ծխախոտի և այլ օբյեկտների վրա:

Ատամների հետքերով անձին նույնացնելիս դատաբնօժանական պրակտիկան օգտվում է նաև դատաբժշկական ստոմատոլոգիայի ծառայություններից: Դատաստոմատոլոգիական փորձաքննությունը կոչված է.

ա. կենդանի անձանց մոտ առաջացած ատամնա-ժնուտային վնասվածքների բնույթը, վաղեմությունը, վնասվածքի առաջացման մեխանիզմը և ծայրության աստիճանը որոշելու համար,

բ. դիակ հետազոտելիս պարզելու վերը նշված վնասվածքների և մահը վրա հասնելու միջև եղած պատճառական կապը:

Այս փորձաքննությանը լուծվում են նաև այլ հարցեր. ինչպիսիք են՝ անձի քեղը, տարիքը և այլն:

Դատաստոմատոլոգիական փորձաքննությանը լուծվում են նաև անձի նույնացման հարցեր: Օրինակ երբ հայտնաբերվում է չճանաչված դիակ, արտաքին հատկանիշները խիստ փոփոխված անձանց դիակ (ինքնաթիռային աղետի ենթարկված, նեխած, կմախքացած, այրված անձանց և այլն), երբ արտաքին մյուս հատկանիշներով ճանաչումը դժվար է կամ բացառվում է: Որոշ դեպքերում նշանակվում է դատաստոմատոլոգիական և հետքաբանական համալիր փորձաքննություն:

Նման հետազոտություններ կատարելիս նախ պետք է իմանալ, թե ինչ է իրենից ներկայացնում ատամնային ապարատը՝ նրա անատոմիան:

Ատամները կազմված են ոսկրային ամուր ցյուրից, որը կոչվում է դենտին: Ատամի ներսում եղած խոռոչը լցված է ատամնային փափկանուկ-պուլպայով:

Ատամը կազմված է երկու հիմնական մասերից. 1) ատամի արտաքին մասը՝ ատամնապսակը, 2) արմատը, որն ամրացված է ծնոտային փոսիկին:

Ատամնապսակի և արմատի միջև եղած նեղ հատվածը կոչվում է վզիկ: Ատամնապսակը պատված է հարթ, ամուր արծնով և կոչվում է ատամի արծնածածկ:

Ըստ ատամնապսակի ձևի ատամները բաժանվում են չորս տեսակի՝ կորիչներ, ժանիքներ, փոքր բնատամներ, խոշոր բնատամներ:

Հասուն մարդու ատամնային ապարատը կազմված է 32 ատամից, որոնք հավասարաչափ բաշխված են վերին և ներքին ծնոտների վրա (յուրաքանչյուրի վրա 16 ատամ):

Կորիչների պսակը լինում է դուրսն, ժանիքներինը՝ կոնսն, բնատամներինը՝ մոտավորապես խորանարդի նման:

Ատամների ձևերի անբնականությունն են սողոցանման ուրվագիծը, տակառածնությունը և այլն: Ըստ արծնածածկի գույնի ատամները լինում են՝ սպիտակ, դեղնավուն, կապտավուն: Որպես հիվանդությունների հետևանք նկատվում է գույնի մգացում:

Սովորաբար, նույն ծնոտի հարևան ատամները գրեթե կիպ են լինում, միմյանցից զատվելով նեղ միջանցքով: Որոշ դեպքերում որպես առանձնահատկություն է դիտվում միջանցքի մեծությունը (նոսր ատամներ): Այդ երևույթի ուժեղ արտահայտված ձևը կոչվում է դիսսթեմա:

Ատամների հետքերով անձի նույնացումը ևս հիմնվում է այն հանգամանքի վրա, որ մարդու առամենային ապարատը անհատական է և հարաբերականորեն կայուն:

Ատամների հետքերը հետազոտելիս անհրաժեշտ է ճիշտ բնութագրել և գնահատել նույնացման բոլոր հատկանիշները, որոնք բաժանվում են ընդհանուր հատկանիշների, մասնավոր հատկանիշների, անոմալիաների, ձեռքբերովի հատկանիշների:

Ընդհանուր հատկանիշներն են ատամնապսակի ձևը, չափը, պսակի ծամող մակերևույթի ռելիեֆը, ատամների միջև եղած տարածությունը, ատամնադեղի չափը և շառավիղը:

Մասնավոր հատկանիշները թեև բազմապիսի են և հնարավոր չէ տալ դրանց սպառիչ թվարկը, բայց սկզբունքային դասակարգումը հետևյալն է.

Կորիչ ատամների վերաբերյալ՝ կտրող եզրի առանձնահատկությունները (բնական դեֆեկտներ, փոսիկներ, դրանց չափսը, տեղը, ձևը), կտրող եզրի անկյունների ձևը (կամարածն, ուղիղ, սուր), պսակը ծածկող արծնի առանձնահատկությունները:

Ժանիքների վերաբերյալ՝ ժանիքի սրվածության աստիճանը, լանջերի երկարությունը, պսակը ծածկող արծնի առանձնահատկությունները:

Բնատամների վերաբերյալ՝ բարձրությունը, լայնությունը, ձևը, ատամնապսակի ծամիչ ցցվածքների տեղը, ձևը, ծամող փոսիկների տեղադրությունը, խորությունը, ուղղությունը:

Անոմալիա աներով պետք է հասկանալ ատամնային ապարատի նորմալ զարգացման վիճակից շեղումները, այդ թվում՝ ատամների քանակը (նորմայից պակաս կամ ավելի), առանձին ատամների ձևի, ատամների դասավորության անկանոնությունը, նրանց չափսերի և միմյանց միջև եղած տարածության հաջորդականության անկանոնությունը, ատամնանաստվածքի անկանոնությունը (ատամնանաստվածքը ծնոտների դիրքն է, նրանց կցման պահին), ծնոտների ձևի անկանոնությունը և այլն:

Չեռբերովին այն հատկանիշներն են, որոնք առաջանում են մարդու կենսագործունեության ընթացքում: Դրանցից են՝ ատամնապսակի վրա առաջացած տարբեր թերությունները կոտրվածքները, արծնի քերվածքները, տարբեր պլոմբները, պրոթեզները և այլն: Այս խմբի մեջ են մտնում նաև ատամների պրոֆեսիոնալ հիվանդություններն ու դեֆեկտները (պղնձի, արճճի, սնդիկի պայթուցիկ նյութերի, վառողի արտադրություն, պոլիգրաֆ և այլն): Վնասվածքներ են առաջանում նաև կոշկակարների, դերձակների, ապակի փշողների, փողային գործիքներ նվազողների մոտ:

Դեպքի տեղում ատամների հետքեր հայտնաբերելիս պետք է վերցնել հետևյալ եղանակներով:

Նախ, ըստ հնարավորի պետք է վերցնել հետքը պարունակող օբյեկտը: Այս դեպքում, հատկապես երբ հետքը մնացել է սննդամթերքի վրա, պետք է անհապաղ ուղարկել փորձաքննության, փաթեթավորելով սառույցով լցված արկղիկում կամ որևէ անոթում, որը տեղավորվում է սառը ջրով լցված մեկ այլ անոթի մեջ:

Հետքը վերցնելու հաջորդ եղանակը կաղապարումն է գիպսով. պոլիմերներով: Վերցնելու եղանակ է նաև լուսանկարումը, որը պետք է կատարել առաջին հերթին՝ պահպանելով մասշտաբային նկարահանման կանոնները և ձգտելով ստանալու հստակորեն արտահայտված հատկանիշներով լուսանկար: Դրան հետևում է հետք կրող օբյեկտը վերը նշված ձևերով փաթեթավորելն ու փորձաքննության ուղարկելը:

Կաղապարման եղանակը թեև գրականության մեջ խորհուրդ է տրվում, բայց այս դեպքում այնքան էլ արդյունավետ չէ, որովհետև ոչ միշտ է հաջողվում կաղապարի վրա ստանալ հետքի միկրոռելիեֆը, որն այնքան անհրաժեշտ է նույնացման համար:

Այն դեպքերում, երբ հայտնաբերվում է չճանաչված դիակ, ատամների միջոցով անձի նույնացումը կատարվում է դատաստումատողությունով և փորձաքննությամբ: Այս եղանակով նույնացում կատարելիս օգտագործվում են դիմոսկրերի և ատամների առանձնահատկություններն ու անհատական հատկանիշները: Նման հետազոտություններ իրականացվում են նաև գանգի և կենդանի ժամանակվա լուսանկարի ֆոտոհամատեղման մեթոդով¹:

Համեմատական հետազոտման համար ներկայացվող նյութերը պետք է բավարարեն հետևյալ պահանջներին. պետք է վերցնել միևնույն ատամի մի քանի դրոշմ, քանի որ մեկ դրոշմը հնարավորություն չի տա գաղափար կազմել հետքի առանձնահատկությունների կայունության մասին: Բոլոր դեպքերում նպատակահարմար է պատրաստել երկու ծնոտների վրա եղած ատամնաշարերի (գիպսե, պարաֆինե, տիոդենտե և այլն) կաղապարներ: Ատամների հետքերի փորձառական նմուշները պետք է վերցնի բժիշկ-ստոմատոլոգը՝ քննիչի հանձնարարությամբ և ներկայությամբ:

Ներկայացված նյութերին (այդ թվում՝ գործի համապատասխան նյութերին) ծանոթանալուց հետո փորձագետը որոշում է, թե դրանք պիտանի՞ են անձի նույնացման համար: Ինչպես մյուս օբյեկտների կրիմինալիստիկական նույնացման, այնպես էլ այս դեպքում, ուսումնասիրվում և համեմատվում են սկզբում ընդհանուր, հետո մասնավոր և մյուս հատկանիշները:

§ 8. ՀԵՏՔԱԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Սույն գլխի սկզբում նշվել է այն հիմնական հարցերի շրջանակը, որոնցով զբաղվում է դատական հետքաբանությունը (տրաստողիան): Սակայն դրանցից կարևորը հետք առաջացնող օբյեկտի նույնացումն է իր թողած հետքերով, որը լուծվում է կրիմինալիստիկական փորձաքննությամբ:

Այդ նպատակի համար քննիչը որոշում է կայացնում հետքաբանական փորձաքննություն նշանակելու մասին, նախապատրաստում է համապատասխան նյութեր և ուղարկում փորձագետին: Բոլոր այն դեպքե-

¹ Այս մեթոդի մասին խոսվում է «Հաբիտոսկոպիա» գլխում:

րում, երբ հնարավոր է, փորձագետին տրամադրվում է նույնացվող օբյեկտը: Մնացած դեպքերում տրվում է օբյեկտի առաջացրած հետքերի պատճենը (կաղապարներ, դրոշմներ, լուսանկարներ և այլն):

Փորձաքննության արդյունավետության առումով կարևոր նշանակություն ունի մտուշների որակը: Դա նշանակում է, որ դրանք պետք է պատրաստվեն որակով, երբեմն մի քանի օրինակից, որպեսզի փորձագետը կարողանա զնահատել հատկանիշների կայունությունը: Փորձագետին տրամադրվում են նաև փորձաքննության առարկային վերաբերող այլ նյութեր, որոնք ևս նպաստում են կատարվող հետազոտությունների արդյունավետությանը:

Նույնացման նպատակով կատարվող հետազոտությունը սկսվում է հետք առաջացնող ենթադրվող օբյեկտի կամ նրա պատճենի (կաղապարի, դրոշմի, լուսանկարի) և մտուշների առանձին հետազոտությունից: Հետազոտման այս փուլում պարզվում են հետք առաջացնող ենթադրվող օբյեկտի և հետքի վրա արտացոլված ընդհանուր և մասնավոր հատկանիշները:

Հաջորդ փուլում համեմատվում են հայտնաբերված հատկանիշները և պարզվում՝ համընկնու՞մ են դրանք թե՛ տարբերվում: Այնուհետև զնահատվում են համընկնող կամ տարբերվող հատկանիշները և որոշվում՝ բավարա՞ր են արդյոք դրանք դրական կամ բացասական հետևության հանգելու համար:

Հետազոտության ընթացքը և արդյունքները ամփոփվում են փորձագետի եզրակացության մեջ, որին կցվում է ֆոտո-աղյուսակը:

ԳԼՈՒԽ 13. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՄԻԿՐՈԼՈԳԻԱ

Դատաքննչական պրակտիկայում միկրոմասնիկների ունեցած կարևոր դերը պահանջում է կանգ առնել նաև դրանց վրա:

Միկրոօբյեկտների առանձնահատուկ դերը պայմանավորված է դեպքի տեղում նրանց առկայության մշտականությամբ: Նրանք մշտապես առկա են նաև հանցագործի կամ նրա զոհի հագուստի, մարմնի վրա: Հանցագործությունների բացահայտման գործում նրանց նշանակությունը կայանում է նաև նրանում, որ դեպքի տեղում նրանց առկայությունը աննկատ է, որը նպաստում է, որ պահպանվեն, չոչնչացվեն հանցագործների կամ այլոց կողմից: Կրիմինալիստիկայում կիրառվող հետազոտման ժամանակակից մեթոդների շնորհիվ նրանք կարող են դառնալ իրենց նշանակությամբ կարևոր և բնույթով տարատեսակ ապացուցողական տեղեկատվության աղբյուր:

Հանցագործություններ բացահայտելու նպատակով միկրոմասնիկները օգտագործվել են վաղուց, բայց պատշաճ ուշադրության են արժանացել և օգտագործվում են որպես իրեղեն ապացույց ներկայումս: Դա առաջին հերթին պայմանավորված է գիտության և տեխնիկայի առաջընթացով, երբ երևան եկան իրեղեն ապացույցների հայտնաբերման, վերցման և հետազոտման նոր միջոցներ ու մեթոդներ, երբ իրեղեն ապացույցների կրիմինալիստիկական փորձաքննություններում սկսեցին օգտագործել ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության և այլ գիտությունների նվաճումները, ժամանակակից սարքերի և էլեկտրոնային տեխնիկայի զարգացման ֆոնի վրա: Նոր մեթոդները, մասնավորապես ֆիզիկո-քիմիականները հնարավորություն տվեցին կրիմինալիստիկական օբյեկտների ներքին կառուցվածքի հետազոտման միջոցով ստանալ կարևորագույն տեղեկատվություն:

Միկրոօբյեկտները հատուկ նշանակություն են ստանում հանցագործությունների և դրանց քողարկելու՝ հանցագործների կատարելագործման ներկա պայմաններում, երբ միկրոօբյեկտները հաճախ դառնում են (կարող են դառնալ) դեպքի տեղում հայտնաբերվող միակ հանցանշանը (փաստական տվյալ):

Միկրոմասնիկներ հասկացության անվանման հարցում գրականության մեջ առ այսօր միասնականություն չկա: Առավել օգտագործելի են. «միկրոհետքեր», «միկրոմասնիկներ», «միկրոօբյեկտներ»:

Միկրոհետքեր ասելով, ըստ մեզ, հասկացվում են նյութական հետքերը, որոնք չզինված աչքով չեն երևում և նրանց առկայությունը որոշակի տեղերում կարելի է միայն ենթադրել: Կամ նյութական գոյացումներ են,

որոնք իրենց բաղադրության առանձնահատկության ուժով, վիճակով և չնչին քանակով կարելի է երևակել և օգտագործել, որպես հանցագործության, հանցագործի կամ փաստական հանգամանքների հայտնաբերման միջոց միայն որոշակի տեխնիկական հնարքների և հատուկ փորձագիտական մեթոդիկաների կիրառման միջոցով¹: Կամ օրգանական, կենսաբանական և անօրգանական ծագման նյութեր, որոնք շատ քիչ քանակի և չափսերի պատճառով մարդու տեսողությամբ չեն կարող ընկալվել, դրա համար էլ դրանց առկայության մասին կարելի է դատել միայն սարքերի ցուցումներով²: Տարբեր հեղինակներ տարբեր են բնութագրել նաև միկրոհետքերը, դրանց անվանելով. «հետքեր», «նյութական գոյացումներ», «նյութեր» կամ «նյութի մասնիկներ», որոնք, իհարկե, միանշանակ չեն կարող պատկերացում տալ բնութագրող երևույթի մասին: Կարծում ենք բոլոր բնութագրումների համար ընդհանուրը համարվում է այն, որ միկրոօբյեկտները հնարավոր չէ անզեն աչքով լիարժեք տարբերել: Չնայած և այդ հատկանիշը միանշանակ չի կարելի համարել, քանի որ անզեն աչքով չնկատելը կարող է պայմանավորված լինել օբյեկտի «չնչին» կամ «քիչ» քանակով կամ չափսերով կամ ոչնչով պայմանավորված չլինել, այդ դեպքում միկրոհետքեր կարելի կլինի ընդունել օրինակ մատների անգույն հետքերը:

Այդ սահմանումները չեն համապատասխանում նաև կրիմինալիստիկայի գիտության մեջ ընդունված՝ հետքերի հասկացությանը, քանի որ նկատի են առնվում ոչ թե օբյեկտների նյութական կոնտակտի արտաքին կառուցվածքի արտահայտությունը և այլ հատկությունները, այլ իրենց՝ օբյեկտներին, նրանց մասնիկներին, նյութերին և այլն:

Ինչ վերաբերում է միկրոմասնիկներ արտահայտությանը, ապա որոշ հեղինակներ այն բնորոշում են որպես ոչ մեծ նյութական օբյեկտներ, որոնց ձևը և չափսերը անզեն աչքով չեն նշմարվում³:

Միկրոմասնիկներ ասելով Ե. Ի. Չուևը և Գ. Ն. Մեժենցևը հասկանում են հետքաբանական առումով, որպես մանր նյութական օբյեկտներ, որոնց տարածական սահմանները և արտաքին կառուցվածքի հատկա-

¹ Шиканова В. И., Микроследы, понятие, криминалистическое значение, процессуальный статус. Проблемы сов. государства и права, Иркутск, 1974, №7, էջ 97:

² Турчин Д. А., Микроследы-новое в криминалистике. Проблемы сов. государства и права, Иркутск, 1974, էջ 104:

³ Грановский Г. Л., Криминалистическое понятие и классификация микрочастиц, особенности их исследования и использования в доказывании. Проблемы и практика трасологических и баллистических исследований. Сборник научных трудов, вып. 17, М. ВНИИСЭ 1976, էջ 43:

ցիչները (մասնավոր տարրերը) հստակորեն չեն սահմանագատվում անգեղան աչքով¹:

Թեման համառոտելու նպատակով նշենք, որ ավելի կարճ, միկրոմասնիկները (միկրոօբյեկտները) նյութական օբյեկտներն են (մասնիկները), որոնք կապված են հանցագործության հետ, որոնց որոնումը, հայտնաբերումը, վերցնումը և հետազոտումը նրանց փոքր չափսերի, ծավալի հետ կապված, անգեղան աչքով դժվար կամ անհնար են: Այդ գործողությունները կարող են իրականացվել որոշակի տեխնիկական միջոցներով, որոնք կապահովեն փոքրաքիվ նյութերի հետ տարվող աշխատանքի հնարավորությունը:

* * *

Միկրոմասնիկների հետ աշխատելու գաղափարը ծագել է 19-րդ դարի կեսերին, դատական բժշկության զարգացման հետ զուգահեռ:

Ենթադրում ենք, որ 19-րդ դարում առաջին հեղինակը, որը շարադրել է որոշակի քրեական գործերով միկրոմասնիկների հետազոտման դեպքեր, Հանս Հրոսն է²:

Հանս Հրոսը ներկայացնում է մի քանի փաստեր, երբ հագուստից կամ հանցագործության գործիքից հավաքած փոշին, հնարավորություն է տվել նույնացնել հանցագործին: Հրոսը մեծ թղթե պարկի մեջ տեղավորում էր փորձաքննության ներկայացված հագուստը, այնուհետև փայտով մի քանի հարվածներ էր հասցնում պարկին, որի արդյունքում հագուստից կամ այլ առարկաներից առանձնացած փոշին հավաքում էր պարկի մեջ:

Հրոսից հետո համարյա միաժամանակ մի շարք հետազոտողներ զբաղվեցին այդ հարցով: Դրանցից հիշատակման արժանի են. Է. Լոկարը, Ս. Իկարը, Ժ. Մորելը, Ժ. Վյուիլեմենը Ֆրանսիայում, Գիգեկեն, Պոպպը Գարմանախայում:

Էդմոնդ Լոկարը 19-րդ դարի սկզբին գրում էր. «Մխալ կլիներ կարծել, որ միայն մեր օրերում են ի հայտ եկել փոշին ուսումնասիրելու միտքը, նրանում գտնելու հայտնի կրիմինալիստիկական ցուցումներ: Այդ գաղափարի առաջացման ուշադիր քննումը կարելի է դասել դատական բժշկության հին ուսուցիչների ժամանակին³»:

¹ Зуев Е. И., Меженцев Г. Н., К вопросу о трасологическом понятии микрочастиц. Труды ВНИИ МВД СССР, №38, М., 1976, էջ 83:

² Гросс Г., Руководство для судебных следователей, как система криминалистики, СПб 1908:

³ Локар Э., Руководство по криминалистике, М., юрид. изд. НКЮ СССР, 1941 էջ 74:

Է. Լոկարը ընդգծում է փոշու կարևոր կրիմինալիստիկական նշանակությունը, բազմակողմանի լուսաբանում է դրա հետազոտման պրոբլեմը հանցագործությունների բացահայտման գործում, նշելով, որ նրա բաղադրության մեջ հանդիպում են օրգանական և անօրգանական ծագման բնութագրական մասնիկներ:

Արդեն 20-րդ դարի քսանական թվականներին կրակոցի հետքերի բաղադրությամբ՝ վառողի, մրի մասնիկներով, փամփուշտի բաղադրության մեջ մտնող տարրերով, որոնք արտահայտվում էին հրազենային վնասվածքների շրջանում, կարողանում էին պարզել կրակոցի փաստը, մուտքի և ելքի անցքերը և այլն: Հենց այդ ժամանակն էլ պետք է համարել, միկրոմասնիկների դարաշրջան, որպես կրիմինալիստիկայում հետախուզական և ապացուցողական տեղեկատվության հզոր միջոցի: Միկրոմասնիկների հետ աշխատելու համար օգտագործվում էին էմիսիոն սպեկտրալ անալիզը, թղթի քրոմատոգրաֆիան, ռենտգենյան անալիզը, մոլեկուլյար սպեկտրոսկոպիայի առանձին տարբերակներ, քիմիական միկրոանալիզ և այլ մեթոդներ:

1972 թվականին Վարշավայում կայացավ հատուկ գիտաժողով, նվիրված հանցագործությունների քննության գործում միկրոօբյեկտների օգտագործման վիճակի և հեռանկարների քննարկմանը: Զննարկվեցին դեպքի տեղում միկրոօբյեկտների հետ տարվող աշխատանքի և դրանց լաբորատոր հետազոտման հիմնական պրոբլեմները: Գիտաժողովի մասնակիցների զեկուցումներում ցույց էր տրվում, որ պրակտիկորեն չի կարելի կատարել քրեական հանցանք, դեպքի տեղում չթողնելով միկրոօբյեկտներ:

Այս թեզը գիտաժողովում հիմնավորվում էր բազմաթիվ օրինակներով:

* * *

Քանի որ միկրոօբյեկտների (միկրոմասնիկների) հետ դեպքի տեղում աշխատելը կարևոր է հանցագործության բացահայտման և հանցագործի հայտնաբերման համար, իսկ դրա իրականացումը քննիչից (օպերատիվ աշխատողից) հետաքննության մարմնից, մասնագետից, փորձագետից պահանջում է համապատասխան ջանքեր՝ (համապատասխանաբար) դրանց որոնման, հայտնաբերման, վերցման պահպանման (փաթեթավորման, զննության և հետազոտման) աշխատանքներ, կարծում ենք, դրանք պահանջում են կրիմինալիստիկական նոր ուսմունքի գոյությունը, որը կարծում ենք կկոչվի «կրիմինալիստիկական միկրոլոգիա»¹: Դրանով

¹ Միկրոլոգիա՝ լատին. mikros-փոքր և հուն. logos-ուսմունք բառերից:

կավարտվի նաև վերևում նշված «միկրոմասնիկներ», «միկրոօբյեկտներ», «միկրոհետքեր» վեճը:

Կրիմինալիստիկական միկրոլոգիայի ուսումնասիրման օբյեկտներն են. միկրոքանակի և միկրոչափերի նյութերը, մասնավորապես քիմիական ամենատարբեր տարրեր, նարկոտիկներ, թանաք, մածուկներ, տարբեր մետաղների և համաձուլվածքների խարտվածքներ, գործվածքներ, կենսաբանական ծագման արտաթորանքներ (մազեր, արյուն, թուք, սպերմա և այլ), բնական և սինթետիկ թելեր, շինարարական նյութերի մասնիկներ, ռետինա-տեխնիկական արտադրանքի, պլիմերային նյութերի, լաքի, ներկերի մանրույթներ, հող, բուսական նյութեր, ապակու, խեցագործական նյութերի փշրանքներ, յուղային նյութեր, պայթեցման, հրդեհի հետքեր, կրակոցի հետքեր և այլն, որոնք հաճախ դառնում են կրիմինալիստիկական և այլ փորձաքննությունների օբյեկտներ: Դրանց հետազոտությունը հնարավորություն է տալիս տեղեկություն ստանալ հանցագործի անձի մասին, նրա զբաղմունքի տեսակի, հանցագործության գործիքի, հանցագործության կատարման տեղի և ժամանակի և այլ փաստերի մասին, որոնք էական նշանակություն ունեն հանցագործության կանխման և բացահայտման գործում:

Ամենատարբեր նյութերի մանրագույն մասնիկները ծածկում են մեր շրջապատի տարբեր առարկաները, մարդկային մարմինը, հագուստը: Օրինակ՝ փոշին պարունակում է տարբեր նյութերի շատ մանր մասնիկներ և մանրադիտակային հետազոտությամբ կամ զգայուն քիմիական ռեակցիաների միջոցով հնարավոր է դառնում ճշգրտորեն պարզել նրա բաղադրությունը:

Պրակտիկային հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ միկրոմասնիկների հետազոտությունը վճռական նշանակություն է ունենում գործի քննության համար: Նման դեպքերում կատարվում են մանրադիտակային, հանքաբանական, բուսաբանական և այլ հետազոտություններ:

Թվարկել բոլոր միկրոմասնիկները, որոնք հանդիպում են կրիմինալիստիկական պրակտիկայում, հնարավոր չէ, քանի որ դրանք շատ բազմազան են, բազմաբնույթ և առաջանում են տարբեր աղբյուրներից:

Դիակ զննելիս նրա հագուստի վրա պետք է որոնել թելեր, մազձուլիկներ, որոնք տարբերվում են մահացածի հագուստի կտորի թելերից չափսերով, գույնով և այլ հատկանիշներով: Եթե դիակի ձեռքի մատները սեղմված են (բռուցք արված), ապա ափի տակ պետք է տեղավորել սպիտակ մաքուր թուղթ կամ պոլիէթիլենային թաղանթ, բացել մատները և ուշադիր զննել ափը, քանի որ հաճախ հանցագործի հետ ունեցած պայքա-

րի հետևանքով տուժողի ձեռքում մնում են մազեր, հագուստի թելիկներ և այլն:

Չճանաչված դիակի անձի պարզաբանման համար միկրոմասնիկների հետազոտումը կարող է ունենալ կարևոր նշանակություն: Նրա հագուստի, մարմնի վրա եղած փոշին քիմիական կամ մանրադիտակային հետազոտության ենթարկելով կարելի է նկատել, օրինակ, ածխի մասնիկներ՝ ածխահատի մոտ, ալյուրի մնացորդներ՝ հացագործի մոտ, ցեմենտի, ավազի մասնիկներ՝ շինարարի մոտ, մետաղական մասնիկներ՝ մետաղագործի մոտ և այլն:

Միկրոմասնիկների օգնությամբ հնարավոր է պարզել, որտեղի՞ց է տվյալ անձը եկել դեպքի տեղ, կամ հաստատել նրա՝ տվյալ տեղում լինելու փաստը, ո՞ր ճանապարհով է նա եկել կամ գնացել և այլն:

Սպանության, բռնաբարության, մարմնական վնասվածքներ հասցնելու և այլ գործերով միկրոմասնիկներին առկայությունը և համընկնումը կասկածյալի մարմնի, հագուստի միկրոմասնիկներին կվկայի, որ այդ անձինք գտնվել են անմիջական շփման մեջ, որի հետևանքով մեկի միկրոմասնիկները տեղափոխվել են մյուսի վրա:

Այս և նման հետևությունների կարելի է հանգել դեպքի տեղի, տարբեր արգելքների, անձի հագուստի, կոշիկի, մարմնի վրա մնացած միկրոմասնիկները հետազոտելով:

Դեպքի տեղում միկրոմասնիկների հետ աշխատելու համար անհրաժեշտ է քննիչին և մասնագետին զինել համապատասխան ճանաչողական, որը կրովանդակի. խոշորացույցներ (տարբեր մեծացման), ուլտրաճառագայթման լուսավորիչ, սովորական լուսավորիչ, լուսավորիչ ՕՒ-19, լուսագոտիչներ, էլեկտրոնային-օպտիկական փոխարկիչ, ունելի (պինցետ), վիրադանակ, վրձին, կաչուն ժապավեն, ասեղ, մագնիս, միկրոփոշեկուլ (ցանկալի է):

Միկրոմասնիկների փաթեթավորման և պահպանման համար անհրաժեշտ է հերմետիկ փակվող անոթներ, մաքուր խցաններով, պոլիէթիլենային կամ մաքուր թղթից ծրարներ, բամբակ, վիրակապ և այլն:

Մինչև միկրոմասնիկների որոնումն սկսելը, որը պետք է կատարվի քննչական նախնական վարկածների հիման վրա, քննիչը պետք է կառուցի կատարվածի համապատասխան մոդելների տարբերակներ, առանձին ուշադրություն դարձնելով հետևյալ բնույթի հարցերին.

- ❖ ինչպես կարող էր կատարվել հանցանքը.
- ❖ հանցագործը ինչպես է հայտնվել դեպքի տեղում.

❖ ինչպիսի արգելքներ է նա հաղթահարել, ինչպիսի գործիքներից և միջոցներից նա կարող էր օգտվել.

❖ ինչպես է զարգացել դեպքը (զարգացման փուլերը, դրանց հաջորդականությունը).

❖ նյութական ինչ օբյեկտներ են ընկել դեպքի շրջանակներում, օբյեկտներից յուրաքանչյուրը ինչ դերում է եղել.

❖ ինչ ճանապարհով է հանցագործը հեռացել դեպքի տեղից.

❖ ինչ նա կարող էր անել դեպքի տեղում.

❖ դեպքի տեղի իրադրության վերլուծության, հանցագործի վարքագծի և նրա շարժման հիման վրա պետք է որոշել այն տեղերը, որտեղ նա կարող էր թողնել միկրոմասնիկներ կամ կարող էր իր վրա վերցնել միկրոմասնիկներ:

Միկրոմասնիկների վերաբերյալ դեպքի տեղում պետք է լուծել հետևյալ հիմնական հարցերը.

1. տվյալ դեպքում ինչ միկրոմասնիկներ կարող են հանդիպել և որտեղ դրանք որոնել.

2. տեխնիկա-կրիմինալիստիկական ինչ միջոցներ պետք է կիրառել միկրոմասնիկների հայտնաբերման, վերցման և փաթեթավորման համար:

Այդ հարցերի լուծումը հեշտանում է, եթե օգտագործվի դեպքի բնույթի, միկրոմասնիկների և դրանց կրող օբյեկտների միջև եղած կախվածությունը:

Միկրոմասնիկներ որոնելիս պետք է ապահովել նախազգուշական բոլոր հնարավոր միջոցները, կանխելու դրանց կորուստը: Ուսումնասիրվող առարկան, եթե հնարավոր է, պետք է տեղավորել մաքուր թղթի կամ պոլիէթիլենային թաղանթի վրա, որպեսզի նրանից անջատվող միկրոմասնիկները չթափվեն: Ըստ որում, յուրաքանչյուր թերթի կամ թաղանթի վրա դրվում է միայն մեկ օբյեկտ, տարբեր միկրոմասնիկները միմյանց չխառնելու համար: Չի կարելի ուսումնասիրվող օբյեկտը պահել քամու, միջանցիկ քամու առաջ: Ինչպես հանցագործության գործիքները, այնպես էլ հետազոտվող օբյեկտները պետք է ուսումնասիրել մաքուր ձեռքերով: Չպետք է թույլ տալ չզննված իրերի տեղափոխում: Պետք է հետևել, որ զննության մասնակիցներից որևէ մեկը չդառնա դեպքի տեղը այլ միկրոմասնիկներով կեղտոտելու աղբյուր: Միկրոմասնիկների որոնումը նպատակահարմար է սկսել դեպքի տեղի հանգուցային տեղերից (դիակ, անկողին, կոտրած պահարան և այլն), հանցագործության գործիքներից, հանցագործի կողմից թողնված իրերից: Դիակը զննելիս պետք է միկրո-

մասնիկներ որոնել հազուստի կարերի, ծավաձքների, գրպանների մեջ, ձեռնոցների վրա, կոշիկի ներքաճներին, եղունգների տակ, ձեռքի ափին: Ուսումնասիրվում են գորգերը, դաճան առաջ դրված լաթերը, մետաղական ցանցերը և այլն:

Շատ հաճախ միկրոմասնիկներ հայտնաբերվում են սառը զենքերի, հանցագործության գործիքների վրա (դանակ, կացին և այլն):

Միկրոմասնիկներ հայտնաբերելու համար անհրաժեշտ է լավ լուսավորություն, ուղղահայաց և թեք ընկնող ճառագայթներ, որոշ դեպքերում՝ ուլտրամանուշակագույն ճառագայթներ:

Միկրոմասնիկներ վերցնելու համար օգտագործվում են. խոշորացույց, մագնիս, լվացված և օդում չորացված վիրահատական դանակ (չի կարելի սրբել), պինցետ, մետաղական շյուղ, փափուկ վրձին, փոքր չափի մաքուր փոշեկույ: Որոշ դեպքերում օգտագործվում են նաև հետքապատճենահան քաղանթ, պարաֆին:

Փաթեթավորման համար նպատակահարմար է օգտագործել այնպիսի միջոցներ, որոնք վերցված օբյեկտը կպաշտպանեն արտաքին ազդեցություններից. մաքուր լվացված և օդում չորացված շշեր, սրվակներ, որոնք կիրառվում են դեղագործության մեջ, ամուր թղթե կամ պոլիէթիլենային ծրարներ: Խոշոր առարկաները փաթեթավորվում են պոլիէթիլենային թաղանթով, որի եզրերը սոսնձվում են կամ ձուլվում: Խորհուրդ է տրվում փաթեթի վրա կատարել գրառում՝ «Զգույշ, միկրոմասնիկներ են: Բացել կարող է միայն փորձագետը»:

Վերը նշված բոլոր գործողությունները նպատակահարմար է կատարել մասնագետի մասնակցությամբ:

Միկրոմասնիկների հետազոտմամբ լուծվող հարցերի շրջանակը կախված է նրանց տեսակից, հայտնաբերելու տեղից և քննվող գործի հանգամանքներից: Հաճախ դրանք լուծվում են համալիր փորձաքննությամբ (կենսաբանական, քիմիական և այլ):

Հայտնաբերված միկրոմասնիկները կամ դրանք պարունակող օբյեկտները նկարագրվում են զննության արձանագրության մեջ և ըստ հնարավորի՝ լուսանկարվում: Տեսանելի միկրոմասնիկներ հայտնաբերելիս, զննության արձանագրության մեջ պետք է ցույց տալ դրանց քանակը, ձևը, չափսերը, գույնը: Լուսանկարելիս միկրոմասնիկներ պարունակող տեղը պետք է ցույց տալ սլաքով: Լուսանկարի վրա մասնիկները կարող են և չերևալ, բայց մնան ցուցիչները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել նրանց տեղադրման մասին:

ՉԼՈՒՄ 14. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՕԳՈՐՈՒՈՒԹՅԱՆ ՕԳՈՐՈՒՈՒԹՅԱՆ

Շների օգտագործումը հանցագործներին իրենց հոտով (հոտային հետքերով) հետապնդելիս կամ հափշտակվածը որոնելիս սկսվեց 19-րդ դարի վերջերից: 1896 թ. գերմանական Հիլդեսհեյմ քաղաքում կրիմինալիստիկայի հիմնադիր Հանս Հրոսի նախաձեռնությամբ քաղաքի մունիցիպալիտետում հայտնվեցին 12 շներ, որոնք վարժեցվել էին պարեկային ծառայության համար:

Ռուսաստանում հետախուզական շնավարժեցումը սկսվել է 1908 թ. հոկտեմբերի 5-ից, երբ Պետերբուրգում հիմնադրվեց «Ոստիկանությունում և պարեկային ծառայությունում շների կիրառումը խրախուսող համառուսաստանյան ընկերությունը»¹:

Բայց շների հոտոտելիքի հնարավորությունների օգտագործումը համեմատաբար սահմանափակ էր, որն էլ պայմանավորեց հոտի արհեստական անալիզատոր ստեղծելու գաղափարի մշակումը: 50-ական թվականներին սկսված փորձերը, որոնք իրականացվում էին մոլեկուլային բիոքիմիայում մասս-սպեկտրոմետրի և գազային քրոմատոգրաֆի մեթոդների կիրառմամբ, հնարավորություն տվեցին ստեղծել սարքեր, որոնց միջոցով կատարվում էին գազային նյութերի նրբագույն հետազոտություններ²: Սակայն նշված մեթոդներով ստեղծված սարքերն ընդունակ էին նույնացնել միայն առանձին հոտերը (մոնոհոտերը) (օրինակ՝ հեղուկ կամ պինդ մարմինների գոլորշիացումները), իսկ կենդանի օրգանիզմների հոտերը հետազոտման չէին ենթարկվում: Դրանց նույնացումը մնում էր կենդանիների (շների, խոզերի և այլն) իրավասությանը: Ուշադրության է արժանի միայն այն, որ «Ջեներալ մոթորս» ֆիրման մշակեց դյուրատար ինդիկատոր, որը հայտնաբերում էր մարդու հոտը՝ քանո փչելու ուղղությամբ 300 մետր հեռավորությունից³:

Հոտերի տարբերակման հարցը որպես գիտություն ձևավորվեց 20-րդ դարի 50-ական թվականներին, հիմք ունենալով մոլեկուլային կենսա-

¹ Տե՛ս Кисин М.В. Современное состояние использования консервированного запаха в раскрытии преступлений / Использование консервированных запахов в раскрытии и расследовании краж и преступлений против личности: материалы всеоюзного семинара-совещания. Рига, ВНИИ МВД СССР, 1984, էջ 26-27:

² Տե՛ս Перспективы изучения летучих веществ, выделяемых человеком, в криминалистике. Вопросы и ответы. М., 1974, էջ 12:

³ Տե՛ս Салтевский М.В. Криминалистическая одорология. Киев, КВШ МВД СССР, 1976, էջ 6:

բանության, ֆիզիոլոգիայի, բիոնիկայի, կինոլոգիայի, քիմիայի, էլեկտրոնիկայի և այլ բնական գիտությունների նվաճումները:

Հոտի տեսության կիրառական բնույթը, որպես հանցագործությունների քննության ու կանխման գործին նպաստող երևույթի, առաջինը քննության առան և առաջարկեցին Ա.Ի. Վինբերգը, Վ.Վ. Բեզրուկովը, Մ.Գ. Մայորովը, Ռ.Ս. Թոդորովը¹:

Նրանց՝ նշված հայտնագործությունը ծնունդ տվեց կրիմինալիստիկայի գիտության նոր ուղղությանը – **կրիմինալիստիկական օդորոլոգիային**, որն առաջարկվեց Ա.Ի. Վինբերգի կողմից և տրվեց նրա գիտական հիմնավորումը, որն ըստ էության հոտային հետքերի կոնսերվացումն ու դրանք հանցագործությունների քննության մեջ կիրառելու գիտական հանձնարարականներն էին²:

Խորհրդային գիտնականների (այդ թվում՝ Ա. Վինբերգի) և պրակտիկ աշխատողների կողմից առաջարկված այդ մեթոդը, ըստ որի հետագայում ծառայական հետախույզ շան միջոցով հնարավոր էր դառնում պարզել հոտի աղբյուրը՝ մարդն իր անձնական իրերով, հոտային հետքերով և իր հետ կոնտակտի մեջ եղած այլ օբյեկտներով³, 70-ական թվականներին լայն կիրառում գտավ եվրոպական բազմաթիվ երկրներում (Գերմանիա, Հունգարիա, Բուլղարիա, Չեխոսլովակիա, Լեհաստան):

1972 թ. Գերմանիայում՝ (Դեմոկրատական Հանրապետությունում) կրիմինալ-տեխնիկական ծառայություններում ստեղծվեցին օդորոլոգիական լաբորատորիաներ, որոնց առջև խնդիր էր դրված սպասարկվող շրջաններում իրականացնել հոտերի իդենտիֆիկացում: Յուրաքանչյուր լաբորատորիա ուներ հոտային ինֆորմացիայի բանկ, պահեստ-քարտաբանի ձևով և որտեղ կենտրոնացված էին հոտերի հետքերը, վերցված դեպքի տեղից, ինչպես նաև օպերատիվ հետաքրքրություն ներկայացնող անձանց հոտերը:

1979 թվականից ԽՍՀՄ ՆԳՆ գիտահետազոտական կրիմինալիստիկական կենտրոնում իրականացվեցին հետազոտություններ կրիմինա-

¹ St'u Безруков В.В., Винберг А.И., Майоров М.Г., Тодоров Р.М., Новое в криминалистике (Социалистическая законность, 1965, №10, էջ 74-75) և А.с.30498 СССР. Устройство для консервирования запахов, նույն հեղինակները, Открытия. Изобретения. Бюллетень. 1966, №12, էջ 283:

² St'u Винберг А.И. Криминалистическая одорология. Криминалистика на службе следствия, Вильнюс, Высшая школа, 1967, էջ 8-17:

³ St'u А.с.30498 СССР. Устройство для консервирования запахов / В.В. Безруков, А.И. Винберг, М.Г. Майоров, Р.М. Тодоров (СССР №964199, заявлено 6.03.1965), Открытия. Изобретения. Бюллетень. 1966, №12.

լիստիկական օդորոլոգիայի մեթոդի կատարելագործման ուղղությամբ, որոնք տվեցին դրական արդյունքներ¹:

1976 թ. Լատվիայի Յուրմալա քաղաքում ստեղծվեց օդորոլոգիական փորձարարական լաբորատորիա:

Այստեղ հավաքվում, պահածոյացվում և պահպանվում էին դեպքի տեղից վերցված հոտային հետքերը: Բացի այդ, կոնսերվացված հետքերը իդենտիֆիկացվում էին կասկածյալներից վերցված հոտի նմուշների հետ, այդ նպատակի համար օգտագործելով շուն-դետեկտորներ: Այստեղ ստացված դրական փորձը նախադրյալներ ստեղծեց 80-ական թվականների վերջերին Մոսկվայում, Վիլնյուսում և Միության այլ քաղաքներում մեծ լաբորատորիաների ստեղծման համար:

Դատավարական և կրիմինալիստիկական գրականությունից հայտնի է, որ հոտային հետքերի դատավարական կիրառումը մի շարք առարկություններ առաջացրեց: Այս հարցի հակառակորդների փաստարկումներն առաջին հերթին վերաբերում էին նրան, որ վերցված հոտի նմուշը չի ընկալվում քննիչի և ընթերակաների կողմից, հետևաբար՝ դեպքի տեղի արձանագրության մեջ չի կարող ճշգրիտ արտացոլվել և չի կարող գնմվել այնպես, ինչպես մյուս իրեղեն ապացույցները²:

Մյուս փաստարկումն այն է, որ ծառայական-հետախույզ շան օգտագործման արդյունքները չեն կարող դիտվել որպես ապացույց, քանի որ քրեադատավարական օրենքը ապացույցների սպառիչ թվարկում չի նախատեսում այնպիսի ապացույց, ինչպիսին շան վարքագիծն է որոշակի անձի կամ տեղի նկատմամբ: Բացի այդ, քրեադատավարական օրենքը որոնող շան միջոցով իդենտիֆիկացման կատարումը որպես քննչական գործողություն չի նախատեսում:

Ըստ Մ.Ս. Ստրոգովիչի՝ որոշակի անձի նկատմամբ շան դրական ռեակցիան (վերաբերմունքը) կարող է ունենալ ապացուցողական նշանակություն միայն այն դեպքում, եթե անձին (կասկածյալին, մեղադրյալին) նրան ներկայացնելը համարվի դատավարական գործողություն³: Նա

¹ St'u Снетков В.А., Старавойтов В.И. Криминалистическое значение запаховой характеристики человека (методические аспекты). Вопросы теории криминалистики и экспертно-криминалистических проблем: Сборник научных трудов, М., ВНИИ МВД СССР, 1990, էջ 3-15:

² St'u Винберг А.И., նշված աշխ., Шиканов В.И., Копьева А.Н., Абраменкова В.С. Вопросы идентификации по запаху при расследовании преступлений. Сибирские юридические записки, Иркутск, Омск, 1973, вып. 3, էջ 100:

³ St'u Строгович М.С. Проблемы судебной этики. М., 1974, էջ 150:

գտնում է նաև, որ շան վարքագծի գնահատման համար որոշակի երաշխիքներ չկան այն դեպքում, երբ նա ռեակցիա է տալիս որոշակի անձի նկատմամբ, քանի որ դեռևս չի ապացուցվել մարդու հոտի անհատականությունը և անփոփոխելիությունը:

Վերջին փաստարկումը, մեր կարծիքով, հակասում է օբյեկտների և նրանց արտահայտությունների անհատականության կրիմինալիստիկական տեսությանը:

Չի կարելի համաձայնել հիշյալ առարկությունների հեղինակների հետ, թե ոչ ոքի կողմից ոչնչով ապացուցված չէ մարդու հոտի անհատականությունն ու անփոփոխելիությունը, քանի որ կենսաբանների, բժիշկների, կինոլոգների և այդ հարցերով զբաղվող կրիմինալիստների մեծ մասի կողմից ապացուցված է, որ մարդու հոտը անհատականության և հարաբերական կայունության առումով ունի անվիճելի օրինաչափություններ: Հոտի գիտականորեն հիմնավորված մեթոդիկաների առկայության պայմաններում, որոնք անհրաժեշտ միջոցներ կհանդիսանան շուն բիոդետեկտորների նույնական ազդանշանների համար, դրանց օգտագործումը հնարավորություն կտա ստանալ դրական արդյունքներ:

Հիշենք Հեգելի խոսքերը, շարադրված նրա «Տրամաբանության գիտությունը» գրքում. «Չկան երկու իրեր, որոնք միևնույնը կլինեին»:

Ս.Մ. Պոտապովը կրիմինալիստիկական նույնացումը համարում էր կրիմինալիստիկայի ընդհանուր մեթոդը և «հատուկ մեթոդաբան»¹, նա գտնում էր, որ իդենտիֆիկացմամբ կարելի է պարզել ոչ միայն նյութական օբյեկտների նույնությունը, *կրիմինալիստիկա*, նրանց սեռի, տեսակի, քանակի և որակի նույնությունը, այլև տեղանքի և ժամանակի հատվածը, մարդու մտավոր կարողությունները, նրա արտաքին գործողությունները և ներքին հոգևոր վիճակը: Իսկ եթե Պոտապովից վերադառնանք ներկա օրերը, կարող ենք Յու.Գ. Կորուխովի, Ա.Գ. Ֆիլիպովի, տողերիս հեղինակի և այլոց խոսքերով վկայել, որ հանցագործություններ քննելիս հաճախ անհրաժեշտություն է առաջանում հետքերով և այլ արտահայտություններով որոշել մարդու, առարկայի կամ այլ օբյեկտի կապը քննվող իրադարձության հետ: Օրինակ՝ ձեռքերի, ոտքերի, ատամների հետքերով պարզել այդ հետքերը թողած անձին, տրանսպորտային միջոցի հետքով որոնել ստուգվող ավտոմեքենան, ձեռագրով՝ նրա կատարողին կամ հեղինակին և այլն:

¹ Ст'ю Потапов С..М. Введение в криминалистику. М., 1946, 4, 15 էջերը:

Նման դեպքերում, ըստ ՔԴՕ-ի իրականացվում է նույնացում՝ իդենտիֆիկացիա, առանց որոնվող անձը կամ առարկան (տրանսպորտային միջոցը) նույնացում կատարողին ներկայացնելու, իսկ հոտի անհատականությունն ու հարաբերական կայունությունը, ինչպես երևում է սույն աշխատանքի շարադրանքից, ապացուցված է:

Մ.Ս. Ստրոգովիչի դիրքորոշումը ունեցավ կողմնակիցներ, որոնք մաս գտնում էին, որ շան հոտառության միջոցով մարդկանց ընտրությունը մարդու իրավունքների կոպիտ խախտում է, հատկապես այն դեպքում, երբ շանը ներկայացված անձը ակնհայտորեն մասնակից չէ հանցագործությանը: Նշված և որոշ այլ փաստարկներ նպաստեցին երկարատև երկխոսությունների, բանավեճերի առաջացմանը:

Գրանց մի մասը, որոնք վերաբերում էին բարոյական նորմերի խախտումներին, քննադատության չդիմացան և դուրս եկան շրջանառությունից: Օրինակ՝ անձի ընտրությանը, ինչպես արվում է քննման, մատնահետքերի մուշներ վերցնելու և մման դեպքերում: Կարծում ենք, մման դեպքերում ավելի քիչ չի նսեմանում անձի արժանապատվությունը, քան արյան, քթի, սպերմայի և այլ մուշներ վերցնելիս, քննում քննչական գործողությունը, քննչական փորձարարության որոշ տեսակները կատարելիս:

Չենք առարկում մաս գրականության մեջ կրկնվող այն կարծիքները, որ օդորոլոգիական մեթոդն ունի բնագիտական, տեխնիկական, դատավարական, էթիկական, տակտիկական պրոբլեմներ և յուրաքանչյուրի վերաբերյալ արտահայտված բազմաթիվ տեսակետներ¹:

Իսկ այն փաստարկը, որ հոտը չի կարելի ընդունել որպես իրեղեն ապացույց, նույնպես չի հիմնավորվում: Մասնագետների մի մեծ խումբ գտնում է, որ հոտային հեքերը համարվում են միկրոօբյեկտների տարատեսակը և որ նրանց հետ պետք է վերաբերվել համապատասխանաբար: Այսինքն, միկրոօբյեկտները, ինչպես մաս նրանց հատկությունները հաճախ անտեսանելի են քննիչի և ընթերակաների համար, բայց նրանց կարգավիճակը, որպես իրեղեն ապացույց, կրիմինալիստիկայում անվիճելի է: Նկատենք մաս, որ անտեսանելի միկրոօբյեկտները հայտնագործելու և վերցնելու համար պրակտիկայում կիրառվում են **էլեկտրիկա-**

¹ Стів оріналь, Поль К.Д. Естественно-научная криминалистика. М., 1982. Старовойтов В.И., Сулимов К.Т., Гриценко В.В. Заповховые следы участников происшествия, обнаружение, сбор, организация, исследования методические рекомендации. М., ЭКЦ МВД России, 1998:

ցիա՛, մագնեդիզմ՞, կաշուն ժապավեն և այլ մեթոդներ, իսկ հոտային հետքերը վերցնելու համար կիրառվում է *ադսորբցիայի՞*³ երևույթը, որի արդյունքը՝ ադսորբենտը հեշտությամբ ընկալվում է այնպես, ինչպես միկրոօբյեկտների կրիչները:

Համապատասխան փորձարկումների և գիտական վերլուծությունների արդյունքները վկայում են, որ հոտերը, մասնավորապես՝ մարդու հոտը անհատական են և ունեն հարաբերական կայունություն, որոնք, ինչպես հայտնի է, անհատականացմանը բնորոշ հատկություններն են և չեն փոփոխվում մոտավորապես տասնհինգ տարվա ընթացքում⁴: «Մարդու հոտը անհատական է և որոշակի պայմաններում կարող է պահպանվել տասնյակ տարիներ: Բայց մինչև ներկա ժամանակներս չի պարզված ինչ բաղադրիչներ (նրանց հարաբերակցությունը) են պայմանավորում հոտի կայունությունը և անհատականությունը: Բայց նա հատկություն ունի երկար ժամանակ պահպանվել առարկաների մակերեսին, որին անձը հպվել է, որն էլ կանխորոշում է հոտային հետքի կրիմինալատիկական նշանակությունը»⁵:

Այդ մեթոդի կիրառման կողմնակիցների կարծիքով պետք է ընդլայնել դրա կիրառման շրջանակները: Սույն պրոբլեմը և, համապատասխանաբար, այդ թեմայով իրականացվող բանավեճերը ծագեցին, երբ կարծիքների հայտնվեցին օդորոյզիական մեթոդի կիրառման արդյունքներն օգտագործել ապացուցման մեջ:

Օդորոյզիական մեթոդի կիրառման արդյունքներն ապացուցման մեջ կիրառելու միտքը հիմնվում է այն հնարավորության վրա, որ հոտով նույնացումը կարելի է իրականացնել ոչ միայն օպերատիվ-հետախուզա-

¹ *Էլեկտրիզացիա* – էլեկտրական լիցքերի հաղորդումը մարմնին կամ լիցքերի անցկացումը մարմնի վրա՝ մոտիկ դրված լիցքավորված մարմնի ազդեցությամբ:

² *Մագնեդիզմ* – հուն. Magnetis lithos – քար Մագնեսիայից (Magnesia – փոքր Ասիայի հնագույն քաղաք): *Մագնեդիզմը* ուսմունք է մագնիսական երևույթների և մարմինների մագնիսական հատկությունների մասին:

³ *Ադսորբցիա* (լատ. ad-վրա, մոտ, կից + sorbere-կլանում, ներծծում) գազի կամ հեղուկի մասնակիցների քանձրացումը բարձր մարմնի մակերեսի վրա:

⁴ Տե՛ս Биленчук П.Д., Симчук А.Н. Криминалистическая одорология: понятие, современное состояние, возможности использования. Спецкурс. Киев, 1997, էջ 5: Феодоров Г.В., Дерчай Г.Б. Одорология и ее использование в раскрытии и расследовании преступлений: Уч. пособие. Академия МВД РБ. Мн., 1996, 15-16 էջերը:

⁵ Криминалистика. Учебник. Под ред. А.Г. Филиппова и А.Ф. Вольнского. Изд. "Спарк", 1998, էջ 185:

կան աշխատանքների ինտենսիվ կատարման փուլում՝ քննության սկզբում, այլ պրակտիկորեն գործի քննության ցանկացած պահի:

Ա.Ի. Վիբերգը, Ռ.Ս. Բելկինը, Վ.Դ. Արսենևը և այլ գիտնականներ քննադատորեն վերաբերվեցին Մ.Ս. Ստրոգովիչի փաստարկներին, այն մասին, որ հոտային հետքերի պահածոյացման և օդորոլոգիական տարբերակման արդյունքների ձևակերպումը տեղեկանքով՝ որպես ապացույցի աղբյուրի, անթույլատրելի է:

Այդ քննադատության արդյունքում ծնվեցին հետևյալ կարծիքները.

ա) շան գործողությունները համարվում են ապացուցողական փաստ և ոչ թե ապացուցման միջոց: Եվ եթե այդ փաստը կապված է պարզաբանման ենթակա հանգամանքների հետ, ապա այն վերաբերում է փաստական տվյալներին, որոնց հիման վրա պարզվում են գործի հանգամանքները և հաստատվում փաստաթղթով (տեղեկանքով)՝ շան գործողությունների վերաբերյալ, այսինքն՝ օրենքով նախատեսված ապացուցման միջոցով¹,

բ) պետք է իրականացնել հոտի հետազոտության օրգանոլեպտիկա² օդորոլոգիական փորձաքննության շրջանակներում³,

գ) օդորոլոգիական տարբերակումն իրականացնել քննչական փորձարարության շրջանակներում:

Դժվար է առաջնություն տալ թվարկած և չթվարկած այլ կարծիքներից որևէ մեկին: Կարծում են, դրանք բոլորն էր ընդունելի են, նայելով հոտն ընկալելու, վերցնելու և տարբերակելու որոշակի նպատակներին: Մասնավորապես, դրանք անհրաժեշտ են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս, քննչական գործողություններ, նույնացման հետազոտություններ կատարելիս:

Վերջին երկու դեպքերում դրանք կարող են ապացույց ձեռք բերելու հնարավորություն ընձեռել (օրինակ՝ տեղազննության, խուզարկության,

¹ St'u Арсеньев В.Д. Криминалистическая одорология и доказательственное право. Собрание юридических записи. Сборник научных трудов ВНИИСЭ. М., 1976, № 21, 60-62 էջերը:

² Օրգանոլեպտիկ (օրգան + leptikos- վերցնելու, ընդունելու հարված), որը բացահայտվում է զգայարանների օգնությամբ (օրինակ՝ օրգանոլեպտիկ հատկություններ – օրյեկտների հատկություններ, որոնք զնահատվում են զգայարանների (համ, հոտ և այլ) օգնությամբ: Տիպիկ օրինակ է համտեսումը:

³ St'u Винберг А.И. К вопросу об органолентико-одорологической экспертизе / Актуальные вопросы теории судебной экспертизы: сборник научных трудов ВНИИСЭ. М., 1976, №21, էջ 60-62: Винберг А.И. Судебно-однородологическая экспертиза / Социалистическая законность, 1987, №10, 60-63 էջերը:

ճանաչման ներկայացնելու, քննչական փարձարարության ժամանակ) օժանելիքի, ծխախոտի, վառողի, նարկոտիկ և այլ նյութերի հոտը կնպաստի այդ նյութերը կամ դրանց կրողներին, օգտագործողներին հայտնաբերելու, դրանց ճանաչելու, հոտի առկայությունը հաստատելու համար: Կամ հնարավորություն կտան ստանալու ապացույցներ, օրինակ՝ երբ կհետազոտվեն իրենց հոտով հայտնաբերված նյութերը, որոնք ծանր հետևանքներ են առաջացրել (օրինակ՝ ուժեղ ներգործող նյութեր, թույներ, տեխնիկական սպիրտ, պայթուցիկ նյութեր և այլն):

Ինչ վերաբերում է շան կամ այլ կենդանիների կողմից հոտի կիրառման կամ տարբերակման հարցերին, ապա ակնհայտ դեպքերի (դիակի, արժեքների, թաքնված հանցագործի հայտնաբերման և նման) արձանագրությունները իմ գնահատմամբ ապացույցի արժեք ունեն:

Վիճաբանությունների առավել մեծ ավելքը հարվածում է կենդանիների կողմից հոտերի տարբերակմանը, դրանց արդյունքների ապացուցողական արժեքին: Հատկապես նկատի ունենալով, որ ապացույցների թվարկում ՀՀ ԶԴՕ-ն այն չի նշում և կենդանիների վարքագծի հետազոտումն առայժմ չի դիտվում որպես փարձագիտական աշխատանք: Համաձայն ուսմունքի, որը վերաբերում է քրեական դատավարությունում ապացույց ընտրելիս շան վարքագծի ճանաչմանը և որի մասին կարելի է կարդալ պրոֆ. Ա.Ի. Վինբերգի աշխատանքներում¹, անհրաժեշտ է հաշվի առնել, որ՝

1. յուրաքանչյուր հոտ անկրկնելի է, անփոփոխ, ինչպես մատնադրոշմը,

2. շունը ընդունակ է անսխալ ճանաչել և ընտրել մարդուն հոտով բազմաթիվ այլ անձանց միջից.

3. այդ նույն շունը կարող է միանշանակ, մարդու համար ընկալելի ձևով հաղորդել ճանաչման արդյունքը:

Սակայն, դա առայժմ մեր Հանրապետությունում: Արտասահմանյան զարգացած երկրներում, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնությունում, Մերձբալթյան պետություններում, չնայած ճանաչված գիտնականների հակասական կարծիքներին, նման հետազոտություններ իրականացվում են՝ լուծելու համար հիմնականում այնպիսի կարևոր հարցեր, որոնք ներկայացված են սույն գլխի վերջում:

¹ Ст'ю Винберг А.И. Криминалистическая орология/ Криминалистика на службе следствия. Вильнюс, 1967, էջ 5:

Համապատասխան ուսումնասիրությունները հնարավորություն են տվել պարզելու, որ այն նյութերը, որոնց արծագանքում են շները մարդուն ճանաչելիս, իրենց քիմիական հատկություններով համապատասխանում են թթուներին: Դրա համար էլ մարդու անհատական հոտը չի որոշվում ինչ-որ բաղադրիչներով, որոնք արտահայտում են նրա մասնագիտական զբաղմունքը կամ կենցաղը, սովորությունները և այլն: Չնայած օդորոլոգիական հետազոտություններ կատարելիս պետք է նկատի ունենալ, որ մարդու հոտային մոլեկուլներին մասն միացումներ կարող են և լինել: Մարդու կենսաբանական արտաթորանքները (թուք, մեզ, սպերմա, լորձ և այլն) բովանդակում են անհատական, հոտային նյութեր, որոնք, ինչպես նաև մարմնի տարբեր մասերի մազերը և կտրված եղունգները մեծ արդյունավետությամբ օգտագործվում են շան կողմից իրերի և առարկաների տարբերակման համար:

Այն հարցին, ըստ որի կարելի է հոտի ուսումնասիրում կատարել ոչ միայն թարմ հետքերով, այլ նաև՝ հին, պետք է ավելացնել, որ 1965թ. ստեղծվեց այնպիսի հնարավորություն, որը թույլ էր տալիս հավաքել և հետազայում օգտագործել «հոտի մոլեկուլները»: Ինչպես նշում է Ա.Մ. Լարինը իր չափազանց ինքնատիպ, հետաքրքիր աշխատության մեջ՝ գազային խառնուրդի մոլեկուլները վաղուց արդեն կիրառվում էին գիտության և տեխնիկայի տարբեր բնագավառներում, մասնավորապես, լեռնային գործում, շրջակա միջավայրի վիճակի վրա հսկողությունում: Ինքնատիպ էր, սակայն, շեկիստների կողմից առաջարկված «հոտի մոլեկուլների» կիրառման եղանակը: Այն կայանում էր նրանում, որ երբ քննչական մարմնի տեսադաշտում հայտնվում էր անձ, որը կասկածվում էր հանցագործության մեջ, ենթարկվում էր այսպես կոչված տարբերակման:

Տարբերակման այս ընթացքը նմանվում է որոշ քննչական գործողությունների, որոնք կատարվում են տեխնիկայի կիրառմամբ: Եթե հաշվի առնվի, որ շունը տարբերակումը կատարում է իր անժխտելի, գիտականորեն հիմնավորված ֆիզիոլոգիական առավելությունների շնորհիվ, ապա, կարծում ենք, որ այն պետք է դիտել որպես գիտատեխնիկական միջոց, որոնց կիրառումը քննչական գործողություններ կատարելիս ԶԳՕ-ն չի արգելում:

Ա.Մ. Լարինն այն նմանեցնում է ճանաչման ներկայացնելուն, նշելով սակայն դատավարական այն հարցերը, որոնք մեր կարծիքով մերժում են նման գործողության կատարումը: Այն ավելի շատ փորձաքննություն է: Շունը, այս դեպքում (նաև ճանաչման ներկայացնելու դեպքում)

¹ Стен Ларин А.М. Криминалистика и паракриминалистика. М., 1996, էջ 149:

անմիջականորեն դեպքի տեղից կամ պահաժոյացված օդից վերցնում է մնուշ և համեմատում կասկածվողի հոտի հետ: Նրա համապատասխան վերաբերմունքը՝ հաչոց, հագուստից քաշելը և այլն, կամ էլ անտարբերությունը նրա եզրակացությունն է, որին գրավոր տեսք կարող է տալ օդորոյզը:

Հոտով (հոտային հետքերով) հանցանք կատարած անձանց մերկացնելու համար ՀՀ քննչական մարմինները պետք է օգտագործեն Ռ-Վ այն դրական փորձը, որը տեղ է գտել գրականության մեջ¹:

Ընդհանրացնելով այն և սեփական տրամաբանական վերլուծությունները, կարծում ենք, որ այդ հարցում վճռական նշանակություն կարող է ունենա այդպիսի հետքերի ճիշտ և ժամանակին վերցնումը:

Հոտային հետքերը պետք է վերցվեն դեպքի տեղի զննությունն սկսելուց (ստատիկ փուլից) անմիջապես հետո, քանի դեռ զննության մասնակիցներն ու այլ անձինք դեպքի տեղ չեն բերել իրենց հոտերը: Նման դեպքերում պետք է նկատի ունենալ, որ հոտային հետքերը մնում են հանցագործի, զոհի, հանցագործության գործիքի, դեպքի տեղի և հանցավոր գործունեության միջավայրում գտնվող այլ օբյեկտների փոխգործողության արդյունքում: Հոտային հետքերի առաջացման դիագնոստիկան հաշվի առնելով, տրամաբանական դատողությունների միջոցով կարելի է որոշել այն հավանական տեղերը, որտեղ կարող են լինել հանցագործի հոտային հետքերը:

Հոտերի պահպանման և վերլուծության համար պիտանիության հարցը կախված է ժամանակի, մթնոլորտային գործոններից, որոշ ֆիզիոլոգիական պարամետրերից և մարդու սովորություններից կամ մարդու և հետքակիր օբյեկտի կոնտակտի տևողության մեծացումը նպաստում է հոտային հետքի խտացմանը, օդի, հետքակիր օբյեկտի ջերմաստիճանի բարձրացումը, քամին, հետք ընդունող օբյեկտի բնույթը (մակերևույթի հարթության բարձր աստիճանը) նպաստում են հոտային հետքերի արագ վերացմանը: Հակառակ պայմաններում (չեչոտ մակերևույթ ունեցող օբյեկտ, ցուրտ ջերմաստիճան) նրանք երկար են պահպանվում: Ներկայացնում ենք մարդու հոտային հետքերի պահպանման տևողությունը մի քանի հետքակիր օբյեկտների վրա².

¹ Այստեղ և հետագայում «հոտային հետքեր» արտահայտությունը օգտագործվում է փոխաբերական առումով:

² Ст'е Starовойтов В.И., Сулимов В.В., Гриценко В.В. Запаховые следы участников происшествия. Обнаружение, сбор, организация исследования. М., ЭКЦ МВД РФ, 1993, էջ 8:

արյան հետքեր (այդ թվում՝ չորացած բծեր)	մի քանի ամսից մինչև մի քանի տարի (ավելի քան 16 տարի)
անձնական իրեր (սանր, գրառումների տետր և այլն)	մի քանի օրից մի քանի ամիս
հագած իրեր, որոնք պարունակում են քրտինք կամ նրա գոլորշիները (հագուստ, կոշիկ)	մի քանի օրից մի քանի ամիս
առարկաներ, որոնք մարդու մարմնի հետ կոնտակտի մեջ են եղել ոչ պակաս քան 30 րոպե (պայուսակ, նստարան, դանակի բռնակը)	մինչև 3 օր
առարկաներ, որոնք մարդու մարմնի հետ կոնտակտի մեջ են եղել 30 րոպեից պակաս	մեկից երկու ժամ
հողի կամ ձյան վրա եղած հետքերը	(մի քանի ժամից, օրեր):

Հողում կամ ձյան մեջ թաղված իրերի և առարկաների վրա հոտային հետքերը պահպանվում են մի քանի ամիս:

Թեև նշված աղյուսակի բովանդակային անորոշությանը, կողմնորոշվելու համար այն կարող է օգտակար լինել հատկապես պրակտիկ աշխատողներին, որոնց խորհուրդ է տրվում դեպքի տեղը զննելիս նշանակություն տալ նաև հոտային տեղեկատվությանը, այլ կերպ ասած՝ ուսումնասիրել տեղի իրադրությունը, կազմել դեպքի մտովի մակետը, որոնք հնարավորություն կտան բացահայտել այն օբյեկտները, որոնց վրա կարող էին մնալ, պահպանվել հոտային հետքերը:

Նաև պետք է հաշվի առնել, որ քննչական-օպերատիվ խմբի՝ դեպքի տեղ ժամանակին մեկնելը ևս նպաստում է հոտային հետքերի բացահայտմանը և պահպանմանը: Հոտային հետքերի հայտնաբերման համար անհրաժեշտ է հաշվի առնել այն օրինաչափությունը, որ դրանց առաջին հերթին պետք է որոնել այն տեղերում, որտեղ մնացել են մարդու հետքեր: Հոտային հետքը մնում է այն կառույցում, որտեղ գտնվել է դրանց կրողը, այլ տեղերում գտնվող այն առարկաների վրա, որոնց հետ նա շփվել է, ձեռքով հպվել, նրանից մնացած իրերի վրա և այլն:

Քանի որ տեղագնությանը մասնակցում են ընթերականեր, պետք է հիշել, որ այդ անձանց ներկայությունը չպետք է ստեղծի լրացուցիչ հետքեր այն տեղերում, որտեղից վերցվում է հոտը: Նպատակահարմար է, որ

նրանք գործողության կատարմանը հետևեն 2 մետրից ոչ մոտ տարածությունից:

Հոտային հետքերը վերցնելուն պետք է նախորդի ծառայական-հետախույզ շան աշխատանքը, երբեմն էլ՝ դեպքի տեղի իրադրության լուսանկարահանումը (եթե հոտային հետքի վերցնումը կարող է ինչ որ չափով փոխել այն):

Դեպքի տեղից հոտը վերցվում է բժշկական կամ անասնաբուժական ներարկիչով և մղվում է ապակյա անոթի մեջ ու հերմետիկ փակվում մաքուր խցանով: Հոտային հետքը կարելի է վերցնել նաև բժշկական մանրէազերծված (ստերիլ) մարլայե անձեռոցիկների կամ բամբակի վրա:

Բնականաբար, եթե դեպքի տեղում հայտնաբերվեն հանցագործի կողմից թողնված իրեր և առարկաներ, դրանք պետք է առանձին-առանձին տեղավորել պոլիէթիլենային ծրարներում և հերմետիկ փակել: Նշված առարկաների հետ պետք է աշխատել պինցետով կամ ռետինե ձեռնոցով: Այս ձևով հոտ կրող օբյեկտները կարելի է բավական երկար ժամանակ պահել (մի քանի ամիս) առանց կորցնելու դրանց վրա եղած հոտը: Մարդու հոտը վերցնելու, երկարատև պահպանելու և մի քանի անգամ օգտագործելու համար ներկայումս օգտագործվում է հատկապես հոտի վերցման համար մշակված սարք, որն անվանվում է ՈՕՅ (орисбор отбора запаха):

Բացի թվարկած մեթոդներից, այս սարքը գործում է նաև սորբցիայի սկզբունքով: Սորբենտը, որն ավելի արդյունավետ է կիրառվում հոտի հետքերի կլանման համար, ակտիվացված ածուխն է, որն անվանվում է АГ-1: Այս ածուխը հնարավորություն է տվել ստեղծել դյուրատար սարք, որը հոտի նմուշը պահպանում է մինչև երկու տարի և կարող է օգտագործվել 5-8 անգամ:

Ըստ այս մեթոդի, հոտակիր առարկայի վրա դրվում է հոտը կլանող նյութը, որը հետո տեղավորվում է հերմետիկ փակվող անոթի մեջ: Եթե հոտակիր օբյեկտը չոր է, նրա մակերևույթը խոնավացվում է հեղուկցրիչի օգնությամբ ջուրը թեթևակի հետքից վեր փչելով:

Աբսորբենտ պարունակող անձեռոցիկը կամ կտորը (գործվածքը), որը վերևից ծածկվում է ալյումինե ֆոլգայի, թղթի կամ պոլիէթիլենային քաղանքով, ամուր սեղմվում է հոտակիր օբյեկտին: Նպատակահարմար է կոնտակտի տևողությունը հասցնել մեկ ժամից ոչ պակաս:

Ստացված հոտային նմուշներն ալյումինե ֆոլգայի մի քանի շերտի մեջ փաթեթավորվում են, որի բոլոր եզրերը խնամքով սեղմվում են: Նման փիճակով մարդու հոտը կարելի է պահպանել մինչև 6 ամիս, հերմետիկ

փակելով ապակյա ամանի մեջ՝ ավելի երկար: Հոտային մնուչները, որոնք վերցվում են չբացահայտված հանցագործությունների դեպքի տեղից, միավորվում են և ստեղծում **հորադրան**, այսինքն՝ ստեղծվում է կրիմինալիստիկական հաշվառման (գրանցման) նոր տեսակ:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մարդու հոտային նյութերը կոշիկի, ոտքի, հանցագործության գործիքների, իրերի և առարկաների վրա, որոնք գտնվում են բաց տեղանքում, պահպանվում են 20 ժամվա ընթացքում, իսկ անձնական իրերի և առարկաների վրա՝ մինչև մի քանի օր:

Հոտային հետքերի պահպանման ժամանակը կախված է կառույցի ծավալից, օդափոխության աստիճանից, ինչպես նաև իրերի և առարկաների՝ հոտ ընդունելու հատկություններից և նրանց գտնվելու տեղից¹:

Հոտակիր օբյեկտներ են համարվում նաև մարդու կենսաբանական արտաթորանքները, որոնց վերցման, տեղավորման (փաթեթավորման) և պահպանման եղանակները սկզբունքորեն նույնն են, ինչ որ առարկաներից, իրերից հոտային մնուչների վերցնելը... Եթե դրանք գտնվում են վերցման ենթակա իրերի և առարկաների վրա, ապա պետք է տեղավորվեն հերմետիկ փակվող անոթի մեջ: Նույն կերպ են վարվում, երբ այդ արտաթորանքները գտնվում են հողի վրա՝ վերցվում է հողի հետ միասին և տեղավորվում հերմետիկ փակվող ապակյա անոթի մեջ:

Մնացած դեպքերում, երբ հնարավոր չէ վերցնել այն կրող օբյեկտի հետ, վերցվում է բինտոե տամպոնի վրա, վերջինս մի քանի անգամ արտաթորանքին սեղմելով կամ պարզապես նրան քսելով՝ որը անմիջապես հերմետիկ փակվում է ապակյա կամ պոլիէթիլենային անոթի մեջ: Դրանց վրա ամրացվում են պիտակներ՝ համապատասխան գրառումներով (վերցման տեղը, ժամանակը և այլն):

Ընդհանրացնելով հոտի վերցման և հետազոտման հնարավորությունները, ինչպես նաև հոտի մնուչները վերցնելու և պահպանելու մեթոդները, նշենք, որ գրականության մեջ կարծիքներ կան այն մասին, որ օդորոշ գիական հետազոտություններով կարելի է պարզել հետևյալ հարցերը.

1) ներկայացված մնուչների (կամ առարկաների) վրա կա՞ն արդյոք մարդու հոտային հետքեր,

2) մեկ թե մի քանի անձանցից (այս կամ այն տարիքային խմբի տղամարդու կամ կնոջ) է ծագում մարդու հոտային ամբողջությունը ներկայացված օբյեկտի վրա,

¹ Տե՛ս Կոլ. ավտոր, Следственные действия, библиотека следователя. Юрист. М., 2001, էջ 205:

3) հոտային հետքերը արդյոք ծագում են տվյալ օբյեկտից, որոշակի կասկածյալից (մեղադրյալից, տուժողից),

4) տվյալ առարկաների վրա գտնվող արյան, քրտինքի հետքերը չե՞ն ծագել արդյոք տվյալ որոշակի անձից,

5) ներկայացված առարկաներից (իրերից) որո՞նց վրա կան կասկածյալի կամ այլ անձանց հոտային հետքեր,

6) կա՞ն արդյոք տվյալ անձի անհատական հոտը, դեպքի տեղում, խուզարկության ժամանակ և այլ տեղերից ձեռքերի, ոտքերի (օգտագործված կոշիկից) վերցված հոտերի մնուչներում,

7) կասկածյալներից ո՞ւմ կողմից են մնացել հոտային հետքերը, վերցված հոտային կրիչների վրա (ում համեմատական հոտային մնուչները ներկայացվել են հետազոտության),

8) մարդու հոտային հետքերը չե՞ն ծագում արդյոք առանձին առարկաներից կամ դրանցից որևէ մեկի մասից, ստուգվող անձից,

9) որքա՞ն է տվյալ սուբյեկտից հոտային հետքերի առաջացման մոտավոր ժամանակը (օրերով)¹:

Նկատի ունենալով սույն աշխատանքի բնույթը, առայժմ բավարարվենք ներկայացված սկզբունքային հարցերի շարադրանքով, մնացած խնդիրները թողնելով այն դեպքերի համար, երբ օպերատիվ-հետախուզական և քննչական մարմինները կառաջարկեն ավելի մանրամասն հիմնավորում, դատական օդորոլոգիայի պրակտիկ (այդ թվում՝ փորձագիտական) կիրառման համար:

Նկատի ունենալով, որ վերևում բերված հարցերի թվարկը սպառնիչ չէ, նշենք, որ հոտային հետքերով կարելի է լուծել նաև բազմաթիվ այլ հարցեր, մասնավորապես՝ դիագնոստիկ բնույթի:

¹ Стіву Грошенкова О. Одорологическая экспертиза, “Законность”, 2000, №8, էջ 49-50:

ԳՈՒԽ 15. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀՐԱԶԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (ԲԱԼԻՍՏԻԿԱ)

Կրիմինալիստիկական հրազենագիտությունը¹ (բալիստիկան)² կրիմինալիստիկական տեխնիկայի մի ճյուղն է, որը կոչված է ուսումնասիրելու հրազենը, զինամթերքը, կրակոցի հետքերը և այլ երևույթներ, կապված հրազենի գործադրման հետ: Կրիմինալիստիկական (դատական) բալիստիկան ուսումնասիրում է նաև տեխնիկական այն պայմանները, որոնց առկայությամբ տեղի է ունենում կրակոց և պատճառվում է հրազենային վնասվածք: Այն մշակում է նաև միջոցներ, եղանակներ և մեթոդներ, որոնք կիրառվում են հրազենի, նրա գործադրումից առաջացած հետքերի, ինչպես նաև զինամթերքի հայտնաբերման, վերցման, պահպանման, ամրապնդման և հետազոտման համար: Կրիմինալիստիկական հրազենագիտական ուսումնասիրությունների կարևորությունը բխում է նրանից, որ հետազոտման այդ տեսակը համարյա միշտ կապվում է այնպիսի ծանր հանցագործությունների հետ, ինչպիսիք են ոսնձգությունները անձի կյանքի և առողջության դեմ:

Կրիմինալիստիկական հրազենագիտությունը իր տեսական դրույթները մշակելիս հենվում է ռազմատեխնիկական գիտությունների ընդհանուր դրույթների վրա, մասնավորապես, բալիստիկայի և հրետանագիտության: Իսկ հրազենի խմբային պատկանելության որոշումը և նույնացումը զնդակի և պարկուճի վրա եղած հետքերով, կրակոցի տարածության որոշումը, խոցված օբյեկտների վրա եղած հետքերի առաջացման պայմանները և այլն, ուսումնասիրում է միայն կրիմինալիստիկական (դատական) հրազենագիտությունը:

Կրիմինալիստիկական հրազենագիտությունը սերտորեն կապված է կրիմինալիստիկական տեխնիկայի մյուս ճյուղերի հետ: Հրազենի կամ զինամթերքի խմբային պատկանելության որոշումը և նույնացումը կատարվում է կրիմինալիստիկական նույնացման ընդհանուր դրույթների հիման վրա, զնդակների և պարկուճների վրա եղած հետքերի առաջացման մեխանիզմի օրինաչափությունների ուսումնասիրումը, հետքերի հատկանիշների անհատականացնող ամբողջականության հարցի որոշումը և այլ հարցեր լուծվում են հետքաբանության գիտական դրույթների հիման վրա:

¹ Մինչև սույն աշխատանքի հրատարակումը ընդունված էր ձգաբանություն տերմինը, որը մեր կարծիքով ճիշտ չի արտահայտում բալիստիկայի իմաստը (Լ. Օ.):

² Հունարեն ballo-նետում են բառից:

Կրիմինալիստիկական հրազենագիտությունը կապված է նաև դատական բժշկության հետ: Հրազենային վնասվածքները մարդու մարմնի վրա ուսումնասիրում է դատական բժշկությունը, հաշվի առնելով նաև դատական հրազենագիտության ընդհանուր դրույթները: Այն դեպքերում, երբ մարմնի վրա եղած վնասվածքները վիճադարձ կապի մեջ են գտնվում հագուստի կամ այլ առարկաների վնասվածքների հետ, դատական բժշկի հետ հետազոտմանը մասնակցում է նաև կրիմինալիստ, այսինքն՝ նշանակվում է համալիր (կոմպլեքսային) փորձաքննություն (օրինակ, ի՞նչ դիրքում է գտնվել տուժողը կրակոցի պահին):

§ 1. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ (ԴԱՏԱԿԱՆ) ՀՐԱՉԵՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏՆԵՐԸ

Դատահրազենագիտական հետազոտությունները գիտական ճշգրիտ հիմնավորվածությամբ կատարելու հիմնական պայմանը հրազենը, նրա բալիստիկական բնութագիրը, գործողության մեխանիզմը լավ իմանալն է: Հիշյալ հարցերի մանրամասն պարզաբանումը տրված է համապատասխան գրականության և տեղեկագրերի մեջ: Դատական բալիստիկայի մեջ տրվում են միայն այն տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են դատաքննչական պրակտիկայում ծագող հարցերի լուծման համար:

Ձեռքի հրազենը, որն ավելի հաճախ է հանդիպում կրիմինալիստիկական պրակտիկայում, դասակարգվում է.

Ըստ նշանակության՝ ա. մարտական (ատրճանակ-գնդացիքներ, ավտոմատներ, հրացաններ, կարաբիններ, ատրճանակներ, ռևոլվերներ), բ. սպորտային (փոքր տրամաչափի հրացաններ, սպորտային ատրճանակներ), գ. որսորդական (ողորկավող կոտորակային հրացան, ակոսավոր գնդակային հրացան, կոմբինացված գնդակային-կոտորակային հրացան):

Երբեմն դատահրազենագիտական հետազոտման օբյեկտներ են համարվում նաև պնևմատիկ (սպորտային ատրճանակներ և հրացաններ, որոնցից գնդակը դուրս է բռնում խտացված օդի միջոցով), ինչպես և ինքնաշեն, ձևափոխված ու ատիպիկ (ինքնահոսի կամ այլ առարկայի տեսքով) հրազենը:

Ըստ փողի երկարության՝ կարճ փող (50-200մմ.), միջին երկարության փող (200-300մմ.) և երկար փող (450-850մմ.) ունեցող հրազեն: Կարճ փող ունեցող հրազեն են ատրճանակները և ռևոլվերները: Միջին փող ունեն ավտոմատները: Երկար փող ունեցող հրազենին են վերաբերում բոլոր տեսակի հրացանները, կարաբինները:

Ըստ փողանցքի կառուցվածքի՝ ակոսավոր, ողորկափող և կոմբինացված:

Դրանք դասակարգվում են նաև ըստ մարտական մեխանիզմի՝ ոչ ավտոմատ, կիսավտոմատ (ինքնալիցքավորվող) և ավտոմատ:

Ոչ ավտոմատ, երկար փող ունեցող հրազենի կրակոցից հետո կրակված պարկուճը փամփշտակալից հեռացվում է փակադակը ձեռքով ետ քաշելու միջոցով: Առաջ հրելիս փակադակը փամփշտատուփից փամփշտակալ է մղում նոր փամփուշտ, որից հետո միայն կարելի է սեղմել ձգանը և կրակոց կատարել:

Կիսավտոմատ հրազենի փակադակը կրակոցից հետո վառողային գազերի ճնշման տակ ետ է գնում, որի ժամանակ փամփշտակալից դուրս է գցվում կրակված պարկուճը: Փակադակը առաջ է շարժվում անդրադարձնող զսպանակի ազդեցությամբ և ընթացքում փամփշտատուփից փամփշտակալ է մղում նոր գնդակ: Սակայն կրակոց կատարելու համար պետք է ձգանը նորից սեղմել:

Ավտոմատ հրազենները գործում են ինչպես կիսավտոմատները, բայց այս դեպքում չպետք է կրկնել ձգանի սեղմումը: Կրակոց կատարվում է այնքան ժամանակ, քանի ձգանը սեղմված է և դադարում է, երբ բաց է թողնվում ձգանը կամ սպառվում են բոլոր փամփուշտները:

Հրազենի տեսակները տարբերվում են նաև ըստ տրամաչափի, այսինքն՝ ըստ փողանցքի ներքին տրամագծի: Ակոսավոր հրազեններում տրամաչափը նշվում է միլիմետրերով և արտահայտվում է հակադիր ակոսադաշտերի միջև եղած տարածությամբ: Ավելի-հաճախ հանդիպում են 5.56, 6.35, 7.62, 7.65, 9.00 մմ տրամաչափի հրազեն:

Ողորկափող հրազենի տրամաչափը նշվում է 12, 16, 20 և այլ պայմանական թվերով (ներկայումս դրանց տրամաչափը նշվում է նաև միլիմետրերով):

§ 2. ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՐԱՉԵՆԻ ԱՅՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՈՐՈՆՔ ՀԱՆԳԻՊՈՒՄ ԵՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ


Ատրճանակ. այսպես է կոչվում ակոսավոր, կարճ փողով, քազմալիցք ավտոմատ հրազենը: Փամփուշտների մատակարարումը կատարվում է փամփշտատուփից, որը սովորաբար տեղավորվում է հրազենի բռնատեղում:

Ռուսական թողարկման ատրճանակներն են՝ **ТТ** (Տուլայի գործարանի, կոնստուկտորն է Տոկարևը) և **ՈՄ** (կոնստրուկտորն է Մակարովը):

ТТ-ն ինքնալիցք, 7.62 մմ տրամաչափի ատրճանակ է, շարժական փողով, հարվածող մեխանիզմով և բաց հրահանով, որի մեջ գտնվում է մարտական զսպանակը: Փողն ունի չորս աջ թեքության ակոսներ, երկարությունն է 116 մմ: Փամփշտատուփում տեղավորվում է ութ փամփուշտ, պարկուճը՝ զլանածև, զնդակը՝ պատյանավոր:

ՈՄ-ը ինքնալիցք, 9 մմ տրամաչափի ատրճանակ է, չորս աջ թեքության ակոսներ ունեցող փողով, որի երկարությունը 93 մմ է: Փամփշտատուփում 8 փամփուշտ է, պարկուճը՝ զլանածև, զնդակը՝ պատյանավոր:

Ռևոլվերը կարճ փողով, ակոսավոր, բազմալիցք, ոչ ավտոմատ հրազեն է: Ռոպեն փամփշտատուփ ծառայում է պատվող թմբուկը, որի վրա կան խորշեր փամփուշտների համար: Թմբուկը պտտվելով փամփուշտներն ուղղում է դեպի փողը՝ կրակ արձակելու համար: Հրահանը սեղմելիս թմբուկը պտտվում է: Կրակված պարկուճները թմբուկի խորշերից հանվում են ռևոլվերի վրա եղած շամփուրով կամ կորիզով, նայած ռևոլվերի սիստեմին:



Զննչական պրակտիկայում ավելի հաճախ հանդիպում են «նագան» սիստեմի ռևոլվերները: «Նագանի» փողը ունի չորս ակոս, տրամաչափն է՝ 7.62 մմ: Պտտվող թմբուկն ունի յոթ խորշ՝ փամփուշտների համար:

Հրացանը երկար փողով, ոչ ավտոմատ մարտական հրազեն է: Փողի տրամաչափն է 7.62 մմ: Փողանցքն ունի չորս ակոս: Գնդակի թռիչքը գերազանցում է 3000 մ: Հրազենի այս տեսակին փոխարինել են կարաբիններն ու ատրճանակ-զնդացիրները (ավտոմատները):

Կարաբինը հրացանի-տարատեսակ է, որից տարբերվում է երկարությամբ (ավելի կարճ է) և թեթև քաշով: Այն մեծ տարածում ստացավ 30-ակյան թվականների վերջերին: Ռ-Գ կարաբինների տրամաչափն է 7.62 մմ, փողի երկարությունը՝ 512-517 մմ., փողանցքը ունի չորս ակոս:

Սպորտային հրացաններից են՝ **ТО3-7**, **ТО3-8** և **ТО3-9**, որոնցից առաջին երկուսը միալիցք են, վերջինը հնգալիցք: Ռ-Գ արտադրության

սպորտային բոլոր հրացանները ունեն 5.6 մմ տրամաչափ: Բոլորի փողի երկարությունն է 640 մմ, գնդակի թռիչքի երկարությունը 1600 մ է:

Ատրճանակ-գնդացի (ավտոմատ): Ռ-Գ արտադրության ավտոմատների կոնստրուկտորներն են Դեկտյարյովը, Շպագինը, Մուդակը, Կալաշնիկովը: Տրամաչափն է՝ 7.62 մմ, քաշը՝ 3.6-3.8 կգ: Կարելի է կրակ արձակել ինչպես ավտոմատ, այնպես էլ հատ-հատ ռեժիմով: Փամփշտատուփը պարունակում է 30 փամփուշտ: Գնդակի թռիչքի երկարությունը 1000 մ է:

Ողորկափող որսորդական հրացանները նախատեսված են կոտորակով, մանրագնդակով և հատուկ գնդակներով լիցքավորված փամփուշտներով կրակելու համար: Դրանց հիմնական մասը ոչ ավտոմատ են, բայց կան նաև ավտոմատ ողորկափող մոդելներ (օրինակ՝ ՄԼ-21):

Ըստ հարվածող մեխանիզմի կառուցվածքի տարբերվում են արտաքին և ներքին հրահանով հրացաններ: Փողերի քանակով լինում են՝ միափող, երկփող և եռափող:

Ողորկափող հրացանների տրամաչափը տատանվում է 12-32-ի սահմաններում, բայց առավել տարածում ունեն 12, 16, 20 տրամաչափերը (տե՛ս աղյուսակը)¹:

Տրամաչափը մմ-ով	Պայմանական նշանները
12,10	32
13,90	28
14,70	24-փոքր տրամաչափեր 20
15,80	16-միջին տրամաչափ
16,80	12-մեծ տրամաչափ
18,40	

Ակոսավոր որսորդական հրացանները՝ «Медведь», «Лось», «Барс-1» և այլն, նախատեսված են արդյունաբերական որսի համար: Դրանց համար նախատեսված են հատուկ որսորդական փամփուշտներ:

Կոմբինացված որսորդական հրացաններն ունեն ինչպես ողորկ այնպես էլ ակոսավոր փողեր: Ողորկ փողերը նախատեսված են սովորական որսորդական փամփուշտների համար, որոնք լիցքավորվում են ման-


¹ Աղյուսակը բերված է «Криминалистика» գրքից, Մ., 1971, էջ 154:

րագնդակով, կոտորակով կամ գնդակով: Ակոսավոր փողերը նախատեսված են հատուկ որսորդական փամփուշտների կամ սպորտային-որսորդական փամփուշտների համար: Պրակտիկայում հաճախ հանդիպում է ձևափոխված հրազենը, որն ըստ էության, սովորական հրազենի միտումնավոր աչքակերպումն է:

Հրազենի ձևափոխումը հիմնականում կատարվում է հրացանի փողը և կոթը կարճացնելով, որպեսզի հեշտանա այն հագուստի տակ թաքցնելը: Որոշ դեպքերում էլ ձևափոխությունը կատարվում է այլ հրազենի փամփուշտ օգտագործելու նպատակով:

Ինքնաշեն հրազենը (փշտով) սովորաբար պատրաստվում է պարզեցված հարվածող մեխանիզմով և ողորկ փողով: Պրակտիկայում ավելի հաճախ հանդիպում է փոքր տրամաչափի փամփուշտի համար նախատեսված փողով: Իսկ **ատիպիկ հրազենների** (նույնպես ինքնաշեն) քողարկման նպատակներով հաճախ տրվում է ինքնահոսի, ձեռնափայտի և այլ առարկաների տեսք:

Ձեռքի հրազենի համար նախատեսված ռազմամթերքը ընդգրկում է արկ (գնդակ, մանրագնդակ, կոտորակ), պարկուճ, հրապատիճ, վառոդ: Իրենց միասնության մեջ նրանք կազմում են ունիտար (միասնական) փամփուշտ: Փամփուշտները դասակարգվում են՝ մարտական, որսորդական, սպորտային հրազենների: Ողորկափող որսորդական հրազենների ռազմամթերքին են վերաբերում նաև խիցերը և միջադիրները:



Պարկուճները պատրաստվում են մետաղից (երկաթ, արույր), իսկ որսորդական հրացանների փամփուշտների համար պատրաստվում են նաև սովորաբար կամ պլաստմասայից, բացառությամբ գլխիկի, որը պատրաստվում է միայն մետաղից:

Պարկուճի հիմնական մասերն են՝ փողիկը, իրանը և գլխիկը: Փողիկին ամրացվում է գնդակը, իրանում տեղավորվում է վառոդային լիցքը (որսորդականում նաև խիցը, միջադիրը), գլխիկի կենտրոնում գտնվում է հրապատիճի փոսիկը:

Ըստ ձևի պարկուճները լինում են: ա) գլանաձև, կոնաձև, շշաձև, ք) ըստ գլխիկի կառուցվածքի՝ եզրակավոր (երբ գլխիկի տրամագիծը մեծ է իրանից), անեզրակ (երբ իրանի վրա գլխիկի մոտ արվում է օղակաձև առվակ), կիսաեզրակավոր, գ) գնդակին ամրանալու եղանակով. կետանշումով, փողաբերանի եզրամասի սեղմումով, հատվածային (սեգմենտալին) սեղմումով և անսեղմում ամրացմամբ (սերտ հպումով):

Եզրակը և օղակաձև առվակը ծառայում են արտածգիչ մեխանիզմի ատամիկի համար, որպեսզի հնարավոր լինի պարկուճը դուրս մղել փամփշտակալից:

Գնդակի և պարկուճի միացման եղանակը կրակված գնդակով հրագեմի նույնացման համար էական նշանակություն ունի, քանի որ, նախ, նման ամրացման առանձնահատկությունները գնդակի վրա առաջացնում են անհատական հատկանիշներ, որոնցով կարելի է որոշել, որ գնդակը և հրագեմից դուրս եկած պարկուճը մեկ փամփուշտի են պատկանում (այդ մասին կխոսվի ներքևում), երկրորդ՝ պարկուճին գնդակի միացման եղանակը և առանձնահատկությունները որոշում են այն ջանքերը, որոնք անհրաժեշտ են, որպեսզի կրակոցի պահին գնդակը ստանա սկզբնական շարժում: Դրանից էլ, բնական է, կախված են ճնշումը և արագությունը, որոնց առկայությամբ գնդակը հաղթահարում է սկզբնական ակոսները, որի հետևանքով առաջանում են սկզբնային հետքերը:

Բոլոր տեսակի պարկուճների գլխիկների վրա ընդունված է դրոշմել գործարանային նշաններ, որոնք ցույց են տալիս փամփուշտի թողարկման տարեթիվը, տրամաչափը և այլն:

Պարկուճի գլխիկի վրա ամրացվում է հրապատիճը, որը ծառայում է վառողային լիցքի բռնկման նպատակին: Այն իրենից ներկայացնում է արույրից, պղնձից կամ այլ փափուկ մետաղից պատրաստված փոքրիկ անոթ, որում մամլված է պայթուցիկ նյութը՝ ծածկված նրբաթաղանթով: Հաճախ այդ նպատակի համար օգտագործվում է շառաչող սնդիկ կամ այլ նյութերի միացություններ, որոնք հարվածի դեպքում ընդունակ են հեշտությամբ պայթել և առաջացնել բարձր ջերմաստիճանի առատ բոց:

Գնդակները ըստ իրենց ընդհանուր կառուցվածքի լինում են պատյանավոր, կիսապատյանավոր, ամբողջական մետաղական (առանց պատյանի):

Պատյանավորներն ունեն արույրով կամ պղնձացիկով դրվագված երկաթյա պատյան, կապարե շապիկ և պողպատյա միջուկ:

Կիսապատյանավորներն ունեն պատյան, որը չի ծածկում գնդակի գլխամասը և կապարե միջուկ: Մյուսները ամբողջությամբ պատրաստվում են կապարից կամ համաձուլվածքներից:

Պատյանավոր և ամբողջական մետաղական գնդակներն օգտագործվում են մարտական հրազենի համար, կիսապատյանավորը՝ որսորդական ակոսավորի, առանց պատյանի՝ փոքր տրամաչափի և ողորկափող որսորդական հրացանի համար:

Որպեսզի այրվող զազերը դուրս չժայթքեն գնդակի և փողանցքի արանքից, գնդակի տրամաչափը պատրաստվում է հրազենի փողանցքի տրամաչափից 0,2-0,3 մմ. մեծ:

Գործարանային եղանակով պատրաստված կոտորակն ունի ճշգրիտ կլոր ձև: Այն պատրաստվում է կապարից կամ կապարի, սուրմայի և այլ մետաղների համաձուլվածքներից: Կոտորակը կարող է ունենալ 1,50 մմ-ից 5,00 մմ տրամագիծ: Ամենամանր կոտորակը (1,50 մմ տրամագծով) նշվում է N-11, իսկ ամենախոշորը (5,00 մմ)՝ N-4: 5 մմ-ից ավելի տրամագիծ ունեցող արկերը կոչվում են մանրագնդակներ (կարտեչ):

Ինքնաշեն կոտորակը և մանրագնդակը, որոնք պատրաստվում են ձուլման կամ կտրատման եղանակով, կարող են լինել կլոր կամ բազմանիստ: Հիմնականում դրանք գործարանային արտադրանքից տարբերվում են ոչ ստանդարտ չափսերով, տանձաձև, խորանարդաձև կամ այլ տեսքով, մակերևույթը ողորկ չէ: Միաժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նշված հատկանիշները միշտ չէ, որ կարող են առկա լինել:

Փամփուշտի մյուս բաղադրամասը վառոդն է, որը լինում է սև կամ ծխատու և անծուխ: Ծխատու վառոդը պատրաստվում է փայտածուխի, ծծումբի և բորակի (սելիտրա) խառնուրդից: Այրվելիս ծխային վառոդը առաջացնում է ուժեղ բոց և ծուխ: Այդ վառոդը սովորաբար օգտագործվում է ողորկափող և ակոսավոր որսորդական հրազենների փամփուշտներում:

Անծուխ վառոդը պատրաստվում է օրգանական բջջանյութից (ցելյուլոզա), մշակված ազոտական թթվով և եթերաապիրտային-խառնուրդով:

Պայթելիս անծուխ վառոդը փոքր բոց և շատ քիչ ծուխ է առաջացնում: Անծուխ վառոդը օգտագործվում է բոլոր մարտական, ինչպես նաև որոշ որսորդական հրազենների փամփուշտների համար: Անծուխ վառոդի մյուս արժանիքն այն է, որ նրան հատուկ է վառողային զազերի մեծ էներգիա, որը և գնդակին տալիս է սկզբնական մեծ արագություն:

Փամփուշտի հաջորդ մասը խիցն է, որն օգտագործվում է որսորդական հրազենների փամփուշտներում: Խիցը սեղմում է վառողային լիցքին և ստեղծում է փոքրիկ խցիկ, որտեղ կուտակվում են վառողային զազերը:

Գործարանային թողարկման խիցերը պատրաստվում են յուղով կամ պարաֆինով մշակված թաղիքից, նրբաթաղիքից: Վառոդը թաղիքից

առանձնացնելու համար օգտագործվում են ստվարաթղթե բարակ միջադիրներ, իսկ մանրագնդակային կամ կոտորակային արկերը ամրացնելու համար նրանց վրա դրվում է ստվարաթղթե խից:

Հաճախ տնային պայմաններում փամփուշտները լիցքավորելիս օգտագործում են ինքնաշեն խիցեր (սովորական թաղիք, կաշի, լրագրի կտոր, գործվածք, խցաններ և այլն), որոնք երբեմն արժեքավոր իրեղեն ապացույցի նշանակություն են ձեռք բերում, որովհետև միշտ-չէ, որ դրանք լրիվ այրվում են, իսկ փողանցքից դուրս ժայթքելով թռչում են մի քանի մետր հեռու:

§ 3. ԿՐԱԿՈՑԻ ՄԵԽԱՆԻՉՄԸ ԵՎ ԿՐԱԿՈՑԻՑ ԱՌԱՋԱՅԱԾ ՀԵՏՔԵՐԸ

Կրակված գնդակի վրա հետքերի առաջացումը պայմանավորվում է այն երևույթներով, որոնք տեղի են ունենում փողանցքում՝ կրակոցի պահին: Իր մեխանիկական, քիմիական երևույթներով կրակոցը նախ և առաջ վառողային լիցքի այրումն է, որի հետևանքով առաջանում է այն բարձր ճնշումը, որը գնդակին տալիս է անհրաժեշտ արագություն և շարժման ուղղություն:

Վառողային լիցքի այրման արագությունը կախված է մի շարք հանգամանքներից, որոնցից հիմնականներն են. վառողի տեսակը և որակը, լիցքավորման խտությունը, հրապատիճի գործունեությունը (իին կամ թույլ հարվածային նյութ ունեցող հրապատիճով վառողային լիցքի այրումը դանդաղ է ընթանում):

Կրակոցի հետքերի առաջացումը որոշվում է այն երևույթների օրինակափություններով, որոնք տեղի են ունենում կրակելիս: Իսկ որպեսզի կրակոց արձակվի, հրազենը պետք է լիցքավորել:

Կրակոցի կատարման մեխանիզմը հետևյալն է: 1) Չարկանի՝ հրապատիճին հարվածելու պահին առաջանում է վառողային լիցքի բռնկում: 2) Այրվող գազերը ճնշում, հրում են արկին փողանցքից դուրս: 3) Արկը դուրս է թռչում: Հետո հրազենը վերալիցքավորվում է (որոշ հրազեններում այն կատարվում է ավտոմատիկորեն):

Այս փուլերից յուրաքանչյուրում առաջանում են հետքեր, որոնք ուսումնասիրվում են կրիմինալիստիկական հոտագոտություններ կատարելիս:

Այդ հետքերը մնում են պարկուճի և գնդակի վրա: Փողանցքի մակերևույթի հետքերը գնդակի վրա առաջանում են գնդակի՝ փողանցքի

մակերևույթի վրայով կոնտակտային շարժման հետևանքով: Այդ դեպքում գնդակը հանդես է գալիս որպես հետք ընդունող, իսկ փողանցքի մակերևույթը՝ հետք առաջացնող օբյեկտ: Գնդակի վրա առաջանում են ծավալային, դինամիկ հետքեր:


Այս հետքերը գնդակի վրա ունենում են տրասսաների և քերծվածքների տեսք, որոնք առաջանում են փողանցքի անհարթություններից:

Կրակելիս գնդակի վրա մնում են ակոսադաշտերի հետքերը, այսինքն՝ ակոսների նիստերի և նրանց միջև եղած դաշտերի մակերևույթի դրոշմը: Փողանցքից գնդակի վրա մնացած հետքերից կարևոր են ակոսադաշտերի հետքերը, քանի որ ակոսների դաշտերում գնդակը ավելի ամուր է հպվում փողանցքի պատերին:

Կրակված գնդակով հրազենի նույնացումը հիմնականում կատարվում է այդ հետքերը հետազոտելով:

Գնդակի վրա առաջանում են ակոսադաշտերի երկու տեսակի հետքեր:

Մախ առաջանում են հետքեր, որոնք տեղավորվում են մոտավորապես գնդակի երկայնական առանցքին զուգահեռ: Քանի որ այդ հետքերն առաջանում են գնդակի շարժման սկզբնական պահին, կոչվում են **սկզբնական հետքեր**: Այնուհետև առաջանում են գնդակի երկայնական առանցքի նկատմամբ որոշակի թեքվածություն ունեցող հետքեր: Թեքությունը համապատասխանում է փողանցքի ակոսների անկյանը: Այդ հետքերը ընդունված է անվանել **երկրորդային հետքեր**:



Ակոսադաշտերի հետքերը գնդակի վրա.

1. սկզբնական, 2. երկրորդային, 3. ակոսի լայնությունը

Սկզբնական հետքերը առաջանում են գնդակի ուղղագիծ առաջընթաց և առաջընթաց-պտտական շարժման ժամանակ: Երկրորդային հետքերը առաջանում են, երբ գնդակը առաջընթաց-պտտական շարժում ունի, այսինքն՝ շարժվում է ակոսներով:


Սկզբնական հետքերի առաջացման մեխանիզմը հետևյալն է. պարկուճից դուրս գալով և ստանալով առաջընթաց շարժում, գնդակն իր սկզբնամասով հարվածում է ակոսադաշտի լցամասի եզրին: Գնդակի առաջընթաց շարժման ընթացքում ակոսադաշտի եզրը հասնում է այնպիսի դիրքի, երբ գնդակը ակոսները հաղթահարելու հետևանքով առաջընթաց շարժման հետ մեկտեղ ձեռք է բերում նաև պտտական շարժում: Գնդակի առաջընթաց շարժման ժամանակ ակոսադաշտի լցամասի եզրը և ակոսադաշտի սկզբնամասի մակերեսը բերում են գնդակի մակերևույթը, առաջացնելով ակոսադաշտի սկզբնական հետք: Գնդակի հետագա ընթացքի ժամանակ նրա պատյանի ամբողջ մակերեսը շփվում է ակոսադաշտերի հետ և նրա վրա կրկին առաջանում են հետքեր, որոնց կարելի է անվանել երկրորդային հետքեր:

Կրակված գնդակով հրազենի նույնացման համար կարևոր նշանակություն ունենա ակոսադաշտերի սկզբնական հետքերի տրասսաները (քերծվածքները), որոնք արտահայտում են ակոսադաշտի գնդակի մուտքի և լցամասի ղեֆեկտներն ու առանձնահատկությունները: Փողանցքի փողաբերանի մասի և փողաբերանի կտրվածքի տրասսաները (քերծվածքները), որոնք երևում են ակոսադաշտերի երկրորդային հետքերում:

Կրակված գնդակների վրա կարող են մնալ նաև այլ հետքեր (փամփշտատուփից առաջացած հետքեր, գնդակը փամփշտակալ մղելու հետքեր, պարկուճի փողակի հետքեր, վառողահատիկներից գնդակի հատակին մնացած հետքեր և այլն):

Նշված հետքերը, նրանց քանակը, ուղղությունը, լայնությունը, թեքությունը և այլն, օգտագործվում են հրազենի տեսակը, սխտեմը որոշելու համար, իսկ տրասսաներում (քերծվածքներում) արտահայտված ակոսադաշտերի միկրոկառուցվածքը՝ հրազենի նույնացման համար:

Պարկուճի վրա հետքերն առաջանում են հրազենի տարբեր մասերից. հրազենը լիցքավորելիս, կրակելիս, կրակված պարկուճը հեռացնելիս: Պարկուճները փամփշտատուփի մեջ տեղավորելիս փամփուշտի իրանի վրա մնում են փամփշտակալի բռնիչների հետքերը՝ երկայնակի քերծվածքների ձևով: Փամփշտատուփից փամփշտակալ մղելիս, պարկուճի գլխիկի եզրին առաջանում է փակադակի հետքը, իսկ փամփուշտը առաջ մղելիս պարկուճի իրանին լրացուցիչ կարող են առաջանալ սափքի հետքեր՝ քերծվածքների ձևով:



Հերքի առաջացման մեխանիզմը պարկուճի վրա

1. փողանցք, 2. փակադակ, 3. փամփուշ, 4. դուրս ներող մեխանիզմի կցման ուղարկող մեխանիզմը, 5. զարկան, 6. անդրադարձիչ, 7. փամփուշային հենարան, 8. փամփուշակալի հերին կրթվածքը, 9. պարկուճ

Պարկուճը փամփշտակալ մտնելիս հրապատիճի վրա կարող են առաջանալ փակաղակի սկզբնամասի թույլ արտահայտված դրոշմները, իսկ գլխիկի եզրին արտաձգիչ մեխանիզմի ատամի հետքերը, քերծվածքի ձևով: Կրակոցի ժամանակ պարկուճի գլխիկի վրա առաջանում է գարկանի գլխիկի հետքը, որի շուրջն արտահայտվում է փակաղակի առջևի կտրվածքի միկրոկառուցվածքը: Պարկուճի իրանի վրա առաջանում է մասն փամփշտակալի հետքը: Պարկուճի դուրս նետելու պահին նրա վրա առաջանում են անդրադարձիչի և փամփշտակալի հետքերը: Նշված և որոշ այլ հետքեր (կախված հրազենի մեխանիզմի առանձնահատկություններից) լայնորեն օգտագործվում են կրիմինալիստիկական փորձաքննություններ կատարելիս:

Կրիմինալիստիկական նպատակների համար օգտագործվում են մասն ողորկափող որսորդական հրազենների պարկուճների վրա մնացած հետքերը:

Նման հրացաններից կրակոց արձակելու համար անհրաժեշտ է փամփուշտը մտցնել փամփշտակալ, փակել հրացանը և սեղմել ձգանը: Վերալիցքավորման համար պետք է բացել հրացանը և հանել կրակված պարկուճը: Այս փուլերից յուրաքանչյուրում պարկուճը շփվում է հրացանի որոշակի մասերի հետ, որոնք կարող են նրա վրա հետքեր թողնել:



Ա)



Բ)

Համեմատական մանրադիտակով դիտարկվող պարկերը, որը ցույց է տալիս.

ա) գարկանի հարվածի թողած հետքը,

բ) պարկուճի վրա փողի հերմամասի թողած հետքերը

Հրացանը փակելիս պարկուճի գլխիկի վրա կարող են մնալ կաղապարի վահանիկի ներքևի մասի հետքերը:

Կրակոցի ժամանակ զարկանի՝ հրապատիճին հարվածելիս, վերջինիս վրա մնում է պարզ, ստատիկ, ծավալային հետք: Այդ հետքը արտացոլում է զարկանի գլխիկի մակերևույթի առանձնահատկությունները և հաջողությամբ կարող է օգտագործվել հրազենի նույնացման համար:

Որսորդական ողորկափող հրացանների պարկուճների վրա մնում են նաև այլ հետքեր՝ կախված հրացանի կառուցվածքային առանձնահատկություններից: Այդ հետքերով հրացանի որոշ մասերի առանձնահատկությունների, ինչպես նաև պարկուճների վրա փորձարարական ճանապարհով ստացված հետքերի համեմատական հետազոտման միջոցով կարելի է պարզել, որ, օրինակ, դեպքի տեղում հայտնաբերված պարկուճը կրակված է հենց այն հրացանից, որը խուզարկության ժամանակ հայտնաբերվել է մեղադրյալի մոտից: Թեև, անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ ոչ բոլոր դեպքերում է, որ այդ հետքերը կրիմինալիստիկական արժեք են ներկայացնում, քանի որ այդ պարկուճները հաճախ օգտագործվում են մի քանի անգամ, որը, հասկանալի է, նպաստում է հետքերի աղավաղմանը (բացառությամբ հրապատիճի վրա մնացած զարկանի գլխիկի հետքի):

Կրակոցից առաջանում են հետքեր արգելքների վրա: Աեծ արագությամբ և ուժով փողանցքից դուրս թռչելով գնդակը խոցում է իր ճանապարհին եղած արգելքները, երանց վրա առաջացնելով վնասվածքներ և այլ հետքեր: Հարվածելով արգելքին նա կարող է ծակել այն, առաջացնելով միջանցիկ բացվածք՝ մուտքի, ելքի անցքերով և միջանցքով: Իսկ եթե գնդակը լռվում, մնում է արգելքի մեջ, ապա առաջանում են միայն մուտքի անցք և միջանցք: Այսպիսի խոցվածքները կոչվում են «կույր» անցք:


Գնդակի հարվածից առաջացած անցքերը հիմնականում շրջանաձև են, որոնք իրենց չափերով մոտ են խոցող արկի տրամաչափին: Մուտքի անցքի եզրերը սովորաբար, գնդակի ճնշման ազդեցությամբ թեքվում են դեպի ներս: Ելքի անցքը ունենում է դուրս ցցված եզրեր (կան որոշ բացառություններ, որոնց մասին կխոսվի ստորև):

Ամենից հաճախ մուտքի անցքը իր չափերով փոքր է լինում ելքի անցքից, թեև որոշ պայմանների առկայությամբ կարող է նկատվել հակառակ պատկերը (օրինակ՝ դիմացից, մոտ տարածությունից կրակելիս վառողային գազերի ազդեցության հաշվին):

Այնպիսի նյութեր խոցելիս, ինչպիսիք են ապակին, ոսկորը և այլն, խոցվածքը ունենում է ձագարի ձև՝ լայն մասով դարձած դեպի գնդակի

թիչքի ուղղությամբ, ապակու վրա առաջանում են նաև բազմաթիվ շառավղային ճեղքվածքներ:

Կրակոցի հաջորդականության որոշումը պատուհանի ապակու վրա սովորաբար պարզ է դառնում ճեղքերի գծերի ուսումնասիրությունից հետո: Այնուհետև ստացված տվյալները համադրելով կրակոցի ուղղության վերաբերյալ տվյալների հետ, հնարավոր է դառնում պատասխանել թե որ կրակոցն է արձակվել առաջինը:



Ապակու վրա գնդակի թողած հետքով կրակոցի մեխանիզմի վերականգնումը

Գործվածքների վրա գնդակի խոցվածքները սովորաբար լինում են շրջանաձև, գնդակի տրամագծից քիչ փոքր:

Փայտի վրա մուտքի անցքը շրջանաձև է, գնդակի տրամագծից քիչ փոքր: Մետաղների վրա գնդակը առաջացնում է շրջանաձև խոցվածք, անհարթ եզրերով, որոնք ծովում են գնդակի թիչքի ուղղությամբ:

Այս հատկանիշները ուսումնասիրելիս, պետք է անպատճառ նկատի ունենալ նաև, որ մուտքի անցքը ելքի անցքից հնարավոր է տարբերակել կրակոցի լրացուցիչ հետքերի առկայության պարզաբանման հիման վրա:

Մուտքի հրազենային անցքը որոշ դեպքերում դժվար է նկատվում, օրինակ՝ թարմ, հաստ կեղև ունեցող ծառի կամ հաստ, մազմզոտ մահուղի վրա կրակելիս:

Ինքնաշեն հրազեններից, կտրվածքներից կրակելիս, փոխարինող փամփուշտներ, որսորդական, ինքնաշեն գնդակներ օգտագործելիս մուտքի անցքը կարող է ունենալ բոլորովին ատիպիկ ձև, գնդակների դեֆորմացիայի կամ ոչ ճիշտ թռիչքի հետևանքով:

Մոտ տարածությունից կոտորակային լիցքերով խոցելիս առաջանում են մուտքի խոշոր անցքեր: Կրակոցի տարածությունը մեծացնելիս ստացվում է ավելի մեծ անցք, բայց նրա շրջապատում լինում են ցրված մանր անցքեր առանձին մանրագնդակներից կամ կոտորակներից: Կրակոցի տարածության հետագա մեծացումից առաջանում են միայն առանձին, ցրված վնասվածքներ, որոնց միջև եղած տարածությունը մեծանում է այնքան, որքան մեծ է կրակոցի տարածությունը:

Թվարկվածներից բացի արգելքների վրա մնում են նաև կրակոցի լրացուցիչ հետքեր, որոնք ուղեկցելով հիմնականներին, առաջանում են արգելքի վրա վառողային գազերի, փողից արձակված բոցի, մրի, վառողի չայրված մնացորդների, յուղի, հրապատիճային նյութերի ազդեցությունից:

Կրակելիս վառողը չափազանց արագ վերածվում է գազակերպ վիճակի, որը զարգացնելով ընդարձակման հզոր էներգիա, արկը դուրս է հրում պարկուճից և այն մեծ ուժով մղում է հրազենի փողանցքը: Վառողային գազերի մի մասը մեծ ուժով դուրս է թռչում փողից՝ արկի հետևից: Ոչ մեծ տարածության վրա վառողային գազերը բոլոր կողմերից ընդարձակվելու հնարավորության շնորհիվ կորցնում են իրենց էներգիան:

Այրվող գազերի ազդեցության ուժը և տարածությունը կախված են մի շարք պատճառներից, որոնցից են պարկուճում եղած պայթուցիկ նյութերի քանակը և որակը, նրա այրվելու արագությունը, հրազենի տրամաչափը, փողի երկարությունը:

Կրակոցի մշտական լրացուցիչ հետքը մաքրման գոտին է (կեղտոտման գոտին): Ինչպես նշեցինք, հրազենից թռչող գնդակը իր վրա կրում է վառողային մուր, քերված մետաղի մասնիկներ (իր և փողանցքի), ժանգ, յուղ: Մուտքի անցքի եզրերին դրանք նստում են մաքրված գոտու ձևով: Գնդակի մուտքի անցքի շրջանում կարելի է տեսնել նաև բոցի կամ բարձր ջերմաստիճանի ազդեցության հետքեր այրվածքների և խանձվածքների տեսքով: Այս հետքերը առաջանում են հատկապես այնպիսի փամփուշտներից կրակելիս, որոնք լիցքավորված են ծխատու վառողով: Բոցի կամ բարձր ջերմաստիճանի ազդեցության էֆեկտը կախված է մի շարք պատճառներից, որոնցից հիմնականներն են. վառողային լիցքի քանակը, հրազենի փողի երկարությունը, կրակոցի տարածությունը և խոցվող օբյեկտի նյութը:

Ինչպես ծխատու, այնպես էլ անծուխ վառողի այրման դեպքում առաջանում է մուր: Փողանցքում այն հետապնդում է արկին և մոտ տարածությունից կրակելիս նստվածք է առաջացնում մուտքի անցքի շրջանում:

Վառողային մրի նստվածքի տարածությունը և խտությունը միևնույն հեռավորությունից կրակելիս, հիմնականում կախված են երեք պատճառներից՝ վառողի տեսակից, քանակից և հրազենի փողի երկարությունից:

Երկարափող հրազեններից կրակելիս մրի հետքերը կարելի է հայտնաբերել կրակելու տեղից 35-40 սմ տարածությունից, իսկ կարճ փող ունեցող հրազենից կրակելիս 20-25 սմ-ից:

Մոտիկ տաածությունից կատարված կրակոցից գնդակի մուտքի անցքի շրջանում կարելի է հայտնաբերել նաև հրապատիճից արձակված մետաղական սնդիկի մնացորդներ, մետաղական փոշի, չայրված վառողի մնացորդներ, հրազենային յուղի հետքեր և այլն:

§ 4. ՀՐԱՉԵՆԻ ԵՎ ԿՐԱԿՈՑԻ ՀԵՏՔԵՐԻ ՉՆՆՈՒԹՅՈՒՆԸ, ՖԻՔՍՈՒՄԸ ԵՎ ՎԵՐՅՆՈՒՄԸ

Հրազենի գործադրման հետ կապված դեպքի տեղը զննելիս քննիչը ղեկավարվում է ՀՀ քր. դատ. օր.-ի 217, 218 հոդվածներով, պահպանելով տակտիկական այն հանճնարարականները, որոնք մշակված են այդ քննչական գործողության համար:

Պրակտիկական ցույց է տալիս, որ հանցագործություն կատարելուց հետո հրազենը կամ մնում է դեպքի տեղում, կամ հանցագործներն այն թաքցնում են դեպքի տեղից ոչ հեռու՝ փոսերում, ջրհորներում, խտտի դեզի, թփերի մեջ և այլ նման տեղերում: Դա նշանակում է, որ քննիչը պետք է մանրազնին ուսումնասիրի բոլոր այդպիսի տեղերը, կիրառելով որոնող համապատասխան տեխնիկա:

Պետք է հիշել, որ հրազենի հայտնաբերումը դեռևս քննիչի առջև դրված խնդրի լուծումը չէ: Հրազենի հայտնաբերման տեղում պետք է որոնել ոտքերի, տրանսպորտային միջոցների և այլ հետքեր, իսկ հրազենի վրա՝ մատնահետքեր:

Տեղագնություն ժամանակ ստացված տվյալները հնարավորություն են տալիս պարզելու այնպիսի հարցեր, ինչպիսիք են հրազենի գողնադրման փաստը, խոցված օբյեկտները և նրանց վրա եղած հետքերի բնույթը, կրակոցի ուղղությունը և տարածությունը, կրակողի գտնվելու տեղը:

Նշված հարցերին պատասխանելու համար քննիչը պետք է հայտնաբերի, զննի, ֆիքսի և վերցնի հրազենը, զինամթերքը, կրակոցի հետքերը և այլ իրեղեն ապացույցներ ու հետքեր:

Դեպքի տեղում հրազեն հայտնաբերելիս անհրաժեշտ է հանգուցային եղանակով լուսանկարել այն շրջապատող առարկաների հետ, չխախտելով նրա սկզբնական դիրքը, չափել փողաբերանի և մոտակա երկու անշարժ առարկաների միջև եղած տարածությունը, որոշել փողանցքի առանցքի ուղղությունը, նշել հրազենի դիրքը մոտակա առարկաների նկատմամբ, նշել նաև վերև, թե ներքև է ուղղված հրացանի կամ ավտոմատի փակադակի բռնակը կամ ատրճանակի պատյանի պատուհանը:

Նշված հարցերի վերաբերյալ տվյալները պետք է շարադրվեն դեպքի տեղի զննության արձանագրության մեջ և ցույց տրվեն պլանում:

Հրազենը զննելիս անհրաժեշտ է պահպանել հետևյալ կանոնները. ա) հրազենը վերցնել այն տեղերից, որտեղ չեն կարող լինել նույնացման համար պիտանի պապիլյար նախշեր, բ) ցանկալի է հրազենը վերցնել ռետինե ձեռնոցներով, սեփական մատնահետքերը նրա վրա չթողնելու համար, գ) մինչև հրազենի լիցքաթափումը չկաշել ձգանին, դ) հրազենը պահել փողը վեր դիրքով, փողը ցած չիջեցնել, որպեսզի չայրված նյութերը ցած չթափվեն, ե) հրազենի պատահականորեն վայր ընկնելուց խուսափելու համար, այն պետք է վերցնել վստահ շարժումով, զ) հրազենը պետք է տեղափոխել սպիտակ թղթի թերթի վրա, է) եթե ատրճանակի հրահանը գտնվում է մարտական վիճակում, ապա այդ փաստը զննության արձանագրության մեջ ֆիքսելուց հետո նպատակահարմար է տեղափոխել ապահովիչային վիճակի, ը) ինքնաբերական կրակից խուսափելու համար, արտաքին զննությունից հետո հրազենը պետք է լիցքաթափել:

Խորհուրդ չի տրվում քանդել հրազենը կամ փորձնական կրակոց կատարել նրանից:

Հրազենը զննելիս պետք է պարզել և արձանագրության մեջ նշել հետևյալ տեղեկությունները. ա) հրազենի տեսակը, սխտեմը, մոդելը (տիպը), տրամաչափը, բ) հրազենի վրա չկա՞ն արդյոք պապիլյար գծանախշերի դրոշմներ, վատողային մուր, արյուն, մազ, ոսկրային մասնիկներ, ուղեղային նյութ, հող, այլ նյութեր: գ) հրազենը չունի՞ արդյոք արտաքին վնասվածքներ, դ) ի՞նչ դիրքում է գտնվում հրահանը, ե) գործարանային կամ այլ ինչպիսի նշաններ կան հրազենի վրա (անվանումը, համարը, թողարկման տարեթիվը, ֆիրման, տնօրինողի անուն-ազգանվան սկզբնատառերը և այլն), զ) փամփշտակալում կա՞ն արդյոք փամփուշտներ, է)

փամփուշտատուփում կամ թմբուկում կա՞ն արդյոք փամփուշտներ և որ-
քան, ը) ինչպիսի՞նք է փողանցքի վիճակը (յուղի, վառողային մրի, ժան-
գոտվածության, օտար մասնիկների առկայություն և այլն, զգացվու՞մ է
արդյոք նրանից այրված վառողի հոտ:

Անհրաժեշտ է նշել նաև հրազենի տվյալ օրինակին հատուկ անհա-
տական, բնութագրող հատկանիշները:

Չննությունն ավարտելուց հետո հրազենի փողաբերանը փակվում է
մաքուր կտորից կամ թղթից պատրաստված թասակով: Հրազենը փաթե-
թավորվում է մաքուր թղթով, մոնլաթով կամ ցելոֆանով և տեղավորվում է
բամբակ պարունակող տուփի մեջ:

Դեպքի տեղի զննության ժամանակ առանձին հետևողականությ-
յամբ պետք է որոնել արկերը, պարկուճները, խիցերը:

Գնդակ, կոտորակ, մանրագնդակ, խից և նրանցով պատճառած
վնասվածքներ հայտնաբերելիս պետք է որոշել նրանց գտնվելու տեղը՝
չափելով նրանց և երկու կայուն օբյեկտների միջև եղած տարածությունը:
Եթե առաջացած վնասվածքները մի քանիսն են, պետք է չափել նաև
նրանց միջև եղած տարածությունը: Այնուհետև որոշվում է գնդակի առա-
ջացրած բացվածքի ուղղությունը (աջից ձախ, վերից ներքև), չափվում է
նրա խորությունը, փայտյա (կամ այլ) ձողիկի միջոցով:

Մանրագնդակի, կոտորակի վնասվածքները շրջագծվում են կավի-
ճով՝ վնասվածքի եզրից 5-6 սմ շառավիղով, որոշվում է դրանց քանակը:

Գնդակը որոնելիս պետք է հաշվի առնել դրանց քանակը, ուղղությու-
նը, հրազենի տեսակը, ականատեսների տեղեկությունները կրակոցի
փաստի մասին, կրակոցների ընդմիջումները, դիակի արտաքին զննու-
թյան արդյունքները, պարկուճների հայտնաբերման տեղերը:

Գնդակը կարող է խցանվել արգելքի մեջ, ընկած լինել արգելքի մոտ,
անդրադարձ թռիչք (ռիկոշետ) կատարել և հայտնվել ամենաանհավա-
նական տեղերում: Դրա համար էլ, ինչպես նաև այն դեպքերում, երբ
գնդակը որոնվում է խոտի, ջրի, ձյան, ավազի և այլ նման տեղերում,
նպատակահարմար է օգտագործել մետաղորոնիչ:

Անհրաժեշտ է իմանալ գնդակի հայտնաբերման երկու հիմնական
տեղերի զննության հնարքները: ա) Եթե գնդակը մխրճվել է արգելքի մեջ,
ապա պետք է պարզել և պլանի մեջ նշել տվյալ տեղի դիրքը երկու ան-
շարժ (կողմնորոշիչ) օբյեկտների նկատմամբ, չափել բացվածքի տրամա-
գիծը, խորությունը, պարզել բացվածքի եզրերի շրջանում մրի հետքերի,
փոշու կամ այլ նյութերի առկայությունը, ֆիքսել բացվածքի եզրերի տես-
քը, արգելքի նյութի վիճակը: բ) Եթե հայտնաբերված գնդակն ազատ ըն-

կամ է հարթության վրա (հատակին, հողին և այլն), պարզվում է գնդակի դիրքը երկու անշարժ (կողմնորոշիչ) օբյեկտների նկատմամբ, գնդակի վրա վնասվածքների առկայությունը կամ բացակայությունը, նրանց տեղադրությունը (գնդակի ո՞ր մասում): Եթե գնդակի վրա կան վնասվածքներ, ապա պետք է որոնել անդրադարձ թռիչքի (ռիկոշետի) հետքեր կամ թռիչքի ժամանակ հարվածի հետքեր, որոշել և զննել արգելքի վրա եղած վնասվածքները:

Այն դեպքերում, երբ գնդակը կույր վնասվածք է առաջացրել մարդկային մարմնի վրա, գնդակը հանվում է դատական բժշկի կողմից:

Եթե գնդակը մնացել է փայտյա արգելքի մեջ, ապա հնարավորության դեպքում, դուրի օգնությամբ վնասվածքից 3-5 սմ շառավղով կատարվում է կտրվածք, որը զգուշությամբ անջատվում է, բաժանվում երկու մասի (կամ ավելի) և առանձնացվում է գնդակը: Փայտի կտրված կտորները պետք է պահել, որովհետև հետագայում դրանք կարող են օգտակար լինել գնդակի թռիչքի ուղղությունը որոշելիս:

Եթե գնդակը խցանվել է աղյուսե, տուֆե պատի մեջ, այն հանվում է մետաղական խողովակի միջոցով, որի տրամագիծը 2-3 սմ պետք է մեծ լինի գնդակի տրամաչափից:

Եթե գնդակը մխրճված է հողի, ավազի մեջ, ապա պետք է այն փորել և վերցված հողաշերտը լվանալ կամ մաղել: Եթե գնդակը մնացել է ձյան մեջ, ձյունը հալեցվում է:

Հայտնաբերված գնդակը զննելիս պետք է ուսումնասիրել և արձանագրության մեջ նշել, գնդակի տեսակը (պատյանավոր, կիսապատյանավոր, առանց պատյանի), նշանակությունը (ատրճանակի, ռևոլվերի, հրացանի և այլն), մետաղի գույնը, գլխամասի գունավորման առկայությունը կամ բացակայությունը, գնդակի ձևը (սրածայր, գլանաձև, հարթ ծայրով և այլն), չափսերը (երկարությունը, տրամագիծը), պարկուճի հետ միանալու եղանակի մասին հուշող հատկանիշները, գործարանային նիշերի առկայությունը կամ բացակայությունը, դեֆորմացիայի առկայությունը և բնույթը, գնդակի մակերևույթին օտար մասնիկների առկայությունը (արյուն, մազաթելեր, ապակու մասնիկներ, ուղեղանյութ և այլն), փողանցքի ակոսադաշտերի քանակը և թեքությունը:

Եթե գնդակը դեֆորմացված է, այն պետք է կշռել, որովհետև քաշը որոշակի չափով կարող է նպաստել գնդակի անհատականացմանը:

Գնդակը (կոտորակը, մանրագնդակը, խիցը) պետք է փաթեթավորել մաքուր, սպիտակ թղթով և տեղավորել բամբակ կամ մաքուր կտոր պարունակող փոքրիկ սրվակի կամ տուփի մեջ ու կնքել: Վերջինների վրա

պետք է կատարել համապատասխան գրառում (ինչ է պարունակում, վերցնելու տեղը, ժամանակը, որ գործին է վերաբերում, ընթերակաների և քննիչի ստորագրությունները): Եթե գնդակները մի քանիսն են, ապա դրանք փաթեթավորվում են առանձին-առանձին:

Գնդակի վրա եղած այլ նյութերի մնացորդները չեն հեռացվում:

Պարկուճի որոնումը պետք է իրականացնել կրակողի մոտավոր տեղից 4-12 մ շառավիղով: Այն որոնելու համար պետք է ուսումնասիրել հրազենային վնասվածքները, որոնք հնարավորություն կտան դատելու կրակոցի հեռավորության մասին, իսկ գնդակի առկայությունը՝ հրազենի տեսակի մասին, ինչպես նաև տեղեկություն պարկուճի թռիչքի ուղղության և տարածության մասին:

Դեպքի տեղում պարկուճ հայտնաբերելիս չափվում և արձանագրության մեջ նշվում է նրա և մոտակա երկու կայուն օբյեկտների (կողմնորոշիչ) միջև եղած տարածությունը: Եթե պարկուճները մի քանիսն են, ապա չափվում և ֆիքսվում է նաև նրանց միջև եղած տարածությունը: Դրանք լուսանկարվում են հայտնաբերման տեղում, իսկ նրանց գտնվելու տեղը նշվում է պլանի մեջ:

Պարկուճի վրայի հնարավոր մատնահետքերը չվնասելու և սեփական մատնադրոշմներ չթողնելու նպատակով այն պետք է վերցնել երկու մատով փողակի և գլխիկի եզրերից:

Ուսումնասիրվում և ֆիքսվում է պարկուճի ներսում և արտաքին մակերեսին վառողային մրի առկայությունը, նրա գույնը, վիճակը (մոխրագույն, սև, չոր, խոնավ և այլն): Պարզվում է պարկուճի խցիկում չայրված վառողի առկայությունը, որը լցվում է մաքուր, սպիտակ թղթի վրա կամ փոքրիկ փորձանոթի մեջ, ցույց է տրվում դրանց գույնը, ձևը: Փաթեթավորվում, արվում է համապատասխան գրառում և կնքվում է: Մի քանի պարկուճների առկայության դեպքում, յուրաքանչյուրը փաթեթավորվում է առանձին և համարակալվում է:

Պարկուճը զննելիս պետք է ուսումնասիրել և ամրապնդել նրա կառուցվածքային առանձնահատկությունները, որոնցից են. իրանի ձևը (զլանաձև, շշաձև, կոնաձև), գլխիկի կառուցվածքը, նյութի (մետաղի, ստվարաթղթի) գույնը, պարկուճի չափերը՝ ընդհանուր երկարությունը, իրանի տրամագիծը, գլխիկի, ներքին մասի տրամագիծը, փողաբերանի տրամագիծը, գլխիկի վրա եղած պիտակային նշանները (տրամաչափը, թողարկման տարեթիվը, գործարանի կամ ֆիրմայի նշանը, այլ նշաններ), հրապատիճի մետաղի գույնը, գնդակը պարկուճին միանալու եղանակը:

Պարկուճը զննելիս պետք է ուսումնասիրել և ֆիքսել այն հետքերը, որոնք բնութագրում են կիրառված հրազենի մեխանիզմի կառուցվածքը,

գարկանի հետքը, արտաձգիչի ատամի հետքը, փամփուշտատուփի և փամփշտակալի հետքերը:

Անհրաժեշտ է ուշադրության արժանացնել և ֆիքսել նաև պարկուճի դեֆեկտները՝ փողակի եզրերի պատռվածք, իրանի ճեղքվածքներ և այլն:

Դեպքի տեղում պարկուճների բացակայությունը կարող է արդյունք լինել որոշ պատճառների, որոնցից են՝ կիսաավտոմատ կամ ավտոմատ հրազենի անսարքությունը, ռևոլվերի կամ որոշ տեսակի որսորդական հրացանների կիրառումը, շամփուրային կամ ինքնաշեն հրազենի կիրառումը, հանցագործների կողմից պարկուճների հավաքումը:

Հրազենի և մետաղական զինամթերքի որոնման համար, տեղագն-նության ժամանակ օգտագործվում է որոնող տեխնիկա, որոնցից են մետաղորոնիչը և մագնիսական որոնիչը:

Ինդուկցիոն տիպի կիսահաղորդչային մետաղորոնիչը (МИП) նախատեսված է սև և գունավոր մետաղներ հայտնաբերելու համար:

МИП մետաղորոնիչը հնարավորություն է տալիս հայտնաբերել ատրճանակներ հողում՝ մինչև 35 սմ խորության վրա, որսորդական հրացանի պարկուճները՝ մինչև 13սմ, ատրճանակի արույրե պարկուճները՝ մինչև 7սմ և այլն:

Մագնիսական որոնիչը պայտածև, հաստատուն մագնիս է՝ նախատեսված միայն սև մետաղներ որոնելու համար:

§ 5. ԿՐԱԿՈՅԻ ՈՒՂՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ

Հրազենի կիրառմամբ հանցագործությունների վերաբերյալ գործեր քննելիս երբեմն անհրաժեշտություն է առաջանում պարզել կրակողի տեղը, արկի թռիչքի ուղղությունը: Այդ հարցերի ճիշտ որոշումը օգնում է վերականգնել դեպքի իրադրությունը (կրակողի և տուժողի փոխադարձ դիրքը, կրակոցի տարածությունը և անկյունը), որը նպաստում է գործի հանգամանքների օբյեկտիվ հետազոտմանը և վկաների, տուժողների, մեղադրյալների ցուցմունքները ստուգելուն: Այս հարցերը լուծվում են հրազենային վնասվածքները ուսումնասիրելու ճանապարհով:

Վերևում արդեն նշել ենք, որ հրազենի գործադրումից առաջացած անցքերը լինում են թափանցող (միջանցիկ) և «կոյր»: Վերջին դեպքում արկը խցանվում է արգելքի նյութի մեջ կամ նրանից ետ է թռչում (ոխլոշետ):

Թափանցող անցքի դեպքում տարբերում են մուտքի, ելքի անցքեր և միջանցք: Գ-նդակի թռիչքի ուղղության որոշման հնարավորությունը մեկ վնասվածքի դեպքում կախված է միջանցքի խորությունից: Որքան այն մեծ է, այնքան հեշտ է ուղղադիտում կատարել ելակետի, այսինքն՝ կրակելու տեղի ուղղությամբ:

Ուղղադիտում կատարելուց առաջ պետք է որոշել, թե ո՞ր անցքն է մուտքի և որը՝ ելքի:

Մուտքի և ելքի անցքերի հատկանիշներն են.

խոցվածքի մուտքի անցքի շրջանում կրակոցի լրացուցիչ հետքերի առկայությունը,

տեքստիլ գործվածքների վրա մուտքի անցքի եզրերը (թելերը, մազագուկները) թեքվում են արկի թռիչքի ուղղությամբ,

փայտյա արգելքների դեպքում՝ արկի ելքի անցքի եզրերին առկա են լինում փայտի փշրանքներ (շերտազատումներ),

ապակու վրա՝ ձագարածն փոսիկ, որի լայնացող մասը ուղղվում է արկի թռիչքի կողմը,

մետաղական արգելքների դեպքում բացվածքի եզրերը ծռվում են արկի թռիչքի ուղղությամբ:

Ուղղադիտում հնարավոր է կիրառել, երբ արկը ծակում է արգելքը, այսինքն, եթե արգելքի ընդհանուր վնասվածք չի առաջանում: Եթե արկը առաջացրել է մեկ անցք, ապա նրա թռիչքի ուղղության որոշման հաջողությունը կախված է միջանցքի խորությունից: Որքան այն խորն է, այնքան հեշտ է իրականացնել կրակոցի տեղի ուղղադիտումը: Բացվածքում տեղադրվում է գլանաձև խողովակ, որը բավականին հեշտացնում է ուղղադիտումը:

Ավելի արդյունավետ է ուղղադիտումը այն դեպքում, երբ կրակոցից առաջացել են երկու անցքեր (երկու թափանցող անցքեր կամ մեկ թափանցող և մեկ «կույր» անցք):

Եթե երկու անցքերը առաջացել են միմյանց մոտ գտնվող երկու արգելքների վրա, ապա ուղղադիտման համար այդ անցքերում տեղադրվում է գլանաձև խողովակ: Իսկ եթե դրանք գտնվում են միմյանցից որոշակի հեռավորության վրա, ուղղադիտումը նպատակահարմար է կատարել ամուր թելի միջոցով: Այս դեպքում թելի մի ծայրը ամրացվում է մի անցքի, մյուսը՝ երկրորդ անցքի կենտրոնում: Թելի տակ տեղադրվում է համապատասխան բարձրության հենարան, որից հետո ելքի անցքին ամրացված ծայրը կապվում է հենարանին: Դիտարկումը կատարվում է հենարանից՝ մուտքի անցքի ուղղությամբ:

Ուղղադիտման ժամանակ տեղանքի երևացող մասը լուսանկարվում է: Ֆոտոապարատը տեղադրվում է այնպես, որպեսզի օբյեկտիվի օպտիկական առանցքը համապատասխանի ուղղադիտման գծին:

Ուղղադիտում կատարելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ որոշակի տարածության վրա գնդակի թռիչքի հետագիծը ունի աղեղի ձև, որը և կարող է դժվարացնել ուղղադիտումը: Գնդակի հետագիծը կախված է նաև հրազենի տեսակից, սխտեմից, արկի, վառողի որակից, առաջին արգելքի վրա ծախսած էներգիայից, մթնոլորտային պայմաններից, ռիկոչետից և այլն:

Մարդկային մարմնի վրա առաջացած վնասվածքների դեպքում, կրակոցի ուղղությունը որոշվում է դիակի դատաբժշկական փորձաքննությամբ՝ մուտքի և ելքի անցքերի, ինչպես նաև միջանցքի հետազոտմամբ: Իսկ երբեմն էլ, այդ հարցի լուծման համար նշանակվում է դատաբժշկական և կրիմինալիստիկական համալիր փորձաքննություն:

§ 6. ԿՐԱԿՈՅԻ ՀԵՏՔԵՐ ՊԱՐՈՒՆԱՎՈՂ ՕՐՅԵԿՏՆԵՐԻ ՎԵՐՑՆՈՒՄԸ ԵՎ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄԸ

Հիշյալ գործողությունների կատարումը քննիչից պահանջում է աշխատել այնպես, որ բացառվի դրանց վնասումը և կորուստը: Դրա համար էլ, նպատակահարմար է այդ աշխատանքներին մասնակից դարձնել մասնագետի, որը կնպաստի նաև հետքերի հայտնաբերման, ամրապնդման, վերցման աշխատանքները լավագույն ձևով կազմակերպելուն և հնարավոր սխալներից ու բացթողումները խուսափելուն:

Կրակոցի հետքեր պարունակող օբյեկտների հետ աշխատելիս առաջին հերթին դրանք պետք է լուսանկարել: Կրակոցի հետքերը լուսանկարվում են մասշտաբային նկարահանման կանոններով:

Եթե կրակոցի հետքեր պարունակող օբյեկտը չափսերով փոքր է, այն վերցվում է ամբողջությամբ կամ առանձնացվում է օբյեկտի՝ հրազենային վնասվածք ստացած մասը (պատուհանի ապակին, պահարանի դուռը և այլն), վաղօրոք այն լուսանկարելուց հետո:

Եթե արկը լուվել է արգելքի մեջ, ապա զննվում է խոցվածքը, լուսանկարվում, որից հետո արկը հանվում է (վերը նշված եղանակներով):

Օբյեկտը կամ նրա հետք պարունակող մասը վերցնելը անհնար լինելու դեպքում պետք է պահպանել և վերցնել լրացուցիչ հետքերը՝ դրանք

պատճենավորելով ֆոտոժապավենի, խոնավ ֆոտոթղթի վրա կամ լցնելով ապակյա փորձանոթի մեջ:

Մոտիկ տարածությունից կատարված կրակոցի հետքեր պարունակող հագուստի՝ հետքերի կուտակման տեղերում կարվում են սպիտակ, մաքուր կտորներ, լաթեր, գործվածք կամ այդ տեղերը ծածկվում են սպիտակ թղթի թերթերով, իսկ հագուստը ծավկում է հետքերով դեպի ցած դիրքով:

§ 7. ՀՐԱՉԵՆԻ ԽՄԲԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՆՈՒՅՆԱՅՈՒՄԸ ԿՐԱԿՎԱԾ ԳՆԴԱԿՈՎ

Դեպքի տեղում կրակված գնդակ հայտնաբերելիս նրա որոշ առանձնահատկություններ ուսումնասիրելու միջոցով կարելի է կարծիք կազմել այն հրազենի տեսակի, սիստեմի մասին, որից կատարվել է կրակոցը (օրինակ կարելի է եզրակացնել, որ կրակված է 1933 թ. մոուշի TT ատրճանակից):

Այդ հարցը լուծելիս, կամ որ նույնն է՝ հրազենի խմբային պատկանելությունը որոշելիս, ուսումնասիրվում են գնդակի կառուցվածքը, նրա վրա մնացած փողանցքի պատերի հետքերը, իսկ երբեմն էլ՝ հրազենի այլ մասերից մնացած հետքերը:

Վերևում արդեն նշել ենք, որ յուրաքանչյուր խմբի հրազենի համար թողարկվում են որոշակի կառուցվածքի և տրամաչափի փամփուշտներ: Իսկ փողանցքի հետքերը առաջանում են, երբ գնդակը անցնում է նրա միջով:

Հրազենի խմբի որոշումը գնդակի կառուցվածքի և փողանցքի պատերի թողած հետքերով, իրականացվում է հրազենի, փամփուշտների և կրակված գնդակների հավաքածուների հետ համեմատելու միջոցով կամ էլ համապատասխան տեղեկատու նյութերի օգնությամբ:

Գնդակի՝ որոշակի խմբի հրազենի փամփուշտին պատկանելու հարցը որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել. գնդակի ընդհանուր կառուցվածքը, գլխամասի կառուցվածքը, չափսերը (տրամագիծը, երկարությունը), քաշը, նյութը, որից պատրաստված է, պարկուճի հետ միանալու եղանակը, պայմանական նշանները և այլ հատկանիշներ, որոնք էլ համեմատվում են վերոհիշյալ հավաքածուների և տեղեկատու նյութերի հետ:

Փողանցքի հետքերն ուսումնասիրելիս որոշվում է փողանցքի ակոսների քանակը, նրանց ուղղությունը, լայնությունը, թեքությունը:

Հրազենի առկայության պայմաններում, որից ենթադրվում է, որ կատարվել է կրակոցը, իրականացվում է նույնացում:

Կրակված գնդակով հրազենի անհատականացումը կատարվում է կրիմինալիստիկական նույնացման ընդհանուր կանոններին համապատասխան, կրիմինալիստիկական հրազենագիտական փորձաքննության միջոցով:

Ինչպես կրիմինալիստիկական հետազոտման մյուս օբյեկտների հատկանիշները, այնպես էլ հրազենի փողանցքի միկրոռելիեֆը, որը գնդակի վրա առաջացնում է հետքեր, ունի հարաբերական կայունություն: Այս դեպքում հատկանիշների կայունության հարաբերականությունը բացատրվում է նրանով, որ յուրաքանչյուր կրակոցի ժամանակ փողանցքի միկրոռելիեֆը ենթարկվում է բարձր ջերմաստիճանի, բարձր ճնշման, քիմիական և մեխանիկական ազդեցության:

Կրակված գնդակով հրազենը նույնացնելիս մանրամասն ուսումնասիրվում են նույնացվող հրազենի փողանցքի միկրոռելիեֆի բոլոր դետալները, որոնք իրենց ամբողջության մեջ անհատական են և անկրկնելի:

Հրազենային բոլոր փողերը, այդ թվում նորերը, ունեն մանրագույն անհարթություններ (ելուտներ, փոսիկներ), որոնք ավելանում են հրազենի շահագործման ընթացքում: Դրանք էլ, ինչպես արդեն նշել ենք, գնդակի վրա առաջացնում են դիմամիկ, ծավալային հետքեր, քերծվածքների (տրասսաների) ձևով և օգտագործվում են նույնացման նպատակներով:

Կրակված գնդակով հրազենի անհատական նույնացումը կատարվում է հայտնաբերված գնդակի վրա մնացած փողանցքի հետքերը՝ նույն հրազենով փորձարարական կրակոցից առաջացած հետքերի հետ համեմատելու ճանապարհով:

Փորձարարական կրակոցի անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ գնդակի վրա եղած հետքերը չեն կարող համեմատվել անմիջականորեն փողի հետ, բացի այդ, գնդակի վրա մնում են բարդ կառուցվածքի դիմամիկ հետքեր: Փողանցքի ներքին կառուցվածքը հնարավոր է կադապարել, սակայն դա բավական չէ նույնացում իրականացնելու համար: Փորձարարական կրակոցները կատարվում են փորձագիտական լաբորատորիաների (կամ այլ) հրաձգարաններում, որտեղ սարքավորված են հատուկ գնդակորսիչներ (բամբակե, պլաստիլինե և այլն), գնդակների վրա փողանցքի առաջացրած հետքերը պահպանելու նպատակով: Փորձագիտական պրակտիկայում գնդակների հետազոտման տարածված եղանակներից են լուսանկարչական և օպտիկական մեթոդները:

Փորձագիտական ներկա պրակտիկայում լայն կիրառում ունի հետազոտվող և փորձարարական կրակոցից ստացված գնդակների վրա եղած հետքերի համեմատական հետազոտումը համեմատական մանրադիտակներով (MIC-10, MIC-51 և այլն): Այս տիպի մանրադիտակները ունեն 2 օբյեկտիվ, մեկ օկուլյար և հնարավորություն են տալիս լուսանկարել հետազոտման արդյունքները: Երկու գնդակները (հետազոտվող և փորձարարական կրակոցի) լուսանկարվում են հատուկ ֆոտոապարատով՝ օպտիկական բացվածքի մեթոդով, միևնույն մասշտաբով, որոնց համատեղումը գնդակների վրա հետքերի համեմատական հետազոտման արդյունավետ մեթոդներից մեկն է:

Պրակտիկայում կիրառվում է նաև գնդակի մակերեսի համայնապատկերային լուսանկարում: Այսինքն՝ հետազոտվող գնդակի զլանածև մակերեսի առանձին հատվածներ լուսանկարվում են, հաջորդաբար ստանձվում և համեմատվում նույն ձևով պատրաստված փորձարարական կրակոցից ստացված գնդակի լուսանկարի հետ:

Եթե կրակված գնդակի ռեիլեֆը մինչև փորձաքննություն կատարելը ենթարկվել է փոփոխությունների, ապա այդ գնդակով հրազենի նույնացման հարցը կարող է դժվարանալ կամ ընդհանրապես չլուծվել:

§ 8. ՀՐԱԶԵՆԻ ԽՄԲԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՆՈՒՅՆԱՅՈՒՄԸ ԿՐԱԿՎԱԾ ՊԱՐԿՈՒՆՈՎ

Ինչպես կրակված գնդակի, այնպես էլ պարկուճի ուսումնասիրությանը հնարավոր է հետևություն անել այն հրազենի սիստեմի, տեսակի մասին, որից կրակվել է:

Կրակված պարկուճով հրազենի խմբային պատկանելության հարցը լուծելիս պետք է պարզաբանել պարկուճի տեսակը, գլխիկի կառուցվածքը, չափսերը, այդ թվում փողաքերանի ներքին տրամագիծը, քաշը, գնդակը պարկուճին միանալու եղանակը, պիստակային նշանները պարկուճի գլխիկի, հրապատիճի, իրանի վրա: Կրակված պարկուճով հրազենի խմբային պատկանելության հարցը լուծելիս ուսումնասիրվում են նաև հրազենի որոշակի մասերից նրա վրա մնացած հետքերը:

Հիշյալ հարցերի հետազոտման տվյալները համեմատվում են փամփուշտների հավաքածուների և տեղեկատու աղյուսակների տվյալների հետ:

Ինչպես վերը նշվել է, կրակելիս պարկուճի վրա մնում են զարկանի գլխիկի հետքը հրապատիճի վրա, փակադակի առաջնային կտրվածքի

հետքը գլխիկի և հրապատիճի վրա, արտաձգիչի ատամի հետքը գլխիկի եզրին և որոշ այլ մասերի հետքեր՝ կախված հրազենի կառուցվածքային առանձնահատկություններից: Իսկ թվարկված հետքերի բնույթը ևս կախված է հրազենի կառուցվածքից և տեսակից: Օրինակ՝ տարբեր են արտաձգիչի ատամի լայնությունը, անդրադարձիչի ձևը (ուղիղ, կեռ), տարբեր անկյան տակ են տեղավորված հրազենի առանձին դետալներ և այլն: Այս և նման կառուցվածքային տարբերությունները հետքերում առաջացնում են առանձնահատկություններ, որոնք էլ հնարավորություն են տալիս դատել հրազենի տեսակի մասին: Կրակված պարկուճով նույնացվում են ինչպես ակոսավոր, այնպես էլ ողորկափող հրազենները:

Հրազենի անհատական նույնացումը կրակված պարկուճով հիմնվում է օբյեկտների նույնացման հիմնական դրույթի վրա: Այն է, որ պարկուճի վրա ազդող հրազենի յուրաքանչյուր դետալ ունի անհատական, միայն իրեն հատուկ միկրոռելիեֆ, որն արտահայտվում է պարկուճի վրա նրա թողած հետքում:

Պարկուճի վրա ուսումնասիրվում են բոլոր հետքերը, դրանք համեմատվում են հրազենի համապատասխան մասի կամ նրա թողած հետքի հետ և պարզում՝ իրենց մանր կառուցվածքի հատկանիշներով դրանք համընկնում են, թե՛ ոչ: Առանձին դետալների նույնացումը ենթադրում է հրազենի նույնացում:

Միշտ չէ, որ հնարավոր կամ արդյունավետ է հետքը համեմատել այն առաջացնող դետալի հետ: Հետազոտման արդյունավետությունը բարձրացնելու, իսկ երբեմն էլ այն հնարավոր դարձնելու նպատակով կատարվում են փորձարարական կրակոցներ, որից հետո համեմատվում են դեպքի տեղում հայտնաբերված պարկուճի և փորձարարական կրակոցից մնացած պարկուճի հետքերի միկրոռելիեֆները:

Կրակված պարկուճները հետազոտելիս ևս օգտվում են մանրադիտակներից, այդ թվում ՄԻՇ տիպի համեմատական մանրադիտակներից: Հետազոտման արդյունքները ավելի ակներև դարձնելու նպատակով մանրադիտակային հետազոտման արդյունքները լուսանկարվում են: Իսկ որոշ դեպքերում, հետազոտման գործը հեշտացնելու նպատակով հետքերը սկզբում լուսանկարվում են (մի քանի անգամ խոշորացված), իսկ հետո համեմատվում լուսանկարներով: Հետազոտման մյուս եղանակը ֆոտոհամատեղման մեթոդն է, որի էությունը կայանում է նրանում, որ հետազոտվող և փորձարարական պարկուճները լուսանկարվում են միևնույն մասշտաբով ու պայմաններում, իսկ ստացված ֆոտոթաղանթները համատեղվում են և ուսումնասիրվում է հետքերի համընկնումը:

§ 9. ԿՈՏՈՐԱԿԻ, ՄԱՆՐԱԳՆԴԱԿԻ, ԽԻՑԻ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Դեպքի տեղում կոտորակ (մանրագնդակ) հայտնաբերելիս անհրաժեշտություն է առաջանում պարզել գործարանայի՞ն, թե՛ ինքնաշեն են դրանք: Այս հարցի լուծման համար ելակետային են համարվում հետևյալ հատկանիշները. ձևը, չափը, քաշը, արտաքին կառուցվածքի առանձնահատկությունները, մետաղի քիմիական բաղադրությունը, որը որոշվում է սպեկտրալ անալիզի միջոցով և հնարավորություն է տալիս դատել քիմիական կազմի մասին ինչպես որակական, այնպես էլ քանակական առումով: Թվարկված հատկանիշների մի մասը օգտագործվում է խմբային պատկանելությունը պարզելու համար: Կտրատման եղանակով պատրաստված կոտորակների միջոցով հաճախ նույնացվում են կտրող գործիքները:

Ողորկափող հրացանի նույնացումը նրանից արձակված արկով, հնարավոր չէ, քանի որ ողորկ փողը նրանց վրա նույնացման համար պիտանի հետքեր չի թողնում:

Խիցի և միջնադիրի փորձաքննությունը իրականացվում է նյութի տեսակը և նրանց ներծծված նյութի քիմիական կազմը պարզելու համար:

Խիցերը և միջադիրները համեմատելով նյութի տեսակով, ներծծված նյութով, չափսերով հնարավոր է դառնում պարզել նրանց խմբային պատկանելությունը: Ինչ վերաբերում է ինքնաշեն խիցերին ու միջադիրներին, ապա դրանք համեմատվում են այն նյութերի հետ, որոնք հայտնաբերվում են կասկածվող անձանց մոտ:

Գլանաձև կտրող գործիքով պատրաստված խիցերի վրա հաճախ դրոշմվում է գործիքի կտրող մասի միկրոռելիեֆը: Նման դեպքերում այդ հետքերով հնարավոր է դառնում նույնացնել գործիքը:

Այն դեպքերում, երբ խիցի կամ միջադիրի պատրաստման համար անհրաժեշտ նյութից կտրված մասը հայտնաբերվում է, կատարվում է ամբողջի նույնացումը մասերով:

Կրակված խիցերի հետազոտմամբ կարելի է պարզել նաև փամփուշտի տրամաչափը, որից այն կրակվել է:

§ 10. ՀՐԱՉԵՆԱԳԻՏԱԿԱՆ (ԲԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ)

ՓՈՐՉԱԲՆՆՈՒԹՅԱՄԲ

ԼՈՒԾՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Դատահրազենագիտական փորձաքննությանը լուծվող հարցերի բնութագիրը տրվեց վերևում: Նպատակահարմար ենք գտնում ներկայացնել նաև հիմնական, առավել հաճախ հանդիպող հարցերն ու դրանց մոտավոր ձևակերպումները: Թվարկել բոլոր հարցերը պրակտիկորեն հնարավոր չէ, քանի որ դրանց շրջանակը չափազանց մեծ է:

Երաշխավորվող հարցերից են՝

1. Տվյալ առարկան հրազեն համարվո՞ւմ է, թե ոչ, եթե այո, ապա որ տեսակի՞ն, սիստեմի՞ն է նմանվում, ըստ իր կառուցվածքի (այս հարցը առաջանում է ինքնաշեն հրազենի նկատմամբ):

2. Սարքի՞ն է արդյոք տվյալ հրազենը: Եթե ոչ, ապա գործնականում հնարավո՞ր է նրանից կրակ արձակել:

3. Հնարավո՞ր է տվյալ հրազենից կրակ արձակել՝ առանց ձգանը սեղմելու: Եթե հնարավոր է, ապա ի՞նչ պատճառներով և ի՞նչ պայմաններում:

4. Վերջին անգամ ե՞րբ է կրակվել տվյալ հրազենից (մոտավորապես):

5. Ո՞ր տեսակի, սիստեմի հրազենի է պատկանում տվյալ փամփուշտը, գործարանայի՞ն է, թե՛ ինքնաշեն:

6. Տվյալ փամփուշտը պիտանի՞ է օգտագործման համար:

7. Փորձ արվե՞լ է արդյոք կրակել տվյալ փամփուշտով: Չկրակելու պատճառը:

8. Ի՞նչ տեսակի հրազենից է կրակվել տվյալ պարկուճը (գնդակը):

9. Չի՞ կրակված արդյոք տվյալ պարկուճը (գնդակը) հրազենի տվյալ օրինակից:

10. Տվյալ պարկուճը և գնդակը մեկ ամբողջական փամփուշտ կազմե՞լ են, թե ոչ:

11. Միևնույն պայմաններում են պատրաստվել հետազոտվող կոտորակը, մանրագնդակը, խիցը և ներկայացվող նմուշները:

12. Որո՞նք են գնդակի դեֆորմացման պատճառները:

Որոշ դեպքերում դատահրազենագիտական փորձաքննության լուծմանն առաջադրվում է նաև. չկա՞ն արդյոք տվյալ անձի ձեռքերին կրակոցից առաջացած մրի հետքեր, կամ չկա՞ն արդյոք տվյալ անձի հագուստին կամ զրպաններում հրազեն կրելու հետքեր:

Այս հարցերը, որոնք անշուշտ կհետաքրքրեն քննությանը, պետք է լուծվեն ոչ թե դատահրազենագիտական, այլ միկրոմասնիկների փորձաքննությամբ:

ԳԼՈՒԽ 16. ԳՐԻ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ

Տարբեր առիթներով խոսել ենք համընդհանուր ընդունելություն գտած տերմիններն անտեղի ջբարգմանելու, չփոխելու մասին՝ կամ թարգմանելուց հետո նաև միջազգային տերմինը նշելու միասին, տերմինաբանության միասնականությունը շխախտելու համար (տրաստլոգիա-հետքաբանություն, իդենտիֆիկացիա-նույնացում և այլն): Այդ առումով ճիշտ չենք համարում հեղինակային կոլեկտիվի կողմից կրիմինալիստիկայի 1997թ. հրատարակած դասագրքում¹ որոշ տերմինների նորամուծությունը: Օրինակ՝ կրիմինալիստիկական սկրիբերոլոգիա² տերմինը:

Միջազգային կրիմինալիստիկական տերմինաբանության մեջ սա նորություն է և, մեր կարծիքով, աննպատակ, անօգուտ:

Չպետք է ծանրաբեռնել գիտությունը խրթին արտահայտություններով:

Հիշենք Չինաստանի մեծ մտածող, Պյութագորասի (580-500թթ.. մ.թ.ա.) և Հերակլիտի (544-483թթ.. մ.թ.ա.) ժամանակակից Կոնֆուցիոսի խոսքը. «Բառերից միմիայն մի բան է պահանջվում՝ լինել հասկանալի»³:

Այս նկատառումներից ելնելով էլ, կրիմինալիստիկայի գիտության այս բաժինը կշարունակենք անվանել «Գրի կրիմինալիստիկական հետազոտում» կամ «Դատական ձեռագրաբանություն»:

Դատական ձեռագրաբանությունը կրիմինալիստիկական տեխնիկայի ճյուղ է, որն ուսումնասիրում է գիրը և մշակում նրա հետազոտման մեթոդները, դատաձեռագրաբանական խնդիրների լուծման նպատակով:

Այս սահմանումից երևում է, որ դատական ձեռագրաբանական հետազոտման օբյեկտը գիրն է, որը կապված է մարդու առավել բարդ հմտության՝ գրելու հմտության իրականացման հետ:

Դատական ձեռագրաբանությունը որպես փորձագիտական հետազոտման օբյեկտ ուսումնասիրում է ձեռագիրը, ինչպես նաև գրավոր խոսքը և նպաստում է ինչպես ձեռագրի կատարողի, այնպես էլ հեղինակի պարզաբանմանը:

¹ Криминалистика, М., 1997, под. ред. проф. В. А. Образцова.

² Սկրիբերոլոգիան (լատին. skribo-գրել և logos-ուսմունք բառերից):

³ Կոնֆուցիոս (գրույցներ), Երևան, 1991, էջ 128:

Վերոհիշյալի հետ կապված, դատական ձեռագրաբանության տեսությունը և պրակտիկան ուսումնասիրում են գիրը՝ գրավոր խոսքը և ձեռագիրը:

Գիրը պայմանական հատուկ նշաններով մարդկային միտքը արտահայտելու միջոց է: Այն պատմականորեն ստեղծված կատեգորիա է, որն, ինչպես և լեզուն, առաջացել է մարդկային փոխհարաբերությունների և դրանց ընդլայնման անհրաժեշտությունից:

Գրի ստեղծումը մարդկային հանճարեղ մտածողության արդյունք է, առանց որի անհնար կլիներ քաղաքակրթության զարգացումը:

Գիրը զարգացման երկար ճանապարհ է անցել, սկսած նշանագրերից, սեպագրերից, մինչև ժամանակակից այբուբենը:

Ներկայումս աշխարհի շատ ժողովուրդների կողմից օգտագործվող տառային նշաններն առաջացել են փյունիկյան և հին հրեական գրչությունից, որոնք կազմում էին մարդկային հասարակության առաջին այբուբենները:

Յուրաքանչյուր ժողովուրդ, ստեղծելով սեփական այբուբեն, փոխառնված տառերը հարմարեցրել է իր լեզվի հնչյունաբանական կառուցվածքին, փոփոխելով, լրացնելով և կատարելագործելով դրանք:

Գրի հնագույն եղանակներից է նկարագիրը՝ *պիկտոգրաֆիան* (նշանագիրը) (լատին. pictus—նկարված և grapho—գրում են բառերից):

Նկարների համակցումից ներկայացվում էին առարկաներ, գործողություններ, որոնք հեշտությամբ վերծանվում էին: Այդ նշանները հասկանալի էին տարբեր լեզուներով խոսող մարդկանց համար: Դրանք քերծելով արվում էին քարայրերի պատերին, ժայռերին, կենդանիների պոզերի, ոսկորների վրա:

Պիկտոգրաֆիայի հետագա զարգացումը նպաստեց, որ նկարը վերածվի սիմվոլի: Այսինքն՝ նկարի պարզեցման, որի հետևանքում վերածվում է պայմանական նշանի և արդյունքում ստացվում է *սիմվոլիկ գիր, իդեոգրաֆիա* (հունարեն idea—հասկացություն, սիմվոլ և grapho—գրում են բառերից):

Պիկտոգրաֆիայից իդեոգրաֆիային անցումը աստիճանական էր: Սկզբնական շրջանում նրանք շատ նման էին միմյանց: Այդ գրերից օգտվում էին Մայայի և Ացտեկների ժողովուրդները, որոնք ապրում էին Հարավային Մեքսիկայում (Մայայի) և նույն երկրի հյուսիսում (Ացտեկներ):

Իդեոգրաֆիայի համակարգ է համարվում չինական գիրը, որը ստեղծվել է չորս հազար տարի առաջ և լայն տարածում է գտել Ասիայի մի շարք ժողովուրդների մեջ: Չինական գրի համակարգը կառուցված է

այնպես, որ յուրաքանչյուր գրանիշ համապատասխանում է բանավոր խոսքի մեկ բառի:

Չիմական գրի գծագրման եղանակները ժամանակի ընթացքում փոփոխվեցին՝ կախված գրող գործիքից:

Ուշադրության արժանի են նաև եգիպտական գրերը (Ք.ծ.ա. IV դար), որը կոչվում է հիերոգլիֆային (հուն. *ieros*—քուրմ և *gluphe*—փորագրել բառերից): Հիերոգլիֆային գրերը պահպանվել են տաճարների պատերին, գերեզմանաքարերին: Հետագայում, կյանքի զարգացմանը զուգընթաց անհրաժեշտություն առաջացավ ունենալ տառային, ավելի պարզ գրերի, փոխվեց նաև գրելու նյութը: Սկսեցին գրել փայտի, կաշվի, պապիրուսի վրա, օգտագործելով սև ու կարմիր քանաքներ, վրձին: Հիերոգլիֆայինի վրա հիմնված գիրը ստացավ *սրբազան* անվանումը:

Միջին Ասիայի մի շարք մարզերում և պատմական Հայաստանում տարածում ստացավ սեպագիրը, զաղափարագիրը:

Սեպագիր տեսակից օգտվել են նաև մեր նախնիները: Այստեղ արդեն մեզ թույլ ենք տալիս ավարտել մեր հետադարձ անդրադարձը գրերի պատմությանը և անցնել Մաշտոցյան գրերին:

Հայկական գրչության ստեղծման նպատակով Մաշտոցը ուսումնասիրել է իր ժամանակի շատ այբուբեններ (սիրիական, հունական, արամեական և այլն), ծանոթացել է ավելի հին շրջանի գրչությունների, համեմատելով և ստուգելով դրանց համապատասխանությունը հայոց լեզվի հնչյունաբանական առանձնահատկություններին:

Համոզվելով, որ դրանցից ոչ մեկը չի կարող լրիվ արտահայտել մեր լեզվի բոլոր 36 հնչյունները, նա հանգում է այն հետևության, որ անհրաժեշտ է ստեղծել նոր, ինքնուրույն այբուբեն, որը կարողանա արտահայտել հայոց լեզվի ողջ հարստությունն ու ինքնատիպությունը:

Գերմանացի հայագետ, պրոֆեսոր Մարկվարտը իր «Հայ գրերի և Մեսրոպ Մաշտոցի կյանքի պատմությունը» ուսումնասիրության մեջ գրում է. «Մաշտոցի այբուբենը ենթադրում է հեղինակի այնպիսի զարմանալի ծանոթությունը՝ հայոց լեզվի առատ բաղաձայնների ինքնատիպ հնչյունային վիճակին, որ մենք չէինք զլանա արտահայտել նրան մեր հիացմունքը, եթե նույնիսկ նա բավարարվել է հայոց լեզվին հարմարեցնել ուրիշի այբուբենը՝ միայն հարստացնելով այն որոշ տառերով¹»:

Հայոց գիրը, որն ստեղծվեց 5-րդ դարում. ենթարկվել է ձևական որոշ փոփոխությունների, որոնց հիման վրա էլ մեր գիտնականները հայկա-

¹ Վենա, 1918, էջ 9 (հայերեն թարգմանություն գերմաներենից):

կան տառերը դասակարգում են ըստ նրանց առանձին տեսակների (ըստ գծագրական առանձնահատկությունների)՝

1. երկաթագիր (բուն մետրոպյան և միջին մետրոպյան).
2. բոլորգիր.
3. նոսրգիր.
4. շղագիր

№ n/n	армянские буквы	русские буквы	транскрипция	№ n/n	армянские буквы	русские буквы	транскрипция
1	Ա ա	а	а	21	Յ ջ	й (примерно)	у
2	Բ բ	б	в	22	Ն ն	н	п
3	Գ գ	г	q	23	Շ շ	ш	š
4	Դ դ	д	d	24	Չ չ	нет	o (vo)
5	Ե ե	е	e	25	Շ շ	ч	č (ch)
6	Զ շ	з	z	26	Պ պ	п	р
7	Է է	э	ē	27	Պ պ	нет	ј
8	Ը ը	нет	ə	28	Ր ռ	нет (раск- тисное Р)	г
9	Թ թ	нет	ġ (th)	29	Ս ս	с	s
10	Ջ ճ	ж	ž	30	Վ վ	в	v
11	Ի ի	и	i	31	Տ տ	т	t
12	Լ լ	л	l	32	Ր ռ	р	r
13	Խ խ	х	x	33	Ր ռ	ц	c
14	Ճ ճ	нет	с	34	Ս ս	у	u
15	Կ կ	к	k	35	Վ վ	нет	p' (ph)
16	Խ խ	нет	h	36	Ք լ	нет	k' (kh)
17	Չ չ	нет	j	37	Ք լ	нет	ev
18	Պ պ	нет	ȳ	38	Օ օ	о	o
19	Ք լ	нет	č	39	Փ փ	ф	f
20	Մ մ	м	m				

Հայերեն այբուբենը

Մենք իրենք Նարեկացուն ընտրել
 մամարս ինչպես մառ նուստի լ. շոբե-
 ե ինչպես մարտու- ըբնմարտի մար-
 տի մարտու-ն էլ մի փարատել է :

Նոսրգրի նմուշ

Այբբենական գրության ժամանակակից համակարգը ենթադրում է արագ, սահուն և հստակ կատարում: «Գիր» տերմինը նշանակում է նաև ձեռագրի կատարման բուն պրոցեսը:

Ինչպես նշվեց, կրիմինալիստիկայում «գիր» ասելով ընդունված է հասկանալ հետազոտման օբյեկտը, որն ընդգրկում է գրավոր խոսքը և ձեռագիրը:

Գրավոր խոսքը մտքերն արտահայտելու լեզվական միջոցն է: Որպես կրիմինալիստիկական հետազոտման օբյեկտ, այն իրենից ներկայացնում է գրողին հատուկ լեզվական միջոցների ամբողջություն, սեփական միտքը գրավոր շարադրելու համար:

Մտքերն արտահայտելու լեզվական միջոցներն են. շարադրման ոճը, բառապաշարը և քերականությունը: Գրավոր խոսքի հատկանիշները բնութագրում են ձեռագրի հեղինակի գրագիտության աստիճանը:

Գրականության մեջ այն կարծիքը կա, որ հետևությունների համար գրավոր խոսքի հատկանիշները պետք է հաշվի առնել, եթե նրանք չեն հակասում ձեռագրի հատկանիշներին¹:

Կարծում ենք նույնացման հատկանիշի նման գնահատումը ճիշտ չէ: Հայտնի է, որ ցանկացած օբյեկտի նույնացման հիմքում ընկած է համեմատումը, որը կատարվում է նույնացման հատկանիշների հայտնաբերման ճանապարհով: Ռուսաստանի կրիմինալիստիկայում նույնացման մասին ուսմունքում հավաստվում է, որ նույնացվող օբյեկտի ոչ բոլոր հատկանիշներն են արտահայտվում նույնացնող օբյեկտների վրա: Դրանք կախված են մի շարք գործոններից, այդ թվում և նույնացվող օբյեկտի ծավալից: Օրինակ՝ համառոտ տեքստում գրի բոլոր հատկանիշները չեն կարող արտահայտվել, մասնավորապես, գրողի գրավոր խոսքի հատկանիշները:

Ինչպես նշում է պրոֆ. Ն.Վ. Թերզիևը «Անհատական նույնացման համար պետք է արձանագրել հատկանիշների այնպիսի ամբողջականություն համընկնում, որը կարող է պատկանել միայն մեկ որոշակի օբյեկտի²»:

¹ Օր.՝ А. И. Манцетова, Э. Б. Мальникова, В. Ф. Орлова, Экспертиза почерка, сб. Теория и практика криминалистической экспертизы, № 6-7, М., 1961, էջ 161, Н. И. Клименко, значение признаков письменной речи при исследовании текстов исполненных на украинском языке. Криминалистика и судебная экспертиза дню-վածուի պրակ. 1, Կիև, 1964:

² Н. В. Терзиев, Идентификация в советской криминалистике, Криминалистика, ч. 1, У., 1950, էջ 44:

Այստեղից հետևում է, որ պետք է գնահատվեն տվյալ օբյեկտը բնութագրող բոլոր հատկանիշները:

Գրականության մեջ կարծիք կա նաև, որ «...գրավոր խոսքի հատկանիշները ձեռագրի հեղինակին նույնացնելու հատկանիշներն են և ոչ թե կատարողին¹»: Համաձայնելով պրոֆ. Բ. Ի. Շևչենկոյի կարծիքին և սույն աշխատանքի բնույթին (ծավալի առումով) համակերպվելով չքննարկելով այս հարցի վերաբերյալ եղած նույնատիպ կամ թերի մյուս կարծիքները՝ նշենք միայն, որ գրավոր խոսքի որոշ հատկանիշներ օգտագործվում են ձեռագրի կատարողին նույնացնելիս:

Ձեռագրում գրավոր խոսքի հատկանիշները նրա հեղինակին պատկանելու փաստը հիմնավորվում է հիմնականում նրանով, որ կարող է փաստաթուղթը գրի մեկը, իսկ տեքստը կազմի կամ խմբագրի մեկ ուրիշը: Կամ վիճելի տեքստը կարող է կատարվել թելադրությամբ և այս դեպքում գրավոր խոսքի հատկանիշների մեծ մասը կպատկանի թելադրողին:

Կարծում ենք, ձեռագրի կատարողին-նույնացնելիս պետք է օգտագործել գրավոր խոսքի հետևյալ առանձնահատկությունները:

Ուղղագրական հատկանիշներ

Հայտնի է, որ ուղղագրությունը հասարակական, պետական ճանաչում ստացած կանոնների քերականական օրինաչափություններից բխող ամբողջություն է:

Ուղղագրական հմտության ձևավորման հիմքում ընկած են գլխուղեղի մեծ կիսագնդերի կեղևում առաջացած ժամանակավոր ռեֆլեքսները: Մարզումների շնորհիվ մի կողմից կապ է հաստատվում լսողական ռեֆլեքսի, արտասանված հնչյունի կամ բառի և նրանց ճիշտ գրության, մյուս կողմից՝ գրող ձեռքի շարժման միջև:

Այդ կապերի առաջացման պրոցեսը, այսինքն՝ ուղղագրական հմտությունների ձևավորման պրոցեսը չափազանց բարդ է, երկարատև և իր հերթին նշանակում է դինամիկական ստերեոտիպի մշակումը, որը պայմանավորում է ուղղագրական հմտությունների կայունություն: Նման պայմաններում գրողը, չնայած, որ տեքստը կազմում է թելադրությամբ կամ շարադրում է ինքնուրույն, թույլ է տալիս ուղղագրական սխալներ, որոնք կարող են օգտագործվել ձեռագիրը կատարողին նույնացնելիս:

Գոյություն ունի ուղղագրության երեք տիպ՝ հնչյունակազմական ձևաբանական և պատմական:

¹ Б. И. Шевченко, Криминалистика, У., 1963, էջ 197:

Հնչյունակազմական գրության մեջ յուրաքանչյուր հնչյունին համապատասխանում է մեկ տառ, այսինքն՝ բառը գրվում է այնպես, ինչպես արտասանվում է:

Ձևաբանականը հիմնված է բառերի միատեսակ կատարման վրա, անկախ նրանց արտասանությունից: Օրինակ՝ ռուսաց լեզվում ДОМ բառը սեռական հոլովի հոգնակի թվում արտասանվում է ДАМОВ, բայց գրվում է ДОМОВ:

Պատմական տիպը հիմնված է բառերի ավանդական գրության վրա, թեև բառերի արտասանությունը փոխվել է. օրինակ՝ վարդ-վարթ, բարձրարց և այլն:

Լեզվական որոշակի խմբերի հատուկ է այս տիպերից որևէ մեկը կամ երկուսը:

Ժամանակակից հայոց լեզվին հատուկ է հնչյունակազմական և պատմական գիրը, ռուսաց լեզվին՝ ձևաբանական և պատմական և այլն:

Այս տիպերից ելնելով պետք է բացատրել առանձին անձանց գրավոր խոսքում հանդիպող որոշ ուղղագրական առանձնահատկություններ:

Նույնացման ուղղագրական հատկանիշներ են համարվում՝

1. Ուղղագրական կայուն սխալները, որոնք հանդիպում են բառերի տառակազմության մեջ: Այստեղ մտնում են. երբ բաց է թողնվում որևէ տառ (կտրեղեն-կտորեղեն), երբ գրվում է ավելորդ տառ (կոմբային- կոմբայն), երբ տառը գրվում ոչ իր տեղում (հայրուր-հարյուր), սխալ է գրվում ճիշտ արտասանված հնչյունը (իմֆորմացիա-ինֆորմացիա) և այլն:

2. Սխալներ, որոնք պայմանավորված են բառերի գրության և արտասանության տարբերությամբ, ինչը բնորոշ է աշխարհի որոշ այլ լեզուներին նույնպես: Գրաբարում բառերը գրվում և կարդացվում էին միատեսակ. օրինակ՝ գրվում էր օդ-արտասանվում էր օդ և ոչ թե օթ: Այս կարգի սխալները հայերեն գրավոր խոսքի պատմական զարգացման արդյունք են:

3. Զերականական բնույթի այլ սխալներ: Այսինքն՝ սխալներ, որոնք արդյունք են քերականության վատ իմացության:

Այստեղ կարող են մտնել.

Ա) բառակազմության սխալները (ըմթերական- ըմթերակա),

Բ) ուղղագրական կանոնները չիմանալու հետ կապված սխալներ (միյություն-միություն), տողադարձի սխալներ,

Գ) մեծատառի գործածության սխալներ, հոլովման սխալներ (լուսինի-լուսնի), հարաբերական ածականների կազմման սխալներ (սևաչիասևաչյա), թվականների և դերանունների գրության սխալ ձևեր, սխալ կատարումը (տասս - տասը, ոչ ոք - ոչ-ոք), դերբայական սխալ

կազմություններ (թռչած-թռած), բայերի անկանոն ձևերի կիրառման սխալներ (եկեցեք-եկեք), կապերի սխալ օգտագործում (ի շնորհիվ-շնորհիվ), խնդրառության սխալներ (առանց քո- առանց քեզ) և այլն:

4. Բարբառային բնույթի սխալներ.

Այս առանձնահատկությունները արդյունք են բարբառների և գրական լեզվի բառապաշարի, ինչպես նաև հնչյունային և քերականական տարբերությունների (ըստեղ – այստեղ, խի՞ –ինչո՞ւ): Դրա հետ կապված, ուղղագրական շատ սխալներ ունեն բարբառային բնույթ:

5. Սխալներ, որոնք արդյունք են որևէ այլ լեզվի ազդեցության (ինձ լավ ընկերներ ունեմ, ես լավ ընկերներ ունեմ):

6. Սխալներ, կապված ուղղագրական հնացած կանոնների օգտագործման հետ:

Կետադրական հատկանիշներ

Կետադրության հմտությունները ձևավորվում են ուղղագրական հմտությունների հետ և իրենց արտահայտությունն են գտնում տարբեր անձանց ձեռագրերում:

Որոշակի անձի գրավոր խոսքը բնութագրող կետադրական առանձնահատկությունները կարող են արտահայտվել կետադրական նշանների օգտագործման ինքնատիպ տարբերակներով, որոնք թույլատրելի են քերականական կանոնների սահմաններում, կամ կետադրական կանոնների խախտման ձևով:

Գրավոր խոսքի նշված հատկանիշների առկայությունը հետազոտվող ձեռագրերում կարող է օգտագործվել ձեռագիր տեքստը կատարողին նույնացնելիս:

* * *

Գրավոր խոսքի մյուս հատկանիշները հիմնականում օգտագործվում են փաստաթղթի տեքստի հեղինակին, իսկ որոշ դեպքերում նաև կատարողին պարզելու նպատակով:

Այդ հատկանիշներն են.

Բառապաշարը: Ուսումնասիրվում է բառային այն կազմը, որից կարող է օգտվել գրողը:

Բառապաշարի մեջ մտնում են *հնեսաբանությունները* (արխայիզմ), այսինքն՝ հնացած, գործածությունից դուրս եկած բառերը. օրինակ՝ կառապան, կուլակ և այլն:

Նորաբանություններ. (Նեոլոգիզմ), այսինքն՝ նոր կազմավորված բառեր, օրինակ՝ լազեր, տեսագրում, գործարար և այլն:

Վարչարիզմներ, այսինքն, օտար լեզուներից վերցված բառեր այն դեպքում, երբ մայրենիում կան դրանց համարժեքները. օրինակ մերսի, պարոլոն, պերրոն, մենեջեր, օլիգարխ և այլն:

Ժարգոնային բառեր, այսինքն, արհեստական, պայմանական բառեր, որոնք օգտագործվում են որոշակի խմբի (հանցավոր) անձանց կողմից (գողական ժարգոն խուլիգանական ժարգոն և այլն):

Պրոֆեսիոնալիզմ, մասնագիտական բառեր և արտահայտություններ, որոնք հատուկ են որոշակի մասնագիտության անձանց. օրինակ՝ ախտորոշել, զոնդել և այլն:

Գրաբարաբանություն. գրաբարյան բառերի օգտագործում (քանզի, վասնզի, զգետնել և այլն):

Հոմանիշների (սինոնիմ) կայուն օգտագործում. օրինակ՝ երես-դեմք, խնդրել- աղերսել-աղաչել-թախանձել-պաղատել և այլն:

Գրավոր խոսքի և բարբառային հատկանիշները

Ոճական հատկանիշներ

Լեզվի ոճը ուսումնասիրելիս ուշադրություն պետք է դարձնել շարադրման սահունության աստիճանին համառոտակիությանը կամ մանրամասնությանը, այլ կերպ ասած՝ լակոնիկության (համառոտության) աստիճանին, ինչպես նաև շարահյուսական այս կամ այն միջոցի օգտագործմանը:

Ցանկացած գրավոր խոսք ունի շարադրման միայն իրեն հատուկ ոճ՝ գեղարվեստական, գիտական, հոետորական, գործնական, ինչպես նաև ժողովրդական-խոսակցական: Այստեղ մտնում են լեզվական բոլոր միջոցները, որոնք օգտագործվում են ոճական երանգավորման համար:

Բարբառային հատկանիշներ

Ծանոթանալով հայերեն բարբառների հետ, որոնք 50-ից ավելի են, կարելի նկատել, որ նրանց միջև գոյություն ունեն մեծ տարբերություններ: Աշխարհագրականորեն մոտ բարբառները միմյանց մման են, հեռու գտնվողները խիստ տարբերվում են:

Հայերեն բարբառների հնչյունական կազմը գրաբարի և ժամանակակից գրական լեզվի համեմատությամբ ավելի հարուստ է: Հայոց լեզվի

բարբառային մի շարք բառեր իրենց արմատներով համապատասխանում են գրականին և տարբերվում են միայն հնչյունական կազմով: Դրա համար էլ անհրաժեշտ է առանձին ուշադրության արժանացնել այդպիսի տարբերությունները՝ ձեռագրի կատարողի որոնման շրջանակը նեղացնելու համար:

Օրինակ՝ գրական հայերենի շուն, քուն, սուտ և այլ բառերը արցախի բարբառում վերածվել են շոն, քոն, սոտ տարբերակների և այլն:

Հետագոտվող ձեռագրում նման բառերի առկայությունը կվկայի, որ տվյալ տեքստը գրված է արցախի բարբառով խոսող անձի կողմից: Հայոց լեզվի բարբառները բառակազմական շատ ընդհանրություններ ունեն գրական լեզվի հետ, բայց, անցնելով զարգացման տարբեր ուղիներ, իրենց քերականական կառուցվածքով և հիմնական բառային ֆոնդով նրանք այս կամ այն աստիճանով պահպանել են առանձնահատկություններ: Այդ առանձնահատկություններն էլ, լինելով գրելու հմտության ձեռք բերման սկզբնական արդյունքը, իրենց կայուն արտահայտությունն են գտնում որոշակի տեղում ապրած անձանց ձեռագրերում:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ցածր, միջին և միջինից բարձր աստիճանի գրագիտություն ունեցող անձանց մեծամասնությունը պահպանում է տեղական արտասանության հմտությունները:


Ժամանակակից հայ գրական լեզվում զոյություն ունեցող մի շարք բառերից օգտվում են միայն բարձր գրագիտություն ունեցող անձինք, օրինակ՝ ծխնի, տափաշիշ, զանգապան և այլն, իսկ մյուսները օգտագործում են բարբառային կամ ռուսական համարժեքները:

Գրական լեզվի նման բառերի կայուն օգտագործումը վկայում է գրողի գրագիտության և գրական հայերենին տիրապետելու աստիճանի մասին:

§ 1. ՁԵՌԱԳՐԻ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ

Ձեռագիրը յուրաքանչյուր գրողին հատուկ և գրաշարժողական հմտությունների վրա հիմնված շարժումների համակարգ է:


Գրականության մեջ բազմաթիվ են ձեռագրի սահմանումները, որոնց մեծ մասի հիմքը ձեռագրի մասին պատկերացումն է՝ որպես ձեռագրում ամրապնդված յուրաքանչյուր գրողին բնորոշ շարժումների համակարգ:



Հայերեն այբուբենի ուսուցման նախալարժույթումներ

Այդ շարժումներին մասնակցում են մեծաթիվ մկաններ, մասնավորապես գրողի ձեռքի մկանները, որոնք հիմնական դերն են կատարում, ինչպես նաև թիկունքի, վզի, իրանի մկանները:

Այդ առումով էլ, ձեռագրի՝ որպես մարդու մկանների շարժումների սխտեմի արտահայտության ուսումնասիրումը անհրաժեշտ է իրականացնել ֆիզիոլոգիայի տվյալների օգտագործմամբ:



Ռուսերեն այբուբենի սառցման նախալարժություններ

Ե. Ֆ. Բուրինսկին, նշելով այն դերը, որ պետք է կատարի շարժումների ֆիզիոլոգիան ձեռագրի կրիմինալիստիկական փորձաքննության համար, գրում է. «Ձեռագրաբանության խնդիրները միանգամայն որոշակի են: Գտնել կախվածության օրենքները՝ գիրն իրականացնող օրգան-

ների գործունեության և այդ գործունեության արդյունքների՝ ձեռագրի միջև¹»:

Գրելու կարողությունը յուրաքանչյուր մարդու մոտ մշակվում է երկարատև ուսուցման և մարզումների արդյունքում: Գրելու հմտությունները դասվում են բարձրագույն նյարդային համակարգի բարդ մեխանիզմների թվին:

Գրի ուսուցման հոգեբանությունը տարբերում է գրելու հմտության զարգացման հետևյալ փուլերը.

ա. տեխնիկական հմտություններ՝ գրող գործիքը պահելը, թղթի տեղադրումը, գրելիս գրողի դիրքը և այլն,

բ. գծագրական հմտություններ՝ գրանիշերի և նրանց համակցությունների վերաբարտադրում,

գ. գրավոր խոսքի հմտություններ՝ բառապաշարը, շարահյուսությունը, կետադրությունը և այլն:

Գրաշարժողական հմտությունների ձևավորման ողջ ընթացքում կատարելագործվում է գրող ձեռքի համադասությունը՝ անընդհատ հարմարվելով ավելի արագ և ազատ գրության:

Ձեռագիրը ըստ էության տեխնիկական և գծագրական հմտությունների ամբողջություն է:

Ձեռագիրը ներկայումս ուսումնասիրվում է, հիմք ունենալով շարժողական հմտությունների վերաբերյալ ժամանակակից ֆիզիոլոգիայի ուսմունքը, մասնավորապես, ռուս ֆիզիոլոգ Ի. Պ. Պավլովի՝ դինամիկական ստերեոտիպի (շարժման նույնատիպության) մասին ուսմունքը:

Ինչպես նշվեց, գրելու հմտությունը մարդ ձեռք է բերում գիտակցաբար, հատուկ, նպատակասլաց ուսուցման արդյունքում: Այդ հմտության հիմքում ընկած են գլխուղեղի մեծ կիսագնդերից թելադրված պայմանական-ռեֆլեկտորային պրոցեսները, որոնց ձևավորման հիմքում ընկած է գլխուղեղի բարձրագույն կենտրոնների դինամիկական ստերեոտիպը:

Գլխուղեղի կիսագնդերը կենտրոնական նյարդային համակարգի ամենաբարձրագույն, ամենաուշ զարգացած և կառուցվածքով ու ֆունկցիաներով ամենակատարելագործված և ամենաբարդ բաժինն են: Գլխուղեղի կիսագնդերում են գտնվում բազմաթիվ նյարդային կենտրոններ և կորիզներ, որոնց անմիջական և ակտիվ մասնակցությամբ իրակա-

¹ Ե. Փ. Буринский, Судебная экспертиза документов, производство ее и пользование ею. СПб, 1903, էջ 180:

նանում է օրգանիզմի համարյա բոլոր կարևորագույն ֆիզիոլոգիական պրոցեսների կարգավորումը¹:

Դինամիկական ստերեոտիպը (շարժման նույնատիպությունը) ռեակցիաների հաջորդական համակարգ է, որն իրականացվում է գլխուղեղի մեծ կիսագնդերով, մի կողմից ձգտելով կայունության, մյուս կողմից շատ զգայուն արձագանքելով ամեն տեսակ ազդեցությունների:

Շարժման նույնատիպությունը կարգավորվում է նախորդ ռեակցիաների կրկնումից, մարզումներից: Որքան բարձր է մարզվածությունը, այնքան կայուն է շարժման նույնատիպությունը և, այնքան հեշտ է մարդու համար կատարել անհրաժեշտ շարժումներ, որոնք մի շարք դեպքերում դառնում են ավտոմատացված:

Այսպիսով, գրելու պրոցեսի հետ առնչված, շարժման նույնատիպությունը (դինամիկական ստերեոտիպը) պետք է գնահատել որպես պայմանական ռեֆլեքսների մի բարդ ամբողջություն, որը պայմանավորում է համապատասխան շարժումների ավտոմատիկ վերարտադրությունը կրկնվող պայմաններում:

Շարժման նույնատիպության (դինամիկական ստերեոտիպի) մասին ուսմունքը հնարավորություն տվեց բացատրելու նույնացման համար ձեռագրի կարևորագույն հատկությունները՝ հարաբերական կայունությունը և անհատականությունը:

Ձեռագրի ձևավորումը սկսվում է դպրոցական ուսուցումից և շարունակվում է մարդու հետագա գործունեության ընթացքում: Ձևավորման սկզբնական շրջանում ձեռագիրը անկայուն է, և գրողի նույնացումը առանձին դժվարություն է ներկայացնում:

Ձևավորված ձեռագիրը պահպանում է հարաբերական կայունություն, որի տակ պետք է հասկանալ նրա հետևյալ հատկությունները:

1. Սովորական պայմաններում, տվյալ անձի կյանքի ընթացքում հիմնական հատկանիշներով մնում է անփոփոխ, այն հատկանիշներով, որոնց համակցությունը որոշում է կատարողի անհատականացումը:

2. Փոփոխված արտաքին պայմանների ազդեցությամբ, ինչպես նաև գրի մտածված փոփոխումը կատարվում է ոչ լրիվ, այլ մասնակիորեն, այնպես, որ ձեռագրի անհատականությունը բնութագրող հիմնական հատկանիշները մնում են անփոփոխ:

Կայուն հատկանիշներով կատարված ձեռագրերը նույնացման համար առավել նպաստավոր նյութ են համարվում:

¹ Ռուս-հայերեն ֆիզիոլոգիական բացատրական բառարան, Երևան, 1979:

Արտաքին պայմանների փոփոխման ժամանակ ձեռագիրը վերակազմվում է, հարմարվելով փոփոխված իրադրությանը: Այլ կերպ ասած, գրի հիմքում ընկած դիմամիկական ստերեոտիպը որոշակի աստիճանով արձագանքում է պայմանների տարբեր փոփոխություններին: Այդպիսի պայմաններ կարող են լինել՝

անսովոր արտաքին պայմանները (անսովոր դիրքը, գրելու նյութը, գրող գործիքը),

ուսկրանկանային կամ նյարդային ապարատի ֆունկցիաների խախտումը (ձեռքի վնասվածք, աչքի հիվանդություն, տարբեր նյարդային հիվանդություններ և այլն),

գրողի հոգեկան և ֆիզիոլոգիական անսովոր վիճակը (գրգռվածություն, հուզմունք, հարբածություն),

տարիքային փոփոխությունները:

Գիտակցական փոփոխում ասելով պետք է հասկանալ փաստաթղթի հատուկ նպատակային ուղղվածությունը. օրինակ՝ ձեռագրի խեղաթյուրումը, քողարկումը, այլ անձի ձեռագրին նմանեցնելը և այլն:

Հարաբերական կայունությունը ձեռագրի կարևորագույն հատկանիշներից մեկն է: Այն պայմանավորված է նրանով, որ ստերեոտիպերը, որոնք ընկած են գրելու հմտությունների հիմքում, մեկ անգամ ձևավորվելով, դառնում են կայուն և նոր իրադրության ու նոր գրգռիչների ազդեցության տակ դժվարությամբ են փոփոխվում:

Փոփոխման այս դժվարությունը հեշտությամբ կարելի է նկատել այն դեպքերում, երբ գրողը գիտակցաբար փոփոխում է իրեն հատուկ գրելաձևը, աշխատելով այն դարձնել անճանաչելի: Նման դեպքերում ձեռագրում նկատվում է շարժումների անկայունություն, տառերի կաշկանդված կատարումներ, ուղղման հատկանիշներ, կրկնակի շտրիխներ և այլն:

Յուրաքանչյուր մարդու գրելու հմտությունները բնութագրվում են անհատականությամբ, այսինքն՝ միայն իրեն հատուկ առանձնահատկություններով: Այդ առանձնահատկությունները ձեռագրում արտահայտվում են *հարկանիշների* ձևով, որոնք բնութագրում են անձի ձեռագիրը և իրենց համակցության մեջ անկրկնելի են այլ անձանց ձեռագրերում:

Ձեռագրի հատկանիշները այն առանձնահատկություններ են, որոնք առաջ են գալիս գրանիշերը կատարելիս կամ կապակցելիս՝ ձեռքի համապատասխան շարժումներից:

Ձեռագրի նույնացման հատկանիշի հասկացության բովանդակությունը բացահայտվում է ձեռագրում գրաշարժողական հմտությունների

արտահայտվածությամբ, գրողի ձեռքի շարժման, ձեռագրի կատարման կայուն առանձնահատկություններով, որոնց ամբողջությունը անհատականացնում է շարժումների ողջ համակարգը, այսինքն՝ որոշակի անձի ձեռագիրը:

Հատկանիշների ձևավորման պրոցեսում կարևոր նշանակություն ունեն անձի անատոմոֆիզիոլոգիական (կազմա-բնախոսական), հոգեբանական առանձնահատկությունները, ձեռքի ոսկրանկանային ապարատի կառուցվածքը, ուշադրությունը, կամային հատկությունները: Հմտության ձևավորման վրա ազդում են նաև ուսուցման մեթոդիկան և գրելու նախնական պայմանները:

Նույնացման հատկանիշի հասկացությունը կապվում է նույնացման խնդրի հետ, որը ձեռագիրը կատարողի պարզաբանումն է: Հետազոտողի համար կարևոր են շարժման առանձնահատկությունները, որոնք հնարավորություն են տալիս տարբերակել տարբեր անձանց ձեռագրերը և անհատականացնել կատարողին: Այս առումով էլ կրիմինալիստիկայում, որպես ձեռագրի հատկանիշ ուսումնասիրվում են նրա այն հատկությունները, որոնք ունեն խմբային և անհատական բնույթ:

Ձեռագրի հատկանիշները առաջին հերթին երևան են գալիս վայելչագրության սահմանած կանոնների խախտումների ձևով: Այդ շեղումները առավել ցայտուն են արտահայտվում ուսուցման 3-րդ, 4-րդ տարվանից երբ աշակերտները անցնում են արագ գրության: Դա բացատրվում է նրանով, որ տիպային տառերը արագ գրելու համար անբավարար են հարմարեցված, քանի որ կազմված են մի շարք հակառակ և ընդհատ շարժումներ պահանջող տարրերից: Սակայն վայելչագրական կանոններից շեղումները չի կարելի համարել ձեռագրի հատկանիշների արտահայտման միակ ձևը, որովհետև դրանց ձևավորման պրոցեսում որոշ շեղումներ ընդհանուր են դառնում շատ անձանց ձեռագրերում: Բացի այդ, վայելչագրության սահմանած կանոններից շեղումները չեն բացառում այն, որ որոշ գրանիշեր կատարվեն վայելչագրությամբ համապատասխան: Դրանց կատարման համար իրականացվող շարժումները օրգանապես մտնում են յուրաքանչյուր անձի գրելու շարժումների անհատական համակարգի մեջ և համարվում են ձեռագրի հատկանիշներ:

Հատկանիշի նույնացման (իդենտիֆիկացման) նշանակությունը, անկախ նրանից այն ունի խմբային. թե՛ անհատական բնույթ, որոշվում է հանդիսված հաճախականությամբ: Որքան ցածր է հատկանիշի հան-

դիպման հաճախականությունը տարբեր անձանց ձեռագրերում, այնքան բարձր է նրա նույնացման արժեքը:

Այսպիսով, նույնացման հատկանիշ պետք է համարել գրաշարժողական հմտության առանձնահատկությունը, որն արտահայտվում է ձեռագրում և այլ առանձնահատկությունների հետ անհատականացնում է որոշակի անձի ձեռագիրը:

Ձեռագրի նույնացման (իդենտիֆիկացման) հատկանիշները բաժանվում են երկու հիմնական խմբի՝ ընդհանուր և մասնավոր:

Ձեռագրի ընդհանուր հատկանիշներ համարվում են նրա այն բնութագրումները, որոնք արտահայտվում են ամբողջ ձեռագրում: Մասնավոր համարվում են այն բնութագրումները, որոնք արտահայտվում են առանձին տառեր, նրանց տարբերը, տառակապակցությունները կատարելիս:

Ձեռագրի կարևորագույն ընդհանուր հատկանիշներից է նրա մշակվածությունը, այսինքն՝ գրելու տեխնիկային տիրապետելու աստիճանը, որն արտահայտվում է ձեռագրի տեքստը արագ տեմպով, կայուն, համադաս շարժումներով, արագ գրության ընդունված համալարգին համապատասխան կատարելու կարողությամբ:

Մշակվածությունը բնութագրող ցուցանիշներ են հանդիսանում համադասությունը և տեմպը (կատարման արագության աստիճանը): Սրանցից բխում են մյուս ցուցանիշները, ինչպիսիք են՝ ձեռագրի հատկանիշների կայունությունը, տառերի կառուցվածքը և այլն:

Ըստ մշակվածության աստիճանի ձեռագրերը բաժանվում են երեք հիմնական խմբի՝ ցածր մշակվածության, միջին մշակվածության, բարձր մշակվածության:

Ցածր մշակվածության ձեռագրերը արտահայտում են գրի հմտությունների ձևավորման սկզբնական աստիճանը: Այդ խմբի մեջ կարող են մտնել.

ա. ուսուցման 1-4 տարվա ձեռագրերը (աշակերտական),

բ. այն անձանց ձեռագրերը, որոնք թողել են գրի ուսուցումը սկզբնական փուլում և հետագայում հազվադեպ են գրել:

1- արևելյան կողմից հարավ
և արևմտյան կողմից ուսումնասիրելու
համար արևմտյան կողմից
ուսումնասիրելու և արևելյան
ուսումնասիրելու և արևմտյան
ուսումնասիրելու և արևելյան
ուսումնասիրելու և արևմտյան

Պարզեցված շնորհակալություն

Ձեռքով, բարձրագույնագույն արժեքի պատիվ և պարգև
ձեռքով, ժամանակակից արժեքի պատիվ և պարգևից - արժեք
ընդհանրապես իրեն և պահանջները անհրաժեշտ
կարգով:

Արժեքից, արժեքի բարձրագույնագույն պատիվ և
էջի ինչ որ անհրաժեշտ է արժեքից ժամանակ:

Անհրաժեշտ է արժեքից և անհրաժեշտ պարգև
կամ այլ կերպով, ինչ որ անհրաժեշտ է արժեքից
և արժեքից, ինչ որ անհրաժեշտ է արժեքից:

Արժեքից արժեքից արժեքից, ժամանակակից
ժամանակ, անհրաժեշտ է արժեքից արժեքից
ժամանակ, արժեքից և արժեքից արժեքից
Արժեքից:

Պարզեցված շնորհակալություն

Այս ձեռագրերին հատուկ է ցածր համադասությունը, շարիխների
ծանոթացումը, օվալային էլեմենտների անկյունային ձևերը, ձգվա-

ծության, շարժման ուղղության և տեղադրման անհամաչափությունը, կապակցվածության բացակայությունը և այլն:

Միջին մշակվածությանը լրիվ ձևավորված ձեռագրերն են, որոնք արտահայտում են կապակցված և արագ գրին տիրապետելու փուլը:

Գրին տիրապետելու տեխնիկայի ձևավորման այս փուլում գրողը սկսում է հմտությունները հարմարեցնել տարբեր պայմանների՝ առաջին հերթին արագ և դանդաղ տեմպերին, որի հետևանքով տառերը ենթարկվում են զգալի փոփոխությունների, հիմնականում երևան են զալիս տառերի և նրանց առանձին էլեմենտների կատարման պարզեցումներ, ավելի հազվադեպ՝ բարդացումներ:

Բարձր մշակվածությանը լրիվ ձևավորված ձեռագրերն են, որոնք արտահայտում են հարաբերական արագ տեմպ և բնութագրում ավտոմատացված գրի շարժման հմտություն:

Բարձր մշակվածության ձեռագրերին հատուկ են շարժումների հարաբերական մեծ ճշգրտություն, բարձր համդասություն, կատարման արագ տեմպ, հատկանիշների տարատեսակում և այլն:

Ձեռագրի մշակվածության աստիճանը կայուն հատկանիշ է: Սակայն, մշակվածության միևնույն աստիճանի ձեռագրերը կարող են տարբերվել կառուցվածքով:

Բարձր մշակվածության ձեռագրերը ըստ կառուցվածքի դասակարգվում են երեք խմբի. պարզ (վայելչագրական), պարզեցված և բարդացված:

Պարզ (վեայելչագրական) կառուցվածքի ձեռագրերի խմբին են դասվում այն ձեռագրերը, որոնք մեծ չափով համապատասխանում են շարժումների վայելչագրությամբ սահմանված ստանդարտին:

Պարզեցված կառուցվածքի ձեռագրերը վայելչագրությամբ սահմանված ստանդարտներից ավելի պարզ են: Ձեռագրի պարզեցումը ձևավորվում է արագ գրելու ձգտման հետևանքով: Դա է պատճառը, որ պարզեցված ձեռագիր ունեցողներին հատուկ է կատարման արագ տեմպը, որը երբեմն առաջացնում է համադասության խախտում:

Բարդացված կառուցվածքի ձեռագրերի համար բնութագրական է գրելիս բարդացված շարժումներ կատարելը: Ձեռագրի բարդացման պատճառը, հիմնականում ինքնատիպության և գեղարվեստական ձևավորման հասնելու հետևանք է: Այս դեպքում գրողը գնահատում է միայն ձեռագրի արտաքին տեսքը, առանց հաշվի առնելու դրա կատարման վրա սպառվող ժամանակը: Դա է պատճառը, որ բարդացված կառուցվածքի ձեռագրով գրող անձանց համար բնութագրական է գրելու դան-

դադ տեմպը, տառերի ու նրանց առանձին տարրերի ընդհատ կատարումները:

Այս ձեռագրերում համադասությունը միշտ բարձր է:

Պրելիս շարժման համադասությունը

Ֆիզիոլոգիայի առումով համադասությունը ռեֆլեքսային գործողությանը մասնակցող նյարդային կենտրոնների այնպիսի ֆունկցիոնալ փոխհարաբերություն է, որն ապահովում է այդ ռեֆլեքսի ճշգրիտ և նպատակասլաց իրականացումը:

Հայտնի է, որ համապատասխան օղակների շարժումից մկանների աշխատանքի մեխանիկական պայմանները փոփոխվում են՝ մեծացնելով կամ փոքրացնելով ուսանկանների ուժը:

Մկանների աշխատանքի համադասության ամբողջ գործընթացը կատարվում է կենտրոնական նյարդային համակարգի ներսում, գրգռման և արգելակման փոփոխությամբ, որի հետևանքով առաջանում է շարժողական էֆեկտ: Ներհակ մկաններով կառավարվող կենտրոնները գտնվում են որոշակի փոխգործողության մեջ, որի արդյունքում կենտրոնական նյարդային համակարգը տալիս է ինչպես պարզ, այնպես էլ բարդ շարժումների կանոնավոր, համաձայնեցված ընթացք, այսինքն, ապահովում է միաժամանակյա և հետևողական համադասություն (ջղամկանային համադասություն):

Ֆիզիոլոգիական մասնագիտական գրականության մեջ նշվում է.

«Երբ առաջին անգամ մարզվում են որևէ բարդ շարժում կատարելու, ապա ծախսում են ավելորդ շատ էներգիա մի կողմից՝ նրա համար, որ աշխատանքներին մասնակից են դարձնում այնպիսի մկաններ, որոնք տվյալ շարժումները կատարելու համար պետք չեն և նույնիսկ խանգարում են դրան, մյուս կողմից՝ մկանների աշխատանքը կատարվում է ավելորդ լարվածությամբ: Ելնելով մարզվածության չափից, աշխատանքներից, անջատվում են ավելորդ մկանները և կարողություն է ձեռք բերվում կարգավորել մկանային լարվածության աստիճանը: Այսպիսով, մարզվածության շնորհիվ մշակվում է շարժումների համադասություն, այսինքն, կենտրոնական նյարդային համակարգի կարողությունը՝ գրգռներ ուղարկել որոշակի նյարդային խմբերի, որոշակի հաջորդականությամբ և որոշակի ուժով¹»:

¹ Ст'ю Биомеханика физических упражнений, под общей редакцией Коротковой Е. А., У-Л., 1939, էջ 16-17:

Ասվածից հետևում է, որ գրելիս շարժման համադասությունը ուղղակի կախման մեջ է գտնվում գրողի՝ գրաշարժողական հմտություններից տիրապետելուց, որն ուղղված է գրանիշերը թղթի վրա վերարտադրելուն¹:

Այսպիսով, համադասություն ասելով պետք է հասկանալ առանձին շարիխներ կատարելիս շարժումների համաձայնեցումը այն շարժումների հետ, որոնցով կատարվում է ամբողջ ձեռագիրը:

Համադասության ցուցանիշներն են. շարժումների ճշգրիտ և կանոնավոր կատարումը, որն արտահայտվում է շարիխների ճշգրիտ միացման, նրանց կայուն ձևի, չափսերի, թեքության մեջ, ինչպես նաև տեքստը թղթի վրա տեղավորելու կայունությամբ:

Գրողի շարժումների համադասության զգալի իջեցումը կարող է հետևանք լինել ձեռագիրը անսովոր պայմաններում կատարելու, գրելու դիրքի փոփոխման, ձեռագրի գիտակցական փոփոխման (բողարկման), կամ ջղամկանային ապարատի պաթոլոգիկ փոփոխությունների:

Գրելիս շարժումների համադասությունը բնութագրում է ձեռագրի մշակվածության աստիճանը:

Գրելիս շարժումների համադասությունը սերտորեն կապված է ձեռագրի կատարման տեմպի հետ: Եթե ձեռագիրը կատարվում է դանդաղ տեմպով, ապա հնարավոր է գրել այնպես, որ տառերի բոլոր տարրերը ստանան ճիշտ ձև, իսկ միջին և արագ տեմպերով կատարված ձեռագրերում շարժման համադասությունը պահպանվում է գրանիշերի (տառերի) պարզեցման, իսկ երբեմն նաև բարդացման ուժով: Դա բացատրվում է հայերեն տառերի կառուցվածքային բարդությամբ, ինչպես նաև որոշ տառերի՝ բառերում կապակցման բարդությամբ:

Գրելիս շարժման արագությունը (տեմպը)

Գրելիս շարժման արագությունը (տեմպը) ըստ էության ձեռագրի կատարման ժամանակն է: Յուրաքանչյուր անձ ունի գրելու իրեն հատուկ տեմպ:

Գրելիս շարժման արագությունը (տեմպը) պետք է դասակարգել դանդաղ, միջին և արագ:

Բարձր մշակված ձեռագիր ունեցող անձը գրում է արագ, ցածր մշակվածության ձեռագիր ունեցողը՝ դանդաղ: Արագության գիտակցված

¹ Стів А. И. Манцетова, Э. Б. Мельникова, В. Ф. Орлова, Экспертиза почерка, Теория и практика криминалистической экспертизы, СПб., М., 1961, №7, էջ 52:

փոփոխում կարող է կատարվել բարձր մշակվածության ձեռագիր ունեցող անձի կողմից: Նա կարող է գրել նաև դանդաղ տեմպով: Իսկ ոչ բավարար մշակվածության ձեռագիր ունեցող անձանց գրելու արագությունը փոփոխվում է աննշան:

Գրելու արագության մասին վկայում են հետևյալ հատկանիշները. տառերի և բառերի կատարումը մեկ անընդհատ շարժումով, այսինքն՝ առանց գրող գործիքը թղթից կտրելու, շտրիխների հավասար, սահուն կատարում, օվալաձև, կիսաօվալաձև և միացնող շտրիխների ճիշտ կատարում:

Գրելու միջին արագության ժամանակ նշված ճշգրիտ կատարումների հետ մեկտեղ ձեռագրում կարող են արտահայտվել բառերում տառերի կապակցված կատարման բացակայություն, տառերի մասերի և բառերում տառերի կապակցվածության վայելչագրական ձևի խախտումներ:

Դանդաղ կատարման մասին վկայում են բառերում տառերի կապակցվածության բացակայությունը, երբեմն՝ շտրիխների ծոմովածությունները, շտրիխների հաստացված կատարումները, շտրիխների բութ սկիզբը և ավարտը, օվալային և կիսաօվալային տարրերի ոչ ճիշտ կատարումը: Կատարման, գրողի համար սովորական տեմպի փոփոխումը առաջացնում է ձեռագրի ընդհանուր և մասնավոր հատկանիշների փոփոխություններ:

Գրելիս շարժման տեմպը բնութագրող հատկանիշները հայոց լեզվով կատարված ձեռագրերում ունեն որոշակի առանձնահատկություններ:

Հայոց այբուբենով ամբողջական բառերի կատարումը ձեռքի մեկ անընդհատ շարժումով՝ առանց գրող գործիքը թղթից կտրելու և առանց տառերի վայելչագրական ձևը խախտելու, շատ սակավ է հանդիպում: Դա բացատրվում է հայոց այբուբենի կառուցվածքային բարդությամբ:

Արագ տեմպը հարաբերական հասկացություն է, որը պետք է հաշվի առնել հայկական և ռուսական այբուբենների տառերով կատարված ձեռագրերի շարժման արագությունը որոշելիս: Անձը, որը ռուսական այբուբենի տառերով գրում է միջին տեմպով, նույնպիսի տեմպով հայոց տառերով գրելիս կհամարվի արագ տեմպ:

Ռուսական այբուբենի տառերով գրելիս շտրիխներում նկատվում է սահուն կլորացում, որը տառերի օվալների ճիշտ պատկերման արդյունք է: Հայոց այբուբենի տառերով կատարված տեքստերում շտրիխները ընդունում են անկյունային ձևեր, որը տառերի կառուցվածքի արդյունք է:

Սա հայերեն այբուբենի տառերով գրելիս ձեռքի շարժման կազմության հիմնական առանձնահատկությունն է, որը դժվարացնում է ձեռքի արագ շարժումը: Գրելու տեմպը ընդհանրապես, սերտորեն կապված է շարժման կազմության բարդության հետ: Որքան մեծ է բարդությունը, այնքան դանդաղ է տեմպը և հակառակը:

Այդ պատճառով էլ ձեռագրի բարդությունը ծառայում է որպես շարժման արագության ցուցանիշ:

Գրելիս շարժման տեմպը կարող է փոփոխվել կապված փաստաթղթի նպատակային նշանակության, գրելու անսովոր պայմանների, գրողի հոգեկան, ֆիզիկական որոշակի վիճակների հետ և ձեռագրի հատկանիշների գիտակցական քողարկման հետ:

Շարժման կազմության ընդհանուր հատկանիշներն են.

Շարժումների գերակշռող ուղղությունը

Լինում է ուղղաձիգ-անկյունավոր, շրջանաձև, աղեղնաձև և հանգուցաձև: Մյուսները պարզ են, իսկ աղեղնաձև շարժումները բաժանվում են աջ և ձախ շրջագծայինի: Գերակշռում են ձախ շրջագծային շարժումները՝ ժամացույցի սլաքի հակառակ ուղղությամբ: Այս հատկանիշը հարաբերականորեն կայուն է մնում գրի արտաքին պայմանները փոփոխվելիս:

ք գ դ թ ի իւ ք ք ք ջ
գրիգոր, գրապրապրակիքն
գրիք, թուղթ, թաղիկ, փոփք

Երկրակ գրության նունշ (ձախ շրջագծային)

Այս հասցիքը մեզ մերժում է
գրքանոց մասերը գրքանոց կը մեզ
էքել մը զբաղմունք, աշխատե՛ք՝ զբաղմունք
կրթականը միայն կրթական կրթական
թղթերով: 2. Միջոցառումներ կրթական
հարցերու մեջ մասնակցել, աշխատել
այն կրթական կրթական, այն
անհատներով և գրքանոց հարցեր
քննարկելով մեզ պարզաբանով:
3. Կրթական անհատներու ան
գործակցել: Այս գործակցել

Երկրակ գրութեանը ձեռագիր (ձախ շրջագոյսին)

Շարժումների գերակշռող ձևը

Վայելչագրութեան կանոններին համապատասխան, ձեռագրում
շարժման ձևը կարող է լինել ուղղագիծ-աղեղնաձև: Տարբեր ձեռագրե-
րում հանդիպում են նաև շեղումներ. անկյունաձև, հանգուցաձև գալա-
րաձև և խառը:

Արագագիր ձեռագրերում այդ խմբերից յուրաքանչյուրի տառերի
եզրափակիչ շտրիխները ստանում են համապատասխան ձևեր:

Շարժման գերակշռող ձևը բնութագրելիս պետք է գնահատել որոշա-
կի խմբին պատկանող տառերը առանձին: Օրինակ՝ փորձագետի եզրա-
կացութեան մեջ այդ հատկանիշը պետք է գնահատել այսպէս. (Տառերի՝
վայելչագրութեամբ գալարում ձև ունեցող եզրափակիչ շտրիխների շարժ-
ման գերակշռող ձևը հետազոտվող ձեռագրում հանգուցային է):

Հայերեն այբուբենի տառերի էլեմենտները միացնելու շարժման ձևը
ըստ վայելչագրութեան անկյունային է: Արագ գրութեան ձեռագրերում,
հիմնականում գերակշռում է հենց շարժման այդպիսի ձևը: Բայց որոշ
անձանց ձեռագրերում հանդիպում են հանգուցաձև և աղեղնաձև միա-
ցումներ:

Այս հատկանիշը հարաբերականորեն կայուն է մնում գրելու արտաքին պայմանները փոփոխվելիս: Այն կարող է փոփոխվել ձեռագրի գիտակցված փոփոխման դեպքում. այլ անձի ձեռագրին նմանեցնելիս, տպագրական շրիֆտներով գրելիս և այլն: Չեռագիրը քողարկելու նպատակով հաճախ դիմում են այս հատկանիշի փոփոխմանը:

Շարժման գերակշռող ձևի փոփոխություն կարող է առաջանալ մակ որոշ նյարդային հիվանդությունների հետևանքով:

Շարժումների ձգվածությունը

Այս հատկանիշը բնութագրվում է երկու շարժումների հարաբերակցության գնահատմամբ: Առաջին շարժումը վերաբերում է տառերի հիմնական էլեմենտներին՝ նրանց բարձրությանը: Երկրորդ շարժումը վերաբերում է միացնող էլեմենտներին՝ նրանց լայնությանը, այսինքն՝ հորիզոնական ձգվածությանը:

Շարժումների բարձրության և լայնության հարաբերակցությունը կազմում է ձեռագրի *թափը*, որը համարվում է ձեռագրի կարևոր բնութագրումներից մեկը, քանի որ այն կապված է գրելու ռիթմի հետ:

Կրիմինալիստիկական գրականության մեջ և պրակտիկայում ձեռագրի *թափը* դասակարգվում է. ա) մեծ, երբ տառերի հիմնական էլեմենտների և տառերի միջև եղած տարածությունը հավասար է տառերի բարձրությանը կամ մեծ է նրանից, բ) միջին, երբ տառերի և տառերի հիմնական էլեմենտների միջև եղած տարածությունը տատանվում է բարձրության չափից մինչև նրա կեսը, գ) փոքր, երբ տառերի հիմնական էլեմենտների և տառերի միջև եղած տարածությունը տառի բարձրության կեսից պակաս է:

Տարբեր անձանց ձեռագրերում ավելի հաճախ հանդիպում է միջին թափը:

Թափի բովանդակությունը բնութագրող մյուս առանձնահատկությունը տառերի շարադասությունն է: Այս բնութագրության անհրաժեշտությունը առաջանում է այն դեպքում, երբ այն չի կլանվում թափով: Նման դեպքերը հազվադեպ են, երբ հստակորեն տարբերվում են տառերի լայնությունը և նրանց միջև եղած տարածությունը: Օրինակ՝ տառերը լայն են, բայց նրանց միջև եղած տարածությունը փոքր է: Այս առանձնահատկությունը պետք է բնութագրել որպես տառերի միջև եղած տարածության հարաբերակցություն նրանց լայնության հետ, այսինքն՝ ըստ շարադասության:

Շարադասությունը, ըստ քանակական ցուցանիշի դասակարգվում է լայն, երբ տառերի միջև եղած տարածությունը ավելին է տառերի լայնությունից, նեղ, երբ տառերի միջև եղած տարածությունը փոքր է տառի լայնության կեսից:

Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տառերի լայնությունը գնահատվում է ըստ այն տառերի, որոնք ունեն երկու հիմնական էլեմենտ:

Շարժման ձգվածությունը՝ որպես ձեռագիրը բնութագրող ընդհանուր հատկանիշ, բնութագրվում է փոփոխականությամբ: Տարբեր պատճառների հետևանքով ձեռագրի բարձրությունը և թափը կարող են փոփոխվել (արտաքին պայմանների փոփոխում, փաստաթղթի նպատակային նշանակություն, տեսողական վիճակի փոփոխություն, նյարդային վիճակի փոփոխություն և այլն):

Շարժումների անընդհատությունը (կապակցվածություն)

Գրելիս շարժման անընդհատությունը արտահայտում է տառերի կապակցվածության աստիճանը առանձին բառեր կատարելիս, այսինքն՝ առանց գրող գործիքը թղթից կտրելու բառերի կատարման անընդհատությունը:

Որքան բառերը կատարելիս գրողը քիչ է ընդհատում շարժումը (գրող գործիքը քիչ է կտրում թղթից), այնքան բարձր է կապակցվածության աստիճանը: Փորձարարական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կապակցված գիրը ավելի արագ է քան ընդհատումներովը: Այդ պատճառով էլ դպրոցական ուսուցման խնդիրներից մեկը համարվում է արագ և կապակցված գրի մշակումը:

Շարժումների անընդհատությունը, որը գրելու տեմպի բնութագրումներից մեկն է, սերտորեն կապված է ձեռագրի մշակվածության և կառուցվածքի հետ: Գրելիս շարժման անընդհատության աստիճանը կախված է նաև տվյալ գրողի շարժումների համադասությունից, քանի որ համադասության փոփոխումը որպես կանոն, ուղեկցվում է կապակցվածության փոփոխմամբ:

Ձեռագիրը, ըստ շարժման անընդհատության (կապակցվածության) աստիճանի, դասակարգվում է *կապակցվածության անընդհատությամբ*, երբ բառերում բոլոր տառերը կապակցված են անկախ ձգվածությունից, *բարձր կապակցվածությամբ*, երբ տեքստի բառերի մեծ մասում անընդհատ կատարված են վեց և ավելի տառեր (նիշեր), միջին, երբ տեքստի բառերի մեծ մասում անընդհատ կատարված են չորս- հինգ տառեր, ցածր, երբ անընդհատ կատարված են երկու-երեք տառ, *տառերի ընդհատ*

յումներով կատարում, երբ տառերը, իսկ երբեմն էլ նրանց էլեմենտները կատարված են առանձին շարժումներով:

Այս հատկանիշը որոշակիորեն իր արտահայտությունն է գտնում մշակվածության աստիճանի մեջ: Այսպես, ցածր մշակվածության ձեռագրի համար բնութագրական է ցածր կապակցվածությունը: Վերջինս բարձր մշակված ձեռագրերում հազվադեպ է հանդիպում: Ցածր կապակցվածությունը և ընդհատումներով կատարումը ավելի հաճախ հանդիպում են բարդացված ձեռագրերում:

Այս հատկանիշը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ ռուսական այբուբենի համարյա բոլոր տառերը (բացի Յ և Յ) կարելի է կատարել անընդհատ շարժումներով, էականորեն չփոփոխելով տառի կառուցվածքը:

Հայոց այբուբենի 39 տառերից 21-ը կարելի է կատարել մեկ անընդհատ շարժումով, 13-ը կատարվում է միայն երկու ընդհատվող շարժումներով 5-ը՝ երեք շարժումով:

Այս տարբերությունը ցույց է տալիս, որ ռուսական այբուբենով գրելիս տառերը կապակցված գրելու ավելի մեծ հնարավորություն կա:

Բացի այդ, հայտնի է, որ համաձայն ռուսական ուղղագրության, կապակցված գրում, բոլոր տառերը, որոնք որոշակի բառ են կազմում, կապակցվում են միմյանց հետ: Նշանակում է ռուսաց լեզվի ուղղագրությունը բառեր կատարելիս սահմանում է բառերում տառերի կապակցված կատարում: Իսկ հայերեն ուղղագրությունը չի թույլատրում մի շարք տառերի կապակցումը հաջորդ տառերի հետ. օրինակ՝ գ, Լ, կ, մ, շ, չ, պ, ջ, վ, ֆ, ը փոքրատառերը:

Նշանակում է, հայկական տառերին հատուկ է մի շարք տառակապակցությունների ընդհատ կատարում:

Հետևությունն այն է, որ հայոց լեզվով կատարված ձեռագրերում շարժման անընդհատության հատկանիշը բնութագրելիս պետք է ղեկավարվել վերը նշված սկզբունքներով, որը մշակված է Ռուսաստանի, Ուկրաինայի անվանի կրիմինալիստների կողմից¹, սակայն, հաշվի առնելով հայոց այբուբենի և ուղղագրության առանձնահատկությունները:

Նշված առանձնահատկությունների արդյունքում որոշ ձեռագրերում հանդիպում է կառուցվածքային պարզեցում կամ բարդացում:

¹ Մասնավորապես՝ Շլյախով Ա. Ռ., Մանցվետովա Ա. Ի., Օրլովա Վ. Ֆ., Ս. Ա. Ցիպեկյուկ, Ի. Յա. Ֆրիդման, Ի. Մ. Մոժար և այլք:

Այս հատկանիշը ևս փոփոխական է: Փոփոխականության պատճառներ կարող են լինել ձեռագրի վրա ազդող տարբեր գործոններ. ձեռագրի նպատակային նշանակությունը, գրողի դիրքը, գրելու նյութը, կատարման անսովոր պայմանները (հարբած, գրգռված, նյարդային վիճակներ) և այլն:

Սեղմման աստիճանը

Սեղմման աստիճանը գրողի սովորական ջանքերի արդյունքն է, քանի որ գրելու շարժումները որոշակի ջանքեր են պահանջում:

Դրանք արտահայտվում են շտրիխների լայնության մեջ, տվյալ տառի տարբեր շտրիխների լայնության հարաբերակցության մեջ և սեղմման աստիճանում:

Ձեռագրի այս բնութագիրը ուսումնասիրելիս պետք է նկատի ունենալ գրող գործիքի առանձնահատկությունները և վիճակը (մատիտի տեսակը և սրվածության ձևը, գրչածայրի տեսակը, ամրությունը, գոդիկավոր գրիչի տեսակը և որակը), թանաքի խտությունը և բաղադրությունը, թղթի որակը և այլն:

Սեղմման աստիճանը կախված է նաև գրելու տեմպից: Որքան արագ է գրելու տեմպը, այնքան թույլ է սեղմման աստիճանը:

Համաձայն վայելչագրության սեղմվածության ավելի մեծ աստիճան պահանջվում է տառերի հիմնական էլեմենտները կատարելիս: Գրի ուսուցման սկզբնական շրջանում ակնհայտորեն դասակարգվում է հիմնական շտրիխների և միացնող էլեմենտների սեղմման աստիճանը:

Արագ գրության ժամանակ, բնականաբար այդ բնութագրի ցայտուցությունը թուլանում է: Դրա համար էլ ցածր մշակվածության դպրոցական ձեռագրերին, ինչպես և նույնպիսի մշակվածության պրակտիկ ձեռագրերին հատուկ է միատեսակ ուժեղ սեղմվածություն, որն էլ արտահայտում է գրի հմտության ձևավորման ցածր աստիճան:

Դինամիկական ստերեոտիպ մշակվելիս, երբ ձևավորվում է գրելու հմտությունը և շարժումների ավտոմատացումը, սեղմման աստիճանը կայունանում է և ձևավորվում է ջանքերի տեղաբաշխման հարաբերակցությունը հիմնական ու միացնող էլեմենտները կատարելիս:

Ձեռագրում սեղմման աստիճանը բնութագրվում է հետևյալ ցուցանիշներով.

Սեղմման քարշր աստիճան-երը հիմնական շտրիխների լայնությունը գերազանցում է միացման շտրիխներին 2-ից ավելի անգամ:

Սեղմման միջին աստիճան, երբ հիմնական շտրիխների լայնությունը գերազանցում է միացման շտրիխներին երկու անգամ:

Սեղմման թույլ աստիճան, երբ հիմնական շտրիխների աննշան լայնությունը մոտավորապես հավասար է միացման շտրիխների լայնությանը:

Գնդիկավոր գրիչներով կատարված ձեռագրերում սեղմման աստիճանը որոշելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել նաև գնդիկի առաջացրած ակոսի խորությունը:

§ 2. ՏԱՐԱԾԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Տեղագրական հատկանիշներ

Տարածական կողմնորոշման ընդհանուր հատկանիշներին են դասվում տվյալ գրողի համար սովորություն դարձած առանձնահատկությունները, որոնք վերաբերվում են տեքստը կամ նրա առանձին մասերը թղթի վրա տեղավորելուն: Դրանք արտահայտում են գրողի հմտությունը՝ որոշակի ձևով տեղադրել տեքստը թղթի եզրերի համեմատությամբ, տեղադրել ձեռագրի առանձին հատվածներ, տողեր, բառեր, բառերի մասեր, կետադրական նշաններ տարբեր կողմնորոշիչների և միմյանց նկատմամբ:

Տարածական կողմնորոշման ընդհանուր հատկանիշներից են՝

ա) Ձեռագիր տեքստում լուսանցքների առկայությունը կամ բացակայությունը. այս հատկանիշը ձեռագրում որոշվում է տեղադրության հարաբերակցությամբ (տեքստից աջ կամ ձախ, և՛ աջ և՛ ձախ), չափսերով, լուսանցքի գծի ուրվանկարով, ձևով:

բ) «Կարմիր տողերի» չափսերը, որոնցով առանձնացվում են պարբերությունները:

գ) տողերի և տողերում բառերի միջև եղած տարածությունը (ինտերվալը):

Եթե տեքստը գրված է տողավոր թղթի վրա և պահպանված են տողագծերը, ապա տողերի միջև եղած տարածությունը որպես առանձնահատկություն չի գնահատվի: Տողամիջյան տարածությունը որոշվում է որպես փոքր՝ եթե այն հավասար կամ մեծ է տառի բարձրությունից¹, մի-

¹ Խոսքը վերաբերում է տողային տառերին:

ջին՝ եթե այն հավասար է տառի կրկնակի բարձրությանը, մեծ՝ եթե ինտերվալը տառի կրկնակի բարձրությունից մեծ է:

Բառերի միջև եղած տարածությունը որոշելիս նկատի է առնվում տառերի լայնությունը: Տարածությունը փոքր է համարվում, եթե այն փոքր է տառի լայնությունից, միջին, եթե այն հավասար է մեկ-երկու տառերի լայնությանը, մեծ, եթե մեծ է երկու տառերի լայնությունից:

դ) Փաստաթղթում վերնագրի, ստորագրության և տարեթվի տեղադրությունը:

Գրողի սովորության հետ կապված՝ վերնագիրը կարող է դրվել թղթի կենտրոնում, աջ անկյունում, ձախ անկյունում, տեքստից շատ վերև և այլն: Նույնպիսի առանձնահատկություններ ունեն մասն ստորագրությունն ու տարեթիվը:

ե) Տողի դիրքը թղթի հորիզոնական կտրվածքի համեմատությամբ: Կարող է լինել հորիզոնական բարձրացող, իջնող:

զ) Տողագծի ձևը՝ ուղղագիծ, ուռուցիկ, գոգավոր, ծռնոված, աստիճանաձև և այլն:

է) Տողի տեղադրությունը թղթի բլանկային տողագծի նկատմամբ: Բնութագրվում է բլանկային տողագծի նկատմամբ լրիվ համատեղում, բլանկային տողագծից բարձր կատարում և կատարում տողագծից ներքև:

ը) Կետադրական նշանների տեղադրությունը նախորդ բառի, գրի տողի և բլանկային տողագծի նկատմամբ: Նկատի է առնվում ինտերվալը, տեղադրությունը (վերև, ներքև) և այլն:

Ձեռագրի մասնավոր հատկանիշները

Ձեռագրի մասնավոր հատկանիշները որոշակի անձին հատուկ գրի հմտություններով պայմանավորված այն առանձնահատկություններն են, որոնք իրենց կայուն արտահայտությունն են գտնում առանձին տառերի (նիշերի), նրանց մասերի և տառակապակցությունների վրա: Դրանք արտահայտում են յուրաքանչյուր գրողի համար կայուն, ավտոմատացված մանր շարժումների համակարգը:

Մասնավոր հատկանիշների որակական բնութագիրը որոշվում է շարժման ձևով, ուղղությամբ, ձգվածությամբ, անընդհատությամբ, հաջորդականությամբ, քանակով և ճնշման տեղաբաշխմամբ:

Որպես մասնավոր հատկանիշ, *շարժման ձևը* բնութագրվում է միայն այն դեպքում, երբ չի նույնանում ձեռագրում շարժման գերակշռող ձևի

ընդհանուր բնութագրի հետ: Այն լինում է ուղղագիծ, աղեղնաձև, հանգուցաձև, շրջանաձև, օվալաձև, անկյունաձև, զիգագաձև:

Շարժման ուղղությունը բնութագրելիս պետք է նկատի ունենալ տառերը և նրանց էլեմենտները կատարելիս շարժման ձևը:

Շրջանաձև, օվալաձև, հանգուցաձև և աղեղնաձև էլեմենտները կարող են կատարվել ժամացույցի սլաքի հակառակ ուղղությամբ (ձախ շրջագծային) կամ ժամացույցի սլաքի ուղղությամբ (աջ շրջագծային):

Ուղղագիծ էլեմենտները կատարվում են ուղղահայաց՝ վերևից ներքև կամ հակառակ ուղղությամբ, աջից ձախ կամ ձախից աջ (մոտեցող, հեռացող և այլն):

Շարժման ուղղությունը որպես կայուն հատկանիշ առավելապես արտահայտվում է գրելու արագ տեմպի ժամանակ:

Շարժման չզվածությունը բնութագրելիս պետք է նկատի ունենալ, որ տառերի ու նրանց էլեմենտների վայելչագրությամբ սահմանված հարաբերական չափերը արագ գրության ժամանակ շատ հազվադեպ են պահպանվում: Այս հատկանիշը կայուն է մույնիսկ անսովոր արտաքին պայմաններում գրելիս: Գրելիս շարժման ընդհանուր ձգվածության գիտակցված փոփոխության դեպքում ևս գրողի մոտ պահպանվում է առանձին տառերի կամ նրանց էլեմենտների հարաբերական ձգվածությունը:

Շարժման անընդհատությունը նույնպես կապված է տառերի վայելչագրական կառուցվածքի հետ: Հայերեն այբուբենի տառերի մեծ մասը կատարվում են ընդհատվող շարժումներով, որը պահանջում է հորիզոնական և ուղղահայաց հարթություններում շարժումների համակցում և առաջացնում է ինտերվալներ:

Շարժողական հմտությունների առանձնահատկություններից կախված, որոշակի անձանց ձեռագրերում կարող են լինել ընդհատումներ՝ բառերում տառերի և տառերում էլեմենտների միջև:

Հատկանիշը բնութագրվում է որպես միաձույլ և ինտերվալով:

Ճնշման գործադրման (սեղմման) տեղաբաշխումը, գրանիշերը և նրանց էլեմենտները կատարելիս կամ կապակցելիս լինում է թույլ, միջին, ուժեղ: Գրողի համար սովորական դարձած ճնշման գործադրման փոփոխումը կարող է արդյունք լինել գրելու պայմանների փոփոխության, ձեռագրի գիտակցական փոփոխության:

Այս հատկանիշի ուսումնասիրումը առավել արդյունավետ կարող է լինել հավելագրումները հետազոտելիս:

Շարժումների քանակը բնութագրելիս պետք է հաշվի առնել շարժումներում ընդհատումները և շարժման ուղղության փոփոխությունները:

Սակավ հանդիպող հատկանիշներ են համարվում վայելչագրության սահմանաձից ավելի կատարված շարժումները, տառերի վերտողային էլեմենտները կատարելիս շարժումների քանակի մեծացումը, տառը կատարելուց հետո լրացուցիչ շարժումները և այլն:

Շարժումների հաջորդականությունը, որը սահմանված է վայելչագրությամբ, արագ գրության ժամանակ հիմնականում փոփոխվում է գրողի՝ գրելու հմտություններին համապատասխան:

Գրանիշի էլեմենտների կատարման հաջորդականության խախտումը կապված է մեկ տառից մյուսին անցնելիս շարժումը հեշտացնելու հետ:

Այս հատկանիշը շատ կայուն է և կարող է մասնակիորեն փոփոխվել միայն ձեռագրի գիտակցական փոփոխման արդյունքում:

Ձեռագրի հետազոտման ժամանակ ուսումնասիրվում և գնահատվում են նաև այն մասնավոր հատկանիշները, որոնք արտացոլում են գրելիս շարժման տարածական կողմնորոշումը:

Այդ հատկանիշներն են՝

1) Տառերը և նրանց էլեմենտները կատարելիս շարժման սկզբնակետի և վերջնակետի տեղադրությունը:

Բնութագրվում է գրագծի (տողագծի) համեմատությամբ, տառի կամ նրա էլեմենտի համեմատությամբ:

Ուսումնասիրվում է նաև շարժման սկզբնակետի և վերջնակետի փոխադարձ տեղադրությունը: Շարժման սկզբնակետի տեղադրությունը տողագծի համեմատությամբ որոշվում է տողի գծից (գրագծից) մինչև տառի կամ նրա էլեմենտի կատարման սկիզբը: Այդ տարածությունը հավասար է չֆիքսված շարժման ձգվածությանը, որը ձեռքով կատարվում է տողից մինչև բառի կամ նրա էլեմենտի սկիզբը կամ նրանց ավարտից մինչև տողագիծը:

Շարժման սկզբնակետը կամ վերջնակետը բնութագրվում են հաջորդող տառի կամ նրա էլեմենտի նկատմամբ տեղադրությամբ (կապակցված կամ անջատ կատարում, տեղադրությունը էլեմենտից աջ կամ ձախ օվալային էլեմենտներում՝ օվալից աջ, ձախ, օվալի ներսում), շարժման սկզբնակետի և վերջնակետի՝ միմյանց նկատմամբ ունեցած հարաբերակցությամբ (սկզբնակետը գտնվում է վերջնակետից վեր, ցած, դեպի աջ, դեպի ձախ, երկուսն էլ գտնվում են միևնույն գծի վրա):

2) Շարժումների միացման կետերի տեղադրությունը գրանիշերը կատարելիս:

Անընդհատ շարժման ժամանակ տառի էլեմենտների միացման կետերի տեղադրությունը որոշվում է այն տեղով, որտեղ կատարվում է

շարժման ուղղության փոփոխությունը մեկ էլեմենտի կատարումից հետո մյուսին անցնելիս:

Այն բնութագրվում է՝ գրագծի նկատմամբ (գրագծի վրա, գրագծից ցած, գրագծից վեր), այլ էլեմենտների նկատմամբ:

Ձեռագիրը՝ գրողի համար սովորական տեմպով կատարելիս՝ այս հատկանիշը հիմնականում կայուն է: Փոփոխություններ կրում է կատարման տեմպը փոխելիս, քանի որ այս դեպքում փոփոխվում են տառերի հորիզոնական և ուղղահայաց էլեմենտների հարաբերական չափսերը:

3) Շարժումների հատման կետերի տեղադրությունը տառերում և նրանց էլեմենտներում:

Գրողի համար սովորական գրության ժամանակ, հատկապես արագ և կապակցված գրելիս շարժումների հատման քանակը վայելչագրությամբ սահմանվածի համեմատությամբ, ավելանում է:

Այդ երևույթը պայմանավորվում է տառերի և նրանց էլեմենտների անընդհատ կատարման անհրաժեշտությամբ:

Այս հատկանիշը բնութագրվում է գրագծի համեմատությամբ (բարձր, միջին, ցածր) և այլ էլեմենտների համեմատությամբ (աջ, ձախ, էլեմենտի վրա, էլեմենտից ցած):

Հատկանիշի բնույթը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կախված շարժման ձգվածությունից, ուղղությունից, ձևից:

4) Շարժման տեղայնացումը տառերը և նրանց էլեմենտները կատարելիս՝ ըստ ուղղահայաց առանցքի, տողագծի, այլ տառերի և նրանց էլեմենտների համեմատությամբ:

Այս հատկանիշը մեծապես կախված է գրելիս ձեռքի դաստակի դիրքից և շարժման համադասությունից: Այն պայմանավորված է հաջորդ կամ նախորդ տառի կամ էլեմենտի հետ կապակցելու հարմարությունից, կատարումը պարզեցնելիս շարժման ձգվածության կրճատումից:

Ավտոմատացված, արագ գրության ժամանակ այս բնութագիրը գիտակցական փոփոխության չի ենթարկվում և դրանով էլ բնութագրվում է որպես կայուն հատկանիշ:

Հատկանիշը բնութագրվում է. գրագծի համեմատությամբ (գրագծի վրա, գրագծից վերև, գրագծից ցած), այլ էլեմենտների համեմատությամբ (վերև, ներքև, էլեմենտի վրա, էլեմենտից ցած):

5) շարժման տեղայնացումը, տառերը և նրանց էլեմենտները ըստ հորիզոնականի կատարելիս:

Տառերը և նրանց էլեմենտները ըստ հորիզոնականի կարող են տեղայնացվել մյուս էլեմենտների համեմատությամբ. էլեմենտի վրա, էլեմեն-

տից որոշակի հեռավորության վրա (նրանից աջ, ձախ), օվալային էլեմենտների մեջ:

6) Շարժման տեղայնացումը կետադրական նշանները կատարելիս: Այս հատկանիշը բնութագրվում է.

ա) Գրագծի կամ տողագծի համեմատությամբ՝ գծի վրա, գծից վեր, գծից ցած: Այս դեպքում, հատկանիշը նկարագրելիս անհրաժեշտ է ցույց տալ գծի և կետադրական նշանի միջև եղած տարածության (ինտերվալի) չափը (մեծ, փոքր):

բ) Նախորդ բառի համեմատությամբ կետադրական նշանները կառող են տեղադրվել մոտ կամ հեռու:

Չեռագրի փոփոխման հատկանիշները

Սույն գլխի սկզբում խոսել ենք այն մասին, որ ձեռագրի փոփոխությունը կատարվում է ինչպես գրողի կամքով, այնպես էլ նրա կամքից անկախ պատճառներով:

Առաջին դեպքում՝ գիտակցված խեղաթյուրում. ձախ ձեռքով կատարում, այլ անձի ձեռագրին նմանեցում, տպագրական շրիֆտների նմանեցում և այլն: Երկրորդ դեպքում՝ ֆիզիկական, հոգեկան հիվանդություններ, տարբեր ժամանակավոր հիվանդագին երևույթներ, գրողի դիրքը գրելու պահին և այլն: Անկախ նրանից, ձեռագրի փոփոխությունը գիտակցված է թե ոչ, այն կապված է տվյալ անձին հատուկ գրելու հմտությունների փոփոխությունների հետ: Կախված ձեռագրի փոփոխության վրա ազդող գործոններից, գրի հմտությունները այս կամ այն չափով վերափոխվում են:

Սակայն, գրելիս շարժումների ստերեոտիպությունը որոշող հմտությունների ամբողջության լրիվ քայքայում տեղի չի ունենում, որի ուժով էլ փոփոխված ձեռագրերում արտահայտվում են գրողի սովորական ձեռագրի հատկանիշները:

Բայց, դա չի նշանակում, որ նման ձեռագրերը հետազոտելիս պետք է ուսումնասիրվեն միայն նրանցում պահպանված սովորական կատարման հատկանիշները: Նման դեպքերում առաջանում են առանձնահատկություններ՝ կապված փոփոխված հատկանիշների ուսումնասիրման և զնահատման հետ: Մասնավորապես ձեռագրի փոփոխման տեսակի պարզաբանումը, ձեռագրի հատկանիշների փոփոխման և կայուն վիճակի պահպանման աստիճանի որոշումը, մեկ հատկանիշի փոփոխման ազդեցությունը մյուսների վրա որոշելը և այլն:

Մեփական ձեռագրի գիտակցական փոփոխման դեպքում գրողը ձգտում է փոփոխել գրելիս իր համար սովորական դարձած շարժումները, դրանով փոխելով իրեն հատուկ ձեռագրի հատկանիշները: Պրակտիկային հայտնի են ձեռագրի փոփոխման (խեղաթյուրման) տարբեր եղանակներ. մշակվածության աստիճանի, տեմպի, ընդհանուր կառուցվածքի, թեքության, ընդհանուր և մասնավոր հատկանիշների, ձեռագրի կատարման պայմանների փոփոխություններ և այլն: Սակայն, ինչպես նշեցինք վերը, գրողը ի վիճակի չէ լրիվ քողարկել իր ձեռագիրը և անհնար դարձնել կատարողի պարզաբանումը: Ձեռագրի խեղաթյուրման համար գրողն ունի որոշակի սահման, որից այն կողմ անցնել չի կարող: Առաջին հերթին այդ սահմանը պայմանավորված է գրելու պրոցեսի վրա գրողի հսկողության առանձնահատկություններով: Ձեռագիրը կատարելիս իրականացվում է տեսողական և շարժողական հսկողություն: Խեղաթյուրելիս գրողը ուշադրությունը կենտրոնացնում է տեսողական հսկողությանը, որի արդյունքում խեղաթյուրման եղանակը պահպանվում է և կատարողի նույնացման հնարավորությունը նեղանում, թեև առաջանում են մի շարք հատկանիշներ, որոնք վկայում են հատկանիշների քողարկման մասին:

Շարժումների կատարման հսկողության արդյունքում խախտվում է համադասությունը, որը ձեռագրում արտահայտվում է համադասության իջեցմամբ և շարժումների դանդաղեցմամբ:

Ձեռագիրը խեղաթյուրելու նպատակով կատարողը գիտակցաբար փոփոխում է նաև մի շարք այլ հատկանիշներ: Մասնավորապես՝ ձեռագրի մշակվածությունը (իջեցվում է), կատարման տեմպը (դանդաղեցվում է), այլ ընդհանուր հատկանիշները, ինչպես նաև որոշ մասնավոր հատկանիշներ և այլն:

Ձեռագրում պահպանված սովորական կատարման հատկանիշների ծավալից և որակից է կախված կատարողի նույնացման հնարավորության աստիճանը:

Տպագրական շրիֆտին նմանեցրած կարարումը, որպես սեփական ձեռագիրը խեղաթյուրելու եղանակ, իրականացվում է գրանիշների կառուցվածքը փոփոխելով:

Կառուցվածքային փոփոխությունները բացասաբար են անդրադառնում նույնացման հնարավորությունների վրա, որը համառոտ արտահայտվում է հետևյալում:

Փորձագիտական պրակտիկան և փորձարարական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գրի հմտություններով պայմանավորված առանձնահատկությունները ավելի շատ արտահայտվում են տառի

այն շտրիխներում, որոնք ունեն բարդ, կապակցված կատարում: Իսկ ուղղածիզ, միատեսակ, ընդհատ շարժումներով կատարված շտրիխների վրա ավելի քիչ են նույնացման հատկանիշները: Բնականաբար այս դեպքում ձեռագիրը կատարողի պարզաբանման հնարավորություններն էլ քիչ են:

Բացի այդ, քանի որ մման ձեռագրերը կատարվում են դանդաղ տեմպով, ապա տառերի շտրիխներում բացակայում են ձեռագրի այն հատկանիշները, որոնք ավտոմատացված արագ շարժումների արդյունք են: Այս հնարավորությունը գրանիշերի կառուցվածքի փոփոխման հետ միասին, գրողին թույլ է տալիս նաև հսկել իր շարժումներին, խուսափել սովորական առանձնահատկություններից:

Այս դեպքում ձեռագիրը կատարողին օգնում է նաև բառերում տառերի կապակցվածության բացակայությունը, որը հանգեցնում է ձեռագրի մասնավոր հատկանիշների հիմնական մասի կորստի:

Չնայած նշված դժվարություններին, տպագրական շրիֆտի մմանեցրած ձեռագրերով հնարավոր է նույնացնել կատարողին: Այդ նպատակի համար օգտագործվում են ձեռագրի երկու խումբ հատկանիշներ:

Առաջին խմբի մեջ մտնում են այն հատկանիշները, որոնք ձեռագրում երևան են գալիս գրանիշի ընդհանուր կառուցվածքը փոփոխելու արդյունքում, այսինքն՝ տպատառ ձեռագրի հատկանիշները, որոնք առաջացել են մարզումների ժամանակ:

Երկրորդ խմբի մեջ մտնում են սովորական ձեռագրի հատկանիշները, որոնք պահպանվում են իրենց կայունության շնորհիվ:

Հիշատակված խմբերում նշված հատկանիշներն ունեն իրենց առանձնահատկություններն ու յուրահատուկ կողմերը, որոնք փորձագիտական պրակտիկայում ուսումնասիրվում են մման ձեռագրերով կատարողին նույնացնելիս:

Այլ անձի ձեռագրին նմանեցնելով սեփական ձեռագրի փոփոխումը, ըստ էության հանգում է նրան, որ գրողը ձեռագիրը (ստորագրությունը) կատարելիս ձգտում է վերարտադրել այլ (որոշակի) անձի ձեռագրին հատուկ հատկանիշներ: Նշված գործողության կատարման արդյունավետությունը կախված է ձեռագիրը խեղաթյուրողի դիտողականությունից, ուրիշի գործողությունները գնահատելու կարողությունից, հիշողությունից, վերարտադրելու հմտությունից:

Այլ անձի ձեռագրին նմանեցնելով կատարելու տիպիկ ձևերն են նմանեցումը «աչքաչափով» և նմանեցումը նախնական մարզումներից հետո:

Նման ձեռագրերի հետազոտումը տարվում է նույն փուլերով, ինչ սովորական ձեռագրաբանական հետազոտությունն է: Հետազոտման խնդիրների ինքնատիպությունը հաշվի առնելով, հետազոտման սկզբում, փաստաթուղթը զննելիս պետք է նախ ուշադրություն դարձնել հետազոտվող ձեռագրի կատարման տեմպին: Ուսումնասիրվող ձեռագրում անսովոր կատարման հատկանիշների հայտնաբերումը նմանեցման մյուս հատկանիշների հայտնաբերման նպատակով հետազոտումը շարունակելու հիմք է հանդիսանում:

Սակայն, նկատի ունենալով, որ անսովոր կատարման հատկանիշների առկայությունը բնութագրական է նաև սեփական ձեռագրի գիտակցական փոփոխմանը, հետագա հետազոտությունները կատարելիս պետք է պահպանել որոշակի հաջորդականություն: Այսինքն՝ սկզբում պարզել՝ չի կատարված արդյոք սեփական ձեռագրի խեղաթյուրում: Բացասական հետևություններից հետո միայն անցնել այն անձի ձեռագրին նմանեցնելու հարցի պարզաբանման նպատակով հետազոտությանը:

Նման հետազոտություններ կատարելիս պետք է ուշադրության արժանացնել. դանդաղեցված շարժումների հատկանիշների տեղադրությանը, տառերի միևնույն տարբերակների կրկնությանը, կապակցվածության բացակայությանը, տառերի անհամաչափությանը, ձեռագրի անբավարար հստակությանը:

Չախ ձեռքով կատարված ձեռագրերի հերազոտությունը փորձագիտական պրակտիկայում իր որոշակի տեղն ունի, քանի որ ձախ ձեռքով կատարումը ևս ձեռագիրը քողարկելու նպատակ է հետապնդում: Այստեղ խոսքը վերաբերում է միայն այն դեպքերին, երբ կատարողին ընդհանրապես հատուկ չէ ձախ ձեռքով կատարումը: Հայտնի է որ ձախ ձեռքով գրելու համար որոշ անձինք մշակում են այդպիսի գրի ինքնուրույն շարժողական հմտություններ (նույնը ոտքով, բերանով և այլն): Նման դեպքերում չի կարող խոսք լինել գիտակցված խեղաթյուրման մասին:

Չախ ձեռքով կատարված ձեռագրեր հետազոտելիս անհրաժեշտ է պարզաբանել այն հարցերը, որոնք առաջանում են փոփոխված ձեռագրերով կատարողին նույնացնելիս: Նախ անհրաժեշտ է պարզել, ինչ աստիճանի են պահպանված տվյալ անձի սովորական ձեռագրի հատկանիշները, ինչպես նաև ձախ ձեռքով կատարված ձեռագրում փոփոխված հատկանիշների նույնացման արժեքը:

Հետազոտման առաջին նպատակը ձեռագրի՝ ձախ ձեռքով կատարված լինելու փաստի պարզաբանումն է: Այդ նպատակի համար պետք է

ուսումնասիրել հետևյալ առանձնահատկությունները. տատերի և նշանների խիստ դեֆորմացիան, տատերի և նշանների առանցքային գծերի ցրված դիրքը, շտրիխների ցայտուն արտահայտված բեկվածությունը (հատկապես օվալային, կիսաօվալային, հանգուցային էլեմենտներում), շտրիխների ծռնվածություն, շարժման դանդաղեցում, համադասության խախտում, գրող գործիքի չհիմնավորված կանգառներ:

Չախ ձեռքով կատարված ձեռագրերում հանդիպում են նման գրության համար բնութագրական հատկանիշ՝ «հայելային» շտրիխներ:

Հատկանիշի նման անվանումը հարաբերական է, քանի որ ճիշտ հայելային արտահայտություն քիչ է հանդիպում: Այդպես են կոչվում, օրինակ, շարժման ուղղության հարկադրական փոփոխումը, տառի կատարումը ոչ սովորական տեղից սկսելը և այլն:

Չախ ձեռքով կատարելիս առաջացած հատկանիշների զգալի մասը չի կարելի դասել նույնացողների թվին (օրինակ՝ վերը նշված բոլոր հատկանիշները), քանի որ դրանք առաջանում են որպես հմտության բացակայության, շարժման համադասության քայքայման արդյունք, այսինքն, որպես տվյալ հատկանիշների կայուն արտահայտության բացառում:

Իսկ առանձին հատկանիշների պատահական համընկնումը կան տարբերումը չի կարելի դնել նույնացման հիմքում: Պետք է բացառել բոլոր պատահական հատկանիշները և հետազոտվող տեքստը անպայման համեմատել նմուշների հետ՝ հայտնաբերված հատկանիշների կրկնելիությունը, այսինքն՝ կայունությունը պարզելու համար:

Հատկանիշի կայունության ստուգումը պետք է կատարել տվյալ անձի ինչպես աջ, այնպես էլ ձախ ձեռքով կատարված ձեռագրի նմուշները ուսումնասիրելով:

Պատահական հատկանիշները բացառելուց հետո կմնան տվյալ անձի սովորական ձեռագրի հատկանիշները, պահպանված առանց զգալի փոփոխության և հատկանիշները, որոնք ենթարկվել են փոփոխության՝ աջ ձեռքը ձախով փոխարինելու հետևանքով:

Նշված հատկանիշների խոր վերլուծությունը, որն իրականացվում է նույն հաջորդականությամբ, ինչպես սովորական դատաձեռագրաբանական հետազոտման դեպքում, հնարավորություն է տալիս նույնացնել ձեռագիրը կատարողին:

§ 3. ՄՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Ստորագրությունը սեփական ազգանվան, անվան կամ այլ տառա-կապակցությունների միջոցով կատարվող ինքնագիր է, որը ծառայում է որպես հավաստող նշան: Նրանով հաստատվում են այս կամ այն փաստաթղթում եղած տեղեկությունները, որոնց վերաբերյալ ստորագրողը ունի որոշակի վերաբերմունք:

Ստորագրությունը կարող է պարունակել այն կատարող անձի լրիվ ազգանունը կամ անունը, դրանց մի քանի տառերը, կամ ընդհանրապես ոչ մի տառ չպարունակել և կազմվել միայն տառ չկազմող շտրիխներից:

Ստորագրության նշանակությունը պայմանավորում է որոշ հանցագործություններ կատարելիս այն կեղծելու անհրաժեշտությունը: Այդ կապակցությամբ քննչական և դատական պրակտիկայում հաճախ անհրաժեշտություն է առաջանում պարզել իսկակա՞նն է, թե կեղծված է ստորագրությունը, եթե կեղծված է, ինչ եղանակով, ում կողմից:

Ստորագրության, որպես կրիմինալիստիկական ուսումնասիրման օբյեկտի, հետազոտումը իրականացվում է որպես. ա) ձեռագրաբանական հետազոտման տեսակներից մեկը՝ կատարողին պարզելու նպատակով, բ) փաստաթղթի տեխնիկակրիմինալիստիկական հետազոտման տեսակ՝ պարզելու համար տեխնիկական կատարման բնույթը¹:

Ստորագրության ձևավորման հիմքում նույնպես ընկած են գրաշար-ժողական հմտությունների ձևավորման սկզբունքները: Չնայած դրան, ստորագրությունների ձևավորումը ունի առանձնահատկություններ, որոնք հիմնականում հանգում են հետևյալին. Հայտնի է, որ ստորագրությունը ձևավորվում է այն ժամանակ, երբ անձը արդեն որոշ չափով տիրապետում է գրի հմտություններին²:

Ստորագրության ձևավորման սկզբնական էտապում այն լրիվ համապատասխանում է ձեռագրի կատարման համար մշակված հմտությանը: Բայց հետագայում հմտության կատարելագործման պրոցեսը ավելի արագ է ընթանում, հատկապես կյանքի այն շրջանում, երբ կատարողի մոտ անհրաժեշտություն է առաջանում հաճախակի ստորագրել:

¹ Այս մասին խոսվում է փաստաթղթերի «տեխնիկակրիմինալիստիկական հետազոտում» գլխում:

² Բացառությամբ այն դեպքերի, երբ անձը լրիվ անգրագետ է, բայց ստիպված է ստորագրել: Այս դեպքում ստորագրությունը ձևավորվում է ինքնուրույն:

Կատարելագործման պրոցեսում անձը գիտակցելով ստորագրության դերը, ձգտում է այն հազեցնել տարբեր պայմանական շտրիխներով, որոնք տառեր են հիշեցնում, կամ տառ չկազմող գծերով: Այստեղից էլ առաջանում են պաճուճագարդ, բարդ կառուցվածքի տառեր, շտրիխներ և վերջագարդ, որոնց նպատակը ինչպես ինքնատիպությունը, այնպես էլ այլոց համար կատարումը բարդացնելն է:

Որպես ձեռագրաբանական հետազոտման օբյեկտներ, ստորագրությունները ևս բնութագրվում են անհատականությամբ և հարաբերական կայունությամբ: Սակայն, քանի որ ստորագրության կատարումը սահմանափակվում է միշտ միևնույն բառով, ապա անհատականության դրսևորման հնարավորությունները նեղանում են, որովհետև ստորագրողը կարող է կամավոր փոխել ստորագրությունը կազմող տառերի քանակը և բնույթը, իսկ կայունությունը մեծանում է, որովհետև կատարման հմտություններն ավելի ամրապնդվում են, շարժումները ավտոմատացվում և կայունանում:

Ստորագրության հատկանիշները սկզբունքորեն նման են և շատ ընդհանրություններ ունեն ձեռագրի հատկանիշների հետ, բայց ունեն որոշ առանձնահատկություններ, որոնք մասնավորապես հանգում են հետևյալին.

1) *Տեղագրական հատկանիշներ*, որոնք վերաբերում են ստորագրությունը փաստաթղթի վրա տեղադրելուն, փաստաթղթի տեքստի հորիզոնական կտրվածքներին, ուղղահայաց կտրվածքներին, տողագծի համեմատությամբ ստորագրողի ազգանվանը, ամիս-ամսաթիվ-տարեթվին և այլն:

2) *Ստորագրությունների ընդհանուր հատկանիշները՝* կազմությունը (տառադարձությունը), մշակվածությունը և կառուցվածքը:

Տառադարձությունը նշանակում է ստորագրության տառային և տառ չկազմող շտրիխների կազմությունը: Պրակտիկայում տառադարձությունը դասակարգվում է երեք տեսակի՝ տառային, շտրիխային, որոնք բնութագրվում են տառ չկազմող շտրիխներով և խառը, այսինքն, որոնք կազմված են ինչպես տառերից, այնպես էլ տառ չկազմող շտրիխներից:

Տառերը հետազոտվում են ձեռագրերի ուսումնասիրման համար մշակված հատկանիշներով: Տառ չկազմող էլեմենտները պետք է տարբերել ըստ կառուցվածքի, ուղղահայաց ուղիղ գծեր, որոնք ստորագրության նախորդ կամ հաջորդ էլեմենտներին միանում են աղեղնաձև շարժումով, կազմում են անկյուն կամ անկյունային միացություններ,

հանգուցածն շտրիխներ, որոնք կարող են լինել ուղղահայաց, հորիզոնական, պարզ ու բարդ և այլն:

Հեղազուրեկի. առանձնակի ուշադրության է արժանի ստորագրությունների եզրափակիչ մասի կառուցվածքը, որն անվանվում է վերջագարդ: Վերջագարդը սովորաբար ունենում է հետևյալ կառուցվածքը, ուղիղ գիծ (ուղղահայաց կամ հորիզոնական), աղեղնաձև գիծ (բացվածքով վեր, վար, աջ, ձախ), շտրիխների անկյունավոր կամ եռանկյունաձև միացություն, հանգույց կամ շտրիխների հանգուցավոր համակցում, օվալաձև միացություններ և այլն:

Այն շտրիխները, որոնք կազմում են վերջագարդի էլեմենտը, բայց նրա հետ կապակցված չեն, կոչվում են լրացուցիչ շտրիխներ (լինում են տարբեր կառուցվածքի. ուղղահայաց, հորիզոնական, ուղիղ, օվալաձև գծեր և այլն):

Ստորագրության մշակվածությունը որոշվում է նույն կերպ և նույն աստիճանավորումով, ինչ ձեռագիրը (ցածր, միջին, բարձր), չմոռանալով, որ ստորագրության մշակվածությունը հաճախ կարող է տվյալ անձի ձեռագրի մշակվածությունից բարձր լինել:

Ստորագրությունների կառուցվածքը կարող է լինել. բարդացված, պարզ, պարզեցված, պարզագույն: Այս դասակարգումը որոշվում է՝ տառերի և տառ չկազմող էլեմենտների կառուցվածքը հաշվի առնելով: Սկզբունքորեն ստորագրությունների կառուցվածքը պետք է որոշել այնպես, ինչպես ձեռագրինը: Ստորագրության ընդհանուր հատկանիշների միջին ցուցանիշները բնութագրել նպատակահարմար չէ, թանի որ դրանց հիմնական մասը ստորագրության տարբեր էլեմենտներում միատեսակ չեն արտահայտվում: Բացի այդ, սովորաբար ստորագրությունները բովանդակում են գրաֆիկական փոքրածավալ նյութ (այդ թվում նաև տառ չկազմող շտրիխները), և այդպիսի փոքր նյութի նկատմամբ միջին մեծությունները չեն կարող արտահայտել ստորագրողի հմտությունների բնութագիրը: Այդ պատճառով էլ այս դեպքում ընդհանուր հատկանիշները որոշակիացվում են յուրաքանչյուր էլեմենտի նկատմամբ, հաշվի առնելով ստորագրության մեջ նրա ունեցած տեղադրությունը:

Ստորագրությունների ընդհանուր հատկանիշների թվին ավելացվում է ստորագրության գրագծի կառուցվածքը, որը տեղագրականից տարբերվում է նրանով, որ արտահայտում է ստորագրության էլեմենտների հիմքերի տեղադրության առանձնահատկությունները միմյանց հարաբերակցությամբ: Քանի որ այս հատկանիշը բնութագրում է ամբողջ ստորագրությունը, այդ պատճառով էլ պետք է դասվել ընդհանուրի թվին:

Ձեռագրի առանձնահատկությունները բնութագրող մասնավոր հատկանիշները չեն սպառում ստորագրության կատարման հնարությունների մկարագիրը: Այստեղ բնութագրական են մասն ալմալիսի հատկանիշներ, ինչպիսիք են՝ տառ չկազմող անկյունային էլեմենտների և անկյունների չափերը (սուր, ուղիղ, բութ և որոշակի աստիճանը), տառ չկազմող աղեղնաձև էլեմենտների ծովածության աստիճանը, վերջագարդի և նրա էլեմենտների տեղադրությունը ստորագրության մկատմամբ և այլն:

§ 4. ԳՐԻ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Ինչպես կրիմինալիստիկական մույնացման մյուս օբյեկտների, այնպես էլ գրի հետազոտման մեթոդիկական հիմնված է կրիմինալիստիկական մույնացման տեսության ընդհանուր դրույթների վրա: «Իրեղեն ապացույցներ հետազոտելիս կրիմինալիստիկական փորձաքննության կարևորագույն խնդիրներից մեկը համարվում է հետազոտվող օբյեկտներում մույնության կամ տարբերության պարզաբանումը..., այնպես, որպեսզի հայտնաբերվեն ճշմարտության բացահայտմանը մպաստող փաստեր¹», -գրում է պրոֆ. Ա. Ի. Վինբերգը:

Ձեռագրի կատարողի պարզաբանումը կրիմինալիստիկական մույնացման տեսակներից մեկն է:

Գրի կրիմինալիստիկական հետազոտությունը կատարվում է որոշակի կարգով: Այն անցնում է ուսումնասիրման, հետազոտման հստակ տրամաբանական հաջորդականությամբ: Ավելի որոշակի՝

- ա) հետազոտման մախապատրաստում,
- բ) ձեռագրում անտվոր կատարման հատկանիշների որոնում,
- գ) հետազոտման ներկայացված փաստաթղթի և ձեռագրի մույնների անջատ հետազոտում,
- դ) հայտնաբերված հատկանիշների համեմատական հետազոտում,
- ե) համեմատության արդյունքների (համընկնող և տարբերվող հատկանիշների) գնահատում,
- զ) հետևություններ:

Հետազոտմանը մախապատրաստվելիս փորձագետը ստուգում է փորձաքննությանն ուղարկված նյութերի ձևակերպման վիճակը: Այդ աշ-

¹ А. И. Винберг, Криминалистическая экспертиза в Советском уголовном процессе, М., 1956, էջ 22

խատանքը սկսվում է փորձաքննությունն անցանակելու մասին որոշման ուսումնասիրումից, քանի որ այն փորձաքննությունն կատարելու համար միակ իրավական հիմքն է հանդիսանում (ՀՀ քր. դատ. օր. 243, 244 հոդվածներ):

Որոշման ուսումնասիրումը փորձագետին հնարավորություն է տալիս պարզել փորձաքննության ներկայացված փաստաթղթերը, ո՞ր տեսակի կամ ստորագրություններն են ենթակա հետազոտման, ինչպիսի՞ հարցեր են առաջադրված փորձաքննության լուծմանը, ենթադրյալ կատարողներին, այդ անձանց ձեռագրերի նմուշները, ինչպես նաև վիճելի ձեռագրի կամ ստորագրության կատարման պայմանները (ըստ գործի նյութերի) և համապատասխան տվյալներ ենթադրվող կատարողների մասին:

Փորձագետը պարզում է. արդյոք որոշման մեջ նշված փաստաթղթերն են ներկայացված իրեն, ճի՞շտ են նկարագրված դրանք: Ծանոթանալով առաջադրված հարցերին, փորձագետը որոշում է. դրանք մտնո՞ւմ են իր իրավասության մեջ: Եթե հարցերը ձևակերպված են անհասկանալի, կամ տարբեր մեկնաբանությունների տեղիք են տալիս, փորձագետը այն ճշտում է կամ նյութերը հետ ուղարկելով, կամ հարցման միջոցով: Եթե հարցերի թվում կան այնպիսիները, որոնք պահանջում են այլ փորձաքննության կատարում, այլ փորձագետի կողմից (փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական, քիմիական և այլն), հետազոտությունների հերթականությունը որոշվում է այնպես, որ ձեռագրաբանական փորձաքննությունը, հնարավորության սահմաններում, կատարվի սկզբում, եթե մյուս հետազոտությունների արդյունքում փաստաթղթի արտաքին վիճակը կարող է փոփոխվել:

Ելնելով գործում եղած նյութերից, կատարման պայմանների մասին որոշման մեջ կարող են տեղ գտնել հետևյալ տվյալները. գրողի դիրքը գրելու (ստորագրելու) պահին, գրելու նյութը, գրող գործիքը, լուսավորությունը և այլն:

Որոշման մեջ ենթադրվող կատարողի մասին պետք է նշել տարիքը, կրթությունը, գրու՞մ է այլ լեզուներով և գրչության որ տեսակներից կարող է օգտվել, գրու՞մ է արդյոք ձախ ձեռքով, եթե այո, ապա երբվանի՞ց և ի՞նչ պատճառով, հոգեկան կամ նյարդային ինչ հիվանդություններ ունի, ինչպիսին է տեսողությունը (ակնոց օգտագործում է, ինչպիսի), ձեռքի վնասվածք, գրելիս ֆիզիկական կամ հոգևոր անսովոր վիճակ, ակնոռային հարբած վիճակ, նարկոտիկների ազդեցություն կա՞թե ոչ և այլն:

Այս տվյալների առկայությունը փորձագետին օգնում է համեմատական նյութերը (նմուշները) ուսումնասիրելիս՝ նրանց բավարար քանակի և որակի պարզաբանման առումով¹:

Այս փուլում փորձագետը ծանոթանում է նաև հետազոտվող փաստաթղթին: Նախ, ուսումնասիրում է փաստաթուղթը ամբողջությամբ, ապա՝ հետազոտման որոշակի օբյեկտը (ձեռագիրը, նրա մասը, ստորագրությունը):

Փաստաթուղթը ամբողջությամբ ուսումնասիրելիս փորձագետը պարզում է. նրա ռեկվիզիտները, կնիքի և դրոշմակի (շտամպի) դրոշմները, ամիս, ամսաթիվ, տարեթիվը, ստորագրությունները, մակագրությունները, նաև նրա պատրաստման եղանակը (տպագրական, մեքենագիր, ձեռագիր և այլն), նյութը, որի վրա կատարված է հետազոտվող օբյեկտը (թուղթ, փայտ, կաշի և այլն), նրա մակերեսի վիճակը, տեքստի շտրիխների վիճակը:

Ձեռագրի հետազոտումը սկսվում է նրանից, թե այն չի՞ պարունակում, արդյոք, անսովոր կատարման հատկանիշներ: Այս հարցի պարզաբանումը կարևոր է նրանով, որ անսովոր կատարման հատկանիշների առկայությունը մեծապես ազդում է գրի հետազոտման մեթոդիկայի և արդյունքների վրա: Հետազոտման այս փուլի խնդիրն է որոնել անսովոր կատարման հատկանիշներ և դատողություններ անել՝ ձեռագրում նրանց առկայության հնարավոր պատճառների մասին:

Միատեսակ տառերը կատարելիս որոշակի անձին հատուկ շարժման առանձնահատկություններն արտահայտվում են որոշ տարբերակումներով, երբեմն միմյանց բացառելու աստիճանի: Դրա համար էլ հատկանիշների կայունության վերլուծությունը բովանդակում է պարտադիր հաշվառում և մեկ տարբերակի մեջ շեղման սահմանների ու կայունության ստուգում: Կայունությունը ստուգվում է ըստ բառում տառի տեղադրության (բառասկզբում, բառամիջում, վերջում) և նրա միաձույլ կատարման (կախված հարևան տառից): Հետազոտման պրոցեսում պետք է ուշադրության արժանացնել հատկանիշների տարբերակների կրկնման հաճախականությանը ինչպես հետազոտվող փաստաթղթում, այնպես էլ ենթադրվող կատարողի ձեռագրի նմուշներում: Դա անհրաժեշտ է համեմատական հետազոտման և նրա արդյունքների գնահատման համար:

Հատկանիշները ուսումնասիրելիս կարևոր է հաշվի առնել նրանց հանդիպման հաճախականությունը, նկատի առնելով, որ որքան հազվա-

¹ Նմուշների մասին ավելի մանրամասն կխոսվի մյուս պարագրաֆում:

դեպ է հանդիպում հատկանիշը տարբեր անձանց ձեռագրերում, այնքան բարձր է նրա նույնացման արժեքը:

Առանձին ուսումնասիրվում են ձեռագրի ընդհանուր և մասնավոր հատկանիշները, տեղագրական հատկանիշները, գրավոր խոսքի հատկանիշները:

Անջատ հետազոտությունը ուղեկցվում է համապատասխան մշակումներով, որոնցում ֆիքսվում են արդյունքները: Այդ նպատակի համար գրելու թուղթը բաժանվում է երկու ուղղահայաց մասի, որի ձախ կողմում նշվում են հետազոտվող փաստաթղթում պարունակող հատկանիշները, աջ կողմում՝ ենթադրվող կատարողի ձեռագրի նմուշներում պարունակող հատկանիշները: Բնական է, որ եթե ենթադրվող կատարողները մեկից ավելի են, ապա աջ կողմի սյունակները պետք է համապատասխանեն նրանց թվին:

Հետազոտման ներկայացված փաստաթղթի և ենթադրվող կատարողի ձեռագրի նմուշների անջատ ուսումնասիրումից հետո փորձագետը անցնում է հայտնաբերված հատկանիշների համեմատական հետազոտմանը:

Այս փուլում փորձագետը ենթադրվող կատարողի ձեռագրի նմուշներում հայտնաբերած յուրաքանչյուր հատկանիշ համեմատում է հետազոտվող փաստաթղթի ձեռագրի համապատասխան հատկանիշի հետ: Համեմատությունը կատարվում է հատկանիշների նույնություն կամ տարբերություն հայտնաբերելու նպատակով:

Ընդհանուր հատկանիշների համեմատումը նպատակահարմար է սկսել հատկանիշների այն խմբից, որոնք արտահայտում են գրաշարժողական հմտությունների ձևավորման բնույթը. մշակվածություն, շարժման համադասություն, գրելու տեմպ, ձեռագրի կառուցվածքը ըստ բարդության աստիճանի:

Եթե նշված հատկանիշները ուսումնասիրելիս պարզվի, որ ներկայացված ձեռագրերը պատկանում են տարբեր խմբերի, հնարավոր է բացասական հետևություն ենթադրվող կատարողի վերաբերյալ, առանց մյուս հատկանիշների հետազոտման (օրինակ՝ նմուշներում ձեռագրի մշակվածությունը ցածր է վիճելի ձեռագրի մշակվածությունից):

Համեմատական հետազոտման ժամանակ հայտնաբերված հատկանիշների համընկնումները և տարբերությունները փորձագետի կողմից գնահատվում են. թե դրանք կազմում են արդյոք մի այնպիսի կայուն ամբողջություն, որն անկրկնելի է տարբեր անձանց ձեռագրերում և բավարար որոշակի անձի նույնացման համար:

Համեմատական հետազոտման արդյունքների գնահատման փուլում փորձագետը, հենվելով անջատ և համեմատական հետազոտման տվյալների վրա, պետք է որոշի, թե որքան լրիվ և բազմակողմանի են ուսումնասիրված համեմատվող ձեռագրերը բնութագրող հատկանիշները:

Հատկանիշների գնահատման կարևոր առանձնահատկություն է այն, որ փորձագետը ոչ բոլոր դեպքերում է հատկանիշների ամբողջությամբ մեջ ընդգրկում հայտնաբերված բոլոր առանձնահատկությունները: Դա, մասնավորապես, պայմանավորված է հատկանիշների քանակից, որակից, հետազոտվող տեքստի ծավալից:

Եթե հայտնաբերված համընկնող հատկանիշների կողքին կան նաև տարբերվող հատկանիշներ, ապա փորձագետը դրանք գնահատելիս պետք է բացատրի առաջացման պատճառները: Որոշակի, դրական հետևություն հնարավոր է միայն այն դեպքում, երբ տարբերվող հատկանիշների առկայությունը կունենա իր գիտականորեն հիմնավորված բացատրությունը և կապացուցվի, որ նրանք էական նշանակություն չունեն:

Այսպիսով, հատկանիշների գնահատման ճշմարտացիությանը և նույնացման համար անհրաժեշտ ամբողջականությանը կարելի է հասնել, եթե դրանք կայուն են, հանդիպման հաճախականությունը ցածր է, տարբերությունները էական չեն և փորձագետի կողմից բացատրվում են դրանց առկայության պատճառները:

Հատկանիշների *գնահատումից* հետո փորձագետը հետազոտվող օբյեկտների վերաբերյալ հանգում է համապատասխան հետևությունների, որոնց հիման վրա էլ կազմում է իր եզրակացությունը:

Այդպես են սահմանում նաև ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 114 և 250 հոդվածները: Մասնավորապես, 114 հոդվածը սահմանում է. «Փորձագետի եզրակացությունը գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի որևէ բնագավառում հատուկ գիտելիքների օգտագործմամբ զրավոր, հիմնավորված հետևություններն են իրեն առաջադրած հարցերի, ինչպես նաև իր իրավասության մեջ մտնող այն հանգամանքների վերաբերյալ, որոնց նա հանգել է. գործի համապատասխան նյութերը հետազոտելով»:

Որպես դատավարական փաստաթղթի, այս դեպքում ևս, փորձագետի եզրակացությանը ներկայացվում են որոշակի պահանջներ: Փորձագետի եզրակացությունը պետք է լինի, ինչպես նշված է մեջբերված հոդվածում, գիտականորեն հիմնավորված, հետազոտությունները՝ լիարժեք, հետևությունները որոշակի, փորձագետին առաջադրված հարցերի պատասխանները՝ լրիվ, եզրակացության կառուցվածքային սխեման՝ պահ-

պանված, շարադրանքը՝ պարզ, հստակ, մատչելի, օգտագործված ճիշտ և միասնական տերմինաբանություն:

Փորձագետի եզրակացությունը կազմվում է երեք մասից, ներածական, հետազոտական և հետևություններ:

Եզրակացությանը ներկայացվող դատավարական պահանջները շարադրված են Հայաստանի Հանրապետության քր. դատ. օր. 250 հոդվածում, որոնք չպահպանելու դեպքում փորձագետի եզրակացությունը կորցնում է իր ապացուցողական նշանակությունը:

Ներածական մասում նշվում են.

Եզրակացության անվանումը և համարը, ո՞ր գործի կապակցությամբ է կատարվել փորձաքննությունը, եզրակացությունը ստորագրելու թվականը (ամսաթիվ, ամիս, տարեթիվ), նյութերի փորձագիտական հիմնարկ ստացվելու թվականը, փորձագիտական հիմնարկի անվանումը, փորձաքննություն նշանակող մարմնի անվանումը, փորձաքննություն նշանակելու մասին որոշումը, նրա թվականը, փորձաքննություն նշանակող անձի պաշտոնը, դասային աստիճանը, ազգանունը, անունը, հայրանունը հետազոտման ենթակա փաստաթղթերը, լուծման ենթակա հարցերի թվարկը, ձեռագրի (ստորագրության) նմուշները, փորձաքննությունը կատարող փորձագետի ազգանունը, անունը, հայրանունը, կրթությունը, մասնագիտությունը, գիտական աստիճանը և կոչումը, զբաղեցրած պաշտոնը, նշում այն մասին, որ հետազոտվող փաստաթղթերի վրա դրված են փորձագիտական հիմնարկի, իսկ նմուշների վրա՝ «նմուշ» շտամպների դրոշմները:

Այս մասում են նշվում նաև գործով ձեռք բերված ավյալները՝ գրելու (ստորագրելու) պայմանների ու ենթադրվող կատարողների մասին: Մանրամասն նկարագրվում են փորձաքննության ներկայացված փաստաթղթերի ռեկվիզիտները: Եթե փաստաթուղթը ռեկվիզիտներ չունի, ներկայացվում են տեքստի սկզբնական և եզրափակիչ բառերը, արտահայտությունները:

Եզրակացության ներածական մասում նշում է արվում, որ համաձայն ՀՀ քր. դատ. օր. 248 հոդվածի պահանջի, փորձագիտական հիմնարկի ղեկավարը քննիչի հանձնարարությամբ կամ փորձաքննություն նշանակած անձը՝ (հոդ. 249) փորձաքննությունը կատարող փորձագետին բացատրել է դատական փորձագետի՝ ՀՀ քր. դատ. օր. 85 հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, որի մասին ստորագրություն է վերցրել նրանից և փորձագետի եզրակացության հետ միասին ուղարկում է քննիչին:

Եզրակացության հետազոտական մասում, որը վերնագրվում է «Հետազոտում», շարադրվում են փորձագետի կատարած հետազոտությունների ամբողջ ընթացքը, դրա արդյունքները: Հետազոտման ընթացքի մանրամասն և լրիվ շարադրանքի անհրաժեշտությունը պայմանավորվում է նրանով, որ փորձագետի եզրակացությունը նախաքննության մարմնի և դատարանի կողմից որպես ապացույց գնահատելիս հնարավորություն ստեղծվի համոզվելու եզրակացության ճշմարտացիության, հիմնավորվածության մեջ, ծանոթանալու փաստական այն բոլոր տվյալներին, որոնք փորձագետը պարզաբանել է հետազոտման ընթացքում և դրել է եզրակացության հիմքում:

Եզրակացության հետազոտական մասում դատաձեռագրաբանական փորձաքննության հետազոտման ընթացքը շարադրվում է հետևյալ հաջորդականությամբ:

Նախ նկարագրվում է փաստաթղթերի զննության ընթացքը, այնուհետև տրվում են անջատ և համեմատական հետազոտման նկարագրերը, համեմատական հետազոտման արդյունքների գնահատումը և հետևությունները: Եթե հետազոտման ընթացքում կիրառվել են տեխնիկական միջոցներ (խոշորացույց, մանրադիտակ, հատուկ լուսավորություն, լուսազտիչներ և այլն), ապա պետք է անպայման նշել դրանց կիրառման և արդյունքի մասին:

Հետազոտական մասն ավարտվում է նրանով, որ փորձագետը համառոտ եզրահանգումներ է անում իր կատարած հետազոտությունների վերաբերյալ, որոնք էլ կազմում են հետևությունների հիմքը:

Եզրակացության երրորդ մասում փորձագետը շարադրում է իր հետևությունները, այսինքն՝ ձևակերպում է առաջադրված հարցերի պատասխանները:

Հարցերի պատասխանները՝ հետևությունները պետք է շարադրել պարզ, հասկանալի, կարճ, հստակ և որոշակի: Այստեղ ավելորդ են պատասխանները հիմնավորող արտահայտությունները, քանի որ դրանք արդեն կան կամ պետք է լինեն հետազոտական մասում:

Հետևություններում պետք է ձևակերպվեն հաստատումը կամ ենթադրությունը¹ այն մասին, որ տվյալ տեքստը (ստորագրությունը) կատարված է (չի կատարված) որոշակի անձի (ազգանուն, անուն, հայրա-

¹ Ենթադրական (հավանական) եզրակացության ապացուցողական նշանակության մասին օրենքում որոշակիություն չկա: Գրականության մեջ կան տարածայնություններ, սակայն, պրակտիկան առայժմ այն (հավանական եզրակացությունը) ընդունում է:

նուն) կողմից, կամ նշվում է առաջադրված հարցին պատասխանելու անհնարինությունը մասին:

Փորձագետի եզրակացության կարևոր լրացում է համարվում ֆոտոաղյուսակը, որտեղ ներկայացված լուսանկարների վրա ցույց են տրվում այն հատկանիշները, որոնք նկարագրված են հետազոտական մասում:

§ 5. ՆՅՈՒԹԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԳՐԻ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼԻՍ

Գրի կրիմինալիստիկական փորձաքննության արդյունավետությունը մեծապես կախված է նրանից, թե որքանով այն մանրակրկիտ, փութաջանորեն է նախապատրաստված:

Գրի կրիմինալիստիկական փորձաքննությանը նախապատրաստվելիս քննիչի հիմնական խնդիրն այն է, որ փորձագետին տրամադրի անհրաժեշտ համեմատական նյութեր՝ ենթադրվող կատարողի ձեռագրի (ստորագրության) նմուշներ:

Փորձաքննության ներկայացվող նմուշների համար անհրաժեշտ պայման է նրանց հավաստիությունը, այսինքն այն, որ դրանք անվիճելիորեն գրված են այն անձի կողմից, ում ձեռագրի նմուշ պետք է ծառայեն: Դրանք պետք է վերցնել, պահպանելով ՀՀ քրո 253, 255, 256 հոդվածների պահանջները:

Նմուշները պետք է ունենան պատշաճ որակ և բավարար քանակ: Դրանք պետք է համապատասխանեն հետազոտման ենթակա ձեռագրին կատարման ժամանակով, գրելու տեմպով, ցանկալի է փաստաթղթի տեսակով, լեզվով, գրելու նյութով, կատարման եղանակով և այլն, ունենան այնպիսի ծավալ, որը հնարավորություն կտա լրիվ և բազմակողմանի ուսումնասիրել հետազոտվող տեքստում եղած բոլոր հատկանիշները:

Դատաձեռագրաբանական փորձաքննություն կատարելիս օգտագործվում են երեք տեսակի նմուշներ. ազատ, փորձառական և միջանկյալ կամ պայմանականորեն ազատ:

Ազատ կոչվում են ձեռագրի (ստորագրության) այն նմուշները, որոնք ենթադրվող կատարողի կողմից գրվել են մինչև տվյալ փորձաքննության հետ կապված գործի ծագումը և անկախ այդ գործի հանգամանքներից: Այսինքն, երբ ձեռագիր տեքստը կատարողը չէր կարող ենթադրել, որ այն

կարող է օգտագործվել որպես համեմատական նյութ՝ ձեռագրաբանական փորձաքննություն կատարելու համար, և, հետևաբար, բացառվում է ձեռագրի գիտակցական խեղաթյուրումը: Որպես ազատ մնուչներ կարող են ծառայել աշխատանքի ընդունվելու, արձակուրդ գնալու մասին և այլ դիմումներ, ինքնակենսագրությունը, սեփական ձեռագրով լրացված անկետաները (օրինակ կադրերի հաշվառման անձնական թերթիկը), ծառայական գրագրություններ, անձնական նամակներ, կոնսպեկտներ, աշխատավարձի վճարման տեղեկագրեր և այլ փաստաթղթեր, որոնք պետք է որոնել տվյալ անձի աշխատավայրում, բնակարանում, ազգականների, ծանոթների մոտ և այլն:

Ազատ մնուչների ռեկվիզիտների նկարագրությունը և հավաստումը տրվում են նաև փորձաքննություն նշանակելու մասին որոշման մեջ:

Ձեռագրի (ստորագրության) փորձառական մնուչներ համարվում են այն ձեռագրերը (ստորագրությունները), որոնք ենթադրվող կատարողի կողմից գրվում են դատաքննչական մարմինների առաջարկով, հատկապես, համեմատական հետազոտման ուղարկելու նպատակով:

Փորձառական մնուչները ստացվում են հիմնականում թելադրությամբ, որն իրականացվում է թելադրության տեմպը աստիճանաբար արագացնելով: Ցանկալի է թելադրել հետազոտվող փաստաթղթի տեքստը, իսկ եթե գործի քննության շահերը այդ թույլ չեն տալիս, նպատակահարմար է վաղօրոք պատրաստել որևէ տեքստ, որը կպարունակի վիճելի տեքստի բառեր, արտահայտություններ, տառակապակցություններ:

Փորձառական մնուչների կատարման ընթացքում չի կարելի ենթադրվող կատարողին ցույց տալ հետազոտման ենթակա ձեռագիրը կամ թույլ տալ արտագրել նրանից: Դա կօգնի նրան խեղաթյուրելու սեփական ձեռագիրը: Թեև, վերը նշված պայմաններում կատարված ձեռագրում ևս չի բացառվում որոշ հատկանիշների խեղաթյուրման հնարավորությունը, որը պետք է հաշվի առնել հետազոտությունը իրականացնելիս:

Այդ հարցի բացահայտումը հնարավոր է իրականացնել ազատ և փորձառական մնուչները միմյանց հետ համեմատելով, որը կօգնի նաև պարզելու ազատ մնուչների հավա ստիությունը:

Փորձառական մնուչ վերցնելիս չի կարելի առաջարկել գրելու որոշակի ձևով (խոշոր, մանր, այս կամ այն տառի որոշակի կառուցվածքով և այլն):

Ստորագրությունների փորձառական մնուչներ վերցնելիս այն անձից, որի անունից այն կատարված է, պետք է առաջարկել կատարել բոլոր տարբերակներով, առանձին թերթերի վրա:

Եթե հետազոտման են ներկայացվելու մտացածին անձանց անու-
նից կատարված ստորագրություններ, ապա ենթադրվող կատարողին
պետք է առաջարկել գրելու մտացածին անձանց ազգանունները առան-
ձին թերթերի վրա, ինչպես նաև թելադրել այդ ազգանունները (անուննե-
րը) պարունակող տեքստ:

Երբ ենթադրվող կատարողը ընդունում է, որ ինքն է ստորագրել,
նրան պետք է առաջարկել կատարելու այդպիսի ստորագրություններ՝ ա-
ռանց հետազոտվող ստորագրությունը նրան ցույց տալու:

Փորձառական նմուշները հավաստվում են գրողի («գրված է իմ կող-
մից, որի համար ստորագրում եմ») և քննիչի ստորագրությամբ:

Միջանկյալ կամ պայմանականորեն ազատ նմուշները այն ձեռա-
գրերն (ստորագրություններն) են, որոնք կատարվել են տվյալ փոր-
ձաքննության հետ կապված գործի ծագումից հետո և, հիմնականում նրա
հետ առնչվող (տարբեր բացատրություններ, իր ձեռքով գրված ցուց-
մունքներ, դիմումներ, բողոքներ և այլ փաստաթղթեր), բայց ոչ հատկա-
պես համեմատական հետազոտման ներկայացնելու համար:

Այս նմուշները միջանկյալ են համարվում, որովհետև չեն կարող
դասվել ոչ ազատ, ոչ փորձառական նմուշներին, սակայն լրացուցիչ նյութ
են հանդիսանում համեմատական հետազոտման համար և կարող են
նպաստել հատկանիշների բազմակողմանի, լրիվ հետազոտումը ավելի
արդյունավետ իրականացնելու համար:

§ 6. ՁԵՌԱԳՐԱԲԱՆԱԿԱՆ ԴԻԱԳՆՈՍՏԻԿ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռագրաբանական հետազոտությունների հիմնական նպատակը
կատարողի մասին հնարավորինս լրիվ տվյալների ստացումն է, քանի որ
ձեռագիրը պարունակում է անձի (կատարողի) վերաբերյալ, ինչպես նաև
ձեռագրի կատարման հանգամանքների ու պայմանների մասին կողա-
վորված տեղեկատվություն: Փորձագետ-ձեռագրագետի հատուկ գիտե-
լիքները պետք է ընդգրկեն նաև այդ տեղեկատվության վերծանումը:

Հիշենք, որ ձեռագիրը բարդ, ամբողջական համակարգ է, որի տար-
բեր կողմերը փոխադարձաբար կապակցված են և նրա համար, ինչպես
հայտնի է, բնութագրական են հատկություններ, որոնք հնարավորություն
են տալիս այն օգտագործել կրիմինալիստիկական նպատակներով:

Ռուս, հայ և այլազգի կրիմինալիստների կողմից ուսումնասիրված և
մշակված են ձեռագրի այն հատկությունները, որոնք օգտագործվում են
անհատական իդենտիֆիկացման համար:

Բայց նրանք շատ քիչ ուշադրության են արժանացրել ձեռագրի այն հատկություններին, որոնք ունեն դիագնոստիկ նշանակություն, մասնավորապես. այնպիսի հետազոտություններ, ինչպիսիք են.

ա) արտաքին իրադրության և պայմանների պարզաբանումը (օրինակ՝ անսովոր դիրքում գրելու փաստի պարզաբանում, խեղաթյուրված ձեռագրով կատարելու փաստի պարզաբանում, այլ անձի ձեռագրին կամ ստորագրությանը նմանեցնելով կատարելու փաստի պարզում.

բ) կատարողի ներքին վիճակի (զգացողության) պարզաբանում (հոգնածություն, գրգռված վիճակ, արգելակում, հոգեկան հիվանդություն և այլն).

գ) գրողի տարիքը, տարբեր անձանց ձեռագրերի նմանությունը, ձեռագրի կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից միաժամանակ, գրելու վաղեմության պարզումը և այլն:

Մենք չենք հավակնում սպառիչ ներկայացնել նշված և չնշված նմանատիպ հարցերի պարզաբանման համար ուսումնասիրման ենթակա առանձնահատկությունները, քանի որ դրանք շատ դեպքերում նույնանում են: Նմանատիպ պարագայում փորձագետը բավարարվում է արձանագրել, որ ձեռագիրը կատարված է անսովոր պայմաններում:

Վերը նշված հարցերի մի մասը լուծվում է դատական ձեռագրաբանության ընդհանուր բնութագրող հատկանիշների վերլուծությամբ (խեղաթյուրված ձեռագրերի, ինքնակեղծման, այլ անձի ձեռագրին կամ ստորագրությանը նմանեցնելով, կատարումը անսովոր դիրքում և այլն): Այժմ համառոտ անդրադառնանք այն հարցերին, որոնք բնութագրում են գրողի տարբեր վիճակները՝ ձեռագիրը կատարելիս.

ա) Չ՞ի կատարվել արդյոք ձեռագիրը ֆիզիկապես հոգնած վիճակում: Հատկանիշներից են. տառերի շտրիխների ծռնվածություններ, նման պաթոլոգիկ հատկանիշներին. տառերի կամ նրանց առանձին էլեմենտների անկայուն կատարումներ, կրկնագծում, օվալային էլեմենտների ձևափոխում, ավելորդ շտրիխներ, խզբումներ և այլն, տողագծերի ծռնվածություն, տողերի միջև եղած տարածության անհամաչափություն, շարժումների համադասության խախտում (իջեցում), գրելու թափի դանդաղեցում, թեքության խախտում: Նման դեպքերում, երբեմն, համընկնող հատկանիշների անհատականացնող ամբողջության հետ, հանդիպում են նաև տարբերվող հատկանիշներ, որոնք չի կարելի բացատրել որպես ձեռագիրը գիտակցաբար խեղաթյուրելու նպատակ:

Այդ հարցը կարող է լուծվել, երբ փորձագետին հայտնի կլինեն ձեռագրի հատկանիշների փոփոխության սահմանները և բնույթը, որոնք ա-

ռաջանում են տարբեր պատճառներից, այդ թվում կատարողի ֆիզիկական հոգնածությունից:

Այս հարցի գիտական վերլուծության բարդությունը պայմանավորված է նրանով, որ «բոլոր հասկացություններից, որոնցից օգտվում է ժամանակակից ֆիզիոլոգիան, հազիվ թե կա ավելի քիչ պարզ և որոշակի հասկացություն, քան հոգնածության հասկացությունը¹», որն ամբողջական օրգանիզմի կամ առանձին օրգանների ու հյուսվածքների աշխատունակության մասնակի կամ լրիվ ժամանակավոր կորուստն է՝ դրան նախորդած ակտիվ գործունեության հետևանքով²:

բ) Ձեռագիրը չի^օ կատարված ծանր հիվանդագին վիճակում գտնվող անձի կողմից (տառերի խոշորացված կատարում, գրող գործիքի անհիմն կանգառներ, կրկնակի շտրիխներ, պաթոլոգիկ հատկանիշներ և այլն):

գ) Չի^օ կատարված արդյոք ձեռագիրը՝ ակոհոլային հարբածության վիճակում: Հիմնականում, նույնատիպ էլեմենտների տարբեր անկայուն կատարում, տողագծի խախտում, շտրիխների թեքության անկայունություն և այլն):

դ) Ձեռագիրը կատարված չէ^օ արդյոք օղի ցածր ջերմաստիճանի պայմաններում:

Համապատասխան փորձագիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ նորմալ ջերմաստիճանում մշակված գրի հմտությունները ցրտի ազդեցության տակ որոշ փոփոխություններ են կրում: Մարդկային օրգանիզմի սառեցումը ուղեկցվում է ինչպես ծայրամասային, այնպես էլ կենտրոնական նյարդային համակարգի ֆունկցիոնալ վիճակի փոփոխություններով: Ինչպես նշեցինք վերը, գրելու հմտությունը կրում է պայմանական-ռեֆլեկտորային բնույթ, իսկ ռեֆլեկտորային գործունեության խախտումը կախված է նաև մարմնի ջերմաստիճանի իջեցումից: Որքան այն ցածր է, այնքան զգալի են ռեֆլեկտորային գործունեության խախտումները, որոնք վկայում են կենտրոնական նյարդային և մկանային համակարգի ֆունկցիոնալ վիճակի փոփոխությունների մասին: Ինչպես մկանային, այնպես էլ նյարդային ապարատները մասնակցում են գրելու պրոցեսին, որի համար էլ դրանց ֆունկցիաների նույնիսկ աննշան խախտումները, որոնք առաջանում են օրգանիզմի սառեցումից, իրենց ազդեցությունն են թողնում այդ պրոցեսի վրա: Հետևանքը լինում է շարժումների համարաստության և ավտոմատիզմի իջեցումը, որն էլ առաջացնում է

¹ М. И. Виноградов, физиология трудовых процессов, изд. ЛГУ, 1958, էջ 332:

² Տե՛ս Վ. Ջ. Գրիգորյան, Ս. Կ. Կարապետյան, Ռ. Հ. Հարությունյան, ռուս-հայերեն ֆիզիոլոգիական բացատրական բառարան, Երևան, 1979, էջ 298:

ձեռագրի ընդհանուր և մասնավոր հատկանիշների փոփոխություններ: Նման հետազոտություններ իրականացնելիս փորձագետը պետք է ուսումնասիրի ենթադրվող կատարողի ձեռագրի մնուշները՝ կատարված, բնականաբար, նորմալ (տվորական) պայմաններում, և կատարի նույնացման հետազոտություն, որը հնարավորություն կտա որոշել ինչպես կայուն, այնպես էլ փոփոխված հատկանիշները: Համեմատական հետազոտման ընթացքում անհրաժեշտ է համատեղել տարբերվող հատկանիշները այն տվյալների հետ, որոնք բնութագրում են ձեռագրի փոփոխությունները, կատարված ցածր ջերմաստիճանի պայմաններում: Եթե փոփոխված հատկանիշների բնույթը համընկնում է այդ տվյալներին, ապա բացահայտված տարբերությունները կարելի է բացատրել նրանով, որ ձեռագիրը գրված է ցածր ջերմաստիճանի պայմաններում: Դրա հետ միաժամանակ, պետք է գնահատել ենթադրվող կատարողի ձեռագրի մնուշներում հայտնաբերված հատկանիշների համընկնումը հետազոտվող փաստաթուղթը կազմող ձեռագրի նույնացման հատկանիշների հետ և պարզել, այդ համընկնումները կազմու՞մ են արդյոք որոշակի անձի ձեռագրին հատուկ հատկանիշների անհատականացնող ամբողջություն: Միայն պետք է նկատի ունենալ, որ այս դեպքում համեմատական հետազոտման համար անհրաժեշտ է ունենալ շատ մնուշներ (ցանկալի է բոլոր տեսակները՝ ազատ, փորձառական, միջանկյալ):

**§ 7. ԱՅՆ ՉԵՌԱԳՐԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՈՆՔ
ԿԱՏԱՐՎԱԾ ԵՆ ԳՐՈՂԻ ԱՆՍՈՎՈՐ
ՀՈԳԵՅԻԶԻՈՒՈՒԿԻԱԿԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ**

Մրանք այն ձեռագրերն են, որոնք գրվում են մահվան մահճում կամ ինքնասպանության պատրաստվելիս և մման այլ դեպքերում:

Նման դեպքերում համեմատական հետազոտությունը իրականացվում է միայն ազատ մնուշներով (վերևում մի առիթով արդեն նշել ենք, որ դիագնոստիկ հարցերը պարզելու համար ևս իրականացվում է ձեռագրի հատկանիշների ուսումնասիրում):

Այս դեպքում նպատակահարմար է հետազոտել նաև գրավոր խոսքի, տեղագրական հատկանիշները: Նման ձեռագրերում հանդիպում են հետևյալ հատկանիշները. ձեռագրի փնթի կատարում, ավելորդ բծեր, քանաքով գրելիս քանաքի սվաղվածություններ, չչորացած քանաքի պատճենավորում, բառերի և տողերի ընդգծումներ կամ խազեր, տառերի կամ առանձին տարրերի ուղղումներ և այլն: Դա, մեր կարծիքով, բացատր-

վում է նրանով, որ նյարդային գործունեության կտրուկ ֆունկցիոնալ խախտումը առաջացնում է տեսողական անալիզատորի և գլխուղեղի կեղևի հսկիչ գործառույթի թուլացում:

Նման հատկանիշներ են նշում որոշ պրակտիկ փորձագետներ, ինչպես նաև այնպիսի նշանավոր ֆիզիոլոգներ, ինչպիսիք են Ա. Ռ. Լուրիան¹, Օ. Պ. Կաուֆմանը²:

Սա խոսում է այն մասին, որ մման հետազոտություններ Ռուսաստանի գիտնականների կողմից իրականացվել են մինչև դատական ձեռագրաբանության հիմքերը ֆիզիոլոգիայի վրա դնելը:

Նման ձեռագրերում էական առանձնահատկություններ են առաջացնում ընդհանուր և տեղագրական հատկանիշներում, խախտվում է շարժման համադասությունը, առաջանում են տառերի անհամաչափություն, շարժումների բարդությունը իջնում է, տառերի կառուցվածքը պարզեցվում, գրանիշների տեղադրությունը մեծանում է, տառերի թեքությունը դառնում է անկայուն:

Պետք է ենթադրել, որ նյարդային համակարգի ֆունկցիոնալ խանգարումը իջեցնում է պրոպրիոռեցեպտորների³ գործունեությունը, որոնք ըստ Ա.Ի. Սլավուցկայայի⁴ համարվում են բոլոր կամային և ոչ կամային շարժումների ակտիվ մասնակիցները:

Նրանք ընկալում են մեխանիկական գրգիռները, առաջացնում են շարժողական ռեֆլեքսներ, մասնակցում են համադասությանը, և առաջատար դեր են կատարում տարածության և ժամանակի ընկալման մեջ:

Նյարդային-հոգեկան ժամանակավոր խանգարման ազդեցությամբ ձեռագրի մասնավոր հատկանիշները էականորեն չեն փոփոխվում: Որոշակի պարզեցումներ են նկատվում տառերի կառուցվածքում (շարժման բարդության պարզեցում), կարող է մեծանալ տառերի էլեմենտների կատարման ձգվածությունը, փոխվել շարժումների հատման կետերը, շար-

¹ А. Р. Лурья, Высшие корковые функции человека и их нарушения при локальных поражениях мозга, М., 1962.

² О. П. Кауфман, Оптическая аграфия при локальном ранении мозга в кн. Неврология военного времени, М., 1949, т.-1.

³ Պրոպրիոռեցեպտոր-մարդու և կենդանիների մեխանաընկալիչների խմբին պատկանող հատուկ նյարդային վերջույթները, որոնք դրված են մկաններում, փակեղևներում, ջլերում, հողերում: Ընկալում են մկանների կծկման, լարման, թուլացման, ձգման, ինչպես նաև կապաններում, փակեղևներում տեղի ունեցող փոփոխությունների հետևանքով առաջացող գրգիռները (Ռուս-հայերեն ֆիզիոլոգիական բացատրական բառարան: Պրոֆ. Վ. Չ. Գրիգորյանի խմբագրությամբ, Երևան, 1979):

⁴ А. И. Славуцкая, Физиологические основы письма, вкн. Труды цинисэ, М., 1967, вып. 1 էջ 78:

ծումները սկսելու և ավարտելու կետերը, շարժման ուղղությունը առանձին էլեմենտներ կատարելիս և այլն:

Առանձնացնելով գրի հատկանիշների ամբողջություն, որը վկայում է շեղումը նորմալ վիճակից, փորձագետը միաժամանակ ուսումնասիրում է ենթադրվող կատարողի ձեռագրի մնուշներում եղած առանձնահատկությունները, ապա անցնում հատկանիշների համեմատական հետազոտման, այդ ճանապարհով պարզելով դրանցից միայն հետազոտվող ձեռագրին հատուկ հատկանիշները:

Հետազոտության հաջորդ փուլը այդ յուրահատուկ հատկանիշների համեմատումն է գիտական այն տվյալներին, որոնք բնութագրում են անձի ձեռագիրը (գիրը), որը գտնվել է նյարդային գործունեության ժամանակավոր ֆունկցիոնալ խախտման վիճակում: Բայց, դրանց համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը գիտական դրույթներին դեռևս հինք չի տալիս որոշակի հետևության հանգելու գրողի վիճակի մասին: Եթե փորձագետի առաջ դրված է լուծել. նույնացնել կատարողին և պարզել՝ տվյալ ձեռագիր տեքստը կատարելիս կատարողը չի՞ գտնվել գերզորգված կամ արգելակման վիճակում, ապա առաջին փուլում նպատակահարմար է. ծանոթանալ փորձաքննության ներկայացված նյութերին, ուսումնասիրել ձեռագիրը՝ առանց հատկանիշների դետալային վերլուծության, ուշադրության արժանացնելով նրա ընդհանուր տեսքին, գրանիշերի քանակին, քանի որ այն նախորոշում է հետազոտության ծավալը, որը պետք է իրականացվի հաջորդ փուլում: Գրի հատկանիշների անջատ հետազոտումը պետք է սկսել մնուշների ուսումնասիրումից, որովհետև այդ դեպքում կբացահայտվեն հատկանիշներ, որոնք բնութագրում են տվյալ անձի ձեռագիրը այնուհետև, ուսումնասիրվում են նրանց նույնատիպությունը, տարբերակման սահմանները նորմալ նյարդա-հոգեբանական վիճակում գրելիս:

Իսկ դա անհրաժեշտ է սովորական նյարդա-հոգեբանական վիճակում կատարված ձեռագրում պահպանված հատկանիշների կայունությունը ուսումնասիրելու համար:

Հետազոտվող ձեռագրի վերլուծությունը ենթադրում է ձեռագիրը բնութագրող հատկանիշների ուսումնասիրումը և դրանց այն մասի հայտնաբերումը, որոնք հատուկ են անձի ձեռագրին, որը գտնվել է հոգեկան անսովոր վիճակում: Այնուհետև կատարվում է համեմատական հետազոտություն, անջատ հետազոտման ժամանակ հայտնաբերված հատկանիշների ամբողջությանը: Համընկնողների հետ կարող են հայտնաբերվել հատկանիշներ, որոնք բացակայում են մնուշներում: Իսկ համընկնող և տարբերվող հատկանիշների գնահատումը կատարվում է ընդունված՝ սովորական մեթոդիկայով:

ՉԼՈՒԽ 17. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏԵԽՆԻԿԱ-ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ

§ 1. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՏԵԽՆԻԿԱ-ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Կրիմնալիստիկական գրականության մեջ այս հարցին քիչ ուշադրություն է դարձվում: Այն դեպքում, երբ այս բնույթի հետազոտությունների սահմանների հստակ որոշումն ունի ինչպես գործնական, այնպես էլ տեսական նշանակություն: Օրինակ՝ պրակտիկայի տեսանկյունից կարևոր նշանակություն ունի փորձաքննության տվյալ տեսակի միջոցով լուծվող հարցերի շրջանակի որոշումը և դրա համար անհրաժեշտ հատուկ գիտելիքները: Հատկապես, որ ՀՀ քրո 122 հոդվածը փաստաթուղթ համարում է հետազոտման մեթոդների առումով բավական բազմաբնույթ օբյեկտներ. «փաստաթուղթ է թղթային, մագնիսական, էլեկտրոնային կամ այլ կրիչի վրա բառային, թվային, գծագրական կամ այլ նշանային ձևով արված ցանկացած գրառում, որով կարող են հաստատվել քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալները»:

Տեսական առումով, ընդհանրապես առարկան որոշվում է գիտելիքների բնագավառներով, որոնք անհրաժեշտ են որոշակի հարցերի լուծման համար: Հետազոտությունների տվյալ տեսակները սահմանագատվում են մյուսներից, նեղացվում կամ լայնացվում են հետազոտության օբյեկտների վերաբերյալ գիտելիքները և դրանց հետ տեղի ունեցող երևույթների օրինաչափությունները:

Հաճախ գիտության առարկան, որպես գիտելիքների բնագավառի, համապատասխանում է նրա պրակտիկ կիրառությանը: Երբեմն էլ դրանք համընկնում են մասնակիորեն: Օրինակ՝ փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտությունը, որպես առանձին գիտելիքների բնագավառ, ունի փաստաթղթերի բովանդակությունը, նյութը, կազմման եղանակը և հատկությունները, ինչպես նաև դրանով «...այնտք է ստուգելու»¹ արդյոք փաստաթուղթը բոլոր այն ռեկվիզիտները, որոնք սահմանված են նման տիպի փաստաթղթերի համար (բլանկը, կնիքների դրոշմակների դրոշմները, համարը, ամիս, ամսաթիվ, տարեթիվը, պաշտոնատար անձանց ստորագրությունը)¹: Իսկ նրա պրակտիկ կիրառության առարկան համարվում են գործի այն հանգամանքները, որոնց պարզա-

¹ Տե՛ս Կոլ. ավտոր Վ. Սպրավочная книга криминалиста, М., изд. Норма, 2000, էջ 98:

բանումը պահանջում է հատուկ գիտելիքներ փաստաթղթերի նյութի բնագավառի վերաբերյալ:

Նշված բնութագիրը լիովին համապատասխանում է գրականության մեջ առաջադրված տեսակետին. «այս կամ այն տեսակի փորձաքննության առարկան որոշվում է համապատասխան բնագավառի առարկայի ուսումնասիրմամբ, որը ենթակա է փորձագիտական հետազոտման¹»:

Գործնական առումով փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտության առարկան պետք է համապատասխանի իր կողմից լուծվող հարցերի ամբողջությանը: Այսինքն՝ այնպես, ինչպես այլ տեսակի փորձաքննությունների դեպքում է: Այդ առարկան գնահատելիս պետք է կողմնորոշվել որոշակի չափանիշներով: «Վերստուգման ակտի կամ փորձագետի եզրակացության տիպի բարդ փաստաթղթի գնահատման չափանիշները ոչ միայն թվաբանական հաշվարկների ճշգրտությունն է, այլ նաև օբյեկտիվությունը, ներքին տրամաբանությունը, տեղեկատվության հիմնավորվածությունը: Այդ պահանջների թերագնահատումը հաճախ թանկ է մատում²»:

Մասնագիտական գրականության մեջ տարբեր տեսակետներ են արտահայտվել փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման առարկայի մասին: Ն. Վ. Թերզիևը, օրինակ, գտնում է, որ «փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտության առարկան սահմանազատելիս լավ է ելնել հետազոտության խնդիրներից³»:

Այդ հանձնարարականը ճշգրտելու նպատակով նշենք, որ եթե առաջնորդվենք նրա բառացի նշանակությունից, ստացվում է, որ վերացված ցանկացած սկզբնական բովանդակության վերականգնումը կմտնի փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման մեջ, որն իրականում այդպես չէ: Օրինակ՝ արժեթղթի վերացված համարի վերականգնումը մտնում է փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման առարկայի մեջ, իսկ հրագենի, ավտոմեքենայի շարժիչի վերացված համարի վերականգնումը՝ ոչ: Նշանակում է պետք է խոսել ոչ թե ընդհանրապես հետազոտման խնդիրների մասին, այլ որոշակի օբյեկտների նկատմամբ ունեցած խնդիրների: Դրա համար էլ փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման առարկան

¹ И. Л. Петрухин, Экспертиза как средство доказывания в советском уголовном процессе, М., 1964, էջ 98:

² А. М. Ларин, Криминалистика и паракриминалистика, М., 1996, էջ 81:

³ Н. В. Терзиев, А. А. Эйсман, Введение в криминалистическое исследование документов, ч. 1, М., 1949, էջ 19:

բնութագրելիս անհրաժեշտ է հստակ որոշել փորձաքննության այդ տեսակի հետազոտման օբյեկտը և համակարգել նրա առջև դրված խնդիրները:

Փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման առարկայի մեջ չեն մտնում մագնիսական, էլեկտրոնային կրիչների վրա արված գրառումները, որոնց հետազոտման մեթոդիկային սույն աշխատանքում հատկացրել ենք առանձին գլուխ՝ «կրիմինալիստիկական ֆոնոսկոպիա»:

Փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման առարկայի մեջ չպետք է մտնի նաև լուսանկարների հետազոտումը, քանի որ այն վերաբերում է լուսանկարի տեսակի որոշմանը, պոզիտիվը ստանալու եղանակին, լուսանկարի օգնությամբ կատարվող չափումներին և այլն:

Այս խնդիրները չեն համաձայնեցվում փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման խնդիրների հետ, որոնց շրջանակներում ֆոտոապարատի կառուցվածքը, լուսանկարահանման և այն տպելու եղանակներն ուսումնասիրվում են ոչ թե որպես հետազոտման օբյեկտներ, նրանց հատկությունները բացահայտելու նպատակով, հետագայում օբյեկտը որոշելու համար, այլ որպես հետազոտման հնարքներ օբյեկտների հատկանիշների հայտնաբերման և նրանց պատկերման նպատակով: Լուսանկարների հատկությունները և դրանք բացահայտելու համար առարկաների հատկությունները ընդհանուր ոչինչ չունեն գրավոր փաստաթղթերի և դրանք պատրաստելու համար օգտագործվող առարկաների հատկությունների հետ:

Լուսանկարների փորձաքննությունը որոշ դեպքերում կարող է կլանվել փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտմամբ: Օրինակ՝ լուսանկարով փաստաթղթի հետազոտությունը պարզելու համար, նրա բովանդակությունը չի՞ փոփոխվել արդյոք հավելագրմամբ: Այդ հարցը լուծելուց առաջ պետք է նախ պարզել (երբեմն), թե փաստաթուղթը ֆոտոմոնտաժի չի՞ ենթարկվել: Սակայն, այդ խնդիրները ըստ էության տարբեր են և կարող են լուծվել տարբեր տեսակի հետազոտությունների շրջանակներում:

Այլ դեպքերում դատական փորձաքննության որոշակի տեսակի առարկան կախման մեջ է դրվում կիրառվող մեթոդներից: Մասնավորապես, տեսակետ է հայտնվել այն մասին, որ շտրիխների նյութի քիմիական հետազոտությունը փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտությանը չի վերաբերում:

Քանի որ հետազոտման մեթոդները բնութագրում են առաջադրված խնդիրների լուծման կամ, որ նույնն է, որոշակի օբյեկտների ուսումնասիրման եղանակները, նրանց մասին հարցերը ինքնուրույն են համարվում և չեն մտնում հետազոտման առարկայի հասկացության մեջ: Հետևաբար, փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական փորձաքննության առարկան որոշվում է հետազոտման խնդիրներով և օբյեկտներով: Այլ կերպ ասած, փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման առարկայի հասկացությունը պետք է բովանդակի լուծման ենթակա խնդիրների թվարկը՝ որոշակի շրջանակի օբյեկտների նկատմամբ:

Փորձագիտական պրակտիկան վկայում է, որ փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման լուծմանը առաջադրվում են շատ բազմաբնույթ խնդիրներ, որոնք կարելի է համակարգել հետևյալ խմբերի.

1. Փաստաթուղթը և նրա առանձին մասերը կազմելու եղանակի պարզումը (բլանկը պատրաստելու եղանակը, չի^o օգտագործվել արդյոք վաղօրոք նախապատրաստված բլանկ կամ փաստաթղթի մաս, փաստաթուղթը պատրաստված չէ^o տարբեր փաստաթղթերի մասերից, կնիքի, դրոշմակի, տեքստի, ստորագրությունների կատարման եղանակը, գրող գործիքի տեսակը, շտրիխների նյութի բնույթը, օրինակի համարը՝ եթե մեքենագրված է պատճենահան թղթի միջոցով): Որոշ հեղինակներ, պրակտիկայում ընդունված այս թվարկին ավելացնում են նաև հետևյալ հարցերը. մինևույն եղանակո՞վ են պատրաստված փաստաթղթերը կամ նրանց բլանկները, մինևույն տպագրական ժողովածուով են դրանք տպագրված¹: Կարծում ենք, նշված հարցերի ուսումնասիրումն իսկապես անհրաժեշտ է, բայց նրանք վերաբերում են ծագման աղբյուրի պարզաբանմանը:

2) Փաստաթուղթը կամ նրա մասերը կատարելու ժամանակի պարզաբանումը (բացարձակ կամ հարաբերական): Այստեղ կմտնեն հետևյալ հարցերը. հատվող շտրիխների կատարման ժամանակագրական հաջորդականությունը, մինևույն հիմքի վրա^o են կատարվել նույն փաստաթղթի տարբեր օրինակները՝ կատարված պատճենահան թղթի միջոցով: Մինևույն, թե տարբեր ժամանակներում են կատարվել նույն փաստաթղթի տարբեր մասերը, դրանց կատարման հաջորդականությունը:

¹ И. В. Виноградов, Г. И. Кочаров, Н. А. Селиванов, Экспертиза на предварительном следствии, М., 1966, էջ 45-46:

3. Փաստաթուղթը լրացնելուց հետո նրա բովանդակության մեջ փոփոխություններ մտցնելու փաստի պարզաբանումը (քիմիական նյութերի ազդեցությամբ, գրառումների վերացումը մեխանիկական եղանակով, հավելագրում, հավելատույում, առանձին մասերի վերաստուճում): Փաստաթղթի բովանդակության փոփոխումը հավելագրմամբ կամ հավելատույմամբ սերտորեն կապված է փաստաթղթի տարբեր մասերի կատարման ժամանակի (հարաբերական) հետ, քանի որ այս դեպքում խոսքը գնում է գրառումները տարբեր ժամանակներում կատարելուն: Բայց ելնելով հետազոտման ընդհանուր դասակարգման խնդիրներից, անհրաժեշտ է հավելագրման հասկացությունը առանձնացնել փաստաթղթերի տարբեր մասերի կատարման հաջորդականությունից, դրանք տեղավորելով առանձին բաժիններում: Այս սահմանազատումը բացատրվում է նրանով, որ երբ խոսքը գնում է տարբեր գրառումների կատարման հաջորդականության որոշման մասին, պետք է նկատի ունենալ, որ գլխավորը նախկինում եղած բովանդակության փոփոխումը չէ, այլ փաստաթղթի կազմման կարգի խախտումը: Իսկ երբ հարցը վերաբերում է հավելագրման առկայության կամ բացակայության մասին, էական են դառնում եղած բովանդակության մեջ կատարված փոփոխությունները: Դրա համար էլ հավելագրման պարզաբանումը նպատակահարմար է մտցնել այն բաժնում, որտեղ ուսումնասիրվում են փաստաթղթում մտցված փոփոխությունները:

4. Անտեսանելիի և վատ տեսանելիի պարզաբանումը: Այս խնդիրը կարող է ուղեկցել գրառումներում փոփոխությունների փաստի բացահայտմանը, կարող է և լինել ինքնուրույն խնդիր: Երբ քննիչի կամ դատարանի պահանջով պարզվում է, որ փաստաթղթի բովանդակությունը ենթարկվել է որևէ փոփոխության, ապա տրամաբանորեն հարց է առաջանում պարզել սկզբնական բովանդակությունը: Նման դեպքերում վերականգնվում են գրառումները, որոնք վերացվել են քիմիական նյութերի ազդեցությամբ, արևի ճառագայթների, թթվածնի, բարձր ջերմաստիճանի ազդեցությամբ, մեխանիկական եղանակով, ծածկված, խզրզված տեքստերը և այլն:

5. Փաստաթղթի առաջացման աղբյուրի պարզաբանումը՝ ըստ պատրաստման եղանակի կամ պահպանման տեղի (սիննայն եղանակով են պատրաստվել տարբեր փաստաթղթերը, փաստաթղթի նյութի (թղթի), մատիտների, թանաքների, տուշի, սոսնձի խմբային պատկանելության որոշումը, գրամեքենաների, տպագրական ձևերի (բլանկների), դրամարկղային ապարատների, գրչածայրերի, գնդիկավոր գրիչների և այլնի իրենատիֆիկացումը, մասերով ամբողջի պարզաբանումը և այլն:

6. Մեքենագրողի պարզաբանումը որոշ չափով տարբերվում է փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալխստիկական հետազոտումից: Այն սահմանակցում է ձեռագրով կատարողի (երբեմն նաև հեղինակի) պարզաբանմանը և հարցի լուծման համար պահանջում է գրի որոշ հատկանիշների գնահատում: Բայց քանի որ այդ դեպքերում փաստաթուղթը իրենից ներկայացնում է ոչ թե ձեռագիր, այլ մեքենագիր նշանների համակցություն, ապա հարցի լուծումը մեծամասամբ կախված է մեքենագիր հատկանիշների վերլուծությունից: Դրա համար էլ այդ խնդիրը վերագրվում է փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալխստիկական հետազոտմանը:

7. Վնասված (պատառոտված) փաստաթղթերի պահպանումն ու վերականգնումը:

Հետազոտությունների քվարկված ուղղությունները միմյանցից մեկուսացված չեն: Դրանք սերտորեն միահյուսված են: Դա նշանակում է, որ մեկ ընդհանուր խնդիր լուծելու համար անհրաժեշտություն է առաջանում լուծել մի շարք մասնավոր խնդիրներ, որոնք վերաբերում են տարբեր խմբերի:

Նշվածը վկայում է փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալխստիկական հետազոտման առարկայի միասնականության մասին, որը պայմանավորված է տվյալ տեսակի հետազոտությունների ձևավորման ինքնուրույնությամբ: Օրինակ՝ իդենտիֆիկացման նպատակների համար անհրաժեշտություն է առաջանում նախապես հայտածել վատ երևացող օբյեկտները:

Իսկ իր հերթին էլ իդենտիֆիկացումը կարող է հանդես գալ որպես միջանկյալ նպատակ հավելագրման կամ հավելատյան առկայության կամ բացակայության հարցերը լուծելիս կամ ստորագրության կատարման եղանակը որոշելիս: Փաստաթղթերի նյութի խմբային պատկանելության որոշումը կապված է նյութի բնույթի պարզաբանման հետ, իսկ խմբային պատկանելության որոշումը կարող է հատկանիշներից մեկը լինել վերատոսնձման առկայությունը կամ բացակայությունը որոշելիս:

Ինչպես նշեցինք, հետազոտման խնդիրները բնութագրում են փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալխստիկական փորձաքննության մի կողմը, իսկ օբյեկտները՝ մյուս, քանի որ այդ խնդիրները միշտ դրվում և լուծվում են որոշակի օբյեկտների նկատմամբ: Հետազոտվող օբյեկտների հատկությունների խորը իմացությունը հեշտացնում է առաջադրված խնդիրների լուծումը, դրանով էլ համարվում է փորձագետի հատուկ գիտելիքների անհրաժեշտ տարրը:

Կրիմինալխստիկական գրականության մեջ տեխնիկա-կրիմինալխստիկական հետազոտման օբյեկտներին վերաբերող հարցերը լրիվ մշակ-

ված չեն: Հեղինակների մեծ մասը գտնում է, որ փորձաքննության այդ տեսակի օբյեկտ համարվում է փաստաթուղթը և սահմանափակվում է փաստաթղթերի այն տեսակների թվարկմամբ, որոնք օգտագործվում են պետական և հասարակական-քաղաքական կյանքում:

Այլ հեղինակներ այդ թվարկը լրացնում են իրեղեն ապացույց-փաստաթղթերի հատկանիշներով: Միայն Ն. Վ. Թերզիևն է իր աշխատություններից մեկում ավելի մանրամասն քննարկում այդ հարցը և տալիս է անմիջական հետազոտման օբյեկտի հասկացությունը: Այդ օբյեկտները նա դասակարգում է. գրանիշերի, կնիքների և դրոշմակների դրոշմներ, գրելու նյութը և նման¹:

Հետաքրքիր տեսակետ է արտահայտել Լ. Ի. Պետրուխինը, գտնելով, որ կրիմինալիստիկական հետազոտման օբյեկտի առաջացման պայմանները բնութագրող փաստերը (փաստաթուղթը կազմողի դիրքը կազմելու պահին և այլն) մի շարք դեպքերում կարևոր նշանակություն են ստանում հարցը ճիշտ լուծելու համար: Դրա համար էլ նրանք ենթակա են ապացուցման և համարվում են կրիմինալիստիկական փորձաքննության օբյեկտի լրացումներ²: Սակայն, այս տեսակետը պետք է ընդունել որոշ վերապահումով:

Կրիմինալիստիկական հետազոտման օբյեկտների առաջացման պայմանների մասին տեղեկությունների նշանակությունը անվիճելի է: Դրանք փորձագետի կողմից օգտագործվում են հետևությունները կազմելիս՝ հայտնաբերված հատկանիշները գնահատելու համար: Բայց դրանք հետազոտման օբյեկտին վերապահելու հնարավորությունը համարենք վիճելի, քանի որ այդ տեղեկությունները փորձագիտական հետազոտման ենթակա չեն:

Մի խոսքով, փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման հիմնական օբյեկտը գրավոր փաստաթուղթն է: Այն համարում ենք հիմնական, քանի որ փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական փորձաքննության բոլոր խնդիրները կապված են այդ օբյեկտի հետազոտման հետ: Սակայն, փաստաթղթի ընդհանուր հետազոտություն հազվադեպ է կատարվում: Մովորաբար այն սահմանափակվում է այն կազմող որոշակի մասերով, որոնք Ն. Վ. Թերզիևը անվանում էր հետազոտման անմիջական օբյեկտներ: Վերջինս, որպես կանոն, լրիվ ծավալով փորձագետին ցույց չի տրվում: Փորձագետը պետք է կարողանա

¹ Տե՛ս վերը նշված աշխությունը, էջ 20:

² Տե՛ս Պետրուխինի նշված աշխատանքը՝ էջ 8:

ինքն այն առանձնացնել, ելնելով որոշակի փաստաթղթի նկատմամբ առաջադրված հարցից և դրա լուծման ուղիների վերաբերյալ իր գիտելիքներից:

Փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական փորձաքննության օբյեկտներ կարող են լինել նաև պատահական առարկաներ, այնպիսիք, որոնք կրում են անմիջական հետազոտման օբյեկտներ, և որոնց վերաբերյալ պահանջվում է լուծել խնդիրներ, մշակված փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական փորձաքննության հետազոտությունների մեթոդիկաների և հատկանիշների գնահատման սկզբունքների կիրառմամբ:

Փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական փորձաքննության առարկայի մասին խոսելիս պետք է լուծել այն հարցը, թե փորձագետի իրավասության մեջ մտնու՞մ է փաստաթղթի իրական կամ կեղծված լինելը պարզելու նպատակով առաջադրված հարցը, որը հաճախ ներկայացվում է փորձաքննությունն ճշանակող անձի կողմից: Նկատենք, որ փաստաթղթի իրական լինելը չի կարող մտնել փորձագետի իրավասության մեջ: Նա կարող է հետևություն անել փաստաթղթի պատրաստման եղանակի մասին, որի հիման վրա քննիչը վերլուծելով գործի մյուս հանգամանքները, կհանգի իրավաբանական հետևության՝ կեղծման մասին:

Պետք է նկատել, որ փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտության հնարավորությունները բնական ու տեխնիկական գիտությունների զարգացմանը զուգընթաց մեծանում են: Բնականաբար, դա պայմանավորում է փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման առարկայի ընդլայնումը, որպես պրակտիկ գործունեության:

§ 2. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՔՆՆՉԱԿԱՆ ՉՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Համաձայն ՀՀ քր. դատ. օր. 217 հոդվածի. «Հանցագործության հետքերը, այլ նյութական օբյեկտները հայտնաբերելու, հանցագործության դեպքը, ինչպես նաև գործի համար նշանակություն ունեցող մյուս հանգամանքները պարզելու նպատակով քննիչը կատարում է տեղանքի, շինությունների, առարկաների, կենդանիների, մարդու կամ կենդանու դիակի զննում»:

Փաստաթղթերի զննությունը քննչական գործողություն է, որն իրականացվում է քրեադատավարական օրենսգրքի նորմերի հիման վրա և

դրանց անշեղ պահպանմամբ: Նրա էությունը փաստաթղթի ուսումնասիրումն է համապատասխան հնարքների և միջոցների օգնությամբ, փաստաթղթերի ընդհանուր տվյալների, ինչպես նաև այն հատկանիշների և առանձնահատկությունների բացահայտման և ֆիքսման նպատակով, որոնք կարող են վկայել գործի համար նշանակություն ունեցող փաստերի ու հանգամանքների մասին:

Փաստաթղթերի զննությունը պետք է ունենա հետազոտական, ստեղծագործական բնույթ, քանի որ քննիչի գիտելիքներից, փորձից և զննություն կատարելու կարողությունից է կախված հանցագործությունների քննության ու բացահայտման հաջողությունը: Այստեղ նկատի է առնվում ինչպես անհրաժեշտ գիտատեխնիկական միջոցներից ու հնարանքներից օգտվելու, այնպես էլ հայտնաբերվածի նկատմամբ տրամաբանական մտածողության, դատողությունների, վերլուծությունների կարողությունը:

Ինչպես իրեղեն ապացույց հանդիսացող (կամ այդպիսին դառնալու հավակնող) փաստաթղթերը, այնպես էլ նրանցով պարզաբանվող փաստերը չափազանց բազմազան են: Հետևաբար և բազմազան կարող են լինել այն խնդիրները, որոնք առաջանում են յուրաքանչյուր որոշակի դեպքում:

Այդ բազմազանությունից հնարավոր է խմբավորել փաստաթղթերի քննչական զննության հիմնական խնդիրները:

Փաստաթղթերի քննչական զննության առաջին հիմնական խնդիրը պետք է համարել փաստաթղթի ընդհանուր բնութագրի որոշումը: Այսինքն՝ ի՞նչ փաստաթուղթ է զննվում (բեռնագիր, տեղեկագիր, տեղեկանք և այլն), ու՞մ կողմից և ու՞մ է այն տրված կամ հասցեագրված, ինչի մասին է փաստաթղթի բովանդակությունը, մյուս ռեկվիզիտները, համարը, տարեթիվը, ամիսը, ամսաթիվը և այլն, ինչպիսի՞ն է փաստաթղթի արտաքին տեսքը:

Փաստաթղթի զննության երկրորդ հիմնական խնդիրը պետք է համարել այն հատկանիշների և առանձնահատկությունների պարզաբանումը, որոնք կարող են վկայել գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերի և հանգամանքների մասին:

Երրորդ հիմնական խնդիրն այն է, թե ինչպիսի՞ հարցեր պետք է առաջադրվեն փորձագետին և ի՞նչ նյութեր պետք է ուղարկել նրան՝ համեմատական հետազոտման համար:

Նշված հիմնական խնդիրները լուծելիս փաստաթղթերի զննության ժամանակ կարող են առաջանալ նաև որոշակի մասնավոր խնդիրներ, ել-

ենլով գործի հանգամանքներից, զննվող փաստաթղթերի բնույթից և առաձնահատկություններից:

Առանձին ուշադրության պետք է արժանացնել փաստաթղթի բովանդակությանը: Պետք է ուսումնասիրել ոչ միայն հիմնական տեքստը, այլև բոլոր գրառումները, մակագրությունները, փաստաթղթի հիմնական և հակառակ երեսին, պարզել բոլոր գրառումների բովանդակությունը, իմաստը, նշանակությունը, դրանք համադրել միմյանց:

Փաստաթղթի արտաքին տեսքը զննելիս պետք է ուշադրություն դարձնել թղթի, շտրիխների վիճակին, մաշվածության աստիճանին, վնասվածքների առկայությանը և այլն:

Փաստաթղթերի զննությունն սկսվում է տեսողական ընկալումից, այսինքն՝ սովորական դիտարկումներից: Սակայն սովորական պայմաններում, անգն աչքով կատարվող դիտարկումները, բնականաբար, հնարավորություն չեն կարող տալ տարբերելու մանրագույն դետալները, նրանց գույները, երանգները, այլ առանձնահատկություններ, հատկապես նկատի ունենալով, որ երբեմն դրանք վկայում են փաստաթղթում կատարված կեղծիքի կամ այլ փոփոխությունների մասին: Դրանց հայտնաբերման համար անհրաժեշտ է օգտվել քննիչների տրամադրության տակ եղած համապատասխան գիտատեխնիկական միջոցներից, մասնավորապես՝ խոշորացույցներից, մանրադիտակներից, թեք ընկնող կամ թափանցող ինչպես նաև ուլտրամանուշակագույն ճառագայթների աղբյուրներից և այլն: Զննչական զննության ժամանակ փաստաթուղթը չի կարելի ենթարկել մեխանիկական կամ քիմիական ազդեցությունների: Կարելի է օգտվել միայն այնպիսի տեխնիկական միջոցներից, որոնք չեն խախտի փաստաթղթի սկզբնական տեսքը:

Փաստաթղթի քննչական զննության ժամանակ ստացված տվյալները ամփոփվում են արձանագրության մեջ, որը կազմվում է ՀՀ քր. դատ. օր. 121, 218 հոդվածների պահանջներին համապատասխան:

Զննության ենթակա փաստաթղթերը պետք է անհատականացվեն և արձանագրության մեջ նկարագրվեն այնպես, որպեսզի բացառվի կասկածը, որ խոսքը վերաբերում է հատկապես տվյալ փաստաթղթին: Այս պայմանների ապահովման համար արձանագրության մեջ պետք է ներկայացնել զննման ենթակա փաստաթղթի հետևյալ տվյալները.

ա) փաստաթղթի անվանումը կամ տեսակը (բեռնագիր, տեղեկագիր, նամակ, երկտող և այլն),

բ) ու՞մ կողմից և ու՞մ է տրված կամ հասցեագրված, տրման թվականը, համարը,

գ) ինչի՞ մասին է փաստաթղթի բովանդակությունը,

դ) փաստաթղթի նյութը (տպագրական բլանկ, դպրոցական տողագծունով թերթ, սովորական գրելու թուղթ և այլն), չափսերը, տողագծերի ձևը, եթե բլանկ է՝ ո՞ր համարի ձևն է, իսկ ոչ ստանդարտի դեպքում, նրա նկարագիրը,

ե) ինչո՞վ է կատարված փաստաթուղթը. քանաքով (գույնը), մատիտով (գրաֆիտե, պատճենահան, գունավոր (ո՞ր գույնի) և այլն), գրված է պատճենահան թղթի միջոցով (ո՞ր գույնի), մեքենագրված է (ո՞ր գույնի ժապավենով), առաջի՞մ օրինակն է, թե՛ պատճենը և այլն,

զ) կնիքի և շտամպի դրոշմների նկարագիրը, բովանդակությունը, ներկի գույնը, դրանց ձևը, դրոշմի հստակությունը և այլն,

է) փաստաթղթի վրա եղած ստորագրությունները ու՞մ անունից են նշանակում (ստացողի, ընդունողի, պահեստապետի, գանձապահի), հնարավորության դեպքում պետք է ցույց տալ ստորագրության տառալին կազմը, առանձնահատկությունները,

ը) փաստաթղթի վրա եղած մյուս առանձնահատկությունները (ծավվածքներ, կարի անցքեր, տսնձի հետքեր, ծածկված գրառումներ, թղթի եզրերի նկարագիրը, արյան կամ այլ նյութերի բծեր և այլն):

Եթե զննության ժամանակ անհրաժեշտություն է առաջանում փաստաթուղթը լուսանկարել (երբ նրա առանձնահատկությունները բարդացնում են նկարագրությունը կամ երբ որոշ հատկանիշներ կարող են վերանալ և այլն), այդ մասին ևս նշվում է արձանագրության մեջ և քննիչի ստորագրությամբ հաստատվելուց հետո լուսանկարները կցվում են արձանագրությանը:

§ 3. ՍԿԶԲՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Դատական պրակտիկային հայտնի մի շարք հանցագործություններ կամ դրանց որոշ դրվագներ կատարվում են փաստաթղթերի սկզբնական բովանդակությունը փոխելու միջոցով, որն արտահայտվում է հավելագրումների, ջնջումների, կերագծման և այլ եղանակներով: Նման դեպքերում անհրաժեշտություն է առաջանում պարզելու փոփոխման փաստը և վերականգնելու փաստաթղթի սկզբնական բովանդակությունը:

Չ ն ջ ու մ

Չնջումը փաստաթղթի բովանդակության լրիվ կամ մասնակի վերացումն է մեխանիկական եղանակով, այսինքն՝ շտրիխների մեխանիկական վերացումն է քրթից:

Որպես ջնջման գործիք կարող են ծառայել պինդ առարկաները՝ սրիչ, սուր դանակ, ինչպես նաև չեչոտ մակերես ունեցող առարկաներ (ռետին, թուղթ և այլն):

Չնջումները այս կամ այն չափով առաջացնում են թղթի մակերեսի վնասում, որն արտահայտվում է փայլի կորուստով, ծծողունակության մեծացմամբ, մանրաթելերի զգգվածությամբ:

Չնջումը թողնում է բավական նկատելի հետքեր, այդ պատճառով էլ կատարողները հաճախ դիմում են ջնջվածը քողարկելուն՝ հարթեցնում են ջնջվածքը ողորկ առարկաներով (բաժակով, գդալով, եղունգով և այլն), կեղտոտում են փաստաթուղթը, տրորում են՝ տալով նրան մաշված տեսք:

Չնջման որակը կախված է 1) ներկի բաղադրությունից, օրինակ՝ մատիտի շտրիխները գտնվում են թղթի մակերեսին, չեն ներծծվում նրանում, և ջնջումը հեշտանում է, այսինքն, թողնում է միայն թույլ երևացող հետքեր, 2) ներկի խտությունից, 3) թղթի որակից՝ լավորակ թղթի վրա ջնջում կատարելը մի քանի անգամ ավելի հեշտ է, 4) ջնջելու համար օգտագործվող գործիքից:

Չնջումները բնութագրող հատկանիշները կարելի է խմբավորել հետևյալ կերպ՝

1. Հատկանիշներ, որոնք բնութագրում են փաստաթղթի նյութի փոփոխությունները:

2. Տպագրական տողագծերի և պաշտպանական ցանցի խախտում:

3. Չնջված տեքստի շտրիխների մնացորդների առկայություն:

4. Քողարկման հատկանիշներ:

Առաջին խմբի մեջ մտնում են հետևյալ հատկանիշները՝

1. ա. Թղթի բարակեցում. կարելի է հայտնաբերել փաստաթուղթը քափանցող լույսի տակ դիտելով և լուսանկարելով նույնպիսի լույսի օգնությամբ: Միայն հետևությունների չհանգելու և թյուրիմացությունների տեղիք չտալու համար, այստեղ պետք է հաշվի առնել, որ վատորակ թղթերի որոշ տեսակների հաստությունը նրա տարբեր մասերում տարբեր է:

բ. Չնջվածքի տեղում թղթի փայլի բացակայություն. հայտնաբերվում է թեք ընկնող կամ ռեֆլեկտորային (ուղղահայաց) լույսի տակ զննելիս:

2. Մանրաթելերի զգգվածություն. պարզ տեսանելի է դառնում փաստաթուղթը թեք ընկնող լույսի տակ զննելիս: Մանրաթելերը լավ տեսանելի են դառնում մաս MBC-1 մանրադիտակի տակ կատարվող դիտարկումներից:

3. Ներսունձման խախտում. սա կարող է լինել ներքին և արտաքին, հայտնաբերվում է յոդի գոլորշիներով ծխահարելով:

Ջնջված տեղերում յոդի գոլորշիները ավելի շատ են մատում, որի հետևանքով այդ տեղերը ներկվում են մուգ շագանակագույն: Պրոֆ. Ն. Վ. Թերզիևը առաջարկում է կիրառել հետևյալ քիմիական բաղադրատոմսը,

ա. քլորական կալցիումի հագեցված լուծույթ,

բ. բյուրեղային յոդից բաղկացած լուծույթ-1գ, յոդական կալիում-2գ և ջուր-97մգ: Օգտագործելուց առաջ խառնում են 90 տոկոս առաջին և 30 տոկոս երկրորդ լուծույթից, ստացված հակազդակը փափուկ վրձինով քսում են փաստաթղթի կասկածելի մասի հակառակ կողմին: Դրա ազդեցության տակ ջնջված մասը գունավորվում է մուգ շագանակագույն, իսկ ջնջվածքի հարևան մասերը ստանում են թույլ դեղին գունավորում:

Երբ անհրաժեշտություն է առաջանում փաստաթղթին տալ այն տեսքը, որ ուներ փաստաթուղթը մինչև հակազդակի ազդեցությանը ենթարկելը, ապա փաստաթղթի մշակված տեղին քսում են քացախաթթվական մատրիումի լուծույթ:

Եթե ջնջվածքի տեղում գրված է նոր տեքստ (թանաքով), ապա տեքստի շտրիխներում նկատվում է ճապաղություն: Բացի այդ, ջնջվածքի տեղը ուլտրամանուշակագույն ճառագայթների ազդեցությամբ այլ լյումինեսցենցիա է առաջացնում: Խախտվում է պաշտպանական ցանցը, որը շատ բարակ գծերից կազմված նախշ է, ինչպես նաև տողագծերը, որոնք գտնվում են ջնջումների տեղերում: Ջնջվածքի տեղը հայտնաբերվում է սովորական զննումից և թեք ընկնող լույսի տակ կատարվող դիտարկումներից:

Վերացված տեքստի կամ շտրիխների մնացորդների հայտնաբերումը ոչ միայն հաստատում է ջնջվածքի փաստը, այլև լուծում է երկրորդ խնդիրը՝ նախկին տեքստի վերականգնումը:

Ա) Ջնջված տեքստը հայտնաբերելու համար, եթե այն գրված է եղել մատիտով, կարևոր նշանակություն ունեն սեղմման հետքերը, որոնք կարող են մնալ փաստաթղթի վրա և այն թղթերի վրա, որոնք հետազոտելի տեքստը գրելիս գտնվել են նրա տակ: Փաստաթղթերի վրա ռելիեֆային շտրիխները ավելի պարզ կերևան նրա հակառակ երեսին, ուստի, հետա-

գոտելիս անպատճառ այն պետք է զննել և լուսանկարել թեք ընկնող ճառագայթների տակ:

բ. Նուսագտիչների միջոցով լուսանկարելու (գունազատող լուսանկար) և հետագայում անգատիվի կոնտրաստը ուժեղացնելու (կոնտրաստիայի) միջոցով: Այս մեթոդով ջնջված տեքստը վերականգնել հնարավոր է, եթե պահպանվել են նախկին տեքստի ներկի մնացորդներ:

գ. Ուլտրամանուշակագույն ճառագայթների օգտագործմամբ. փաստաթուղթը լուսանկարելով անդրադարձող ուլտրամանիշակագույն ճառագայթների տակ կամ ուլտրամանուշակագույն լյումինեսցենցիայի պատկերը լուսանկարելով: Ջնջվածքները հայտնաբերվում են ֆլուորեսցենցիայի տարբերությամբ, նրանք ավելի մուգ են երևում, քան փաստաթղթի չվնասված մասերը:

դ. Լավ արդյունք է տալիս ինֆրակարմիր լյումինեսցենցիայի հարուցումը և լուսանկարումը: Այս մեթոդը կիրառելի է այն դեպքերում, երբ տեքստը գրված է թանաքով կամ պատճենահան մատիտով: Այն դեպքերում, երբ ջնջված տեքստը գրված է եղել գրաֆիտե մատիտով, տուշով կամ տպված է եղել սև ժապավեն ունեցող գրամեքենայով կամ մրուրային այլ նյութերով, շտրիխների մնացորդները կարելի է հայտնաբերել փաստաթուղթը ինֆրակարմիր ճառագայթներում լուսանկարելով:

ե) Ջնջված տեքստը կարելի է վերականգնել նաև դիֆուզիա պատճենահանման մեթոդի կիրառմամբ: Այս մեթոդը լավ արդյունք կտա այն դեպքում, երբ տեքստը գրված է անիլինային ներկերով (թանաք, պատճենահան մատիտ և այլն): Դիֆուզիա պատճենահանման մեթոդի ֆիզիկաքիմիական էության հիմքում ընկած է օպտիկական սենսիբիլացման (զգայունության բարձրացման) էֆեկտը: Անիլինային ներկերը համագործակցելով հալոիդային արծաթի հետ, լայնացնում են սենսիբիլացման չենթարկված ֆոտոնյութերի գունազգայնության սահմանները, այսինքն՝ առաջացնում են օպտիկական սենսիբիլացման էֆեկտ:

Պետք է, սակայն, մշել, որ չնայած արդյունավետությանը, այս մեթոդը պետք է կիրառել միայն այն դեպքում, երբ հետազոտության մնացած մեթոդները արդյունք չեն տվել, որովհետև այս մեթոդի կիրառումը կարող է զուգորդվել փաստաթղթի փչացմամբ:

Պրոֆ. Պոտապովը առաջարկում է ջնջվածքը հայտնաբերելու համար տաքացնել փաստաթուղթը կամ արդուկել: Մեր կարծիքով պետք է խուսափել հետազոտության այդ մեթոդից, որովհետև այն կարող է վնասել փաստաթուղթը:

Որոշ դեպքերում ջնջված տեքստերը կարելի է հայտնաբերել քիմիական մեթոդների օգնությամբ: Սա հատկապես վերաբերում է երկաթե ա-

դադային (դուբիլային) թանաքով կատարված շտրիխներին (մշակվում է ծծմբային ամոնիումով, ծծմբաջրածնով և այլն):

Փորձագետի եզրակացությանը կից կազմվում է ֆոտոադրուսակ, որի մեջ պետք է տեղ գտնեն հետևյալ լուսանկարները.

ա) փաստաթղթի ընդհանուր տեսքը,

բ) փաստաթղթի ջնջված մասի լուսանկարը՝ մեծացրած,

գ) նույն մասի լուսանկարը՝ ջնջման հատկանիշներով,

դ) լուսանկար՝ հայտնաբերված շտրիխների մնացորդներով: Եթե այդ մնացորդներով հնարավոր է կարողալ նախկին տեքստը, նպատակահարմար է այն շրջագծել: Այդ դեպքում այս լուսանկարի հետ պետք է լինի նաև այսպես կոչված «հսկիչ» լուսանկար (առանց շրջագծման),

ե) հայտնաբերված տեքստով լուսանկարը:

Փորձագետի եզրակացության մեջ պարտադիր կերպով պետք է ցույց տալ բոլոր այն մեթոդները, որոնք կիրառվել են ջնջվածքը հայտնաբերելու և նախկին տեքստը վերականգնելու համար:

Հատկապես մանրամասն պետք է նկարագրել այն հնարքները, որոնց օգնությամբ ստացվել է արդյունքը: Եթե արդյունք չի ստացվել, այսինքն՝ հնարավոր չի եղել վերականգնել նախկին տեքստը, այս դեպքում ևս նկարագրվում են կիրառված բոլոր մեթոդները:

Կ ե ր ա գ ծ ու մ

~~Կերագծումը շտրիխների ներկի գունաթափումն է կամ քայքայումը՝ քիմիական եղանակով:~~

Կերագծման չեն ենթարկվում գրաֆիտային մատիտը, տուշը, հատուկ թանաքները և այլն: Որպես ուտիչ նյութեր հաճախ օգտագործվում են բլորի միացությունները՝ բլորակիր, բլորաջուր և այլն: Այդ ռեակտիվների ազդեցության տակ տեքստի ներկի գույնը թուլանում է: Թղթի հետագա սպիտակացումը կատարվում է արևի ճառագայթների կամ սպիրտի ազդեցության տակ: Սպիրտը, սպիրտային նյութերը՝ օդին, օդեկոլոնը և այլն, այստեղ հանդես են գալիս որպես լուծիչներ: Զլորի միացություններից բացի, որպես ուտիչ կարող են հանդես գալ և այլ նյութեր, օրինակ՝ մանգանաթթվային կալիումի և լիմոնաթթվի խառնուրդը, որը, սակայն, շտրիխների գույնի թուլացումից հետո փաստաթղթի վրա թողնում է մուգ դարչնագույն բծեր: Դրանք վերացնելու համար օգտագործվում են թրթնջուկաթթու, հիպոսուլֆիտ, նատրիումի սուլֆիտ և այլն:

Կերագծումը կարող է լինել ընդհանուր և մասնակի:

Ընդհանուրի ժամանակ վերացվում է փաստաթղթի լրիվ տեքստը, իսկ մասնակիի ժամանակ կերագծվում է փաստաթղթի բովանդակության մի մասը:

Փաստաթղթերի կրիմինալիստիկական հետազոտման ժամանակ, երբ ենթադրվում է, որ դրանք ենթարկվել են կերագծման, անհրաժեշտություն է առաջանում պարզել կերագծման փաստը և վերականգնել փաստաթղթի սկզբնական բովանդակությունը:

Կերագծման փաստը պարզելու համար պետք է ուսումնասիրել այն հատկանիշները, որոնք առաջանում են փաստաթղթի վրա, ուտիչ նյութերի ազդեցությամբ:

Դրանք կարելի է խմբավորել.

1) հատկանիշներ, կապված թղթի վրա առաջացած փոփոխությունների հետ,

2) հատկանիշներ, կապված նոր գրված տեքստի շտրիխների վրա առաջացած փոփոխությունների հետ:

Առաջին խմբի մեջ մտնում են.

ա) թղթի փայլատվածությունը և դյուրաքելությունը,
բ) փաստաթղթի վրա դեղնավուն բծերի առկայությունը,
գ) պաշտպանական ցանցի և տողագծի գունաթափումը կամ գունափոխումը,

դ) մասնակի կերագծման հետևանքով վնասվում են տեքստի այլ շտրիխներ (այդ հաճախ կատարվում է կերագծումից հետո, ուտիչ նյութերի տարածման հետևանքով),

ե) սկզբնական տեքստի շտրիխների մնացորդների առկայությունը,
զ) փաստաթղթի վրա կերագծող նյութերի առկայությունը,
է) սպիրտի, օդեկոլոնի, քլորի հոտի առկայությունը փաստաթղթի վրա:

Նոր գրված տեքստի շտրիխների վրա առաջացած փոփոխությունների հետ կապված հատկանիշներն են՝

1) նոր գրված տեքստի շտրիխների ներկի գունաթափությունը,
2) նոր տեքստի շտրիխների ներկի ճապադությունը,
3) մասնակի կերագծումից հետո հավելագրված տեքստի ներկի երանգի տարբերությունը:

Պրակտիկայում հաճախ հանդիպում է մասնակի կերագծում, որն արտահայտվում է երկու ձևով՝ տարածական կերագծում և կերագծում շտրիխների վրայով:

Մասնակի կերագծման հատկանիշները երևան են գալիս անալիտիկ կվարցե լամպի ուլտրամանուշակագույն ճառագայթների տակ, քանի որ

քիմիական հակազդակի ազդեցությանը ենթարկված և փաստաթղթի մնացած մասերը առաջացնում են տարբեր լուսարձակում:

Կերագծված տեքստը վերականգնելու հիմնական մեթոդը հետազոտությունն է ուլտրամանուշակագույն ճառագայթների տակ, որի ժամանակ կերագծված տեղերը ստանում են մուգ կամ դարչնագույն երանգ: Սովորական հետազոտությունից հետո փաստաթուղթը լուսանկարահանվում է անդրադարձող ուլտրամանուշակագույն ճառագայթներով, ինչպես նաև լուսանկարվում է ուլտրամանուշակագույն ճառագայթներով հարուցված լյումինեսցենցիայի պատկերը:

Կերագծված տեքստը վերականգնելու արդյունավետ միջոց է նաև տեսանելի ճառագայթներով հարուցված լյումինեսցենցիայի պատկերի լուսանկարումը ինֆրակարմիր ճառագայթներում: Եթե փաստաթղթի վրա մնացել են կերագծված տեքստի շտրիխների մնացորդներ, ապա կարելի է դիմել գունաբաժան լուսանկարման օգնությանը, ինչպես նաև կոնտրաստը ուժեղացնելու վրա հիմնված լուսանկարման օգնությանը:

Կերագծված տեքստի վերականգնման հաջորդ մեթոդը թղթի մշակումն է այնպիսի քիմիական նյութերով, որոնք կերագծված շտրիխների ներկիչների մնացորդների հետ տալիս են գունավոր քիմիական ռեակցիաներ:

Իրեղեն ապացույց հանդիսացող փաստաթղթերի հետ վարվելու ընդհանուր կանոնների համաձայն, քիմիական մեթոդով նախկին տեքստը վերականգնելուն պետք է դիմել միայն այն ժամանակ, երբ հետազոտության մնացած մեթոդները արդյունք չեն տվել, որովհետև այս մեթոդի կիրառումը կարող է հասցնել փաստաթղթի փչացմանը:

Տեքստերը կարելի է վերացնել նաև *լվացմամբ*: Լվացման ամենից հաճախ ենթարկվում են այնպիսի տեքստերը, որոնք կերագծման չեն ենթարկվում: Այս նպատակի համար որպես լուծիչ օգտագործվում են ջուրը կամ սպիրտային լուծույթները: Սակայն, վլացումից հետո հաճախ մնում են շտրիխների մնացորդներ: Բացի դրանից, փաստաթղթի վրա մնում են խալեր, բծեր, որոնք հաճախ լրիվ չեն վերացվում:

Տեքստը լրիվ վերականգնել հնարավոր է ինֆրակարմիր լյումինեսցենցիայի օգնությամբ և մասամբ այն նույն մեթոդներով, ինչ նշվեց կերագծման մասը շարադրելիս:

Փորձագետի եզրակացության մեջ, ինչպես ջնջման ժամանակ, այս դեպքում էլ պետք է նշել կիրառված բոլոր հնարքներն ու մեթոդները, նույնիսկ այն դեպքում, երբ արդյունք չի ստացվել:

§ 4. ՓԱՍՏԱԹՂԹԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փաստաթղթերի բովանդակության մասնակի փոփոխությունները կարող են արտահայտվել որոշակի բովանդակության վերացմամբ, նոր բովանդակություն մտցնելով, այս երկուսի կոմբինացիայով:

Մասնակի փոփոխություններից ամենատարածվածը *հավելագրումն է*, որը հաճախ հանդիպում է որպես փոփոխման ինքնուրույն ձև, երբեմն ջնջման կամ մասնակի կերպգծման հետ:

Հավելագրումը հիմնական տեքստում նոր բովանդակություն մտցնելն է: Վերջինիս ծավալը նշանակություն չունի: Հավելագրումը կարող է կատարվել երկու ձևով՝ նախատեսված և չնախատեսված: Նախատեսված՝ նախօրոք որոշված և հետագայում կատարված հավելագրումը համեմատաբար դժվար է հայտնաբերել, որովհետև այս դեպքում կորչում են որոշ էական հատկանիշներ:

Հավելագրումները հայտնաբերելու համար ուսումնասիրվում են հետևյալ հատկանիշները.

1) Փաստաթղթի ծալքերի վրա հավելագրված տեքստի շտրիխների ճապաղությունը (թանաքով գրելիս):

2) Հիմնական և հավելագրված տեքստերի ներկիչների տարբերությունը: Այստեղ մտնում են նաև խտության տարբերությունը, ներկի երանգը և շտրիխների ֆլուորեսցենցիայի (ինքնալուսարձակման) տարբերությունը ուլտրամանուշակագույն ճառագայթների տակ փաստաթուղթը զննելիս:

3) Հիմնական և հավելագրված տեքստերի շտրիխների բաղադրության տարբերությունը, որն արդյունք է հավելագրման համար այլ գրեմական պիտույք օգտագործելուն: Այդ տարբերությունը արտահայտվում է շտրիխների հաստության տարբերությամբ, ինչպես նաև շտրիխների մանրադիտակային բաղադրության տարբերությամբ, որը կախված է նախ՝ ներկի բաղադրությունից (օրիակ՝ երբ օգտագործվել են մատիտներ՝ գրաֆիտի տարբեր բաղադրությամբ), ինչպես նաև՝ այն հիմքերից, որոնց վրա գրվել է տեքստը և կատարվել է հավելագրումը:

4) Թղթի մակերեսի վրա հիմնական և հավելագրված տեքստերի սեղմման հետքերի տարբերությունը:

5) Եթե փաստաթուղթը լրացված է հատուկ թանաքներով, որոնք ունեն յուրահատուկ փայլ, իսկ հավելագրումները կատարված են այլ ներ-

կիչով, օրինակ՝ տուշով, ապա տեքստերը մեկը մյուսից կտարբերվեն փայլով, որը լավ երևում է թեք ընկնող լույսի տակ:

6) Ձեռագրի հատկանիշները. ա) ձեռագրի հատկանիշների տարբերությունները, եթե հավելագրումը կատարվել է այլ անձի կողմից (հատկապես գրող գործիքի չհիմնավորված կանգառներ, շտրիխների ծռմովածություն, ուղղումներ, ռետուշ և այլն), բ) ձեռագրի որոշ ընդհանուր հատկանիշների տարբերությամբ, օրինակ՝ տառերի մեծությամբ, թեքությամբ, շարադասությամբ:

7) Գրի հատկանիշները, որոնք բնութագրում են տարածական կողմնորոշումը: Որքան էլ բնական տեսք ունենան, հավելագրումները խախտում են տեքստի սկզբնական տեղավորվածությունը, պայմանավորում են բառերի և տառերի միջև եղած տարածության անհամաչափությունը:

8) Հավելագրված տեքստի շտրիխների ներկիչի տարածվածությունը ծծողականի ազդեցությամբ:

9) Հավելագրումների հայտնաբերման համար կարևոր է հատվող շտրիխների կատարման հաջորդականության պարզաբանումը: Որպես կանոն փաստաթղթերը լրացվում են որոշակի հաջորդականությամբ, օրինակ՝ սկզբում գրվում է տեքստը ապա՝ ստորագրությունը, և եթե ստորագրության ու տեքստի շտրիխների հատման հետազոտությունից պարզվի, որ սկզբում կատարված է ստորագրությունը, ապա դա կլինի անվիճելի ապացույց, որ ստորագրությանը հատվող բառը (թիվը) ավելացված է հետագայում:

10) Փաստաթղթի տեքստի տարբեր մասերի բովանդակության տարբերությունը:

Հավելագրումները հայտնաբերելու շատ արդյունավետ մեթոդ է առաջարկում Ն. Մ. Ջյուսկինը, գտնելով, որ փաստաթղթի վրա եղած շտրիխները հետազոտելիս նշանակալից օգնություն կարող է ցույց տալ պատճենահանման մեթոդը, որը հիմնված է շտրիխի ներկիչի կամ թանաքի բաղադրության մեջ մտնող այլ նյութերի՝ նրանց հավող այս կամ այն առարկայի հետ դիֆուզիայի առաջացման վրա: Նա առաջարկում է այդ նպատակի համար օգտագործել անգույն հիմք ունեցող ֆոտոժապավեն, օրինակ՝ պոզիտիվային ժապավենները («ֆտ» կամ կինոպոզիտիվ): Ժապավենը ֆիքսվում է սովորական ամրացնող լուծույթում, որից հետո լվացվում է ջրով և չորացվում:

Պատճենահանման նպատակով ժապավենը թրջում են +20-22 աստիճան թորած ջրով, մինչև էմուլսային շերտի լավ փափկացումը, որի հա-

մար պահանջվում է հինգ րոպեից ոչ պակաս ժամանակ: Այնուհետև, ջրի կաթիլները հեռացվում են ծծողական թղթի միջոցով և ժապավենը դոնդողային շերտի կողմից հավում է հետազոտելի տեքստով փաստաթղթին: Ցանկալի է այն շփել ռետինե գլանիկով: Այս աշխատանքը կատարելիս պետք է հետևել, որ այդ թղթի և ժապավենի միջև օդի պղպջակ չմնա: Տեքստի բավարար արտատիպ ստանալու համար կոնտակտի տևողությունը պետք է հասցնել 45-60 վրկ: Կոնտակտի ժամանակ կարելի է հետևել պատճենահանման պրոցեսին, որի համար պետք է ժապավենի մի մասը անջատել թղթից: Երբ ներկը դիֆուզիայի միջոցով բավարար չափով քափանցում է դոնդողային շերտի մեջ, ժապավենը բաժանվում է թղթից և անմիջապես խոնավ վիճակում դոնդողաշերտի կողմից սեղմվում է սպիտակ, մաքուր, ամուր թղթի՝ վերը նշված պայմանների պահպանմամբ:

Այս մեթոդը մեծ արդյունք է տալիս գրաֆիտե մատիտով գրված և պատճենահան մատիտով ուղղումներ կամ հավելագրումներ կատարած տեքստերը հետազոտելիս: Պատճենահանման այս եղանակով կարելի է հայտնաբերել նաև թանաքով կատարած հավելագրումներն ու ուղղումները, որովհետև միևնույն հատկություններ ունեցող թանաքները կարող են տարբերվել իրարից պատճենավորման ընդունակությամբ¹:

Փաստաթղթերի տեխնիկական հետազոտման ժամանակ հավելագրման փաստը պարզելու համար կիրառվում է գունազատիչ լուսանկարումը, որը կատարվում է հետազոտելի փաստաթուղթը համապատասխան լուսազտիչներով լուսանկարելով: Այս մեթոդը հնարավորություն է տալիս լուսանկարի վրա պատկերել հիմնական և հավելագրված տեքստերի շտրիխների տարբերությունը նույնիսկ այն դեպքում, երբ սովորական աչքով նրանք միանման կթվան:

Մասնակի փոփոխություններից է նաև *ուղղումը*՝ փաստաթղթի տեքստի վերափոխումը, այսինքն՝ երբ փոփոխության են ենթարկվում առանձին թվեր, բառեր, ամուրը, ազգանունը, հայրանունը, ամսաթիվը, տարեթիվը, փաստաթղթի համարը և այլն: Երբեմն ջնջման կամ կերպածման միջոցով հեռացվում են փոփոխման ենթակա թվերի, նշանների կամ տառերի առանձին էլեմենտներ և դրանք փոխարինվում ցանկացածով:

Ուղղումների փաստը հայտնաբերելու և սկզբնական տեքստը վերականգնելու համար կիրառվում են համարյա նույն մեթոդներն ու հնա-

¹ Նշված մեթոդին ծանոթացել ենք 1960թ. Կիևի դիզի ինստիտուտում Ն. Մ. Ջյուսկինի ղեկավարությամբ պրակտիկա անցնելիս:

քանքները, ինչ հավելագրումները հետազոտելիս: Սկզբնական տեքստը վերականգնելու համար պետք է պարզել, թե ինչ եղանակով է այն վերացված: Որոշ դեպքերում սկզբնական տեքստը կարելի է հայտնաբերել սովորական զննությամբ:

Եթե սկզբնական տեքստը վերացված է կերպագծմամբ, ապա պետք է կիրառել կերպագծման ենթարկված տեքստերը վերականգնելու եղանակներն ու մեթոդները, եթե վերացված է ջնջմամբ, ապա պետք է կիրառել ջնջված տեքստերը վերականգնելու մեթոդները:

Փաստաթղթի բովանդակությունը կարելի է փոխել նաև *վերաստունչման* միջոցով: Ամենից հաճախ վերաստունծման են ենթարկվում լուսանկարները և դրոշմանիշերը: Սովորաբար լուսանկարների վերաստունծման դեպքում տեղի է ունենում մի նկարի փոխարինումը մեկ ուրիշով, իսկ դրոշմանիշերի վերաստունծման ժամանակ մի փաստաթղթից պոկված դրոշմանիշը ստանձվում է մեկ ուրիշի վրա:

Լուսանկարների վերաստունչումը հիմնականում կատարվում է անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերի վրա: Լուսանկարները վերաստունծվում են երկու եղանակով՝ ամբողջական և մասնակի:

Լուսանկարի ամբողջական վերաստունծումը կատարվում է երեք փուլով.

- ա) լուսանկարի անջատումը փաստաթղթից,
- բ) այլ լուսանկարի ստանձում,
- գ) կնիքի դրոշմի կեղծում:

Լուսանկարի անջատումը կատարվում է կա՛մ գոլորշու օգնությամբ, կա՛մ ուղղակի փաստաթղթից պոկելով և կա՛մ էլ սուր գործիքի օգնությամբ կտրելով:

Կաուչուկե կնիքի դրոշմի կեղծումը կարող է կատարվել մի շարք եղանակներով, ամենից հաճախ շարունակությունը ձեռքով նկարելով, հազվագյուտ դեպքերում՝ կլիշե պատրաստելով, իսկ մակերևութային (ռեփլեֆային) դրոշմները՝ կա՛մ կլիշե պատրաստելով, կա՛մ սուր գործիքով սեղմելով (քերծելով): Վերաստունծման հատկանիշներն են՝

1. Պոկված (նախկին) լուսանկարի հատկանիշները.

ա) խոնավության հետքերը, որ կարելի է դիտել թանաքի տարածվածության ձևով (երբեմն շատ աննշան),

բ) լուսանկարի տեղում թղթի վնասվածքները (այստեղ պետք է նշել երկու տարբերակ, նախ՝ թղթի վրա բացակայում է մակերեսային շերտի մի մասը, և երկրորդ՝ ավելորդ թղթի առկայությունը, որը կարող է մնալ միայն այլ լուսանկարից),

գ) հետազոտման պրոցեսում լուսանկարը առանձնացնելուց հետո, եթե նրա հակառակ կողմում նկատվում են որոշակի քանակության ավելորդ թղթի մնացորդներ, կարելի է ենթադրել, որ լուսանկարը եղել է այլ փաստաթղթի վրա:

2. Այլ լուսանկարի սոսնձման բնորոշ հատկանիշները.

ա) երկու կամ ավելի տեսակի սոսնձի առկայությունը,

բ) երբ լուսանկարը ծածկում է փաստաթղթի վրա եղած կնիքի դրոշմի մի մասը: Սա անվիճելի ապացույց է, որ նկարը սոսնձվել է փաստաթղթի վրա, այն կնքելուց հետո,

գ) կնիքի դրոշմի կեղծումը: Կնիքի դրոշմի՝ փաստաթղթի վրա եղած մասի և նկարի վրա եղած մասի գծերի անհամապատասխանությունը, ներկիչի խտության անհամապատասխանությունը և այլն:

Փաստաթղթի վրա խոցվածքների առկայությունը վկայում է, որ կնիքի դրոշմը նկարվել է ձեռքով: Կնիքի դրոշմի կեղծման փաստը պարզելու համար օգտագործվում են այն բոլոր հատկանիշները, որոնք բնորոշ են ընդհանրապես կնիքների և շտամպների հետազոտությանը: Թվարկած հատկանիշները հայտնաբերվում են սովորական դիտումների ժամանակ որոշ դեպքերում մեծացնելով կամ թեք ընկնող ճառագայթների տակ զննելիս:

Լուսանկարի մասնակի վերասոսնձումը հետապնդում է մի նպատակ՝ պահպանել կնիքի դրոշմը:

Մասնակի վերասոսնձման մասին խոսելիս պետք է տարբերել երկու դեպք.

1. հեռացվում է լուսանկարի էմուլսիայի մի մասը՝ նկարի աստառի հետ,

2. հեռացվում է էմուլսիայի մի մասը՝ առանց աստառի:

Առաջին դեպքում լուսանկարը կտրվում է կնիքի դրոշմի եզրագծով և սոսնձվում է վերասոսնձվող լուսանկարի մնան ձևով կտրված մասին: Երկրորդ դեպքում աստառի միջին մասից առանձնացնում են էմուլսիան պատկերի հետ և սոսնձում թափանցիկ սոսնձով:

Մասնակի վերասոսնձման հատկանիշներն են՝ կտրվածքի գիծը, լուսանկարների առանձին դետալների անհամապատասխանությունը, նկարի ֆոնի երանգի տարբերությունը, սոսնձի տարբերությունը, աստառի հաստության տարբերությունը, էմուլսիայի կտրվածքի տեղում ծավալածքների առկայությունը, կտրվածքի տեղում քերծվածքների ձևով վնասվածքների և, վերջապես, փաստաթղթի վրա նկարի կտրվածքի տեղում վնասվածքների առկայությունը:

Նոր էմուլսիայի ստանձման հատկանիշներից է ստանձի առկայությունը, որը կարելի է հայտնաբերել քիմիական եղանակով, լյումինեսցենցիայի հարուցման միջոցով, իսկ անորակ ստանձի դեպքում լուսանկարի մի մասը կարող է գունաթափվել: Էմուլսիայի վրա կարող են առաջանալ ծալքեր, քերծվածքներ:

Հետազոտումը պետք է կատարել հետևյալ փուլերով: Առաջին փուլում փաստաթուղթը հետազոտվում է առանց որևէ փոփոխության ենթարկելու: Սկզբում հետազոտվում են կնիքների դրոշմներին վերաբերող հատկանիշները, այնուհետև՝ լուսանկարը, առանց փաստաթղթից անջատելու: Երկրորդ փուլում կատարվում է հայտնաբերված հատկանիշների ֆիքսում: Երրորդում լուսանկարը անջատվում է փաստաթղթից՝ վերջինիս հակառակ երեսը ենթարկելով գոլորշու ազդեցությանը:

Լուսանկարն անջատելուց հետո ուսումնասիրվում է նրա հակառակ երեսը և փաստաթղթի վրա նրա զբաղեցրած տեղը: Ուսումնասիրվում է ստանձի լյումինեսցենցիան, պարզելու համար, թե արդյոք չկա՞ն տարբերություններ ստանձի մեջ, ինչպես նաև մնացած հատկանիշները, որոնց մասին նշեցինք վերը: Այնուհետև կատարվում է քիմիական հետազոտություն (եթե դրա կարիքն զգացվում է):

Ինչպես նշեցինք վերը, դրոշմանիշերի վերաստանձման հատկանիշները և այն երևան հանելու մեթոդներն ու հնարանքները համարյա նույնն են, ինչ լուսանկարներից: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ դրոշմանիշերը տպարանից դուրս են գալիս հակառակ երեսը ստանձված, և քիչ չի պատահում, որ դրանք օգտագործելիս երբեմն ստանձում են երկրորդ անգամ: Ուստի ստանձի հետազոտության ժամանակ եթե լյումինեսցենցիայի տարբերություն առաջանա, պետք է զգուշանալ և թյուրիմացության մեջ չընկնել: Կարևոր հատկանիշ է նաև այն (որը կարող է պատահել և լուսանկարների վերաստանձման ժամանակ), որ դրոշմանիշերի հակառակ երեսին կարող է հայտնաբերվել տեքստ, որը չկա փաստաթղթի այն մասում, որտեղ ստանձված է դրոշմանիշը:

§ 5. ԱՆԸՆԹԵՌՆԵԼԻ ՏԵՔՍՏԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Քննչական պրակտիկայում հաճախ անհրաժեշտություն է առաջացնում վերականգնել տեքստի առանձին մասեր, որոնք քողարկված են խզրզանքով, ծածկված են ամբողջական լաքաներով (թանաքի, այլ նյութերի), գունաթափված են:

Նման դեպքերում հետազոտման մեթոդի ընտրությունը կախված է շտրիխի և այն ծածկող ներկիչի գունային տարբերություններից և դրանք ուժեղացնելու կամ թուլացնելու հնարավորություններից:

Եթե տեքստը ծածկող ներկիչի գույնը տարբերվում է տեքստի շտրիխների գույնից, կոնտրաստի ուժեղացման կարելի է հասնել փաստաթուղթը ծածկող ներկիչի գույնի լուսազտիչով: Իսկ այն դեպքերում, երբ շտրիխի տեքստը և ծածկող ներկիչը ունեն միևնույն երանգը, անհրաժեշտ է ուսումնասիրել ուլտրամանուշակագույն ճառագայթներով հարուցված լյումինեսցենցիայի պատկերը: Տեքստի շտրիխների և ծածկող ներկիչի բաղադրության տարբերությունը կարող է առաջացնել լուսարձակման տարբերություն, որը պետք է լուսանկարել: Եթե նշված մեթոդը (լյումինեսցենցետալին անալիզ) արդյունք չի տալիս, ապա փաստաթուղթը պետք է լուսանկարել կոնտրաստային նկարահանման եղանակով: Հետազոտման մեթոդներից է նաև փաստաթուղթը թափանցող լույսի տակ ուսումնասիրելն ու լուսանկարահանելը, նկատի ունենալով, որ տեքստի շտրիխները ծածկած տեղերում ներկի խտությունն ավելի է:

Եթե շտրիխները ծածկող ներկիչի խտությունը մեծ է, ապա անհրաժեշտ է այն թուլացնել տարբեր քիմիական նյութերով (կալիումի պերմանգանատ, քրոմաթթու, աղաթթու և այլն)՝ կախված ներկի բաղադրությունից: Այդ նպատակի համար փաստաթղթի հետազոտման ենթակա մասը կարճ ժամանակով (5-8 վրկ.) պահվում է անոթի մեջ լցված հիշատակված նյութերից որևէ մեկի գոլորշու վրա: Լուսանկարելուց հետո, փաստաթղթի սկզբնական տեքստը վերականգնելու համար այն ծխահարվում է ամիակի գոլորշիներով:

Շտրիխները ծածկող ներկիչի խտության թուլացում հնարավոր է կատարել նաև ծծողական թղթի կամ ֆիքսված, խոնավ ֆոտոթղթի միջոցով: Նշված մեթոդով պատճենահանումը պետք է կրկնել մի քանի անգամ:

Ծածկված տեքստի շտրիխները հայտնաբերելու լավագույն եղանակը փաստաթուղթը ինֆրակարմիր ճառագայթներում լուսանկարելն է: Այս

մեթոդը կիրառելի է այն դեպքերում, երբ շտրիխների նյութը ինֆրակարմիր ճառագայթներն ավելի ուժեղ է կլանում, քան ծածկող նյութը: Այսինքն, երբ տեքստը գրված է գրաֆիտե մատիտով, գրաֆիտե պատճենահան մատիտով, սև տուշով, մեքենագրված է սև ժապավեն ունեցող գրամեքենայով, տպագրված է պոլիգրաֆիական եղանակով ու ծածկված է անիլինային թանաքներով:

Գունաթափված տեքստերի վերականգնման համար ևս մշակված են մի շարք հնարքներ:

Երբ տեքստի շտրիխները թույլ երևում են, ապա փաստաթուղթը լուսանկարվում է կոնտրաստային նկարահանման կանոններով կամ կատարվում է կոնտրատիպ: Մյուս հնարանքը լյումենեսցենցիայի հետազոտումն է: Այն հարուցվում է ուլտրամանուշակագույն ճառագայթներով, որոնց ազդեցությամբ կարող է տեղի ունենալ շտրիխների լուսարձակում: Կամ կարող է լուսարձակել փաստաթուղթը, իսկ շտրիխները երևան, որովհետև հանգցնում են լյումինեսցենցիան: Կամ փաստաթուղթը և շտրիխները կառաջացնեն տարբեր երանգի լուսարձակում:

Եթե գունաթափված տեքստը գրված է եղել վերը նշված՝ ինֆրակարմիր ճառագայթները կլանող նյութերով, փաստաթուղթը լուսանկարվում է անդրադարձող ինֆրակարմիր ճառագայթներում:

Անիլինային թանաքներով կատարված շտրիխների դեպքում տեքստը կարելի է վերականգնել նաև դիֆուզիա-պատճենահանման մեթոդով:

Եթե նշված մեթոդները արդյունք չեն տալիս, պետք է դիմել վերականգնման քիմիական մեթոդներին:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում և կատարման հմտություն է պահանջում այրված փաստաթղթերի վերականգնումը: Այրվելիս փաստաթուղթը սկզբում խիստ չորացնում է, ծռնվում, դառնում է դյուրաբեկ, ապա ածխանում է և վերջապես փռոչանում: Բարձր ջերմաստիճանի հետևանքով փաստաթղթի նյութի փոփոխման ազդեցությամբ փոփոխվում է նաև տեքստի շտրիխները կազմող ներկիչի վիճակը:

Բարձր ջերմաստիճանի ազդեցությանը դիմակայելու կարողությամբ (ըստ իրենց քիմիական բաղադրության) շտրիխների ներկիչները դասակարգվում են. տպագրական ներկ, մեքենագրական ժապավենի ներկ, գրաֆիտե մատիտ, կապույտ մատիտ, որի ներկանյութը բեռլինյան լազուրն է, տուշ, երկաթ-աղաղային թանաքներ, պատճենահան մատիտ, գնդիկավոր գրիչ, սինթետիկ ներկեր, անիլինային թանաքներ: Փաստաթղթի քայքայման աստիճանը այս դեպքում կախված է թղթի բաղադ-

րության մեջ հանքային նյութերի առկայության աստիճանից: Որքան հանքային նյութերը քիչ են, այնքան մեծ է կրակի ազդեցությամբ թղթի քայքայման ասիճանը:

Այրված փաստաթղթերի բովանդակության վերականգնման հիմնական մեթոդը լուսանկարահանումն է: Արդյունավետ է լուսանկարումը ստվերային լուսանկարչության կանոններով (թեք ընկնող ճառագայթների տակ), որի արդյունավետությանը կարող է նպաստել փաստաթղթի վրա եղած շտրիխների ռելիեֆը, և գունատարբերիչ լուսանկարումը:


Ածխացած փաստաթղթի հետազոտումը սկսելուց առաջ անհրաժեշտ է այն հարթեցնել: Այդ նպատակի համար պատրաստվում է ջրում գլիցերինի 15-20 տոկոսանոց լուծույթ, որը հեղուկցանիչի միջոցով ցանվում է վաղօրոք հարթ ապակու վրա տեղադրված փաստաթղթի վրա: Հեղուկցանիչի ցնցուղը պետք է պահել դեպի վեր, այնպես, որ հեղուկը փչվի ոչ թե անմիջապես թղթին, այլ վերևից ցողի մնամն նստի նրա վրա: Նույն նպատակի համար երբեմն օգտվում են սովորական ջրային գոլորշիներից (եթե փաստաթուղթը շատ չի ածխացել):

Երբ փաստաթուղթը ձեռք է բերում առաձգականություն, այն զգուշությամբ հարթեցվում է և ծածկվում հարթ, թափանցիկ ապակիով:

Երբեմն ածխացած փաստաթղթերի վրա եղած գրառումները վերականգնվում են մոխրացման մեթոդով: Տեքստի շտրիխներում բովանդակող նյութերը, որոնք դիմադրում են կրակին, պահպանվում են նույնիսկ մոխրացման փուլում: Զանգի որ մոխրացման փուլում թուղթը մոխրագույն երանգ է ստանում, նախկին սև ֆոնի վրա չերևացող շտրիխները սկսում են երևալ: Այդ նպատակի համար այրված փաստաթուղթը տեղավորվում է հրակայուն ապակիների միջև և դրվում թրծատփավոր (մուֆելային) վառարանի մեջ:

Այրված փաստաթղթերի տեքստը վերականգնելու մեթոդ է նաև հետազոտությունը ռեֆլեկտորային լուսավորությամբ, որի համար հիմք կարող է ծառայել շտրիխների և ֆոնի անդրադարձման տարբերությունը:

Որոշ դեպքերում փաստաթուղթը հետազոտվում է ուլտրամանուշակագույն ճառագայթների տակ: Շտրիխների և թղթի լյումինեսցենցիայի երանգի տարբերությունը կամ դրանցից մեկի կողմից լյումինեսցենցիան հանգցնելը հնարավորություն կտա վերականգնել այրված փաստաթղթի տեքստը:



Արված փաստաթղթի մնացորդների լուսանկարված անդրադարձող
լուսավորության պայմաններում

Պատարարված փաստաթղթերի վերականգնումը իրականացվում է որոշակի պայմաններ հաշվի առնելով: Նախ, պետք է պարզել տվյալ կտորտանքը մե՞կ, թե՛ տարբեր փաստաթղթերի են: Դրա համար կտորտանքը խմբավորվում է ըստ թղթի տեսակի, գույնի, տողագծերի տեսակի և գույնի, պաշտպանական ցանցի տեսակի և գույնի, շտրիխների ներկիչի տիպի (մատիտ, քանաք և այլն), գույնի, երանգի: Այնուհետև առանձնացվում են եզրային կտրվածք ունեցող կտորները (ըստ խմբերի): Չախ եզրային կտրվածք ունեցող կտորները դրվում են ձախ կողմում, աջ կտրվածք ունեցողները՝ աջ կողմում, վերևի կտրվածք ունեցողները՝ վերևում և ներքևիցը՝ ներքևում: Եթե կան անկյունային կտրվածք ունեցող կտորներ (օրինակ՝ ձախ ու վերևի և այլն), ապա սկզբում դասավորվում են դրանք: Այսպիսով, հավաքվում է փաստաթղթի արտաքին շրջանակը: Մյուս կտորները դասավորվում են ըստ պատռվածքի գծերի, տողագծերի, տեքստի բովանդակության և այլն:

Փաստաթղթի ամբողջացումը հարմար է կատարել ապակու վրա, պինցետի օգնությամբ: Հավաքման աշխատանքը ավարտելուց հետո այն ծածկվում է երկրորդ ապակիով (փաստաթղթի չափից մի փոքր մեծ), եզրերին սոսնձվում է մաքուր թուղթ, հետո այն զննվում և լուսանկարվում է երեսի և հակառակ կողմերից:

Չի կարելի փաստաթղթի ամբողջացումը կատարել թղթի վրա կտորները սոսնձելով, քանի որ թղթի աստառը հնարավորություն չի տալիս փաստաթուղթը զննել հակառակ կողմից կամ թափանցող լույսի տակ: Բացի այդ, սոսինձը ներծծվելով կարող է փչացնել փաստաթուղթը:

Միայն ծայրահեղ դեպքերում, երբ հնարավոր չէ ապակի ձեռք բերել, ամբողջացումը կատարվում է հարթ մակերևույթի վրա (օրինակ՝ սեղանի), կտորտանքը երեսի կողմով դեպի այն դարձած: Կտորտանքը հարթեցնելուց և ճշգրիտ դասավորելուց հետո թափանցիկ թղթի փոքրիկ կտորներով ծայրակցվում են և սոսնձի ազդեցությունը կնճիռների չվերածելու համար որոշ ժամանակ տեղադրվում մամլիչի կամ այլ ծանրության տակ: Այս ձևով վերականգնված փաստաթուղթը տեղավորվում է ամուր թղթից պատրաստված ծրարի մեջ կամ սովորական ծրարում, սովաթղթերի միջև տեղավորելուց հետո:

§ 6. ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՏՃԵՆԱՀԱՆՈՒՄԸ

Ստորագրություններ հետազոտելիս փորձագետը ձեռագրային հատկանիշներից բացի պետք է ուշադրություն դարձնի նաև այն հատկանիշներին, որոնք վկայում են դրանց պատճենահանման տեխնիկական եղանակների մասին:

Այն դեպքերում, երբ այլ անձի ձեռագրին նմանեցնելով կատարումը հնարավոր չէ, դիմում են դրանց պատճենահանմանը, որը հետո կրկնագծվում է մատիտով կամ թանաքով:

Պատճենահանումը կատարվում է պատճենահան թղթի միջոցով, ստորագրության շտրիխների վրա սեղմելով: Որի արդյունքում կեղծվող փաստաթղթի վրա մնում են ռելիեֆային գծեր, որոնք, այնուհետև, կրկնագծվում են թափանցող լույսի տակ արտանկարելով, ինչպես նաև խոնավ պատճենահանմամբ (վերցվում է խոնավ միջանկյալ թղթի վրա, որից էլ արտատպվում է կեղծվող փաստաթղթի վրա):

Եթե պատճենահանվել կամ արտանկարվել և ապա կրկնագծվել է, ապա հետազոտման պրոցեսում նախ պետք է ձգտել հայտնաբերել շտրիխների համատեղումը: Դրան կարելի է հասնել մանրադիտակային հետազոտմամբ: Առավել հստակ հայտնաբերվում են այն շտրիխները, որոնք չեն ծածկվել կրկնագծմամբ: Այս հատկանիշը ավելի ցայտուն կարելի է դարձնել կոնտրաստային լուսանկարահանման (կոնտրաստիայի) միջոցով:

Եթե կրկնագծումը կատարվել է այնպես, որ ամբողջությամբ ծածկվել են պատճենահանման կամ արտանկարման գծերը, կիրառվում է գունազատում կամ հետազոտում ինֆրակարմիր ճառագայթներում: Վերջին մեթոդի կիրառումն ավելի արդյունավետ կլինի պատճենահանման և կրկնագծման շտրիխների՝ ինֆրակարմիր ճառագայթների թափանցելիության աստիճանի տարբերության դեպքում:

Երբեմն փաստաթղթի վրա մնում են նաև պատճենահանող նյութի մասնիկներ, որոնք կարելի է հայտնաբերել մանրադիտակային հետազոտմամբ և ուլտրամանուշակագույն ճառագայթներով: Ռելիեֆային շտրիխների վրա կատարած կրկնագծումների դեպքում սկզբնական շտրիխները (նրանց առանձին մասերը) կերևան փոսիկների ձևով, որը հայտնաբերվում է սովերային լուսավորությամբ հետազոտելիս:

Եթե նախնական հետազոտությունները ցույց են տալիս, որ ստորագրությունը պատճենահանված է գործում առկա որևէ փաստաթղթից,

ապա պատրաստվում են վերջինիս վրա եղած և վիճելի ստորագրությունների նույն մասշտաբի դիպլոմատիկներն ու համատեղվում: Եթե համատեղվեն ամբողջությամբ, ապա պարզ կդառնա արտատպելու փաստը:

Եթե նախնական շտրիխները կատարված են գրաֆիտե մատիտով և կրկնագծված են անհիմնային թանաքով, պետք է հետազոտել էլեկտրոնային օպտիկական փոխարկիչով կամ նկարահանել ինֆրակարմիր ճառագայթներում: Հետազոտվող մասը ավելի ուժեղ լուսավորելու համար օգտագործվում են նաև լազերային ճառագայթներ:

Տեխնիկական պատճենահանման բոլոր եղանակների դեպքում էլ առաջանում են ձեռագրի անսովոր կատարման հատկանիշներ: Կատարողը անընդհատ իր ուշադրությունը կենտրոնացնում է ստորագրության կատարման պրոցեսի վրա, որի հետևանքով կատարման տեմպը դանդաղում է, ինչն արտահայտվում է շտրիխների ծռնովածությամբ, գրող գործիքի անհիմն կանգառներով, շտրիխների կատարումը բութ սկսելու և ավարտելու հատկանիշներով, ուղղումներով և այլն:

Ստորագրությունների տեխնիկական պատճենահանումների հայտնաբերման փորձաքննություններ կատարելիս անհրաժեշտ է ձեռագրային և փաստաթղթերի տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման գույակցում:

Նման հետազոտություններ կատարելիս նաատակահարմար է վիճելի ստորագրությունները համեմատել այն անձի ստորագրությունների մուշների հետ, որի անունից դրանք կատարված են:

§ 7. ՄԵՔԵՆԱԳԻՐ ՏԵՔՍՏԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Գրամեքենաների նույնացման պրոցեսը, ինչպես կրիմինալիստիկական փորձաքննությունների մյուս օբյեկտների նույնացման ժամանակ, իրականացվում է երկու փուլով:

Առաջին փուլը գրամեքենաների խմբային պատկանելության որոշումն է, երկրորդը նույնացումը:

Առաջին փուլի հիմքում ընկած են գրամեքենաների ընդհանուր հատկանիշների ուսումնասիրումը և համեմատումը, որոնք առկա են համեմատվող մեքենագիր տեքստերում:

Ընդհանուր հատկանիշները, որոնցով որոշվում է գրամեքենայի տիպը և սիստեմը, համարվում են. 1. գլխավոր մեխանիզմի քայլը, 2. շրիֆտի

(տպաստառի) տիպը, 3. տողերի միջև եղած տարածությունը, 4. ստեղնաշարի տիպը: Գլխավոր մեխանիզմի քայլը այն տարածությունն է, որով անցնում է գրամեքենայի թմբուկը, ստեղնի լծակին հարվածելիս: Մեքենագրական տեքստում այս հատկանիշը կայուն է, որովհետև ստեղնին հարվածելիս գրամեքենայի թմբուկը անցնում է միշտ միևնույն տարածությունը: Նույնիսկ գրամեքենայի վերանորոգման դեպքում գլխավոր մեխանիզմի քայլը գործնականում շատ հազվադեպ է փոխվում: Գրամեքենայի գլխավոր մեխանիզմի քայլի փոփոխությունը կարող է կապվել միայն շրիֆտի փոփոխման հետ և այն էլ ոչ բոլոր դեպքերում: Շրիֆտը փոխելիս գլխավոր մեխանիզմի քայլը փոխվում է միայն այն դեպքերում, երբ փոփոխման է ենթարկվում գլխավոր մեխանիզմի ամենափոքր քայլ ունեցող շրիֆտը: Տվյալ դեպքում փոխվում են անկյունային ատամնանիվը, ինտերվալի ատամնանիվը և լուսանցքը կարգավորող մեխանիզմը:

Մեկ դյույմում (մեկ դյույմը հավասար է 2,5 սմ-ի) տեղավորված մեքենագրական շրիֆտների քանակից ելնելով, մասնագիտական գրականության մեջ գլխավոր մեխանիզմի քայլը բաժանվում է.

մեծ 8 տառ (նիշ)

միջին 9-ից 9 ու 14 տառ

փոքր 10 տառ

ամենափոքր 12-15 տառ

Գլխավոր մեխանիզմի քայլը չափելու համար տեքստի որևէ տողում պետք է փնտրել երկու համանուն տառ, որոնց միջև կա մոտավորապես 25-30 նիշ, հաշված մաս բառերի միջև եղած տարածությունը: Այդ տարածությունը չափում են չափակարկինի կամ քանոնի միջոցով մինչև 0,1 մմ ճշտությամբ և ապա ստացված մեծությունը բաժանում վերցրած տարածությունում եղած տառերի թվի վրա:

Գլխավոր մեխանիզմի քայլը որոշվում է հետևյալ բանաձևով. $H \frac{N}{A}$,

որտեղ H-ը գլխավոր մեխանիզմի քայլն է, N-ը՝ համանուն տառերի միջև եղած տարածությունը, A-ն՝ տառերի քանակը:

Երկու համանուն տառերի միջև եղած տարածությունը համարվում է նրանց սկզբնակետերի միջև եղած հեռավորությունը: Հետևաբար, նրանց միջև ընկած տառերի քանակը հաշվելիս համանուն տառերից մեկը չի հաշվվում: Այն դեպքերում, երբ տառերի եզրերը պարզ չեն, հարմար է չափել համանուն տառերի ոչ թե սկզբնակետերի, այլ առանցքների միջև եղած հեռավորությունը:

Համաճում տառերի միջև եղած հեռավորությունը չափվում է մի քանի անգամ և ապա հանվում միջին թվաբանականը, որովհետև գլխավոր մեխանիզմի քայլը հաշվելիս սխալներ կարող են առաջանալ ոչ միայն վառ չափելուց կամ հաշվելուց, այլև գրամեքենայի գլխավոր մեխանիզմի մի շարք թերությունների պատճառով: Օրինակ՝ անկերային շնեկի մաշվածությունը կարող է խախտել առանձին տառերի միջև եղած տարածությունը:

Ստորև բերվում է մի քանի սխառների գրամեքենաների գլխավոր մեխանիզմի քայլի մեծությունը.

Քայլը մմ-ով	Մեքենայի սխառները
2,4	Ունդերվուդ-(դյուրատար)
2,5	Կիև
2,5	Մերսեդես
2,54-2,8	Ռեմինգտոն (դյուրատար)
2,6	Լենինգրադ (դյուրատար)
2,6	Ռեյնմետալ (գրասենյակային և դյուրատար)
2,8	Լենինգրադ (գրասենյակային)
2,84	Մոսկվա (գրասենյակային)
2,87	Ուկրաինա
2,64	Մոսկվա (դյուրատար)

Շրիֆտի (տպատատի) տիպը: Նկատի է առնվում շրիֆտի ուրվանկարն ու չափը: Շրիֆտի տիպը ևս էական հատկանիշ է, որովհետև՝ յուրաքանչյուր գրամեքենայի վրա տեղադրվում են միատեսակ և միևնույն չափի շրիֆտներ:

Շրիֆտի չափը որոշվում է փոքրատատի տողային էլեմենտների բարձրությամբ և լայնությամբ: Մեկ գրամեքենայի բոլոր փոքրատատերի տողային էլեմենտները ունեն միևնույն բարձրությունը: Լայնությունը որոշելիս պետք է հաշվի առնել էլեմենտների քանակը (արդյոք երկէլեմենտ է, թե եռէլեմենտ): Մեքենագրական շրիֆտները կարող են լինել մեծ, միջին և մանր:

Մեքենագրական տեքստերում տառերի բարձրության և լայնության չափերի վրա կարող են ազդել մի շարք գործոններ: Օրինակ՝ մեքենագրական ժապավենը, ստեղներից ազդող հարվածի ուժը, գլանիկի դրուք-

յունը, ինչպես նաև այն, թե տվյալ տեքստը առաջին օրինակն է, թե պատճենը:

Ըստ Ն. Մ. Ջյուսկինի, հիշատակված գործոնների ազդեցության հետևանքով իսկական չափից կարող է առաջանալ 10 տոկոսի տարբերություն¹:

Մեքենագրական շրիֆտները կարող են միմյանցից տարբերվել ոչ միայն չափերով, այլ նաև ուրվանկարով:

Այս առանձնահատկություններն ուսումնասիրելու համար օգտագործվում է հորիզոնական և ուղղահայաց գծեր ունեցող թափանցիկ քիթը: Թեքության անկյունը որոշելու համար օգտագործվում է անկյունաչափ:

Գրամեքենաների շրիֆտները, ինչպես հայկական, այնպես էլ արտասահմանյան, թողարկում են մի շարք մակնիշներով: Շրիֆտների առանձին մակնիշներ միմյանցից տարբերվում են չափերով, ուրվանկարով և դասավորման առանձնահատկություններով: Գրամեքենաների շրիֆտների տարբեր մակնիշներ անվանվում են տարբեր նիշերով: Օրինակ՝ որոշ շրիֆտների մակնիշներ նշվում են տառերի և թվերի համակցությամբ (P₂, P₃, P₄ և այլն), մեկ կամ մի քանի տառերով («ո», «Ր», «PR» և այլն) կամ թվերով («100», «34», «22» և այլն): Մյուսները նշվում են էմբլեմով՝ «աստղիկ», «եռանկյունի» և այլն: Մակնիշը տեղավորվում է տառային կադապարի վրա՝ վերին և ներքին նիշերի միջև:

Գրամեքենայի որոշակի սխտեմի մասին չի կարելի դատել միայն շրիֆտների մակնիշների միջոցով, որովհետև մի գրամեքենայում կարող են դրվել տարբեր մակնիշի շրիֆտներ, որոնք կհամապատասխանեն գլխավոր մեխանիզմի քայլին, բացի այդ, միևնույն մակնիշի շրիֆտը կարող է դրվել մի շարք գրամեքենաների վրա:

Հաջորդ ընդհանուր հարկանիշը փողերի միջև եղած տարածությունն է (ինտերվալը): Յուրաքանչյուր գրամեքենա ունի տողերի միջև եղած տարածությունը կարգավորող մեխանիզմ: Այս տարածությունը գրամեքենաների վրա նշվում է 1, 1,5, 2,3 և այլ պայմանական թվանշաններով:

Տարբեր սխտեմի գրամեքենաներ ունեն այդ տարածության տարբեր չափսեր, որոնցից մի քանիսը բերվում են աղյուսակում:

¹ Н. М. Зюскин, Об исследовании машинописных текстов. Криминалистика и научно-судебная экспертиза, Киевский НИИСЭ, сб., 3, стр. 97:

Գրամեքենայի սխտեմը	Ինտերվալի չափսերը մմ-ով			
	1-ինտ.	1,5-ինտ.	2-ինտ.	3-ինտ.
Մոսկվա (գրասենյակային)	4,25	6,3	8,5	13,0
Լենինգրադ	4,0	-	6,0	8,0
Օլիմպիա (դյուրատար)	4,4	-	8,8	13,2
Ռեմինգտոն	4,0	-	8,0	12,0
Մոսկվա (դյուրատար)	4,0	-	8,0	12,0
Պրոգրես, Ուկրաինա	4,2	-	8,4	12,6

Պետք է նշել, որ շատ սխտեմների գրամեքենաներ ունեն ինտերվալների միատեսակ ժողովածու և միատեսակ մեծություն: Բայց և կան գրամեքենաներ, որոնք ունեն տողամիջյան այնպիսի տարածություն, որը տարբերվում է մնացած բոլոր սխտեմի մեքենաների տողամիջյան տարածություններից, օրինակ՝ գրասենյակային «Մոսկվա» գրամեքենան, «Լենինգրադ», «Օլիմպիա» (դյուրատար), «Ռեմինգտոն» մեքենաները:

Ինտերվալը չափվում է քանոնի, չափակարկինի կամ գործիքային մանրադիտակի միջոցով: Չափելու համար պետք է երկու հարակից տողերում գտնել իրար տակ տեղավորված նույնանուն տառեր և չափել տառերի հիմքերի կամ գագաթների միջև եղած տարածությունը: Եթե տեքստում իրար տակ տեղավորված նույնանուն տառերը բացակայում են, ապա կարելի է չափել երկու նման տառերի միջև եղած տարածությունը: Ավելի ճիշտ արդյունքի հասնելու համար ցանկալի է կատարել այդ տարածության մի քանի չափումներ տեքստի տարբեր մասերում և հանել միջին քվադրանկանը:

Գրամեքենաների *ստեղնաշարի տիպը* որոշվում է նրանով, թե որքան միջ կա տառային կադապարում և քանի ստեղն՝ տվյալ գրամեքենայի ստեղնաշարում:

Հետագոտվող մեքենագրական տեքստով գրամեքենայի ստեղնաշարի տիպը որոշելը էական ընդհանուր հատկանիշներից մեկն է:

Ստեղների թվական տարբերությունը կախված է լրացուցիչ նշանների ((), -, %, «», + և այլն) առկայությունից և թվից: Գրամեքենաների ստեղնաշարերը սովորաբար ունենում են 42-46 ստեղն և համապատասխանաբար 84-92 միջ: Այսպիսի գրամեքենաների տառային կադապարում միջերը տեղավորված են զույգերով՝ երկու փոքրատառ, զլիսատառ և փոքրատառ, կամ տառ և լրացուցիչ նշան:

Արտասահմանյան որոշ գրամեքենաների ստեղծաշարերը կրճատված են այն հաշվով, որ տառային կադապարի վրա նշանները հասցվել են երեքի: Մեքենագրված տեքստով ստեղծաշարի տիպը որոշել միշտ չէ, որ հաջողվում է: Նշանների քանակը, ինչպես նաև ստեղծների քանակը որոշել կարելի է միայն մեծ տեքստի առկայության դեպքում, որը կրովանդակի ոչ միայն տառային, այլև թվային նյութ: Երբեմն նույնիսկ ոչ մեծ տեքստերով որոշ նշանների առկայությունը, ինչպես փակագիծը, հոռմեական նշանները (արաբականի հետ), 1\2, 3\4 և այլն, հիմք են տալիս եզրակացնելու, որ փաստաթուղթը տպագրված է մեծաքանակ ստեղծներ ունեցող գրամեքենայով:

Տառային կադապարում նշանների քանակը որոշել հնարավոր է նաև այն դեպքում, երբ գրամեքենան, որով տպագրված է փաստաթղթի տեքստը, լիտերային լծակի թերություն ունի: Օրինակ՝ լիտերային լծակի ծովածությունը և անկայունությունը: Լիտերային լծակի ծովածությունը հասցնում է նրան, որ այդ լծակին զոդված տառային կադապարն ստանում է թեքվածք՝ ձախ կամ աջ, այդ պատճառով էլ այն նշանները, որոնք ստեղծադրված են այդ տառային կադապարի վրա, միատեսակ թեքվում են ուղղահայաց առանցքից ձախ կամ աջ և հորիզոնական առանցքից վերև կամ ներքև: Հետևաբար եթե հետազոտվող տեքստում հայտնաբերվի որևէ մեծատառի և նրան համապատասխանող փոքրատառի կամ թվանշանի պարբերական տեղաշարժ ուղղահայաց առանցքից աջ կամ ձախ, ապա դա կլինի անվիճելի ապացույց, որ տառային կադապարի վրա կա երկու նիշ, իսկ եթե շեղվում է մեկ փոքրատառ կամ մեկ գլխատառ, ապա այդ հանգամանքը վկայում է այն մասին, որ տառային կադապարն ունի միայն մեկ նշան:

Մեքենագիր տեքստերի ընդհանուր հատկանիշներն ուսումնասիրելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև *լրողի երկարության* վրա, չնայած վերջինս ինդենտիֆիկացման համար մեծ նշանակություն չունի, քանի որ տողի երկարությունը որոշվում է ոչ այնքան գլանիկի երկարությամբ, որքան թղթի չափով և տպագրելիս՝ լուսանցքը սահմանափակող հարմարանքով: Բայց այստեղ էլ հնարավորություն կա բացառելու ավելի կարճ գլանիկ ունեցող գրամեքենան, քան հետազոտվող տեքստի տողերի երկարությունն է: Օրինակ՝ այս հատկանիշով կարելի է որոշել, որ փաստաթուղթը տպագրված է ոչ թե դյուրատար գրամեքենայով, այլ լայն թերթի համար մեծ թմբուկ ունեցող գրասենյակային գրամեքենայով:

Պարզելու համար, թե հետազոտվող մեքենագրական տեքստը տպագրված է տվյալ գրամեքենայով, անհրաժեշտ է հիմնվել նրա մասնավոր հատկանիշների վրա:

Այդ հատկանիշները կարող են արդյունք լինել գրամեքենայի մեխանիզմի առանձին դետալների անկանոն աշխատանքի և նրանց շրիֆտների մակերեսի վրա եղած դեֆեկտների:

Առաջին դեպքին բնորոշ են հետևյալ հատկանիշները.

1. մեքենագրական շրիֆտի շեղումն ուղղահայաց առանցքից աջ կամ ձախ,

2. մեքենագրական նշանների շեղումը տողի գծից վերև կամ ներքև,

3. առանձին տառերի և բառերի միջև ընկած տարածության համաչափության խախտումը,

4. նշանների դրոշմումը իրար վրա,

5. նշանների դրոշմվածքների ներկիչների փոփոխական խտությունը,

6. նշանների դրոշմվածքների սվաղվածությունը,

7. տողամիջյան տարբեր հեռավորությունները,

8. նշանների կիսատ դրոշմումը,

9. նշանների դրոշմվածքների ներկիչների ինտենսիվության աստիճանական փոքրացումը,

10. մեքենագրական տեքստում տողերի զուգահեռության խախտումը:

Գրամեքենաների շրիֆտների մակերեսների վրա եղած դեֆեկտների հետևանքով առաջացած հատկանիշներն են.

1. նշանների դրոշմվածքների տարբեր մասերի զույգների խտության տարբերությունը,

2. գրամեքենաների շրիֆտների փոս ընկած մասերի դրոշմումը ցցված մասերի հետ,

3. որոշ նշանների կողմից փաստաթղթի վնասումը (պատռվածք, անցք և այլն),

4. նշանների ձևափոխությունը (դեֆորմացիան),

5. մեքենագրական շրիֆտի մի նշանի փոխարինումը մեկ ուրիշով:

Մեքենագրական տեքստերում մասնավոր հատկանիշները կարող են ծագել ոչ միայն վերը նշված պատճառներից, այլև կարող են հետևանք լինել այլ պատճառների, կախված այդ մեքենաների վրա աշխատող անձի որակավորումից:

Պետք է հաշվի առնել նաև այն, որ վերը նշված հատկանիշներից շատերը երբեմն կարող են կրել պատահական բնույթ: Օրինակ՝ գրամեքենայի հետ անզգույշ վերաբերմունքի կամ տպագրելու կանոնները ճիշտ չիմանալու հետևանքով մեքենագրողը տեքստում կարող է թույլ տալ մի շարք թերություններ, որոնք հատուկ չեն տվյալ գրամեքենային, բայց իրենց արտաքին տեսքով նմանվում են վերը նշված հատկանիշներին: Ուրեմն պետք է կարողանալ դրանք տարբերել վերը նշված հատկանիշներից: Համեմատվող մեքենագրական տեքստերն ուսումնասիրելիս անհրաժեշտ է պարզել այս կամ այն հատկանիշի առաջացման պատճառը: Դրա համար անհրաժեշտ է ստուգել յուրաքանչյուր հատկանիշի կայունության աստիճանը և ճիշտ գնահատել այն: Համեմատական հետազոտման արդյունքները գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել ընդհանուր և մասնավոր հատկանիշների կայունությունը և ամբողջականությունը:

Զննչական պրակտիկայում երբեմն անհրաժեշտություն է առաջացում որոշել *հետազոտվող փաստաթուղթը մեքենագրող անձին:*

Հետազոտվող տեքստը մեքենագրողին պարզել հնարավոր է ոչ բոլոր դեպքերում: Այդ նպատակի համար հետազոտվող մեքենագրական տեքստերը պետք է ունենան բավականին մեծ ծավալ և որոշակի բովանդակություն:

Հետազոտվող փաստաթուղթը մեքենագրողի հարցը լուծելիս ամենից առաջ պետք է ուշադրություն դարձնել գրամեքենայի վրա տպագրելու տեխնիկային անձի ծանոթության աստիճանին, որի մասին վկայում են հետևյալ հատկանիշները.

- ա) լուսանցքների առկայությունը և նրանց տեղավորվածությունը հետազոտվող փաստաթղթի վրա,
- բ) հարվածի ուժն ու համաչափությունը,
- գ) տողամիջյան տարածության պահպանումը,
- դ) պարբերության առկայությունը,
- ե) փաստաթղթի բլանկի տողերի ճիշտ պահպանումը,
- զ) առանձին բառերի, ինչպես նաև բառերի և կետադրության նշանների միջև որոշակի տարածության պահպանումը,
- է) փաստաթղթի վրա եղած ծալքերը (հատկապես երկրորդ և մյուս օրինակների վրա):

Պատճենահան թղթի հետքերը մեծ մասամբ վկայում են, որ տեքստը տպված է այնպիսի անձի կողմից, որը թուղթը գրամեքենայի մեջ տեղավորելուն լավ ծանոթ չէ:

Մի շարք հիմնարկ-ձեռնարկություններում և կազմակերպություններում գոյություն ունեն որոշակի կանոններ, որոնք վերաբերում են ամսաքվերի տեղավորման եղանակին, վերնագրին, կազմակերպությունների հասցեների տեղավորմանը, էջերի համարակալմանը, տվյալ փաստաթուղթը ստորագրող անձի ազգանվան տեղավորմանը և այլն: Այս հատկանիշները հաշվի առնելով կարելի է պարզել. փաստաթուղթը տպագրված է տվյալ հիմնարկությունում աշխատող անձի կողմից, թե՛ ոչ:

Հետազոտվող փաստաթուղթը մեքենագրող անձի պարզաբանման հարցը լուծելիս պետք է ուշադրություն դարձնել նաև տպագրող անձի սովորությունները բնութագրող հատկանիշներին (ընդգծումներ, տողադարձ, մեջբերումների տեղադրում, սխալների ուղղում), ինչպես նաև քերականական սխալների և գրավոր խոսքի այլ հատկանիշների վրա:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում մեքենագրական տեքստերում *հավելապայումների* հետազոտումը:

Մեքենագրական տեքստերում հավելատպումները հետազոտելիս օգտագործում են այն նույն մեթոդները, ինչ որ ձեռագիր տեքստերում հավելագրումները հայտնաբերելիս:

Հավելատպումների առկայության մասին կարող են վկայել հետևյալ հատկանիշները.

- ❖ փաստաթղթի տեքստի բովանդակության մեջ անհամապատասխանությունների և հակասությունների առկայությունը,
- ❖ առանձին բառերի կրճատումը,
- ❖ որոշ բառերի լուսանցք դուրս գալը,
- ❖ առանց ինտերվալի մի շարք բառեր իրար հետևից շարելը,
- ❖ առանձին բառերի ներկի երանգի տարբերությունը,
- ❖ մեքենագրական ժապավենի գործվածքի բաղադրության տարբերությունը,
- ❖ սկզբնական տեքստի տողագծի և հավելատպված բառի տողագծի անհամապատասխանությունը,
- ❖ նշանների տեղաբաշխումն անկայուն ուղղահայացի վրա,
- ❖ սկզբնական տեքստի բառերի և հավելատպված բառերի միջև եղած տարածության տարբերությունը,
- ❖ տարբերությունը սկզբնական և հավելատպված տեքստի ընդհանուր և մասնավոր հատկանիշների միջև:

Համեմատական հետազոտման համար մեքենագրական տեքստերի մոուլզների պատրաստումը

Իդենտիֆիկացման նպատակով մեքենագրական տեքստերի հետազոտման հաջողությունը մեծ չափով կախված է նրանից, թե որքա՞ն լիարժեք են գրամեքենայի շրիֆտի մոուլզերը, որոնց հետ համեմատվում է տվյալ փաստաթուղթը: Այդ մոուլզերը պետք է լինեն ազատ և փորձառական:

Տվյալ գրամեքենայով տպված տեքստերը նրա նորմալ շահագործման ժամանակ, մինչև տվյալ փորձաքննության հետ կապված գործի ծագումը, համարվում են «ազատ» մոուլզեր: Փորձառական են համարվում այն մոուլզերը, որոնք տպվում են դատաքննչական օրգանների պահանջով, համեմատական հետազոտման համար:

Գրամեքենայի շրիֆտի դրոշմվածքի մոուլզերի համար պետք է պահպանել հետևյալ կանոնները.

մոուլզը պետք է տպագրված լինի նույնպիսի պայմաններում, ինչպիսի պայմաններում կատարված է վիճելի փաստաթուղթը (ժապավեն, պատճենահան թուղթ, թուղթ),

մոուլզը պետք է պարունակի գրամեքենայի բոլոր նշանների դրոշմվածքները, ինչպես նաև պետք է տպվի հետազոտվող փաստաթղթի ամբողջ տեքստը (կամ մման մի տեքստ) և որևէ մեծածավալ տեքստ:

Յանկալի է նաև տեքստը տպագրել տվյալ գրամեքենայի բոլոր ինտերվալներով, ինչպես նաև փնտրել այդ գրամեքենայով տպագրված փաստաթղթեր, տեքստեր, որոնք տպագրված են մոտավորապես հետազոտվող փաստաթղթի տպագրության ժամանակ:

Քիչ չեն դեպքերը, երբ հետազոտությունը հանգեցնում է անորոշ հետևության, նույնիսկ այնպիսի պայմաններում, երբ գրամեքենայի շրիֆտի մոուլզերը պատասխանում են բոլոր պահանջներին, հատկապես, երբ փաստաթուղթը բնագրի պատճենն է՝ տպագրված պատճենահան թղթի միջոցով:

Պատճառն այն է, որ գրամեքենայի շրիֆտը արտատպվում է թղթի վրա ոչ անմիջապես, այլ ժապավենի և մեկ կամ մի քանի շերտ թղթի միջոցով: Այդ պատճառով էլ դժվար է որոշել, թե դրոշմվածքի որ առանձնահատկություններն են առաջացել շրիֆտի դեֆեկտի հետևանքով և որոնք՝ պատահական պատճառներից:

Դրոշմվածքի վրա կարող են ազդել մի շարք գործոններ՝ թղթի, ժապավենի որակը, շրիֆտի կեղտոտության աստիճանը, գլանիկի դրուբյունը, հարվածի ուժը: Այդ խոչընդոտներից խուսափելու համար խորհուրդ է տրվում դրոշմումը առանց ժապավենի, պատճենահան թղթի միջոցով:

Պատճենահան թուղթը, հատկապես երբ բարձր որակի է, ունի շատ նուրբ կառուցվածք և ավելի բարակ է, քան ժապավենը: Հարվածի ուժը, այդ եղանակով տպագրելիս, ավելի քիչ դեր է խաղում, քան ժապավենի միջոցով տպագրելիս: Տպագրման այդպիսի մեթոդի ժամանակ կարելի է ստանալ գրամեքենայի շրիֆտի ամբողջովին անփոփոխ դրոշմվածքը, որտեղ բավարար պարզությամբ և առանց շեղումների վերարտադրվում են նրա բոլոր դեֆեկտները և առանձնահատկությունները:

Դրոշմվածքի որակի վրա գլանիկի ազդեցությունը հեշտությամբ կարելի է վերացնել՝ թղթի տակ տեղավորելով ստվարաթղթի բարակ շերտ:

Այս մեթոդով դրոշմվածքներ կատարելուց առաջ շրիֆտը խնամքով պետք է մաքրել չոր խոզանակով, չնայած նրան, որ շրիֆտի կեղտոտ լինելը այս դեպքում ավելի քիչ դեր է խաղում, քան ժապավենի օգնությամբ տպելիս, և նույնիսկ կեղտոտված շրիֆտը տալիս է բավարար դրոշմվածք:

§ 8. ԿՆԻՔՆԵՐԻ ԵՎ ՇՏԱՄՊՆԵՐԻ (ԴՐՈՇՄԱԿՆԻՔՆԵՐԻ) ԴՐՈՇՄՆԵՐԻ ՀԵՏԱՉՈՏՈՒՄԸ

Կնիքների և շտամպների դրոշմների հետազոտությունը կատարվում է դրանց կեղծման փաստը և եղանակը պարզելու, ինչպես նաև կնիքը և շտամպը նույնացնելու նպատակներով:

Իրենց մյուս կարևոր ֆունկցիաներից բացի այդ դրոշմները նաև փաստաթուղթը կեղծիքից պաշտպանելու միջոցներ են:

Կնիքները և շտամպները պատրաստվում են ռետինից և մետաղից: Ռետինից պատրաստվածները առաջացնում են մակերեսային-գունավոր դրոշմներ, մետաղականները՝ ռելիեֆային անգույն և ռելիեֆային գունավոր դրոշմներ:

Կնիքների և շտամպների կեղծման եղանակներն են.

1. դրոշմի գծագրումը փաստաթղթի վրա,
2. դրոշմումը միջանկյալ հարթ կլիշեի միջոցով,
3. ձեռքով փորագրված (ռելիեֆային) կլիշեի կամ տպագրական լիտերներով հավաքված կլիշեի միջոցով,

4 որևէ փաստաթղթից իսկական կնիքի (շտամայի) դրոշմի արտատպումը կեղծ փաստաթղթի վրա,

5 գործարանային եղանակով, բոլոր կանոնների պահպանմամբ:
Փաստաթղթի վրա գծագրված դրոշմը հետագոյնիս պետք է հայտնաբերել այդ սննդդին հատուկ այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են. գծագրմանը նախապատրաստվելու հատկանիշները (մատիտի գծիկների առկայություն, առանձին մասեր նկարելու հատկանիշներ և այլն), գրող կամ գծագրող գործիքի հատկանիշները (մատիտի, գրիչի սեղմման, կարկինի, գծագրիչի և այլն), շտրիխներում ներկիչի կուտակման ձևը՝ համեմատած իսկական դրոշմների հետ: Կարևոր հատկանիշներ են գծագրված շրիֆտների առանձնահատկությունները (համանուն տառերի ուրվանկարի տարբերություն, նշանների անհամաչափություն, նրանց միջև եղած տարածությունների անհամաչափություն, առանձին տառերի, նրանց էլեմենտների խեղաթյուրումներ և այլն):

Կնիքի (շտամայի) դրոշմը կեղծելու համար *հարթ կլիշե* է ծառայում ամուր, սպիտակ թուղթը կամ ֆիքսված ֆոտոթուղթը, որոնց վրա լավ արտատպվող ներկիչով (օրինակ՝ անիլինային թանաքով) նկարվում է դրոշմի հայելային պատկերը: Երբեմն խոնավ թղթի կամ ֆիքսված ֆոտոթղթի վրա որևէ փաստաթղթից արտատպվում է իսկական դրոշմը, թուղթը (ֆոտոթուղթը) չորացնելուց հետո այն կրկնագծվում է արտատպվող ներկիչով, նորից խոնավացվում է (կամ խոնավացվում է փաստաթղթի համապատասխան մասը) և դրոշմվում կեղծվող փաստաթղթի վրա:

Այդպիսի դրոշմը բնութագրվում է նույն հատկանիշներով, որ նշվեց վերը: Դրանք վերաբերում են միշերի ուրվանկարին, նրանց չափսերին, տեղադրությանը, նշանների կամ նրանց առանձին մասերի գունավորման անհամաչափությանը, մանր շտրիխների բացակայությանը: Բացի այդ, փաստաթղթի դրոշմ պարունակող մասը խոնավության ազդեցությունից կորցնում է փայլը և տարբերվում է ուլտրամանուշակագույն լյումինեսցենցիայի բնույթով:

Ձեռքով փորագրված (ռեկիեֆային) կլիշեով կատարված դրոշմումը առաջացնում է նշված հատկանիշները, որոնք վերաբերում են գծագրին, նրա չափերին, տեղադրությանը: Ձևավոր տառերի եզրագծերը աղավաղվում են: Ձևավոր տառերը կամ նրանց նույնպիսի էլեմենտները ստանում են անկյունային ձև, երբեմն կտրող գործիքը անցնում է անհրաժեշտ սահմանը և առաջացնում ավելորդ գիծ, որը դրոշմվում է սպիտակ գծիկի ձևով: Հաճախ դրոշմի վրա մնում են կլիշեի նյութի մասնիկներ (օրինակ՝ փայտի, ռետինի մնացորդներ): Այս հատկանիշների հայտնաբերումը

կատարվում է խոշորացույցով, մանրադիտակով, ինչպես նաև 2-3 անգամ մեծացված լուսանկարներով:

Տպագրական լիտերներով պատրաստված կլիշեով դրոշմելիս փաստաթղթի վրա առաջանում է ռելիեֆ, որը հայտնաբերվում է ստվերային լուսավորությամբ: Նշանները գունավորվում են անհամաչափ, բանի որ ներկիչը լիտերի մետաղը հավասար չի ծածկում:

Հատկանիշ է ներկի ցայտուկների առկայությունը, որոնք առաջանում են մետաղական լիտերի և թղթի կոնտակտի ժամանակ: Երբեմն լիտերները լավ չեն ամրացվում, որի հետևանքով նիշերը խառնվում են, իսկ երբեմն էլ լիտերների պակասի պատճառով բացակայում են որոշ նշաններ, մեծատառեր և այլն:

Որևէ փաստաթղթից իսկական կնիքի (շտամպի) դրոշմի արտատպումը կեղծ փաստաթղթի վրա առաջացնում է դրոշմի հայելային պատկեր, ինչպես նաև մյուս այն հատկանիշները, որոնց մասին խոսվեց միջանկյալ կլիշեով դրոշմելու դեպքում:

Գործարանային եղանակով պարրասրված կլիշեի օգտագործման փաստը պարզելու համար անհրաժեշտ է կատարել վիճելի և իսկական կնիքի (շտամպի) դրոշմների համեմատական հետազոտում (նույնացում):

Կնիքների և շտամպների (դրոշմակնիքների) խմբային պատկանելության որոշումն ու նույնացումը նրանց դրոշմներով

Կնիքների և շտամպների (դրոշմակնիքի) խմբային պատկանելության որոշումն ու նույնացումը կատարվում է կրիմինալիստիկական նույնացման ընդհանուր կանոններով, այսինքն՝ վիճելի դրոշմը համեմատվում է իսկական կնիքի (շտամպի) դրոշմի հետ: Համեմատական հետազոտման գործընթացը, ըստ էության, վիճելի և իսկական դրոշմների ընդհանուր և մասնավոր հատկանիշների հայտնաբերման ու համեմատման գործողություններն են, որոնք ավարտվում են դրանց գնահատմամբ և հետևություններով:

Ընդհանուր հարկանիշների թվին դասվում են. կնիքի, շտամպի ձևը, չափերը, բովանդակությունը, գերբի կամ այլ պատկերների, նշանների առկայությունը, ձևը, շրիֆտների չափերը, ուրվանկարը: Չափերը դրոշմելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տառերի չափերի վրա կարող են ազդել կնիքի (շտամպի) վիճակը (հին, նոր), ներկիչի բաղադրությունը, դրոշմելիս սեղմման ուժը, թղթի որակը և այլն:

Մասնավոր հասկանիչներն են. տառերի կառուցվածքային առանձնահատկությունները (ռեֆլեկտորային շտրիխներ, շտրիխների ծովածություն, միացման առանձնահատկություններ և այլն):

Գերբի, առանձին պատկերների, նշանների կառուցվածքային առանձնահատկություններ:

Շրջանակների գծերի առանձնահատկություններ (հաստությունը, ծովածությունը, տարբեր մասերի անհամաչափությունը և այլն):

Առանձնահատկությունների թվին են դասվում նաև նշանների, տառերի առանձին մանր մասերի ձևը, տարբեր էլեմենտների տեղադրությունը միմյանց նկատմամբ, շտրիխների միացման անկյունների չափերը, շտրիխների լայնությունը և այլն:

Գրոշմով կնիքի (դրոշմակնիքի) նույնացման համար անհրաժեշտ են նույնացվող կնիքի (դրոշմակնիքի) դրոշմի նմուշներ:

Ազատ նմուշները, ըստ հնարավորին, պետք է համապատասխանեն վիճելի դրոշմին՝ կատարման ժամանակով:

Տվյալ կնիքի (դրոշմակնիքի) փորձառական նմուշները վերցվում են հետազոտման ենթակա փաստաթղթի նման թղթի վրա, առնվազն 10-15 դրոշմումով, ինչպես նաև սպիտակ թղթի վրա, տարբեր ուժի սեղմումով: Հետազոտումը իրականացվում է անգեռն աչքով, խոշորացույցով, մանրադիտակով, դրոշմների մեծացված լուսանկարներով, ինչպես նաև պոզիտիվային ֆոտոթիթեղների վրա կատարված լուսանկարների համատեղումով՝ թափանցող լույսի տակ:

ԳԼՈՒԽ 18. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՖՈՆՈՍԿՈՊԻԱ

Հաճախ քննչական և դատական մարմինների մոտ անհրաժեշտություն է առաջանում ձայնագրառման կիրառման, ինչպես նաև ձայնագրառված ժապավեններով որոշակի հարցերի պարզաբանման՝ հատուկ գիտելիքների կիրառման միջոցով:

Քրեական դատավարությունում ձայնագրառման պրակտիկ կիրառման անհրաժեշտությունը պայմանավորված է համապատասխան ապարատուրայի նախապատրաստման, ձայնագրառման ու վերարտադրման մատչելիությամբ, արագությամբ, գրառված ժապավենի երկարատև օգտագործման, բազմիցս վերարտադրելու, պատճեն ստանալու հնարավորությամբ, ցանկացած տեղում ու պայմաններում ձայնագրելու կարողությամբ և այլն:

* * *

Դժվար է պատկերացնել մարդկային փոխհարաբերությունները առանց բանավոր խոսքի, նրա դրսևորման բազմատեսակությամբ հանդերձ: Իսկ այն արտահայտվում է անմիջականորեն, հեռախոսով, կինո, տեսաժապավեններում և այլն:

Բանավոր խոսքը նյութական աշխարհում առաջացնում է փոփոխություններ, որոնք անվանվում են «ձայնային հետքեր»:

Մարդու ձայնային հետքի դերը գնալով բարձրանում է նաև նրանով, որ ֆիքսման ավանդական միջոցներով կազմված (ձեռագիր, մեքենագիր) փաստաթղթերն ավելի հաճախ են փոխարինվում ձայնագրառմամբ ու տեսագրմամբ և ավելի հաճախ են կիրառվում առօրյա կյանքում:

Այս բոլորը պայմանավորում են ձայնային հետքերի ուսումնասիրման մեթոդների մշակումը, դրանցով ինչպես գրառող տեխնիկայի խմբային պատկանելության որոշման և նույնացման, այնպես էլ խոսողի նույնացման անհրաժեշտությունը, քննչական և դատական պրակտիկայում: Այսինքն՝ նոր, արժեքավոր ապացույցներ ստանալու անհրաժեշտությունը, հատկապես եթե նկատի ունենանք, որ դրանով հնարավոր է պարզել նաև անձի՝ (խոսողի) այլ՝ դիագնոստիկ բնույթի առանձնահատկություններ (օրինակ՝ սեռը, ազգությունը, սոցիալական պատկանելությունը, ինտելեկտուալ զարգացման աստիճանը և այլն):

Քրեական դատավարությունում դրանք օգտագործվում են հանցագործությունների քննության գործում՝ փաստական տվյալներ ձեռք բերե-

լու, հանցագործության մասնակիցների, այլ անձանց պարզաբանման, ապացուցման ենթակա հանգամանքների բացահայտման և այլ նպատակներով:

Փակագծում նշենք, որ ձայնը գրանցելու և վերարտադրելու եղանակները (մեխանիկական, մագնիսական, լուսանկարչական) հայտնագործվել են անցած դարի վերջերին:

1877 թ. Տ.Ա. Էդիսոնը հայտնագործեց ֆոնոգրաֆը, 1888 թ. Օ. Սմիթը միտք հայտնեց ձայնագրառման և վերարտադրման համար մնացորդային մագնիսացվածության օգտագործման հնարավորության մասին, իսկ 1898 թ. Վ. Պաուլսենը իրականացրեց նրա գաղափարը՝ ստեղծելով սարքավորում, որն անվանեց «տելեգրաֆոն»: 1901 թ. Է. Ռումերը կատարեց ձայնի լուսանկարչական գրառում:

Մագնիսական ձայնագրառման հայտնագործման սկիզբը ընդունված է համարել 1898 թվականը:

Սկզբնական շրջանում դրանք լայն տարածում չստացան կատարման բարդության և աշխատատարության պատճառով, թեև մասնագետները նկատել էին դրանց կիրառման հեռանկարը¹:

1934 թ. Ա.Ս. Բրուսիլովսկին և Մ.Ս. Ստրոգովիչը առաջինը կարծիք հայտնեցին հարցաքննությունների ժամանակ ձայնագրառում կատարելու վերաբերյալ²:

Բայց այդ ժամանակների տնտեսական պայմանները, բնականաբար, հնարավորություն չտվեցին զարգացնել ձայնագրառման տեխնիկան և այն ներդնել հանցագործությունների քննության գործում:

1946 թ. Ա.Ի. Վինբերգը և Ա.Ա. Էյսմանը գիտականորեն հիմնավորեցին ձայնագրառման հնարավորություններն ու քրեական դատավարությունում դրա կիրառման նպատակահարմարությունը³:

Այնհայտ է, որ ձայնագրառումը հնարավորություն է տալիս ֆիքսել բանավոր, կենդանի խոսքը, սպառիչ լրիվությամբ ընդգրկելով ոչ միայն նրա բովանդակությունը, այլև հնչյունային նրբերանգները, արտասանության ձևը և առանձնահատկությունները (հատկապես այդ որոշակի

¹ Koriska, Vajda, VFlz. Grundlagen der magnetischen signal speihering der VFlz Akademie Verlag. Berlin, 1968, s. 79-96.

² Брусиловский А.С., Строгович М.С. Свидетельские показания в качестве судебных доказательств. В. сб. методика и техника следственной работы. Киев, 1934.

³ Винберг А.И. Эйсман А.А. Фототелеграфия и звукозапись в криминалистике. М., 1946.

պահին), մտքերի շարադրման ձևը, ձայնի արտահայտչականությունը և այդ պահին նրա վրա ազդող օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնները, խոսքի բովանդակությունը, խոսողի վերաբերմունքը իր բառերին և արտահայտություններին, այն արտահայտությունները, որոնք չեն արձանագրվում, քննիչի հարցերին, դրանց շեշտադրման, որոշակիության, սպառնալից կամ այլ տոնի առումով և այլն:

Այդ բոլորը պայմանավորեցին ձայնագրառման պրակտիկայի ներդրումը և նպաստեցին տեսական քննարկումների ակտիվացմանը, որոնց արդյունքում նպատակահարմար գտնվեց դրա իրականացման օրենսդրական կարգավորումը:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում այդպիսի նորմ մտցվեց 1966 թ. հունվարի 12-ին՝ ի դեմս 97 հոդվածի: Մակայն այն վերաբերում էր միայն հարցաքննության ընթացքի ֆիքսմանը:

Թե ինչու նոր քրեական դատավարության օրենսգրքում չի կարգավորվել քրեական գործեր քննելիս ձայնագրառում, տեսաձայնագրառում և այլն կատարելու հարցը, ֆոնոգրամների ապացուցողական նշանակությունը, դրանք այլ հետազոտության են արժանի և դուրս են այս աշխատանքի նպատակներից, թեև այդ մասին ակնարկ է արվում ՀՀ ԶԳՕ 14 հոդվածում (նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիությունը), 122 հոդվածում (այլ փաստաթղթեր), 241 հոդվածում (հեռախոսային խոսակցությունները լսելը), 242 հոդվածում (քննչական փորձարարություն) և այլն: Գրանք իսկապես կարևոր են և կարծում ենք, պետք է դառնան դատավարագետների և կրիմինալիստների ավելի ակտիվ քննարկման առարկա: Այս առնչությամբ ուշադրության արժանի է Վ.Պ. Գերասիմովի այն միտքը, թե «... Ժամանակի ընթացքում հիմնական ապացուցողական նշանակությունը և տեղեկատվական արժեքը կպատկանի ֆոնոգրամին, իսկ արձանագրությունը կդառնա փաստաթուղթ, որը գրանցում է հարցաքննելիս ձայնագրառման կիրառման պայմաններն ու մեթոդները»¹:

Բայց, քանի որ ՀՀ քր. դատ. օրենսգիրքը նախատեսում է «Հեռախոսային խոսակցություններ լսելը» հոդվածը (241), որպես քննչական գործողություն և նույն գործողությունը որպես օպերատիվ-հետախուզական

¹ Герасимов В.П. Доказательственное значение воспроизведения фонограмм в суде. Советская юстиция, 1970, № 9, էջ 11-12:

միջոցառում (հոդվ. 281), որոնք իրականացվում են ձայնագրառմամբ, հնարավոր է ձայնագրառվածի հայտարարությունը, թե ֆոնոգրամում գրանցվածը իր ձայնը չէ: Նման հայտարարություն հնարավոր է նաև քննչական այլ գործողությունների ժամանակ կատարված ձայնագրառումների (ֆոնոգրամների) վերաբերյալ: Բացի այդ, բանավոր խոսքի մյուս գրառումների նման (ձեռագիր, մեքենագիր, տպագրական), այս դեպքում ևս հնարավոր է փոխել ինչպես ֆոնոգրամի բովանդակությունը, այնպես էլ ֆիքսվող ինֆորմացիայի ձևը:

Շարադրվածի հիմքով, ինչպես նաև նշված հոդվածների իրականացման կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում փորձագիտական հետազոտման միջոցով պարզելու մի շարք հարցեր, որոնք պահանջում են գիտության այդ բնագավառի հատուկ գիտելիքներ:

Ապացույցների հետազոտման միջոցների համակարգում կրիմինալիստիկական փորձաքննությունը հատուկ տեղ է զբաղեցնում, նախ՝ իր առանձնահատուկ դատավարական ձևի առումով, և երկրորդ՝ տեխնիկական լայն հնարավորությունների առկայության շնորհիվ:

Բնական ու տեխնիկական գիտությունների ներկայիս նվաճումները ընդարձակեցին կրիմինալիստիկական փորձաքննությունների սահմանները, պայմանավորեցին նրա ավանդական մեթոդների կատարելագործումը, ինչպես նաև նոր կրիմինալիստիկական օբյեկտների հետազոտման մեթոդիկաների ստեղծումը:

Ուսումնասիրվող հարցը, որը կանվանենք ֆոնոսկոպիական փորձաքննություն (այդպես է կոչվում նաև ռուսական աղբյուրներում) կամ կրիմինալիստիկական *ֆոնոսկոպիա*, համարվում է կրիմինալիստիկական փորձաքննության նոր տեսակներից մեկը¹, որը մեր հանրապետությունում առ այսօր չի կատարվում համապատասխան մեթոդիկայի բացակայության և կազմակերպական բնույթի որոշ չլուծված հարցերի պատճառով:

Ֆոնոգրամի առանձնահատկությունը, որպես կրիմինալիստիկական հետազոտության օբյեկտ, նրա հետազոտության հատուկ տեսական և մեթոդական հիմքերը, դրանցով լուծվող խնդիրները և ստացվող արդյունքները պայմանավորում են ֆոնոգրամի փորձաքննությանը տալու ինքնուրույն տեսակի նշանակություն:

¹ Լեհ կրիմինալիստ Ա. Շվարցը առաջարկում է այն անվանել «կրիմինալիստիկական (դատական) ֆոնոսկոպիա», գերմանացի կրիմինալիստ Խ. Կորիստկան՝ «կրիմինալիստիկական (դատական) սկոստիկա»: Այդ կարծիքին է նաև Ա. Լ. Լին. Леви А.А. Звукозапись в уголовном процессе. М., 1974.

Սույն աշխատանքում փորձելու ենք ներկայացնել մազնիսական ձայնագրառման (ֆոնոգրամի)՝ որպես ձայնային խոսքի միջոցով հաղորդված ինֆորմացիայի կրողի, հետազոտման մեթոդիկան, այսինքն՝ ֆոնոսկոպիական փորձաքննության (կրիմինալիստիկական ֆոնոսկոպիայի) հասկացությունը, խնդիրները և կատարման մեթոդիկան:

Կրիմինալիստիկական ֆոնոսկոպիան գիտելիքների համակարգ է ձայնի, նրա հետքերի, դրանց ամրացման միջոցների և կրիչների, ֆոնոլոգիական փաստաթղթերի պատրաստման եղանակների ու միջոցների, ինչպես նաև ձայնային տեղեկատվության կրիչների հետազոտման հմարանքների ու մեթոդների մասին, քրեական դատավարությունում դրանք որպես ապացույց օգտագործելու նպատակով:

Ձայնային խոսքի միջոցով հաղորդված ինֆորմացիան, որը ֆիքսվում է հատկապես այդ նպատակի համար նախատեսված օբյեկտի վրա, մազնիսական ժապավենն է, այլ կերպ ասած՝ **գրառման կրողը**:

Քանի որ խոսքը գնում է ձայնային ինֆորմացիայի գրառման մասին, նշենք, որ այդ երևույթը կոչվում է **չայնագրառում**, որն ըստ էության ենթադրում է ձայնային տատանումների վերափոխումը էլեկտրական մեծության, որը ֆիքսվում է մազնիսական կրիչի վրա:

Նկատի ունենալով, որ լուսաբանվող հարցի հետ առնչվող որոշ տերմիններ նոր են մուտք գործում դատական փորձաքննության, դրանով էլ քրեական դատավարության մեջ, իսկ պրակտիկայում արդեն հանդիպում են դրանց ոչ ճիշտ օգտագործման դեպքեր, պարզաբանենք, որ **չայնագրառումը** ձայնային ինֆորմացիայի ֆիքսման պրոցեսն է, իսկ ֆոնոգրամը՝ գրառման կրողն է, որի վրա ֆիքսված է ձայնային ինֆորմացիան:

Վերջինիս կրիմինալիստիկական հետազոտությունն ընդգրկում է ձայնային ինֆորմացիայի գրառման կրողի, գրանցող սարքերի ուսումնասիրում: Ֆոնոգրամի կրիմինալիստիկական հետազոտությունը կարող է լինել նույնացման և դիագնոստիկ:

Հայտնի է, որ ցանկացած փորձաքննություն, այդ թվում՝ կրիմինալիստիկական, ամենից առաջ փաստերի պարզաբանում և մեկնաբանում է: Դա նշանակում է, որ փորձաքննության յուրաքանչյուր նոր տեսակ, մասնավորապես, ֆոնոգրամների կրիմինալիստիկական փորձաքննությունը կարիք է զգում որոշելու այն խնդիրների ամբողջականությունը, որոնք նա պետք է լուծի:

¹ Ֆոնոգրամ. հուն. phone – ձայն, հնչյուն, աղմուկ, և grammar – գրանիշ, գիծ բառերից:

Կրիմինալխստիկական ֆոնոսկոպիայի օբյեկտներ են.

– նյութական կրիչների վրա ֆիքսված ձայնային ազդանշաններ, որոնք բովանդակում են ձայնային տեղեկատվություն,

– ձայնային տեղեկատվության և դրա վերարտադրման համար կրիչների պատրաստման և ֆիքսման նյութեր, եղանակներ, միջոցներ,

– մագնիսական ֆոնոգրամներ և մեխանիկական միջոցներ, որոնց օգնությամբ կատարվում են ձայնային ազդանշանների գրառումն ու վերարտադրումը: Ֆոնոսկոպիական փորձագիտական հետազոտման օբյեկտները մագնիսական ֆոնոգրամներն են, որոնցում, օրինակ, ձայնագրված են հանցագործների բանակցությունները տուժողների, նրանց հարազատների հետ կամ պատանդների գրույցները իրենց ընտանիքի անդամների, բարեկամների, ազգականների, գործընկերների հետ:

Փորձագիտական հետազոտման օբյեկտներ են համարվում նաև հանցագործների մոտից հայտնաբերված ձայնագրառման ապարատները, որոնցով ենթադրվում է, որ ձայնագրվել են նշված խոսակցությունները, ինչպես նաև քննչական գործողություններ կատարելիս հայտնաբերված ֆոնոգրամները:

Ֆոնոսկոպիական փորձաքննություն հիմնականում նշանակվում է ֆոնոգրամում գրառված բանավոր խոսքով անձին (խոսողին) նույնացնելու համար, կասկածյալի մոտից կամ այլ տեղից հայտնաբերված ապարատուրայի նույնացման կամ խմբային պատկանելության որոշման համար, ինչպես նաև պատանդների գտնվելու տեղի, նրանց զգայական վիճակի մասին տեղեկություններ ստանալու, բանավոր խոսքի առանձնահատկությունների, անձանոթ անձանց բնութագրման համար, որոնց բանավոր խոսքի ֆոնոգրամը կա քննիչի տրամադրության տակ:

Կախված առաջադրված խնդիրներից՝ կատարվում է կամ մագնիսական ֆոնոգրամների տեխնիկական (դիագնոստիկ) հետազոտություն, կամ այդ ֆոնոգրամների հետազոտություն՝ բանավոր խոսքի հատկանիշներով:

Առաջին դեպքում կարող են պարզվել ձայնագրառման որոշակի տեղը կամ այդ տեղի տարբեր բնութագրումներ, տվյալ ֆոնոգրամի վրա գրանցված կողմնակի ձայների տեսակները, տիպերը և առանձնահատուկ հատկանիշները, ֆոնոգրամի պատրաստման եղանակը (պատճենը, իսկականը), ֆոնոգրամի փոփոխման հատկանիշները, ներկայացված ձայնագրառման սարքերով, ձայնի աղբյուրների նույնացումը (օրինակ՝ շարժիչի ձայնով՝ ավտոմեքենան), օգտագործված խոսափողի (միկրոֆոնի) տիպը, դասը, ձայնագրառող ապարատում անսարքությունների առ-

կայությունը, նոր կամ օգտագործված մագնիտոֆոնային (ձայնագրառող) ժապավենի օգտագործումը, նրա տիպը, ձայնագրառման անընդհատությունը կամ դրա կատարումն ընդհատումներով, ձայնագրառման վաղեմությունը:

Տեխնիկական հետազոտումը նախատեսում է բանավոր խոսքի ֆոնոգրամների բազմակողմանի հետազոտություններ, դրանում ներգրավելով ճշգրիտ գիտությունների նվաճումները և տեխնիկական միջոցներ (սպեկտրոգրաֆ, չափողական տեխնիկա, հաշվողական տեխնիկա և այլն):

Երկրորդ դեպքում՝ ֆոնոգրամների հետազոտությունը բանավոր խոսքի հատկանիշներով, կարող են լուծվել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են. անձի նույնացումը իր բանավոր խոսքի ֆոնոգրամով, բանավոր խոսքի ֆոնոգրամում մի քանի անձանց գրառման փաստի և նրանց քանակի պարզաբանումը, ֆոնոգրամում գրանցված անձի որոշ հատկանիշներ (սեռը, տարիքը, մասնագիտությունը, կրթական, մշակութային, ինտելեկտուալ, կենցաղային զարգացածության աստիճանը, սոցիալական միջավայրը, որին շփվել է տվյալ անձը. աշխարհագրական վայրը, որտեղ ձևավորվել է նրա բանավոր խոսքը, խոսակցական ապարատի թերությունները, սովորությունները), բանավոր խոսքի տեսակը (ընթերցանություն, ազատ խոսք): Բանավոր խոսքի ֆոնոգրամով հնարավոր է լուծել մարդու հոգեկան, սոցիալական բնութագրին վերաբերվող հարցեր, գրառման պահին նրա զգայական վիճակին, բարբառին, ժարգոնին, առոգանությանը, խոսքի կուլտուրային և այլն:

Թվարկված խնդիրների լուծումը կնպաստի խոսողին նույնացնելուն, ինչպես նաև անձին բնութագրող առանձնահատկությունների պարզաբանմանը, որոնք կարող են օգտագործվել քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս:

Բացի թվարկվածներից, բանավոր խոսքի հետազոտությունը հնարավորություն կտա հայտնաբերել, չափել, համեմատել և գնահատել այն հատկանիշները, որոնք արտահայտում են հնչյունների ֆիզիկական բնութագիրը (հաճախականությունը, ժամանակը, խտությունը):

Հետազոտության այս ուղղությունը լեզվաբանական հետազոտությունների հետ համեմատած, փորձաքննություն կատարելու համար ավելի փոքր ծավալի խոսքային նյութ և ժամանակ է պահանջում:

Լեզվաբանական ուղղությունը ենթադրում է բանավոր խոսքի բարձրաձայն վերլուծության կատարում՝ առանց որևէ տեխնիկական միջոցի, բացի ձայնը վերարտադրող ապարատներից: Այս դեպքում նույնացման

հատկանիշները համարվում են խոսքի ամենատարբեր առանձնահատկությունները. ռճական, բառակազական, դարձվածաբանական, շարահյուսական, հնչյունաբանական և այլ:

Նման հատկանիշները տալիս են խոսքի որակական բնութագիրը և դրանց՝ միմյանցից ունեցած որակական տարբերությունները:

Այլ կերպ ասած՝ գնահատում են հայտնաբերված հատկանիշներն ըստ հանդիպման հաճախականության և նպաստում են դիագնոստիկ բնույթի հարցերի պարզաբանմանը:

Նույնացման և դիագնոստիկ հետազոտությունների մեթոդիկաները միմյանցից էականորեն չեն տարբերվում, այնպես, ինչպես չեն տարբերվում ընդհանրապես խմբային (սեռային) պատկանելության որոշման և նույնացման հետազոտությունները:

Բանավոր խոսքի ֆոնոգրամների հետազոտման ընդհանուր մեթոդիկան ենթադրում է նրանց համալիր ուսումնասիրումը՝ վերլուծության մեթոդների ու միջոցների կիրառմամբ, ինչպես քանակական հատկանիշների (տեխնիկական ուղղության), այնպես էլ որակական հատկանիշների (լեզվաբանական ուղղության):

Հետևություններն արվում են ամբողջ հետազոտական արդյունքների հիման վրա:

Ֆոնոսկոպիական հետազոտության խնդիրները թելադրում է պրակտիկան: Դրանք ակնհայտ են և վերևում շարադրված:

Ինչ վերաբերվում է ֆոնոգրամներից և դրանց գրառման պրոցեսին մասնակցող տեխնիկական միջոցներից ակնկալվող ինֆորմացիայի ուսումնասիրմանը, հետազոտմանը, ապա նախ պետք է ծանոթանալ ձայնագրառման բուն պրոցեսին:

Այն անցնում է հետևյալ փուլերով:

Առաջինը ձայնի աղբյուրն է, որն ըստ էության տարբեր առարկաների, գործիքների, բնական երևույթների, կենդանի էակների կողմից օդային միջավայրում մեխանիկական, ճկվող տատանումների առաջացումն է, որն ընկալվում է լսողության օրգանների կողմից: Մյուսը՝ ձայնային դաշտը իրենից ներկայացնում է այն տարածությունը, որտեղ առաջանում են ձայնային տատանումները և տարածվում են աղբյուրից մինչև փոխարկիչը: Այդ տարածությունը կարող է լինել փակ (շինություն) և բաց (օրինակ՝ փողոց): Չայնային տատանումների փոխարկիչը միկրոֆոնն է (խոսափողը), որ ձայնային տատանումները վերածում է նրանց համապատասխան՝ էլեկտրական տատանումների: Բանավոր խոսքային (հնչյունի, աղմուկի) ինֆորմացիան գրանցվում (ֆիքսվում) է ձայնի մագ-

նիսական գրանցման ապարատի վրա, որտեղ ձայնային ինֆորմացիան ընդունողն ու կրողը ֆոնոգրամն է:

Բանավոր խոսքի ֆոնոգրամներով անձի նույնացման հետազոտությունները սկսեցին իրականացվել 1960-ական թվականներին Լեհաստանում: 1964 թ. հրատարակվեց Ա. Շվարցի մենագրությունն այդ մասին¹:

Հետաքրքիր տեղեկություններ էին պարունակում նաև Լ. Կերստայի աշխատանքները: Նրա եզրակացությունը՝ անձի պարզաբանումը նրա բանավոր խոսքի ֆոնոգրամով, որում օգտագործված էր ձայնի սպեկտրալ պատկերը, ԱՄՆ-ում առաջին անգամ օգտագործվել է դատական քննության ժամանակ՝ 1966 թ. ապրիլի 11-ին: Նա տարբեր անձանց մոտ միևնույն ձայնի կրկնության հավանականությունը համեմատում է մատների գծանախշերի կրկնության հավանականության հետ: Նույնատիպ փորձաքննություն է նկարագրել նաև Խ. Կորիստկան իր աշխատության մեջ (կատարված Գ-Գ-Հ-ում)²:

Նույն 1960-ական թվականներին ԽՍՀՄ-ում ևս սկսեցին իրականացնել այդ աշխատանքները³:

1. Ֆոնոգրամների տեխնիկական (դիագնոստիկ) հեղազոտում:

Ֆոնոգրամների կրիմինալիստիկական փորձաքննություն իրականացնելիս առաջին հերթին ուսումնասիրվում է գրառման կրողի տեխնիկական բնութագիրը:

Ձայնագրառող և ձայնավերարտադրող սարքերն ըստ էության էլեկտրոնային ապարատներ են, որոնց հիմնական մասերն են. խոսափողը (միկրոֆոնը), մագնիսական ժապավենը, ժապավենաձիգ մեխանիզմը, գրառման ուժեղացուցիչը:

Մագնիսական ֆոնոգրամների վերարտադրությունը կատարվում է գրառման հակառակ պրոցեսով:

Մագնիսական գրառման կարևորագույն հատկություն է համարվում գրառումը մաքրելու և նույն տեղում այլ գրառում կատարելու հնարավոր-

¹ St' u Szwarc A. Kriminalistyżana ekspetyża zapisu magnetofonowego. Warszawa, 1964.

² Koristka Ch. Magnettonaufzeichnungen und kriminalistische Praxis. Berlin, 1968.

³ Снетков В., Куприянов В. Об экспертной идентификации личности по магнитным фонограммам. “Труды ВНИИ МООП РСФСР”, №7: Беляев Б.Г. Прибор для получения “отпечатков” голоса (вокалограф). “Труды ВНИИ МООП РСФСР”, №10, 1967: В. Шаршунский, А. Ложкевич, А. Чиванов. Исследование возможности применения вокалограмм для идентификации личности по голосу. “Труды ВНИИ МООП РСФСР”, №12, 1968.

րությունը, որը համալրում է կրիմինալիստիկական հետազոտությունների շրջանակը:

Գրառման վերացումը (մաքրումը) իրականացվում է մաքրման գլխիկով, բարձր հաճախականության հոսանքով, որը մշակվում է ձայնագրիչի մեջ եղած գեներատորով:

Ձայնագրառող և վերարտադրող ապարատների թվարկած և որոշ այլ մասերի ուսումնասիրումն իրականացվում է մագնիսական ֆոնոգրամների նույնացման տեխնիկական հետազոտությունների առաջին խնդիրը լուծելու համար, որն իրենից ներկայացնում է ֆոնոգրամով ձայնագրառման տեխնիկական միջոցների նույնացում, այսինքն՝ ձայնագրիչի (մագնիսոֆոնի), դիկտոֆոնի, միկրոֆոնի կամ ձայնագրելիս օգտագործված այլ ապարատի կամ սարքի որոշակի օրինակի նույնացումը:

Մագնիսական ֆոնոգրամների տեխնիկական հետազոտությունների ընթացքում ուսումնասիրվում և լուծվում են բազմատեսակ հարցեր, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները՝ կախված ուսումնասիրվող օբյեկտի բնույթից:

Չնայած դրան, բոլոր դեպքերում, երբ իրականացվում են մագնիսական ֆոնոգրամների տեխնիկական հետազոտություններ, պետք է հետևել դրանց կրիմինալիստիկական փորձաքննության մեթոդիկային, որը սահմանում է հանձնարարականներ հետազոտության ընդհանուր դրույթների, սկզբունքների, դրանց իրականացման կարգի վերաբերյալ: Այդ ընդհանուր դրույթները պետք է հաշվի առնել փորձագիտական աշխատանքների բոլոր փուլերում. գործի նյութերի *նախնական ուսումնասիրման, անջատ հեղազոտման, հայրնաբերված հարկանիշների համեմատական հեղազոտման և հեղազոտման արդյունքների գնահատման:*

Փորձաքննության նյութերի նախնական ուսումնասիրումն իրականացվում է հետևյալ նպատակներով. գործի այն նյութերի հետ ծանոթանալու, որոնք վերաբերում են հետազոտման ենթակա ֆոնոգրամի ստեղծման պայմաններին, ստուգելու, ներկայացվածն արդյո՞ք այն ֆոնոգրամն է, որի մասին նշված է փորձաքննությունն նշանակելու մասին որոշման մեջ, գնահատելու, այն պիտանի՞ Է հետազոտության համար, պարզելու որոշման մեջ փորձագետի լուծմանն առաջադրված հարցերի ճշտությունը և դրանց պատասխանելու համար ներկայացված նյութերի լրիվությունը:

Փորձաքննությունն նշանակելու մասին որոշման մեջ քննիչը պարտադիր պետք է շարադրի այն պատճառներն ու պայմանները, որոնք

անհրաժեշտություն են առաջացրել տվյալ փորձաքննությունը նշանակելու համար: Դա փորձագետին կօգնի պարզաբանելու առաջադրված հարցերի շրջանակը և ճիշտ ընկալելու փորձաքննություն նշանակելու նպատակները:

Փորձաքննության նյութերի նախնական ուսումնասիրման փուլում փորձագետը ստուգում է փաթեթավորման վիճակը և ամբողջականությունը: Փաթեթը բացելուց անմիջապես հետո համեմատում է նրա մեջ եղած օբյեկտները որոշման մեջ թվարկվածների հետ: Այնուհետև զննում է ֆոնոգրամը, պարզելու համար կոճի կամ կասեթի տեսակը, նրանց գույնը, ընդհանուր վիճակը, նրանցում փաթաթված մագնիսական ժապավենի տեսակը, նրա լայնությունը, երկարությունը, թողարկման տարեթիվը և ամիսը, ծայրերի ձևը, սոսնձված տեղեր ունի՞, թե ոչ, նշում է նրանց տեղը և քանակը, սոսնձման եղանակը: Պարզում է գրառման օրինաչափ արագությունը, տեսակը (մոնո, ստերեո), ուղյակների քանակը, ֆոնոգրամի հնչման մոտավոր տևողությունը, դրա բովանդակության համապատասխանությունը որոշման մեջ նշված գործի հանգամանքներին, պարզում է գրառման տեղը ժապավենի վրա (ժապավենի երկարությունը ծայրից մինչև գրառման սկիզբը և գրառման վերջից մինչև ժապավենի վերջին եզրը), որոշում է հետազոտվող գրառման իրական արագությունը և ֆոնոգրամը լսելիս ֆիքսում է գրառման տևողությունն այդ արագությամբ:

Եթե ֆոնոգրամի հետ հետազոտման ներկայացվի նաև ապարատը, որով գրառումը կատարվել է, որոշվում են. նրա տեսակը, գործարանային համարը և ընդհանուր տեխնիկական ցուցանիշները:

Նախնական ուսումնասիրման արդյունքները շարադրվում են փորձագետի եզրակացության մեջ:

Անջատ հետազոտման փուլում բացահայտվում և մանրազնին վերլուծության են ենթարկվում փորձաքննության ներկայացված օբյեկտների ընդհանուր, դիագնոստիկ և մասնավոր (նույնացման) հատկանիշները:

Ինչպես կրիմինալիստիկական նույնացման մյուս օբյեկտների, այնպես էլ այս դեպքում ոչ միշտ է պահանջվում օբյեկտների նույնացման բոլոր հատկանիշների հայտնաբերում և վերլուծություն: Եթե անջատ հետազոտության արդյունքում պարզվում է ընդհանուր (խմբային, դիագնոստիկ) հատկանիշների տարբերություն, հետագա հետազոտության կատարման անհրաժեշտությունը վերանում է:

Անջատ հետազոտման ժամանակ ուսումնասիրվում են այն հատկանիշները, որոնք որոշվում են այս կամ այն ապարատի կառուցվածքով և այլ տեխնիկական տվյալներով, առանձին դետալների կամ հանգույցներ-

րի տատանումների չափերով, սահմանված չափանիշներից դրանց շեղումներով:

Այնպիսի հատկանիշները, ինչպիսիք են գրառման նոմինալ¹ արագությունը, մագնիսական ժապավենի ստանդարտ լայնությունը, մագնիսական ուղյակների քանակը, գրառման համակարգը (մոնո, ստերեո), ժապավենը փաթաթելու համար օգտագործվող հարմարանքները, նրանց տիպն ու չափերը հնարավորություն են տալիս որոշել մագնիսական գրառման ապարատի տիպն ու համակարգը: Այս հարցերը լուծելուց առաջ փորձագետը որոշում է հայտնաբերված հատկանիշների կայունության աստիճանը:

Անջատ հետազոտման փուլում անհրաժեշտ է հայտնաբերել նաև ձայնագրիչի այնպիսի առանձնահատկություններ, որոնք արտահայտվում են ֆոնոգրամի վրա և առաջանում են արտադրության ընթացքում, շահագործելիս ու ապարատի մաշվածությունից: Դրանք այն առանձնահատկություններն են, որոնք հնարավորություն են տալիս պարզելու ապարատի որոշակի օրինակը (մագնիսական ուղյակների դասավորությունը ժապավենի վրա, մագնիսական ժապավենի և ժապավենը ձգող մեխանիզմի մեխանիկական ազդեցության հետքերը և այլն):

Համեմատական հետազոտության փուլում համադրվում, համեմատվում են անջատ հետազոտման ժամանակ հայտնաբերված ֆոնոգրամներում արտահայտված հատկանիշները:

Մագնիսական ֆոնոգրամների տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման հիմնական հարցերից մեկը դրանցով ձայնագրառման տեխնիկական միջոցների նույնացումն է՝ իդենտիֆիկացիան: Այն իրականացվում է ժապավենի վրա մնացած հետքերի հատկանիշներով, այն ձգող մեխանիզմից և գրառման կրիչի մագնիսական բաղադրության փոփոխություններից: Խորապես հետազոտելով ֆոնոգրամում արտահայտված այն հատկանիշները, որոնք առաջացել են արտադրության ընթացքում, շահագործելիս ապարատի մաշվածությունից, ինչպես նաև հատկանիշները, որոնք հետևանք են գրառման ժամանակ գլխիկների էլեկտրոմագնիսական ազդեցության, հնարավորություն կստեղծվի բացահայտել ձայնագրող ապարատի բազմաթիվ առանձնահատկություններ (հատկանիշներ), որոնց ամբողջության համընկնումը փորձարկվող ֆոնոգրամների նույնանուն առանձնահատկությունների հետ հնարավորություն կտա պարզել ձայնագրիչի որոշակի օրինակը:

¹ nominalis (լատ.) – անվանական:

Ֆոնոգրամների տեխնիկա-կրիմինալիստիկական հետազոտման հաջորդ փուլը համեմատական հետազոտման արդյունքների գնահատումն է: Կրիմինալիստիկական նույնացման տեսական դրույթներին համապատասխան՝ այս փուլում գնահատվում են համընկնող և տարբերվող հատկանիշները: Նույնության առկայության վերաբերյալ հետևության հանգելու համար բավական է, որ համընկնող հատկանիշների ամբողջությունը անհատական (անկրկնելի) լինի: Բացասական հետևության համար բավական է պարզել կայուն տարբերություն բոլոր այն հատկանիշներում, որոնք բացառում են դրանց համընկնումը:

Եթե փորձագետը համեմատվող հատկանիշներում հայտնաբերում է տարբերություններ, բայց հանգում է որոշակի դրական հետևության նույնության մասին, նա պետք է այդ տարբերությունները բացատրի: Իսկ եթե որոշակի բացասական հետևության է հանգում նույնության մասին, պետք է բացատրի համընկնումները:

2. Ֆոնոգրամների հեղազոպումը բանավոր խոսքի հատկանիշներով:

Բանավոր խոսքը ձայնային ազդանշան է, որն առաջանում է մարդու անատոմիա-ֆիզիոլոգիական գործունեության արդյունքում, ընդգրկում է կենտրոնական նյարդային համակարգը և խոսքային ապարատը՝ իրականացնելով հետևյալ ֆունկցիաները. օդային միջավայրի կազմավորում, ձայնակազմավորում (ֆոնացիա), խոսքի հնչյունների կազմավորում (արտիկուլյացիա):

Օդային միջավայրի կազմավորման ընթացքում մասնակցում են դիաֆրագման, թոքերը, շնչափողը և նրա ճյուղավորումները թոքերում (բրոնխները): Ձայնակազմավորմանը (ֆոնացիային) մասնակցում են կոկորդը (խրչակը) և ձայնալարերը:

Խոսքի հնչյունների կազմավորմանը (արտիկուլյացիային) մասնակցում են կոկորդը (բուկը), քմային վարագույրը, բերանի և քթի խոռոչները, լեզուն, շուրթերը և քթմպանը:

Ձայնագոյացման ընթացքում ձայնային խոռոչից մղված օդի շիթը տատանողական շարժման մեջ է դնում ձայնային հանգույցները և առաջանում է որոշակի բարձրության, ուժի և հնչերանգի ձայն:

Ըստ բարձրության՝ ձայնը լինում է ցածր, միջին և բարձր: Ըստ ուժի՝ թույլ, միջին, ուժեղ: Ըստ հնչերանգի՝ սուպրանո, դիսկանտ, տենոր, ալտ, բարիտոն, բաս:

Որոշ հեղինակներ ձայնային նշված՝ դիագնոստիկ առանձնահատկություններն առաջարկում են օգտագործել՝ խոսողի մարմնակազմությունը, սեռը, տարիքը, մասնագիտությունը որոշելու համար¹:

Այս հարցի քննարկումը սույն աշխատանքի նպատակներից դուրս է: Միայն նշեմ, որ չնայած իմ ողջ համակրանքին Չեզարե Լոմբրոզոյի մարդաբանական ուսմունքի շատ կողմերին, առայժմ դրանց վերաբերվում եմ վերապահությամբ:

Վերը նշված աշխատանքում թվարկած հատկանիշներից կարելի է անվերապահորեն օգտագործել միայն նրանք, որոնք բնութագրում են ինտելեկտուալ զարգացման աստիճանը, ծննդավայրը կամ երկարատև բնակության վայրը, մասնագիտությունը, ազգային պատկանելությունը:

Ինտելեկտուալ զարգացման աստիճանը որոշվում է արտասանության ընդունված տարբերակներով, օգտագործվող բառապաշարով, մտքերն արտահայտելու լրիվությամբ, խոսքային հնարքներով, բանավոր խոսքում բառապաշարի բնութագրական հատկանիշներով և այլն:

Բանավոր խոսքի գրական ոճը և նրանում առկա մասնագիտական բառերն ու արտահայտությունները ցույց են տալիս կրթվածություն և կուլտուրայի բարձր մակարդակ:

Այն անձինք, որոնք տիրապետում են հարուստ բառապաշարի, իրենց մտքերն արտահայտում են ավելի ընդգրկուն նշանակությամբ, ծավալով և տվյալ իրադրությանն ավելի մոտ ու բնութագրող բառերով և արտահայտություններով: Իսկ աղքատ բառապաշար ունեցող անձինք իրենց մտքերն արտահայտում են սահմանափակ բառաքանակով, անընդհատ միևնույն բառերը կրկնելով, անբավարար արտահայտչականությամբ, հաջորդականությամբ և բառերի ու մտքերի պարզունակությամբ:

Ծննդավայրը կամ երկարատև բնակության վայրը պարզվում է բարբառային հատկանիշներով, որի մասին խոսել ենք գրի կրիմինալիստիկական հետազոտմանը վերաբերող աշխատանքներում²: Բանավոր խոսքի դեպքում պետք է ավելացնել առողջանության հատկանիշները՝ հնչեքանգը, շեշտադրումը, խոսքի թափը և այլն:

Մասնագիտությունը որոշելիս պետք է նկատի ունենալ, որ մարդկային գործունեության ցանկացած բնագավառ ունի բառապաշար, որը ժամանակի ընթացքում հարստանում և ձևափոխվում է: Անհրաժեշտ է ու-

¹ Տե՛ս, օրինակ, А.А. Топорков-ի կարծիքը հեղինակային կուլեկտիվի կողմից գրված «Криминалистика», М., 1997 դասագրքում, էջ 201:

² Оганян Л.П. Экспертиза почерка. Ереван, 1969, Կրիմինալիստիկա (տեխնիկա), ուս. ձեռնարկ, Երևան, 1993 և այլն:

շաղրութեան արժանացնել բառապաշարի այն հատկանիշներին, խոսքի դարձվածաբանական առանձնահատկություններին և բովանդակությամբ, որոնք բնութագրական են մարդկանց այս կամ այն սոցիալական խմբին, մասնագիտությանը, զբաղմունքին: Այդ բառերն ու արտահայտությունները երկար ժամանակ պահպանվում են, կազմելով ինքնատիպ տերմինաբանություն, որը պայմանավորում է միևնույն մասնագիտության կամ նույն զբաղմունքի մարդկանց դարձվածաբանական առանձնահատկությունները: Այլ կերպ ասած, բժշկի բառապաշարը, նրա կողմից օգտագործվող արտահայտությունները, տերմինները և այլն, տարբերվում են մյուս մասնագիտություններին տիրապետող անձանց խոսքի նույնատիպ բնութագրումներից և դրանց կայուն օգտագործումն առաջացնում է հատկանիշներ, որոնք անվանվում են պրոֆեսիոնալիզմ:

Պրոֆեսիոնալիզմն ուսումնասիրելիս պետք է ուշադրություն դարձնել ոչ միայն նշված հատկանիշների առկայությանը, այլ նաև դրանց օգտագործման ճշտությանը:

Խոսողի ազգային պատկանելության մասին կարելի է դատողություն անել հնչերանգի վերլուծությամբ, որն արտահայտվում է արտասանելիս ձայնի բարձրացմամբ կամ իջեցմամբ, հատկապես՝ երբ խոսողը զգացմունք է արտահայտում:

Հնչերանգի միջոցով կարգավորվում է ձայնի ուժը և արտասանության մեղեդայնությունը, արտահայտությունների միջև եղած դադարների ընդհանուր տևողությունը, խոսքի ձայնեղ և բաղաձայն մասերի տևողության հաջորդականությունը և այլն: Այն որոշակիացնում և պայմանավորում է արտահայտության ձևը, սովորությունը, նրան տալիս է որոշակի ձայնային երանգ, արտահայտում է խոսքի առանձնահատկությունները և այլն:

Յուրաքանչյուր մարդու ձայնը բնութագրվում է հնչաբանական (ակուստիկական) և լեզվաբանական հատկանիշներով, որոնք անհատական են և հնարավորություն են տալիս դրանք օգտագործել խոսողին նույնացնելիս:

Ձայնի հնչաբանական բնութագիրն ունի հարաբերական կայունություն և ժամանակի ընթացքում մնում է անհատական, նույնիսկ խոսքի օրգանների ձևաբանական և պաթոլոգիական փոփոխությունների դեպքում: Հնչաբանական վերլուծությունը հիմնվում է այն բնութագրերի ուսումնասիրման վրա, որոնք որոշում են անհատի անատոմիական, ֆիզիոլոգիական, հոգեկան առանձնահատկությունները: Լեզվաբանական հատկանիշների մասին խոսվում է մեր վերը նշված աշխատանքներում:

Ժարգոնը պայմանական բառեր և արտահայտություններ են, որոնք օգտագործվում են որոշակի խմբի անձանց կողմից: Գոյություն ունեն գո-

ղական, քափառաշրջիկների, պռոնիկների և այլ ժարգոններ: Ժարգոնա-
յին բառապաշարը մտացածին է, որն ստեղծվում է գոյություն ունեցող
բառերի իմաստային փոփոխմամբ և կիրառման ոչ օրինաչափ ոճով,
այնպես, որ հասկանալի լինի միայն տվյալ խմբի անձանց:

Այս արտահայտությունները ինքնատիպ ծածկաբանություններ են,
որոնք երբեմն օգտագործվում են նաև այլ սոցիալական խմբերի կողմից:

Ազգային պատկանելությունը որոշվում է նախ՝ առոգանությամբ:
Լեզվաբանական վերլուծությունը հիմնվում է բանավոր խոսքի հետա-
զոտման վրա, որն արտահայտում է սոցիալական, մտավոր, հոգեբանա-
կան, ֆիզիոլոգիական և մարդու այլ անհատական բնութագրերը:

Ֆոնոգրամի դիագնոստիկ հետազոտությունը հնարավորություն է
տալիս նաև պարզել բանավոր խոսքի որոշ այլ առանձնահատկություն-
ներ, մասնավորապես՝ սլավախոսություն, ռեզախոսություն, պապանձվա-
ծություն (գլխուղեղի կիսագնդերից մեկի որոշ հատվածների հիվանդու-
թյան հետևանքով խոսքի խանգարում), պարեզ (հիվանդություն, որը թու-
լացնում է խոսքային ապարատի շարժողական ֆունկցիան):

Բանավոր խոսքի ֆոնոգրամների փորձագիտական հետազոտու-
թյունները պետք է կատարվեն այն փորձագետ-կրիմինալիստների կողմից,
որոնք տիրապետում են ձայնաբանության (ակուստիկայի), լինգվիստի-
կայի (լեզվաբանության) և ռադիոլեկտրոնիկայի բնագավառի հատուկ
գիտելիքների:

Բանավոր խոսքի հատկանիշների հաջորդ խումբը *հնչյունաբանա-
կան* է. հատկանիշներն են: Դրանցից հիմնականներն են.

Ժամանակը. խոսքի տարրերի կատարման ընթացքի տևողությունը.

հաճախականությունը. բանավոր խոսքի տատանողական պրոցեսի
բնութագիրը.

ամպլիփուդան. ձայնի հնչյունների տատանման սահմանները.

խտությունը. ձայնի ուժը.

արագությունը. ձայնի թափը, նախորդ հատկանիշներից որևէ մեկի
փոփոխման արագությունը.

դիսպազոնը. բանավոր խոսքի որոշակի հատկանիշի փոփոխման
առավելագույն սահմանը.

ռիթմիկա. բանավոր խոսքի տարրերի հարմոնիկ կազմակերպումը.

փաստանում. ձայնի կայունությունը:

Բանավոր խոսքի տարրերի հետևողական վերլուծությունը, դրան-
ցից յուրաքանչյուրին հատուկ բնութագրի որոշումը բավական լրիվ պատ-
կերացում կտան այն բնութագրող հատկանիշների համակարգի մասին:

Բանավոր խոսքի անհատականությունը որոշվում է նրա բազմաթիվ տարրերով և հատկանիշներով, որոնք պայմանավորված են մարդու անատոմիական, հոգեֆիզիոլոգիական և սոցիալական բնութագրերով:

Մարդու հոգեբանության անհատական առանձնահատկություններին արտացոլումը նրա բանավոր խոսքում ամենից առաջ արտահայտվում է մտավոր գործունեության մեջ: Այս դեպքում անհատականությունը պայմանավորված է մարդու զարգացման առանձնահատկությամբ, ներառյալ կյանքի ընթացքում նրա կրած բոլոր փոփոխությունները, որոնք արտահայտվում են նրա սովորություններում, հմտություններում, ընկալունակությունում, զգայական զրգրականության մեջ, կամային հատկություններում և բնավորության այլ գծերում:

Մարդու դաստիարակությունը, կրթությունը, տարիքը, մասնագիտությունը, շրջապատող միջավայրը նշանակալից ազդեցություն են թողնում նրա արտասանական չափանիշների վրա, ինչպես նաև այն հատկանիշների ձևավորման վրա, որոնց մասին խոսվեց վերևում:

Մարդու բանավոր խոսքի հատկանիշները կայուն են այնքանով, որքանով կայուն են խոսելու ապարատի անատոմիական և ֆունկցիոնալ բնութագրերը: Անատոմիական բնութագրին է վերաբերվում ձայնային ստրակտը (ուղի), որը կյանքի ընթացքում քիչ է փոփոխվում:

Ֆունկցիոնալի տակ պետք է հասկանալ ձայնալարերի, ձայնի արտասանությանը, նրա հնչականությանը մասնակցող օրգանների շարժունակությունը: Մարդու խոսքի ձևավորումը, խոսքի ռեֆլեքսները, շարժումների նույնատիպությունները (դինամիկ նախատիպերը), որոնք ապահովում են հնչական օրգանների շարժումների ավտոմատացումը, որը տևական և բարդ պրոցես է, ձևավորվում է միևնույն բառերի, արտահայտությունների, հնչյունների բազմաթիվ կրկնություններից և, բնականաբար, առաջացնում է արտասանական հմտությունների կայունություն:

Բանավոր խոսքի հատկանիշներն ունեն հարաբերական կայունություն: Դրանց տարիքային փոփոխությունները կապված են ձայնային տրակտի կառուցվածքի փոփոխությունների հետ:

* * *

Ֆոնոսկոպիական հետազոտությունները կատարվում են չափողական-հաշվողական կոմպլեքսներով, որոնք ընդգրկում են բարձրորակ ձայնագրառող և վերարտադրող ապարատներ, միացված հնչյունային տեղեկատվություն մտցնելու և դուրս բերելու հարմարանքով հագեցված համակարգչային կիրառական ծրագրի փաթեթով, ձայնային ազդանշաններն ու նրանց հետագա հետազոտումը մշակելու համար:

Ֆոնոգրամով անձի նույնացումը բանավոր խոսքի հատկանիշներով իրականացվում է հետևյալ փուլերով.

- գործի նյութերի ուսումնասիրում.
- անջատ հետազոտում.

- հայտնաբերված հատկանիշների համեմատական հետազոտում.
- հետազոտման արդյունքների գնահատում:

Առաջին փուլում ուսումնասիրվում են գործի այն տվյալները, որոնք փորձաքննությունն նշանակելու անհրաժեշտությունն են առաջացրել, ճշգրտվում է փորձագետին առաջադրված հարցերի իմաստը, պարզվում են այդ հարցերը ֆոնոսկոպիական փորձաքննությամբ լուծելու հնարավորությունները, ստուգվում են փորձաքննության ներկայացված նյութերի հավաստիությունը:

Այս փուլում ուսումնասիրվում են փորձաքննության ներկայացված ֆոնոգրամների առանձնահատկությունները, դրանց որակը, գրառման պայմանները, գրառման կրողի և ձայնագրող ապարատների տիպը, որոշվում է խոսողների քանակը: Ուսումնասիրվում են նույնացվող անձի վերաբերյալ փորձաքննությունն նշանակելու մասին որոշման մեջ նշված և գործի նյութերում եղած որոշ տվյալներ. սեռը, տարիքը, ազգությունը, կրթությունը, բնակության հնարավոր վայրը և այլ բնութագրեր, որոնք կարող էին ազդել նրա բանավոր խոսքի ձևավորման վրա:

Գնահատվում է ներկայացված նյութերի համատեղումն ըստ իրադրության միատեսակության (երկխոսություն, մենախոսություն, խոսակցության թեմա և այլն), ըստ մտավոր նշանակության (թույլատրում-արգելում, հասկանալի-չհասկանալի, խնդրանք, խորհուրդ, կարգադրություն և այլն), ըստ բանավոր խոսքի տեսակի (ընթերցում, ոչ ազատ խոսք և այլն), ըստ գրանցման որակի (պարզություն, բնականություն, բարձրություն):

Գործի նյութերի մախնական ուսումնասիրումն էական է, քանի որ այդ փուլում կարող են հայտնաբերվել այնպիսի գործոններ, որոնք վճռորոշ նշանակություն կարող են ունենալ հետազոտությունների համար, կորոշեն նոր նմուշներ ստանալու անհրաժեշտությունը կամ պարզեն հարցի լուծման անհնարիությունը:

Փորձագետի աշխատանքի հաջորդ փուլը *անջապ հեկազոյությունն է*, որի ժամանակ արդեն ուսումնասիրված գործոնների հիման վրա բացահայտվում, չափվում և հաշվարկվում են լեզվաբանական և հնչյունաբանական հատկանիշները:

Ներկայացված ֆոնոգրամների վրա գրանցված տեքստը շարադրվում է գրավոր կերպով և ուսումնասիրվում նրա լեզվաբանական հատկանիշները:

րը, այնուհետև առանձնացվում են հնչյունաբանական խմբի այն հատկանիշները, որոնք արտասանության չափանիշներից շեղումներ ունեն:

Նման հատկանիշների ուսումնասիրման առանձնահատկությունը համարվում է բանավոր խոսքի նվազագույն տարրերի վերաբերելը միանգամայն որոշակի այն հնչյուններին, որոնք կազմում են տվյալ լեզվի հնչյունային համակարգը: Այդ դեպքում օգտագործվում են սպեկտրոգրամի անմիջական ուսումնասիրումը և բանավոր արտասանված հնչյունի որակի գնահատականը:

Նշված հնչյունային հատկանիշների բացահայտման ընթացքում կարող են պարզաբանվել նաև բանավոր խոսքի դեֆեկտները (ռնգախոսություն, սվսվախոսություն, քլվատություն, շշուկախոսություն, դյախոսություն, կակագում և այլն), որոնք առանձնացվում են որպես առանձին խմբի հատկանիշներ:

Հատկանիշներն իրենց որակյալ արտահայտությունն են ստանում սպեկտրոգրամի վրա, որը և համարվում է բանավոր խոսքի հնչյունային հետազոտման հիմքը: Հատկանիշների ուսումնասիրման արդյունքներն ամրապնդվում են համապատասխան գրառումների տեսքով, հնչյունաբանական տառադարձության կանոններով և օգտագործվում են հետագա նույնացման հետազոտություններում:

Նույնացման հարցը լուծելիս հնչյունային խմբի բանակական հատկանիշների հայտնաբերման, նշագրման և չափման համար նույնացման հարցը լուծելիս կիրառվում են բանավոր խոսքի մախօրոք ընտրված հակադիր տարրերի սպեկտրալ-ժամանակային պատկերները: Չայնային ազդանշանների այդ պատկերները հնարավորություն են տալիս լուծել այն հարցերի մեծամասնությունը, որոնք կապված են բանավոր խոսքի ֆոնոգրամների նույնացման բնույթի հետազոտությունների հետ:

Որոշակի անձի բանավոր խոսքի հատկանիշների կայունությունը հետազոտելիս պետք է հաշվի առնել արտասանական և զգայական այն առանձնահատկությունները, որոնք ազդում են հատկանիշի բանակական նշանակության վրա: Տարբեր գործոնների ազդեցությունը նրա կայունության վրա չեզոքացվում է բանավոր խոսքի հակադրվող տարրերի ընտրությամբ: Կայունության աստիճանը վերլուծության է ենթարկվում, հաշվի առնելով այն ժամանակը, որն անցնում է համեմատվող ֆոնոգրամների գրառման միջև:

Հնչյունային խմբի հատկանիշների անհատականությունը գնահատվում է դրանց հանդիպման հաճախականության ուսումնասիրմամբ:

Որակական հատկանիշների անհատականության աստիճանը գնահատվում է կրիմինալխտիկական հետազոտությունների համընդհանուր մեթոդներով:

Հաջորդ փուլը *համեմատական հեղափոխությունն է*, որն իրականացվում է հայտնաբերված բանավոր խոսքի հատկանիշների համեմատության ճանապարհով: Այս փուլում որոշվում է հատկանիշների որակը, դրանց համընկնումը և տարբերությունը: Սկզբում համեմատվում են լեզվաբանական հատկանիշները, բանավոր խոսքի առավել էական հատկանիշները (ձայնը, նախադասությունները, խոսքերը, հետո մյուս հատկանիշները՝ հանգերը, հնչյունները), այնուհետև՝ հնչյունաբանական խմբի բանական և որական հատկանիշները:

Հետազոտման արդյունքների գնահատման փուլում որոշվում է բանավոր խոսքի հատկանիշների համընկնումների և տարբերությունների բնույթը՝

Հատկանիշների համընկնումների գնահատումն իրականացնելիս պետք է պարզել, դրանք անհատականացնող ամբողջություն կազմո՞ւմ են, թե՛ ոչ: Դրական լուծման դեպքում տարբերությունների առկայությունը պետք է գնահատել՝ դրանք ժամանակավոր՞, թե՛ հաստատուն բնույթ են կրում: Պետք է բացատրել դրանց առկայության պատճառները:

* * *

Առաջադրված հարցերի բնույթից ելնելով՝ գործից առանձնացված կամ քննչական գործողությունների իրականացման արդյունքում ստացված ֆոնոգրամը փորձագետին տրամադրվում է առանց որևէ վերականգնողական գործողությունների (ռեստավրացիայի ենթարկելու) և պահանջվող պատշաճ պայմաններում պահպանված վիճակում՝ ձայնագրող ապարատը, որի վրա ենթադրվում է, որ գրառվել է տվյալ ֆոնոգրամը, ինչպես նաև նրան կցված խոսափողը, մնուշներ՝ համեմատական հետազոտման համար, այսինքն՝ նույնացվող անձի բանավոր խոսքի ֆոնոգրամը, կատարված նույն պայմաններում, որոնցում արվել է հետազոտվող ֆոնոգրամը (ըստ գործում եղած տվյալների), ինչպես նաև նույն անձի բանավոր խոսքի փորձառական գրառումը՝ կատարված նորմալ, օրինաչափ պայմաններում:

Տեղազնության, խուզարկության կամ այլ գործողություններ կատարելիս՝ մագնիսական կրիչներ, ձայնագրող, տեսագրող ապարատներ վերցնելիս անհրաժեշտ է պահպանել նախազգուշական միջոցներ, այդ օբյեկտների, այդ թվում՝ մագնիսական ժապավենի վրա եղած հետքերը չվնասելու համար:

Այդ օբյեկտների վրա կարող են հայտնաբերվել ոչ միայն ձեռքերի հետքեր, այլև միկրոմասնիկներ և միկրոհետքեր (կենսաբանական ծագում ունեցող, փոշի, մագնզուկներ, մազեր և այլն):

Մազնիսական կրիչի զննության արձանագրության մեջ պետք է արտահայտվեն պիտակային նշանները, ժապավենի տեսակը, գույնը, հիմքի բնույթը (փայլուն, անթափանց):

Նշվում են կրիչի վրա եղած բոլոր վնասվածքներն ու դեֆեկտները: Գրանք կարող են հայտնաբերվել խոշորացույցով, մանրադիտակով: Գրառումը լսելուց հետո արձանագրության մեջ ամրապնդվում է նրա բնույթը. խոսքը, երաժշտությունը, այլ ձայնային տեղեկատվություն: Խոսքի վերաբերյալ նշվում է նրա բովանդակությունը, երաժշտության վերաբերյալ՝ բնույթը, այլ ձայնային տեղեկատվության վերաբերյալ, նույնպես բնույթը:

Արձանագրության մեջ պետք է նշել տեղեկություն ժապավենի ամբողջականության մասին: Ժապավենի լսումն ավարտելուց հետո այն վերափաթափվում է սկզբնական վիճակով, կրիչը փաթեթավորվում է, որի վրա կատարվում է պարզաբանող գրառում և կնքվում է:

Մազնիսական կրիչները պոլիէթիլենային փաթեթում պահվում են ստվարաթղթե տուփերում, ուղղահայաց դիրքում, մետաղական առարկաներից և էլեկտրոնագնիսական դաշտերից հեռու $+10-20^{\circ}\text{C}$ ջերմաստիճանում:

Ֆոնոսկոպիական փորձաքննություն նշանակելիս անհրաժեշտ է փորձագետին տրամադրել որակյալ և բավարար քանակությամբ նմուշներ՝ համեմատական հետազոտություն իրականացնելու համար:

Համեմատական հետազոտման համար հաճախ պահանջվում են փորձառական նմուշներ, որոնք վերցվում են փորձաքննության ներկայացված ձայնագրող ապարատից, մազնիսական ուղյակների փոխադարձ դիրքը, քանակը, լայնությունը որոշելու համար:

Ապարատի վրա տեղադրվում է հետազոտման ներկայացված ֆոնոգրամի մազնիսական ժապավենի տիպին համապատասխանող այնպիսի ժապավեն, որի անվանական (նոմինալ) արագությունը կհամապատասխանի վերջինիս արագությանը:

Որակյալ փորձառական նմուշներ ստանալու նպատակով ենթադրվող խոսողի ֆոնոգրամում պետք է արտահայտվեն նրա խոսքի անհատական, լեզվաբանական և հնչյունաբանական հատկանիշները:

Ցանկալի է, որ այդ ֆոնոգրամները, պարունակեն բառեր և արտահայտություններ, որոնք առավել հստակ են արտահայտում արտասանության առանձնահատկությունները, խոսքի արատները և ժամանակակից գրական լեզվից շեղումները:

Հնարավորության սահմաններում քննիչը պետք է փորձաքննությունն ընդհատի մասին որոշման մեջ նշի, թե ինչ ապարատներով և ինչ հնչական (ակուստիկ) պայմաններում է կատարվել ձայնագրառումը:

Բարձրորակ փորձառական մուշ ստանալու համար անհրաժեշտ է այդ գործողությանը մասնակից դարձնել մասնագետի: Խոսափողը (միկրոֆոնը) պետք է կարգավորել փորձնական ձայնագրառման ժամանակ, ձայնագրվողից մոտավորապես 0,5 մետր հեռու: Բոլոր դոներն ու պատուհանները պետք է փակել, հեռախոսներն անջատել, պետք է վերացնել աղմուկի բոլոր հնարավոր աղբյուրները: Ժապավենի վրա պետք է գրանցել, թե երբ, ում կողմից, ում ներկայությամբ է կատարվել համեմատական նյութի ձայնագրառումը:

Համեմատական հետազոտման համար մուշներ ստանալիս պետք է այնպես անել, որ փորձարկվողը ստիպված լինի արտասանել այն մույն բառերն ու արտահայտությունները, որոնք կան հետազոտման ենթակա գրառման մեջ: Այդ գործողությունը կատարելիս պետք է ստեղծել մույն պայմանները, մույն (կամ գոնե մույնատիպ) տեխնիկական միջոցները, որոնք օգտագործվել են հետազոտվող ֆոնոգրամը գրառելիս:

Նման հետազոտություններ իրականացնելիս կարող են օգտագործվել նաև ազատ մուշներ: Սրանք այն ֆոնոգրամներն են, որոնք կատարվել են մինչև տվյալ փորձաքննության հետ կապված գործի ծագումը և անկախ այդ գործի հանգամանքներից (օրինակ՝ ընտանեկան պայմաններում, ռադիոհեռույթ և այլն):

Միջանկյալ մուշներ համարվում են այն ֆոնոգրամները, որոնք իրականացվում են տվյալ փորձաքննության հետ կապված գործի ծագումից հետո, բայց ոչ որպես մուշներ օրինակ՝ զրույց լրագրողների հետ, հարցաքննության ժամանակ և այլն:

Փորձաքննությունն ընդհատելու մասին որոշման մեջ նշվում է փորձնական ձայնագրառում կատարելու ժամանակը, ի՞նչ տեխնիկական միջոցներ և սարքավորումներ են դրա համար օգտագործվել, դրանց տեխնիկական վիճակը, ձայնագրելիս էլեկտրասնուցման տեսակը (էլեկտրական ցանց, մարտկոց և այլն), ինչպիսի՞ տեղում (սենյակում) են դրվել ձայնագրիչը, միկրոֆոնը, ուլքեր են ձայնագրության մասնակիցները:

ՉԼՈՒԽ 19. ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱԿԱՆ ՀԱՐԻՏՈՍԿՈՊԻԱ (ԱՆՉԻ ՆՈՒՅՆԱՑՈՒՄԸ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՈՎ)

Հանցագործությունների բնույթյան պրակտիկայում քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելիս, հաճախ անհրաժեշտություն է առաջանում անձի նույնացման նպատակով ուսումնասիրել և օգտագործել նրա արտաքին հատկանիշները:

Այդ անհրաժեշտությունը կարող է առաջանալ հանցագործներին նույնացնելու, մեղադրյալների, ամբաստանյալների, դատապարտյալների, անհետ կորած անձանց հետախուզման և դիակների ճանաչման նպատակներով: Արտաքին հատկանիշներով անձի նույնացման անհրաժեշտություն կարող է առաջանալ նաև քաղաքացիական գործերով:

Արտաքին հատկանիշներով անձի նույնացմանը հաճախ դիմում են պատմաբանները, արվեստագետները, գրականագետները և այլ գիտությունների ներկայացուցիչներ:

Մարդու արտաքինը (հաբիտուսը) իրենից ներկայացնում է էլեմենտների համակարգ, որոնք կարելի է դասակարգել և դրանցով ուսումնասիրել մարդու արտաքինը բնութագրող հատկանիշները. կամ նրանց առանձին տարրերը կարելի է խմբավորել և այդ հիմքով տարբերել անձին կամ նրա առանձին մասերը:

Նշենք, որ մարդու արտաքինի նկարագրության, վերլուծության և գիտական բնութագրերով զբաղվել են շատ վաղ անցյալում, որը զարգացել և շարունակվում է զարգանալ մինչև օրս:

Այսպես. Սիրիական միջնադարյան գրականության ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Աբուլ-Ֆարաջի «Հետաքրքրաշարժ պատմությունների գիրքը¹» բովանդակում է մարդու արտաքինի բազմաթիվ բնութագրումներ, օրինակ՝ «Զքի վեր ցցված ծայրը պարապության հակում ունեցողի նշան է», «Խոր ընկած աչքերը, մեծ ճակատը, մի փոքր երկարավուն դեմքը՝ համարձակության նշաններ են» և այլն: Նույն գրքում տրված է հին հույն փիլիսոփա և էնցիկլոպեդիկ գիտնական Արիստոտելի կողմից ներկայացված մարդու արտաքինի նկարագրության մասին տված նկարագրությունները:

¹ Գրիգոր Հովհան Աբուլ-Ֆարաջ Բար էբրեյ (1226-1286) «Հետաքրքրաշարժ պատմությունների գիրք, Երևան, 1981, էջ 263-264:

տոտելի (մ.թ.ա. 384-322թթ..) ասույթը, որը հարկ են համարում ներկայացնել ամբողջությամբ:

«Այն ժամանակից ի վեր, ինչ հոգու կենսական ուժն իր արտացոլմանը գտավ մարմնում՝ հոգին ու մարմինը հարազատացան իրար: Նրանք փոխադարձաբար ազդում են մեկը մյուսի վրա: Հատկապես հոգին է ազդում մարմնի վրա բարկության, կրքերի, վշտի պահերին: Այն զգացմունքները, որ թաքցնում է հոգին, մարմինը արտահայտում է բացեփբաց: Գիտելով մարմնի շարժումներն ու դեմքի արտահայտությունը, մենք կարող ենք հետևել հոգեկան ապրումներին: Սրանում էլ կայանում է դիմագետի արվեստը: Նրանց տրամադրության տակ երեք տեսակի նշաններ կան:

1. Կարելի է որոշ նմանություն նկատել և մարդկային արտաքինը համեմատել կենդանիների արտաքինի հետ: Անասունների շարժումները նկատելով, կարելի է նաև համեմատություն կատարել մարդկանց շարժումների հետ:

2. Կարելի է նմանություն գտնել առանձին մարդկանց, առանձին ցեղերի և ժողովուրդների ներկայացուցիչների՝ հարեշների, հնդկացիների, խեթերի և այլոց միջև: Նկատելով այն գծերը, որոնք առանձին մարդուն մոտեցնում են տարբեր ժողովուրդներին բնորոշ հատկանիշների հետ, մենք չենք սխալվի՝ սահմանելով նրա բնավորությունը:

3. Հանգիստ վիճակում եղած մարդու դեմքը կարելի է համեմատել բարկության, վախի կամ կրքի ժամանակի նրա դեմքի հետ: Եվ առանձին հատկանիշներով, առանց սխալվելու ռիսկի ենթարկվելու, կարելի է պնդել, որ տվյալ մարդը բնավորությամբ վախկոտ է, դյուրաբորբոք, ցանկասեր:

Գիմագետի արվեստը պահանջում է նուրբ դիտողականություն և խորին միտք, վերլուծելու կարողություն և ամենաբարձրակի օրհնությունը, թո՛ղ փառաբանվի նրա անունը: Եվ նա, ով ցանկանում է գիտելիքների մաքուր զահով հարստացնել իր խելքը՝ պետք է ուսումնասիրի դիմագետի ուսմունքի երեք հիմունքները՝¹»:

Անձի արտաքինը (եւթյունը, որն իր ազդեցությունը թողնում է արտաքինի վրա) բնութագրող հատկանիշների ամբողջության կայունության մասին խոսելիս պետք է նշել Ժան Ժակ Ռուսոյի հետևյալ միտքը. «Այդպիսին են կյանքի տեսարանների փոփոխությունները. ամեն տարիքն ունի իրեն շարժման մեջ դնող զսպանակները, բայց մարդ միշտ նույնն է: Տասը տարեկան հասակում թխվածքներն են վարում, քսան տա-

¹ Տե՛ս նշված աշխատությունը, էջ 266:

րեկանին՝ սիրուհին, երեսունին՝ հաճույքները, քառասունին՝ փառասիրությունը, հիսունին՝ ժլատությունը¹...»:

Արտաքին հատկանիշներով անձի նույնացմամբ զբաղվում է կրիմինալիստիկական հափտոսկոպիան, որն ընդգրկում է անձի արտաքին հատկանիշների ուսումնասիրումը, համակարգումը, գնահատումը՝ անձի նույնացման մեթոդների ու հնարանքների մշակման նպատակով:

Հափտոսկոպիան² կրիմինալիստիկական տեխնիկայի բնագավառ է, որն ուսումնասիրում է տարբեր պայմաններում մարդու արտաքին ֆիքսման ու հետազոտման օրինաչափությունները և մշակում մարդու արտաքին տեսքի մասին տվյալների ստացման, հետազոտման և օգտագործման տեխնիկա-կրիմինալիստիկական միջոցներ և մեթոդներ, հանցագործությունների բացահայտման, քննության և կանխման նպատակներով:

Մարդու նույնացումն արտաքին հատկանիշներով հիմնվում է կրիմինալիստիկական նույնացման ընդհանուր դրույթների, հատկանիշների անհատականության և հարաբերական կայունության, ռեֆլեկտորայնության, ինչպես նաև անատոմիայի, ֆիզիոլոգիայի, դատական բժշկության, լուսանկարչության, մաթեմատիկայի, կիբեռնետիկայի տվյալների ու հնարքների վրա: Արտաքինի անհատականությունն արտաքին տեսքի անկրկնելիությունն է՝ տարբերությունն է մնացած բոլոր մարդկանցից: Կյանքի ընթացքում մարդու արտաքինում տեղի են ունենում տարբեր փոփոխություններ, սակայն, կյանքի որոշակի շրջանում, զարգացման նորմալ պայմաններում արտաքինն էական փոփոխություններ չի կրում և մնում է հարաբերականորեն կայուն:

Նշված փոփոխությունների մի մասը կրում է տարիքային բնույթ, մյուսները առաջանում են հիվանդությունների, վնասվածքների հետևանքով, իսկ մյուս մասն էլ առաջանում է մարդու կամքով (օրինակ՝ պլաստիկ վիրահատություն):

Տարիքային փոփոխությունները հիմնականում առաջանում են կյանքի երկու փուլերում՝ մանկության և ծերության: Անատոմները գտնում են, որ փոքր երեխայի և հասունացած մարդու զանգի առանձին մասերի չափսերի հարաբերակցությունը տարբեր է: Բացի այդ, փոխվում են նաև քթի ձևը, մազերի գույնը, ատամները, բերանի ուրվանկարը, ա-

¹ Տե՛ս Ժան Ժակ Ռուսո, Էմիլ կամ դաստիարակության մասին, Երևան, 1962, էջ 144:

² Առաջացել է լատ. habitus-արտաքին և հուն. skopeo-զննել բառերից:

ռաջանում են կնճիռներ, մազերի թափվածություն և այլն: Այս փոփոխությունները, սակայն, չեն բացառում նույնացման հնարավորությունը:

Ռեֆլեկտորայնությունը մարդու արտաքինի հատկությունն է. արտացոլվել այլ անձանց հիշողության մեջ, լուսանկարներում, նկարագրություններում և այլն: Այս հատկությունն օգտագործվում է արտաքին տվյալների հավաքման և ուսումնասիրման համար: Ռեֆլեկտորայնության մասնավոր արտահայտությունը համարվում է ակներևությունը, այսինքն՝ արտաքինի տեսողական ընկալման հատկությունը: Ակներևությունն ապահովում է արտաքինը վերլուծելու և մտքում պահելու հնարավորություն ու վերարտադրում:

Մարդու արտաքին հատկանիշները, այսինքն՝ դիտելով ընկալվող նրա բնութագրերը, կրիմինալիստիկական պրակտիկայում հաջողությամբ օգտագործվում են տարբեր ուղղություններով, որոնցից մեկը փորձագիտական լուսանկարային իդենտիֆիկացումն է, որը դասվում է կրիմինալիստիկական հետազոտությունների բարդ տեսակների թվին: Բարդ է նրանով, որ դժվար է արտաքինի ուսումնասիրման ենթակա տարրերի նկարագրությունը, նաև նրանով, որ այն շատ հարցերով պայմանավորված է արտաքինի հատկանիշների արտահայտվածության վերլուծությանը այնպիսի օբյեկտի վրա, ինչպիսին լուսանկարն է:

* * *

Մարդու արտաքինում (հաբիտուսում) արտաքինի հատկանիշները պայմանականորեն բաժանվում են ընդհանուրի և մասնավորի: Ընդհանուրը՝ առավել խոշորն է, տեսանելին: Մասնավորը՝ առանձին հանգույցները (մասերը), ընդհանուր հատկանիշները կազմող մասերը: Արտաքինի բաժանումը ընդհանուրի և մասնավորի, հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ ներկայացնել մարդու արտաքինը՝ այն նկարագրելիս, ուսումնասիրելիս և ֆիքսելիս: Նաև նպաստում է ավելի ճիշտ կազմել արտաքինի նկարագիրը, քանի որ հնարավորություն է նույնիսկ այն կատարել միատեսակ ամբողջից՝ մասերը, խոշոր տարրերից՝ մանրը:

Ընդհանուր անատոմիական տարրերից են. կազմվածքը (տեսքը, ֆիգուրան) ամբողջությամբ, գլուխը և դեմքը, վիզը, ուսերը, կուրծքը, թիկունքը, կոնքերը (նկատի է առնվում ընդհանրապես այդ շրջանը), վերջույթները, մարմնի մաշկի այն մասերը, որոնք երևում են սովորական պայմաններում (դեմքի, վզի, ձեռքի ավի, մատների, ոտքերի) գլխի մազածածկույթը, սանրվածքը, ճակատը, բունքերը, հոնքերը, աչքերը, այտուսկրերը, այտերը, քիթը, բերանը, կզակը, ականջախեցիները:

Մասնավոր անատոմիական տարրերը թվարկելն անհմաստ է, քանի որ նրանք շատ են և բազմազան. նրանցից շատ կան յուրաքանչյուր ընդհանուր տարրի վրա:

Մարդու արտաքինի էլեմենտներն իրենց բնույթով միատարր չեն: Նրանց շարքում պետք է տարբերել մշտական և ժամանակավոր, պատահական, բնական, արհեստական և պաթոլոգիկ ծագման տարրեր:

Արտաքինի մշտական տարրերը հատուկ են մարդուն, ողջ կյանքում նրա նորմալ զարգացման դեպքում: Ժամանակավորները՝ կարող են առաջանալ և անհետանալ (վերանալ). (մազածածկույթը, գորտնուկներ, պիզմենտային խալեր և այլն): Պատահական են՝ մաշկի բնածին խալերը, ականջախեցու ծավվածքները և այլն: Բնականն այն հատկանիշներն են, որոնք մարդու մոտ առաջանում են ծնվելիս կամ առաջանում են տարիքի հետ: Արհեստականներն՝ առաջանում են անձի կամքով, արհեստական ճանապարհով կամ նրա կամքից անկախ պատճառներով. կոսմետիկ ազդեցություն, վիրահատական միջամտություն, վնասվածք և այլն:

Պաթոլոգիկ տարրերը՝ արտաքինի նորմալ կազմության խախտումներն են: Դրանք կարող են լինել ինչպես բնածին, այնպես էլ ձեռքբերովի:

Դատաբնչական պրակտիկայում մարդու արտաքինը կրիմինալիստիկական նյատակներով ճիշտ վերարտադրելու և նկարագրելու համար վերլուծության է ենթարկվում ըստ *հարկանիշների*:

Անձի արտաքինի նկարագրման սկիզբը դրվեց 19-րդ դարի 80-ական թվականներին, երբ ֆրանսիացի կրիմինալիստ Ալֆոնս Բերտիլյունը մշակեց հաշվառման համակարգ, որի մի մասը կազմում էր մարդու արտաքինի նկարագիրը որոշակի տերմինաբանության միջոցով, որը ստացավ «բանավոր պատկեր»¹ անվանումը:

«Բանավոր պատկեր» մեթոդը հնարավորություն է տալիս մարդկանց արտաքինը նկարագրել միասնական տերմինաբանությամբ, որը դրան տալիս է օբյեկտիվ բնույթ, բացառում է տարբեր անձանց արտաքինի նկարագրության տարբեր մեկնաբանությունները:

Հանցագործների նկարագրման և հաշվառման այս մեթոդին հետագայում օգնության եկավ և լրացրեց մատնադրոշմային հաշվառումը:

Անձի արտաքին հատկանիշները բաժանվում են երկու հիմնական խմբի՝ *անպոմիակաս* և *ֆունկցիոնալ*:

¹ Ռուսական աղբյուրներում՝ Словесный портрет :

Անսպորմիակահին վերաբերում են մարմնի արտաքին կառուցվածքի, ինչպես նաև գլխի և դեմքի առանձին մասերի հատկանիշները: Այս հատկանիշները կոչվում են նաև **սպորիկ**:

Ֆունկցիոնալ կոչվում են այն հատկանիշները, որոնք երևան են գալիս անձի կենսագործունեության ընթացքում (քայլվածքի առանձնահատկությունները, դիմախաղը (միմիկա), ժեստիկուլյացիա և այլն): Այս հատկանիշները կոչվում են նաև **դինամիկ**:

Նույնացման նշանակության առումով անատոմիական հատկանիշներն ավելի արժեքավոր են քան ֆունկցիոնալը, քանի որ վերջիններս ուսումնասիրելու համար անհրաժեշտ են հատուկ պայմաններ (օրինակ՝ քայլելու, խոսելու պահ): Բացի այդ, ֆունկցիոնալ հատկանիշների վրա ազդում են որոշակի գործոններ, ինչպիսիք են անսովոր կոշիկը, ճանապարհի վիճակը, հոգնածությունը, հոգեկան վիճակը և այլն: Ֆունկցիոնալ հատկանիշների մասին չի կարելի դատել լուսանկարների միջոցով:

Արտաքին հատկանիշները նկարագրելիս պետք է խուսափել անորոշ, քիչ հասկանալի, գեղարվեստական բնույթի տերմիններից, օրինակ՝ «մշուշապատ հայացք», «խորամանկ աչքեր», «կասկածելի հայացք» և այլն:

Անսպորմիական հատկանիշներ: *Անսպորմիական* հատկանիշների թվին են դասվում. նրանց ձևը, մեծությունը, դիրքը, գույնը, քանակը, առկայությունը, համաչափության աստիճանը, արտահայտվածության աստիճանը:

Ձևը մակերեսի ընդհանուր տեսքն է, արտաքին տարրերի սահմաններում: Երբեմն այս հատկանիշը անվանում են ուրվանկար՝ ուրվագիծ:

Մեծությունը՝ արտաքին տարրերի չափսերը, այդ թվում՝ նրանց բարձրությունը, լայնությունը, խորությունը, երկարությունը, ներքինի և արտաքինի հարաբերությունը: Ներքինի հարաբերությունները տարրի չափերի՝ միմյանց նկատմամբ ունեցած համաչափությունն է: Արտաքինները, մի տարրի չափսերի հարաբերությունն է մյուսի չափերի նկատմամբ:

Դիրքը՝ արտաքինի մի տարրի տեղադրությունը նրա մյուս տարրերի նկատմամբ, մարդու մարմնի կողմերի հարաբերությամբ կամ որևէ որոշակի գծի, հարթության, կետերի նկատմամբ:

Քանակը բնութագրվում է արտաքինի նույնանուն տարրերով, որոնց քանակը անկայուն է (սպիներ, խալեր, պեպեոններ, ելունդներ և այլն):

Առկայությունը, արտաքինի տարրերի պատահականը, անկայունը (ոչ հիմնականը) կամ արհեստականը ցույց տալու համար նշանակությ-

յուն ունեցող հատկանիշ է: Բացակայությունն արտաքինի տարրերի կայունությունը (հիմնականը), անհրաժեշտը կամ բնականը ցույց տալու համար նշանակություն ունեցող հատկանիշ է:

Համաչափության աստիճանը հատկանիշ է, որն արտահայտում է արտաքինի զույգ տարրերի մասնության աստիճանը՝ ըստ իրենց հատկանիշների: Սովորաբար նշվում է այդպիսի տարրերի տարբերության աստիճանը, այսինքն՝ անհամաչափությունը: Համաչափությունը համարվում է նորմալ վիճակը:

Արտահայտվածության աստիճանը կամայական հատկանիշ է, որն օգտագործվում է արտաքինի տարրերն ուսումնասիրելիս այն դեպքերում, երբ որոշակի և միատեսակ պատկերացում կա տվյալ տարրի նորմալ վիճակի մասին:

Արտաքինի անատոմիական հատկանիշները կարող են լինել նաև ընդհանուր, որոնք բնութագրում են մարդու արտաքին տեսքը և նրա ընդհանուր տարրերը ամբողջությամբ, և մասնավոր, որոնք բնութագրում են արտաքին տեսքի առանձին մասերը կամ մասնավոր տարրերը, օրինակ՝ մարդու հասակն ընդհանուր հատկանիշ է, իսկ թիկունքի կամ քթի ուրվագիծը՝ մասնավոր:

Հատկանիշների ընդհանուրի և մասնավորի բաժանումը հնարավորություն է տալիս հետևողականորեն ու լրիվ պատկերացնել մարդու արտաքին տեսքը՝ այն ուսումնասիրելիս, նկարագրելիս և այլն:

Մարդու արտաքինը բնութագրող անատոմիական հատկանիշները դասակարգվում են նաև խմբայինի և իդենտիֆիկացնողի (անհատականացնողի):

Խմբայինները հատուկ են միայն որոշակի տիպի մարդկանց, պայմանավորված նրանց խմբային հատկություններով: Անհատականացնող հատկանիշները կամ առանձնահատկություններն առանձնացնում են տվյալ անձին մյուսներից: Դրանք, նախ՝ հատկանիշների անսովոր տարբերակներն են այն խմբի համար, որոնց պատկանում է հետազոտվող անձը՝ անոմալիաները կամ բնածին շեղումներն են արտաքինի տարրի անատոմիական կառուցվածքի չափանիշից: Այդ առանձնահատկություններին են վերաբերվում նաև արտաքինի հատկանիշների մանր տարրերը, վնասվածքներ, վիրահատական սպիներ, տարած հիվանդությունների հետևանքներ:

Անհատականացնող հատկանիշների մեջ առանձնացվում է հատկանիշների խումբ, որը կոչվում է հատուկ նշանների: Դրանց ծագումը,

որպես կանոն, պայմանավորված է պատահական պատճառներով (այլանդակություն, այլակերպություն և նման):

Մարմնի, գլխի, դեմքի առանձին մասերի չափերը նկարագրելիս պետք է դրանք բաժանել երեք խմբի՝ փոքր, միջին և մեծ կամ կարճ, միջին, երկար: Անհրաժեշտության դեպքում որոշակիացնելու նպատակով կարելի է բնութագրել շատ փոքր, շատ մեծ (շատ երկար, շատ կարճ):

Դեմքի (կամ մարմնի) այս կամ այն մասի չափը որոշելիս պետք է այն որոշակիացնել դեմքի կամ մարմնի ամբողջականության հարաբերակցությամբ: Օրինակ՝ միևնույն չափի քիթը, ականջը և այլն, փոքր գլխի համար մեծ կլինի, մեծ գլխի համար՝ փոքր:

Մարդու արտաքինի ընդհանուր նկարագրության մեջ մտնում են սեռը, տարիքը, ազգությունը, հասակը, մարմնակազմությունը (մարդաբանական տիպը, կազմվածքը):

Մեռը որոշվում է արտաքինի այն հատկանիշների ամբողջականությամբ, որոնք կնոջ և տղամարդու մոտ ունեն ոչ միատեսակ արտահայտվածություն: Մեռի որոշումը լուսանկարներով որոշակի դժվարություններ է առաջացնում, որովհետև դրանցում հիմնականում սեռը բնութագրող հատկանիշներն ամբողջապես չեն արտահայտվում:

Տարիքը որոշելիս պետք է ուսումնասիրել հատկանիշների մի ամբողջություն, օրինակ՝ կնճիռների առկայությունը, մազերի սպիտակության աստիճանը, դեմքի գույնը, ատամների վիճակը և այլն: Այն կարող է մոտավորապես որոշվել նաև դատաբժշկական քննման արդյունքներով:

Ազգությունը ճշգրիտ ցույց է տրվում միայն այն դեպքերում, երբ այն հաստատ հայտնի է կամ հայտնի է ըստ փաստաթղթերի:

Հասակը տարբերում են. ցածր, միջին, բարձր, երբեմն՝ շատ ցածր, շատ բարձր: Հնարավորության դեպքում (օրինակ՝ հանցագործին հաշվառման վերցնելիս, դիակը զննելիս) որոշվում է բացարձակ մեծությամբ, մնացած դեպքերում՝ հարաբերական չափերով: Տղամարդկանց համար միջին համարվում է 165-175սմ., կանանց համար՝ 155-165 սմ.:

Մարմնակազմությունը որոշվում է ոսկրամկանային համակարգի զարգացածությամբ և ճարպակալման աստիճանով:

Ոսկրամկանային համակարգի զարգացման աստիճանով տարբերում են ատլետիկ, քիկնեղ, միջին, և թույլ մարմնակազմություն: Ծարպակալման աստիճանի առումով՝ նիհար, միջին սնուցման, լիքը, գեր:

Մարմնակազմությունը նկարագրելիս անհրաժեշտ է ցույց տալ նաև մարդաբանական տիպը, որն ըստ էության արտաքին հատկանիշների ամբողջությունն է, ինչը բնորոշ է որոշակի ռասայական խմբի: Այդ ամ-

բողոքոյան մեջ մտնում են հետևյալ բնույթի հատկանիշները. մաշկի, մազերի, աչքերի գունավորումը (պիգմենտացիան), մազերի բնույթն ու ձևը, այտոսկրերի ցցվածութեան աստիճանը, դեմքի և քթի համաչափութիւնը և այլն:

Մարդաբանական տիպը նկարագրելիս նշվում են այնպիսի արտա-հայտութիւններ, որոնք կբացառեն սխալ գնահատումը (եվրոպական՝ արմենոիդ, մոնղոլական, ասիական, նեգրացեղ, սլավոնական դեմք և այլն):

Անձի արտաքին անատոմիական հատկանիշներից պետք է նկարագրվեն նաև. վիզը՝կարճ, միջին, երկար, բարակ, միջին, հաստ, հարթ, կնճռոտված, *ծոժրակը*՝ կիսադեմից՝ հարթ, ուղիղ, ուռուցիկ, *ուսերը*՝ լայն, միջին, նեղ, ուղիղ, ցած թեքված, վեր թեքված, հավասար, անհավասար, առաջ թեքված, ետ թեքված, *կուրծքը*՝ նեղ, միջին, լայն, գոգավոր, հարթ, ուռուցիկ, *թիկունքը*՝ ուղիղ, ծոված, կորացած, դուրս ցցված թիակներով, սապատավոր: *Ձեռքերը*՝ կարճ, միջին երկարութեան, երկար, բարակ, միջին հաստութեան, հաստ: *Ուրբերը*՝ երկար, միջին երկարութեան, կարճ, ուղիղ, 0-ակերպ, X-ակերպ, բարակ, միջին հաստութեան, հաստ և այլն:

Ընդհանուր նկարագրութիւնից հետո բնութագրվում է *գլուխը*:

Այն նկարագրվում է ըստ մեծութեան՝ փոքր, միջին, մեծ: Ըստ գանգի բարձրութեան՝ ցածր, միջին, բարձր: Ըստ դիրքի՝ բարձրացված, իջեցված, թեքված աջ կամ ձախ ուսի կողմը: Ըստ ձևի՝ կլոր, երկարավուն, տանձաձև, զմբեթաձև:

Նկարագրվում են մազերը հետևյալ հերթականութեամբ. առկայութիւնը, ձևը, ճակատային և քունքային մասերում աճման գիծը, երկարութիւնը, գույնը, խտութիւնը, սանրվածքի և կտրվածքի տեսակը, ճաղատութեան աստիճանը և ձևը, սպիտակութեան աստիճանը: Ըստ ձևի՝ տարբերում են ուղիղ, ալիքաձև, գանգուր (այս դեպքում նշվում են նաև գանգութեան աստիճանը և ձևը), արիեստական գանգրացման հնարավորութիւնը, գույնը նշվում է որոշակիորեն, քանի որ գույները և երանգները բազմազան են: Պետք է նկատի ունենալ նաև անձի կամքով մազերի գույնի փոփոխման հնարավորութիւնը: Անհրաժեշտ է նշել խտութիւնը՝ խիտ, միջին խտութեան, նոսր: Աճման գիծը կարող է լինել. աղեղնաձև, ուղիղ, ալիքաձև: Ճաղատութեան աստիճանը պետք է նկարագրել՝ ցույց տալով չափը և տեղը (ճակատային, գագաթային, քունքային):

Առավել մանրամասն պետք է նկարագրել *դեմքը*, որը պետք է ուսումնասիրել կիսադեմից և դիմացից: Կիսադեմը նկարագրելիս նախ ներկայացվում է դեմքի ընդհանուր ուրվագիծը. ուռուցիկ, ուղիղ, գոգավոր, ո-

րից հետո՝ ճակատը, քիթը, շրթունքները, կզակը և ականջը: Նույնպիսի սխեմայով նկարագրվում է դեմքի ընդհանուր ուրվագիծը (դիմացից):

Դեմքի ընդհանուր ուրվանկարը ներկայացվում է. օվալաձև, շրջանաձև, ուղղանկյունաձև, եռանկյունաձև, նկարագրվում են նաև առանձնահատկությունները՝ օրինակ. շատ նեղ, շատ լայն դեմք, շատ լիքը, շատ նիհար դեմք, հողագույն, շատ գունատ, մաշկի թերությունները՝ բնական պեպեններ, հիվանդագին պիգմենտացիա (պիգմենտային խալեր), կնճիռներ (նրանց տեղը և ձևը), բեղեր, մորուք և այլն:

Ճակատը կիսադեմից ուսումնասիրվում և նկարագրվում է ըստ դիրքի, ուրվագծի և բարձրության: Դիմացից՝ ըստ լայնության և բարձրության: Ըստ դիրքի լինում է թեք, ուղղահայաց, ցցված, ըստ ուրվագծի՝ ուղիղ, ուռուցիկ, ալիքաձև: ճակատի բարձրությունը որոշվում է դեմքի երեք մասերի (ճակատի, քթի և բերանի) հարաբերակցությամբ: Դեմքի ճակատային մասը համարվում է մազաճման գծից մինչև քթարմատը, քթամասը՝ քթարմատից մինչև քթի հիմքը, բերանի մասը՝ քթի հիմքից մինչև կզակը: Եթե ճակատային մասն ըստ բարձրության մեծ է դեմքի մյուս մասերից, ապա ճակատը համարվում է բարձր, հավասարի դեպքում՝ միջին, փոքրի դեպքում՝ ցածր: Ըստ լայնության՝ լայն, միջին լայնության, նեղ: Ճակատը բնութագրվում է մազաճման գծից մինչև քունքամազերը ընկած տարածությամբ և համեմատվում է դեմքի այտոսկրային մասի հետ:

Քթի նկարագրությունը պետք է կատարել ինչպես դիմացից, այնպես էլ կիսադեմից:

Սկզբում նկարագրվում է քթի ընդհանուր մեծությունը (փոքր, միջին, մեծ): Այն որոշվում է դեմքի քթամասը ճակատային և բերանային մասերի հետ համեմատելով: Քթի ընդհանուր մեծությունը կախված է նրա բարձրությունից, լայնությունից և ցցվածությունից: Քիթը կարող է լինել բարձր, միջին բարձրության, ցածր: Քթի բարձրությունը չպետք է շփոթել թիկնակի երկարության հետ: Քթի բարձրությունը քթածայրից մինչև միջնապատի ներքին եզրի միջև եղած տարածությունն է, որը որոշվում է կիսադեմից: Քթի լայնությունը նրա ներքնամասի երկու ռունգերի միջև եղած տարածությունն է, որը որոշվում է դիմացից: Այն կարող է լինել նեղ, միջին լայնության, լայն:

Քիթն ուսումնասիրվում է ըստ ուրվագծի, բարձրության, լայնության և ցցվածության: Այն նկարագրելիս պետք է հաշվի առնել քթարմատը, թիկնակը, ծայրը և հիմքը: Քթարմատը բնութագրվում է ըստ խորության (փոքր, միջին, մեծ և խորության բացակայությամբ) և լայնության (նեղ,

միջին, լայն): Թիկնակն ըստ ուրվագծի լինում է ուղիղ, գոգավոր, ուռուցիկ և ալիքաձև: Ըստ երկարության՝ փոքր, միջին և մեծ:

Թիկնակի երկարությունը որոշվում է դեմքի այլ մասերի հարաբերակցությամբ և կարող է լինել կարճ, միջին, երկար: Սովորաբար միջին երկարության քիկնակ ունեցող քիթը կազմում է դեմքի երկարության 1/3 մասը: Ըստ լայնության քիկնակը կարող է բնութագրվել որպես նեղ, միջին, լայն, որը որոշվում է քթի ոսկրային հիմքի կառուցվածքով:

Քթածայրը ըստ ուրվագծի լինում է սուր, կլորաձև, բութ: Նկարագրվում են նաև առանձնահատկությունները (մսեղ, երկտակ, հարթ):

Քթի հիմքը լինում է կախված, հորիզոնական և բարձրացված:

Հիմքը կարող է լինել փոքր, միջին և մեծ ցցվածության:

Քիթն ուսումնասիրելիս պետք է նկատի առնել նաև քթանցքերի ձևը և ռունգերը, որոնք բազմազան են ըստ իրենց ձևի, բացվածության աստիճանի, ներքին մազածածկույթի:

Նկարագրվում է նաև ճակատի և քթի ամբողջական ուրվագիծը, որը կազմում է այսպես կոչված ճակատային գիծ: Այդ ուրվագիծը լինում է ուղիղ, անկյունաձև, ուռուցիկ, ալիքաձև, ինչպես նաև միմյանց զուգահեռ:

Բերանը բնութագրվում է ըստ չափերի, բացվածքի ուրվագծի, անկյունների դիրքի: Բերանի չափը որոշվում է ըստ բացվածքի ձգվածության (անկյունների միջև եղած տարածությամբ), բնութագրվում է հարաբերականորեն՝ փոքր, միջին, մեծ, և գնահատվում է ամբողջ դեմքի համեմատությամբ:

Բերանի բացվածքի ուրվագիծը որոշվում է ուղիղ գծի հարաբերակցությամբ և բնութագրվում է որպես ուղիղ և ալիքաձև:

Առանձնակի ուշադրության պետք է արժանացնել բերանի անկյունների դիրքին:

Դրանք որոշվում են հորիզոնականի հարաբերակցությամբ և բնութագրվում են որպես հորիզոնական, իջեցված, բարձրացված:

Շրթունքները նկարագրելիս որոշակիացվում են վերին շրթունքի մաշկային մասի բարձրությունը, շրթունքների ցցվածությունը և հաստությունը: Բարձրությունը քթարմատից մինչև բերանի բացվածքի եզրն ընկած մասն է: Այստեղ պետք է հիշել, որ բերանամասի բարձրությունը որոշվում է դեմքի մյուս մասերի հետ (ճակատային, քթային) համեմատման ճանապարհով: Բարձրությունը բնութագրվում է ցածր կամ կարճ, միջին, բարձր կամ երկար:

Շրթունքների ցցվածության աստիճանը որոշվում է կիսադեմից, նկատի առնելով վերին և ներքին շրթունքների ցցվածության հարաբե-

րակցությունը միմյանց նկատմամբ (առանձին-առանձին) ինչպես նաև երկու շրթունքների ցցվածությունը:

Շրթունքների երիզի լայնությունը գնահատվում է ինչպես ամբողջապես (գումարային), այնպես էլ վերին և ստորին երիզների հարաբերակցությամբ: Ըստ ամբողջական լայնության՝ շրթունքները լինում են լայն, միջին, նեղ կամ բարակ: Ըստ երիզների հարաբերակցության՝ վերինը բարակ է ներքևինից, երկուսն էլ հավասար են, վերինը հաստ է ներքևինից: Նկարագրվում են նաև երիզների ուրվագծերը: Դրանք լինում են ուղիղ, աղեղնաձև, ալիքաձև:

Շրթունքները նկարագրելիս ցույց են տրվում նաև առանձնահատկությունները:

Արամները նկարագրվում են ըստ չափերի, ձևի, դասավորության առանձնահատկության, երանգի: Ցույց են տրվում առանձին առամների բացակայությունը, վնասվածքները, արհեստական, մետաղական առամները, դրանց գույնը, քանակը, ձևը:

Կզակը բնութագրվում է որոշակի առանձնահատկություններով, որոնցից են. բարձրությունը, լայնությունը, ցցվածությունը, ազատ եզրի ուրվագիծը, կառուցվածքի առանձնահատկությունները:

Բարձրությունը որոշվում է դեմքի քթային և ճակատային մասերի հարաբերակցությամբ, որոշակիացնելով որպես փոքր, միջին, մեծ:

Լայնությունը որոշվում է դիմացից, նկատի առնելով նրա ազատ եզրի ուրվագիծը և ներքին ծնոտի մեծությունը: Որոշակիացվում է որպես նեղ, միջին և լայն:

Ցցվածության աստիճանը որոշվում է կիսադեմից ուղղահայացի նկատմամբ ունեցած դիրքով և բնութագրվում է որպես ետ թեքված, ուղիղ և ցցված: Կզակի ազատ եզրը կարող է լինել սրված, կլորացված, հորիզոնական-ուղղագիծ:

Առանձնահատկություններն են համարվում կրկնակզակը, փոսիկների առկայությունը, դրանց խորությունը, ձևը, ծալվածքների առկայությունը, դրանց խորությունը, քանակը, դասավորվածությունը և այլն:

Սկանջները (սկանջախեցին) նկարագրելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դրանք բնութագրվում են բարդ կառուցվածքով և ունեն ընդհանուր ու մասնավոր առանձնահատկությունների այնպիսի ամբողջություն, որը չափազանց կարևոր է ինչպես լուսանկարով հետազոտությունների, այնպես էլ մյուս նպատակների համար:

Ընդհանուր հատկանիշներն են հարաբերական չափսերը, դիրքը (ուղղահայացի հարաբերակցությամբ), ցցվածության աստիճանը և բնույթը, ուրվանկարը:

Հարաբերական չափերը բնութագրվում են որպես մեծ, միջին, փոքր և որոշվում դեմքի մյուս մասերի համեմատությամբ, նկատի ունենալով, որ ականջախեցիներն ըստ միջին մեծության հավասար են դեմքի ընդհանուր բարձրության 1/3-ին:

Դիրքը որոշվում է կիսադեմից, ըստ պայմանական ուղղահայաց գծի և ականջախեցու հիմքի գծի կազմած անկյան: Եվ պետք է բնութագրել որպես ուղղահայաց, հետ թեքված, առաջ թեքված: Ցցվածության աստիճանն ու բնույթը որոշվում են դիմացից ականջախեցիների՝ գլխից ունեցած հեռավորությամբ: Դրանցից կախված տարբերվում են սեղմված, միջին մերձեցվածության և ցցված: Ցցվածությունն էլ իր հերթին կարող է լինել ընդհանուր, վերին, ներքին, միաժամանակ վերին և ներքին:

Ականջախեցիների ուրվանկարը որոշվում է ըստ տեսքի: Կարող են լինել եռանկյունաձև, ուղղանկյունաձև, օվալաձև, կլորավուն:

Մասնավոր առանձնահատկությունները բազմաթիվ են և օգտագործվում են, հիմնականում դիմանկարային հետազոտություններ իրականացնելիս:

Հոնքերը նկարագրվում են ըստ դիրքի, ուրվագծի, լայնության, երկարության առանձնահատկությունների:

Ըստ դիրքի՝ հորիզոնական, ներս թեքված, դուրս թեքված, ըստ ուրվագծի՝ ուղիղ, աղեղնաձև, ալիքաձև, նեղացող, լայնացող: Ըստ երկարության՝ կարճ, միջին և երկար, ըստ լայնության՝ նեղ, միջին, լայն, ըստ խտության՝ նոսր, միջին խտության և խիտ:

Ըստ ակնախոռոչների նկատմամբ ունեցած դիրքի՝ հոնքերը կարող են լինել ցածր, միջին և բարձր:

Ըստ կառուցվածքային առանձնահատկությունների՝ տարբերվում են. միմյանց մոտեցող կամ հեռացող հոնքեր, առատ աճած, ճյուղավոր, հեռացրած մազերով և այլն:

Աչքերը նկարագրելիս պետք է առանձնացնել ակնախոռոչի և ականախնձորի առանձնահատկությունները: Ակնախոռոչի հատկություններն են. հորիզոնականի նկատմամբ ակնախոռոչի առանցքի դիրքը, ակնախոռոչի բացվածքը և ուրվագիծը, վերին կոպի անշարժ մասի տեսքը:

Հորիզոնականի նկատմամբ ակնախոռոչի առանցքի դիրքը կարող է լինել՝ ներքին շեղվածության (երբ աչքերի ներքին անկյունները բարձր են արտաքինից), արտաքին շեղվածության (երբ աչքերի ներքին անկյունները ցածր են արտաքինից), հորիզոնական (երբ ներքին և արտաքին անկյունները միևնույն հարթության վրա են):

Ակնախոռոչի բացվածքը կարող է լինել նեղ, միջին, լայն, իսկ ուրվակարը համեմատվում է տարբեր երկրաչափական պատկերների հետ (օրինակ՝ օվալաձև, եռանկյունաձև, ռոմբաձև և այլն):

Ակնախնձորները տարբերում են՝ ուռուցիկ, միջին դիրքի և խորն ընկած:

Ըստ ծիածանաթաղանթի գույնի՝ աչքերը լինում են. սև, շագանակագույն, կապույտ, կանաչ:

Ուսումնասիրվում և նկարագրվում են նաև ակնախոռոչի ներքին մասի ծավալածքային գծերը, նրանց արտահայտվածության աստիճանը, ձևը, դիրքը՝ հորիզոնականի նկատմամբ:

Դեմքի նիարագրության մեջ առանձնակի նշանակություն ունեն *կնճիռները*, որոնք դասավորված են ճակատին և կոչվում են ճակատային, հոնքերի մեջ և կոչվում են միջհոնքային, քունքերի վրա՝ աչքերի արտաքին անկյունների մոտ, և կոչվում են քունքային:

Քթից մինչև բերանի անկյուններն իջնող կնճիռները կոչվում են քթաբերանային, ինչպես նաև այտերի, ականջի արմատի և վզի վրա եղած կնճիռները՝ այտի, ականջարմատի, վզի (համապատասխանաբար) կնճիռներ:

Կախված տարիքից, մաշկի առանձնահատկություններից և խնամքից, նշված կնճիռներից յուրաքանչյուրը առաջանում է կյանքի որոշակի էտապում. օրինակ՝ ճակատային կնճիռները կյանքի 20-րդ տարում, քունքայինները՝ 25-30-րդ տարում, հետո՝ մյուսները:

Դեմքի մազածածկույթի (բեղեր, արտամորուք, մորուք) նկարագրությունը թեև նույնացման համար մեծ արժեք չունի, սակայն, անհրաժեշտ է անպայման կատարել: Նույնացնող արժեքի անբավարարությունը, այս դեպքում պայմանավորված է նրանով, որ դրանք (բեղեր, արտամորուք, մորուք) կարող են վերացվել կամ ձևափոխվել:

Բեղերը նկարագրվում են. ըստ մեծության, նկատի առնելով, որ միջին համարվում են բերանի անկյունների վրա վերջացող բեղերը, ըստ ձևի՝ ուղիղ, թեքություններով, լայնության և մազերի երկարության:

Եթե բեղերը ծածկում են վերին շրթունքի կեսից սլակաս, համարվում են նեղ, եթե ծածկում են կեսը՝ միջին, կեսից ավելին՝ լայն:

Նկարագրվում են նաև բեղերի ծայրամասերը, որոնք կարող են լինել հորիզոնական, թեքված ցած, վեր, ոլորած, գգած:

Այրամորուքը նկարագրվում է ըստ խտության, մեծության, ձևի: Խտության տակ նկատի է առնվում մազերի խտության աստիճանը (նոսր, միջին խտության, խիտ), մեծությունը կախված է այտամորուքի լայնու-

յունից և երկարությունից, ձևը նշանակում է մազերի երկարության աստիճանը, նրանց համաչափությունը, զանգրությունը, ներքին եզրի կտրվածքի ձևը:

Մորուքը բնութագրվում է ըստ լայնության, ձևի, մազերի երկարության: Նշվում է նաև մազածածկույթի ընդհատումը կամ ընդհանրությունը բեղերի և մորուքի, մորուքի և այտամորուքի միջև: Բոլոր դեպքերում (բեղերը, այտամորուքը, մորուքը) բնութագրելիս նշվում է նաև մազերի գույնը, սպիտակության աստիճանը:

Անձի արտաքինը նկարագրելիս չպետք է աչքաթող անել նաև անատոմիական կարևոր նշանները, ինչպիսիք են՝ մարմնի տարբեր մասերի չափսերի անհամապատասխանությունը, մարմնի կամ դեմքի առանձին մասերի բացակայությունը (ոտք, ձեռք, մատ, ականջ, աչք, ատամ և այլն), անատոմիական թերությունները (մատների ծովածություն, աչքերի շլություն, վահանաձև գեղձի ցցվածություն և այլն) սպիներ, խալեր, բծեր, ճարպագոյացումներ, պեպեցներ, դաջվածքներ և այլն:

Նկարագրվում են նաև հագուստը և անձնական իրերը, որոնց նույնացման արժեքը կախված է նրանից, պահպանված են արդյոք դրանք մարդու մոտ անփոփոխ վիճակում, թե՛ ոչ:

Այս օբյեկտների նկարագրման կարևորությունը կայանում է նրանում, որ դիտարկման ոչ բարենպաստ պայմանների դեպքում, հաճախ դրանք ավելի են ընկալվում և հիշվում:

Ինչպես նշեցինք, հաջորդ խումբը *Ֆունկցիոնալ (դինամիկ) հայրկանիշներն են*, որոնց ուսումնասիրությունն ավելի մեծ հմտություն է պահանջում:

Ֆունկցիոնալ հատկանիշներին ևս հատուկ է հարաբերական կայունությունը, որովհետև, կախված անձի տարբեր վիճակներից, դրանք կարող են ենթարկվել փոփոխությունների: Օրինակ՝ հիվանդագին վիճակում կարող են փոփոխվել կեցվածքը, քայլվածքը, ձայնը: Քայլվածքի վրա կարող են ազդել նաև ձեռքին կամ թիկունքին ծանրոց ունենալը, ոտքի չափսին չհամապատասխանող կոշիկը: Միմիկան և ժեստիկուլյացիան կարող են փոփոխվել հոգեկան և ֆիզիկական վիճակների ազդեցության տակ և այլն:

Կեցվածքը իրանի, գլխի, ձեռքերի և ոտքերի այն դիրքն է, որը հատուկ է տվյալ անձին:

Տարբերում են. ուղիղ, կորացած, կուզիկ կեցվածք: Նկարագրվում է նաև գլխի դիրքը՝ ուղիղ, հետ թեքված, առաջ թեքված, աջ ծոված, ձախ ծոված, ձեռքերի վիճակը՝ պահում է գրպաններում, դնում է կոնքերին,

խաչաձևում է կրծքին և այլն, ոտքերի վիճակը՝ կանգնում է զգաստ, չռված ոտքերով, միմյանց փաթաթած և այլն:

Քայլվածքը ոտքերի, իրանի և ձեռքերի ավտոմատացված շարժումների ամբողջությունն է:

Քայլվածքը լինում է դանդաղ, արագ, թեթև, ծանր, ամուր, օրորվող, թռչկոտող և այլն: Նկարագրվում է քայլի լայնքի մեծությունը, եթե կաղում է նշվում է՝ որ ոտքից և ինչ աստիճանի, օգտվում է հենակից, ձեռնափայտից, կրկնակոշիկից, ձեռքերի վիճակը քայլելիս (ճոճում է, ինչպես է ճոճում, չի ճոճում և այլն):

Ֆեարիկուլյացիան շարժումներ են, որոնք ուղեկցում են խոսքին, նրա արտահայտչականությունը մեծացնելու, իսկ երբեմն էլ նրան փոխարինելու համար: Այն կարող է արտահայտվել բազմաթիվ ձևերով, մասնավորապես՝ ձեռքերը, գլուխը, ուսերը, մարմինը շարժելով, մազերը, բեղերը, մորուքը սղալելով, սեփական կամ զրուցակցի հագուստը ձգելով և այլն:

Միմիկան կամ *դիմահաղը* մարդու դեմքի մկանների շարժումն է հոգեկան վիճակի ազդեցության տակ: Այն կարող է լինել ցածր արտահայտչականության (անշարժ դեմք), կամ հակառակը, որը հատկապես արտահայտվում է հուզմունքի, զարմանքի, վախի, զզվանքի և մման դեպքերում:

Միմիկան կարող է արտահայտվել տարբեր ձևերով. օրինակ՝ հոնքերը կիտում է, ճակատը կնճռոտում է, կրծում է շրթունքները, բերանը ծռում է և այլն:

Խոսքը ֆունկցիոնալ հատկանիշների շարքում նշանակալից տեղ է զբաղեցնում այն առումով, որ բանավոր խոսքի հատկանիշներն օգտագործվում են անձի նույնացման համար և ներկայումս մման հետազոտությունների կատարելագործումը չափազանց արդիական է և անհրաժեշտ, կապված այնպիսի տեխնիկական միջոցների լայն տարածվածության հետ, ինչպիսիք են հեռախոսը և մագնիտոֆոնը: Բացի դրանից, բանավոր խոսքի վերլուծությունը կարող է օգտագործվել հանցագործի անձի նույնացման համար նույնիսկ այն դեպքերում, երբ նրա արտաքինը փոփոխված է և չեն կարող օգտագործվել այն բնութագրող մի շարք հատկանիշներ:

Խոսքը բնութագրող հիմնական հատկանիշներից են նրա ձայնային առանձնահատկությունները, որոնց մեջ մտնում են. ա) ձայնը, այսինքն՝ խոսքի այն բնութագիրը, որը կապված է հնչերանգի, նրա բարձրության, մաքրության և հզորության հետ. բ) ձայնի ելևէջը (ինտոնացիան). գ) խոս-

քի թափը: Նկարագրելիս նշվում են առանձնահատկությունները՝ դանդաղ, արագ, հանգիստ, զրգռված, ընդհատումներով, արտասանության արատներով (թվատություն, կակազում և այլն), որոշակի առոգանության առկայությունը, բարբառային արտահայտությունների, բառապաշարի և շարահյուսական առանձնահատկությունները:

Ֆունկցիոնալ հատկանիշների թվին են պատկանում նաև որոշակի գործողությունների ու շարժումների կայուն կատարումները, որոնք ժամանակի ընթացքում անձի մոտ ավտոմատացվում են: Օրինակ՝ ծխախոտը վառելու, ծխելու և հանգցնելու ձևը, բարևելը, հագալը, փռշտալը, սանրվածքն ուղղելը, ծիծաղելը, հիացմունք արտահայտելը, սիրված բացականչությունները և այլն:

Ֆունկցիոնալ հատկանիշներից են նաև կաղալը, քայլելիս միայն մեկ ձեռքը շարժելը, դիմամկանի ջղաձգված վիճակը և այլն:

§ 1. «ԲԱՆԱՎՈՐ ՊԱՏԿԵՐԻ» ՄԵԹՈԴԻԿԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ՔՆՆՉԱԿԱՆ ԵՎ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒՉԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

Մարդու արտաքինի անհատականությունը պայմանավորված է նրա անկրկնելիությամբ: Այդ հատկությունը հնարավորություն է տալիս նույնացնել, այսինքն՝ արտաքին տեսքով պարզել որոշակի անձի նույնությունը:

Անձի արտաքին հատկանիշները օգտագործվում են. 1. թաքնված կամ պատիժը կրելու վայրից փախած հանցագործներին հետախուզելիս. 2. ճանաչում կամ քննում կատարելիս. 3. անհետ կորած անձանց և չճանաչված դիակներ հաշվառելիս. 4. լուսանկար պարունակող փաստաթղթերով անձի ինքնությունը պարզաբանելիս. 5. լուսանկարով անձը նույնացնելիս:

Հայտնի անձանց արտաքին հատկանիշների մասին տեղեկություններ կարելի է ստանալ ամենատարբեր աղբյուրներից, մասնավորապես այդ անձին ճանաչողների հարցաքննությունից, քրեական հաշվառման փաստաթղթերի, լուսանկարների ուսումնասիրումից, անձնական դիտարկումներից և այլն:

Հարցաքննելիս չպետք է օգտագործել «բանավոր պատկերի» տերմիններ: Հարցաքննվողը հանցագործին նկարագրում է օգտվելով կեցադային բնութագրումից, որին, սակայն, ուղղություն է տալիս և ճշգրտումներ է մտցնում քննիչը, համապատասխան հարցերի միջոցով:

Լուսանկարներ ասելով, այս դեպքում պետք է հասկանալ հաշվառման ժամանակ պատրաստված ճանաչողական, կենցաղային, ինչպես նաև մամուլում հրապարակված լուսանկարները:

Գլխի և դեմքի հատկանիշների մասին ավելի լրիվ ինֆորմացիա են տալիս ճանաչողական լուսանկարները: Մյուսները համեմատաբար քիչ տվյալներ կարող են պարունակել, հատկապես, եթե ունեն տեխնիկական թերություններ (որը հաճախ է պատահում) կամ ռետուշած են: Այդ պատճառով էլ, ցանկալի է ունենալ նման մի քանի լուսանկարներ:

Անհայտ անձի «բանավոր պատկերը» կազմվում է տուժողների, ականատեսների ցուցմունքներով, հանցագործության կատարման հանգամանքների, տեղագնությունից տվյալների վերլուծությամբ:

Ընդհանրապես, անհայտ անձի արտաքինի վերաբերյալ հուշում են այն տվյալները, որոնք ստացվում են սկզբնական քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում:

Դեպքի տեղում հայտնաբերված հետքերի և իրեղեն ապացույցների ուսումնասիրումը երբեմն նպաստում է գաղափար կազմել հանցագործի արտաքինի մասին: Այդ նպատակի համար շատ օգտակար են ոտքերի հետքերը, հատկապես «հետքուղին», ձեռքերի, ատամների, ջարդող գործիքների և այլ հետքերը, որոշ առարկաներ, որոնք օգնում են դատել հանցագործի սեռի, հասակի, կազմվածքի, ֆիզիկական թերությունների, ինչպես նաև որոշ սովորությունների մասին:

Արտաքինի վերաբերյալ տեղեկությունների աղբյուր կարող են ծառայել նաև ռենտգենոգրամման, բժշկական տարբեր փաստաթղթերը: Անձի արտաքինի վերաբերյալ տեղեկություններ կարելի է ստանալ նորածնության, կոշիկի արհեստանոցներից և այլն:

Արտաքինի վերաբերյալ ձեռք բերված բոլոր տվյալները շարադրվում են հետախուզում հայտարարելու մասին որոշման մեջ:

Թաքնված հանցագործին կամ այլ անձանց պարզաբանելու համար հաճախ անհրաժեշտություն է առաջանում պատրաստել սուբյեկտիվ դիմանկարներ, հենվելով ականատեսների նկարագրության վրա:

Սուբյեկտիվ դիմանկարներից առավել կիրառելի են կոմպոզիցիոն կամ հորինվածքայինը, որը կազմվում է տվյալ հանցագործության հետ չառնչվող անձանց լուսանկարների հատվածներից կամ արտաքինի տարբեր մասերի նկարների մոնտաժով և կոչվում են ֆոտոռեփոսներ կամ իզոռեփոսներ:

Կոմպոզիցիոն դիմանկարի պատրաստման անհրաժեշտություն առաջանալիս օպերատիվ աշխատողը կամ քննիչը հայտնաբերում են ո-

րոնվող անձին տեսած և նրա արտաքինը հիշողության մեջ պահած անձանց և ըստ նրանց ցուցմունքների կազմում են հորինվածքային դիմանկարը, այդ նպատակի համար օգտագործելով իրենց մոտ եղած կրիմինալիստիկական միջոցները, կամ դիմում են գեղանկարիչների, լուսանկարիչ-ռետուշավորողների, գրիմարարների և այլ մասնագետների օգնությանը: Իսկ ավելի հաճախ դիմում են կրիմինալիստիկական հիմնարկների օգնությանը, որտեղ կան կոմպոզիցիոն դիմանկարներ պատրաստելու մեթոդիկային տիրապետող մասնագետներ և համապատասխան ապարատուրա:

Ֆոտոկոմպոզիցիոն դիմանկարներ ստանալու համար օգտագործվում են լուսանկարների կամ նրանց հատվածների ժողովածուներ, գծագրող ֆոտոռոբոտներ, կոմպոզիցիոն (հորինվածքային) դիմանկարի սարքեր, ֆոտոէկրանավորող սարքեր, իսկ գծագրական հորինվածքային դիմանկարների համար, լուսանկարների ժողովածուներ և ալբոմներ, որոնք պարունակում են դեմքի տարբեր մասերի լուսանկարներ:

Լուսանկարների ժողովածուները պարունակում են տարբեր տարիքի, միևնույն սեռի և մարդաբանական խմբի մի քանի հարյուր դիմանկարներ, որոնք պահվում են քարտարանի կամ ալբոմի տեսքով: Դրանք պետք է լինեն ըստ հնարավորին միևնույն որակի և անձանց պատկերեն մոտավորապես միևնույն դիրքով:

Ժողովածուից ականատեսին ցուցադրելու համար պետք է ընտրել այն դիմանկարները, որոնք համապատասխանում են նրա նկարագրածին ըստ տարիքի, դեմքի ընդհանուր ձևի, համաչափության և այլն:

Եթե ցուցադրված լուսանկարներից ականատեսը կընտրի որևէ մեկը, որն ամբողջությամբ մնան է իր տեսած դեմքին, ապա այն վերարտադրվում է: Իսկ եթե հավաքածուի մեջ բավարար չափով մնան դիմանկար չի հայտնաբերվում, ապա ընտրվում է որևէ հանգուցային լուսանկար, որի մեկ-երկու հատկանիշ ընդհանուր է հետախուզվողի արտաքինի հետ: Նպատակահարմար է, որ այդ ընդհանրությունը լինի դեմքի ուրվագիծը կամ դեմքի ուրվագիծը արտաքինի որևէ ակնառու էլեմենտի հետ:

Մյուս լուսանկարներից ընտրվում են պակասող էլեմենտները և իրականացվում է հատվածների մոնտաժում: Այսինքն՝ պակասող էլեմենտները (օրինակ՝ հոնքերը, աչքերը, քիթը, բերանը և այլն) առանձնացվում են և ստանձվում հանգուցայինի վրա, այսպիսով ստանալով մոտավոր դիմանկարը: Ստացված հորինվածքային դիմանկարն ականատեսի խոր-

հորդներին համապատասխան ռետուշավորվում է և բազմացվում վերարտադրական լուսանկարչության միջոցով:

Մակայն, հորինվածքային դիմանկարների ստացման այս եղանակը չափազանց երկարատև ու աշխատատար է: Ներկայումս լայնորեն կիրառվում են մի շարք հարմարանքներ, սարքեր, որոնք հեշտացնում, արագացնում և ավելի արդյունավետ են դարձնում այդ աշխատանքը:

Գրանցից են ա. Գծակերպ ֆոտոռոբոտները, որոնց պայմանականորեն դասվում են պլանշետային ֆոտոռոբոտները, հորինվածքային դիմանկարների սարքերը, ֆոտոէկրանավորող հարմարանքները: Այս ռոբոտներով աշխատելիս դեմքի հատվածները ստանալու համար ընտրված լուսանկարները ներկայացվում են դիմացից (անֆաս), կտրված միայն հորիզոնական գծով և համատեղվում են ըստ կտրվածքի գծերի:

Այդ դեպքում դիմանկարի հատվածները վերարտադրվում են ժապավենի կամ քիթեղի վրա:

Գիմանկարը կարող է կազմվել երեք և ավելի հատվածներով (օրինակ՝ ճակատային մասը՝ սանրվածքով, աչքային, քթային, բերանի և կզակի մասերով):

բ. Պլանշետային ֆոտոռոբոտների էությունն այն է, որ լուսանկարները ստանձվում են ստվարաթղթի կամ այլ ամուր թղթի վրա, մեկ շարքով, այնպես, որ աչքերի պատկերները գտնվեն մեկ հորիզոնական գծի վրա: Այնուհետև բոլոր լուսանկարների վրայով տարվում են երկու կամ ավելի հորիզոնական գծեր. մեկը՝ հոնքերի վերևից, մյուսը՝ անմիջականորեն քթի տակից¹: Այս այդ հորիզոնական գծերով կտրվում է թուղթը՝ լուսանկարով:

Հորինվածքային դիմանկար ստանալու համար կտրված շերտերը շարժվում են միմյանց նկատմամբ այնքան, մինչև գտնվի ակնաատեսին բավարարող հատվածների համակցություն:

Գոյություն ունեն մակ հորինվածքային դիմանկարների սարքեր, որոնց մեջ ստվարաթղթե շերտիկներին փոխարինում են պոզիտիվային աէրոժապավեններ:

Ֆոտոէկրանավորող սարքերը երեքից մինչև վեց դիոպրոյեկտորային համակցություն են, նախատեսված՝ շրջանակային և ժապավենային դիապոզիտիվների էկրանավորման համար: Նրանք ունեն վարագույրներ, որոնք հնարավորություն են տալիս ծածկելու էկրանավորված պատկերի ցանկացած մասը:

¹ Եթե ընտրվեն այլ հենակներ, օրինակ՝ բերանի, կզակի, կտարվեն լրացուցիչ հորիզոնական գծեր ևս:

Ընտրված դիտարկատիվներն այս սարքի միջոցով էկրանավորվում են և վարագույրների օգնությամբ դասակարգվում ըստ լուսանկարների հատվածների համապատասխանության: Եթե ստացված հորինվածքը վկային չի բավարարում, նույն եղանակով ընտրվում և տեղադրվում են նոր դիտարկատիվներ:

Պրակտիկայում կիրառվում են նաև նկարների ժողովածուներ, որոնք նախատեղված են գծագրային-հորինվածքային դիմանկարներ կազմելու համար (ՄԿՔ):

Դրանք ալբոմներ են, որոնցում պատկերված են գլխի և դեմքի մասերը, ունեն դիտարկատիվների ժողովածուներ, որոնք կրկնում են այդ պատկերները, և ցուցադրող սարք, որի օգնությամբ դիտարկատիվներից կազմվում են դիմանկարներ:

Հորինվածքային դիմանկարների օգտագործման հաջողությունը մեծապես կախված է նրանից, թե որքանով ճիշտ է ընտրված այն կազմելու ժամանակը:

Անձի նկատմամբ բռնություն գործադրելու հետ կապված հանցագործությունների վերաբերյալ գործերով նպատակահարմար է այն պատրաստել դեպքից հետո՝ երկու-երեք օրվա ընթացքում, քանի դեռ տուժողի հիշողության մեջ բավարար լրիվությամբ է պահպանվել թաքնված հանցագործի արտաքինի նկարագիրը, արդեն անցել է (կամ մասամբ անցել է) վախի ազդեցությունը, այլ տպավորությունները, և տուժողը կարող է կենտրոնացնել ու վերարտադրել մտքերը, տպավորությունները:

Որոշ հանցագործությունների վերաբերյալ գործերով (խարդախություն, գողություն՝ վստահությունը չարաշահելով և այլն) դիմանկարը կարելի է պատրաստել հանցավոր դեպքից անմիջապես հետո, որովհետև այս դեպքում տուժողը հանցագործի հետ առնչվել է սովորական պայմաններում և նրա մտապատկերի ձևավորման վրա զգայական բնույթի ազդակներ չեն ներգործում:

Արտաքին հատկանիշներն օգտագործվում են նաև անհետ կորած անձանց և չճանաչված դիակների հաշվառման ժամանակ:

Անհետ կորած անձանց արտաքին հատկանիշները պարզաբանվում են նրանց ճանաչողներին, բարեկամներին և այլ անձանց հարցաքննելու միջոցով, նրանց լուսանկարներն ուսումնասիրելով և նշվում են հաշվառման քարտում:

Քարտում նշվում են նաև հագուստը, որը նա կրել է անհետանալիս, կոշիկները, մոտը եղած իրերը:

Որոշակի դժվարություն է ներկայացնում չճանաչված դիակի անձի պարզաբանումը, քանի որ մահանալիս մարդու արտաքինը կրում է որոշակի փոփոխություններ, հատկապես այն դեպքերում, երբ մահը բռնի գործողությունների պատճառով է տեղի ունեցել, և անցել է որոշակի ժամանակ: Այլ կերպ ասած, անձի արտաքինի վերաբերյալ տեղեկությունների լրիվության վրա ազդում են մահվան պատճառը, մահվանից հետո անցած ժամանակը և այն պայմանները, որոնցում գտնվել է դիակը՝ մինչև հայտնաբերելը: Դրա հետ կապված, դիակի ինքնությունը պարզելու համար մեծ նշանակություն ունի նրա արտաքին հատկանիշների ժամանակին և մեթոդապես ճիշտ ամրապնդումը:

Սովորաբար դիակի արտաքին հատկանիշների ամրապնդումը նպատակահարմար է իրականացնել նրա հայտնաբերման տեղում կամ դիասրահում՝ դիագնոստիկական ժամանակ:

Դիակի արտաքին հատկանիշների մասին ավելի լրիվ տեղեկություններ ստանալու համար խորհուրդ է տրվում պատրաստել դիմակ, այսինքն՝ դեմքի կաղապարը:

Չճանաչված դիակի անձը պարզելու համար հաճախ օգտագործվում են նրա նկարագիրը և լուսանկարները:

Սակայն, եթե դիակը ենթարկվել է լուրջ փոփոխությունների, այդ մեթոդները կարող են արդյունավետ չլինել: Նման դեպքերում խորհուրդ է տրվում պատրաստել հորինվածքային (կոմպոզիցիոն) դիմանկարներ: Իսկ կմախքի հայտնաբերման դեպքում իրականացվում է գլխի (կամ մարմնի այլ մասերի) վերականգնում՝ ոսկրային հիմքի վրա:

Դիակի արտաքին հատկանիշները կազմվում են կենդանի անձանց նկարագրման համար ընդունված «բանավոր պատկերի» մեթոդիկայով, նկատի առնելով, սակայն, այն առանձնահատկությունները, որոնցով պայմանավորված են անձի արտաքինի փոփոխությունները մահվանից հետո (սառեցում, փայտացում, դիակային բծեր):

§ 2. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՈՎ ԱՆՁԻ ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ՆՈՒՅՆԱՅՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Արտաքին հատկանիշներով անձի նույնացման ժամանակ օգտագործվում են այն հատկանիշները, որոնք արտահայտվել են լուսանկարներում:

Գիմանկարային փորձագիտական հետազոտման ժամանակ արտաքինի նկարագրությունը պետք է կատարել «բանավոր պատկերի» ընդունված տերմինաբանությամբ. սկզբում նշվում են սեռը, տարիքը, մարդաբանական տիպը (եվրոպեիդ, մոնղոլիդ, գեգրոիդ և այլն), կազմվածքի տիպը և ֆիզիկական վիճակը, որից հետո նկարագրվում են անատոմիական մյուս տարրերը՝ գլխի և դեմքի հատկանիշները:

Անջատ հետազոտման ընթացքում ուսումնասիրվում և նկարագրվում են համեմատվող լուսանկարներում պատկերված անձանց արտաքինի տարրերը և հատկանիշները՝ «բանավոր պատկերի» մեթոդով: Սկզբում հատկանիշները ներկայացվում են այնպես, ինչպես նրանք երևում են լուսանկարում, այնուհետև նշվում են այն գործոնները, որոնք ազդել են նրանց պատկերի վրա, այսինքն՝ թե ինչպես կարտահայտվեին նրանք նորմալ պայմաններում:

Անջատ հետազոտման բովանդակությունը նպատակահարմար է արտահայտել աղյուսակով, որտեղ պետք է ցույց տալ բոլոր հատկանիշները և նրանց տարբերակները:

Համեմատական հետազոտման ժամանակ նկարագրվում են առանձին հետազոտման արդյունքները: Թվարկելով համեմատված հատկանիշների համընկնումներն ու տարբերությունները, դրանք պետք է հիմնավորվեն և բացատրվեն: Մանրամասն պետք է շարադրվեն այդ հատկանիշները և ցույց տրվեն լուսանկարների վրա, որոնք կազմում են եզրակացության մի մասը:

Եզրափակիչ մասում շարադրվում են միայն փորձագետի հետևությունները:

Զննչական պրակտիկայում առանձին կարևորություն ունի անձի պարզաբանումը զանգի միջոցով: Ներկայումս մշակված է զանգի միջոցով անձի նույնացման երկու մեթոդ:

Առաջինը դեմքի քանդակագործական վերականգնումն է՝ ոսկրային հիմքի վրա: Էությունը հանգում է հետևյալին. զանգի վրա անցկացվում է պարաֆինե դիմակ, որի հաստությունը որոշվում է դեմքի փափուկ ծած-

կույթների օրինաչափ հաստությամբ և կմախքի հետ ունեցած նրանց ֆունկցիոնալ կապով: Ստացված դիմակը համեմատվում է անձի կենդանի ժամանակվա լուսանկարի հետ: Այս մեթոդը Մ.Մ. Գերասիմովի¹ հայտնի ուսումնասիրությունն է, որը, սակայն, ունի որոշ թերություններ, մասնավորապես՝ ստացվում է միայն մոտավոր պատկեր, ականջախեցին, քթի ծայրը, ռունգերը և այլն, չեն վերականգնվում: Անհմար է այս եղանակով վերականգնել նաև դեմքի կնճիռները, խալերը, մազածածկույթը, մաշկի, աչքերի գույնը և այլ առանձնահատկություններ:

Քանի որ կրիմինալիստիկական գրականության մեջ այս մեթոդի մասին խոսվում է շատ մակերեսորեն, հյալանցիկ, անհրաժեշտ ենք համարում ներկայացնել այն մի փոքր մանրամասն:

Սկզբում Միխայիլ Միխայիլովիչ Գերասիմովի մեթոդը գիտական ֆանտազիայի տպավորությամբ ընդունվեց շատերի կողմից: Թեև մինչ այդ էլ տարբեր երկրների գիտնականներ աշխատում էին այդ պրոբլեմի վրա, բայց հաջողության չէին հասել:

Հետազոտությունների նախնական փուլում պրոբլեմը վերաբերվում էր նրան, որ ստեղծվեր ոչ թե վավերագրական, այլ էթնիկական դիմաքանդակը այն մարդու, որն ապրել էր ինչ որ ժամանակ, բայց այդ հարցն էլ հաջողություն չէր ունեցել: Հավանաբար այդ անհաջողության պատճառը ոչ ճիշտ մեթոդիկայի կիրառումն էր:

Անատոմներին և անտրոպոլոգներին վաղուց հայտնի էր, որ դեմքի որոշակի մասերի փափուկ հյուսվածքի հաստությունը տարբեր ռասայական խմբերի մարդկանց մոտ տարբեր են: Դա էլ գիտնականներին հանգեցրեց ոչ ճիշտ հետևությունների այն մասին, որ զանգի և դեմքի փափուկ հյուսվածքների միջև օրգանական որևէ կապ գոյություն չունի:

Այդ դրույթների արդյունքում դեմքի փափուկ հյուսվածքներն ուսումնասիրվում էին ոսկորներից առանձնացված, որն էլ պատճառ դարձավ դեմքի վերականգման ընթացքի մի շարք սխալների:

Պրոֆ. Մ. Մ. Գերասիմովի մեթոդը, ի տարբերություն մի շարք արտասահմանյան հետազոտողների մեթոդների, հիմնվում է դեմքի փափուկ հյուսվածքների և զանգի դիմային մասի ոսկորների միջև օբյեկտիվորեն գոյություն ունեցող սերտ կապի վրա: Ըստ Մ. Գերասիմովի տեսության, դեմքի փափուկ հյուսվածքի և նրա ոսկրային հիմքի հարաբերակցության օրենքները միասնական են բոլոր ռասաների համար, չնայած փափուկ

¹ М.М. Герасимов. Основы восстановления лица по черепу. У., 1955:

հյուսվածքների հաստության բացարձակ մեծությունները դեմքի որոշակի կետում ռասայական տարբեր տիպերի մոտ հաճախ տարբեր են լինում:

Մ. Գերասիմովից առաջ այդ թեմայով աշխատող հետազոտողները հաճախ հաշվի չէին առնում գանգի տարիքային փոփոխությունները, որի արդյունքում ծերունու գանգի վրա ստեղծվում էր պատանու դեմք և հակառակը՝ պատանու գանգի վրա՝ տարիքով մարդու դեմք: Անհաջողության պատճառ էր նաև այն, որ անատոմը և քանդակագործը տարբեր մարդիկ էին: Անատոմը ցուցում էր տալիս փափուկ հյուսվածքների հաստության տեղաբաշխման մասին, իսկ քանդակագործը իրականացնում էր պատրաստումը:

Այդ եղանակով ստացվում էին բնօրինակին ոչ նման, բայց հիանալի դիմաքանդակներ: Երբեմն քանդակագործները հայտնի անձանց դիմաքանդակները պատրաստելիս միաժամանակ օգտվում էին նրանց գանգից և կենդանի ժամանակվա դիմանկարներից: Սակայն, դա գանգի միջոցով դեմքի վերականգնում չէ, քանի որ դրանում վճռորոշ դերը պատականում է պատկերագրությանը, իսկ գանգը երկրորդական դեր է կատարում:

Նման մեթոդով, օրինակ՝ ստեղծվել է կոմպոզիտոր Յոհան Սեբաստիան Բախի հուշարձանը, որը դրվել է Լեյպցիգում 1908թ.:

Դեմքը Մ. Մ. Գերասիմովի մեթոդով վերականգնելիս գանգին տրվում է առաջնակարգ նշանակություն, իսկ անտրոպոլոգիական հետազոտությունները և դեմքի վերականգնումը իրականացնում է միննույն մարդը:

Գանգի միջոցով դեմքի վերականգնումը Մ. Գերասիմովի մեթոդով բացարձակապես ճշգրիտ չէ, դրա համար էլ հայտնի բժիշկ, պրոֆ. Ա. Ճադարյանը զբաղվեց այդ հարցով:

Վերականգնումը չի կարելի համարել նաև գեղարվեստական դիմաքանդակ: Այդ առնչությամբ Մ. Մ. Գերասիմովը գրում է. «Ի տարբերություն գեղարվեստական դիմաքանդակի, գանգի միջոցով վերակառուցումը համարվում է դիմաքանդակի ոչ թե սուբյեկտիվ լուծումը, այլ օբյեկտիվ վերականգնումը:

Դա ինչ-որ անկիրք քանդակագործական սխեմա է, որը վավերական ձևով կառուցված է գանգի միջոցով և իր բնութագրող հատկանիշներով ու արտաքին տեսքով մոտեցված է այն սուբյեկտին, որի գանգը ծառայել է վերակառուցման հիմքը¹»: Ինչպես նշվեց, մեթոդի հե-

¹ М. М. Герасимов, Восстановление лица по черепу, М., 1955, էջ 16:

տագա կատարելագործմամբ զբաղվեց նաև հայ բժիշկ, բազմավաստակ պրոֆ. Ա. Ճաղարյանը¹, որն առաջարկեց վերոհիշյալ թերությունները վերացնելու եղանակներ:

Երկրորդ մեթոդը զանգի լուսանկարի համեմատումն է կենդանի ժամանակվա լուսանկարի հետ: Պատրաստվում է կենդանի ժամանակվա լուսանկարի մասշտաբով, որոշակի կանոններով մշակված զանգի լուսանկարը: Այս դեպքում զանգին տրվում է այնպիսի դիրք, որը համապատասխանում է կենդանի ժամանակվա լուսանկարում պատկերված գլխի դիրքին: Այնուհետև դրանք համատեղվում են ճանաչողական անատոմոտեղագրական կետերով (մեթոդը կոչվում է «ապլիկացիա»):

Ուսումնասիրելով համատեղված պատկերները կարելի է որոշել թե որքանով է զանգը համապատասխանում նույնացվող գլխի ուրվանկարին: Դա հնարավորություն կտա դատել միայն խմբային պատկանելության մասին: Եթե գլխի ուրվագծի ճանաչողական անատոմոտեղագրական կետերն ակնհայտորեն չեն համապատասխանում զանգի ուրվագծին, այն բավարար հիմք կձառայի նույնությունը բացառելու մասին հետևություն անելու համար:

¹ Ինձ բախտ է վիճակվել միայն ընթերցել պրոֆեսորի աշխատության ձեռագիրը և մասնակցել դրա քննարկմանը: Չգիտեմ ինչու չի հրատարակվել այդ ուշագրավ աշխատությունը:

ԳԼՈՒԽ 20. ՊՈԼԻԳՐԱՖԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ԳԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Պոլիգրաֆ տերմինը առաջացել է հունարեն polys – շատ, բազմաթիվ և grapho – գրում եմ բառերից, որը թարգմանաբար նշանակում է «բազմաթիվ գրառումներ»:

Տեխնիկական այս միջոցը անվանվում է նաև «լայ դետեկտոր» («ստի դետեկտոր»), «վարիոգրաֆ», «պլետիզմոգրաֆ», «սֆիզմոգրաֆ»:

Պոլիգրաֆը բազմանպատակային սարք է և նախատեսված է մի շարք ֆիզիոլոգիական պրոցեսների միաժամանակյա գրանցման համար: Այն պրոցեսների, որոնք կապված են զգայությունների հետ: Դրանք են՝ շնչառության, բիտոկների (սրտի, ուղեղի, կմախքային և հարթ մկանային համակարգի և այլն): Այդ տեսակի սարքերը լայնորեն կիրառվում են կլինիկական բժշկության մեջ: Դրանք հատկապես կիրառելի են վերակենդանացման նպատակներով, բժշկա-կենսաբանական և հոգեբանական հետազոտություններում, կիրառական հոգե-ֆիզիոլոգիայում, որի մասնավոր բաժիններից մեկը համարվում է ստի քրեականացումը: Ավելի ուրուշակի՝ այդ սարքը գրանցում է մարդու այնպիսի ֆիզիոլոգիական պրոցեսներում տեղի ունեցող փոփոխությունները, ինչպիսիք են՝ արյան ճնշում, քրտնարտադրություն, զարկերակի հաճախականություն, մարմնի ջերմաստիճան, շնչառության խորություն ու հաճախականություն, ձեռքերի, ոտքերի մկանների սեղմում և այլն: Համապատասխան ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ փոփոխությունները մարդու օրգանիզմում տեղի են ունենում հարցին պատասխանելուց մի քանի վայրկյան անց: Գրականության մեջ տրվում է պոլիգրաֆի միջոցով ստացված պատասխանների ճշմարտացիության տարբեր աստիճաններ, որոնց միջինը մոտ 80% է: Նշվում է սակայն, որ սխալների պատճառը ոչ թե սարքի որակն է, այլ կիրառման ոչ ճիշտ մեթոդիկական, օպերատորի ցածր որակավորումը, որը ճիշտ չի վերծանում պոլիգրաֆի ինքնագրառումները, ինչպես նաև այն անձանց տրված հարցերի պատասխանների գրառումները, որոնց հիվանդությունները ազդում են օրգանիզմի ռեակցիաների վրա:

Հանրահայտ է, որ տասնամյակներ շարունակ պոլիգրաֆը կիրառվել է ի նպաստ Եվրոպայում հանցագործությունների դեմ տարվող պայքարի գործի, Ասիայի զարգացած երկրներում, Միացյալ Նահանգներում և այլուր: Մինչդեռ խորհրդային դասագրքերում հրամցվում էին տեղե-

կություններ, որոնք եթէ չհամարենք ոչ ճիշտ, ապա գոնե խիստ վիճելի են:

Նպատակ չունենալով նսեմացնել Ռ-Ղ, վաստակաշատ կրիմինալիստ գիտնականների հսկայական ծառայությունները՝ ժամանակի ոգին և թյուրատեսությունը ընդգծելու նպատակով միայն մեզ թույլ ենք տալիս ներկայացնել մեր սիրելի ուսուցիչներից մի քանի մեջբերում.

«Նորագույն տեխնիկան, որը կար բուրժուական կրիմինալիստների տրամադրության տակ, հաճախ ոստիկանների և դատական մարմինների կողմից օգտագործվում էր դատական ապացույցները խեղաթյուրելու համար¹»:

«Ապացույցները խեղաթյուրելու համար ակտիվորեն օգտագործվում են տարբեր ապարատներ (լալդետեկտոր և այլն)²»:

«ԱՄՆ-ում լայնորեն կիրառվում է լալդետեկտոր – սարք, որը նախատեսված է ցուցմունքների ճշմարտացիությունը ստուգելու համար, հիմք ունենալով հարցաքննության ընթացքում մարդկային օրգանիզմի արձագանքի ֆիքսումը:

Թեև ֆիքսումը ինքնըստիներյան անցնում է գիտական հիմքով, բայց նրա մեկնաբանումը՝ ցուցմունքներում ճշմարտացիությունը կամ սուտը բացահայտելու իմաստով, ճանապարհ է բացում ոստիկանական կամայականությունների համար³»:

Նույն հեղինակը 1980թ. հրատարակված դասագրքում գրում է.

«Տեխնիկական միջոցներով հանցագործությունների բացահայտման ունիվերսալ մեթոդներ փնտրելու փորձերը բուրժուական կրիմինալիստներին մղում են գիտության հետ քիչ ընդհանրություններ ունեցող ուղու վրա: Օրինակ՝ ԱՄՆ-ում լայնորեն կիրառվում է «լալդետեկտորը»՝ սարք, որը նախատեսվում է ստուգելու ցուցմունքի ճշմարտացիությունը մարդու ֆիզիոլոգիական ռեակցիաների, հոգեկան պրոցեսների ֆիքսման ճանապարհով, որոնք հարցաքննության ժամանակ տեղի են ունենում նրա գիտակցության մեջ»:

«Հարցաքննվողի ցուցմունքի գնահատման համար օգտագործվում է պոլիգրաֆը (ստի դետեկտոր), որը ֆիքսում է մարդու ֆիզիոլոգիական ռեակցիաները՝ առաջացած արտաքին հոգեկան գրգռիչներից, բայց որը, բնականաբար, ընդունակ չէ դիագնոզել ցուցմունքի անճշտությունը: Իսկ իր՝ պոլիգրաֆի օգտագործումը բուրժուական երկրների քրեական դա-

¹ Митричев С. П., В. гл. 1 учебнике для вузов-Криминалистика. М., 1966, с. 25.

² Митричев С. П., նույն տեղում:

³ Васильев А. Н., В учебнике для вузов, Криминалистика. М., 1963, с. 20.

տավարությունում հարցաքննվողի վրա հոգեբանական ճնշում գործադրելու մեթոդներից մեկն է: Գեռես 1958թ. քրեական դատավարությունում մարդու իրավունքների պաշտպանության պրոբլեմին մվիրված ՄԱԿ-ի սենինարի բանաձևում լայ-դետեկտորը որակվեց որպես «վերադարձ միջնադարյան բարբարոսության և վիրավորանք մարդկային արժանապատվությանը¹»:

Մի երկու ուշագրավ մեջբերում էլ «բուրժուական երկրների» պրակտիկ քրեագետներից. ԱՄՆ Գերագույն դատարանի և որոշ նահանգների գերագույն դատարանների կարծիքը պոլիգրաֆի վերաբերյալ. ԱՄՆ Գերագույն դատարանի նախագահ Է. Ուորրեն. «Ես չեմ պնդի, թե պոլիգրաֆ-դետեկտորով փորձարկումները ճշմարտություն են բացահայտում», մեկ այլ դեպքում. «Ես ինքս չեի առաջարկի փորձարկումը պոլիգրաֆ-դետեկտորով ճշմարտությունը բացահայտելու համար»: Նույնպիսի կարծիք է հայտնել Ջ.Է. Հուվերը. «ՀՖԲ-ն կարծում է, որ պոլիգրաֆի տեխնիկան բավարար ճշգրիտ չէ, որպեսզի կարելի լինի որոշակի անվերապահ դատողություններ անել ցուցմունքի կեղծ լինելու մասին²»:

Այս բոլորն այն դեպքում, երբ ներկա հեղինակներն առանց երկմտելու, անվարան գրում են, որ այդ սարքի օգնությամբ ձեռք են բերում տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս նեղացնել հանցագործության կատարման մեջ կասկածվող անձանց շրջանակը, երևան հանել կատարված հանցագործության այն փաստերը, որոնք նպաստում են նույնացնել մեղավոր անձանց և նախադրյալներ ստեղծել նրանց կողմից օբյեկտիվ, ճշմարիտ ցուցմունքներ տալու համար, բացահայտելու դրանցում տեղ գտած անճշտությունները, բացթողումները, հնարավորություն ստեղծելու լրացուցիչ տեղեկատվություն ստանալու համար³:

Բայց դրա կողքին հնչում են նաև հետևյալ բնույթի դատողություններ. «... Հնարավոր⁴ է արդյոք, որ օրենսդրական կարգավորման համակարգի մանրակրկիտ մշակմամբ և հսկողության պրակտիկ կիրառման բավական խիստ միջոցներով զարգացած հասարակության մեջ թույլ տրվի կասկածելի գիտական հիմքով մեթոդ: Իհարկե, ոչ⁴»:

¹ Пантелеев И. Ф., В учебнике для вузов, Криминалистика. М., 1984, с. 75-76.

² Ларин А. М., Криминалистика и пара-криминалистика. М., 1996, с. 176.

³ Следственные действия, криминалистические рекомендации. Типовые образцы документов. Под. ред. В. А. Образцова, 2001, с. 122.

⁴ Митричев В., Холодный Ю. Полиграф как средство ориентирующей информации (записки криминалистов). Вып. 1. М., 1993, с. 175.

Ի հակադրություն սույն հարցադրման, նշենք, որ Ռ-Դ ՆԳՆ ԳՀԻ հատուկ բաժնում և Անվտանգության դաշնային ծառայությունում ներկայումս հետազոտություններ են տարվում քրեական դատավարությունում պոլիգրաֆի կիրառման պայմանների, ձևերի և շրջանակների վերաբերյալ¹: Այդ հետազոտությունների հիման վրա մշակվեց հրահանգ «Քաղաքացիներին հարցում անելիս պոլիգրաֆի կիրառման կարգի մասին», որը հաստատվեց Գլխավոր դատախազության, Ռ-Դ ԱԴԾ և ՆԳՆ կողմից 28.12.1994թ., Ռ-Դ ՆԳ նախարարը 12 սեպտեմբերի 1995թ. հրաման ստորագրեց (թիվ 353) «Ներքին գործերի մարմինների գործունեության մեջ պոլիգրաֆի ներդրումն ապահովելու մասին»: 1995թ. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Դաշնային օրենքի ընդունմամբ պոլիգրաֆի կիրառումը օպերատիվ-հետախուզական գործունեության մեջ ունեցավ նաև իրավական հիմնավորում²:

Այս կապակցությամբ Վ.Ա. Օբրագովը գրեց. «Պոլիգրաֆով փորձարկումների մեթոդը տասնամյակներ տևող անբարոյական և կեղծ գիտական անհիմն մեղադրանքներից հետո մտավ կրիմինալիստիկական միջոցների՝ օրենքով թույլատրված զինանոց³»:

Սրանք՝ Ռուսաստանի Դաշնությունում, որի դրական օրինակները վերցնելը մեր հանրապետությունում չգրված օրենքներից մեկն է: Կարծում ենք, այդ օրենքը ևս չպետք է խախտենք, մինչև հարցի տեխնիկական ոլորտներում եղած թերությունների վերացումը: Դրանով հնարավորություն կտեսնենք, պոլիգրաֆի կիրառման արդյունքները, ապացույց ստանալիս (հարցաքննելիս) և դրանք կիրառելու լուծում առաջարկելու համար:

Եթե ընդհանրացնենք Ռուսաստանի Դաշնության դատավարագետների և կրիմինալիստների կարծիքները պոլիգրաֆի կիրառման նպատակահարմարության մասին, կստացվի, որ նրանց մեծ մասը բացասաբար է վերաբերում դրան (մեր հանրապետությունում դեռ ոչ ոք չի զբաղվել դրանով):

Ռ.Ս. Բելկինի խմբագրությամբ 1998 թ. հրատարակված ծավալուն դասագրքում նշված է առարկություններից մի քանիսը, որոնք հանգում են հետևյալին. «Բանը հասել է պոլիգրաֆը տանջանքի գործիք հայտարար-

¹ Стів Нетрадиционные методы в раскрытии преступлении. Тезисы научно-практического семинара Всероссийского НИИ МВД РФ. М., 1994:

² Стів Криминалистика. Уч. Для вузов (кол. авторов). Под. ред. Р. С. Белкина. М., 1999, с. 395.

³ Образцов В. А., Основы криминалистики. М., 1996, с. 128.

րելուն...», «փորձարկվողին պատճառում է անհավատալի ֆիզիկական տառապանքներ», «կեղծ գիտական ճշմարտության բացահայտման և ռեակցիոն մեթոդ է», «նույնիսկ ուղղակի զուգահեռներ են տարվել ինկվիզիցիոն պրոցեսի և պոլիգրաֆի միջև¹»: Ըստ նույն աշխատանքի հեղինակների՝ նշված մասնագետները խորհուրդ են տալիս հաշվի առնել նաև պոլիգրաֆի միջոցով ստացված «ապացույցների» «ռեակցիոն էությունը»:

Կարծում ենք՝ դրանք բոլորն էլ չափազանցված են: Ինչպես ցանկացած տեխնիկական միջոցի, այնպես էլ բնականաբար, պոլիգրաֆի մուտքը, պետք էր դիմավորել տարակուսանքով, քննադատաբար, որպեսզի հղկվեն նրանում տեղ գտած թերությունները. ինչպես տեխնիկական, այնպես էլ տակտիկական, էթիկական և քրեա-դատավարական, որը և, մեր համոզմամբ, տեղի է ունենում ճիշտ, բայց ժամանակավոր պոռթկումով:

Պոլիգրաֆի կիրառման արդյունքները որպես ապացույց օգտագործել կամ չօգտագործել արտահայտությունը ճիշտ է:

Այստեղ խոսքը կիրառումից առաջացած հարցերի պատասխանների կամ դրանցից ծագած նոր հարցերի պատասխանների մասին է, որոնք ֆիքսվում են հարցաքննության արձանագրության մեջ: Զննիչն այն կզմահատի ապացույցների գնահատման ընդհանուր կանոններին համապատասխան:

Պետք է նկատի ունենալ նաև, որ պոլիգրաֆի կիրառմամբ ստացված ռեակցիաները որևէ առանձնահատկությամբ չեն բնութագրվում, այսինքն՝ նրանք որևէ այնպիսի հատկանիշներ չեն պարունակում, որոնք ցույց կտային կատարված հարցումների պատասխանների սուտը կամ ճշմարտացիությունը: Ռեակցիաներ կամ դրանց փոփոխություններ կարող են առաջանալ և՛ վախից, և՛ ազնիվ հոգու ընդվզումից:

Այդ պատճառով էլ դրանք պետք է ծառայեն որպես ստուգվողի պատասխանները ճշգրտելու միջոց:

Ըստ վերևում նշված Հրահանգի՝ պոլիգրաֆի կիրառմամբ ստուգվում է ցուցմունքը:

Մեր կարծիքով՝ պոլիգրաֆը պետք է կիրառել հարցաքննությունը նախապատրաստելիս (իրականացնել գրույց, որին կմասնակցի օպերատորը՝ մասնագետի դատավարական վիճակով):

Չմոռանաք, որ քննչական գործողության նախապատրաստումը այդ գործողության մի մասն է, որին և կարող է մասնակցել մասնագետ:

¹ Տե՛ս նշված աշխատության 391 էջը:

Զրույցի արդյունքներով քննիչը կկազմի նոր թեստ (հարցաքննության պլան): Այսինքն՝ նրա կիրառումն ունի զուտ տակտիկական նշանակություն՝ հարցաքննությունն առավել արդյունավետ նախապատրաստելու և իրականացնելու համար:

Գրականության մեջ պոլիգրաֆի մասին եղած համառոտ տեղեկությունները, այդ թվում՝ սույն աշխատանքում ներկայացվածը, առայժմ հիմնվում են արտասահմանյան զարգացած երկրների փորձի վրա: Այդ պատճառով էլ ներկայացվում է դրա սխեմատիկ կողմը, որը, սակայն, ձգտում ենք ճշգրտել, լրացնել:

Այս առումով կարող ենք ասել, որ պոլիգրաֆը կիրառելու արտասահմանյան երկրների փորձը, մարդու (անհատի) մոտ եղած տեղեկատվությունը հայտնաբերելու նպատակով, հասցրեց նրան, որ ձևավորվի սկզբունքների համակարգ այդ սարքի օգնությամբ թեստավորում կազմակերպելու համար:

Կրիմինալիստիկական տակտիկայի հանձնարարականներով վաղուց ուշադրություն էր դարձվում հարցաքննվողի հոգեֆիզիոլոգիական վիճակին՝ կախված նրան հարցաքննելու պահի, ընթացքի, բովանդակության և որոշ այլ հարցերի հետ: Մասնավորապես, երբ ակնհայտորեն պահը սպառնում է նրա ներկացմանը (կասկածյալի, մեղադրյալի դեպքում), սուտ ցուցմունքի բացահայտմանը (վկայի, տուժողի) և այլն: Նշված վիճակի մասին են վկայում գունատվելը, կարմրելը, քրտնարտադրությունը, ձեռքերի կամ ողջ մարմնի դողը, ջուր կամ ծխախոտ խնդրելը և այլն:

Հիշենք Ա. Վ. Դուլովի «Զգայական փորձարարություն» աշխատանքը, որում տրված դատողությունները համարյա չեն տարբերվում ուսումնասիրվող նյութից: Օրինակ՝ նշված աշխատանքում նա գրում է. «Զգայական փորձարարության հաջողությունը ապահովելու համար անհրաժեշտ է պահպանել մի շարք կանոններ՝ այն կատարելիս, որը էականորեն կրարձրացնի զրգոհչների գործողության վստահելիությունը և կհեշտացնի փորձարարության արդյունքների գնահատման հետագա գործընթացը»:

1. Անհրաժեշտ է վաղօրոք ազդել մեղադրյալի վրա այլ մեթոդներով (վստահեցում և այլն): Զգայական փորձարարության ուժը որոշվում է նրանով, որ այդ մեթոդը կիրառվում է ոչ մեկուսացված, այլ մյուսների թվում, նրանք բազայի վրա, մեղադրյալի հոգեբանական պատրաստվածության առկայությամբ, որն ստեղծվել է այդ մեթոդների կիրառմամբ: Դա նախապատրաստում է մեղադրյալի մտավոր պրոցեսների անհրա-

ժեշտ ուղղվածություն, նրա մոտ ստեղծում է հոգեկան պատշաճ վիճակ, անմիջականորեն որոշակի տեղեկություն ստանալուց առաջ:

2. Պահպանել ընտրված տեղեկությունը հաղորդելու հանկարծակիությունը, անսպասելիությունը, դրանով լրացուցիչ պայմաններ կստեղծի զգայական վիճակի կտրուկ փոփոխության, որն անհնար է թաքցնել քննիչի դիտարկումից:

«...Այնուհետև կատարված զգայական փորձարարության արդյունքում մեղադրյալի մոտ կարող են երևալ.

ա. արտահայտչական շարժումներ (դիմախաղ, «ձայնային միմիկա», մնջախաղ)

բ. վեզետաառիվ ներվային համակարգի արտաքինից արտահայտված փոփոխություններ (քրտնարտադրություն, գունատվում և այլն),

գ. հոգեկան վիճակի կտրուկ փոփոխություն (ճնշվածություն, գրգռվածություն, վախ...¹):

Նշված հանձնարարականները գիտության և տեխնիկայի զարգացման հետ անհրաժեշտություն առաջացրին հոգեֆիզիոլոգիական ռեակցիաների գրանցման և զննհատման հարցերը փոխադրելու գիտատեխնիկական միջոցներով իրականացնելու հիմքի վրա:

Մեր կարծիքով՝ պոլիգրաֆի օգնությամբ կատարված փորձերը պետք է կազմվեն երեք փուլից.

- 1) թեստավորում գրույցը վարելու համար,
- 2) թեստավորում պոլիգրաֆի կիրառմամբ ստացված տվյալների օգնությամբ,
- 3) հարցաքննություն առանց պոլիգրաֆի կիրառման, կազմված թեստի՝ հարցաքննության պլանի օգնությամբ:

Այս փուլերի նպատակն է ստուգվողին ծանոթացնել իր դատավարական իրավունքներին նաև այն առումով, որ օրենքը թույլատրում է քննչական գործողությունը նախապատրաստել և իրականացնել տեխնիկական միջոցների կիրառմամբ: Այս փուլերը տակտիկական առումով համարվում են **հարցաքննություն** քննչական գործողության նախապատրաստական մասը:

Թեև այս հարցը ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հասկանալի պատճառներով չի նախատեսել, բայց կարծում ենք՝ պոլիգրաֆի առկայության պայմաններում, երբ այն կհավակնի մուտք գործել ՀՀ քնն-

¹ А. В. Дулов., Эмоциональный эксперимент, в сб. вопросы криминалистики. М., 1-970, с. 71-72.

չական պրակտիկա և տեսականորեն նրա կիրառումը կընդունվի որպես տակտիկական հնարք, այն իր օրենսդրական կարգավորումը կստանա որպես հանցագործությունների քննության առաջադեմ, գիտատեխնիկական միջոց:

Քանի որ պոլիգրաֆի կիրառումն իրականացվելու է որպես քննչական գործողությունը (մասնավորապես՝ հարցաքննությունը) արդյունավետ իրականացնելու միջոց (հետագայում), ի լրումն գրականության մեջ եղած բազում կարծիքների, գտնում ենք, որ օրենքը պետք է նախատեսի այն կիրառել ստուգվողի համաձայնությամբ (գիտությամբ), իսկ նրա արդյունքները (ինչպես արտասահմանյան երկրներում, բացառությամբ ԱՄՆ որոշ նահանգների) չի գնահատվելու որպես ապացույց: Նշված երկրներում դրանք մեծ հաջողությամբ օգտագործվում են մաս օպերատիվ-հետախուզական նպատակներով: Նույնը կարելի է իրականացնել մեզ մոտ: Իսկ վերը նշված խնդրի իրականացումը ևս պետք է իր լուծումն ստանա: Վերջին հաշվով, թեև պոլիգրաֆն օգտագործվում է որոշակի անձի հետ զրուցելիս, այն հարցաքննություն չէ, այլ դրա նախապատրաստումը, որն իրականացվում է մասնագետների կողմից, քննիչի ղեկավարությամբ:

Բացի այդ, ստուգվողին պետք է ընդհանուր գծերով ծանոթացնել սովյալ գործողության նպատակին և իրականացման ձևին:

Սկսելով զրույցը՝ օպերատորը հանգիստ ձայնով քննվողին առաջադրում է վաղօրոք պատրաստված հարցերը, որոնց պատասխանը «այո» կամ «ոչ» է:

Հարցերն առաջադրվում են 10-15 վրկ. ընդմիջումներով, որի նպատակը նախորդ հարցից առաջացած ռեակցիայից քննվողի ազատվելն է: Վերջինս նպաստում է պոլիգրաֆիական ակտիվության մակարդակի վերականգնմանը:

Օպերատորը հարցերն առաջադրում է հարցաշարով, որոնցից յուրաքանչյուրը կրկնվում է հոգեֆիզիոլոգիական հետազոտման ընթացքում ոչ պակաս, քան երկու անգամ: Ըստ գրականության՝ փորձերը ցույց են տվել, որ առաջադրված հարցերին պատասխանելիս հարցաքննվողի մոտ առաջանում են տարբեր ռեակցիաներ, մասնավորապես, փոփոխվում է շնչառության ռիթմը և ամպլիտուդան, զարկերակի հաճախականությունը, արտերիալ ճնշման տատանումները և մաշկի էլեկտրական դիմադրությունը:

Այս կամ այն հարցից հետո ցայտուն արտահայտված ռեակցիան վկայում է պատասխանողի համար առավել կարևոր լինելու մասին, ո-

րոնց կապակցությամբ օպերատոր-մասնագետը շարադրում է իր դատողությունները:

Թվարկված և մի շարք այլ գործոններ վկայում են, որ պոլիգրաֆն իրականացնում է մարդու ֆիզիոլոգիական ռեակցիաների գրանցումը և որևէ առնչություն չունի «ստի դետեկտորի» հետ:

Մասնագետ-դատավարագետների և կրիմինալիստների մի մասը, որոնք ուսումնասիրել են հարցաքննվողի հոգեֆիզիոլոգիական վիճակը, գտնում են, որ այն պետք չէ անտեսել, անհրաժեշտ է միայն ճիշտ գնահատել: Դրան կարող է նպաստել պոլիգրաֆի կիրառումը, եթե այն դրվի այնպիսի ուղու վրա, որը կբացառի նրա բովանդակության մեջ մտցնել հարցեր, որոնց պարզաբանումը հնարավոր կամ ռեալ չէ:

Բայց քանի որ ժամանակակից հնարավորությունները թույլ են տալիս միայն այդ ամենը գնահատել ըստ քննիչի ընկալման մակարդակի (կարողությունների), օբյեկտիվորեն դրանց չի կարելի ապացույցի արժեք տալ: Հատկապես, եթե հաշվի առնենք, որ քննիչն ընկալում է (ըստ սեփական կարողությունների) միայն այն ռեակցիաները, որոնք հնարավոր է նկատել և որոնց նա կարող է տալ միայն հավանական մեկնաբանություն:

Վերջինը զգալիորեն նվազեցնում է նշված հանգամանքի նույնիսկ տակտիկական նշանակությունը: Այսպիսի պայմաններում, հաշվի առնելով գիտության և տեխնիկայի զարգացումը, նման հետազոտությունների իրականացման առումով, պետք է հարց առաջանար քրեական դատավարությունում նման մեթոդներ կիրառելու հնարավորությունների մասին, որի արդյունքը եղավ պոլիգրաֆը:

Լևոն Պարզեհի Օհանյան

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿ

քրեական դատազրկ

Оганян Левон Паргезович

КРИМИНАЛИСТИКА

Учебник для вузов

Խմբագիր՝ Յու. Ավետիսյան
Մուտքագրումը՝ Ա. Չախոյան
Էջադրումը՝ Ա. Պոտրոսյան

Հանձնված է տպագրության 1.12.2004թ.:

Ծավալը՝ 31.5 տպ. մամուլ:

Չափսը 60x84¹/₁₆:

Տպաքանակը՝ 1000 օրինակ:

